Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ
ԾՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ
ՄՈՎՍԵՍ ԱՐԱՋԻ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1982

ԳՄԴ 84 21+84 27
Հ 177

Կազմեցին՝ Ռ. Բ. Բաբաջանյան
Ջ. Ա. Պետրոսյան

Խմբագիր՝ Բ. Հ. Անանիկյան
Առաջաբանը՝ Ս. Ա. Մանուկյանի

Հակոբյան, Հ.
Հ 177 Երկեր /Հ. Հակոբյան. Երկեր, /Շ. Կուրղինյան. Երկեր, /Մ. Արազի/ Կազմ. Ռ. Բ. Բաբաջանյան, Ջ. Ա. Պետրոսյան։ Խմբ.՝ Բ. Հ. Անանիկյան։ Առաջաբանը Ս. Ա. Մանուկյանի.— Եր.։ Սովետ. գրող, 1982.— 568 էջ։
Ժողովածուում ընդգրկված են Հակոբ Հակոբյանի, Շուշանիկ Կուրղինյանի և Մաքսիմ Արազու լավագույն ստեղծագործությունները։

Հ $\frac{4702080100\ (765)}{705(01)82}$ 82 «Տ» ԳՄԴ 84 21+84 27
Ար1+Ար3

© «Սովետական գրող» հրատարակչություն
կազմողի, խմբագրի, ձևավորման և առաջաբանի համար

ՀԱՅ ԳՐՈՒՆՏԱՔԱՆԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՆԱԴԻՊԵՆԻՔԸ

Գրականագիտության մեջ ընդունված է տեսական այն ստեղծումը, թե պրոլետարական է կոչվում «Ռուսաստանում և մի քանի այլ երկրներում 19—20-րդ դարերի սահմանագծում պրոլետարիատի, որպես սոցիալիստական նեղափոխության հասունացման ժամանակաշրջանի պատմական պրոցեսի հետևանքով, հեղափոխական շարժման աճի առնչությամբ առաջ եկած գրականությունը», որ ղեկավարվում է «մարքսիստական, հեղափոխական աշխարհայացքով» և որի «գաղափարական-գեղարվեստական ավանդները կարևոր դեր են խաղացել սովետական ու համաշխարհային գրականությունների մեջ սոցիալիստական ռեալիզմի կազմավորման և զարգացման գործում»[1]:

Անա այդ բնույթի ճայ պրոլետարական և միաժամանակ սովետական գրականության հիմնադիր սերնդի երեք նշանավոր ներկայացուցիչների՝ Հակոբ Հակոբյանի, Շուշանիկ Կուրղինյանի և Մոսկոս Արազու բնտիր ստեղծագործությունները են ընդգրկված ներկա հատորում: Այդ հեղինակներից յուրաքանչյուրը մի առանձին անհատականություն է իր ուրույն օրով, վարպետի կրոով, գրական դիմանկարով: Նախքան երեքն էլ գրքի միաժամանակ գիտակցվել էին վերնիչյալ պրոլետարական-հեղափոխական գրականության այն ուղղությունը, որի մասին Ստեփան Շահումյանը տակավին 1902 թվականին գրել է. «Վերջին 5—6 տարում մեր գրականությունը հարստացել է նոր տաղանդներով: Բանն, իհարկե, այն չէ, որ նոր տաղանդներ են ի հայտ եկել... այլ այն, որ ի հայտ եկած գրողներ նոր և բարձր ուղղություն են հաղորդել գրականությանը: Այդ նոր և բարձր ուղղության հիմնադիրը Մաքսիմ Գորկին է»[2]:

Հասարակական ասպարեզ իջնելով բուրժուազիայի հետ միասին՝ իրեն կապիտալիզմի գերեզմանափոր պրոլետարիատը հենց սկզբից իր վրա հրավիրեց նաև «արվեստի աշխարհի» ուշադրությունը, ապա ինքն էլ սկսեց հյուսել, ինչպես ասում են, իր «սնփանած երգը»: Մարքսիզմի հիմնադիրները մշտապես հետևել են այս երևույթին հա, ստեղծել են գեղագիտական նոր ու ամբողջական տեսություն, ուղղություն ու բնաբաց են տվել պրոլետարական-հեղափոխական, սոցիալիստական գրականության, արվեստի, մշակույթի կառուցմանն ու զարգացմանը:

Մարքս-Լենինյան գեղագիտության մանիֆեստը գրված «Կոմունիստական կազմակերպություն և կոմունիստական գրականություն» (1905) հանրահայտ հոդվածում ընդգծելով, թե «Գրական գործը պետք է դառնա համապրոլետարական գործի մի մասը» և հաստատելով, որ «այս գործում անպայման անհրաժեշտ է

---

1 «Краткая литературная энциклопедия», М., 1971, т. 6, с. 35—36

2 Ստ. Շահումյան, *Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1975, հ. 1, էջ 40։*

ապահովել անձնական նախաձեռնության, անհատական ճակատների առավել ազատություն, մտքի ու երևակայության, ձևի ու բովանդակության ազատություն», Վ. Ի. Լենինը գրել է. «... մեր առաջ կանգնած է մի դժվարին ու նոր, բայց մեծ ու շնորհակալ խնդիր՝ կազմակերպել ընդարձակ, բազմակողմանի, բազմազան գրական գործ, որ սերտ և անխզելի կերպով կապված լինի սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման հետ..., իսկապես առաջավոր ու մինչև վերջը հեղափոխական դասակարգի շարժման հետ»[1]:

Հենց այդ գրականությունն ստեղծողների շարքերում էին նաև առաջին հայ պրոլետարական-հեղափոխական հեղինակները՝ բոլշևիկ բանաստեղծ Հակոբ Հակոբյանի գլխավորությամբ: Իհարկե, արդար աշխատանքի և ազատագրական պայքարի թեման անցնում է բազմադարյան հայ գրականության միջով, իսկ նոր-նոր կազմավորվող ու իր շարքերը հետզհետե ճամբարող բանվորության կյանքին, աշխատանքին, զբաղումներին անդրադարձել, ապա բանվորական շարժման նոր վերելքին, մասնավորապես ռուսական առաջին հեղափոխության և հետագա տարիների իրադարձություններին լայնորեն արձագանքել են մեր դասականները, Հովհ. Թումանյան, Ալ. Շիրվանզադե, Ա. Արփիարյան, Դ. Վարուժան, Ավ. Իսահակյան, Վրթ. Փափազյան, Ե. Օտյան, Սիամանթո, Վ. Տերյան և մյուսներ: Հենց գրիչական ուղղության հայ գրականության ստեղծմանը մասնակցում էին ոչ միայն Հակոբյանը, Կուրղինյանը, Աբաշին, այլ պրոֆեսիոնալ հեղափոխականներ Աբսա Խումարյանը («Դեպի մարտ», 1902, «Նոմա կարբնանան», 1903), Մելիք Մելիքյանը (Ինդուշկա), բանաստեղծ Հակոբ Կամարին (Բիժանյան), արձակագիր Մագաթ Գեսարոյանը, թատերագիր Անուշավան Վարդանյանը («Գործադուլ» դրաման, 1906) և էլի ուրիշներ:

Սակայն պրոլետարական աշխարհայացքով զինված առաջին խոշոր հայ բանաստեղծը Հակոբ Հակոբյանն էր, որը բոլշևիկյան կուսակցության անդամ էր 1904-ից, անմասն մասնակցում էր հեղափոխության բարիկադներում և հյուսում աշխատանքի ու պայքարի հորդորակ երգեր: Ա. Վ. Լունաչարսկին այդ առթիվ ասել է. «Հակոբ Հակոբյանի ստեղծագործության մեջ ամենից իմաստալիր, իհարկե, ճնշող սկզբից եղել է այն, որ նա ոչ միայն բանաստեղծ հեղափոխական էր,— բանաստեղծ-հեղափոխականներ եղել են և՛ ռուսական, և՛ եվրոպական գրականության մեջ,— այլ այն, որ նա բանաստեղծ սոցիալ-դեմոկրատ էր՝ բարձր այն ժամանակվա լավագույն իմաստով, բանաստեղծ-բոլշևիկ, պրոլետարական բանաստեղծ»[2]:

Հակոբ Հակոբյանը (1866—1937) աշխատանքի, պայքարի և ստեղծագործական սոռնումների ուղղելի ճանապարհ է անցել, որի մասին ինքն իրավամբ ասել է՝ «Գրականությունը և հեղափոխությունը ինձ մոտ ընթանում էին սերտ կերպով միացած, ձեռ-ձեռքի տված»: Տակավին ծննդավայր Դանձակում (այժմ՝ Կիրովաբադ, Ադրբեջանական ՍՍՀ), այնուհետև նատկապես արդյունաբերական Բաքվում ու Թիֆլիսում նա օնվեց հայկական, ռուսական և համաշխարհային գրականության ազատասիրական, հայրենասիրական, հումանիստական, հեղափոխական-դեմոկրատական ավանդներով (Արովյան, Բաֆֆի, Նալբանդյան,

[1] Վ. Ի. Լենին, *Երկերի լիակատար ժողովածու, 5-րդ հրատ., հ. 12, էջ 125—126։*

[2] А. В. Луначарский, Собрание сочинений, М., 1954, т. 2, стр. 368.

Գուշկին, Լերմանտով, Չերնիշևսկի, Նեկրասով, Շեքսպիր, Դյոբե, Հայնե), ապա սերտ կապեր հաստատեց բանվոր հեղափոխականների հետ, կարդաց մարքսիստական գրականություն և անվերապահորեն զինվորագրվեց լենինյան գվարդիայի մարտիկներ Սա. Շահումյանի, Մ. Ցխակայայի, Ս. Սպանդարյանի, Ֆ. Մախարաձեի և մյուսների շարքերին, ու հեղափոխական պայքարին ի սպաս դրեց իր անձն ու գրիչը: Հայ բանվորության համար նա Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական՝ բոլշևիկյան կազմակերպությունների ճանձնարարությամբ թարգմանեց մի շարք հեղափոխական երգեր՝ «Մարսելիեզ» («Հրաժարվեք, ընկերներ, ցին օրենքներից...»), «Ինտերնացիոնալ» (Է. Պոտիեից Ա. Կոցի ռուսերեն թարգմանությունը), «Վարշավյանկա» (Գ. Կրժիժանովսկու ռուսերեն վերատեղածը), «Անվախ ընկեր, քայլենք շարքերում» (Լ. Պ. Ռադինի), «Թաղման քայլերգ» («Դուք զոհ գնացիք կատաղի պայքարում...»— Ֆ. Ս. Նեքրասի). նարաճում բանվորական շարժումներին իր բուռն մասնակցությունը զուգընթաց, ստեղծեց իր մարտաշունչ պոեզիան, «բրթռուն ու միաժամանակ առնական երգերը» (Լունաչարսկի): Հ. Հակոբյանի հիմնադրած հայ պրոլետարական-հեղափոխական այդ պոեզիայի յուրատեսակ նախերգանքը եղան աշխատանքի ու պայքարի մոտիվներով նրա մի քանի հորաշունչ բանաստեղծությունները՝ «Նամուս ու դեյրաթ» (1895), «Մեր ցավը մեծ է» (1899), «Ամբոխի կոչը» (1902), «Կաթսավարը» (1904) և այլն: Իսկ ռուսական առաջին հեղափոխության նախօրյա փոթորիկների տարիներին նրանք եկան հենց այդ պոեզիայի ծնունդը նշանավորող նրա գաղափարա-գաղափարական նպատակասլաց, հեղափոխական բարձրացնող ռոմանտիկայով ճոպեցված մարտական, ճնշող, պարզ ու ազդու հայանի երգերը՝ «Թեև բանվոր է, բայց թաղվոր է», «Դարիքնը» («Զարկ, զարկ, ընկեր, մեզ բախտ կտանի, Մոտ է անալ օրը...»), «Իմ աշխարհը», «Մե՛կ էլ, մե՛կ էլ», «Հեղափոխություն», «Մեռան՝ չկորան», «Մայիսմեկյան երգ», «Պրոլետարիատին», «Անա նորից ես» և էլի ուրիշներ: Աշխատավոր զանգվածների քաղաքական, բարոյական, հեղափոխական դաստիարակության, պրոլետարիատի մղած ազատագրական պայքարի ու հաղթանակի մեծ գործին նպատակաուղղված այդ բանաստեղծությունները տպագրվում էին բոլշևիկյան մամուլում, առանձին քարտերով տարածվում էին որպես հեղափոխական կոչ-թռուցիկներ, արտասանվում էին բանվորության հակացարական ցույցերի ու միտինգների ժամանակ: Հիշենք, օրինակ, «Մե՛կ էլ, մե՛կ էլ» մարտաշունչ բանաստեղծությունը, որը հեղինակը կարդացել է 1905-ի հոկտեմբերի 17-ի ցարական տխրահռչակ «Մանիֆեստի» դեմ Թիֆլիսի Նախալովկա հրապարակում կազմակերպված զանգվածային ցույցի ժամանակ և որը «բոլշևիկները կոչի ձևով տպագրեցին և տարածեցին»[1]:

Հետագայում, անգամ ատոլիպինյան ռեակցիայի մգծավանջային պայմաններում, ապա հեղափոխության նոր վերելքի տարիներին, Հ. Հակոբյանը հյուսեց խրախուս ու առնական, հուզաբերիր ու կենսահաստատ բանաստեղծությունների ևս մի ամբողջ «գեղեցիկ ծաղկեփունջ» (Ստ. Շահումյան): Բանաստեղծի նախորդ ստեղծագործությունների նման սրանք նույնպես գտնվում էին մեր հեղափոխական գործիչների, բոլշևիկյան մամուլի ուշադրության կենտրոնում, չէին վրիպում մեր առաջավոր մտավորականների տեսադաշտից, գնահատվում էին ըստ արժանվույն: Հիշենք, թե «Նոր առավոտը», որը Ավ. Իսահակյանի հեղինակավոր վկայու-

[1] *«Հայաստանի կոմ. կուս. պատմության ուրվագծեր», Ե., 1967, էջ 87։*

թյամբ «սոցիալիստական անգրանիկ և հայրող պոեմն էր մեր գրականության մեջ»[1], որպիսի եզրատարությամբ ճնեց, լավը և բեռին անաչառորեն մատնանշել է Սա. Շահումյանը (1910), իսկ Ս. Սպանդարյանը 1911-ին հատուկ գրախոսությամբ նավատել է, թե «Հայ տաղանդավոր գրողի ու բարգմանիչի... նոր երկը՝ «Նոր առավոտը» պատկերում է ինդիվիդուալ և հասարակական ձրգտումների ընդհարումը անհատի մեջ: Առանձնապես հաջող և գունագեղ են պոեմի այն տեղերը, ուր սինթետիկ ձևով ճկարագրվում են ժամանակակից ֆաբրիկաները, գործարանները, հանքահորերը, բանվորների աշխատանքը, նրանց տառապանքները, նրանց ուժը և նրանց հույսերը»[2]:

Հ. Հակոբյանը ոչ միայն ստեղծում էր պրոլետարական-հեղափոխական գրականություն, այլև հրապարակախոսական, գրաքննադատական, բատերախոսական ճոդվածներով ու ելույթներով, նաև որպես բոլշևիկյան մի շարք անլեգալ ու լեգալ պարբերականների խմբագրական կազմի անդամ, գրական բաժինների վարիչ («Պրոլետարիատի կոիվը» (1905), «Կայծ» (1906), «Պայքար» (1915—1917), «Պահակ» (1920) և այլն) հետևողա՝ անորեն ծառայում էր բոլշևիկյան գրական քաղաքականությանը, ճանդես էր գալիս ամեն տեսակ անկումային, բուրժուազգայնական, ռեակցիոն գրական ճոսանքների, «արվեստը արվեստի համար» արատավոր տեսակետի դեմ: Կուգենայինք առանձնացնել, մասնավորապես, նրա նախաձեռնությամբ, անմիջական ջանքերով և Մ. Աբազու հետ համատեղ խմբագրությամբ 1914-ին լույս տեսած «Բանվորական գրադարան» մատենաշարի «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմ» այմանախները: Դրանց ինը բողարկումներում առաջին անգամ միասնաբար, ճամախմբված ձևով ճանդես եկան հայ պրոլետարական պոեզիայի, արձակի և բատերագրության՝ որպես արդեն ձևավորված ու զարգացման լայն ճեռանկար ունեցող գրական ուղղության ներկայացուցիչները: Հիշարժան փաստ է, որ այմանախները նույն 1914-ի մարտի 30-ին և հունիսի 29-ին դրվատվեցին լենինյան «Պրավդա» բերթի էջերում:

Ինքնին հասկանալի է, Հակոբ Հակոբյանը ստանց ողուսնեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմական հաղթանակը, սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում, և մի նոր թափով շարունակեց իր հասարակական-մշակութային ու ստեղծագործական բուռն գործունեությունը, դարձավ սովետահայ պոեզիայի հիմնադիրներից մեկը և առաջինը պետական-կառավարական պաշտոնական հրամանագրով արժանացավ Հայաստանի և Վրաստանի ժողովրդական բանաստեղծի պատվավոր կոչման (1923-ին): Նրա ծառայություններից նշենք մի երկուսը: Նա սկզբնավորեց հայոց բանաստեղծական լենինապատումը, ստեղծեց քաղաքական ներբողների «Կարմիր զալերեա» շարքը: Նա առաջիններից մեկն էր, որ ի խորոց սրտի երգեց սովետական ազատ ազգերի եղբայրական անխախտ դաշինքը և միասնական հայրենիքի զգացումը, ազատագրված աշխատանքի հրաշագործ ուժը և սոցիալիստական շինարարության հերոսական պաթոսը, այս տեսակետից, տասնյակ բանաստեղծություններից բացի («Զորագնում», «Ռիոն-գետ», «Մետաքսագործարանում» և այլն), ճատկապես նշանակալից են նրա պոեմները՝ «Աստվածները խռեցին» (1922), «Քայլելիկ է Շիր-կանալը» (1925), «Վոլխվսարոյ» (1225), «Լենինգրադյան պոեմ» (1928—1932): Կարդալով հիշյալ և նախորդ երեք պոեմների ֆրանսերեն թարգմանությունները, ականավոր գրող Ռոմեն Ռոլանը թարգմանչին ուղղված նամակում գրել է. «Հակոբյանի պոեմների Ձեր թարգմանությունը ինձ հույժ հետաքրքրեց: Դրանք ինձ այնպիսի էպիկական երգեր են, որպիսի ես սպասում էի, որ առաջ կբերի ձեր Մեծ հեղափոխությունը: Հայերեն լեզվով դա պետք է լինի հզոր երաժշտություն»:

Թե՛ նախահոկտեմբերյան, թե՛ սովետական տարիների իր ամբողջ հասարակական և գրական գործունեության ընթացքում Հ. Հակոբյանը հետապնդել է մի գերագույն նպատակ՝ ծառայել բանվոր դասակարգի հեղափոխական-ազատագրական պայքարին, բոլշևիկյան կուսակցության մեծ ու սրբազան գործին, սոցիալիստական հասարակության և հոգևոր մշակույթի կառուցմանը և ինչպես ինքն է ասել՝ «Նոր սերնդին կրթել կոմունիստական ոգով»: Այդ վեհ նպատակին նա անմնացորդ նվիրաբերեց իր ողջ գիտակցական կյանքը, հաղարացու և բանաստեղծի իր բոլոր ուժերը: Հակոբյանը երգել է մարդկության կյանքում շրջադարձային նշանակություն ունեցող պատմական իրադարձություններ՝ ռուսական երեք աշխարհացունց հեղափոխությունները, աշխարհում առաջին սոցիալիզմ կառուցող սովետական ժողովուրդների աշխատանքային մեծագործությունները, երեույթներ, որոնք նրա պոեզիային հաղորդել են բարձրագիտական բարձր պաթոս, հրապարակախոսական շունչ, մարտական թափ, հերոսական ռոմանտիկական բնույթ: Նա ստեղծել է ներշնչող-ոգևորող ռազմակոչներ, հեղափոխական հանդիսավոր հիմներ ու ռեքվիեմներ, քաղաքական նպատակասլաց ներբողներ ու «ներդաշնակ տեղերգներ» (Լոնաչարսկի) ի փառս պրոլետարական պայքարի ու սոցիալիստական շինարարության: Հայոց ճինավուրց հզոր մշակույթը նա հարատացրել է մարքսիստական գաղափարախոսությամբ, կոմունիստական բարոյականության սկզբունքներով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ազգերի հեղափոխական բարեկամության, սոցիալիստական հայրենասիրության մասին գաղափարներով և, բնականաբար, որոնել է համապատասխան արտահայտչական միջոցներ, բանաստեղծական ձևեր, պատկերներ, լեզվաոճական մշակույթ: Միշտ չէ, որ այդ որոնումները պսակվել են հաջողությամբ, նրա պոեզիայի մեջ կան թույլ, սխեմատիկ էջեր, առանձին երգեր մեր օրերում չունեն երբեմնի հնչեղությունը, եթե կարելի է ասել՝ զինվորի նման «զոհվել» են պայքարի դիրքերում: Բայց նրա լավագույն, «որոտի պես հատու, խրոխտ», անլեզի ու անմիջական բանաստեղծությունները ու պոեմները տեղ են գտել հայ պոեզիայի բնտիր հավաքածուներում, դպրոցական դասագրքերում, թարգմանվել են տարբեր լեզուներով և պահպանում են իրենց ճանաչողական, դաստիարակչական, գեղագիտական ուժը: Հ. Հակոբյանի ստեղծագործությունը պատմական զարգացման օրինաչափությամբ երևան եկած մի անհրաժեշտ օղակ էր, որը կոչված էր շղթայելու գաղափարական և սովետական հայ գրականությունները: Նրա արժեքավոր էջերը, հիրավի, «ճանապարհել են մի ամբողջ էպոխա հայ պրոլետարական գրականության, սոցիալիստական ռեալիզմի հայ գրականության կազմավորման գործում, պատվավոր տեղ ունեն համաշխարհային պրոլետարական պոեզիայի պատմության մեջ»[2]:

1 Ավ. Իսահակյան, *Երկեր, Ե., 1959, հ. 4, էջ 134։*

2 Ս. Սպանդարյան, *Երկեր, Ե., 1958, հ. 2, էջ 169։*

1 *«Սովետական արվեստ», 1935, № 10։*

2 «История армянской советской литературы», Изд. «Наука», М., 1966, с. 323 и 333.

* * *

Հայ պրոլետարական-հեղափոխական պոեզիայի սկզբնավորման ու զարգացման գործում մեծ երախտիք ունի տաղանդավոր բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանը (1876—1927): Ունեզուրկ աշխատավորի՝ արհեստավորի այդ ուշիմ ու զգայուն դուստրը մանուկ հասակից տեսավ կյանքի սոցիալական հակասությունները, ինչպես իրեն է ասել իր իմքնակենսագրության մեջ՝ «մարդկանց դասակարգային անհավասարությունը», որից «հայրական խրճիթը խարխուլ» և տխրությամբ լցվեց «ճոխ պալատներ» ունեցող հարստահարիչների նկատմամբ: Հենց այդ զգացումներն էլ նա արտահայտեց իր առաջին բանաստեղծություններում՝ «Վերջալույսի վառ շողերով», «Գեղջուկի դարդերից», «Ղարիպ մշեցուն» և այլն: Դրանք հագեցված են խոր սիրով ու կարեկցանքով դեպի պանդուխտ գեղջուկը՝ «անտուն մնացած ախպերը», «քաղցից կիսամեռ քույրը», «ավեր վաքանը»: Երիտասարդ բանաստեղծուհին ցավով երգում էր սուլթանական բռնակալության հայաջինջ քաղաքականության պայմաններում տառապող հայության և ընդհանրապես «գերի սրտերի» դառն ճակատագիրը, «տխուր կսկիծը» և «լավ օրերի հույսը»: Մարդկային անհավասարության, սոցիալական և ազգային ճնշման դեմ ծառացող հայրենասեր ու մարդասեր բանաստեղծուհին, որ ամուսնու և երեխաների հետ պիտի ուղևորվեր Մոսկվա, ստիպված եղավ 1903-ին բնակություն հաստատել Դոնի Ռոստովում: Սենդավայր Ալեքսանդրապոլից (արդի Լենինական), իրեն քաջածանոթ արհեստավորական միջավայրից նա ընկավ արդյունաբերական բանվորաշատ քաղաք, որտեղ դարակզիպ բուռն թափով ծավալվել էին բանվորական շարժումները, գործադուլները, հեղափոխական պայքարը: Ականատես լինելով 1904-ի մայիսմեկյան մի ցույցի, «հզոր երգերով ու կարմիր դրոշակներով» շարժվող բանվորական կուռ շարքերի երթին, Շ. Կուրղինյանը վերհիշում է. «Վերադարձա տուն ուշ, հոգնած, փոշոտված, վերածնված և նկատեցի, որ իմ սիրտն ու հոգին մնաց նրանց հետ անվերադարձ կերպով, հավիտենապես: Այդ ժամանակվանից սկսած բանվորական հույսերը, միտինգները, ցույցերը, մանիֆեստացիաները, ժողովները ունենում էին ինձ վրա մոգական ազդեցություն[1]»:

Եվ ապա՝ «... Ես ինձ շատ պարտական եմ զգում ռուսական կյանքին, մեր ծննդի փոքրիկ օրերին (1909—1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունը—Ս. Մ.), և հատկապես ռուսական պրոլետարիատին: Ռուսաստանը իմ քաղաքական մոտիվների հայրենիքն է»[2]:

Գեղեցիկ խոսքեր չեն սրանք, այլ պատմական ճշմարտություն, որի վկայությունն են նրա պրոլետարական-հեղափոխական պոեզիան, մասնավորապես «Արշալույսի զոհաբերներ» նշանավոր ժողովածուի մեջ ամփոփված և պարբերական մամուլում տպագրված մի քանի տասնյակ ուժգնաթափ ու կենսանույզ բանաստեղծությունները: Ալ. Մյասնիկյանը, որի շահերով էլ լույս տեսավ վերոհիշյալ ժողովածուն, Շ. Կուրղինյանին ուղղած մի նամակում գրել է. «Ձեզ անհագին կարևոր աշխատանք է վիճակված... Կամենում եմ Ձեզ հայտնել իմ

[1] ՊԱՄ, Շ. Կուրղինյանի ֆոնդ, գործ 11—18։

[2] Ю. Веселовский, Русское влияние в совр. арм. литературе, М., 1919, с. 26.

կարծիքն այն բանաստեղծի մասին, որ երգում է պրոլետարիատի տաղը և երգում մեծ շնորհով ու վարպետությամբ»[1]: Հրապարակային մի հոդվածում ևս Ալ. Մյասնիկյանը հավաստում է, թե «բանաստեղծուհու անհագին թվով հիրքվածները... մեր պրոլետարական մասսայի փառքն ու պարծանքն են կազմում»[2]:

Հ. Հակոբյանի հետ Կուրղինյանը ծանրակշիռ ավանդ է մուծել հայ, և ոչ միայն հայ, պրոլետարական-հեղափոխական պոեզիայի զանձարանը: Ճիշտ է, նա չէր մատնչում բանվորական բարիկադներում, ստոլիպինյան ռեակցիայի մղձավանջային տարիներին զաղափարական արոշ տատանումներ ունեցավ, որոնք արտահայտվեցին տառանձին ոտանավորների և հատկապես չհրապարակված-չբեմադրված թատերգությունների մեջ, բայց իրեն զգում էր ազատության «սուրբ կռվի» եկած բանվորության մարտական շարքերում և հավատում էր նրանց հաղթանակին: «Սուրբ ազատության» համար մահառողների հետ հոգեհարազատության անկեղծ զգացումով և հաղթանակի պայծառ հավատով էլ հագեցված են նրա հանրածանոթ բանաստեղծությունները: Հուզական բուռն թափով, հարտար կառուցվածքով և քաղաքացիական հուժկու պաթոսով հատկանշվող նրա բանաստեղծությունները պայքարի խիզախ կոչ են, պրոլետարական պոեզիայի արժեքներ, որ ժամանակին ոգեշնչել, արդար զոտեմարտի են մղել բանվոր-աշխատավորներին, խոր հավատ ներշնչել հաղթանակի նկատմամբ: Հմտորեն հյուսված բանաստեղծությունների մի տեսակ ալիքավորվող, գունեղ ու հյութեղ պատկերներով Կուրղինյանը ժողովրդական լայն զանգվածներին կոչում է հավատարիմ մնալ հեղափոխական բանվորության պարգած ազատագրական պայքարի «հպարտ փոքփոքող կարմիր դրոշին» («Փառք ի բարձունս»), անվարան միանալ մահառող շարքերին, որոնք գալիս են՝ «Կրծով փշրելու փառքը տիրողին, Գանը բռնության, սառուկի շղթան» և ուղի հարթելու մարդկային, սոցիալական, ազգային ազատության ու հավասարության համար («Բանվորներ»), համոզում ու հաստատում է, թե այլևս անմարելի է «սոցիալիզմի լույսը» («Այնտեղ գնացեք»), մատ է մարդկության հրազած ազատ կյանքի արշալույսը՝ «Այսօր թե վաղը մերն է հաղթանակ Սուրբ ազատության» («Բանվորի երգը»): Կուրղինյանի հեղափոխական պոեզիայում մեր առաջ հառնում է պրոլետարական պայքարի գիտակից ու անձնվեր հերոսի հմայիչ կերպարը, որը ծառանում է ինչպես սոցիալական և ազգային ճնշման, բռնության, «անարդարության ու կապանքների» («Հանգցրե՛ք ջահերը»), այնպես էլ մտքեր մրթագեղ կրոնական քույնի՝ «կեղեքիչների զենքը քառաթև» խաչի դեմ («Հե՞ռ տար քո խաչը»): Պրոլետարական մյուս զրողների, մեծ Գարիսի ուղիով անվարան բնթացող տաղանդավոր հեղինակների հետ միասին և իր սեփական, իմքնուրույն, վառ անհատական ձայնով բանաստեղծուհին երգում է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հեղափոխական դաշինքի գաղափարը («Մեր ցավը մեկ է»), քեղհանուրի ազատության համար մղվող «մեծ կռվում» բոլոր ժողովուրդների մարտական համերաշխության կենսական անհրաժեշտությունը («Միջազգային երգ», «Հայ բանվորներին»), պրոլետարիատի հաղթանակի մեջ է տեսնում «շղթայված ու գերի» կնոջ լիակատար ազատագրման հնարավորությունը («Մեզ էլ միանա՛ք»), պայծառ լավատեսությամբ հաստատում է, որ արբազան պայքարի «մեծ հաղթանակով» կստեղծվի ազատ աշխա-

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, 1, էջ 43։

[2] «Մշակ», 1910, № 26, փետրվարի 5։

տանքի, հաշտ ու խաղաղ, երջանիկ կյանքի մի նեղդաշնակ աշխարհ, որի համար մահանալը մեծագույն պատիվ է, հերոսաբար զոհվելը՝ հավերժական փառք ու անմահություն («Հոգ չէ թե մեռնեմ»):

Նորոգ ու նեղդաշնակ այդ կառուցման գաղափարը դրվեց Հակոբ Խրիմյան հեղափոխության պատմական հաղթանակով, որը և ցնծագին, խանդավառ հոգով դիմավորեց Շ. Կուրդիկյանը: Յավոք հա հիվանդ էր, երբ տեղափոխվեց Երևան (1924-ին) և վախճանվեց 1927-ին, ուժ ու հնարավորություն չունեցավ ամբողջ ավյունով տեղավորելու: Այդուամենայնիվ, 1917-ի փետրվարին ցարիզմի անկման առթիվ նա գրեց «Բանվորական քայլերգ», «Նոր տեր», «Մաղթանք» և ուրիշ նորաբոլոր երգեր, իսկ «Ծծ Հակոբիրից» նեռ ստեղծեց կառուցվող նոր կյանքի, նորոգ հայրենիքի, մեր լուսաշող գալիքի թեմաներով մի շարք բանաստեղծություններ: Շ. Կուրդիկյանի հեղափոխական-պատերազմական պոեզիան հայ գրականության թարմաշունչ ու մնայուն էջերից է:

* * *

Հայ պրոլետարական և սովետական գրականության ակունքների մոտ կանգնած եռախտավոր դեմքերից է տաղանդավոր արձակագիր Մովսես Առազին (Հասրաթյան, 1878—1964): Նախնական կրթություն ստանալով ծննդավայր Նոր-Ջուղայում (այժմ՝ Նահիջևանի ավան, Վրացական ՍՍՀ), նա ուսումը շարունակեց Թիֆլիսի ուսուցչական դպրոցում. ապա ընդունվեց Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտ (1899): Դպրոցում, ուր սովորում էր Շահումյանը, մասնակցեց վերջինիս կազմակերպած աշակերտական «Միտքաս» գաղտնի ընկերության հավաքույթներին, կարդաց հեղափոխական-դեմոկրատներ Չերնիշևսկի, Դոբրոլյուբով, Պիսարև, Նեքրասովյան, ինստիտուտում կապվեց հեղափոխական ուսանողության հետ, ուսումնասիրեց մարքսիստական գրականություն՝ «Կոմունիստական մանիֆեստ», «Կապիտալ», լենինյան «Ինչ է արվում», պրոպագանդիստական աշխատանք տարավ քանվորական միջավայրում, մասնակցեց հակացարական ցույցերին, ձերբակալվեց, ամսօրվեց Կովկաս (1903): 1905-ին նա վերստին Պետերբուրգում էր, ցարիզմի դեմ բարձրացող համաժողովրդական պայքարի կենտրոնում: Վերադառնալով Անգլիվոկաս 1906-ին, Մ. Առազին հույն թվականի սեպտեմբերին «Մուրճ» ամսագրում Ֆերենցոս ստորագրությամբ տպագրեց իր առաջին պատմվածքը՝ «Դոն Կարապետի աշխատանքը դեպի Կղերաստան»: Նա արդեն հեղափոխական պայքարում կոփված, մարքսիստական աշխարհայացքով զինված անձնավորություն էր, Մ. Գորկու երկրպագուն ու հետևորդը, Մա. Շահումյանի մարտական ընկերն ու գինակիցը: Եվ իր առաջին քսան պատմվածքում երիտասարդ արձակագիրը երգիծական ուռ ծաղրի է ենթարկում «հեղափոխական» նորաբոլոված քուրժուա-ազգայնական «դաշնակցություն» կուսակցության արկածախնդրական գործունեությունը, խոսքի և գործի աղաղակող հակասությունը: Պատմվածքի հերոս Դոն Կարապետը «դաշնակցության գինվորաց» ուխտի «սարպեա» է, մեծաբերան հռետոր՝ «Ո՜վ վեհ գաղափարներ, փսեմ իդեալներ: Ո՜վ աշխատավոր ժողովուրդ, ո՜վ սուրբ արդարություն, ո՜վ ազատություն, ո՜վ եղբայրություն...»: Ուխտում է «բանվորներին և գրվիծներին» ազատել ծնշման ու շահագործման լծից, փշրել բռնության շղթաները, Հայաստանը փրկել գաղութարար տերությունների կապանքներից... Եվ իր գինակիր գեղջուկ խեչանի հետ արշավում է Կղերաստանի, ասել է՝ բռնակալության ամրոցի վրա: Բայց տեղ հասնելուն պես «սուրը գաղթեմ» է կենում... «ոխեդիմ բշնամի» Մեծ կղերի հետ, որին նվիրում է իր ձին, ստանում է կաղվածքների կառավարչի եկամտաբեր պաշտոն, խլում է մոլորված գեղջուկ խեչանի իշուկը և իր «սարպեական ուխտը» համարում է ավարտված: Գեղեցիկ խոսքերի սիրահարը հանդիսանում է հարստահարողների շարքերը, զոհանում ազատության թշնամիների դաշնակիցը և գրանից հետո էլ մոլորեցնում խաբված խեչային, թե «էհ մաքին կնառաձեմ, անհոգ կաց»: Երգիծանքը գիպակ է, նպատակասլաց, ոռաչակի և մեկնաբանությունների կարիք չի զգացվում:

Մովսես Առազու հաջող պատմվածքները, ուրծակ բանաստեղծությունները, այլաբանական զրույցները լույս տեսան «Խաթաբալա» երգիծական ճանդեսում, նրա և Հ. Հակոբյանի խմբագրությամբ հրատարակվող «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալրոմ» ալմանախներում, սոցիալ-դեմոկրատական «Գայլեր» թերթում և այլուր: Նշենք դրանցից «Մենավոր լապտերը», «Վիրավոր թռչունը», «Արևը», «Կիսատ տունը», «Սպիտակ հերոսուհին» (հետագայում «Կարմիր հերոսուհին»), «Գրամեքենը», «Վանդակներում», «Կարմիր նամբույրը», «Կարապի երգը» («Հեքիաթ»), «Անցյալի ստվերը», «Թևերը», «Կախարդական այգին», «Վերջին տերևը», «Ոչյունոտ ծաղիկներ» և այլն: Հայ պրոլետարական և դասական արձակի գեղեցիկ էջերից են տաքնի և իրավամբ արժանացել են բարձր գնահատականի: Մասնավորապես անվանի հեղափոխական գործիչ և մարքսիստ քննադատ Ասմանազ Մռավյանը (Ազատ) «Գայլեր» թերթում (1915 թ., № 3) գրել է. «Առազին... պատմվածքները բարմ և գեղեցիկ տաղանդի կնիք են կրում... Առազիի գույները վառուլ են, բայց և արոչ, նրա ամեն մի տողից բուրում է ազնիվ, լավատես ձգտումներով լի տրամադրություն: Առազին պետք է մշակի և զարգացնի իր համակրելի տաղանդը: Նա ապագա ունի»: Հիրավի, Առազու արձակին հատուկ են հնարական երբությունը, հուզական հագեցվածությունը, ճակիրն ու հստակ խոսքը, գաղափարական-բարոյական խորիմաստ այլաբանությունների ու խարհրդանիշների պատկերավոր լեզուն: Պատկերելով ռնեզուրկ և իրավազուրկ աշխատավոր մարդկանց ողբերգական ճակատագիրը բուրժուական հասարակության մեջ, Առազին իր ստեղծագործությունները լիցքավորում է սոցիալական շարիքների դեմ հեղափոխական պայքարի, «անիծյալ աշխարհը» ջնջելու, իրապես ազատ ու երջանիկ կյանք ստեղծելու գաղափարով: Նրա կերտած կերպարները ոչ միայն բողոքում են այն բանի դեմ, որ «վերևի ճարկը, խլում է «արևի շողը», ստվեր գցում «ներքևի ճարկին» և սպանում «ոսկեհեր աղջկան» («Արևը»), որ «ճարտար ու անհոգ» անհատները բարիքներ ստեղծող ճոճ զանգվածներին պահում են բանտային վանդակների, շղթա-կապանքների մեջ («Վանդակներում»), այլև գիտակցում են, որ դրանք փշրելու է կոչված հեղափոխական պրոլետարիատ՝ «չորրորդ դասը» («Հեքիաթ», «Կարմիր հերոսուհին», «Կիսատ տունը»): Հիշենք տարբեր ազգության դասակարգային եղբայր-գինվորների մարտական երդումը «Մենք... կխայլենք դեպի բաղաքները բարահատակ, բուք ու բամիների միջ մենք հերս կխուժենք ամենուրեք և կհնչեցնենք մեր ճգոր ձայնը: Մենք անեղդղոր զանգեր կհնչեցնենք, շռինդ ու շխկոցով կրացնենք փակ դռները և հերս կտանենք հողմավար ու ցրտանար ճշմարտությունը...»:

Մովսես Արազու նախահեղափոխական ստեղծագործության անմիջական շարունակությունն ու զարգացման նոր աստիճանը եղան սովետական ժամանակաշրջանի նրա պատմվածքները, վիպակները, վեպերը, որոնք ուրույն տեղ ունեն մեր նորագույն գեղարվեստական արձակի պատմության մեջ: Կյանքի խոր ճանաչողություն և ստեղծագործական ճարտար փարձ ունեցող գրողը ճանգես եկավ որպես այդ արձակի հիմնադիրներից մեկը: Տակավին 20-ական թվականներին նա հրատարակեց բազմաթիվ գաղտրիկ հավելներ ու պատմվածքներ: Նա առաջինների շարքում սոցիալիստական հումանիզմի դիրքերից քարձրացրեց աշխարհյան բռնադատված ժողովուրդների տառապալից կյանքի և ազատության հրազանգի թեման, պատկերեց մեր երկրում ազատագրված աշխատանքի մեջ մարդկանց գիտակցական, հոգեկան, բարոյական վերափոխման ընթացքը («Ընկեր Մուկուչ», «Աչքը վախեցած Հանեսը»), ցույց տվեց նոր կյանքին շմերվող, հին կարգերի վերադարձը երազող «նախկիններին» անցողիկության օրինաչափությունը («Անցվարները» շարքը): Հետագայում, պատմվածքների նոր միասին, Արազին ստեղծեց սոցիալիստական շինարարության, երկրի արդյունաբերացման, գյուղի կոլեկտիվացման, կերտող-կառուցող մարդու աշխատանքային առօրյայի, հոգեբանության թեմաներով վիպակներ («Լուսնի շողերով», «Ջրվեժի ցոլքում») և 1905—1907-ի ռուսական առաջին հեղափոխության դեպքերից առնված «Այրվող հարիզոնը» պատմահեղափոխական-հեղինակենսագրական արժեքավոր վեպը (1946): Հայրենական մեծ պատերազմի դրվագները, սովետական մարդկանց հայրենասիրությունը, օխրագործությունները ռազմադաշտում և թիկունքում, սոցիալիստական ազգերի եղբայրությունը, բարոյա-հոգեբանական միասնությունը, հաղթանակի հզոր հավատը և պատմական հաղթանակը իրենց արտացոլումը գտան Արազու մի ամբողջ շարք պատմվածքներում («Անհաղթները» ժողովածուն) և «Մառացած երկիր» («Հաղթական ծիլեր») վեպում: Նրա գրչին է պատկանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի համար հակատագրական նշանակություն ունեցած ռուսական կողմնորոշման, ռուս մեծ ժողովրդի անձնանվեր օգնության ու բարեկամության հարցերը շոշափող «Իսրայել Օրի» քանկան պատմավեպը, ինչպես նաև՝ մանկա-պատանեկան մի շարք նշանակալից պատմվածքներ, որոնք ամփոփված են «Մանկական պատմվածքների» երկու (1938 և 1952) հավաքածուներում:

Մենք փորձեցինք մի քանի առավել բնութագրական նմուշերով ներկայացնել այդ հատորում տեղ գտած երեք հեղինակներին: Նրանց ու նրանցի կարդալով այս գրքի մեջ ընդգրկված չափածո և արձակ ստեղծագործությունները, ընթերցողը կհամակվի գրանց հեղինակներից յուրաքանչյուրի յուրովի հնչեցրած հեղափոխական գաղափարախոսությամբ, կոմունիստական բարձր բարոյականությամբ, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, սոցիալիստական հայրենասիրության և հումանիզմի վսեմ գաղափարներով ու ազնիվ զգացումներով, խորապես կզգա լենինյան կուսակցության իմաստուն ղեկավարությամբ բազմազգ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի ու հաղթանակի համաշխարհային-պատմական նշանակությունը, սոցիալիզմի կառուցման հանապարհին սովետական մարդկանց, եղբայր ազգերի հերոսական մեծագործությունների վեհությունը:

ՍԱՐԻԲԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՄՈՒՍ ՈՒ ՂԵՅՐԱԹ

Դեռ քսանվախտոս մի մանուկ էի
Եվ յոթ տարեկան անգամ չկայի,
Երբ ինձ ավանդեց հայրս իմ անուն՝
Մի սրբազան խոսք, և դա էր՝ «նամուս»։

Դպրոցի շեմքին դեռ ոտք չդրած՝
Դեռ նոր էի գիրք ես ձեռքս առած,
Երբ մորս համբույր թրջեց իմ ճակատ
Ու պատվիրեց ինձ անել միշտ «ղեյրաթ»։

Բայց կարճ մնացի ուսումնարանում,
Աղքատի բախտը, դե, ի՞նչ է լինում...
Հորս պատվերով սովրեցի արհեստ,
Սիրեցի նրրա վաստակը համեստ։

Եվ այն օրից ետ,
Երբ ընկերացա մուրճ ու սալի հետ,
Քրտինքը դեմքիս ծորում է կաթ-կաթ
Եվ ինձ հիշեցնում՝ նամուս ու ղեյրա՞թ։
Նամուս ու ղեյրա՞թ։

ՈՒԽՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ

(Մ. Ա.-ին)

Թող ճակատիցդ մի վարդ պոկեմ՝
Սիրո համբույր-հիշատակ,
Թող նրանով ուխտս կնքեմ,
Ուխտ անարատ ու շիտակ։

Նրա շնչով ոգևորվեմ,
Տոկամ կյանքի պայքարին,
Նրա բույրով թող տոգորվեմ,
Սիրեմ ցավը թշվառին։

Թող այդ վարդը կրծքիս ապրե
Ե՛վ անթառամ, և՛ անվերջ,
Թող նա հոգի ինձ ներշնչե՝
Անվախ կռվել կյանքի մեջ...

Թո՛ղ, թո՛ղ պոկեմ ես այդ վարդը,
Թաղեմ նրան սրտումս,
Եվ միշտ Նրա բույրն զգալով,
Հիշեմ ուխտն ու երդումս...

1893

ՓՈԹՈՐԿԻՑ ՀԵՏՈ

Երբ խորաձևին հայացքս լարած՝
Նայում եմ մաշված, գունատ պատկերիդ
Եվ այդ գրավիչ դեմքիդ գծերում
Տեսնում թաքնված կիսամար ժըպիտ՝

Երբ քո աչքերը հեռուն դիտելիս
Մի վերջին ուժով փայլում են հանկարծ
Եվ կամ խոնջացած վշտերի բովից
Գաղտնի մրմունջով մատում մելամաղձ՝

Ես միշտ հիշում եմ ալեկոծ ծովը՝
Նոր հանգիստ առած անզուսպ փոթորկից,
Ես հիշում եմ այն մեղմ ալիքները,
Որոնք ժպտում են աշնան արեգից։

Եվ դուք, սև՛ աչեր, մի օր վառվռուն,
Իսկ այժմ տանջված հուսախաբ սերից,
Ինձ հիշեցնում եք ծովը անդորրուն,
Հաղթված, զսպված ահեղ փոթորկից...

1894

ԷԼԻ ՆՈՐԱՆ

Այո՛, դու՛ էիր, որ արմատախիլ
Արիր իմ մատաղ կյանքի ծաղիկը,
Դու՛ էիր, որ քո անմիտ վարմունքով
Երգչիս դարձրիր քո խաղալիքը։

Եվ ուրախ էիր, որ քո դյութական
Քմահաճությամբ մի սիրտ մաշեցիր.
Դու ետ չդարձար նայելու անգամ,
Ո՞րչափ անեղորմ ինձ հետ վարվեցիր։

Եվ ո՞չ ցավեցիր, որ համառ կամքով
Քարուքանդ արիր սիրույս աղբյուրներ,
Ուր ցայտում էին անզուսպ հոսանքով
Ազնիվ ձգտումներ, սուրբ նպատակներ։

Ասա՛ գոնե այժմ, ե՞րբ պիտի մոտ գաս
Այս կորստաբեր ցավից փրկելու,
Լուռ տանջվող երգչիս, ե՞րբ պիտի հույս տաս
Մեր սիրո դաշն կրկին կապելու...

Օ՜, այն ժամանակ... եթե իմանաս,
Որպես պիտ տոնեմ իմ վերածնություն,
Որպես պիտ գրկեմ սիրովդ ներշնչված
Նոր կյանք խոստացող համայն բնություն։

Հունվարի 15. 1894 թ.
Թիֆլիս

ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ...

Հասկանում եմ, ինչու էիր
Ինձ հմայում, կաշկանդում
Եվ աչքերով սիրախոսուն
Սիրտս հուզում, բորբոքում։

Քեզ պետք էր մի անզուսպ, մատաղ
Զգացմունքով պատանի,
Որ նորա հետ խաղայիր խաղ,
Դատարկ սրտիդ նյութ լինի։

Սովոր էիր անփորձ սրտեր
Գերել անհագ գրգիռով
Եվ այրելով, նորան նետել,
Մի ուրիշը փնտրելով։

Օ՜, հասկացա, ինչու էիր
Ինձ հմայում, կաշկանդում
Եվ հեշտասեր վառ աչքերով
Սիրտս հուզում, բորբոքում։

Հունիսի 26. 1894 թ.
Թիֆլիս

ՍԻՐՈ ԿԱՅՏԸ

Խաղաղ էի, անհույզ էի,
Բորբոքեցիր ինձ հանկարծ.
Հանգստանալ հենց կուզեի,
Դու վառեցիր սիրո կայծ։

Օ՜, թո՜ղ օրհնվի այդ կայծը սուրբ,
Նորան թաղեմ իմ կրծքում
Եվ խնամեմ մրրկածուփ
Սրտիս անմար մորմոքում,

Մինչև կրգաս. Կո՜ւյս Վեստալյան,
Հոգույս տաճար կդմտնես,
Նրա մեհյանում դու հավիտյան
Սիրո խունկը կրծխես...

Թիֆլիս, 1895

ՔՐԴԻ ՇՈՒՆԸ

(Մանուկ հուշերից)

Դաժան ձմեռվա օրերին դարձյալ
Քեզ եմ ես հիշում, իմ մանուկ անցյալ,
Երբ տատս նստած քուրսու մոտ զվարթ՝
Գուլպա էր գործում, պատմում ինձ հեքիաթ.
Եվ ձյունը փայլուն, հալածված բուքից,
Քուլաներով էր թափվում երկնքից.
Մեր բակի շունն էլ իր բունը քաշված,
Ձյան փաթիլները գիտում էր ապշած։
Ես ննջում էի քուրսու մոտ ձգված,
Փափուկ վերմակը մինչ՝ կուրծքս քաշած,
Եվ ի՜նչ երազներ, ցնորքներ անմեղ
Չէին գրգռում իմ մանուկ ուղեղ...
Հանկարծ սթափվում, աչքերս բացում,
Տեսնում եմ տատիս—մլերն է շարժում.
Շիկնած թշերով պառկում եմ նորից,
Էլ չեմ վախենում վատ երազներից—
Պառավը ինձ մոտ, անվե՜րջ, անընդհա՜տ
Շարունակում է կարծես իր հեքիաթ...

*
* *

Բայց ահա հանկարծ չարագույժ մի ձայն
Լսվում է դրսից—բուի է նման.
Մերթ մեղմ, բարակ, մերթ խիստ փրփրում
Գարձեռ այդ ժամին սիրտս քրքրում...
(Այդ մեր կատուն էր, նոր եմ հասկանում,
Իր հարևանի հետ էր նա կռվում,
Եվ ցանկապատից նախանձ-թշնամուն՝
Ճանկերով զինված՝ գլորել չանում)։
— Տատիկ, ճչում եմ, աչքն ո՞վ է տոնում,
Կարծես նա գաղտուկ՝ ինձ է մոտենում...
— Քնի՛ր, բա՛լա ջան, թաքնվիր շուտով,
Քրդի Շունն է իրա լակոտով...
(Այսպես էր տատս ինձ պատասխանում,
Որ չընդանգաքեմ գուլպա գործելուն)։
Բայց մեր շար կատուն, մոխրագույն Շամոն
Իր պատերազմն էր տաք շարունակում,
Եվ էլ գիշատիչ եկեղջներով,
Զարհուրանք ազդող կրքով փրփրում,
Վախլուկ մանկական սիրտս քրքրում...

*
* *

— Տատի՛կ, վախում եմ ես Քրդի Շունից.
Տես, մոտենում է... ահա իմ կրծքից
Նա կպավ հանկարծ... բուկս է ճնշում
Եվ քուրսու տակից ինձ ուժով քաշում։
— «Սուս արա, բալաս, դե՜, բալիգիան է,
Սուս, թե չէ Շունը կըգա ի՜տանե...»
Եվ տատիս ազդից սիրտս բաբախում
Լեղապատառ եմ լինում, նրվազում...
Նայում է տատս—դեմքս է գունատ,
Վճռում է որ ինձ. կպել է նիաք.
Ու գրկում է ինձ, մերթ խաչակնքում,
Քթի տակ ինչ-որ աղոթք մրմնջում,

Մինչ ես շնչարգել, կծկրված վախից,
Նրա գրկի մեջ մարում եմ ահից...

Այդ մանուկ, անմեղ ժամանակներից
Քանի՞ տարիներ սահել են, անցել,
Բայց այն «Քրդի Շանա» ձայնը ահռելից,
Հիշողությունիցս դեռ չի՞ գնացել...

ՀՆՑ ԱՂՋԿԱՆ

Սրտիս խորքում մի կոկոն-վարդ
Վաղուց ունիմ խնամած.
Արի՛, պոկի՛ր, սիրուն աղջիկ.
Քեզ համար եմ ես պահած,

Գիտե՞ս արդյոք, քանի՛ հողմեր
Անցան նորա վրայով,
Եվ վշտերի փոթորիկներ
Սպառնացան սև մահով,

Բայց մանկական իմ խնամքով
Նա սրտիս մեջ ամրացած,
Աչքերիս ցող արտասուքով
Իր արմատն է ուռճացած,

Դե՛, հայ աղջիկ, արի շուտով,
Կոկոն-վարդիս եղիր տեր.
Թո՛ղ, որ սիրույդ ճառագայթով
Բացվին նորա ամ-թերթեր,

Թիֆլիս, 1895

ՊԱՏԿԵՐՆԵՐ

I

Դոնապահ էր պանդուխտ Կարոն
Աղա-Հարությանին,
Ցերեկները բակն էր հսկում,
Գիշերը՝ պատեզգին,
Եվ մուշտակը գլխին քաշած
Բաց երկնքի տակ,
Սրսրթալով քամուց, ձյունից,
Պառկած էր մենակ։
Մայթի վրա փողոցին կից
Կարծես քնած էր,
Վա՜յ իր հալին... քունն էլ աչքից
Վաղուց փախած էր։
Եվ այն ժամին, երբ Հարությունը
Տաք ննջարանում
Անուշ նիրհն էր իր վայելում,
Գանձեր երազում,
Խեղճ պանդուխտը ձյուն ու քամու
Տակ էր հորանջում
Եվ Մարոյին իր հիշելով,
Դառն հառաչում։
— «Յարա՜ Աստված,— մրմնջում էր,—
Մինչ ե՞րբ այսպես մնամ,
Արդյոք կըգա՞ մի օր, ե՞ս էլ
Իմ վաթան դառնամ»։

Հոկտեմբեր 1, 1895
Թիֆլիս

* * *

II

Հառաչում էր խեղճ պանդուխտը
Թոքերի խորքից,
Նա դրժել էր իրա ուխտը,
Հետ կանգնել խոսքից։

Նշանածին խոստացել էր
Շուտ վերադառնալ,
Ռուսի հողում դեռ հույս ուներ
Նա հարուստանալ։
Սակայն անցավ քանի ամառ
Իրրն բեռնակիր
Նա չկարցավ վերադառնալ
Իր սիրած երկիր։
Ու տանջվում էր ցերեկ-գիշեր,
Վա՜յ տալով օրին,
Մի քիչ փարա գեթ վաստակեր,
Հասցներ յարին։
Բայց իզուր ջանք... տարիքն անցան
Մեկ-երկու ետքից,
Թշվառը դեռ չազատվեցավ
Համեստի տակից։
Եվ մի սև օր նա լուր առավ,
Թե իր Մարոյին
Քրդի բեկը հարեմ տարավ
Փոխարեն պարտքին։
Է՛լ չդիմացավ խեղճ պանդուխտը
Այս դառն լուրին,
Կախեց կրծքից իր համետը
Զոհվեց գիշ Քուռին։

Հունվարի 1, 1885,
Թիֆլիս

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Երկրից-երկիր թափառելով
Լեռներ, ձորեր պատառելով,
Հասանք այստեղ, հա՛յ եղբայրներ.
Տվե՛ք մեզի անկյուն մը չոր
Ցրտից, բուքից պատսպարվել,
Տվե՛ք մեզի հաց մը կտոր
Սովալլուկ մեր ջան պահել։

Կրած տանջանք, թյուր հալածանք,
Կին ու զավակ թողած բախտին,
Մենք եկել ենք ձեր անունով,
Մենք հույս կապել ձեր սրտին,—
Եգի՛ք գոնե գո՛ւք մխիթար
Սփոփելու մեր օր վատթար
Կորչելու է տուն ու վաթան,
Է՛լ մարդ չմնաց մեր Հայաստան.
Եկանք պատմել, որ իմանաք,
Թե մեր ցավին չարքն դարման...
Դե, գոնե դուք մեզի խղճաք,
Օգնեք, «երկիր» վերադառնանք...

Դեկտեմբերի 15, 1895,
Թիֆլիս

ԵՍ ԵՐԳԵՑԻ...

Ես երգեցի իմ մատաղ տեր՝
Մանուկ սրտիս սփոփանք,
Ջնջով մեկը, որ ինձ լսեր
Եվ տար սիրուս արձագանք։

Ես երգեցի մոռացվա՛ծ մի երգ,
Նա մրմնջաց շատ սիրուն...
Արձագանքը նորա բեկբեկ
Թռա՛վ, սլացավ, շա՛տ հեռու...

Ա՜խ, այդ ձայնը մոռացված երգի
Ապրում է մինչ իմ հոգում.
Է՛լ չե՛մ խփում սիրտս լարին,—
Հայրենիքն եմ ես ողբում...

Մայիսի 13, 1896,
Թիֆլիս

ՄԻ՛ ԱՍԻՐ...

Մի՛ ասիր՝ անցավ գարունը կյանքիդ,
Թե մնում է լոկ անհայտ երազանք.
Մի՛ ասիր՝ դալար այս ճոխ հասակիդ
Խանդավառ սիրո մեռնում է հմայք։

Տեսե՞լ ես աշնան անդրանիկ ամպան
Ծառ ու բաղեղի ներկված տերևներ,
Կարմիր ու նարինջ պսակի նման
Ծառերը հագած հարսանյաց շորեր։

Աշնան տերևնե՞ր, կարմի՞ր ու բոսո՞ր,
Որ կանաչից էլ սիրուն եք նայում,
Կարապի երգն եք երգում դուք այսօր,
Իսկ վաղը... նորից կողջունենք գարուն,

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԱԼԼԱԴ

Ոռնում էր Բողար, ողբում էր Բողար,
Դունչը ցցելով,
Եվ այնքա՜ն տխո՜ւր, սիրտը քրքրող
Ելևէջներով,
Որ ասե՛ս ահա ողջ երկրագունդը
Միջից կպայթի,
Կամ «նեռը» իջած՝ համայնաշխարհը
Գիտի խորտակի։

Նվում էր Բողար, զառամյալ ու խուլ,
Մղկրտան ձայնով,
Ոռնում սիրտ ճմլող, հուսահատական
Ելևէջներով.
Գերեզմանային սարսուռ էր ազդում
Հարևաններին՝
Գյուղական խավար, համր գիշերվա
Լռության ժամին։

Եվ Օհան ապին իր շան ոռնումից
Նախապաշարված,
Մահ է դուշակում, մահվան ժանիքներ
Մթնի մեջ շարված.
— Խաթո՜ն,— ասում է,— այս վա՛տ նշան է—
Մո՛տ եմ օրհասին,
Բոթաբեր ձայնից սիրտս է դողում,
Խեղճ իմ ամուսին։
— «Երբ շունը ոռնա—
Կասեր իմ հերը,—
Գիտի մահանա
Քյուլֆատի տերը...»։
Ոռնում էր Բողար, նվում էր Բողար,
Թավալվում անզոր,
Խեղճ Օհան ապուն մտատանջելով
Մաշում օրեցօր։
Թշվառը ահից ընկավ անկողին,
Այն էր որ պառկեց,
Եվ մի քանի օր... ու մի երեկո
Հոգին ավանդեց։
Լուսացավ օրը, մի անշուք դագաղ
Գյուղից դուրս տարին.
Շա՜տ փորձանք բերեց գյուղացոց համար
Զուլո՜ւմ այս տարին...

1898

ՁԱՐԸԴ ՏԱՆԵՄ...

(մանուկ հուշերից)

Իմ նանը, բալե՛ք, մի շա՛տ լավ կին էր,
Ժամ ու պատարագ նա շատ կրսիրեր.
Թե՛ արթնանալուց, թե՛ քուն մտնելուց
Ինձ համար նա միշտ աղոթքներ կաներ։
Ու քե պատահեր՝ հիվանդանայի,

Կամ անակնկալ փորձանքի գայլի
Նա գորովալից հոգատարությամբ,
Կրծքին փարելով, միշտ կը հարցներ.
— «Ասա՛, բալիկս, ի՞նչդ կը ցավի,
Ասա՛, դե, նանը քո չարը տանի»
Իմ խեղճ նանիկը իր ամբողջ կյանքում
«Չարը» էր տանում, չէի հասկանում։
Ա՜խ, իմ մայրիկը, սիրուն մանուկներ,
Այնքա՜ն բարի էր, այնքա՜ն անձնվեր,
Որ վերջը, իրավ, իմ «չարը» տարավ...
Սիրած բալիկին որբ, մենակ թողավ...

ՄԵՐ ՑԱՎԸ ՄԵՆ Է...

Մեր ցավն մե՛ծ է, մեր վիշտն անսահման,
Արի՛ բաժանենք իրար հետ, եղբայր.
Է՛լ բավ է լացենք վախկոտի նման,
Քանի մեր առաջ կա աջ ճանապարհ։
Եկ կոտրենք-կրծքի ատանք, որպես ժայռերը,
Հեգնենք մեր գլխին ճայթող շանթերը.
Այսքան ողբալուց մաշվեց մեր հոգին,
Լացն էլ օգուտ չբերավ աղգին։
Մեր ցավը մե՛ծ է, մեր վիշտն անսպառ
Արի՛, բաժանենք—սրտերս թեթևնար։

*
* *

Երբ մեր ամբոխն էլ մեզ պես ցավ ունի,
Ե՛կ, նորա ցավն էլ մեր սրտին առնենք,
Երկուսիս դարդը պետք է մե՛կ լինի,
Ե՛կ, նորա ցավն էլ մեր ցավին խառնենք։
Նորա հոգսերը տանք մեր քնարին,
Քնարը զտի չարքն ու բարին.
Երգերի հրով բովենք, ամրացնենք,
Թշվառի սիրտը, լքյալի հոգին,

Տանջված ամբոխին վերադարձնենք.
Թող նորա սիրտը նորի՛ց ամրանա,
Գոնե այդպիսով ցավին դիմանա...

*
* *

Մեր սիրտը լայն է, մեր հոգին տոկուն,
Մի սպունգ ծծան—վշաերով լքուն.
Ե՛կ տոկանք, տանենք ամբոխի ցավը,
Մինչ կը հասնի աշխարհի լավը.
Բայց քանի այսօր սրտի հույզերը
Մեզ դեպի եռուն կյանքն են գոչում,
Քանի կարիքի ծանր հարցերը
Մեզնից շուտափույթ լուծում պահանջում,
Ե՛կ, շուտով, եղբայր, առնենք քնարը
Ու մի նո՛ր թափով շարժենք լարերը.
Վառ երգի հրով բովենք, դարբնենք
Թշվառի սիրտը, լքյալի հոգին,
Տանջված ամբոխին դարձնենք կրկին.—
Թող նորա սիրտը ընդմի՛շտ ամրանա,
Դալիք ցավերին հեգնե՛, դիմանա...

1899, Թիֆլիս

ԱՄԲՈԽԻ ԿՈՉԸ

Արի՛, պոետ ,դարի պոետ,
Երգդ հյուսի՛ր մեր ցավից,
Ընկերացի՛ր մեր սրտի հետ,
Թեթևանանք հոգսերից։

Վիշտը շոյող ու փայփայող
Երգը դարձավ ձանձրալի,
Եվ ողբ ու լաց մխիթարող
Նվագն էլ չէ՛ ցանկալի։

Երգի՛ր դու մեզ բուռն ցայտմամբ
Սրտի բողոքն անմեղի,
Նշավակի՛ր անզուսպ ցասմամբ
Բռնությունը ուժեղի։

Արի՛, պոե՛տ, դարի պոետ,
Երգդ հյուսի՛ր մեր ցավից,
Երգդ ապրի մեր ցավի հետ,
Թեթևանանք հոգսերից։

1902

ԿՈՐԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Երեկոյան վերջալույսին
Ընկած ժայռի լերկ կրծքին,
Շուրջը խաղա՜ղ, ես մեկուսի
Նայում էի երկնքին...

Ահա մի աստղ դողդողալով,
Ապավինած իր շողին,
Կամաց կամաց մեծանալով
Շարժվեց, գծեց իր ուղին։

Եվ սահում էր նա անսայթաք
Խորհրդավոր լռությամբ,
Դեպի վսեմ մի նպատակ
Ասես ձգտում քաջությամբ։

Ճանապարհին նրան մի ամպ
Իր շղարշի տակ առավ,
Բայց աստղը այն համառությամբ
Ամպը ճեղքեց դուրս ելավ։

Ահա նրա հետքը բռնած
Ընթանում են այլ աստղեր,

Եվ առաջնորդ իրենց ընտրած
Հետևում են անվեհեր։

Նրանք մի-մի կանթեղ բռնած
Շտապում են մտազբաղ.
Քարվանի պես շարան ընկած
Առաջանում անհապաղ։

Սիրո՛ւն աստղեր, ո՞ւր եք ձգտում
Խորհրդավոր գնացքով,
Այս մութ, համր, լուռ գիշերին
Ի՞նչ եք փնտրում ճրագով։

Ու աստղերը լեզու առած
Ինձ տալիս են պատասխան՝
— «Ճշմարտությունն ենք փնտրում մենք,
Որ հետ դարձնենք մարդկությանը»։

Ամեն գիշեր աստղերը այն
Կանթեղ բռնած, խմբովին
Ման են գալիս ճշմարտության.—
Բայց չեն գտնում տակավին։

1903

ԵՐԱՆԻ՞ ՆՐԱՆ

Երանի՜ նրան, ով մանուկ օրից
Վիշտ ու զրկանքն է համարել խնջույք.
Ով փարթամ կյանքի շքեղ կենցաղից
Չի՛ էլ զգացել երբեք մի հաճույք։

Երանի՜ նրան. ով բյուր վշտերի
Սպիներ ունի սրտի ծալքերում.
Ով ամեն մի վերք, ամեն մի սպի
Վաստակել է բիրտ մաքառման կռվում։

Սիրում եմ կռիվ ընդդեմ բռնության,
Կռվի մեջ է լոկ իմ անդոսության.
Կռվեցեք և դո՛ւք, զոհեր մաքառման,
Կռվով պիտ գտնեք ձեր երջանկություն։

1904

ԿԱԹՍԱՎԱՐ

Որպես դող բռնած, զայրացած առյուծ
Շոգեկաթսան է եռում, մռնչում,
Հսկա՜, հրեղե՜ն լեզուներ հանած՝
Դժոխքի նման հնոցն է փնչում։

Վիթխարի գազան հնոցի առաջ
Բոց ու կրակի տապից թառամած՝
Մեր կաթսավարը հսկում է նրան
Ուշքն ու միտքը ջրլափին հառած։

Ամառ ու ձմեռ նա զովի կարոտ—
Քրտինք է ծորում դալուկ ճակատից,
Որ ակոսելով երեսը մրոտ,
Սև հացի գին է պահանջում բախտից։

Եվ մի սև օր էլ կաթսան պայթելով,
Հեք կաթսավորին կըզրկի կյանքից.
Հալա՜լ է՛ն հացը, ով արյան գնով
Կրխլի նրան հնոցի կրծքից։

1904

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻՆ

Ձմե՜ռ է խորին... ցեղերիք տակին
Հանգիստ են առնում հացահատիկներ.
Ենջում է արմատն հեզ մանուշակի
Նիրհում են ցամքած ծառ ու ձաղիկներ։

Ձմե՜ռ է խորին... բայց և ա՜յս կանցնի.
Ձյունը կհալչի, հողը կազատվի
Խիստ կապանքներից. արտը եղյամից,
Սերմը իր ճնշող հողաշերտերից։

Կգա գարունը և ջերմ արևից
Սերմերը նոր ուժ, նոր հյութ կստանան,
Հողա-ճումբերի մեջքը կծռեն
Եվ նրանց տակից հույսեր կծըլեն։

Ծառերն այն ժամ նոր շորեր հագած—
Նշենին՝ կանաչ, կարմիր՝ նռենին,
Ծաղիկների հետ համերաշխ գրկված
Կդիմավորեն գարնան մեծ տոնին։

Օ՜, պատրաստ լինենք այդ օրին և՛ մենք,
Նրա գալուստը պատվով ընդունենք...
Ողջո՜ւյն քեզ, գարո՜ւն, պսակ բնության,
Անսպա՜ռ աղբյուր ոգևորության։

1904

ԻՄ ԱՇԽԱՐՔԸ

Որքա՜ն էլ ուզեմ ձգտել դեպի ձեզ,
Վեհապանծ սարեր,
Ու փարվել մաքուր ձեր ձյունյա կրծքին,
Որքա՜ն ուզեմ ես
Սլանալ վե՜ր, վե՜ր,
Արծիվի նման հպարտ սավառնել՝
Էլի՜ չեմ կարող, կուսակա՜ն լեռներ,
Երկիրը թողնել,
Որ խարխափում ես կեղտ ու մուրի մեջ,
Տառապում անվերջ.
Եվ ես կարիքի աշխարքն եմ ընդրում—
Ճնշված ու լքված,

Ուր վիշտ ու զրկանքն իրար հետ գրկված՝
Մի ելք են փնտրում։

Եվ դուք, վա՜ռ աստղեր,
Որքա՜ն էլ դյուրող,
Սիրտը պարուրող լինի ձեր հմայք,
Որքա՜ն էլ գերեք հոգիս երազող
Ու ինձ երկնային տանեք ձեր աշխարք՝
Դարձյա՛լ չեմ կարող.
Կապված եմ կամա իմ մայր հողի հետ.
Հար ու հարատև ամբոխի լացը.
Ցավ ու կսկիծը,
Ինձ կոչ են անում, թե՝ արի՛, պոե՛տ.
Մեր վի՛շտը լացիր,
Մեզ ընկե՛ր դարձիր։

Ա՜, ինչպե՜ս քաղցր է երկինք վերանալ,
Վիշտ, հոգս մոռանալ,
Լուսնի փայլի մեջ լողալ, սավառնել,
Աստղերը գրկել,
Բայց և անսղոք իրականության
Ուրվականը սև,
Որպես մի ժանտ դև,
Մարմնացած ըմբոստ բողոքի նման,
Տալիս է հրաման.
— Իջի՛ր երազկոտ երկնային գահից
Կյանքին մոտենալու,
Նրան ե՛րգ ունիս, վերք ունիս տալու։

Ու պիտի գնեմ.... ամբոխից փա՛խ տալ
Դժվա՜ր է, դժվա՜ր.
Հոգիս ձուլված է նրա հոգու մեջ,
Ջղերս կապված նրա ջղերին։
Մի ա՛յլ ճանապարհ
Գոյություն չունի երբեք ինձ համար,
Եվ որքան դյուրող լինի ձեր հմայք,
Երկինք ու աստղեր,

Կա՛ մի քրտնալի, կարիքի աշխարք
Ճնշված ու լքված՝
Նրան եմ ընտրում,
Այնտեղ վիշտ, զրկանք իրար հետ գրկված՝
Մի ելք են փնտրում...

1905

Մե՛կ էլ, մե՛կ էլ

Հե՛յ, ձե՛զ մատաղ, բանվո՛ր տղերք,
Մե՛կ էլ, մե՛կ էլ, մի զա՛րկ տվեք.
Մի զա՛րկ տվեք ցարի գահին,
Որ խորտակվի նա հիմնովին։

Միահամուռ մեր ուժերով.
Հերոսների արյան գնով
Թեև ընկավ ցարն իր գահից,
Բայց չի՛ ջարդված միանգամից։

Այժմ էլ ցարն է մեզ ազալում,
Որ խնայենք վերջին շնչում.
Բայց, ձե՛զ մատաղ, բանվո՛ր տղերք,
Մե՛կ էլ, մե՛կ էլ մի զա՛րկ տվեք...

Մի զա՛րկ տվեք ցարի գահին,
Որ խորտակվի նա հիմնովին...

1905 հոկտեմբեր 17,
Թիֆլիս

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տեսել՞ ես, ընկեր, ալեկոծումը ահեղ օվկիանի,
Ուր երկու ալիք շարժուն սարի պես իրար են վազում,
Իրար են վազում փրփուրը բերնին հովազի նման
Ու հոխորտալով՝ զարնվում, փշրվում ավազի նման...

Իսկ երբ անցնում է վրեժի բոպեն, հուզումը վայրի,
Տեսե՞լ ես ինչպես հանգստանում է հսկան ջրերի,
Մեղմանում է նա... մանուկի նման ժպտում է ալիք,
Ալիքի միջից մի երգ աննման ծփալով մեղմիկ,
Շոյում լսելիք...

*
* *

Լսե՞լ ես, ընկեր, ըմբոստ երկնքում կռվը որոտի,
Ու դղրդում է որպես մի պայթյուն մեծ թնդանոթի.
Տեսե՞լ ես ինչպես ամպերի կրծքին կայծակը զիգ-զագ
Իր լիգն է մխում փայլկոտ, ջեղտակի ու ցնցում աշխարք.
Կամ ինչպես թաքով ծառա-ծառս է լինում ցասկոտ փոթորիկ,
Հսկա ծառերին լոքե-լոք անում, դարձնում խաղալիք,
Մինչ որ տեղում է հեղեղը վայրագ և ինչպես փրկանք՝
Ծանր երկունքից ազատում աշխարք.
Բնությունը հաղթ ժպտում է ապա պայծառ արեգին,
Որպես պատասխան չար արհավիրքին...

*
* *

Լսե՞լ ես, ընկե՛ր, ձնագլանի ճիչը հուսահատ,
Որ գալարվելով՝ արգանդի ցավից պոռա անընդհատ...
Վիրավոր ընկած այն էգ առյուծն է այնպես մռնչում,
Երկունքի ժամին Մեծ Ազատության զգնությունն կանչում.
Կյանքի և մահու պայքարը մղող այն մայրն է տանջվող...
Իսկ երբ հասնում է հուսո բախտավոր ժամը փրկավետ,
Տեսել՞ ես ինչպես այդ խորհրդավոր վեհ պայթումից հետ
Մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ, որպես վառ հակինթ,
Փայլում է նրա արնոտ շուրթերում. դեմքը զարդպրում։

*
* *

Այդպես էր ահա և այն վեհ ժամին հեղափոխության,
Երբ որ բախվեցին իրար հակառակ երկու ախոյան.
Ալիքի նման խռլ մռնչացին երկու հզոր ուժ,
Աշխարհը ցնցվեց... ու եղան կործան կարգերը վատուժ.

Վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին հետևեց թափով
Հեղեղ ցնծության,
Երկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ Ազատության։
Ընկե՛ր իմ, ընկե՛ր, ահա մանուկը Հեղափոխության
Փորձության ժամին երդվիր կրծքով պաշտպանել նրան։

1905

ԵՍ ՁԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ...

Ես ձեզ ասում եմ, կգա այն օրը,
Երբ իրավազուրկ ամեն մի բանվոր
Իր աշխատանքի կդառնա տերը
Ու ազատ, ուրախ կապրի բախտավոր։

Ու էլ չի՛ տիրիլ անարգ ստաձը,
Մարդուն մարդու դեմ չի՛ զինիլ անվերջ,
Ամբիոն կելնի հալալ վաստակը,
Իրար հոշոտող գովին կտա վերջ։

Ես ձեզ ասում եմ... մոտ է այն օրը...
Թող ստրուկները թվա ադի երազ,
Նրան կհասնի կռվող բանվորը,—
Մարտնչողների՞ է դա հեգ մուրազ։

1905

ԳԱՐԲՆԻ ԵՐԳԸ

Զա՛րկ. զարկ, ընկե՛ր, մեզ բախտ կոենք,
Թող դղրդոցա մեծ աալը,
Շանթի տարափ մեր շուրջ փռենք
Լուսավորվի աշխարհը.

Մենք բնության առողջ զավակ
Քրտինք հեղենք—սև ագյուռն.

Ջլուտ բազկով ճարեենք վաստակ,
Մոհտաջ չլինենք թշնամուն։

Ձա՛րկ, զա՛րկ, ընկե՛ր, էլ կանգ չառնենք,
Մո՛տ է ահա լավ օրը...
Այնպես թափով սալին զարնենք,
Որ դողդողա աշխարհը...

1905

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Ահա կըզարկի մեծ ժամացույցը
Տասներկու անգամ,
Եվ օրհասական նրա անողոք
Վերջին զարկի հետ
Մերուկ, հին տարին անհունի խորքը
Կընետվի անհետ։
Եվ այդ վայրկյանին մարդիկ անհամբեր
Շուտ ոտի կելնեն,
Բաժակներ կալած Նոր տարվա մուտքը
Բարձր կողջունեն.
Տեղի կունենա համբույրի հեղեղ...
Իրար կըցանկան
Հազար մի բարիք
Բախտավոր տարիք...
Կըթռչի օդում դաշնակի ալիք
Եվ երգը ուրախ,
Արձագա՛նք կըտան և՛ առողջ կատակ,
Ե՛վ կայտառ ծիծաղ,
Իրար կըշոյեն քաղցր խոսքերով,
Որ ողջ տարվա մեջ
Կյանքն ընթանա մեղրածորի պես
Քաղցր ու անվերջ։
Եվ մտածում եմ... ահա այս մարդիկ,
Որ այսպես ուրախ

Ինքնախաբությամբ հեղեղ կըթափեն
Սիրո, համբույրի—
Անշուշտ հենց վաղը պիտի մոռանան
Խորհուրդն այս օրի։
Փարիսեցինե՛ր, և անցած տարի,
Հենց այս վայրկյանին
Բաժակներ կալած ողջունում էիք
Իրար Նոր տարին,
Եվ մաղթում էիք իրագործումն
Տենդոտ հույսերի,
Գալոց օրերի։
Բայց ըոպեն անցավ, դիմակն էլ ընկավ
Եվ չերմ մաղթանքին
Շուտ փոխարինեց նենգամտության
Մռայլ, սև հոգին.
Քսու դավերի, շահասիրության
Օձն արթնացած՝
Մոռանալ տվեց խոստում ու համբույր
Եվ սերը օրհնած։
Օ՜, այդ սև հոգով իզուր կհուսաք՝
Թե այս վայրկյանին
Ձեզ պետի բերե մի լա՜վ ապագա
Նորամուտ տարին։

1905

ԲՈՒՐԺՈՒԱՆԵՐԻՆ

Այդպես, օրերը սահում են արագ,
Եվ դուք՝ դեռ թաղված ճահիճի տիղմում՝
Սողում եք որպես ճիճուներ անարգ,
Մոլի կրքերը ձեր չե՛ք էլ մեղմում։

Դուք սովոր տիղմի գարշահոտության,
Եվ ձեզ թվում է շնչում եք ամբրոս,
Ծծում եք թույնը անմիտ զեխության
Ու ձեզ համարում վայելքի հերոս։

Այսպես, հյուծվում է ձեր հոգին մեռած՝
Դուք դարձյալ գերի դաժիր վիճակին.
Սերունդ խայտառակ և այլասերված,
Ձեզ ո՞ւր է տանում պտույտը կյանքի։

Նայե՛ք, կաքիքը հազար թև առած՝
Ճախրում է ազատ, իր ելքը փնտրում.
Մինչ դուք՝ հարազատ կյանքից անջատված՝
Նրա շարժումին արգելք եք լինում։

Սերունդ մեղսալի, սերունդ ճահճային,
Դուք ի՞նչ պատասխան պիտի տաք մի օր
Հավ ապագային...

1905

ՈՒԹ ԺԱՄ

(Նմանողություն)

Տղե՛րք, էլ ում չմնաց մեր մեջ,
Մենք չափազանց շա՛տ հոգնեցինք,
Կյանքի համար կռվել անվերջ—
Սա էլ կյա՞նք է, որ քաշեցինք...

Օդ ենք ուզում. կարմիր արև,—
Պաղիկ, աղբյուր անուշահամ,
Ազատ, վստահ եկե՛ք հայտնենք՝
Պահանջում ենք միայն ութ ժամ։

Գործարանում ու հանքերում,
Ամբոխի մեջ, ժողովներում
Հուժկու ձայնով դուք կո՛չ արեք՝
Պահանջում ենք ամենուրեք—
Ութ ժամ՝ աշխատանք,
Ութ ժամ՝ քուն,
Ութ՝ հանգստություն։

Դաշտում անգամ մեր եզները,
Բուլունները ջինջ եթերում,
Սար ու քոլում գազանները
Բախտավոր են մեզնից ապրում։

Թե այդպես է, էլ ինչո՞ւ ենք
Ապրում, ե՛ղբայրք, այս աշխարհում,
Եկե՛ք շարք-շարք միանանք մենք,
Մեր պահանջը առաջ տանենք։

Առաջ տանենք, այդպես ցույց տանք,
Թե ոչ ոքից չենք վախենում.

Հուժկու ձայնով, դե՛հ կոչ արեք,
Պահանջեցեք ամենուրեք—
Ութ ժամ՝ աշխատանք,
Ութ ժամ՝ քուն,
Ութ՝ հանգստություն։

1906

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ

Մնված արգանդից ծով տգիտության,
Բայց գիտակցության դու ավետաբեր՝
Առաջինը եղար հեղափոխության
Նշան տվողը, ա՛յ բանվոր ախպեր։

Կյանքի անիվը չարժող վիթխարի՛,
Զուգեցար մոհտաջ լինել նամարդին,
Ու նետեց ժուրմը բազուկդ արի,
Գործադուլ գուժեց անարդ հարստին.
Հարուստը սոսկաց... ու զիջեց կամքիդ
Եվ հզոր բազկիդ.
Ա՛յ երկաթ մաջիդ դուրբան, բանվո՛ր ջան։

Ճլաց Մոլոխը՝ հենց որ իմացավ
Առաջին լուրը քո հաղթանակի
Եվ վրեժն արյամբ լուծել կամեցավ.
Բայց դու զայրացար որպես փոթորիկ,
Ջուզեցար զիջել հաղթդ անդրանիկ
Ու կռվի ելար ընդդեմ բռնության,
Հանուն քո դասի շահի անունով,
Զոհերի գնով,
Հե՜յ քո թասիբին զուրբան, բանվո՛ր ջան։

Բռվված հնոցում քաղց ու կարիքի,
Սովոր քանտերի, բիրտ հալածանքի,
Շա՜տ ես դիմացել. դիմացիր էլի,
Եղբայր սիրելի,
Հավատ ունեցիր հաղթիդ վերջնական
Այսօր չէ վաղը՝ քոնն է ապագան...
Դե՜հ, ջերմ հավատիդ զուրբա՜ն,
Բանվո՛ր ջան։

1906

(ՆՎԵՐ ՕՐ. ԱՋ-ԻՆ)

Երբ որ նայում եմ անկեղծ պարզամիտ
քո վճիտ դեմքին
Եվ այդ մանկական, պայծառ, միամիտ
խելոք աչերին,
Ասա՜, իմ սիրուն, ինչու՞ է սիրտս
լցվում անհուն բարձր հույզերով
Ինչո՞ւ իմ հոգին ոգևորվում է
ազնիվ խոհերով։
Ինչպես արևը, որ կյանք է տալիս
թառամած ծաղկին,
Նոանդ ու ավյուն վհատ թռչնակին,
Ինչպես լուսինը, որ փայփայելով,
Ոսկեզօծում է մռայլ, մտորող,
սևուկ ամպերին,

Այնպե՜ս էլ սիրուն, հոգիս է փայլում,
երբ որ պատահմամբ
Նայում եմ երբեմն քո պարզ ու հստակ
խելոք աչերին։

1906

ՄԱՅԻՍՄԿՅԱՆ ԵՐԳ

Գարնան անդրանիկ այս ուրախ օրին
Գո՜ւրս ելեք խումբ-խումբ բանվո՜ր ընկերներ,
Եվ ողջույն տալով դաշտ ու ձորերին՝
Երգե՜ք ձեր ազատ, տոնական երգեր։

Գոռ արձագանքը ձեր հաղթ երգերի
Թող սարսափ ազդի թշնամու սրտին,
Թող ցնցի հոգին բռնավորների,
Հանգիստը խլի ճնշող հարբստին։

Եվ թող խլանա ձայնը բռնության,
Աղմուկ չլսվի գործարաններից.
Այսօր մեր տոնն է վեհ գիտակցության,
Թող պայթի աղան համառ զայրույթից։

1906

ՄԵՌԱ՜Ն՝ ՉԿՈՐԱ՜Ն...

Ինչպիսի՜ հերոս ընկերնե՛ր մեռան,—
Մեռա՜ն՝ չկորա՜ն...
Կրա՜կն էր ցայտում նրանց աչք-ունքից,
Շա՜նթը՝ շրթունքից,
Երբ խոսում էին ծով-ամբոխի մեջ
Վիշտ ու կարիքից.
Վրեժի, ցասման հրով բորբոքված
Նրանք բեմ ելան՝

Եվ բեմը գարձավ արյունով ներկված
Զոհերի սեղան։
Ինչպիսի՜ հերոս ընկերնե՛ր մեռան...

Այսօր բանտերում, վաղը աքսորում,
Մյուս օր կախաղան
Հանելու համար դահիճը դաժան
Կացինն է սրում.
Բայց հերոսների շուրթերից սեղմված
Նզովք չէ՛ լսվում,
Բաժակն են ըմպում Վերածնության՝
Սյուներին կախված,
Ու հիմնը երգում Հեղափոխության՝
Հպարտ. չհաղթված.
Ինչպիսի՜ հերոս ընկերնե՛ր մեռան...

Հե՛յ ազատության անպա՛րտ զինվորներ,
Դո՛ւք, որ անխռով
Ներկեցիք փողոց ու գործարաններ
Ձեր տաք արյունով,
Նույն վայրում այսօր ջահիլ-ջիվաններ
Ըմբոստ շարքերով
Ձեր զովքն են անում... ձեր թափված արյամբ
Սնվում, ամրանում...
Եվ անմահներիդ երդվում են անվամբ
Ու հպարտանում,
Որ դուք, հիրավի, պատվով, վեհությամբ
Ձեր գործը տարաք,—
Մեռա՛ք՝ չկորա՛ք։

1906

ԻՄ ՍԵՐԸ

Սերս, իր թափով լեռնային վճիտ
Առվի է նման,
Որ ծնունդ կառնի խոր, անմատչելի
Անտառի սրտից,

Եվ թաքնվելով դալարների մեջ՝
Կանցնի կուսական
Ծառերի ժոտից.
Համբույր կցողի ժենավոր ծաղկի
Տխուր ճակատին,
Կենսունակություն՝ արևի կարոտ
Բաղեղ ու խոտին.
Եվ թե ո՞ւր կերթա, ո՞ր ավազի տակ
Նա կանհետանա՝
Սիրելի բույրիկ, կըմնա զաղտնիք,
Այդ չե՛ս իմանա։

1907

ՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ, ԱՐԵ՜Վ...

Ճաղատ, վիրավոր այն սարի ետքին
Վաղ արշալուսյան ցնցուղն է կապել.
Այնտեղ արևը դեռ չի երևում,
Բայց նորեկ կյանքի վարդեր է փռում...
Մի խորհրդավոր երկունքի վայրկյան,
Ուր պիտի հուզվի հրդեհի մի ծով,
Եվ ահա կամաց, դողդոջուն քայլով,
Տեսնում եմ, ժանուկ արքան է ելնում.
Եռանդ է բուրում նրա թարմ դեմքից,
Տենդային աշխույժ՝ հուրհրան ցոլքից,
Եվ քանի գնում—ավելի վառված,
Ավելի խիզախ հև ի թափ առած՝
Առաջ է ձգտում մեծացած հսկան
Ու նետում երկրին հայացք առնական։
Իսկ սարը ճաղատ, վիրավոր գանգով,
Արևի հզոր պատվանդանի տակ
Ճնշվում է կարծես... ու իր սապատով
Էլ ավելի է սեղմվում, կուռնում,
Ծկվում, ցածրանում, խղճալի դառնում.

Արևը հասած տարի գագաթին,
Կարմիր գրոշը պարզած եթերում,
Կարծես իր գահից մեզ կոչ է անում,
Աղդանշանում... ու թվում է ինձ,
Թե ողջ աշխարհը արթնացած քնից
Դիմավորում է անպարտ հսկային,
Ու միաբերան գոչում ցնծագին.
Ողջո՜ւյն քեզ, արև՜,
Քեզ հազա՜ր բարև...

1907

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Գալի՜ս են, գալի՜ս... Նայե՛ք այն ձորին,
Վերջ չկա ծայրին...
Գալի՜ս են նրանք սև կմախքների
Սով գլուխներով,
Գալիս, փրփրում բյուր ալիքների
Հառաչանքներով.
Նրանց բիրերը կախաղանների
Ջվանից պայթած,
Նրանց կրծքերը համազարկերից
Ծակոտված, ջարդված,
Մեկի բերանից դեռ թարմ արյունը
Կա՜թ-կա՜թ ծորալիս,
Մյուսի ճակատին վերքի բերանը
Սև-սևին տալիս՝
Գալի՜ս են, գալի՜ս...
Գալի՜ս են նրանք և ամպերի պես
Կուտակվում, դիզվում,
Վրեժ են ուզում...
Նրանց բողոքից դահիճների դեմ
Քարերն են հուզվում.
Ահռելի նրանց որոտումներից
Ցնցվում է երկինք,

Հողմը նոր դաղրած թևերն է պարզում՝
Գուժում փոթորիկ,
Ջդայուն ծովը թափով երազում
Իններորդ ալիք.
Եվ մթնոլորտում ցասկոտ հրդեհի
Կայծը բորբոքվում,
Հզո՜ր, վիթխարի՜, անխուսափելի՜
Վրե՛ժը կոփվում...

1908

ԳՈՐԾԱՐԱՆ

Ահա՜ գործարան...
Նայում եմ նրան՝
Նա հրեշի պես
Բացել է բերան,
Տնքում է, փընչում,
Հուր ու մուխ շնչում,
Եվ մարդը այնտեղ,
Որպես մի մժեղ,
Նրբա արնախում
Բացված երախում
Կարիքի դուռն է
Անընդհատ բախում։

Ահա գործարան...
Նայում եմ նրբան՝
Նա իր ցանցապատ
Թելերից պողպատ
Ոստայն է փռել,
Գոտիներ կռել
Եվ որպես հսկա
Մի արնախում սարդ
Արյունն է ծծում
Աշխատավորի,

Թարմինը հյուծում
Նաչար բանվորի...

Ահա՛ գործարան...
Նայում եմ նրան՝
Այժմ դարձել է
Հսկա դամբարան...
Այնտեղ մարդն է
Կենդանի թաղված.
Նա՝ որ իր կյանքում.
Սաղիկ հասակում
Սաղիկ չտեսած՝
Արյուն է թքում
Եվ մահը իրա
Աննձքով կնքում...

Կամ չէ՝ անիվը
Մի ակնթարթում
Բանվորին սեղմած
Իր պողպատ թաթում,
Տեսնում ես հանկարծ
Օճորք է նետում
Ու մեքենայի
Տարով՝ ճակատին՝
Տապալում գետին...
Ա՛հա գործարան...
Նայեցե՛ք նրան՝
Այժմ դարձել է
Հսկա դամբարան...

1908

ԵՍ Ա՛ՅՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ...

Էն՝ որ կիսահալ սառուցի տակից
Ժիր վտակներ են հևիհև լողում,
Էն՝ որ ձյունների վերջին հալոցքից

Թավիշ, աղվամազ կանաչն է շողում,
Է՛ն՝ որ արևի կենսատու շողքից
Գարնան առաջին ծաղիկն է ծլում
Եվ մանուկի պես արթնացած քնից
Աչքերը ճմլում՝
Ես ա՛յն եմ սիրում։

Է՛ն՝ որ նայում ես տաքերի լանջին
Գուտերի խումբն է կարմրին տալիս,
Լսում ես ջահել արտերի միջին
Արտուտի ազատ կանչը թնդալիս
Եվ այդ հաղթական ցնծալի կանչին
Տեսնում ես նորեկ ընկեր-թռչուններ
Արձագանքում են, տալիս ողջույններ
Ազատ եթերում՝
Ես ա՛յն եմ սիրում։

Է՛ն՝ որ այդ սրտիդ գոհունակ ժամին
Տեսնում ես մեկ էլ հյուսիսի կողին
Շողաց մի փայլակ... ետքից էլ խրոխտ
Հեռու ներդաշնակ մի անուշ որոտ,
Ուր հոգիդ նույնպես թնգում է, զգում,
Որ այդ որոտից անձրև է գալու,
Օդը մաքրելու ու մեզ բերելու
Ցանկալի գարուն,
Հենց ա՛յն եմ սիրում...

1909

ԼՌԵՑ ՍՈՆԱԿԸ...

Լռեց սոխակը... Լռեց նրա հետ
Վերջին հաճաչի տխուր արձագանք.
Թոշնեցին կարծես ծաղիկները այգում,
Ջրի մրմունջը մարեց պուրակում
Եվ այգուն պատեց սուգ ու հեկեկանք։

Այն սերը անզուսպ, որ բռնկել էր
Հազար լեզվանի հրդեհի նման,
Այն ապատ մտքում, ուր և ծաղկել էր
Ազնիվ խոհերի եղեմը գարնան՝
Ցնդվեցին, հանգան մոխիրի նման։
Եվ այժմ նոցա փոշին հալածված
Ուր որ ընկնում է՝ տարածում է լաց,
Կարծես մի բողոք, ցավի, կսկիծի,
Հանգիստը խլում բախտավոր մարդկանց։
Լսում է ողբը մանուկ անտառը,
Աշնան օրի պես դալկանում ծառը,
Ջրին խառնվելով լացի ամեն շիթ՝
Թույնի է փոխում աղբյուրը վճիտ...
— Լռեց սոխակը...

1909

ՈՐՊԵՍ ՄԻ ԹՌՉՆԱԿ

Որպես մի թռչնակ
Նա եկավ երգեց պատուհանիս տակ,
Եվ ձայնով քնքուշ, դայլայլեց անուշ
Ու թռավ նորից, թողավ ինձ մենակ։

Է՜հ, վազանցուկ են հավքերի նվագ,
Շո՜ւտ է մոռացվում.
Բայց է՛ն թռչնակի սիրուն գեղգեղանք
Սրտես չի անցնում...

Ու պիտի զգամ, որ մի թռչուն էր,
Եկավ ու խոսեց պատուհանիս տակ,
Խաղաց սրտիս հետ, հոգս ու դարդ չուներ,
Ու թևին տալով, չքացավ նորից,
Թողավ ինձ մենակ...

1909

ԱՇԵՆԱՅԱՆՔԻ ԵՐԳԸ

Մի ե՛րգ գիտեմ ես աննման
Հզոր մուրճի թափի նման,
Որոտի պես հատո՛ւ, խրո՛խտ
Մի ե՛րգ գիտեմ ես աննման։

Ծնվել է նա մութ հանքերի
Մետաղակուռ երակներից,
Ու ձայն առել քլունգների
Ցասկոտ ու շեշտ հուր-զարկերից։

Սնունդ առել, ջիղ ու արյուն՝
Թանուկ, ուժեղ բազուկներից՝
Գործարանը խանդ ու ավյուն
Շնչել նրան իր ժխորից։

Հմայք ունի երգս այնպես,
Հոգսի ժամին թե որ երգես՝
Թախիծ ու վիշտ կլքանա,
Լքված հոգուն նեցուկ է նա։

Հե՛յ, իմ երգը միշտ աննման
Հզոր մուրճի թափի նման,
Որոտի պես հատո՛ւ, խրոխտ
Մի ե՛րգ գիտեմ ես աննման։

1910

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից եկա այցելության
Գործարանի պարիսպներին,
Երկաթակուռ այն շենքերին,
Որոնք մի օր
Շունչ տվեցին իմ երգերին։

Ահա մտա ձրա ջեմքով,
Ինձ ողջունեց արթուն սուլիչ.
Մեքենաներն ուրախացած
Ու խենթացած՝
Արձակեցին երկաթե ճիչ։

Իրար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պտուտակներ.
Շոգեմուրճը հպարտ թնդաց
Ու որոտաց՝
— Դեռ չե՞մ հոգնել, դեռ չե՞մ հոգնել։

Նրան խմբով ձայնակցեցին
Ջարտճճի հազար մուրճեր.
Սրլվրլատով զրրբնգացին,
Կրլկրլացին՝
Որպես ուրախ դեղձանիկներ։

Եվ այս ժխոր-համերգի մեջ
Մեծ քուրայից ժայթքեց ոստնում.
Այդ անհանգիստ կայծն էր անշեջ—
Առավոտյան՝
Նոր կյանքի երգն էր պատրաստում։

1910

ՍՈՆԵՏ

Ո՞ւր ես, սիրելիս, էլ չե՞ս երևում,
Պատուհանդ փակ և դռներդ գոց,
Թռչուններն են մեն տանիքիդ հնում
Ու մեկ էլ ինքս քաշում խոր հոգոց...

Անչատումից ետ, այն մի տխուր էջ,
Շատ մաքառեցի ծոմ-կարոտիս հետ.
Դու քեզ նետեցիր կյանքի խաղի մեջ՝
Ես մնացի նույն երազուն պոետ...

1910

ՄԱՔԱՌՄԱՆ ԺԱՄԻՆ

Մուրճը ձեռքներիդ մաքառման ժամին,
Որոտ ու թափով զարկեցե՛ք սալին.
Առանց վարանման, կայծակի նման
Զարկեցե՛ք արագ՝
Քանի չեռուցած երկաթն է տաք-տաք։

Եվ վա՛յ է նրան, ով այս վեհ ժամին
Ե՛վ կվարանի, և՛ կթուլանա.
Ով իր ձեռքերի կոշտերի վրա
Հույս չի ունենա։

Երկաթը շիկնած կսառի այն ժամ,
Դե՛հ, եկ ու նորից վառիր դու քուրան,
Նետի՛ր զանգվածը, լարիր նորից ջանք,
Որ հուզվի՞ կրակ...
Ո՛չ, զարկե՛ք, քանի երկաթն է տաք-տաք։

Մուրճը ձեռքներիդ պատրաստ միշտ մնա,
Իսկ ով մաքառման դեռ չէ ընդունակ՝
Շարքերի միջից թո՛ղ անհետանա,—
Թույլերի չէ՛ տեղ, ոչ գործը կատակ...
Դե՛հ, զարկե՛նք, քանի երկաթն է տաք-տաք։

ԷՏԱՊԸ

Թե-թևի կապված, կող-կողի հպված՝
Ե՛վ քայլում էին, և՛ նայում առաջ...
Ամառ էր օրը՝ փոշու մեջ խեղդված,
Բայց խրոխտ ու հաղթ՝ և՛ քայլում էին,
Ե՛վ նայում առաջ։

Եվ կայլակներով քրտինք էր ծորում
Բաց ճակատներից, պարանոցներից,
Եվ տապ հողի մեջ ծաղիկ էր ծլում

Ամեն մի կաթիլ գետին գլորվող
Քրտինք-գոհարից։

Շա՜տ գնացին, քիչ՝ հպարտ, չպարտված՝
Նրանց կրծքերից չլսվեց հառաչ.
Վերջը կանգ առան Ուրալի դիմաց,
Բայց նրանք դարձյալ կարմիր ալիքով
Սուրում են առաջ...

1911

ԳՈՐՍԱՐԱՆՈՒՄ

Այն ժխորի մեջ, հեղձուկ և անօդ,
Ողջ օրը շռինդ աղմուկն է խոսում.
Ե՞րգ է, թե՞ բողոք, շա՞նթ է, թե՞որո՜տ,
Որ այնպես խրոխտ շեշտեր է գյուսում...

Այնտեղ մետաղե առյուծ-դազգահներ
Թաթերը թաղած քարե հիմքերում,
Սուր ժանիքներով, ինչպես ագահներ,
Գողպատ թերթերի կողերն են քերում.
Քերում են, կրծում խուլ հոընդյունով
Երկաթե, թուջե, պղնձե սալեր
Եվ տաշեղի պես փռում հատակով
Հազար մի ձևի խուճուճ-բուլուլներ։

Հրդեհ է կարծես այնտեղ, դարբնոցում,
Ուր արագ ու վարժ հաղթ բազուկների
Սիլուեթներն են աջ ու ձախ վազում
Ու մուրը լիզում մռայլ պատերի.
Կայծեր են ցայտում գնդակների պես
Ու խանձում դարբնի մազեր ու երես.
Սալն է տնքում կռանի զարկից։
Երկաթը ճչում հասցրած վերքից։

Սալերը փոշոտ այնտեղ լայն բակում,
Երկաթ են կրում, ծանրաքարշ թերթեր.
Հազար կոկորդ է ճչում, աղմկում,
Որ պատրաստ լինեն երկաթը նետել.
Ուռչում է դեմքի երակների ցանց,
Մինչ սալլից մի թերթ գլորում են ցած...
Ու մի բութ զնգոց... և սուր անկյունով
Հսկան է արդեն գետնի մեջ ցցված։

Մի տեղ ճռինչով մազութ են կրում,
Որ հյութ, սնունդ տան մեծ կաթսաներին,
Ապա ռիթմայով շարժումի բերում
Արհեստանոցի ողջ երակներին.
Այլ տեղ գործիքներ մեկ-մեկու հեսում,
Որ նորից խոցեն, խայթեն ու հարթեն,
Անիվ-սրոցին շառաչով քսում,
Որ բանվորներին գործիք հայթայթեն։

Եվ ամենուրեք ծով ժխորի մեջ
Ալիքածածան աղմուկն է լսվում.
Ե՞րգ է, թե՞ բողոք, կռի՞վ է, թե՞ վե՜ճ,
Որ այնպես խրո՜խտ սրտից է խոսում...

1911

ԿԱՐՈՏ

Խայթի թույնով մրմնջում է իմ հոգին
Կարոտս ա՜ռ, կարոտիդ տուր լիացում.
Ես բողոքով կապացուցեմ աշխարքին,
Որ մեր սիրույն դու չե՜ս տվել մոռացում։

Սո՜ւտ է, սիրել դու չես կարող ուրիշին.
Անցողական հաճույք է այդ, մի ժամանց.
Ոչ մի վայելք տեղը չի՜ տալ այն հուշին,
Որ հոգուդ մեջ ակոս ունի խարանած։

Ինչպես հավքը, որ դառնում է դեպ իր բույն,
Ինչպես ծաղիկ, որ արևն է միշտ տենչում,
Այնպես նորից ինձ պիտի գաս, իմ թռչուն,
Սիրույս խայթից քո սիրտն էլ է մրմնջում...

1911

ՃԱՀԻՃԸ

Ճահիճն է եռում,
Ամբ գորտ ու զեռուն,
Կրիա և բզեզ
Կազմել են հանդես.
Տիղմի շերտերով,
Խծնած խոտերով
Ծածկած իր երես՝
Ճահիճն է եռում,
Զմեռվա անզոր
Արևը ծաղրում
Ու խորհում այսպես.
«Գետը ցամաքել՝
Ինձ չի խանգարում,
Է՛հ, գարունը դեռ
Որքա՜ն է հեռու,
Ճիճուի կյանքն էլ
Թեկուզ ունենանք,
Բայց քանի որ կանք՝
Միշտ էլ կմնանք
Միակ տերերը
Այսօրվա կյանքի
Եվ ժամանակի»։

*
* *

Ճահիճն է եռում,
Փա՜ռ-փա՜ռ ծիծաղում,
Որ իր հանգիստը
Դեռ չեն խանդարում...

*
* *

Է՜յ, ճահիճ անհոգ
Խավարով եռուն,
Չե՞ս տեսնում արդյոք,
Որ մոտ է գարուն...
Ու տեսնում եմ ես՝
Թե ահա ինչպես
Մեր գետի առուն
Նոր հոսանք առած՝
Խաղում է հեռվում
Եվ կամաց-կամաց
Ափերը լիզում,
Փրփրում, հուզվում.
Ու թե մի կայծակ,
Մի որոտ ահեղ
Պայթի համարձակ,
Ետքից էլ հեղեղ՝
Օ՜, այն ժամանակ
Ի՜նչ ուժով պիտի
Գլորի տանի,
Հատակը ծովի
Տխմար այս ճահճին...
Եվ թող ա՛յս լինի
Նրա կարճ կյանքի
Հառաչը վերջին։

1911

ԸՆԿԵ՛Ր, ԴՈՒ ՄԻ՛ ԼԱ...

Ընկե՛ր, դու մի՛ լա, որ մատաղ կյանքիդ
Հուսավառ շեմքին
Ալ ծաղիկներդ հողմերը տարան
Վաղանց գարունքին.

Թեն շա՛տ կոկոն, շա՛տ տերև թափվեց
Թուփիդ շյուղերից,
Բայց արմատն է խոր, ոստեր կծլեն
Նորից ու նորից.
Էլի՛ կբացվեն, ասում եմ ես քեզ,
Նոր կյանքի շեմքին,
Էլի՛ կբացվեն կարմիր վարդի պես
Եկող գարունքին։

1911

ԳՅՈՒՂԻ ԵՐԵԿՈՆ

Ծառերի գլխին ոսկի արևը
Գսակ է կապել,
Ոսկեփոշին է օդի մեջ խաղում.
Այստեղ ծխնելույզ, այնտեղ գմբեթներ
Կանաչ գյուղերում
Իրենց բարձրությամբ իրար հետ կարծես
Գայթար են մղում։

Նայում ես հեռուն՝ մարգարեի պես
Խուրձերը ճաղատ՝ բաց գլուխներով
Շարեշար կարգով չոքել են կարծես
Լայն ու բաց դաշտում,
Եվ դու չգիտես, նրանք երգո՞ւմ են,
Թե՞ լուռ աղոթում.
Եվ հորիզոնը, որ վերջալույսի
Կարմիր բեհեզից վրան է հագել,
Նա է՛լ իջել է վերամբարձ գահից՝
Երկիրը գրկել,
Նա էլ չոքել է լսելու նրանց
Ջերմեռանդ երգեր։
Ա՞խ է բնությունն... շեն իր գյուղերով՝

Հարուստ ու շողուն, ավելի հեռուն
Լայն ու մեծափառ Դանուբը սիրուն
Կանաչ ափերով, կապույտ ջրերով
Հայացք է շոյում,
Եվ որքան նայում՝ ինքնամոռացման
Անուշ պատրանքով
Սուզվում է հոգիդ՝ հրճվանքի ծովում։
Եվ թվում է թե իրենց վիճակից
Այստեղ երջանիկ ու գոհ են մարդիկ,
— Հավասարակից...
Բայց երբ տեսնում եմ կարիքի որդիք
Մրոտ ու դեղնած վերադառնալիս
Մթին հանքերից, գործարաններից,
Փայտե կոշիկներ քաշած ոտքերին
Բաց սրունքներով.
Ջրի թիթեղը կախած կողերից
Յուղոտ շորերով.
Բացականչում եմ.— օ՜, դու, սև՛ կարիք.
Որքա՜ն, հիրավի, ուժե՞ղ ես եղել,
Որ ամեն տեղ էլ
Աշխատավորին կուշտ փորով հացից
Միշտ զո՜ւրկ ես թողել...

1911, Ջայլցբուրգ

ՔԱՂԱՔԸ

Ահա քաղաքը... հսկա բուրգերի մի զանգվա՞ծ է այն,
Թե՞ միապաղաղ պողպատից ձուլված լեռների շարան,
Ուր թրամների, հեռախոսների ցանցերը անխոնջ
Շարժի են բերում, աղմկում կյանքի երակները ողջ։

Ահա փողոցը... մե՞ծ, երկա՞ր ու լա՞յն գետի է նման,
Ուր ոլորտներով ծփում է, եռում հոսանքը շարժման.
Եվ ուր վիթխարի շենքերը քարե երկնահուպ շարքով՝
Կապույտ մի ճամփա եզրել են վերից անհուն լազուրքով,

Այստեղ ցուլի պես բառաչում է, տես, կառքը ինքնաշարժ,
Այնտեղ աղմկում հանրակառքերը, թրամները վարժ,
Սրանց արանքից ծիծեռնակի պես սուրում են ճարպիկ
Հեծանիվները, շալակն առած կին, տղամարդիկ...

Եվ այս ամենը, և՛ կառք, և՛ թրամ վազքով խուռներամ
Հզո՞ր, դյութագա՞ն գաղտնի մի ձեռքով ալիքանման՝
Պտույտ են գալիս, որպես համաչափ տեմպը սլաքի,
Ու չեն խանգարում թանչը քաղաքի, հևքը քաղաքի։

Եվ գոհ է այստեղ մարդը այսօրվան—ուժի ու փառքի,
Որ այս ժխորում ծծում է առողջ հյութերը կյանքի,
Ծծում է, քամում բույր ու հրապույր, հափրում, արբենում,
Ու չէ հագենում... ու չէ հագենում...

Օ՜, այս խնջույքի ոլորտումներին, լույս փողոցների
Հնչուն երգերին
Անմաս է միայն ստեղծողն այն,
Որ շուք է տվել նրա վերամբարձ բազմահարկերին,
Ինքը մնացել մառացված, մենակ, որպես խորթ զավակ։

Եվ բանակ դրած քաղաքածայրում, որպես գոռ ալիք,
Այստեղ ձուլվում է գործարաններում սերունդը գալիք.
Օ՜, հետևեցեք նրա փոթորկող սրտի բաբախման,
Նա էլ ի՜ր խոհերն, ի՜ր հույզերն ունի, ի՜ր գեր-նպատակ,
Որի ծո՜վ-թափին չի՜ դիմանալու ո՜չ մի ամբարտակ...

1911, Փարիզ

ՊԱՀԱԿԸ

Թող կորչեն ոգիք, լքուն, վարանոտ,
Ես կանգուն եմ դեռ իմ դիրքի վրա,
Եվ ինչպես պահակ, մինչ լույս առավոտ
Պիտի հսկեմ վեռ բարձունքը նքրա։

Եվ երբ հանկարծ թշնամին կյանքիս
Մթին անկյունից մահադավ լարի՝
Ո՜չինչ... կմեռնեմ ժպիտը դեմքիս,
Նշան հավատս գալիք հաղթ օրի։

Իմ ետքից կրգա մի առողջ սերունդ,
Ուժեղ ու հպարտ իր նախորդներից,
Փորձի մեջ բովված մարտիկների գունդ.
Դիրքը թշնամուց կփրկի նորից։

Եվ ստեղծագործ ոգևորությամբ
Ինչ որ կիսավարտ մնաց մեր օրից՝
Կտա լրացում վեհ գիտակցությամբ.
Ողջո՜ւն ձեզ, եղբա՜յրք, ձեր նախորդներից։

1913

ԴԱՐԲԻՆԸ

Ձեռներիս զույգ թաթման ունիմ՝
Կրծքիս կապած կաշվե գոգնոց.
Մուրճը ձեռքիս հավատարիմ՝
Եվ ընկերս՝ կարմիր հնոց։

Բով եմ դրել ջեռ քուրայում
Սև մետաղե մի մեծ զանգված,
Բայց համառը ոչ արթնանում,
Ոչ հուզում է կյանքի մի կայծ։

Բայց ահա, տես, հուրհուրացող
Արևի պես նա արթնացավ,
Եվ խաչարի մեջ խարխափող
Արհեստանոցը լուսացավ։

Եվ կայծերի տարափի տակ
Բերին նրան, դրին սալին.

Դե՜հ, մուրճհարնե՛ր, եկեք ձև՛ տանք
Ուշքի եկած այս համառին...

1914

ՈՉԻ՛ՆՉ, Ի՛Մ ԸՆԿԵՐ...

Ոչի՛նչ, ի՛մ ընկեր, մեր օրն էլ կգա,
Եվ ինչպես ջահել արևածագին
Փախուստ է տալիս խավարը հսկա՝
Այնպես էլ այգը կողջունի կյանքին։

Կապար է կապել մռայլ երկնքին,
Ոչի՛նչ, իմ ընկեր, այս օրն էլ կանցնի.
Մի որոտ ահեղ, մի կայծակ կրկին,
Եվ նորից գարնան մենք կերթանք այցի...

Թող լացի, ով որ գիտե լքանել,
Զվարճանա՝ ով չունի իդեալ.
Ապագան ծաղկոտ մերն է, ի՛մ ընկեր,
Պատրաստվենք նրան պատվով ընդունել։

1915

ՓՈ՞ՒՅԹ ՉԷ...

Փո՞ւյթ չէ, որ այսօր մառախուղ է խոր
Եվ օրն անթափանց.
Ընկեր ընկերոջ, եղբայրը եղբոր
Էլ չի ճանաչում.
Փո՞ւյթ չէ, ի՛մ ընկեր, նկատի՛ր ու ա՛նց...

Հարատևության չէ սա մի նշան—
Այս օրվա օրը.

Մի փորձաքար է, ու միջոց միայն
Լավ ճանաչելու՝
Ո՞վ էր անկեղծը և ո՞վ կեղծ քարը...

Մառախուղն այս կյանքանա շուտ
Մեր հորիզոնից.
Սարերի լանջին խոտերը թավիշ
Կծփան նորից...
Եվ այն ժամ, ընկեր, հեռո՜ւ մեզ, հեռո՜ւ
Կեղծ ընկերներից...

1915

ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻՆ

Նմա՛ն չեմ ես ձեր սիրելի պոետներին,
Ձեր քուրմերին երգս օտար, մի խորթ հնչյուն.
Ես չուզեցա հաճոյանալ ձեր սրտերին,
Այս առօրյա, մեղկ ու թունդտ մղձավանջում։

Ես երգեցի գործարանի սև աշխատանք,
Եվ ճարճատված պողպատ մեջքերն անիվի տակ.
Ստեղծագործ հրաշքները կոշտ ձեռքերի,
Հաղթանակող թափը նրանց վեհ պայքարի։

Սթափման երգ ես երգեցի լքվածներին,
Եվ հրավեր՝ պատրաստ լինել զարթնոց օրին.
Ես երգեցի աշխարհ ցնցող խենթ-փոթորիկ,
Որոտ ու շանթ տեղալուց ետ խաղաղ երկինք։

Եվ մարդկության հավատալիքն ես երգեցի,
Ծաղիկներով ողջ պսակված մի մեծ երթի...
Ես երգեցի հուրը հալող ժանտ բրոնության,
Եվ հրապույրը նորեկ կյանքի գեղեցկության...

Ո՛չ, նման չեմ ձեր սիրելի պոետներին,
Ձեր քուրմերին երգս օտար, մի խորթ հնչյուն.

Ես չուզեցա հաճոյանալ ձեր աչքերին,
Այս առօրյա, մեղկ ու թունոտ մղձավանջում։

1916

Վ. Ե. ԼԵՆԻՆԻՆ

Կանգնել եմ ահա պատկերի առաջ,
Դիտում եմ նրա գծերը գեմքի.
Սա հանճա՞ր է մի, թե՞ զորավար քաջ,
Որ պաշտամունքը դարձավ ամենքի։

Գանգը լայն է լերկ, անհաս ու հպարտ,
Ճակատը՝ անհաշտ կռիվների դաշտ,
Խոր աչքերի մեջ՝ այրող անապատ,
Անողոք իրար հրավ կռապաշտ։

Նայում է հեղնոտ անցած աշխարհին
Եվ ճաքծեռ ծաղրում բուրժուաներին.
— Որքա՞ն էլ ուզեք վեր կենալ նորից՝
Դատապարտվա՞ծ եք մահվան այսօրից։

1919

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ

Աչքերդ կապույտ եթերի նման
Եվ հոգիդ շուշան,
Սիրտդ խորունկ ծով, ազնիվ, անմաս,
Ընկեր Շահումյան։
Ձայնդ զանգակի փսեմ մի զողանջ,
Թափանցել գլուխ
Եվ ոգեորել շեշտովն իր ազատ
Վհատած սրտեր։
Խոսքդ չեմ լսել խոսք, այլ պատգամ հզոր
Կայծակնոտ ու վառ,

Թշնամիներդ և մինչև այսօր
Քեզնից դողահար։
Դու հո չմեռար, նորից կյանք առար,
Եվ հաղթ քո մահով
Ոչնչից ու աֆեց մի նոր գաղափար,
Փուվեց աշխարհով։
Մահդ խթանող ցնցեց ջատերին
Մեր կուռ շարքերում,
Օ՛, ե՛լ ու մի՛ ասա՛ քո մարտիկներին
Կռվի դաշտերում։
Քայլում են ահա հաղթ հազարով,
Քո ճանապարհով,
Եվ երդվում քո տեղ վրեժդ լուծել.—
Դե՛հ, գնա՛ս բարով...

1920

ՔՍԱՆՎԵՑ ԷԻՆ...

Քսանվեց էին...
Նրանք ամենքն էլ՝ ջահել ու եռուն,
Նրանք ամենքն էլ նորաշունչ գարուն—
Փնչած մեխակներ—Քսանվեց ընկեր։

Կռիվ էր զարկել
Անգղների դեմ Քսան-վեցն այն,
Եվ անհավասար ու դյուցազնական
Այն կռվի մեջ նա գերի ընկել։

Ու մի առավոտ,
Երբ աստղերը ֆաթ գեռ չէին հանգել՝
Ախչա-Կուլմայի դաշտում ավազոտ
Վեհ Քսան-վեցին բերին կրակել...

Երկու-երկու շարք
Արծվի նման կանգնել են նրանք,

Գունատ ու հպարտ, լուռ են, չեն խոսում,
Արհամարհանքով մահին՝ սպասում...

— Կացե՛ք մի վայրկյան,—
Հանկարծ որոտաց սև դահիճներին
Ընկերն Շահումյան.—
Երջանիկ ենք մենք, որ հիմա կընկնենք
Երազած մահով չահել ու վայել
Կոմունարների.
Բայց լա՛վ իմացեք, որ հենց իսկ վաղը
Սպասում է ձեզ խայտառակ մահը՝
Վայել շներին...

— Մենք այդ լա՛վ գիտենք...
Երերաց մի ձայն... Ու չանցավ վայրկյան՝
Գնդացիրներից Քսանվեցն այն
Հնձած արտի պես կողք-կողքի ընկան...

Գնացքը ետ գնաց...
Մինչ Քսան-վեցը իրարու գրկած՝
Ախչա-Կույմայի ավազոտ գոգում
Ամեն լուսածեգ կոմունարների
Հիմնն են երգում...

1920

ԻՆՆԵՐՈՐԴ ԱԼԻՔ

Ես վաղուց հասա իմ խոր արքունքին
Եվ վայելեցի՝ ինչ արգելված էր.
Ես վաղուց տվի ամեն ինչ կյանքին
Եվ այսօր արգեն հասակով՝ մի ծեր։

Եկել եմ կանգնել մեծ վիհի դիմաց,
Գերեզմա՞ն է այս, թե՞ մի նոր փորձանք.
Մա՛հ, ինձ մի տանիր, դեռ քիչ էլ մի կաց՝
Ջգում եմ իմ մեջ դեռ եռուն մի կյանք։

Մի կռիվ վերջին, կռիվը գալիք
Թող վարեմ ուրախ՝ մեռնեմ ինչ հյուլե,
Համաշխարհային իններորդ ալիք
Թող հին մարտիկիս ինձ իր մեջ ձուլե։

Չէ՞ որ ես ևս այն մեծ ալիքի
Մի կաթիլն եմ, մի, որ պիտի ցայտի.
Չէ՞ որ նա վաղուց երկնած երկնքի
Ամպի է զավակ, որ պիտի պայթի...

1920

ՄԱՐԳԱՐԵ ԵՄ ԵՍ...

Մարգարե եմ ես...
Եվ զգոն հոգուս աչքով սրատես
Թափանցում եմ խուլ, հեռավոր վայրեր
Եվ երկրագնդիս անսահման ծայրեր։

Տեսնում եմ ինչպես երկու ախոյան,
Թշնամի ուժեր իրար դեմ ելած՝
Կատաղի թափով իրար կխոյան,
Իր ափերն կյանքին, կամ ընկնեն մեռած։

Մի տեղ բուրժուան, որպես հյուծված կին,
Կուզե ետ խլել իր փառքը նախկին.
Պատնեշի այս կողմ չահել Կոմունար
Կռվում է նոր կյանք կոչելու համար։

Եվ հեղեղի պես արյունն է հոսում,
Ոչ ոք չի՛ ժխտում կռվի գաղափար.
Տարերքն են ճչում, լեռները խոսում՝
— Էլ վերադարձի չկա ճանապարհ։

Եվ դեռ կռվում է Հերոսությունը
Դահիճների դեմ—աշխարհակալի.

Փողոց է իջել Արդարությունը,
Իր դատն է վարում համառ, տիտանիկ։

Մարգարե եմ նա... Տեսնում եմ ինչպես
Դարերով ճնշված ստրուկն արթնացած՝
Տիրել է ուզում աշխարհին համայն.
Ու արիտ տիրի... հապա՛ է նրան։

1920

ԵՐԿՈՒ ԹԵՎԵՌՈՒՄ

Այն փողոցներում, լայն փողոցներում,
Ուր հազարավոր վխտում են կանայք,
Բաց սրունքների ու մերկ կրծքերի
Հանդես են հանել ծախու մի հմայք։

Նրանց աչքերում հուրը կրքերի,
Պարանոցները գեր, անասնական,
Նրանց զգեստից տոփանքով վայրի
Մորում է բույրը կանացիական։

Ո՞ւր է այն մեղը, որ հոգու խորքից
Ճչա, բողոքի ցասկոտ զայրույթով,
Ճչա ու ասի ամբոխի շորքից՝
— Գնեվեղ էք այդպես ո՞ւմ արյան գնով...

* * *

Դեպ հեռու հյուսիս թռչում եմ արագ
Ու փողոցներին նայում ակնածով,
Այստեղ չկա կին, որ լինի պարապ—
Ֆաբրիկներումն են ամենքը գործով։

Նրանց աչքերում լարված աշխատանք,
Դեմքերին խմբատոն Հավատարություն,

Կրքերն են եռում նրանց կրծքի տակ
Խոյացող թափով ստեղծագործության։

Ու թե են առել աղմուկն ու շշուկ
Վերին բևեռից գործարանների.
Նրանց երգերը այսօրվա անշուք՝
Հրդեհի կայծեր մեր վաղվան օրի...

1920

ԻՄ ԿՑԱԿԸ

Ծածկող քարը իմ շիրիմի
Թող զնդանի նման լինի.
Պատվանդանի վրա գրած
Թիվ ու անուն Հակոբյանի։

Եվ գրիչս այս կուռ սալին
Կռանի տեղ թող լուռ հանգ
Չէ՞ որ ես եմ, որ առաջին
Անգամ գրչով սալին զարկի։

Գրիչը մուրճ, կյանքը զնգան,
Ողջն իմ կովի՛ նշանաբան.
Թո՛ղ ուրեմն մահիցս հետո
Նա զարդարի իմ գամբարան։

1920

(ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԻԱՆՏ)

Ես որ մեռնեմ՝ իմ շիրիմին մի քար դրեք դուք սալաձև,
Եվ այն սալին քարից կերտած մի մուրճ հանգչի թող եռաթև,
Ես ուզում եմ հոգի մե՛ջ էլ կատարել մի սև աշխատանք,
Մնացողաց—դեռ երկար կյանք, գնացողաց—իր հարգը տանք։

Իմ սալ քարի պաղ ճակատին դրեք դուք իմ վերջին գնակ,
Որ թողնում եմ իմ զինակից ընկերներին որպես ավանդ.
— Բանվո՞ր ես դու, գրչի մշա՞կ—գգվիր, սիրիր մեր աշխատանք։
Հավե՞ժ լինի հիշատակը, ով մահանա իր ճախարակ իր փոկի տակ։

ԿԱՐՄԻՐ ԳԱՐՆԱՆ

— Ապրե՞լ...
— Ապրել միայն կարմիր գարնան,
Երբ ջրերն են իրար խառնվում—
Գետեր դառնում,
Երբ կանաչն է հատակ առնում,
Փարթամանում,
Ապրել միայն կարմիր գարնան։

— Կռվե՞լ...
— Կռվել միայն կարմիր գարնան,
Երբ որոտն է ահեղ թնդում,
Երբ կայծակն է երկինք քանդում,
Կռիվների բացում քառս,—
Տարերքների խոլ օվկիանոս։

— Մեռնե՞լ...
— Մեռնե՛լ միայն կարմիր գարնան,
Երբ հեղեղն է լեռներ խոցում,
Երբ սելավն է ուղի բացում,
Ինչ կա անպետք՝ տանում իր հետ,
— Անցած կյանքի էլ ո՞չ մի հետք...

1926

ԿՈՄՈՒՆԱՐԻ ՄԱՀԸ

(Ե. Շամախի ճիշտ տակին)

ազիկների մի մեծ դաշտ էր—կարմիր-կանաչ,
ր փռվել էր աչքիս առաջ.

Ցանում էին թաղելու մեր լավ ընկերոջ,
Որ ընկել էր վառ հասակում ծաղիկ-բողբոջ.
Ցխմար ու բութ այն դաշնակի
Սև գնդակն էր նրան շանթել...
Այն երաժիշտների հիմնն էր,
Ողողել էր պարզուն եթեր.
Եվ ալ, կարմիր դրոշներով
Ալ շիրիմը պսակի պես շրջապատել։
Հանկարծ լսվեց «Ինտերնացիոնալ»...
Եվ այդ խրոխտ երգի միջից
Կարծես ծլեց ջահել մի ձայն,
Նույնքան հաստատ ու համոզուն,
Նույնքան հստակ ու երազուն.
Նա ասում էր՝ նայե՛ք սրա
Վեհ ճակատին... այս թարմ սպին
Լույս է տալիս ինչպես արփին.
Մինչ տմարդի դաշնակն այն
Կարծել է թե, եթե՛ զարկեց կոմունարին՝
Սև օր կապեց մեր լույս օրին.
Բթամիտը կարծել է թե կյանք սպանեց,
Բայց չիմացավ, որ մի մահով
Նոր հազարներ ոտքի հանեց...
Նզովք նրան, հե՛յ, ընկերնե՛ր,
Մարդասպանին արհամարհա՛նք,
Սրան թաղենք և ապա մեր
Անշեղ գծած ճամփով գնանք...
Ու որոտաց թաղման քայլերգ,
Սրա ճառին հետևեց երգ.
Տղամարդ, կին-կոմունարներ,
Վառված սրտով, ոնց հրձիգներ,
Շիրմի հողում ցանում էին կռվի սերմեր.
Մինչ ալ կարմիր դրոշները
Փոփոխվով թեթև քամուց՝
Կարծես նույնպես ճառում էին,
Կարծես նույնպես երգում էին
Խրոխտ ու վեհ, խրոխտ ու վեհ,
Մարդ չեն կորցրել ջահել, կարծես։

Եվ արևը փայլուն, կայտառ,
Նույնքան կարմիր, նույնքան պայծառ,
Իր երգովն էր ձուլվել մեզ հետ,
Նա էլ կարծես դարձել պոետ։
Մի-մի բուռ հող ձեռքերս առած՝
Լուռ ծածկեցինք նրա երես։
Բռան հողով, ծաղիկ ցանած
Ջահել-ջիվան կոմունարի դամբարանին՝
Ու... հեռացանք նույնքան լուռ, վեհ...

1921, Դիլիջան-սանատորի

ՄԻՀԱ ՅԵՂԱԿՄՅԱՅԻՆ

(Ճվեր)

Կոկոններս էր, որ տվի այն ջահելներին,
Այժմ էլ փռված վարդս նվեր մեր ծերերին.
Մերերին ժիր կյանքի կռվում բռվված շարքեր,
Որոնց գործը հիացք բերող մի հրաշք էր։

Կյանքը նրանք չդարձուցին հեշտուն վայելք,
Կյանքի ամեն ցանց ու հյուսքից գտան մի ելք.
Ու թե այսօր քանվորն է իր տերը օրի,
Այդ էլ մասամբ շնորհիվ մեր ծեր առյուծների։

Նրանք նման հսկա կաղնու հաստ գագաթին,
Նրանք նման հեղեղ բերող գարնան գետին,
Նրանց կյանքը չէ՛ր անիմաստ ու անհամբույր,
— Բուրող վարդը չորացած էլ տալիս է բույր...

1921

ԿԱՄՈՅԻՆ

(Expromto)

Կամո՜... Կամո՜... Կամո՜... Կամո՜...
Ո՞ւր ես, Կամո՜.

Մեր աննման, մեր ահռելի
Դու դինամո...
Հրաշքների դարու զավակ,
Կամո՛ անգին,
Մեր օրերի հերոս ավագ—
Մեր Բլանկի։

Կամո՜... Կամո՜... Կամո՜... ազնիվ,
Քնքո՜ւշ հոգի,
Մեր շարքերում վնաս չարած
Դու ոչ ոքի,
Բայց թշնամուն ահի բերած,
Վախ ու տագնապ,
Բայց թշնամուն՝ մահատարած
Դու մի սարսափ։

Կամո՜.. Կամո՜... խիզախ Մարտիկ
Մեր մե՜ծ գործի.
Կյանքդ նվեր, սիրտդ նվեր
Մեզ թողեցիր.
Սրտիդ բախից մեր սիրտն էլ այժմ
Կալեկոծի,
— Գործը զոհեր է պահանջում,—
Մեզ ասացիր։

Կամո՜... այսօր զովքդ ենք անում,
Գործիդ զմայլ։
Եվ զգում ենք, թե այն որի՞ն
Մենք կորուցինք...
Ոչչո՜ւյն, Կամո՜... տիտան Մարտիկ,
Սիրույդ համար՝
Գործերդ մեծ, որպես ավանդ
Մենք սիրեցինք։

1922

ՊՐՈԼԵՏԱՐԻ ԵՐԳԸ

Գործարա՜ն, Գործարա՜ն, Գործարա՜ն—
Դու մեր ուսուցիչ, մեր ուսումնարան։

Քո լայն շենքերի կամարների տակ
Մեզ միշտ խմբել է հայրն աշխատանք.
Երբ քաղցը տնից մեզ փողոց նետել՝
Քո գրկումն ենք մենք ապաստան գտել։

Սիրում ենք մենք քեզ, ինչպես մանուկը
Իր հարազատ մոր անուշ ստինքը.
Կապվել ենք քեզ հետ սիրով անսասան,
Որպես նորահարսն ու նորափեսան։

Երբ լուսածեգին գուդակդ է հնչում,
Ասում ենք՝ այդ մեր ընկերն է կանչում.
Երբ շոգեկաթսան իր հուրը փնչում,
Ասում ենք՝ այդ մեր վառ սիրտն է շնչում։

Երբ ճախարակներ ու անիվը թափ
Հանդում են խենթ փոթորկի սարսափ,
Երբ վագրաներդ քարե ածուխից
Շիկնում են, փայլում ինչպես կարմիր սաթ՝

Մենք մտածում ենք.— սկսվեց ահա
Տարերքը կռվի և խոլ պայքարի,
Նետվում կռվիդ մեջ հզոր, ազդահա,
Կերտում մեր հույզը հաղթանակների։

Թուջը իր ձույլով մեր կամքն է կռում,
Մուրճը իր շաչով մեր սիրտը վառում,
Ինչ կա կյանքի մեջ անհայտ ու չասված՝
Մեր հոգում ձուլում ու կաղապարում։

Հղացումների մեր մայր սիրելի—
Երկունքների մայր, տանջվող ու տանջող,

Ջարկերակը մեր բարձր խոհերի,
Պարմանացում տվող հույսերի աճող։

Քեզ ամեն մի ոք չի կարող սիրել՝
Ոչ մեծատունը և ոչ էլ կղեր.
Կսիրի մեն նա, ում դո՛ւ ես ծնել,
Ով քո մրովն է սնել իր կողեր։

Գործարա՜ն, Գործարա՜ն, Գործարա՜ն—
Մեր ուսուցիչ, մեր համալսարան։

1922

ԻՄ ՍԵՐԸ

Սիրել եմ ես նրա հուրը աչքին.
Շոգու և մազութի բույրը լանջքին.
Սիրել եմ ես նրա երգը հնչուն,
Խոսքերը իմաստուն և կարկաչուն։

Սիրել եմ ես նրա պտղունցը լալ,
Աշխատող և ստեղծող մաշը հալալ.
Սիրել եմ ես նրա նամուսը վառ—
Քրտինքի աղբյուրից բյուրեղ-զուլալ։

Սիրել եմ ես նրա հույզը անտես,
Որ հեռվից փայլում է հրդեհի պես.
Սիրել եմ ես նրա կիրքը խանդոտ,
Անմոռաց, և՛ առողջ, և՛ հիվանդոտ։

Իմ սերը հոգեպար չէ՛ մի գրգիռ,
Հափշտակ պատանու սրտի թրթիռ.
Իմ սերը կախարդող իմաստ ունի,
Խոր, անծիր խոհով լի իմաստունի։

Ամեն մի նրա շարժից բախտ է ծնվում,
Ամեն մի նրա խոսքից մի միտք սնվում.

Բոլոր գեղ կանանց մեջ նա է սիրուն,
Ե՛վ ջահել, և՛ անմահ, և՛ դալարուն։

Սիրում եմ, սիրում եմ նրա շոգին։
Նրա շաղ ու ժխոր—նրա հոգին.
Չգիտեմ, ինչ՞ արդյոք մեկն ինձ նման,
Որ այսպես, խենթի պես, սիրեր նրան...

1922

ԴՐՈՇԻ ՏԱԿ

Բոլոր դուք՝ ով արևին է կարոտում,
Բոլոր դո՛ւք՝ ով դարերով շղթայակապ,
Ով իղձ ունի և նպատակ իրա արտում՝
Թող գա, խմբվի մեր ասիկար դրոշի տակ։

Հե՛յ շո՛ւտ, հե՛յ շո՛ւտ, արի կյանքը չէ բեռ
տաղտուկ,
Ելե՛ք շտապ։ ով սիրում է հալալ վաստակ.
Բոլոր դո՛ւք, բոլոր դո՛ւք, ով սիրում է կյանքի զարթոնք՝
Թող գա խմբվի մեր ասիկած դրոշի տակ։

Նա սիրողը մայր է սիրող հայրենատար,
Սև օրերի թույն ու մրուտ հրով վանող,
Նրա համար միևնույն է ծանոթ, օտար,
Մեր դրոշը դեպ վերկարար ուղին տանող։

Բոլոր դուք՝ ով արևին է կարոտում,
Բոլոր դուք՝ ով հարկի տակ շղթայակապ,
Ով իղձ ունի և նպատակ իրա արտում՝
Թո՛ղ գա խմբվի մեր փարձապատ դրոշի տակ։

22—1—1923

ԱՎԵՏՅԱՑ ԵՐԿՐԻՆ

Այսօրից հետո մենք միայն մի՛ տեղ
Ունինք ուխտատեղ.
— Կարմիր Պետրոգրադ և Մոսկվան շքեղ.
Սրանք են ահա, որ պիտի լինին
Մեր մեծ հայրենիք,
Մեր ծնողները և մեր ընտանիք։
Մոսկվա՛, Պետրոգրա՛դ, դուք մեր աղբյուրը
Ոգևորության,
Մեր որոնումի օրորանն առաջին,
Կայանը վերջին,
Առաջապահ գունդ, հրդեհի ջահեր
Հեղափոխության,—
Մենք շատ ենք կռվել ու դեռ՝ չենք հասել
Ձեր թափ ու շնչին։
Ողջո՛ւյն Պետրոգրադ ու միշտ հրաշունչ
Անպարտ Մոսկվային—
Իրենց շուրջերով, արվարձաններով,
Ողջո՛ւյն աշխարհիս երկու հսկային—
Իրենց գյուղերով, գաշտավայրերով
Միշտ թարմ ու կանաչ.
Ալ հերոսների արյունով ներկված։
Ես ուխտավորս գալիս եմ այցի
Ձեր հաղթ վայրերին,
Ուր հազարների արյունը հոսեց,
Կոմունարների.
Հեռու Կովկասի հեռածայրերից,
Միլիոն մրտերի բաբախումներից
Ծաղկեփունջ հյուսած՝ իմ ուղին բացի.
Կարմի՛ր Պետրոգրադ և ալ Մոսկվային—
Հեղափոխական երկու հսկային
Գալիս եմ այցի...

ԼՈՒՍԻՆԸ ԱՆՄԱՀ...

Այն ո՞վ է ասում՝ թե մեռավ լեռին..
Մի՞թե կմեռնի արևը պայծառ,
Կամ թե կմարի՞ շունչը օվկիանի.
Արդյոք տեսնո՞ւ եք Մարսը խավարի,
Կամ անհետանա Հիմալայի սարեր։

Նրա գործերը՝ մի-մի արևներ,
Եվ ավանդները՝ խորանիստ օվկիան...
Նրա պատգամներն՝ Մարսի բնեռներ,
Վեհ ու անսասան որպես Հիմալայներ։

Բայց այն ո՞վ գիտե... գուցե և լինի,
Որ մի օր մեռնի արևը հանկա,
Գուցե պատահի,
Որ անգամ ցամքի շրերի արքան,
Խամրի, չքանա և Մարսը ոսկյա,
Խորտակվի հիմքից Հիմալայի սարն...

Ու լեռները գնա
Գնան անմահ բյուրավոր գարեր
Նրա անունը
Աչս ամենից էլ հզո՞ր է, անմահ...

20 Դեկտեմբեր, 1966

№ 67

Մեն լուսրգիրի խիստ անասունում
Մի գազան է ոռնում, գոռում.
Ո՞վ է նրան վիրավորել,
Ո՞վ սև արել նրա օրեր...

— Ո՞վ սև արե՞լ, վիրավորո՞ւմ...
— Հիրանները ապիրատանքի,

Որ այսօրից գիմավորել—
Տե՛ր են գարձել իրենց կյանքի։

Մռնչում է գազանը խենթ,
Ունի պատգամ մի նոր խոսքի.
Ո՞վ է տեսել վիրավորի
Կրծքից մայթքի այսքա՞ն ոսկի։

Ու ցայտում է նրա շուրթից
Սև արյունը չարտրվանի,
Ու չի հոգնում նա իր երթից—
Ոսկի բռնած քարտվանի։

Մռնչում է սև անասունում
Սև գազանը, այնպես գոռում—
Թե՝ հեյ եկա նոր խոսք ասեմ
Ու ձեր խոսքին ես կոպասեմ...

ԳԵՎՈՐԳ ԱԲԱՐԲԵԳՅԱՆ

Տեսել եմ նրան ոչ թե երազում,
Այլ հենց կյանքի մեջ.
Տեսել եմ նրան պսակ մուրացող
Տարիքներների մեջ—
Է՛հ, որ ասում են վահագնի մասին,
Թե կար մի մանուկ
Աչավ-մազիրով հրածին հանկա՝
Հենց նա՛ է՝ որ կա։

Ո՞րտեղից եկավ վահագնը այս նոր,
Ո՞ր սեզ լեռներից,
Ո՞րտեղից իջավ կարյունն այս վարդի.
Ո՞ր անասուններից.
Նա ազանում էր նժույգից էլ ուշ
Գեղակից արագ
Եվ խարհրդային թշնամիներին
Անում ասեասակ։

Սիրում էր սուրալ ոգեստ օդի մեջ
Աբծիվի թափով,
Սիրում էր զոհի վրա խոյանալ
Ագռավ ասրասփով.
Քյուրեղ հոգու տեր՝ սիրում էր ցայտել
Քյուրեղ ջրի լեռ,
Կամ զահավիժել լեռների ծոցից
Ջրընկեցի պես։

Ու վերջին անգամ մի օր էլ ուզեց
Սլանալ վե՛ր, վե՛ր,
Օդանավի մեջ նորից առուգել,
Թե որքա՜ն է լավ
Միշտ բարձր լինել... ու հպարտ մեռավ
Մահով եղեռնի...
— Քաջուր հոգու տեր հերոսը պիտի
Բարձունքում մեռնի...

27 մարտի, 1925

ՁԱՐԹՈՆՔ

Արթնացել, ողջ Կովկասն է դարձել մի Զագե՛ս, Շիր-կանալ,
Ողջ երկիրը փոթորկել աշխատող ձեռքերի ալիքով.
Ե՛վ գեղջուկ, և՛ բանվոր կանչում են մեզ այսօր հասկանալ,
Որ կյանքը երկնել է մի բեղուն հիսուքանչ գալիքով։

Կովկասն է արթնացել. նայեցե՛ք, ահա նա, Վրաստան—
Թասակրավ մի գյոզալ—ասկեհուռ ճակատին փունջ աստղեր.
Զյունաթույր բամբակի թփերով պճնվել է Հայաստան,
Եվ Բաքուն նավթերով քահրաբար ՍՍՌ-ն զարդարել։

Կանգնել եմ պահակի իմ դիրքում երփնեքանգ այս ֆոնի.
Ջկա չիր՝ չխոսի, չկա մթոք՝ չհորդի խլրտում.
Բյուրավոր ձեռքերի ալիքով հյուսվել է սիմֆոնի
Միլիոն ձայն ու հնչյուն, միլիոն-ջեջա—համերգի հունդում։

Ու տեղի է տվել մի ցնծում, որ երկիրն է ցնցում,
Ամենուր օդի մեջ հունդում հև ի շունչ մի մրցում.
Եռանդի են եկել բահն ու թին, քլունգներն, մեքենա՜ն,
Լսո՞ւմ եք, ասում են՝ այսուհետ թող ամենքը հագենան։

Արթնացել, ողջ Կովկասն է դարձել մի Զագե՛ս, Շիր-կանալ,
Ապրում է իր էպոսն կերտումի... Ահ՜ յ, ով չէ հասկացել՝
Թող նետվի ու ձուլվի այս կովին հաղթական, շինարար.
Ստեղծող Կովկասի փոթորկող մեծ ծովերն ենք անցել...

1925

ԿԱՐՄԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՄԵԼՈԴԻԱՆԵՐԻՑ

ԲԱՔՈՒ

Ես անցա աշխարհով նավթերի
Ու տեսա նրա փառքն ու հմայք,
Այնտեղ մարդն հանճարով անթների
Կերտել է հիսուքանչ մի նոր կյանք։

Հորիզոնը նրա ջինջ հեռափոր
Հյուսել է դյութական պալատներ։
Օդի մեջ կախվել են բյուրավոր
Բազմահարկ, նորաշեն հաղթ տներ։

Եվ ապա մշուշոտ վիշկաներ,
Երկաթի ռեզերվար ու չաներ.
Ծխանե՛ր, ծխանե՛ր, խոզվա՜ղ,
Ու բանվոր շենքերի նոր-քաղաք։

Ու քանի՜ միլիարդներ անհաշիվ
Այս անհագ Ափշերոնն է կերել.
Այստեղ են արշինների Մանթա՜շև,
Խոհարար Ծատուրովը մարդ դառել։

Ու այստեղ են ապրել Շահումյան
Ալյոշան, Ազիզ-բեկ, Սպանդար.
Այստեղ են պայքարել աննման
Քսանվեց բայլշևիկ կոմունար։

Մեռել են նրանք վաղ հասակում
Հրածին քաղաքի անունից,
Ու ծածկել անթառամ պատկով
Ճակատը իրենց վեհ կոմունիստ։

Մինչև որ արյունով նրանց թարմ
Նոր Բաքվի հիմքերն են ամրացել,
Հե՛յ, գիտցե՛ք, այդ օրից իմ փարթամ
Հայրենիքն Սովետյան է դարձել։

1925

II

ԳԱՆՋԱ

Իմ հայրենիք, որ դարավոր
Խավարի մեջ աչքերդ էր կուրացել.
Որ զատելու մութը լույսից
Վազուց էիր անընդունակ դու զարձել
Այսօր ահա ամենից շուտ
Դո՛ւ ես, դո՛ւ ես, իմ աչքի լույս, աբթնացել,
Այսօր ահա սիրով անսուտ
Ողջ Սովետը քեզանով է հիացել։

Իմ հայրենիք, հացդ համով,
Խաղողդ մեղր, այգիներդ մուգ մախմար,
Իմ երգերը այս անգամ էլ
Նրանց ու ծափով ես հյուսում եմ քեզ համար։
Որ ամենուր շաղ ես տվել գոհարափայլ
Հորձարաններ, հիդրոկայան, նոր շինքեր,
Ջնոքդ մեկնել եղբայրաբար
Մեծ Մխուիյան, դարձել նրան լավ ընկեր։

Իմ հայրենիք, չինարներդ դարավոր
Շահ-Աբբասի ձեռքով տնկած, խնամած՝
Նրա անհաս բարձունքներն հեռավոր
Ապա խոսքս ռադիո-կանչով չա՛վ արա՝
— Մեծ հունար չի ծաղկած երկրում
Հանդես բերել հրաշքների բյուր զեղում,
Հունարն ա՛յն է. ավեր երկիրն
Ավա՛դ անել Գյանջու նման մի տեղում...

1925

III

ԵՐԵՎԱՆ

Մեր երկիրը սառներեք տարեկան՝
~~Թույլ չարել, հասուկ տեղ չինարու~~
Կեցցե՛ն նրա Ցիկան, Ցիկը ու Չեկան,
Որ ուս-ուսի հաղթ նեցուկ են իրարու։

Մինչ սրանից քսան տարի զեռ առաջ
Երևանը՝ պատյան կավե պատերի.
Չէիր տեսնում տո՞ւն կա բակում, կա՞մ կանաչ,
Կավե պատերն շոքած քարվան ուղտերի։

Հիմա շուրջդ բարձրասլաց պալատներ.
Թրամի կա՛նչ, հաղթանակող ու գվարթ.
Դեռ կիսաշեն, բայց ի՞նչ զողտրիկ են տներ.
Ամեն մի քար էարմիր տուֆից, կարմիր վարդ։

Հիմա նախկին Երևանը այն խավար
Լույսերի մեջ գոհարափայլ ու հասակ,
Կարծես հսկա Մոսկվան լինի լուսավառ,
Թեկուզ գիշերն գիրք բեր կարդա լուսի տակ։

Ու պրտրտվում, պրտրտվում է ամբողջ օր
Կերտողների կարուսելը եռանդի։

Դեռ շուտ չեկած՝ տեսնում ես դու ահա նոր
Մի՛ լայն փողոց արդեն ելել է ոտի։

Մեր երիտասարդ տասներեք տարեկան՝
Բոյ է քաշել, հասակ առել չինարի.
Կեցցե՛ն նրա Ցիկան, Ցիկը ու Ջեկան,
Կերտողները մեր գյուղապնյա օրերի։

1933

Օ, Ի՞ՆՉ ԼԱՎ ԷՐ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

Օ, ի՞նչ լավ էր այս գիշեր՝
Հուշերի մի ամբողջ շարք,
Երեկո էր մեղմ ու բարկ,
Օ, ի՞նչ լավ էր այս գիշեր։

Մանուկ կյանքիս հարեան՝
Նատս քույրը իմ կողքին,
Նրա դիմաց անմահ
Մարի ընկերն նոր կյանքի։

Օ, ի՞նչ լավ էր այս գիշեր՝
Հույզերի մի ամբողջ շարք,
Երեկո էր անուշ բարկ.
Օ, ի՞նչ լավ էր այս գիշեր։

Սեղան բացին իմ դիմաց՝
Համեմեցինք զրույցով,
Նորոգեցինք աղ ու հաց—
Զրույց չէր այս—մարմաջ ծով...

Եկոք խոսքեր, քաղցր վեճ,
Բացվող լույսի մի նոր էջ.
Հանգիստ առա հոգեպետ
Այս հիասքանչ կանանց մեջ։

Օ, ի՞նչ լավ էր այս գիշեր։
Կիսլովոդսկու օդում բարկ,
Հույզերի մի անուշ շարք,
— Ձեզ քաղցր քուն այս գիշեր...

1928, Կիսլովոդսկ

ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾԱՔԱՆՈՒՄ

Մեղուների փեթա՞կ է նա,
Ժխորալից խուլ աղմուկով,
Թե՞ խոխջող գետակ է նա
Լեռնաղբյուրի խիզախ երգով։

Մտել եմ ես նրա դռնով—
Զուգահեռ շարք—ժիր մեքենայք.
Ուրախ զվարթ պողպատ կռնով
Աշխատում են այստեղ կանայք։

Ջարահնի խիկների
Ոլորտները մեղմ, նրբահյուս,
Բարամայի թելիկների
Վիլակները արեգնալույս՝

Կարծես խմբով երգում են ինձ
Իրենց հիմնը հերոսական՝
— «Ստեղծում ենք այս թելերից
Մետաքսագործ մեր ապագան»։

«Այս թելերից խեղդող պարան
Մենք հյուսում ենք մեր թշնամուն.
Դե՛, այդպես է մեր գործարան—
Պատանք նյութող շառ ճանապարհն...

1928, Ստեփանակերտ

ԶՈՐԱԳԷՍՈՒՄ

Ախորժալուր ձենիդ մատաղ,
Զորագէսի ուրախ դիզե՛լ.
Զվարթ երգիցդ ուրախանում
Ու հրճվում եմ, ահա, ե՛ս էլ։

Մի ժամանակ էս ձորերում
Հովվի շվին էր շընգշնգում.
Հիմա թնդուն գուդակդ է
Այս վայրերի մեջ զընգում։

Մի ժամանակ էս սարերին
Սոված գայլերն էին ոռնում.
Հիմա նրանց ծմակներին
Հազարաչյա լույսեր վառվում։

Ուժ ես տալիս Զորագէսի
Շենք ու շնորհք-բետոններին,
Կուլ է գալիս ու գալարվում
Քո լույսերից մեր թշնամին։

Ու էգուց էլ, երբ կավարտես
Գետագոտին ոսկե շքեղ՝
Զորագէսից քեզ կուղարկեն
Աշխատելու մի ուրիշ տեղ։

Կլկլացող ձենիդ մատա՛ղ,
Զորագէսի երգիչ դիզե՛լ.
Հազթանքներիդ ուրախանում,
Թա՛փ եմ տալիս ե՛ս էլ, ե՛ս էլ...

1930

ՌԻՈՆ-ԳԷՍ

Ռիոն-գէս,
Ահա և ես...
Ես, որ տեսա մեծ եղբորդ Վոլխովստրոյին,
Հռչակավոր Դնեպրոստրոյին,

Զահել գոգալ մեր Զատեսին,
Գոետ դարձած Զորագէսին,
Ողջո՛ւյն քեզ.

Տեսա մեկի ամբարտակը հոյակապ, վեհ,
Մյուսի խրոխտ շլյուզները սքանչելի,
«Փահմ ու սամթով» Շիր-կանալի խլրտուն գէշ
Եվ Սվիրստրոյ—մեջքը արած դյուզ ու չոլի։

Մինչ դու կանաչ բլուրներին թիկն տված՝
Ու պարուրված քուլաչի մեջ կանաչ մախմար՝
Տիծաղում ես խնդուն ջահել հարսի նման,
Էդ նազելի մեջքիդ կապած ոսկի քամար։

Կամարներդ ամպերի մեջ բացված շուրթեր,
Օդից կախված կասես դալար ծաղկաճիթեր.
Եվ ջրերդ իմատրայի փրփուր խասեր—
Խենթի նման ո՞նց կվազեն, ո՞նց կվազեն...

Հե՞յ, լույսերդ...
Ուրախացող սիրտ է կարծես ամեն լամպադ,
Ամեն սյունդ բրով կերտած մի հուշարձան,
Փայլ աստղերի ցանցով նշած ուրախ ճամփադ
Ջրիդ ձայնը հեռվից երգող ջութակի ձայն։

Եվ ուժե՛րդ...
Հիմք բետոնող նոր կենցաղի ու նոր կյանքի,
Ջեստափոնի գործարանին սնունդ-դայակ,
Եվ Սուրամի լեռների մեջ աշխատանքի
Թափ ու տեմպի մեծ հեղինակ...

Ռիոն-գէս...
Որ խոսում ես Քութաիսի ամեն տան հետ,
Մութ հյուղերին ու գյուղերին նոր կյանք շնչում,
Քեզ եկել է այցելության մի ծեր ս.ոետ,
Ջահել ուժիդ, արև լույսիդ հազա՞ր ողջույն։

1932

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱԼԼԱԴԱ

Ասում են տարին մի քանի անգամ
Քուռն է կարմրել արյան շերտերով.
Արյան շերտերը առուի նման
Մետեխի ժայռից ծորել են հերթով։

Ասում են արյան ամեն մի կաթիլ
Թույնի է փոխվել ժայռից ծորալիս.
Ու դահիճներին խեղդել երկաթի
Իր օգակներով ցասկոտ, թունալի։

Ամեն առավոտ պաղ լուսածեգին
Ասում են Քուի ջրերը պղտոր
Բողոքի շեշտով արյունոտ երգի
Ալեկոծել են ափերն անդորր։

Թե այդ բողոքի ալիքները գիժ
Թիֆլիսն է ցնցել իր խուլ թաղերով.
Երդվել են թաղերն լուծելու վրեժ
Մահապարտների թափված արյունով։

Ասում են տարին մի քանի անգամ
Քուռն է կարմրել արյան շերտերով.
Արյան շերտերը հրդեհի նման
Քաղաքն են վառել իրենց հուր երթով։

1933, Թիֆլիս

ԳԻՈՆԵՐԸ

Հայրը՝ բանվոր էր մի մեծ արտերում,
Մայրը՝ կար անող գործարաններում.
Տանը, տարի մոտ փոքրիկներ էլ կան,
Մեկից ոկսած մինչ վեց տարեկան։

Մի մանչ ունեին՝ կարմիր պիոներ,
Նիհար ու սևուկ, կայտառ ու ժպտուն,
Բաբակ թուխ վզին ալ փոռպատ ուներ,
Ամեն օր ժամի մեկին կերթար տուն։

Տուն դառնալիս չէր շտապի երբեք,
Նա կանգ կառներ մի կիոսկի առաջ,
Ափի մեջ սեղմած մի քանի կոպեկ՝
Գրքեր կընտրեր, աչքերը չուռած։

Այդ կոպեկները հայրը ամեն օր
Տալիս էր նրան, որ նախաճաշի.
Իսկ նա գրքեր էր գնում նորանոր,
Նախաճաշելը թողնում ուրիշին։

* * *

Ես էլ ամեն օր ազատ ժամերին
Կերթայի կիոսկ՝ գնել լրագիր,
Ու ամեն անգամ մեր պիոներին
Կհանդիպեի այն հետաքրքիր։

Մի օր էլ տեսա ես այն մանչուկին.
Մե՛կ կիոսկին էր նայում վարանոտ,
Մե՛կ ափին սեղմած երեք կոպեկին—
Ուզում էր գնել մի գիրք անծանոթ։

— Ինչո՞ւ ես, բալա՛ս, այդպես վարանել...
— Հրեն, էն գիրքը ուզում եմ գնել,
Միայն թե թանկ է,— գինը հինգ կոպեկ,
Իսկ մոտս ունեմ ես միայն երեք...

Հանեցի տվի պակասած վճար.
— Շնորհակալ եմ,— ասաց մանչուկը,
Վաղը կբերեմ պարտքս անպատճառ,—
Ու մտավ կիոսկ, գնեց գրքույկը...

Անցան տարիներ ու մի լավ օր էլ,
Երբ մանչուկը իմ հասակ էր առել՝
Տեսա եկել է նա գրագրաան,
Մատեցա ու հարց տվի ես նրան։

— Դե, ասա՛, բա՛լաս, քանի՞ գիրք ունես,
Այնպես մանկական ու էժանագին.
Երևի արդեն, որքան գիտեմ ես,
Մեծ գրագրաան ունես ահագին...

— Ունեի գնած երկու հարյուր գիրք,
Բայց նվիրեցի մեր կոլեկտիվին,
Ողջը կարդացել, հիշում եմ անգիր,
Ասի, հիմա էլ մեր բազան օգտվի...

Ջասե՞մ բախտավոր ու մեծ է երկիրն,
Ուր մանուկներն են այդպես մտածում...
Իմ ջահել գրիչ, հիմա էլ երգիր,
Մեր նոր սերնդի մտքի խոյացում..

1934 թ. փետ. 3

ՊՈԵՄՆԵՐ

ՆՈՐ ԱՌԱՎՈՏ

(Stella-ին)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Ահա իմ մուսան կյանք առավ նորից
Եվ պատանեկան աշխույժով եռուն
Խոսեց սրտիս հետ անցած օրերից—
Անցած օրերի հմայքը սիրուն.
Օրեր՝ որ անցան ծաղիկների մեջ,
Լի վայելքներով անմեղ մանկական,
Օրեր՝ որ անցան շարեշար, անվերջ,
Թուռն հույզերով պատանեկական։
Եվ ի՞նչ է կյանքը... մի երգ դյութական,
Որ կրկնվում է հիասքանչ, թովիչ
Ելևէջներով, եղանակներով,
Որ հնչում է այնպե՞ս գրավիչ
Ու մարում ցավի արձագանքներով...
Կյանքը մի նկար, որը հյուսվում է
Հազար գույներով, հազար ցոլքերով,
Կյանքը հսկա ծով, որ փոթորկում է,
Նավեր խորտակում ու վերջը մնում
Մենակ ու տխուր իրա խոհերով...
Ահա իմ մուսան տեսնում եմ նորից
Տանջված անցյալի ծանր երկունքից
Գոնեպես ծնեց կյանքի նո՛ր գարուն—
Մի պատկեր սիրուն.
Պատկեր մի կույսի, որին շա՛տ վաղուց
Որոնում էի, բայց չէի գտնում,

Նա մի խշնալ, որին հինավուրց
Թվ տեսնում էի, և չէի տեսնում,
Որին ես ձգտում՝ բայց չէի հասնում...

II

Այժմ ահա նա... տեսնում եմ, զգում,
Որ իմ հոգին է նրա մեջ ապրում.
Որ իմ և նրա հոգու ծալքերում
Կա մի հարազատ իրար նման գիծ՝
Խորը սկոսված միապես ցավից...
Քա՜ղցր է, քա՜ղցր, ես չեմ կշտանում
Նրա գրավիչ, խոսուն աչքերից,
Եվ ամեն անգամ մի բան եմ գտնում,
Մի միտք հղանում նրա պատկերից,
Երբ ուշքս լարած նայում եմ նորից,
Ա՜խ այն աչերում մի ամբա՜ղջ աշխարհ,
Այն թախծոտ շուրթին մի ցավոտ ժպիտ,
Իսկ հրապույրը գեմքի վշտահա՜ր...
Զգում ես, որ նա կրել է մի վիշտ,
Մի խոր, անհուն վիշտ, որը չգիտես
Ո՞ւր է վերջանում, նրան ո՞ւր տանում,
Կամ ինչո՞ւ հոգիդ այնպես ատատանում.
Ու մտածում ես, ու մտածում ես՝
Եվ չես հասկանում...
Զգում ես, որ նա մատաղ հասակում
Շա՜տ է տանջել, շա՜տ է դիմացել,
Ու թեև նրա կյանքը ծաղկալից
Հազարի տակ է սնվել, մեծացել՝
Բայց էլի անցած վշտերի բովից
Մի գեղեցիկ բան զարգացել մնացել։
Ո՜, ես սիրեցի՜ այդ նազան կույսի
Շատը երեսի։
Քանի նայում եմ—էլ չեմ կշտանում
Ջուխտած ժամին խորը վշտանում,
Կարծես կորուստ մի ունի թանկագին
Նրա սուգն է սրտիս ծանրանում,

Ահա ես մենակ սպասում եմ լուռ
Ամեն մի բոպե, թե հա՜, պիտի գա
Ու բանա իմ տան դռնակը տխուր,
Եվ իմ առջև կանգնի հեկեկա,
Կանգնի ու ասի՝ տեսա՞ր որ եկա,
Եկա գիտնալով, որ կրակի պես
Հալվում ես մենակ... եկա որ շոյեմ
Ճակատդ տխուր ու քեզ փայփայեմ,
Որ սրտիդ ցավը հեշտությամբ տանես
Ու տեսնես, որ ես այնքան էլ անգութ,
Այնքա՜ն էլ քար չեմ, ինչպես կարծում ես...
Ու երազի պես անորոշ ու մութ
Ասես ու գնաս, ասես ու գնաս՝
Ու մեկ էլ տեսնեմ, որ դու էլ չկա՜ս,
Որ դու էլ չկա՜ս...

III

Տեսնում եմ նորից, քո մեն սենյակում
Նստել, դիտում ես աչքերով թաքուն.
Սիրում ես դու ինձ, թե՛ հոգիս զննում—
Այդ չեմ հասկանում.
Այդ խորհրդավոր լռակյաց ժամին
Քո հրապույրն եմ ես միայն զգում.
Կյանքի արևը իրա իմաստով
Զգում եմ, աչքիս հմայք է առնում
Ու շոյող, անուշ մի ճառագայթով
Հալվում ու ծուլվում իմ հոգու խորքում։
Հա՜, դու նայում ես երկար ու թաքուն...
Աչքերդ կարծես տերևով ծածկված
Մի աղբյուր լինի, որ ուղի բացած՝
Տերևի տակից գնում է, հոսում,
Նայում երեսիս, սրտիս հետ խոսում.
Ու ես ծարավի տակ մարող չրիդ,
Ու՞ ես կարոտի մաքուր բյուրեղիդ՝
Ընկնում եմ լանջիդ, որ սիրտս բացեմ,
Փղձրկամ կրծքիդ, ցավս կուշտ լացեմ՝

Բայց մեկ էլ հանկարծ աչքես չքացած,
Որպես մի այծյամ սարն ի վեր ելած՝
Տեսնում եմ, ավա՜ղ, որ դու էլ չկա՜ս,
Որ դու էլ չկա՜ս...
Օ՜, այդ աչերը այնքա՜ն գրավիչ—
Կարծես պուրակում մարգարիտ-ծաղիկ
Հեռուն ցնորող, բայց կյանքի կարոտ՝
Ինձ խոստանում են մի նոր առավոտ.
Զգտում են նրանք ինչ որ անհայտի,
Կարծես որոնում մի աշխարհ գաղտնի,
Գաղտնի մի աշխարհ, ուր եթե հոգին
Երջանիկ զգար ու շուտ մահանար՝
Ոչ մի ափսոսանք չէր առաջանալ,
Զգտում են նրանք, որոնում մեկին։
Գերբնակա՜ն աչեր, դուք ո՞ւմ եք ուզում,
Գուցե երջանիկ կյանքը երազում,
Կյանք իմաստալից, կյանքը իրական,
Կյանքը կյանքի մեջ գաղափարական,
Լի հուզումներով, ցանկություններով
Եվ երջանկության փոթորիկներո՞վ...

IV

Եվ ես վաղուց է հեռու կարոտի
Մի ցավ եմ զգում իմ ցավոտ սրտում.
Եվ ես վաղուց է սիրո՜ անոթի՝
Նրա դող ու հույզն էի կարոտում.
Արթնացավ իմ մեջ նա մի նոր ուժով,
Սիրտս լցքցրեց այնպիսի հույզով՝
Կարծես վիրավոր մի խոցի մրմունջ,
Կարծես փայփայող կանացի մի շունչ
Ողջ էությունդ շոյում, գուրգուրում
Ու հոգուդ բերում
Ծաղկունքից բուրող մի քաղցր գրգիռ,
Մի անուշ թմբիր...
Եվ այդ ժամերին մի կյանքն ի՞նչ է.
Հաբյուր կյանք թե տամ այդ բախտին՝ քիչ է.

Ու ես իմ հոգու ուժերի թափով,
Որ խրտացել է ծով-սրտիս խորքում,
Ուզում եմ քեզ գամ ճիչ ու սարսափով
Ու ալիքի պես ծնկներդ փարեմ,
Ոտքերդ մարմար գրկեմ, համբուրեմ,
Ասեմ՝ ի՛մ անգին, այսպես իմ կյանքում
Ես դեռ չեմ սիրել, բայց պիտի սիրեմ,
Ու մեկ էլ աչքս ես վերև հառեմ,
Տեսնեմ ինձ մենակ, իսկ դու էլ չկա՜ս,
Թռե՜լ ես, մարե՜լ, որպես խոլ երազ...

V

Ու վերջին անգամ տեսա, նազելիս,
Հազար պչրանքով, հազար թովչանքով,
Տեսա քեզ մենակ սիրտդ հուզվելիս
Մտախոհ ծովի բուռն հորձանքով,
Գլուխդ ետ տարած, մազերդ ցիրցան,
Հուսահատ թափով ջղաձգական
Ձեռքերդ ջարդում, մատներդ սեղմում,
Արդյոք ո՞ւմ մասին ես դու մտածում.
Հայտնի՞, անհայտի՞, ներկա մի անձի՞,
Թե՞ մի ցնորքի.
Տեսա քեզ ինչպես լարած միտք ու խելք
Ուզում ես գտնել կանկածիդ մի ելք...
Ու մի սիրալիր ժպիտ իմ բաժին
Պայթում է հանկարծ շուրթերիդ ուժգին,
Ջարդ, բարիի ուժե՞ր են կռվում,
Թե՞ ճանապարհիդ վարդերը փռվում.
Ներկայի փշե՞ր, անցյալի հուշե՞ր,
Թե՞ դեռ անորոշ մի համր գիշեր...
Եվ մտածում եմ. գուցե՞ սա ունի
Հեռու աշխարհում իդեալ սիրուն,
Գուցե փայփայած մի անհա՞տ ունի
Գերմարդ կոչվելուն հպարտ արժանի...
Ասա՜, իմ սիրուն, իմ հոգու պատկեր,
Ո՞վ է այն հսկան, որ կարողացավ

Քեզ լինել ընկեր.
Ո՞վ այն տխտանը, որին հաջողեց
Ցիրել քո սրտին, իշխել քո մտքին.
Ո՞վ այն երկինքը, որը խիզախեց
Ամփոփել իր մեջ քո օվկիան հոգին...
Կյանքի ծարա՞վը եսականության,
Անհաս թռիչ՞քը բանականության,
Արդյոք աշխարհիկ վայելչությո՞ւնը,
Թե՞ փարթամ կյանքի սին կեր ու խումը...
Օ՜, թե նա տեսներ իմ ցավ ու թախիծ՝
Քեզ ինձ կթողներ այն հեռու տեղից,
Քեզ ինձ կթողներ ոչ թե անձնական
Լոկ բախտիս համար—իբրև կարեկից,
Այլ ձեռքդ առած, որպես թևակից—
Աշխարհ կերթայինք կյանքը մտնելու,
Մեր միտքն ու հոգին մարդկության տալու,
Եվ, ասա՛, ինչո՞ւ մի ձայն հաղթական
Որոտի նման ինձ է թելադրում,
Որ դու միայն իմ աշխարհն ես սիրում,
Կամ ինչո՞ւ սիրտս հուժկու ձայն առած՝
Աղաղակելով միշտ նույնն է ասում—
Որ քո խելացի աչքերը անուշ,
Որ քո այդ ազնիվ ժպիտը քնքուշ
Մեկին սիրելու համար չեն ստեղծված։
— Մնված են նոքա ամբոխի համար,
Նոքա ծուխքն են տառապած կյանքի,
Նոքա ծնունդ են մի այլ աշխարքի,
Եվ թո՛ղ որ ապրեն մարդկության համար։
Օ՜, եթե փլչի իմ գլխին կամար,
Ե՛ս չեմ հավատալ, ես չեմ հավատալ
Որ հոգիդ պայծառ և սիրտդ ազատ
Կարենա գերել ա՛յլ էակ—անհատ.
Դու ինձ ես սիրում, դու իմ իդեալ,
Ես չե՛մ հավատալ,
Օր միտքը ճնշի արտի բարախում,
Արտիդ մեջ մի ա՛յլ կրակ է մխում...
Եվ այդ գոհարը նվիրել մեկին

Շա՜տ է նսական—կաշկանդող հոգին,
Նրա թռիչքը մի ցնորք անտես,
Երերուն մի հող ուր ինչ էլ ցանես՝
Պիտի թառամի, պիտի չորանա,
Սկիզբ ու վախճան երբեք չունի նա...
Եվ ի՞նչ է մեկը.
— Մեկը՝ մի ստվեր, որ ինչ էլ լինի,
Նման թույլ ու մեղկ օտար հնչյունի
Արձագանք չունի.
Ա՛յլ է հազարը, ա՛յլ նրա կոչում,
Նրա գրոհից աշխարհն է թնդում...
Ա՜հ, այն աշխարհում կա մի ճանապարհ—
Անձուկ ու փշոտ.
Ուր եթե գնաս՝
Քեզ պիտի շողի ոսկի առավոտ.
Նա չէ մի երազ,
Սիրելի՛ ընկեր, և ոչ սին պատրանք.
Նա խոստանում է քեզ իրական կյանք,
Ինձ՝ նոր առավոտ...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

VI

Եթե իրա՞վ է, նազելի սիրուն,
Որ քո աչերը կյանքի ջերմ կարոտ,
Մի նոր, իրական աշխարհ են փնտրում,
Եվ ինձ խոստանում մի նոր առավոտ.
Արի տանեմ քեզ իմ սիրածի մոտ.
Դեպի գործարա՜ն՝
Արի տանեմ քեզ, ուր բանվոր մարդիկ
Չեն ապրում միայն ցավով անձնական,
Այլ ցավը քաշում չարքաշ մարդկության.
Ուր գործ է կռվի մեջ են որոնում
Հմայք-բանալին բախտավորության։
Այնտեղ միասին և ընկերովի

Իրար թե կոտանք, նեցուկ կլինենք.
Որ ցավ ու զրկանք հաշտությամբ տանենք.
Ես քեզ կսիրեմ ոչ լոկ սիրելու,
Հաճույքի համար,
Այլ սեզմ ձուլվելու քո մատաղ հոգում,
Որ դու ավելի լինես դիմացկուն
Այս դաժան կյանքում։
Ա՜խ, մանկությունից ընկեր սիրելու
Նեղությունն եմ ես։
Ու թե ինձ լսես՝
Կգաս միասին,
Էլ չես մտածիլ անհատիդ մասին,
Երանի՜ նրան,
Ով կանցնի քեզ հետ դյանքի նոր ուղին։

VII

— Գնա՜նք գործարան։
Բայց լսի՛ր ասեմ, սիրելի՛ ընկեր,
Որ չկան այնտեղ ծառ ու ծաղիկներ,
Բաղեղ ու խոտեր,
Հավքերի նվագ, գույ-գույ աղբյուրներ.
Ե՛վ ոչ էլ վարդեր։
Չե՛ս տեսնիլ այնտեղ լուսնյակ գիշերի
Լուսաշող ամպեր,
Մ՚չ էլ սիրահար շահել տրեմի
Գրքեր Համլետյանի։
Այնտեղ ծառի տեղ ցցված են խրոխտ
Երկաթե սյուներ
Բազեղ-խոտի տեղ ցանցերի փշոտ
Գազպատե լարեր.
Գեղեցիկ թռչնոց երգի փոխարեն
Կլսես այնտեղ
Ճայնարակների ոնգային որոտ,
Եվ խենթ փոկերի համերգը ահեղ.
Այնտեղ խեղդվում են շոգու ամպերեն։

Գաղ աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն օր,
Վարդի փոխարեն
Ծորում, քամվում են արյուն սրտերեն,
Եվ շուրջդ բոլոր
Շունչ ու ժխոր...
Կը տեսնես, ինչպես թանձրացած մխով
Ծխնելույզները
Երկինք են կառչել ագահ երախով,
Մրոտ պնչերը
Կարծես հրաշունչ վիշապի նման
Ուզում են շնչել
Ու իրենց քարշել
Անհուն բարձունքից փայլուն աստղերը,
Որ նրանց թաղեն մշուշ-ծխի մեջ.
Կըտեսնես շարված սգավոր ու խեղճ
Արհեստանոցի աղյուս պատերը
Խոնավ ու թաց-թաց,
Կարծես բանվորի քրտինքով թրջված...

VIII

Եվ դու կմտնես այն գործարանի
Կամարների տակ,
Որտեղ եռում է թափով աշխատանք.
Կըտեսնես այնտեղ արհեստանոցի
Հարազատ զավակ կաղնի-բանվորին,
Կարծես Բահալը նստել է նրա
Կորացած մեջքին։
Ա՜խ, շա՜տ եմ տեսել նրան, ի՛մ ընկեր,
Սևացած երես, ծխի մեջ կորած,
Ու դեռ հասակը երեսուն չառած՝
Կամ մեքենան է ճխլում իր թաթում—
Ոտքերը փշրում, բազուկը հատում,
Կամ ալ հեղուկը այրում, փոթոթում...
Ես տեսա նրան, սիրելի ընկեր,
Մի մթին գիշեր
Քուրան էր վառվում, փնչում կատաղած,

Ամեն անկյունից, որպես վիշապներ,
Կարմիր կրակը լեզուներ հանած՝
Օդը լիզելով երկաթն էր ծամում—
Սուփ-ծուփ շիկանում,
Եվ նրա դիմաց գարբինը կանգնած,
Ալ բոցի գույնից թափ, եռանդ առած՝
Ջորցած մատներով երկաթն էր կոում
Եվ պղպատ մեջքով համառին ծռում,
Կոռ՛ում ու կոչ՛ում...
Եվ մինչ մի նոր ձև, մի կյանք չէ՛ր տալիս
Անշունչ մետաղին՝ չէ՛ր հանգստանում,
Եվ խորհում էի... ահա՛ թե ուր է
Ձգտում բանվորի ստեղծող ոգին,
Ահա՛ թե ինչու կարմիր-ալ գույնը
Նա սիրեց այնպես խանդաղատագին.
Ու թեև կաթ-կաթ քրտինք է ծորում
Մրոտ ճակատից,
Բայց էլի մի ի՛ր, մի գործ է ձուլում
Անշունչ երկաթից,
Մի գործ հոյակապ, —
Որով կոփվում է իր կամքը երկաթ,
Սնվում ու բովվում հավատն անհաղթ։

* * *

Մի ուրիշ անգամ այս տիտաններին
Ես տեսա, ընկեր, մեծ ձուլարանում.
Դույլեր ու ձողեր ձեռքերը առած՝
Ջեռուն հնոցի շուրջը բոլորած՝
Թո՛ւչ էին հալում։
Վագրանն ամեհի կարմրել էր, փոփիկել,
Ուզում էր պայթել...
Եվ ահա-մեկը անվեհերներից
Ցուր ձողը ձեռքում
Վագրանի կուրծքն է զայրույթով մխում,
Երանը խայթում.

Կարմիր հալոցքը արյունի նման
Վիժում է ուժգին,
Կարծես հոխորտում կլսենել նրան՝
Ով որ խիզախեց վերք տալ իր կրծքին.
Բայց բանվորը քաջ սովոր է նրան,
Ծաղրում է, հեգնում ջեռուն հեղուկին.
Հալոցքի մե՛ջ է սնվել, մեծացել
Նրա հազթ հոգին։

IX

Որպես հրաբուխի ջեռուն ձուլածո՝
Շիկնած դույլերում հալոցքն է եռում,
Մարդիկ վտանգի հարայ-հրոցով
Հալոցքը դեպի ձևերն են բերում,
Ահա հասել են ձև-կաղապարին—
Մահ ու դժոխքի այս ճանապարհին՝
Հանկարծ վարպետի խրոխտ հրաման...
Ու մի վայրկյանում տասնյակ բազուկներ
Լարված մկանունք, ուռած երակներ
Դույլն են ծռում դե՛պ ձևի բերան,
Կոկորդը թափում հալքը հուրհրան.
Կարմիր հեղուկը հալած չուգունի
Խլրտում է խենթ հոսանքի նման.
Բոցեր են ելնում կրծքիցը հողի,
Ծծմբահոտից գաղջանում օդը,
Բայց ո՞վ է նայում վիշապի խաղին—
Բալաստը նրան զսպել է արդեն.
Ուրախ են մարդիկ ու գոհ են նրանք,
Որ հուր տանջանքից ծնվեց հազթանակ.
Գետնի տակ ձուլված գործը կենդանի
Իր գիրկն է առել հոգի կաղապար,
Գործը մարմնացել... Կեցցե՛ գաղափար...

X

Այդպես շարժվելու նրանք միշտ սովոր,
Այդպես անհանգիստ եռուն ամեն օր
Գալիս են անվերջ։

Հազարը մեկի պես, մեկը՝ հազարի—
Մի ալիքից ետ՝ բյուրավոր ալիք,
Ջուլվում է ես-ը հզոր մեհ-ի մեջ
Եվ մեռած կյանքի հուզում փոթորիկ.
Նրանք գալիս են մի-մի առավոտ—
Խավար մտքերը ճառագայթելու,
Նրանք պայքարում չարքաշ մարդկության
Հանգիստ բերելու.

Նրանք տանջվում են ո՛չ ինձ, քեզ, մյուսի,
Ջորրորդի համար.

Նրանք մեռնում են ինձ, քեզ, երրորդի—
Շատերի համար.

Եվ հսկայական մի ցավով տարված՝
Ձգտում են առաջ, անցնում խութերից,
Եվ սիրտն է թնդում այդ միությունից։
Տե՛ս այդ նրանք են, ուր ամեն մեկը
Մի քար է քաշում մրջյունի նման
Ապագա շենքի կռելու հիմքը,
Եվ երբ տեսնում է պատերը ելան,
Ելան, բարձրացան և գործն էլ կենդան
Ոգևորվում է առյուծի նման։
Գնա՛նք գործարան,

Դեպի կարիքի, քաղց ու տանջանքի
Այն եռուն քուրան.

Այնտեղ կտեսնես զրկանքի որդուն
Ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում.
Այնտեղ կարող ես հասկանալ մարդուն,
Լվանալ վերքեր սրտիդ արյունով,
Հրեշտակային այդ բարի դեմքով,
Քնքուշ, նրբազգաց կանացի հոգով
Այնտեղ կարող ես ցավեր ամոքել,
Եվ վհատյալի սիրտը բորբոքել,
Որ լքման ժամին
Վշտին դիմանալ նա կարողանա,
Մինչ մի լավ օրի նա կմոտենա...
Մոռեցիր նրան, ա՛յ իմ սիրելի,

Տանջվի՛ր նույն ցավով.
Նա՛, ով շա՛տ տանջվում՝
Ամենից լա՛վ է կյանքը հասկանում...

XI

Եկել եմ կանգնել թավուտ անտառի
Մի լայն բացատում, կանչում եմ նրան.
— Ո՞ւր ես, սիրելիս, ո՞ւր, իմ նազելիս,
Գնա՛նք գործարան...
Բայց նա չի լսում... ա՜խ, նա չի գալիս...
Շուրջս մայրիներ, դալար ու ճկուն,
Շուրջս կաղնիներ, ջահել ու տոկուն,
Այստեղ անտառի համեստ ծաղիկներ՝
Մեխակը կարմիր բույրով դիմացկուն,
Հասմիկը նազան, պայծառ ու ժպտուն՝
Իրենց անտառի երգն են երգում—
Մեզ իրենց կանչում...
Նորից ձայն տալիս, նորից եմ կանչում...
— Նազելիս, ո՞ւր ես,
Չէ՞ որ սիրեցի, փայփայեցի քեզ,
Ինչպես արևը, որ կյանք է շնչում
Դալկացած ծաղկին,
Ինչպես գարնան ցող, որ ծիլ է տալիս
Նրա արմատին։
Ու նա չի՛ լսում, ու նա չի գալիս,
Նրան ա՛յլ ցնորք, ա՛յլ կյանք է քարշում
Գուցե և կյանքը—լի հաճույքներով,
Գուցե և կյանքը—մանր հոգսերով...
Ու գնում է նա հափրած իր բույրից
Բախտ երազելու իր մեղկ ջերմոցում.
Ու գնում է նա... ո՛վ գիտե, գուցե,
Ինքն էլ այսօրից
Որպես թույլ ծաղիկ առանց նեցուկի,
Առանց խնամքի,
Պիտի չորանա, պիտի թառամի,
Մանր, առօրյա մի պատահարից...

XII

Ասել էր մեկը հույն գիտուններից,
Որ լուսնյակի տակ
Ամեն ինչ շարժվում, փոխվում է նորից—
Եվ այսպես անվերջ...
Ա՜խ, ես մնացի զարթյալ մեն-մենակ
Իմ ցավերի մեջ։
Որպես մի ցնորք, գոնցն և պատրանք,
Նա եկավ, անցավ.
Շոյեց, փայփայեց, ընդգրկեց հոգիս,
Նորից չքացավ։
Նա եկավ, անցավ ասուպի նման,
Որպես հուզող տենչ,
Ու թողեց սրտիս ցավոտ պատմության
Մի տխրալի էջ.
Ե՛վ ես զգացի որ նա ինձ համար
Մոտիկ բայց օտար՝ և՛ կար, և՛ չկար։
Ես տեսա նրան իմ երազանքում,
Ես տեսա նրան ելեկտրաթռիչքում,
Լուսնյակի պես երիսը հանած
Ամպերի ծոցից,
Անհասկանալի, երազ աչերով,
Դյուքանան ժպիտ շուրթին փայլելիս—
Ինձ՞ վեր կանչելիս։
Ա՜խ, ես հասկացա, որ իմ նպելիս
Կռվի չէ՛ր սովոր,
Նրան հանգիստ էր միայն հարկավոր,
Գուցե և վառանց մի կյանք բախտավոր...
Եվ ելթ այդպե՛ս՝
Ինչո՞ւ իմ հոգին կրակվեց այսպես...
Ա՜խ, այդ չիմանաք որպես մի կատակ,
Թյուրիմացություն չէ՛ր սա մի դատարկ.
— Սրտի գաղտնի՛քն է, բոցի պես հալող,
Այրող, տոչորող,
Բայց էլի ծարավ սիրո սեղանից—
Անկուշտ իրարից.

Սրտի գաղտնիքն էր արյունը վառող,
Ուր երկու համառ, անհանգիստ ուժեր
Զգտում են իրար,
Բայց ծածուկ տանջվում մեկ-մեկու համար։
Գուցե և հոգու, մտքի իմաստի
Ներշնչումն էր այս,
Որը ապրում է մարտիկ պոետի
Թռիչքում անհաս.
Եվ նոր հասկացա, որ ես այրվել եմ
Լոկ իմ կրակից,
Որը մի անգամ մարդու մեջ վառվում
Մարում է նորից.
Որ նա մի անոթ, ուսկից ծծել եմ
Հեղուկ կենսարար,
Նա մի բնություն, որից ազդվել էր
Հոգիս խանդավառ...

ԿԱՐՄԻՐ ԱԼԻՔՆԵՐ

(2-րդ ցիկլ «Նոր Առավոտ»-ի)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Օ՜, Սոֆ՛լա, ես քեզ այնպե՜ս սիրեցի,
Դու չհասկացար իմ հոգին-պոետ.
Կյանքիս նեղ ճամփին քեզ որոնեցի,
Դու չեկար ինձ հետ։
Դու չեկար ինձ հետ, և մի լար քաշած
Սրտիս թելերից, չքացար անհետ...
Ես էլ գնացի իմ սիրած ճամփով,
Ուրիշ ճար չկար.
Ես էլ գնացի ու ճամփիս տեսա
Մի լավ աղջկա.
Մի լավ աղջկա ես հանդիպեցի—
Գործ ու Գաղափար—
Եվ մենք սրտագին իրար սիրեցինք
Որպես քույր-եղբայր։

II

O, Stella bella! ...
Ճիշտ է, քեզ նման գողտրիկ չէ, սիրուն
Իմ կույսը սիրած,
Չէ՛ նա երկնային, ոչ ձայնը անուշ
Լարից ոլորած...
Այո՛, նա չունի քեզ պես երազող
Աչեր հմայուն,
Ոչ էլ կանացի հմայքը թաքնված
Դեմքի գծերում,
Բայց շքեղ է նա, առողջ ու փարթամ,
Որպես կենսատու թարմաշունչ գարուն.
Շուտով թառամող նա չէ՛ քնքուշ վարդ,

Այլ կարմիր մեխակ դիմացկուն, հպարտ.
Նա իր էությամբ՝ անդուլ աշխատանք,
Ես իմ հույզերով փոթորիկ և կյա՜նք։

III

Դու ինձ ասացիր—Գեղեցի՜կ եմ ես,
Տե՛ս իմ աչերը՝ արևից էլ վառ,
Տե՛ս իմ ժպիտը՝ լույսից էլ պայծառ,
Քո սիրող ոգուն հմայք կբերի
Եվ գրավչությամբ սիրտդ կգերի,
Իմ մի հաշտ խոսքից քեզ բախտ կծագի,
Եկ քո ծարավը ինձանով հագի...
Եվ կրկնեցիր՝ տե՛ս,
Գեղեցիկ չե՞մ ես...
— Ո՛չ, գեղեցիկը իղեան է վես.
Նետվել փոթորկած ծով ամբոխի մեջ,
Ինքս էլ մի ալիք նրա հետ ձուլվել,
Եվ կռվե՛լ, կռվե՛լ, անհանգի՜ստ, անվե՜րջ,
Ի՞նչ կա գեղեցիկ սրանից ավե՛լ...
Դու ինձ ասացիր.
— Մի թաղիր ջահել հասակդ եռուն,
Փոթորիկների ալիքների մեջ,
Քո երազածը դեռ շա՜տ է հեռուն,
Եկ սիրե՜նք, սիրե՜նք իրարու անվերջ...
Ես՝ երազների չքնաղ երգեհոն,
Սիրո մի աստված,
Դու՝ մի ջիղ լարված, որ ձայն ես հանում
Սրտիցս այրված...
Թո՛ղ քո կոիվը, պայքարն ու վտանգ,
Ե՛կ ինձ հետ գնանք...
Ե՛կ ինձ հետ գնանք, կյանքը վերջ ունի,
Ջերմացնենք նրան մեր համբույրներով
Արբեցնենք օդը ծաղկանց բույրերով.
Իմ սիրո ճամփան վտանգներ չունի...
— Նե՛ղ է,— գոչեցի,—
Միակողմանի

Քո սիրո ճամփան—
Կանացիական,
Եվ արդեն հերքված՝
Քո սիրո աստված...

IV

Հիշում եմ, մի օր,— մայիսյան գիշեր,—
Դու ինձ մոտեցար.— Արի, ելանենք
Մենք այն սարն ի վեր
Ու դիմավորենք
Վեհ արշալույսին նոր առավոտյան։
Ու մենք տարն ելանք...
Քաղաքը հսկա անծայր տարածված
Երկուսիս առաջ՝
Բյուր ճրագների փռել էր մի ցանց.
Հազա՜ր աչքերի, հազա՜ր աստղերի
Քաղաքը փոխված
Թարթում էր հեռվից...
Եվ սովորական քո մեղմ շոյանքով,
Կիսամար ձայնիդ անուշ շշուկով
Ասացիր դու ինձ.
— Այս քաղաքը մեծ քեզ նե՞ղ է թվում,
Որ տարվում ես այլ հարիզոններով,
Այս ճոխ ու փարթամ հմայքը կրծքիս
Քեզ չի՞ հրդեհում,
Որ բորբոքվում ես այլ երազներով...
Եվ մեղմ, աննկատ, մագնիսի նման,
Խոցոտող կրքով ինձ քեզ քաշեցիր,
Եվ ես զգացի մարող շուրթերիդ
Հայրը հայանքի...
Ու նորից դողդոջ, մեղկ ու նվազկոտ
Կիսաբաց շուրթով դու շշնջացիր.
— Տե՜ս.... այն է ահա եղեմը կյանքի...
Ես սթափվեցի.
Ա՛յ դու խորամանկ, վերջը էլի կին,
Որոգայթներով,

Ինչո՞ւ կամեցար ինձ նորից դյուրել
Քո հմայքներով.
Ինչո՞ւ բերիր ինձ գագաթն այս լեռան,
Ա՛յ դու մեղկ գերի սիրո անձնական,
Քոնը՝ այսօրը, իմը՝ ապագան...
Եվ մենք երկուսով իջանք այն սարից
Տխուր այս անգամ,
Եվ անջատվեցինք՝ խայթված իրարից՝
Ընդմիշտ հավիտյան։

V

Օ՜, Ստե՜լլա, Ստե՜լլա, դու ինձ հետ չեկար,
Քանզի թշվառի վիշտը քեզ օտար,
Չե՜ս զգացել ցավն ինձ նմանների,
Որ իմ հաղթ կոչին քո հոգին ձեն տար...
Չեկար վշտածին, քաղցածին գնալ,
Քանզի քո կյանքում դու չե՜ս էլ քաղցել,
Սիրո արբունքի փոթորկոտ կրքին
Ստրուկ ես եղել, որպես սոսկ մի կին...
Չեկա՜ր... գնացիր քո ճամփով մոլար...
Ե՛ս էլ դիմեցի իմ սիրած ճամփին—
Ուրիշ ճար չկար,
Ե՛ս էլ գնացի ու ճամփիս տեսա
Մի լավ աղջկա,
Մի լավ աղջկա ես հանդիպեցի,
Անունը Սառա, և մենք թև առած,
Թև-թևի տված,
Որպես նոր զարնան երկու ծիծառներ,
Սլացա՜նք առաջ...

VI

Առա՜ջ և առա՜ջ...
Մտանք բյուրավոր մթին նկուղներ,
Գետնափոր հյուղեր,
Գործարանների մրով շաղախված
Սև կացարաններ...

Սարսափի՜ տեսեր... Տեսե՞ր են միթե
Տեսածները մեր,
Թե՞ մեղուների նեղլիկ բջիջներ...
Մի տեղ ուժասպառ բոկոտն մանուկներ,
Քաղցից դալկահար,
Խուլ անկյուններում կծկվել են սոված—
Անհայր, առանց մայր,—
Կարծես անոզոք փոթորկից հետո
Կարկտից ջարդված, իրար փաթաթված
Ծառերի ոստեր...
Մի այլ տեղ հիվանդ նորածին մի կին
Կիսամութի մեջ երեխան գրկած՝
Իր այս մանուկի շուրթին է սեղմե
Ստինքը ցամքած...
Ապա ծերերի դալուկ ստվերներ—
Ողորմ ու եղեռն,
Կարծես կայծակի հարվածից խանձված,
Ջորացած կոճղեր.
Մեռոններն են այն սև բանվոր մարդկանց,
Որոնք անընդհատ հաց պիտի քամեն
Քարից, մետաղից,
Որ այս ծերերին փրկեն սովամահ
Լինելու վախից...

VII

Խաղաղ վերջալույս...
Արևը արդեն հոգին է տալիս,
Եվ ինչ խոսք ունի, ինչ լավ ասելիք՝
Երկնակամարին է նա պահ տալիս...
Ի՜նչ զմայլ գույներ, նրբին ու զեղուն,
Երկինքն է երգում հույզով գողդողուն...
Ու այս վեհ ժամին շչակը ճչաց,
— Ազա՜տ եք,— ասաց.
Եվ մեռնող օրի կամարների տակ
Լռեց աշխատանք։
Այն հուր ու պայքար, շաթնդ ու շառաչ,

Որ փոթորկում էր մի վայրկյան առաջ՝
Դադարեց հանկարծ,
Ահա և նրանք,— հազարավոր շունչ,—
Ստվերների պես մռայլ ու հոգնած,
Կարծես երկնքում ամպերը երկնած՝
Քայլում են լուռ-մունջ.
Քայլում են լուռ-մունջ և շտապում տուն
Շարքերով անվերջ։
Կա՛ մի խորիմաստ, չքնաղ վեհություն
Այս լռության մեջ,
Անբարբառ մի ճիչ, որ կայծակից էլ
Ուժեղ է շանթում...
Սև հոսանքի մեջ գունատ ու մաշված
Ահա մի այլ շարք աշխատող կանանց։
Արագ քայլերից ճոճվում են նրանց
Սնունդից զրկված կրծքերը ցամքած։
Ու տեսնում ենք մենք՝ ես ու իմ Սառան,
Այս մարդկանց շարան
Եվ փոթորկում է հուրը մեր կրծքում—
Կռվի համակում...
— Գալի՜ս ենք ահա, շարքա՜շ ընկերներ,
Ու ձեզ հետ մենք էլ ամեն մի դեպքում,
Թե՛ դժոխքի մեջ, թե ծովի խորքում։

VIII

Հազարների մեջ իր հյուղի շեմքով
Մտնում է ահա վաստակավորը,
Քաղցից նվաղած ընտանիքի հայր
Սարգիս բանվորը,
Նայում ենք նրան, ես ու իմ Սառան,
Արյուն է կապում զույգիս աչքերին.
Դեռ երեկ ջահել, այսօր կորացած՝
Կապիտալի այս շարքաշն ու գերին
Մտնում է մռայլ. փոշու մեջ կորած,
Կարծես դժոխքում հալածանք կրած...
Քրտինքը չորցած յուղոտ մազերին,

Մերկ բազուկներ
Մինչ արմունկները՝
Կապույտ մի ցանց են հյուսել այս դարբնի
Ջլուտ բազուկին։
Ու տեսնում ենք մենք ինչպես մարդ ու կին
Հացի են նստել կողք-կողքի, զույգով,
Կարծես բախտավոր,
Ընթրում են շտապ մեծ ախորժակով։
Է՜հ, գոհ են նրանք,— երկուսն էլ բանվոր,—
Գոնե մինչ վաղը չեն զգալու քաղց.
Հետո՞... դե՜հ, գիտենք նրանց նիստ ու կաց...
— Էլի նույն շուրջ և նույն շրաղաց...

IX

Եվ Սարգիսը մեր, շուրթերով գողդոջ,
Անեղոնում պառկած,
Պատմում է բանվոր իր ընկեր կնոջ
Մի տխուր արկած.
Ասում է՝ «Սիրո՛ն, այսօր են քանդված,
Թարքաղ ու բրիշակ մեր գործարանում
Մի աղետ պայթեց,
Փոթորիկ ճայթեց...
Մեր ընկերը այն—Թալիշյի Մուքին,
Որ ամուսնացավ անցած գարունքին՝
Այսօր վախճանվեց...
Կես միլիոնանոց նավթ-ավազանի
Վերին գոտին էր բոլտերից հանում
Եվ մեզ հետ շտապ մեխերը գամում.
Հանկարծ, լսում ենք, նրա տաքի տակ
Փայտե հենակը երերաց, ճռռաց,
Եվ ծանր գոտին, որը կախվել էր,
Մուքելի կրծքին շոքեց, հրահրաց...
Ա՜հ, անիծյալ այն կառավարիչը,
Նա՛ էր մեղավոր։
— Շտապով կապեք վերջին կապիչը,
Հոխորտում էր նա,

Պայմանի օրը լրացավ այսօր,
Կա՛ տուգանքի հարց,
Ով շուտ ավարտի, պիտի ստանա
Վարձից ավել վարձ...

* *
*

Եվ հազար մուրճեր հազար բողոքով
Աղմկում էին,
Շաչում ու թնդում որոտից ահեղ,
Կայծակից ուժեղ.
Եվ հազար բոցեր մոլեգին ջանքով
Փոթորկում էին,
Շուրջը տարածում շանթերի տարափ—
Կայծերի հեղեղ։
Մուքին էլ իրա լարել էր շտապ
Ուժերը վերջին...
(Դե՜հ, գիտես էլի՜... նոր ամուսնացած
Ջահել ամուսի՜ն...)
Եվ մինչ նա ծուվեց, որ մեխը շիկնած
Գամի մյուս կողմից... գոռացին հանկարծ
Որոտի նման հենակները այն—
Հին ու խարխլած...
Եվ մեր խեղճ Մուքին հանգած էր արդեն...
Ասաց ու հոգոց հանելով սրտեն,
Սարգիսը հուզված մյուս կողին ընկավ։
—Հետո՞... խակ հետո՞...
Գոչեց Սիրունը անհանգիստ շեշտով...
— Տարանք մենք նրան մոտ հիվանդանոց...
— Ուշ է... ասացին... Եվ մարդը մեռավ...
Մեռա՜վ, էն էլ ո՜նց...
Երկաթն էր ցցվել նրա գանգի մեջ,
Ջահել-ջիվանի կյանքին տվել վերջ...
— Ա՜խ, ա՜խ, Սարգիս ջան, գուցե մի օր էլ
Մեր շեմքով մտնի այդպես մի մեռել...
Սև է օրը մեր...
— Ինչո՞ւ ես, Սի՜րուն, ապրի քո ջանը,

Մահն ամեն տեղ է, դուրսը թե տանը.
Մեր ընկերները այսօր վշտացին,
Որ Մուքելի պես ընկեր կորուցին.
Ա՜խ նա մի ծաղիկ բողբոջ-հույսերի,
Անբաժան ընկեր մեր լավ հույզերի...
Ասաց Սարգիսը, և երկու ընկեր—
Իրար հասկացող տղամարդ ու կին—
Տանը վշտի տակ ճնշված, քուն ելան,
Որ վաղը ծեգին
Ամենքը գիմեն իրանց գործարան.
Չէ՞ որ ապրում է և դեռ չէ մեռած
Այն հոգսը դաժան—ամենօրյա քաղց...
— Ու էլ էն ջուրը, է՛լ էն ջրաղաց...

X

— Այն ի՞նչ բողոք է բոնկվել այնտեղ
Գործարաններում,
Արդյոք անտառում սոված գայլերի
Ոհմա՞կն է ոռնում,
Թե՞ փոթորիկ է, ծովի ջրերի
Հետ է պայքարում,
Գուցե ծննդի ցավերից բռնված
Մի մա՞յր է մեռնում,
Երկունքի ժամին ողբաձայն կանչում.
«Օգնե՛ք»,— բառաչում.
Այն ի՞նչ է այնտեղ գործարաններում...
— Հրդե՞հ է, հրդե՞հ—կարմիր փոթորիկ—
Սուլիչներն են այն
Բացել են ողբի, հավարի շիվան,
Որ ոտքի հանեն,
Օգնության տանեն
Գործարանների մյուս բանվորներին։
Հրդեհ է ծագել մեծ ձուլարանում—
Թուջի իրանում—
Ու այս անգամ էլ մութ երեկոյին,
Ջուլման բոպեին...

Ձևի ծանրոցը հալոցքի գազին
Չհանդուրժելով՝
Հրաբուխի նման հեղուկ է ժայթքել
Եվ ալ ջեռուկը վերը ցատկելով,
Ողջը փոթորկել...
— Մխի ալիքներ, բոցերի կոիվ
Եվ ճարճատումներ բյուր հազարավոր,
Նավթերի քրքիջ, տարերքի վրեժ—
Չար ու նենգավոր...
Այրվում է օդը... հալվում է, լափվում
Բոցի շանթերից...
Ցնցվել են մարդիկ, ոռնում են մարդիկ
Այս պատահարից...
Բիբերն են թռչում լարված աչքերի
Կարմրած կոպերից,
Խռնվել են մարդիկ, կռվում են մարդիկ
Ցասման այս ժամին,
Ոչ տերն է ճանաչ, ո՛չ էլ թշնամին։
Երկնակամարը կապել է ճաճանչ
Բոցի շանթերից հազար լեզվանի...
Ահա և կմախքը մեծ գործարանի
Ջարդված թևերով մութի մեջ ցցված՝
— Տարերքի հարվա՛ծ...
Բայց ո՞ւր են նրանք, կռվողներն այն
Ալ փոթորկի դեմ, է՞լ չեն երևում,
Խեղդվե՞լ են արդյոք ծխերի ծովում,
Թե՞ դեռ պայքարում հետը ալարվի,
Որ չավերվի տունը աղայի։
Չէ՞ որ իրանք էլ էքսը մերկ, սոված
Փողոց կնետվեն, և ո՞վ կտա գործ,
Փոթրիկներին ո՞վ կբերի սև հաց...
— Էլի նույն ջուրը և նո՛ւյն ջրաղաց...

XI

Այսպես է լինում գործարաններում,
Ա՛յ ցավի ախպեր.
Կյանքը հեշտությամբ մեզ չի տալիս հաց.

Թե տալիս է մեկ՝ հազար է խլում
Տվածի դիմաց...
Սուլիչներն էլ մեր սրտերն են քերում...
Ա՜խ, դուք տեսե՞լ եք ածխահանքերում
Սև-սև բեկորներ ոձն զանգվածի—
Այրված ու կծկված, որ դուրս են բերում
Հրդեհից հետո բովերի անցքից
Ու շարք-շարք դարսում սև դաստակներում,
Ա՜խ, դուք տեսե՞լ եք ածխահանքերում...
Այդպես էին հա՜ այն ընկերները,
Որոնք հալվեցին այն ժամին օրը
Ջեռուկ հեղուկի դողդոջ հալոցքից,
Կանցնի ժամանակ, արդյունաբերը
Կստանա գինը կրած վնասքից,
Բայց ջանի տե՜րը. բայց ջանի տե՜րը...
Մասնաժողովը կգա, կը քննի
Եվ հիմունքները այս մեծ աղետի
Անշուշտ կգտնի.
Գուցե և ցավոտ հանգի այն հարցին,
Թե ինչպե՞ս անի,
Որ չկրկնվեն աղետներն այս—
Աղաչի համար անվերջ պատուհաս...
Կխարհի, կերթա ցավը չբաժած...
— Դարձյալ նույն ջուրը, և նույն ջրաղաց...

XII

Ես ձեզ երգեցի բանվորի օրը—
Նրա արնոտ հաց...
Ես ձեզ երգեցի իմ մերկ եղբորը—
Նրա նիստ ու կաց.
Խաղաղ է, անչար նա իր հարկի տակ,
Առօրյա կյանքի լռին դագաղում
Իր վիշտն է թաղում,
Ինչպես մի լալկան կաթկաթող առու,
Որը կեռ ճամփին կտրած, մոլորված
Ցամքում է հոգում,

Բայց դուք տեսե՞լ եք, տեսե՞լ եք նրան
Ձայրույթի ժամին,
Երբ մոնչում է վանդակը փշրած
Առյուծի նման...
— Թող լացի այն ժամ նրա թշնամին...
Կայծաքար է նա, որին թե զարկես՝
Կայծեր կրցայտեն կրակ աչքերից.
Նա երկնած սև ամպ, որը թե հուզես՝
Կայծակ կվիժի ցասկոտ ռունգներից...
Նյութի ստրուկը, որքան էլ զրկված
Առօրյա կյանքի լի բարիքներից,
Այնքան նա հարուստ եռուն տենչերով,
Մաքառումների արյան վազքերով.
Որքան լռակյաց քաղցի օրերում՝
Այնքան անողոք շանթ ու փոթորկի
Երկնած ցավերում...
— Եվ թո՛ղ այս անգամ բանի մոլեգնած
Բանվորի ջուրը և իր ջրաղաց...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Փաթարիկի երգը

Մտա՛ այստեղ փոթորկելու ձեր սրտերը,
Վրդովելու ձեր անդորրը խաղաղ կյանքի,
Մտա՛ այստեղ սասանելու փուտ հիմքերը
Նեխված ու գաթշ ձեր հին շենքի.
Դե՛հ, վե՛ր կացեք, ով քնած է մեռածի պես,
Ով չէ՛ ուզում. որ կուլ գնա այս հոսանքին
Հե՜յ, վե՛ր կացեք, ով ուժ ու թափ ունի ինձ պես,
Ով չէ ուզում կյանքը զոհել մեծ փորձանքին...
Լսո՞ւմ եք դուք, ահա այնտեղ որոտն է հաս
Իր սուր նիզը երկրի կրծքին մխում թափով,
Ցասումով լի երկնած ոգու վրեժն է այս—

Երկնած ցավով ու սարսափով։
Դե՛հ, վե՛ր կացեք, ով քնած է մեռածի պես,
Ով չէ՛ ուզում, որ կուլ գնա այս հոսանքին.
Հե՛յ, վե՛ր կացեք, ով ուժ ու թափ ունի ինձ պես
Եվ ծով-կարոտ՝ այցի գալու «Նոր Աշխարքին»...

II

Ահա այս երգով մտավ մեծ այգին
Մոսեսը դարբին,
Ուր ջահել մի խումբ հավաքում ուներ
Ցերեկվա ժամին.
Ժողովվել էին հեռու մի այգում,
Թե ինչպես անեն,
Գործատերերին գրած պահանջը
Համերաշխ տանեն...
Ու այստեղ է նա՝ Մոսեսը դարբին,
Երգը շրթունքին,
Քանզի ուր ժողով՝ այնտեղ է նա միշտ—
Ամենքի հոգին։
Այստեղ են ահա Բագդանն ու Միխան,
Մելիքն ու Կորան, չորս հին ընկերներ—
Կյանքի քարքարոտ ուղիներն անցած
Չորս ժիր անիվներ։
Այստեղ են նաև Նուշիկն ու Նինան,
Սաթոն ու Վերան,
Որոնք շատ վտանգ, շա՛տ ցավ ու տանջանք
Քաջությամբ տարան։
Ու այստեղ է նա՝ Մոսեսը դարբին,
Երգը շրթունքին.
Այստեղ է նա միշտ, բանվորի նա խիզճ—
Ամենքի հոգին։

III

Դեռ չեմ մոռացել նրան, իմ ընկեր,
Նա մի լեռ-հասակ,

Հոգի ջանթահար, վայրագ աչքերից
Կրակն էր ցայտում,
Ջահել ու առույգ մկանունքներից
Արյուն կաթկաթում։
Նեղ օրերի՞ն, գյուղի բիրտ զավակ,
Կարիքը նրան
Քշել էր, բերել հեռու մի քաղաք—
Դեպի գործարան.
Կյանքի այն քուրան, ուր հոգսն ու զրկանք—
Երկու ընկերներ—
Սնվում են մի տեղ և առնում հասակ՝
Որպես մի մորից ծնված զավակներ։
Եկել էր քաղաք
Զուլվելու ժխոր այն հոսանքի մեջ,
Ուր կյանքն է կռիվ, կռիվը մինվերջ...
Շատ ուշ և ապա գյուղի այս տղան
Փորձվել էր, դարձել կերտած մի տիտան
Քուրան իր կրակով,
Մուրճը կուռ զարկով
Մնեցին նրան խիզախ մի ոգի
Եվ պատրաստեցին գիտակից կյանքի։
Ես տեսա նրան սալի մոտ կանգնած
Կռանը ձեռքին,
Դեմքը առնական ու հաստնացած
Եվ խորհրդավոր գծերը դեմքի
Իմաստ ստացած...
Եվ հիացմունքից թնդաց իմ հոգին.
Սա այն զրկանքի որդի՞ն էր միթե—
Եկած կարիքից,
Որի ջանթահար, վայրագ աչքերից
Կրակն էր ցայտում,
Որի ամրակուռ հաստ բազուկներից
Արյուն կաթկաթում...
Մուրճը իր ջանքով,
Սալն իր բողոքով
Կռեցին նրան կայծակի մի կամք,
Որոտող ոգի,

Եվ դարձավ ինքը դարբինն իր կյանքի։
Դեռ չեմ մոռացել այն կամքը կայծակ,
Եռանդը հզոր,
Դեռ չեմ մոռացել և այն հերոսին
Խոսքը գործի տակ,
Գործը կռվի մեջ՝ և մինչև այսօր...

IV

Ա՜յ իմ չինչ աղբյուր ոգեորության—
Երկունքի զավակ,
Ես քո զրկանքը ամբողջ ծանրությամբ
Մեջքիս չե՛մ կրել,
Բայց զգացել եմ նրա վեհություն,
Նրա խորություն
Եվ պատկառանքով սիրել ու գգվել
Նրան իմ երգում.
Ու թեև քեզ պես ես էլ եմ այրվել
Խոհման կրակով,
Ես էլ եմ ապրել զտող տանջանքով,
Բայց դեռ փրկության զոհի սեղանին
Մեծ զոհ չեմ տվել...
Ների՛ր ինձ. եղբայր, քո ցավի երգչին,
Մեծահոգաբար։
Ի՞նչ է իմ տված... կաթիլ ցող միայն
Ամպերից իջած,
Որից հազիվ թե սփոփում զգար՝
Հոգին ծարաված...
Կամ ի՞նչ մի թեթև վերքը. կամ սպին,
Որը առնում ես մաքառման ժամին.
Վե՞րք եմ ասում ես,
Որը արի պես
Ցնցեր ու շանթեր վհատած սրտեր.
Վե՞րք եմ ասում ես,
Որը զարդարեր ճակատ ու երես։
Եվ ես կուզեի մոտալուտ կյանքի

Զոհի սեղանին այրվեր իմ հոգին,
Որից և՛ սնունդ,
Ե՛վ հասակ առներ մի նոր թեկ սերունդ։
Այսպես է կյանքը...
Մինչև հատիկը հողում չի մեռնում՝
Մեկը հազարի պտուղ չի բերում...

V

Տափարակ դաշտում մայրաքաղաքի
Ուր հորիզոնն է մեջքիցը կքվել—
Երկիրը գրկել՝
Ընկած էր այգին։
Կանաչի միջից գարնան ծաղիկներ,
Որ գեղեցիկ են մայիս օրերին՝
Ոգջունում էին կարծես հյուրերին։
Մի տեղ ալ-պուտեր մեղմ օրորվելով
Թեթև զեփյուռից,
Ալ դրոշի պես ծածանվում էին
Կանաչ խոտերից.
Այլ տեղ մեխակի կարմիր թերթիկներ
Ժպտում են նազով սև-բանվորներին,
Կարծես թե հեռվից պարզելով թևեր
Ողջագուրանքով ասելիս լինին.
— Ձեր ծաղիկն ենք մենք, ուրիշ ոչ ոքի...
Եվ ընկերները մոտ քսան հոգի—
Ցեղ բլուզներով
Լայնեզր գլխարկներ քաշած աչքերին՝
Կանաչ այգու մեջ շաղով ու ցողով
Լուռ սպասում են մյուս ընկերներին՝
Գան, բացեն ժողով։
Ահա՛ մի ծերուկ, առողջ ալեզարդ,
Գողին թինկ տված՝
Խորհում է անթարթ, խորհում տխրատված...
Մյուսը մի ջահել՝ ամբողջ իրանով
Մաշ խոտին ձգված՝
Ծառերի միջից ամպերն է զննում...

Երրորդը տաք-տաք խոսում, համոզում
Իր ընկերներին, թե ինչպե՛ս անեն՝
Գործատերերի երեսին զարկած
Գահանջը տանեն։
Խոսում են, վիճում, հուզվում փրփրած
Մինչ կոշիկները փոշիում կորած
Հայտնվում են ահա Սառան ու Մարոն,
Լյոլյան ու Փառոն...

VI

— Ահա և նրանք, ընկերներ,— խոսաց
Մոսեսը հանկարծ.—
Հայտնում եմ մեր այս ժողովը բացված՝
Դրե՛ք օրակարգ...
— Այսօր լինելով ժողովն արտակարգ,
Միայն բանթողի մասին կխոսանք,—
Մեջ մտավ Միխան
Փոթորկի նման.
Ու չսպասելով ուրիշն ինչ կասի.
Տեղից վեր թռավ՝
— Ընկերնե՛ր,— ասավ,—
«Հրաբուխ» կոչված գործարանի տերն
Ա՛յնքան հղփացավ,
Այնքան լրբացավ,
Որ բանվորներիս արդար պահանջին
Երեկ նա հայտնեց խիստ ու շեշտակի,
Թե՝ «գործարանը կամ պիտի փակեմ,
Կամ բանվորներիդ կեսը արձակեմ...
Իսկ թե ամենքդ կուզեք աշխատել՝
Օրավարձերդ պիտի կրճատել...»
Ասե՛ք, ընկերնե՛ր,
Այս ծաղրը լպիրշ ի՞նչ անուն ունի։
Իր զավակներին Միրոնը ընկեր,
Կամ Նեստորը ծեր
Սովից ո՞ւր տանեն։

Եթե մեր արդար, համեստ պահանջից
Մերոնք նահանջեն,
Բաս, սովն է եկել
Մեր վզին չոքել...»
Ուրախասել ունի թող հիմի խոսի,
Ես իմս ասի...
— Ընկերներ,— զնգաց ձայնը Սառայի
Թարմացնող հնչուն զանգակի նման.—
Մենք, ընտրյալներս, այսօր դիմեցինք
«Կռան» գործարան...
Մեր պահանջները մերժեց Բերգ աղան.
Այն էլ ծաղրելով. ասում է՝ «մի՞թե
Տղամարդ չկար՝ կին ուղարկեցիք...»։
Մենք չորս պատվիրակ չորս գործարանի
Հայտնում ենք կամքը մեր ընկերների—
— Գործադո՞ւլ լինի...
— Գործադո՞ւլ լինի, կորչե՞ն ճնշողներ։
Բոլոր հարուստներ,
Հուզվեցին հանկարծ փոթորկի նման
Ալեկոծ ձայներ։
— Գործադուլը պիտ ընդհանուր լինի,
Ռումբի պես պայթեց ձայնը Մոսեսի.—
Թող զգան նրանք, թե ի՞նչ ասել է
Զրկվել, այսօրից
Հավելյալներից։
— Այդ քիչ է նրանց,— պոռաց Արշիլը
Մեծամասնական.—
Մա՛հ լինի նրան, ով առաջինը
Փակի գործարան,
Ով մեզ այնտեղից,
Մեր օթևանից
Նետում է փողոց.
Իբր չկա գործ...
Մեզ մահ ուզողին՝ մահը պատասխան,
Թող իմ բաժինը լինի կախաղան,
Գիտ մեռնի աղան...
— Սխալ է, ընկեր,— զանգակի նման

Ղողանջից նորից կանացի մի ձայն։—
Նայիմ՝ խոսողն է դարձյալ իմ Սառան։
— Անհատի մահով չարիքը երբեք
Չի՛ անհետանա,
Մենք կռիվ ունենք դասակարգի դեմ...
Ես միանում եմ Մոսես ընկերին՝
Կոչ անել բոլոր գործարաններին,
Հայտնել գործադուլ.
Թող դղրդան ազայք, թե ի՛նչ ասել է
Զրկվել այսօրից
Հավելյալներից։

VII

Եվ հրդեհի պես օդում մուլեգնած
Բողոքի ճիչեր պայթեցին հանկարծ.
— Գործադո՛ւլ լինի, թողե՛ք աշխատանք,
Հազար կոկորդից մի ձայնի նման
Գոռացին հուզված։
Եվ մի վայրկյանում ուր հազար ձեռքեր
Ալիքի նման փոթորկում էին,
Ուր հազար մուրճեր ու մեքենաներ
Առյուծի նման հռնդում էին,
Կանգ առան հանկարծ։
«Աշխատանքն կշռված մեծ գործարանի
Սուլիչը խրոխտ, ազդանշանող
Քաղաքածայրի գործարաններին
Գուժում է բանթող։
Այն ո՞վ է տանում և այնքան ոգորմ,
Ի՞նչ է պատահել, այն ո՞ւմ են թաղում,
Ո՞ւմ տունը քանդում, ո՞ւմ տունը շինում,
Ո՞վ է ո՞ւմ շանթել...
— Այն գործարանի երակն է պայթել,
Ժամացույցի պես լարված ու ուղիղ,
Կյանքը փոթորկոտ ուժում կանգ առել
Ու տեղի տվել մի այլ փոթորկի։
Մեքենագործներն էլ գորշ ծխի միջից

Առաջվա նման հրաբուխ չեն ժայթքում,
Ինդանոթի պես ցցված երախից
Էլ հուր չի՛ պայթում։
Եվ փոկերը խենթ, սառած, շվարուն,
Փայտե ձողերի փարվել են վզով,
Թուլացել են մեզկ ու էլ չեն պարում,
Էլ չեն մրրկում առաջվա հուզով.
Ողջը լռել է, ողջը համրացել.
Նման քաղաքին առասպելական,
Ասես քարացել
Ահեղ նեռվքից մարգարեական...

VIII

Եվ Մարսելյոզը որոտի նման
Թնդաց օդի մեջ,
Եվ օդը երգեց, երաժշտության
Ալիքների տակ,
Եվ ամեն մեկիս աչքերը վառված—
Կարմիր արեգակ—
Քայլում ենք առաջ...
Եվ ուր ոտք դնում՝ մեր ոտքերի տակ
Ծլում է կանաչ...
Եվ դրոշները ձեռքերիս պարզած—
Կարմիր փոթորիկ—
Հրդեհի նման փռում են հուզված
Ալիք առ ալիք։
Հոգին ձգտում է դեպ վաղրեր ազատ
Դեպի հաղթանակ,
Եվ թվում այնպես, թե ողջ հնություն՝
Աղքերակ, գետակ,
Ջայնակցում են մեզ մարտական հիմնի
Ալիքների տակ։
Մեր շուրջը ահեղ, երգերի հեղեղ..
Ոչ հեռու այնտեղ
Օձը թաքնված գրասենյակում,
Լսելով թափը նվաճող երգի՝

Մոսկում է, ճեղքում, կծկվում, գալարվում,
Բայց ուշքի գալով, շտապում դեպի
Ոստիկանատուն...
Ո՜, այս նենգ խժից երբեք չեն վախել՝
Անվեհեր Միխան, Մելիքն ու Կորան—
Որդիքն վատնգի—
Ուղղում են ամբոխն ետևը լեռան
Ազատ միտինգի.
Ու այստեղ է նա՝ Մոսեսը դարբին—
Երգը շրթունքին։
Այստեղ է նա միշտ, բանվորի նա խիզճ
Ամենքի հոգին։

IX

Հեռու Մախաթի լեռան ետևում—
Քուռի ձախ թևում—
Մով գլուխների ծփում է ալիք—
Կարմիր փոթորիկ.
Ալ դրոշների թավիշն է ճոճում,
Այն ո՞ւմ հետ վիճում,
Մինչ այս ու այն տեղ սրտերն են վառվել.
Թնդում են ճառեր...
Ահա բեմ ելած Մոսեսը դարբին—
Ամենքի հոգին,
Որոտի ձայնով թնդում է, խոսում
Փրփուր շրթունքին.
Եվ ուժեղ ձեռքի թափոտ մի շարժում՝
Առաջ է քաշում
Իր կողքին կանգնած Սարգիս բանվորին,
Ցուցնում ամենքին.
— Ընկերնե՛ր, նայե՛ք, ահա սա մարդը,
Որ երեկ առաջ
Առույգ էր, ջահել,
Այսօր կքվել է, մեջքից ծալվել ազգ
Ու գարձել տհել.

Ահա, ընկերնե՛ր, զոհը գործատեր
Այն չար մարդուկի,
Որ ամեն մեկիս կուզի ենթարկել
Սրա վիճակին։
Եթե ուզում եք, որ այս դրության
Այսօրից տանք վե՛րջ...
Ու դեռ խոսքի մեջ՝
Ցնցվեց գետինը խումբ կոզակների
Սրարշավ դոփից,
Կարծես երկինքը փլվեց գլխիվեր
Նրանց արշավից։
Փոշու մեջ կորած ձիաները խենթ,
Կայծող պայտերով,
Մի ակնթարթում նետվեցին միտինգ
Ճոճվող սրերով...
Ու հետևանքը՝ մահ ու կոտորած...
Մարդահասակի կանաչը ճմլած...
Բայց ո՞ւր է Մոսես. մի՞թե նա մեռավ
Իր ընկերներով.
Ո՛չ անվախ Միխան, Զաքարն ու Բաղդասն
Իրանց երգերով։
— Զերբակալվեցին այդ օրը նրանք
Եվ խուզարկվեցին.
Ու հետևա՞նքը... Ա՜նր հետևանք...
Բանտ ու շղթաներ... Սիբի՛ր, աքսորանք։

X

Անցան շաբաթներ և կովին համառ
Տեղի տվեցին, իրար զիջեցին
Երկու ուժ համառ։
Չկար Մոսեսը, Մելիքն ու Կորան,
Միխան ղեկավար.
Բանտումն են նույնպես Տատյանան, Վերան
Եվ վիրավորված Սառան ու Դորան։
Մեջ ընկան վախկոտ ծերուկ բանվորներ,
Բանթողը պայթեց,

Շարժումի ելավ նորից գործարան...
Էլի բուրժուան, բուրժուան «հաղթեց»,
Գորշ ծխի միջից, գոլ շոգու միջից
Այն ո՞վ է սուլում ծոր խողովակի
Խեղդող ոլորտից.
Սուլիչն է սուլում ու տխուր երգում
Վիրավոր սրտից.
— Վե՛ր կաց, արթնացի՛ր, բանվոր ժողովուրդ.
Գնա՛ գործարան,
Քե՛զ է սպասում քո հարուստ աղան...
Մեջքիդ հյութերը, մկանունքներդ,
Քեզ չեն պատկանում, գնա՛ գործարան,
Քե՛զ է սպասում քո հարուստ աղան...
Վարձդ օրական մի մանեթ միայն,
Գնա՛ գործարան,
Քեզ է սպասում քո հարուստ աղան...
Սուլիչն է սուլում...
Վե՛ր կաց, արթնացի՛ր բանվո՛ր ժողովուրդ...
Եթե չգնաս հիմա գործարան,
Սովից կմեռնեք թե դո՛.. թե՛ աղան...

*

*

Նախանձում ենք ձեզ ողջ և անվնաս
Մնացածներս—
Խորտակված նավի այս բեկորներս...
Մեր լավ ընկերներ,
Առյուծ-անցյալի ոգեշունչ լարեր,
Հեռացաք մեզնից
Եվ ամայությունն տիրեց մեր հոգուն
Նայում ենք մեր շուրջ և ֆնչ ենք տեսնում
Այս մեզկ օրերին...
Անտարբեր ու գազջ դեմքեր անճանաչ՝
Թե՛ աշխատելիս, թե՛ մութ գիշերին
Մենք ձե՛զ ենք հիշում, ա՛յ լավ ընկերներ,
Ու քաշում հառաչ...
Ա՜խ, երանի թե սավերները ձեր

Այս դատարկության, լքման օրերին
Մի վայրկյան նորից երևան գային,
Անգույն այս կյանքին փոքրոգիների
Մի իմաստ տային։
Ինչպես արևի ճառագայթները,
Որ շողշողում են գույներով հազար,
Այնպես էլ անմահ ձեր հաղթ գործերը
Շողում են ահա հուշերով պայծառ
Ու ջերմացնում մեզ։
Արևի՛ որդիք, նախանձո՛ւմ ենք ձեզ...
Նախանձում ենք ձեզ—աքսորյալներիդ
Եվ մութ բանտերում տառապյալներիդ,
Որ թեև այնտեղ անվերջ կտանջվիք՝
Գոնե հասկացող ընկերներ ունիք
Ձգտող ու թռչող դեպի կյանքը վեհ։
Մինչ մենք... մենք, ազատ մնացածներս,
Խեղդվում ենք ճնշող այս մթնոլորտի
Թույն մղձավանջում
Ու... նախանձում ձեզ...

XI

Բացել է դուռը բանտապետը չար
Ու ներս է հրում բանտարկվածներին.
Նրա ժանտ դեմքի մսախորշերը
Նման են հունի չեչոտ սև ծառին.
Հրում է մեկ-մեկ մութերը բանտի
Ու ետքից զարկում դուռը երկաթի։
Բանտի խորքերում տխուր զնգում են
Շղթաները հին,
Խոլ լռության մեջ լսվում է ահա
Մի երգ տխրագին.
Մի երգ տխրագին, որ ամենքի էլ
Հուզում է հոգին.
«Վերջալույս է. մռայլ, անշող,
Բանտի խորքում խուլ շշուկ.
Ո՞րտեղից էր—սիրտը մաշող

Շղթաների լսվեց սուգ։
Եվ հնչեցեց տխուր մի երգ
Գայթեց ճնշված մի ծիծաղ.
Օ՜, սո՜ւտ կացեք, չխանգարեք
Ձիլը հոգու այն խիզախ։
Սո՜ւտ, հենց հիմա շղթան կրած
Մտածում է խորտակել,
Օրերն անցած կյանքը չապրած
Մի նոր կյանքով նորոգել։
Վերջալույս է. մռայլ, անբաղ,
Բանտի խորքում խուլ շշուկ,
Որտեղի՞ց էր—սիրտը մաշող
Շղթաների լսվեց սուգ...»
Երգում էր այսպես Մոսեսը հոգնած
Ինքն էլ հուզվում.
Օրվա վշտերից ջղերը լարված
Հանգիստ են ուզում։

Սակայն ո՞վ է այն, որ բանտի խցում
Իր շղթաների հետ է զրուցում...
— Զաքարը, ընկեր... դեհ, լսեք նրան,
Ինչ ի՞նչ է ասում.

— Ամբողջ իմ կյանքում հե՛յ դու, իմ շղթա,
Տանջվել եմ միայն... մտածում էի
Ամուսնանալ, բայց... ահա քեզ գտա,
Այժմ մարդիկ ինձ քեզ հետ կապեցին,
Եվ պսակեցին.

Գիշերները ողջ քեզ հետ եմ միայն
Ես սիրախոսում,
Քեզ կանչում. արի, պսակենք միասին,
Անգին ամուսին.
Ես կրծածեկեմ քեզ փափուկ վերմակով,
Որ դու չմրսես,
Գրփայփայեմ, որ ինձ հավատարիմ
Մշտապես լինես.
Չկի ճանաչում քեզ, ա՜յ իմ շղթա,
Դու ինձ ո՞նց գտար,

Մի ասա, ասա, էդ ո՞նց իմացար,
Որ Զաքարն եմ ես.
Էդ ո՞նց իմացար որ քեզ կյանք տվող
Զաքարն եմ դարբին,
Ահա թե ինչո՛ւ, ընկեր իմ անգին,
Դու ինձ փաթաթվել, ոտքիս ես փարվել...
Ահա թե ինչու այդպես անբաժան—
Դու սիրում ես ինձ խանդաղատագին։
Օ՜, իմ սիրելի,
Գիտեմ, քլերն են պատվիր արժանի,
Գիտեմ, որ դու ինձ չես դավաճանի,
Դե՜, տխուր ժամին
Այնպե՜ս դու երգիր, որ քունս տանի...
— Ասաց ու զարկեց իր շղթաների
Սրտի թելերին.
Եվ օղակները, որ ամեն մեկը
Տարբեր ու տարբեր հնչյուն ունեին,
Հնչեցին մի երգ,
Երաժշտային մի անուշ համերգ...
Քնեց Զաքարը,
Ընկել էր կրծքից վշտերի քարը։

XII

Էտապն է գնում անապատներում...
Անհայտ ճամփեքով՝ հեռո՜ւ ուղիներ...

* * *

— Գնաք բարով ու գաք բարով,
Մեր ընկերներ,
Ազատ խոսքի, մեծ հոսանքի
Մունետիկներ։
Գնա՜ք բարով ու գաք բարով,
Մեր ընկերներ,
Որ ոտք դրիք փուշի աշխարհ՝
Ու ձեր ոտքի փոշիներից

Վարդեր ծլան մարդոց համար...
— Այսպես երգեցինք ողջ և անվնաս
Մնացածներս,
Խորտակված նավի մեղկ բեկորներս։
Ու շատ չի անցավ, ստացանք նամակ
Ընկեր Ստուայից
Մենք՝ ճնշվածներս...
Խոսքն էր արթուն, հույսի արշալույս
Եվ եռանդ շնչող.
Հյուսիսափայլի ճաճանչների լույս,
Որ մեռած կյանքին նոր կյանք է շնչում։
Մեզ թվաց այնպես, թե կանաչել է
Սիբիրն ամբողջ,
Հողը պճնվել ու բեղմնավորվել
Իր լեռներով ողջ։
Մեզ այնպես թվաց, որ մեծ Սիբիրի
Գետերը անծայր
Հալչող ձյուներից հեղեղ են գարձել,
Լեռներով անցել։
Ու եկան նրանք՝ ընկերները մեր,
Ոնց երկնած ամպեր.
Ու որտեղ հայթեց կրծքերը նրանց՝
Ահեղ փոթորիկ...
— Հեղափոխության հուզված ծովերի
Գարմիր էր ալիք...

1911

ՀԻԱՎԱՆԱՐՈՒԹՅՈՒՆ

I

Մտել եմ ահա մի նորեկ աշխարհ,
Մտել մի սքանչ հեքիաթի դռնով.
Այստեղ ամեն ինչ նո՛ր է ինձ համար,
Նոր ու կատարյալ իր վեհությունով.
Արևը այստեղ փառչում է թեև
Առաջվա շուքով,

Աստղերը գահար ժայռում, ծիծաղում.
Թեղ ու հմայքով՝

Մեր կովող գետերն փոթորկող, ահեղ.
Մեր անտառները թավավարս, շքեղ,
Թեև խոսում են առաջվան հանգով՝
Բայց կյանքն է ուրիշ, մարդիկը մի այլ
Ու էլ վաղեմի չեն նման իրար։
Մի հեքիաթ է այս, տեսիլ աննման,
Ուր հազար-հազար

Տասնյակ հարկանի տներ ու շենքեր
Նայում են իրար տիտանի նման.
Այստեղ ամեն տուն և ամեն մի շենք
Մի-մի քաղաք է, մեծ ու փառաշեն,
Ամեն մի փողոց՝ ծով համատարած,
Ամեն տանիքի արևը բաղմած...
Հրե՛ն քաղաքի հեռածայրերում՝
Շարեշար, հպարտ, գեղեցիկ, սիրուն
Գործարաններն են վեհապանծ թիթեռում,
Վերամբարձ գլխով աշտարակներից
Հույսեր են բաշխում.

Հրե՛ն մաքրաշեն ջրերի հույզեր,
Կանաչ պուրակներ և ծաղկանոցներ,
Ամեն մի շենքի և գործարանի
Փարթամք են կազմում.

Եվ մարդիկ այստեղ ամենքն են բանվոր
Եվ աշխատավոր,

Ուր չկան այլևս ոչ միլիոնատեր
Եվ ոչ չքավոր
Այստեղ ամենքն էլ ընկեր-բախտավոր,
Իրար հավասար
Եվ մեկը՝ հազար։

II

Մի հեքիաթ է այս, մի նորեկ աշխարհ...
Եվ ես աչքերիս կուզեմ հավատալ.
Մի՞թե երեկվա գառնուկն և գայլ,
Առյուծ և այծյամ վերացան իսպառ.
Այս ի՜նչպես, ի՜նչպես...
Այս ի՜նչ փոթորիկ, մրրիկ հեռատես,
Երկրաշարժ ահեղ,
Անողոք հեղեղ
Քանդեց, ավերեց կարգերն անցյալի
Եվ հավասարեց հողի ու ջրի.
Այս ի՜նչ հզոր ձեռք փլեց, խորտակեց
Շահագործության հիմնաքարն այն,
Որ այսքա՜ն տարի,
Որ այսքա՜ն տարի,
Ճնշել էր մարդուն քրտինք-արյունի.
Ագահ գայլերը ո՞ւր են, ո՞ւր, այսպես,
Այս ի՜նչպես, ինչպե՜ս...
Ջարիքն այնքան եռուն, խտացած
Եվ արմատացած,
Հավիտենական դարերով բարդված
Նախանձը մարդկանց
Ուր մարդը մարդու համար գայլ միայն՝
Մի՞թե վերջ առան,
Մի՞թե վերջ առան...
Տիրակալության, ընչասիրության
Այն քաղցը ագահ,
Որ մարդոց արյան հաճույքն է միայն,
Ի՜նչպես վերացան,
Ի՜նչպես վերացան...

Թե՞ եկրագունդը մեր այնքան փխրուն
Մի նորեկ սիրուն,
Ազնիվ մետաղից, հոյակապ քարից
Քանդակվեց նորից.
Թե՞ այն բյուրավոր արհավիրքներից՝
Համաշխարհային պատերազմներից,
Որից լեռնացավ հրդեհի մոխիր,
Որից ցնցվեցին երկինքն ու երկիր,
Պայթեց ու ժայթքեց մի վրեժ արդար
Ի հատուցումն գործերի վատթար։
Այս ի՜նչպես, ի՜նչպես,
Ի՜նչ հրաշք է վեհ...

III

Եվ ես կանգնել եմ այս նոր աշխարհի—
Հրաշքի առաջ,
Ու չեմ զարմանում, որ այն լեռները
Զույլ-ոսկիների
Կեղեքվածներիս արյան է հառաչ.
Ոսկիները այն,
Որ ծառայում են այժմ արձանների
Պատվանդան միայն,
Որոնք ձգված են լայն փողոցներում
Կարգով շարեշար,
Նորեկ սերնդին հին-հին գործերը
Պատմելու համար։
Ու չեմ զարմանում, որ այսօրը մեր
Մոտիկ անցյալի մի թեքն է միայն,
Ուր կան նոր կռիվ, նոր նվաճումներ,
Կյանքը հասցնելու կատարելության.
Կյանքը այն դժվար, որ միշտ է պայքար
Նոր մարդու համար.
Մարդու, որ կռվող հատվածն է միայն
Տարերք-բնության,
Ուր ուղեղը մեր աճման, հարատևման
Պիտ արագությամբ գործի, կայծակի

Եվ տա նոր ձևեր, նոր իմաստ կյանքին.
Գործի, ստեղծի գերմարդկային
Խանդավառությամբ,
Եվ ինչ էլ ունի, շնորհք ու եռանդ,
Հանճար ու տաղանդ,
Զոհի հաղթանակին ստեղծագործության։
Օ՜, դու, հաղթանակ մարդկային ջանքի,
Լարված ջղանքի,
Օ՜ դու, հաղթանակ վեհ աշխատանքի
Եվ ուժեղ կամքի,
Հաղթանա՜կ ազնիվ. անհա՜շտ, անհանգիստ,
Շարժուն հար ընդմիշտ
Քո հետևանքը ա՛յս պիտի լիներ,
Ա՛յս պիտի լինի օրըդ այսօրվան,
Ա՛յս է կյանքը մեր.
Մինչև ցորենը հողում չի մեռնում,
Մեկը հազարի պտուղ չի բերում.
Մինչ որ մարդկային հերոսը ցեղի
Կռվում չի ընկնում՝
Հավասարության և եղբայրության
Չի հարթվում ուղին։

IV

Եվ ես հեքիաթի շեմքին խոնարհած՝
Հիանում եմ լուռ այս նոր աշխարհով.
Մի աշխարհ չքնաղ, որ ալիք առած՝
Սփում է, շարժվում, որպես եռուն ծով.
— Է՛յ հազա՛ր, հազա՛ր, ավտոմոբիլներ,
Որ այդպես արագ թռչում եք, սլանում,
Ո՞ւմ եք պատկանում.
— Հանրապետությա՛ն...
Է՛յ, հազար, հազա՛ր, լուսեր էլեկտրյան,
Որ գիշերները արև եք վառում,
Ո՞ւմ եք պատկանում.
— Հավասարությա՛ն...
— Եվ դուք, աշխարհի դեղեցկուհիներ,

Հաղթ մեքենաներ ու գործարաններ,
Որ քար ու հողից բարիք եք ծնում։
Ո՞ւմ եք պատկանում.
— Բանվոր մարդկությա՛ն...
— Դուք, նավեր, ջրեր, երկաթուղիներ,
Հանքեր ու ցանքեր ազատ աշխարհում,
Ո՞ւմ եք պատկանում.
— Հանո՛ւր մարդկությա՛ն...
Համալսարաններ, աստղակայաններ,
Որ այս հեքիաթի պարծանքն եք կազմում,
Ո՞ւմ եք պատկանում.
— Մեկին, ամենքին իրար հավասար—
Ուր հազարն է մեկ՝ և մեկը հազար։

V

Տեսնե՞լ եք արդյոք վաղ արշալույսին
Նորածին կանաչ, ցողը երեսին,
Կամ ծով-եթերում լուսաշող ամպեր
Անբիծ անաղարտ, ինչպես կարապներ։
Կանաչների մեջ և վարդերի մեջ
Ես տեսա այստեղ մի ավան սիրուն,
Քաղաքից հեռու շարեշար անվերջ
Միահարկ տներ, շուրջը ողջ գարուն։
Տները այստեղ բյուրեղից են ողջ,
Հույլերի հեղեղ, արևն ընտանի.
Այստեղ ծլում է մի սերունդ առողջ
Գեղ մանուկների.
Ինչպե՞ս միաձև ու պարզ են հագնված
Այս զավակները նորակ աշխարհի,
Եվ ինչպե՞ս սիրով և ինչպե՞ս ազատ.
Աղջիկ ու տղա իրար հարազատ,
Կարծես ամենքը մի մորից ծնված,
Մի օր մեծացած ու մի տեղ սնված,
Խաղում են կայտառ, ծիվլում սրտանց,
Նախանձ, չարություն օտար է նրանց.
Երգում են, որպես գարնան թռչուններ,

Ոչ ոք նրանցից հոգս ու ցավ չունի...
Սակայն ինչո՞ւ այս գեղ ծաղկանոցում—
Բնության ծոցում
Տեղ-տեղ փթթել են ծաղիկ հասակներ—
Գատանիների,
Սաղիկ հասակներ, ինչպես պսակներ,
Որ շուք են տալիս գաշտերի միջին
Թավիշ կանաչին.
Ովքե՞ր են սոքա, ինչո՞ւ են այստեղ
Այս մանկանց միջին։
— Նորեկ աշխարհի օղակներն են այն—
Համերաշխության,
Որ ամեն անգամ իրենց հմտությամբ
Օգնեն, աջակցեն դեռևս անփորձ
Այս մանուկներին,
Օգնեն, աջակցեն և ուսուցանեն
Մեկը ամենքին,
Որ այս հասակից մատաղ արտի մեջ
Հավասարության և եղբայրության
Զարգանա ոգին։

VI

Ահա և նրանք՝ գործարանները
Նոր սերունդների,
Ահա և նրանք՝ ստեղծողները
Այս նոր աշխարհի.
Հոյակապ, ահրուն, ոգին ստվակյա—
Լույսերի աղբյուր,
Հատակը հզկուն, հարթ ճենապակյա,
Օդը համասփյուռ.
Մտել եմ նրա կամարն գոնով—
Նվաճ տաճարի,
Այստեղ է ծնվել, այստեղ սավառնում
Ոգին հանճարի...
Ահա և նրանք՝ ճախարակները
Զուգահեռ շարքով,

Որպես տիտաններ՝ մարմար հիմքերին
Բազմել են կարգով,
Գործում են թափով, մրրկում արագ,
Տենդային հևքով
Եվ լսելիքդ շոյում միանվագ
Հաղթական երգով։
Այստեղ չէ՛ լսվում առաջվա նման
Շռինդ ու շառաչ,
Ողջը խոնարհվել, ողջը զսպվել է
Հանճարի առաջ.
Եվ մարդու համար մեքենան անսաստ
Մի զսպված գազան,
Որ ինչ ուղղություն և ինչ ընթացք տան՝
Կբլսի անձայն։
Օ՛, գիտակցություն,
Որ խենթ մեքենան մինչև իսկ անգամ
Դարձել է խոհուն ընկերը մարդկանց...
— Ներդաշնակությո՛ւն,
Որ աշխատանքի ժամերին անգամ
Լարված ջղերին հանգիստ է շնչում։
— Զորս ժամ աշխատա՛նք.
Ուր մարդն է խոյում հաղթանքից հաղթանք։
— Հավասարությո՛ւն,
Որ այս համերաշխ աշխատանքներից
Օգտվում է համայն հասարակություն,
Ապրում իրենի, ընկերի համար—
Իրար հավասար,
Ուր հազարն է մեկ և մեկը՝ հազար։

VII

Բարդ մեքենայի խոնարհ սպասում
Բանվորն է կանգնել,
Եվ հում նյութերից թելեր է հյուսում,
Ձյունների լեռներ.
Մի բոպե, վայրկյան, մի արագ պտույտ
Եվ հյուսերը այն

Ա՛յլ մեքենայի տեսնում ես կույտ-կույտ
Ուսերը ելան։
Ճարպիկ մեքենան բերանն է առնում
Թելերի խուրձեր,
Ծամում, կլանում և կրծքից հանում
Պատրաստի գործեր,
Նրա հաբևան մեքենայի ճաղն
Վրա է հասնում,
Եվ քուլա-քուլա գործվածքը շարմաղ
Սալում ու գաքսում.
Սալում, փաթաթում քաթանի հակեր
Պողպատ մատերով
Եվ շտապ հասցնում այլ բաժանմունքներ
Վագոնետներով...
Այստեղ է ահա, որ կյանք է առել
Մի ուրիշ աշխարհ,
Գործում են հազար ժիր մեքենաներ՝—
Մեղուների շարք.
Եվ ամեն մեկը ճերմակգեղեցիկ
Մի մասն է ձևում,
Կարում ու հարթում խնայցի, դգաստ
Ու՝ գործը պատրաստ։
Եվ ինչատանքը, որ քեռ էր առաջ,
Զրկանք ու տանջանք՝
Այժմ դարձել է նոր մարդու համար
Հոգու զվարճանք.
Մարդ ու մեքենա սիրով համերաշխ
Գործում են ուրախ,
Կռում ու կոփում նոր սերունդների
Ապագան չքնաղ...
Եվ այս ամենը դարձյալ իրենի՝
Ընկերի համար.
Իրար հավասար,
Ուր հազարն է մեկ և մեկը՝ հազար։

VIII

Ողջո՜ւյն ձեզ, ողջո՜ւյն, նորեկ աշխարհի
Ազատ զավակներ,
Որ դարե՜ր, դարե՜ր ձեր մեծ հայրերի
Հարատև ջանքեր
Այսօր պսակվեց վսեմ գործերի
Վեհ հաղթանակով,
Եվ այժմ գիտեք անցյալը հիշել
Անուշ պարծանքով։
Ողջո՜ւյն ձեզ, ողջո՜ւյն, երջանիկ դար,
Անխոնջ զավակներ,
Որ հաղթ ու անդարձ այս մեծ օրերի
Տերերն եք դարձել։
Իմ վառ խոհերին մարմնացում տվող,
Հերոսնե՜ր կարող,
Ձեզ հազար ողջույն, որ կյանքին մեր այս
Շնչեցիք ֆմաստ,
Եվ մարդն այսօր ազատ ու տիրող
Չէ՛ նախկին գրաստ։
Ու ձե՛ղ է՛լ ողջույն, կարմիր օրերի
Հրդեհի կայծեր,
Որ ձեր մեծ ճամփի խուրձերը այրած
Եվ ընդմիշտ անդարձ՝
Մի վեհ, փառավոր ուղի եք անցել։

IX

Հրե՜ն գալիս են կարմիր ջահերը՝
Նորեկ աշխարհի,
Հրեն գալիս են պայծառ աստղերը
Ռոմանների.
Երկու սեռից էլ մտել են այստեղ՝
Տուն գիտության,
Որոշել բախտը ընթացիկ օրի
Հանրապետության։
Ա՜հ, այն դեմքերը ազնիվ ու խոհուռ
Զգոն և ուշիմ,

Եվ այնքա՜ն բարի և այնքա՜ն բարի,
Ամեն մի կնճիռ և ամեն խորշում
Նրանց վեհ դեմքի պատմությունն ունի,
Ու քա՜նի-քա՜նի կրել են տանջանք
Այս դեմքերը կիրթ,
Մինչև որ առել են կատարելության
Դրոշմ ու կնիք,
Որքա՜ն մաքառել ու տոկացել են
Արանց մեծ նախնիք,
Մինչ մեզ թողել են այսպիսի գեմքեր
Վեհ ու գեղեցիկ։
Ահա ամբիոն ելավ մի գիտուն,
Լրջմիտ ու խոհուն,
Առանց կրքերի և հուզումների,
Պարզ ու հյութալի, համառոտ ու լի
Իր գյուտի մասին հայանց ամենքին,
Եվ իր հանճարեղ զգրությամբ խելքի
Դահլիճը բերեց խոր համոզմունքի։
Եվ ես զարմացա, որ մարդն այսօրվա
Նրչանիկ ու լից,
Գո՜հ չէ այս օրից.
Որանում է նա նո՛ր հորիզոններ
Նորից ու նորից...

X

Գարուն է անուշ... թարմ կանաչների
Ծաղիկ ու ծփանք...
Այս կանաչներում ինչ որ թռչունքի
Գա գյութող համայր,
Այս ճոխ գաշտերում հոգու համերգի
Մի ջերմ փայփայանք...
Աբեր այսօր ուրախությունից
Մաղերն է փռել,
Աբեր հզոր իր բարձր գահից
Ել գրաշ վառել.
Ա՜հ, այն գրաշը, որտիդ տակնքա՜ն մտա
Եվ այնքա՜ն ճանաչ,

Ուզում ես թռչես ու գրկես ն
Ամեն մի ճառագայթ,
Եվ մարդն այսօրվա, որ է արարիչ
Հավասարության,
Եվ մարդը հանճար—որ է և տիպար
Վեհ գեղեցկության՝
Զուլվել է այսօր անուշ երգասան
Այս բնության հետ
Եվ դարձել նրա ներդաշնակության
Երգիչն ու պատմ։
Առողջ, հաղթանդամ և՛ ուժեղ, և՛ թարմ,
Երգ ու նվագով, պատկ ու ծաղկով
Եկել է մարդը երկսեռ գույգով
Հովիտը Մարքսյան,
Տիեզերքի հետ տոնելու օրը
Մեկի մայիսյան։
Հրե՜ն շարքերը—նոր կյանքի նշան—
Ժիր մանուկների,
Որքա՜ն են նման ալիքաձաձան
Կանաչ հասկերի.
Զայնով մանկական, անուշ զրնգան,
Երգում են նրանք օրհներգը կյանքի
Եվ աշխատանքի։
Հրե՜ն բանակը անխոով ու հաշտ
Ուսանողների,
Աչ գլխարկներով—ծաղիկների գաշտ—
Կարմիր պուտերի.
Եկել են նրանք հիմնք երգելու
Կյանքի մեծ երգին
Եվ խոնարհվելու արձանի առաջ
Մեծն ուսուցչի։

XI

Տարին մի անգամ, տարին մի անգամ
Գալիս են ահա այս հազարները
Տարին մի անգամ,

Եվ հաղթ արձանի շուրջը բոլորած,
Ջերմ ոգևորված՝
Երգում են հիմնը Հավասարության
Եվ Եղբայրության։
Երգում է մարդը, երգում բնություն
Ե՛վ ծառ, և՛ ծաղիկ,
Աղբերակ, գետակ, քլքլան վտակ
Ալիք առ ալիք.
Երգում են արևպես, խրոխտ և ուժգին
Նանգաղատագին,
Կարծես մի հակա համաշխարհային անոչ քնարից
Լինին ծորալիս այս շերտերը հաղթ—
Ի մի բերանից։
Եվ ես, որ արդեն մի զավակն էի
Այս Նոր-Աշխարհի,
Եվ ես, որ երգող մի նուրբ լարն էի
Այս մե՛ծ քնարի՝
Չգիտեմ ինչու այնպես լացեցի
Անուշ հուզմունքից
Ու չամաչեցի, ու չամաչեցի
Ես իմ արցունքից։
Հավասարության և եղբայրության
Տոնն են առնում այս հաղարները
Տարին մի անգամ
Եվ հիանում են,
Որ մեկը այստեղ սիրում է մյուսին
Հազարի նման։
Օ՛, որքա՜ն գերուն ու սիրելի ես
Դրունդ անմեման...
Գալիս են նրանք մի մարդու նման
Տարին մի անգամ
Մեծ մարդու առաջ վկայելու այն
Ավանդ ու պատգամ,
Թե կյանքն ունի իմաստ և հմայք
Լոկ այն ժամանակ,

Երբ նոր կյանքի ամենի համար—
Իրար հավասար,
Ուր հաղարն է մեկ և մեկը՝ հազար։

XII

Ահա և կյանքը այն կարոտագին,
Որ թվում էր ինձ հեռու մի երազ.
Նա, որ թթերի անհուշ թելերից
Իր ձեռքն էր մեկնում և մնում անհաս՝
— Իրականությո՛ւն, իրականությո՛ւն...
Սիրել եմ կյանքը ես առաջներում,
Նրա մրրկող թափը երիտասի,
Սիրել եմ նրա ուղին դժվարին
Ու երգել անվերջ իմ հին երգերում։
Սիրում եմ ահա կյանքը այսօրվա
Իրա հաղթանքով, իրա պարծանքով,
Հավերժը նրա, խիզդը առօրյա,
Սիրում եմ նրա վեհ գեղեցկությունն,
Նրա գրոշը կարծիր, փոքրիկ,
Որ բերեց այսօր մեզ արդարություն,
Հավասարություն և եղբայրություն։
Սիրո՛ւմ եմ կյանքը, սիրո՛ւմ եմ այնպես,
Ինչպես նորահարսն իր փեսացուին,
Ինչպես ծաղիկը արևի շողին,
Ինչպես անձրևը երաշտած հողին.
Սիրո՛ւմ... եմ և, ա՛խ մեռանել չեմ ուզում.
Չէ՞ որ նա, կյանքը, մի անուշ հուզում,
Դեռ այնքա՛ն կռիվ, փոթորիկ ունի...
Բայց թե մեռնեմ էլ, է՜հ, այդ ի՞նչ վնաս,
Չէ՞ որ ես ևս մի հյուլե, երազ,
Այս նոր աշխարհին իմ չամաչ ուրվի,
Եղբորս համար, ընկերիս համար
Իրար հավասար...
Ուր հաղարն է մեկ և մեկը՝ հազար։

20 դեկտեմբերի 1916
31 հունվարի 1917

ԲԱՑԼՇԵՎԻԿ Է ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Եկե՛լ եմ...
Եկե՛լ եմ, որ մի շնչում երգեմ երգդ այն զիլ-հնչուն,
Որ ձուլեցին պոետներդ յոթ հարյուր յոթ օրվա միջում։

Եկե՛լ եմ, որ ողջունեմ այն վայրերին քո սիրասուն,
Ուր զարերով երբեմն միայն ծղրիդներն էին խոսում...
Եկե՛լ եմ...
Եկե՛լ եմ համբույր տալու այն երաշտած կոշտ հողերիդ,
Որոնց միջից առատորեն կաթ ու մեղր է այսօր հոսում։

Դո՛ւ, Շիր-Կանալ, որ հազարանց քրտինքների միջից բսար,
Նրանց քրտինք գետեր շինած դարձար խորհրդան աշխատանքի,
Դո՛ւ, որ հազար հազարների քլունգների երգը լսած՝
Առատության հիմնը շուրթիդ հիմք ես դնում մի նոր կյանքի՝
Մեծ ողջույնի և հրճվանքի երգն եմ բերում քո դաշտերին
Եվ հիացմունք բոլոր ազգի, բոլոր երկրի պոետներին։

I

Բայլշևիկ է Շիր-Կանալը—մի ահռելի հեքիաթային,
Շուրթը նրա ջուր է խմում պազ ակոսներից Արփաչայի,
Գլուխը հաղթ թաղել է խոր կանաչագույն, զալալ գետում,
Ոտքը հեռու Կասպի ծոցում, ալիքներ է հեռուն նետում։

Մե՛ծ ու մե՛ծ է Շիր-Կանալը, կամարաձև, գեղեցկաթով,
Փաթաթվել է, ո՞նց է գրկել Շիրահարթը երկու թաթով.
Մի խանդավառ կարոտ ունի, էն ծարավը սիրած յարի,
Որ կարծես թե սեր ու խանդի կարոտել է հազար տարի։

Հույզեր ունի սրտի խորքում խորհրդավոր իր հորձանքով,
Ողջ իրանքը գողունքի մեջ—ապրումների մի կրքոտ ծով.
Եվ ամենքին իր երթի մեջ ում տեսնում է ու ճանաչում՝
Խոխոջումով, լսում ես մեկ ավետում է՝ ողջո՛ւյն, ողջո՛ւյն...

II

Բայլշևիկ է Շիր-Կանալը... այն վայրերը լերկ ու բարբաղ,
Որոնք իրենց ծնված օրից այրի էին, մերկ-անապատ՝
Այսօրից ետ հագնելու են սիրակարոտ հարսերի պես
Ջուգ-զարդարված խաս ու կանաչ, թավիշ մետաքս, զաղ ու զարբաթ։

Մի հմայող ոլորտումով, արծաթափայլ գրավչությամբ
Հիմա հեռո՛ւ հեռուներն են ձգվել ցանցերն Շիր-Կանալի,
Այնպես գրկել, այնպես ծծում հողի շուրթը ագահությամբ,
Որ կասես թե հողն է տնքում պինդ համբույրից սիրահարի։

Ո՛չ մի թեզ հող, ո՛չ մի ափան և ո՛չ մի գյուղ խուսափեր ոռոգից,
Զգում ես, որ չի տանջվելու այսուհետև բարկ երաշտից։

Բայլշևիկ է Շիր-Կանալը, հոգաբ քաշող ամեն մարդի,
Մեծահոգի, ներողամիտ գտնվածի և ամարդի։

III

Բայլշևիկ է Շիր-Կանալը... Դարու զավակ այս հերոսին,
Մեր այս դարու հարազատին ով չի՞ տեսել՝ թո՛ղ գա տեսնի.
Միլիոնավոր պայթյունների, հարձակումի ականներով,
Արփաչայի ժեռ ափերին գրոհ տվող ուռաներով.
Դիրքերից—գիրք, նվաճումներ, մի թռնելը զոհող մյուսին,
Աշխատանքի հերոսներդ մատի շարժով նրան պտին.—
Ուր ձեռք մեկնես՝ այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ թող կանալի,
Ուր երևաս, ուր էլ հասնես՝ մի նոր սերունդ այնտեղ աճի.
Ով ծարավ է՝ թո՛ղ հագենա, ով յարմամբ՝ թող կշտանա...
Այսպես է մեր Շիր-Կանալը մի գյուղացի օգո՛ւտ է նա
Ե՛վ դարդիման, և՛ սրտաբուխ, և՛ լայնաշուրթ, և՛ հյուրասեր—
Քեզ տեղը, երգը բերնին, խոսքը շուրթին, լիառատ սեր։

IV

Բայլշևիկ է Շիր-Կանալը... և գյուղերը գիրկն առած
Ցանցել է իր արյունատար երակներով համատարած։

Մեկը պիտի հապարների մասին հոգա—մի ղեկավար—
Հազարները խանդով վառված պիտի հոգան մեկի համար...
Հրեն Կապսը տարին կանգնած հովվականչի ձե՛ն է տալիս,
Թե՝ հե՛յ, լսե՛ք, հրես ջրիս ձե՛նն է գալիս, ձե՛զ է գալիս...
Կանգ է առել Պոլիգոնը և սիրահար կույսի նման
Քրքջում է ու սպասում, որ գան գրկեն, սիրեն իրան.
Անհամբեր է Օրթաքլիսան, բաբախում է սիրտը նրա,
Ցնծությունից շունչը պահած քիչ է մնում ճչա, պոռա.
Երազում է Թոփաուլիսան, աչքով անում Ղռնախրանին,
Հասկանում է Հաջի-Նազար ու կանչ անում հարևանին։

Այսպես մեկը ձենում մյուսին, ավետում է հեռու տեղից—
Դյուզաքյանցը՝ Քափանակին, Թափդուլաքը՝ Իլխիբին.
Այսպես մեկը ահա մյուսին ավետում է երկու վերստից,
Թե գալիս է Շիր-Կանալը՝ բայլշևիկը Հայաստանի։

V

Ուրիշ փահմ ու սամթ էլ ունի մեր բայլշևիկ Շիր-Կանալը.
Նա Շիր-դաշտի մեջքը գրկած Կապսի մոտից, ինչպես նալը,
Ջրընկեցով նորից պիտի Թափվի ծոցը Արփաչայի։
Որ պայքարի միջից խլի ուժը հիդրոֆիկացիայի։

Երգիչներից ո՞ր մեծն էր այն, որ երգել է ուժի մասին,
Շիր-Կանալը փրփուր խասով շիր-առյուծ է, բաշը՝ լուսին.
Լույս թևերի փաղաքշանքով պիտի ցանցի ողջ գյուղերին
Եվ դինամոն կայծակ-փնջով այրի նիրհը մութ հյուղերի.
Պիտի տեսնեն, որ լուսաշող ասեղները էլեկտրոնի
Միտք է ցնցում, գյուղին ասում, որ անելիք ինքն էլ ունի.
Շիր-Կանալը շիրի նման հանդացող մի պատանի—
Ալիքները փրփուր խասով լույս ապագան Հայաստանի։

VI

Մեր բայլշևիկ Շիր-Կանալը ուրիշ փահմ ու սամթ էլ ունի.
Զիավորի սանձը ձեռքին հսկա ուժով էլեկտրոնի
Պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու ֆաբրիկներ,
Ջրաղացներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքեր։

Այն երկիրը, որ դարերով քարացել էր ու ցամաքել՝
Այսօրից ետ պիտի երգի աշխատանքի հզոր երգեր։
Շա՜տ է լացել համբ լացով Շիրակն իր դարդի մասին,
Իսկ այսօրից նա լի թոքով թող ամենից բարձր խոսի։

Շա՜տ է տանջվել ու տոկացել անհարազատ մարդոց ձեռքին,
Իսկ այսօրից թող նվաճի ու տիրանա իր նոր կյանքին։
Ու կտանջվեր նա էլ նորից, թե չծնվեր հաղթ պատանին,
Թե չհասներ Շիր-Կանալը—բայլշևիկը Հայաստանի։

ՎԵՐՋԱԲԱՆ

Մատաղ լինեմ ես այն օրին, մատաղ լինեմ ես այն ժամին,
Երբ ինձ նորից կվիճակվի այցի գալու Շիր-Կանալին.
Տեսա նրա երկունքը ես, պեղումները տարի առաջ,
Այժմ նրա բաղ ու բաղչեն, արտն ու հանդը, ծառ ու կանաչ։
Վիլլաների թավուտ անտառ, ծառուղիներ-ծաղկանոցներ,
Որոնց բույրից կըզդա նորից ջահելություն իմ հոգին ծեր.
Եվ գիշերը հազարաչյա տարածելով լույսի փշեր՝
Ինձ կերևա հեռու տեղից մի աստղազարդ հեքիաթ գիշեր.
Եվ կըսուլեն ֆաբրիկների գուդոկները ուրախ կանչով,
Ողջունելով գյուղ ու քաղաք ալ բոցերի հուր ճաճանչով։
Բայլշևիկ է Շիր-Կանալը՝ մեծ զավակը Հայաստանի,
Նրա որդին ջահը ձեռքին լույսի աղբյուր մի ախտոնի։

1924, հոկտեմբեր

ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԽՈՍԵՑԻՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Իմ երգի համար, իմ շարքի համար
Ես ձե՛զ եմ ընտրում, կարմի՛ր հազարներ,
Զե՛զ, որ մանկությունից կրակով անմար
Մուրճերիդ զարկը սրտիս եք զարկել...
Եվ խարտոցը ձեր հղկել, ողորկել
Ժանգը ուղեղիս ազգայնամոլի,
Ցավերի խորքը քշել, ոչնչացրել
Նսական հոգիս կրքոտ ու մոլի.
Ես ձեր քուրայում շիկնած կրակով
Ջոել եմ, բովել մտքերս եռուն,
Ապրել, տառապել մարդկանց տանջանքով,
Սահմանափակից ճանաչել հեռուն։
Իմ երգի համար և շարքի համար
Ես քե՛զ եմ ընտրել, կարմիր աշխատանք.
Քեզ, որ կարմրազգեստ, դեմքով արևառ
Հղացումների հյուսել ես լեռհանք,
Եվ նորեկ կյանքի—ապագա մարդուն—
Ստեղծագործի թողել օրինակ։
Ա՜խ, թեև երբեմն քո շենքերի տակ
Կարմիր զավակդ է ընկել նահատակ,
Թեև շատերը հերոսի նման
Ընկան ու մեռան նրանց հիմքի տակ՝
Բայց և շատերը ելան այս տիտան
Պայքարումից ետ—Նոր աշխարհ գտան...
Դուք՝ արևներդ մեր նորածեգի,
Դուք՝ հեղինակ իմ խանդավառ երգի,
Իմ երգի համար, իմ շենքի համար
Զե՛զ եմ պարտական գրչովս խոնարհ։

I

Երբ ես ալք բացի առաջին անգամ,
Երբ ես զդացի, որ միտքս է աճում,

Ինչպես կակոն վարդ, որ չէ իմացվում,
Ինչպես է բացվում,
Երբ շուրջս տեսա ես լաց ու կական,
Որ գետ էր կազմել ողբից հայկական՝
Ես էլ ձուլվեցի այդ հոսանքի մեջ,
Տարվեցի նրա թախիծով անվերջ.
Բայց և շուտ լռեց թախիծը լացի,
Եվ ես ասացի.
Այս երկրում ապրող մենք ճնշվածներս,
Հարյուր ազգերից, հարյուր հյուսքերից
Ինչո՞վ ենք ազատ և ինչո՞վ ենք զերծ
Զրկանք, հալածանք կրող մյուսներից.
Կովկասաբնակ զատ հատվածներս
Ինչո՞վ բախտավոր ռուս եղբայրներից.
Չէ՞ ամենուրեք ցարերն են տիրում,
Ցարերը խոսում գնդակ-մտրակով.
Չէ՞ որ ամեն տեղ մեզ նմանները
Այրվում են մի տեղ նման կրակով,
Ուր ցարն ու սուլթանն իրենց գոռ թագով
Ժողովուրդների բերանն են փակում,
Գործարանատեր, ոստիկան, տերտեր
Աշխատավորի արյունը լակում...
Եվ ես հասկացա, հասկացա իսկույն,
Որ կա այստեղ մի անարդարություն,
Կա՛ այստեղ մի մեծ ծանր խաչափայտ,
Շատերին անհայտ
Որի տակ հեծում, տնքում է համայն
Ջարքաշ մարդկություն։

II

Եվ ես ձուլվեցի այն հոսանքի մեջ,
Նրա անունը՝ սև բանվորություն...
Մենք շա՜տ ենք իրար «աչան ախպեր» ասել
Ու խանդավառվել մի խոհով վսեմ,
Մի ցավով տարվել. բախտավորություն
Մեր կյանքում սակայն երբեք չենք տեսել

Մեր ընկերները մեջը-մեջքի ուված,
Կարիքն է եղել ու մեկ էլ չոր հաց.
Գործարանների կամարների տակ
Մենք շա՜տ ենք տանջվել, բայց նեցուկը մեր
Մեկ հույսն է եղել—մեկ էլ աշխատանք.
Երբ մեր մուրճի տակ երկաթն էր տափկում՝
Մենք գիտեինք որ՝ այդ մեր տերերի
Համառ ու գաժան սրտերն են փափկում.
Երբ կռանի տակ շիկնած պողպատից
Կայծեր են ցայտում՝
Մենք գիտեինք որ՝ այդ մեր սարդերի
Ագահ աչքերի արցունքն է կաթում.
Իսկ երբ թափ-անիվն իր խենթ պտույտով
Ողջ գործարանն էր հուզում, մրրկում՝
Մենք լավ գիտեինք—այդ մեր սրտերի
Երակն է զարկում.

Հույզերով վառված, հույսերով լարված.
Մենք լավ գիտեինք, որ պիտի իշնի
Տիրողի գլխին մի ծանր հարված.
Գաժան ցարերի, գիշատիչների
Հավիտենական անեծքով այրված,
Նրանց դագաղի կափարիչների
Մեխերն արդեն մեր ձեռքով զամված...

III

Եվ խոսեց վեպն արդար օրերի—
Հեղափոխական մարգարեների.
Եվ գրոհ տվեց կարմիր փոթորիկ,
Այդ հաղթ ե՛րգն էր ըմբոստ շարքերի։
Այնտեղ Փետրվարն նոր գարնան շեմքի՝
Իր նեռն էր ցցել.
Եվ կրակ շնչով, որտի շանթով
Երկիրը ցնցել.
Ինչպես անդրանիկ անձրևը աշնան
Մարում է տապը հողի կարոտած.
Գարնան կեռների հնչը խլրտած

Զարկում-փշրում է ձմեռվա շղթան՝
Այնպես էլ որոտն փետրվար-մարտյան
Դարձավ շեփորը Հեղափոխության։
Սակայն մենք նրան Կովկասում ավեր
Ռադիոյով ստացանք,
Ա՛յն որ Հյուսիսից մեզ տվին նվեր՝
Մի ցավ էր, տանջանք...
Առանց քրտինքի ո՞վ է հնձել ցանք,
Խաղաղ, անկռիվ, առանց երկունքի
Այն ո՞վ ծնունդը տեսել մանուկի...
Օ՜, դրա՛խտ Կովկաս, հմայո՛ւն Թիֆլիս,
Դղված ու սիրված բոլոր ցեղերից,
Դու, ցե՛ղ Վրաստան, նամո՛ւա-Հայաստան
Եվ աշխատավոր բարկ Ադրբայջան—
Հեռու ծնողներից՝
Հիշո՞ւմ եք որքան արյուն ու տանջանք
Ձեզ թողին բաժին Մուսավաթ, Դաշնակ,
Թուրքը հայու դեմ, հայը՝ վրացու,—
— Ուր վրնջում էր կիրքը դրացու...

IV

Փետրվար-մարտյան ալիքների լուն
Ետադարձ զարկով գրոհ տվեցին—
Ոտքի հանեցին
Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխություն.
Աշխարհն իր ծնած անդրանիկ օրից
Չէ՛ր տեսած այդպես մի գեղեցկություն.
Արևը իրա լույս տալու օրից
Չէ՛ր տված ամպին այդպես հուր-հմայք.
Օվկիանն ալեոր իր ոգջ տարերքում
Չէր ապրած այդքան հուզումնալի կյանք.
Երկինքն այնպես որոտ չէր լսած,
Կայծակն այնպես կարկուտ չէր տեսած.
Մայրաքաղաքի զինվոր թե բանվոր,
Որպես առյուծներ նետից վիրավոր,
Քաղաքածայրի արվարձաններից,

Գործարանների մրոտ քաղերից,
Վազում են առաջ խենթ ալիքներով,
Խորտակում շաչով Կերենսկիների
Գալատները գոռ...
Հաղթ Կրոնշտադի բանվոր, նավաստին
Շատ զոհեր տվին,
Որ կոմունայի պատվանդանը խոր
Հիմնավորեին,
Որ միանգամից արբեն-տաներին
Հատակը ծռվի
Փտած ու նեխված դիակները գաղջ
Բուրժուաների...
Հե՛յ, այն ծով-արյան ալիքները խոլ
Լայնացան, անցան իրենց ափունքից,
Թռան Կովկասյան լեռանց բարձունքից
Ուժով անասան.
Ու... մեզ էլ հասան...

V

Որոտումների հեղեղն է խառնում
Օդերի միջով.
Այն ո՞ւմ արյունն է խոխոջով հոսում,
Այն ո՞վ է կռվում կրակոտ շնչով,
Ո՞վ զարնվում, ո՞ւմ հետ...
Կարմիր Բուսիայի զավակներն են այն,
Կռվում են այնտեղ ճերմակների հետ...
Նրանք բոլորն էլ ջահել, պատանյակ,
Անվեհեր դեմքով, լրջմիտ ու խոհուն,
Նրանք ամենքն էլ արեի զավակ—
Վեհ գիտակցության լույսը աչքերում
Ունին կատարել մի վսեմ, սիրուն
Գաղափարի կոչում.
Մի նոր առավոտ, առավոտի պես,
Եվ թարմ օդի պես,
Երեսն եկան-կարմիրներն այն
Ժպիտով մանկան.

Այն առավոտուն եթերի նման
Խաղաղված էին դեմքերը նրանց
Ջգված ու լարված.
Հե՛յ, առյուծների կորյուններն էին
Կռվից նոր ելած,
Ու մտան նրանք Թիֆլիսը սիրուն,
Թիֆլիսը ծերուկ և մշտաջահել,
Ու ասին նրանք. ահա ձեզ վայել
Այս սիրուն քաղաք, համեցե՛ք, առե՛ք
Ու կառավարե՛ք.
Ձեզ ենք հանձնում մենք սրա բարձունքներ—
Մեր արյամբ ածված.
Սրա վեհ լեռներ, թավուտ անտառներ,
Արնախառ քրտնով մեր սրբագործված...

* * *

Առավոտի պես և թարմ օդի պես,
Արևի նման երևացիր դու,
Դու, խորհուրդների մեծ իշխանություն—
Բանվոր-գյուղացու.
Թարմ ու նորություն շնչեց քո հոդից,
Քո շունչ ու ցոզից—
Մի նոր երկրագունդ իր օրենքներով,
Մի նոր ժողովուրդ իր կոր երգերով.
Այս օրը արդեն երեկվա չէ որ,
Մենք ջնաս բարով վաղուց ենք ասել
Երեկվա օրին,
Երեկվա օրից այսօրին հասել...
Առավոտի պես և թարմ օդի պես,
Արևի նման երևացիր դու,
Դու, խորհուրդների մեծ իշխանություն—
Բանվոր գյուղացու

VI

Եվ առաջ անցան ստեղծագործները,
Որ բանտերի մեջ էին մեծացել,

Ահա և նրանք—նոր աստվածները—
Քանի՞ փշածածկ ուղի են անցել...
Կովկասի շքեղ վայրերին փարթամ
Նրանք այժմ տեր և միայն այքան։
Մեր շար թշնամին նահանջի ժամին,
Որ հեղեղի պես սրբել էր անցել
Ու ողջ երկիրը առատ, բարգավաճ
Ալան-Թալանի մոխիր էր դարձել՝
Աստվածները այդ արդար ցասումի
Ե՛վ խոցվել էին, Ա՛ խիստ բարկացել.
Հազար-հազարով ծառս ու ծառս ելան
Աստվածներն այն,
Եվ խոսեց փլած, ավեր մեքենան,
Եվ բեհեղ հագավ երկիրը խոզան.
Հազար-հազարով իրարու անցան
Աստվածներն այն,
Որը սղոցը, որը բահ ու թին,
Որը խարոցը, ճուրմ-մանգաղ ձեռքին,
Ավեր վայրերին շնչեցին ոգին
Շինարարության.
Ջրերին՝ ուղի, կյանք ու շունչ՝ հոգին,
Խոսեց ու ճչաց ձայնը մեռաղի,
Եվ գյուղը խավար ահը հույսերի—
Սրտերը հանեց ճառագող լույսերի.
Մատաղուզի պես ցրվեց հոգս ու ցավ,
Կյանքը կարկտված նոր երգիչ գտավ...

VII

Եվ շարժվեց թափը վերաշինության—
Ստեղծագործության.
Ես տեսա ինչպես տիտանը հազթած
Կռվի ճակատում,
Աչքերում հուրը խանդավառության
Նոր կյանքն է կերտում։
Ինչպես Ֆիդիաս, որ բրիչ ձեռքին,
Մեղով հանճարի

Ներշնչում էր կյանք, իմաստ ու ոգի
Անշունչ մարմարին՝
Այնպես էլ մարդը նոր աստված դարձած—
Նորեկ աշխարհի—
Հոգի էր շնչում հիվանդ ու մեռած
Մեքենաներին։
Տեսա, թե ինչպես մուրճը որոտուն
Նա իր ձեռքն առած՝
Ժանգոտ ու փտած բոլտերն է հատում
Թարախակալած,
Մեխերը հանում շոգեվագերի
Վիթավոր կրծքից,
Կարծես կռվի մեջ գնդակներ առած
Հերոսի վերքից։
Օ՜, տեսա հիվանդ, հաշմանդամ դարձած
Շոգեկաթսաներ,
Որոնց ալքերից արցունքն էր կաթում—
Նավթե ակոսներ,
Որոնք անհամբեր սպասում էին
Վիրաբույժների
Անգամահատող հատու գանակի
Փրկող զարկերին։
Ապա թե ինչպես հսկաները այն,
Վերքերից բռնված,
Ռելսերի-գծով զվարթ սուլոցով
Սուրում են առաջ,
Սուրում են ուրախ, հեգնում թշնամուն
Թափի ու շառաչով
Ու ծաղրում իրենց ավերիչներին
Խնդումի շաչով։
Ես տեսա նրան— իմ հերոս եղբոր
Փլատակ հանքում,
Ջրախեղդ եղած մութ երակների
Ջուրն է թիակում,
Որ կյանքը նորից ածխահանքերում
Իր շնչով տարի

Եվ վազուց մարած ծխնելուցքների
Բոցերը վառի.
Թևեր էր առել եռանդը մարդու,
Նման գերմարդու—
Պեգաս էր դառել հուրը աչքերում
Ճաճանչով ցայտուն.
Չէ՞ որ մարդածին աստվածներն են այն
Աշխարհիս համայն,
Որոնք նոր ուղի, նոր կյանք են կերտում
Մարդկության համար.
Ու երկաթուղին նոր կյանք ստացավ—
Երգիչ էր ծանոթ, երգեց ու անցավ...

VIII

Երկինքն այս տարի մի պքանչելի
Գարնանային գարնավ.
Ամեն մի շաբաթ նա իր ցնցուղից
Անձրև էր մաղում,
Մարգարիտներով դաշտերը ցողում.
Բանչպարն այս տարի գերաստվածային.
Հոգի էր առել
Ու իր եռանգի շահերը վառել.
Նա դաշտ էր հանել բահեր ու գութան,
Հողն իր փորփորում ուժերով տիտան.
Վեր էր մագլցել արծիվի նման
Սեգ լեռան կողեր,
Ոչ մի կտոր հող չէր ուզում անգամ
Անմշակ թողնել.
Կտուրին անգամ նա սերմ էր ցանել,
Ու միտը բերել
Անցած սով տարվա օրերը աներ
Մայր ու երեխա, հարս ու պառավ կին
Հոգի են շնչում հողի երակին,
Հողագործների զենքերով զինված,
Կասես թշնամուն նրանք գեմ ելած.
Կռիվ են մղում.

Կուրծքը լեռների, դաշտ ու ձորերի
Ակոսում, հղում,
Քարի բերանից, օձի երախից
Հողաճումը խլում.
Մարդը մի հանճար—քարից էլ հյութ է
Նա նյութել ուզում
Եվ առատության դրոշը հյուսում.
Չէ՞ որ մեծ սովը էն անցած տարին
Հարվածեց նրա տուն ու ամբարին,
Մալին ու կալին.
Սովի սարսափը նա չի մոռացել,
Տարերքը նրան ստեղծած է դարձրել

* * *

...— Հասկերի մի ծով...
Հեղ ու գոհունակ ծանրացած բերքի
Դեղին ալիքով.
Այս ալիքներում դեզին, ոսկեհուռ,
Նուրբ, հեզահամբույր կա մի վեհություն.
Այս ծով դեղնագույն արտերում հատուն
Իր ալիք-բաշով հունձն է խոսում
Ու ծավալ-ծածան ոլորում իր շուն.
Առատությունն է, առողջ հարսի պես
Իրեն է կանչում.
Եվ հաղթ գյուղացին արտի մեջ կանգնած,
Որպես նոր աստված,
Կարմիր արեից այտերը ալիված,
Գոհ է, երջանիկ
Չէ՞ որ այս ամենը նրա համար է,
Որ նվեր բերի իր մեծ զավակին—
Կարմիր Բանակին.

IX

Ղարաքլիս գյուղից քաղաք են եկել
Սերգոն ու Մուքել

Ու Սովնարկոմի վզին սիմեն չոքել.
— Տվե՛ք մեզ էլեկտրո-լույսի մեքենան,
Մենք է՛լ ենք ուզում ապրել ձեզ նման,
Մենք է՛լ ուզում ենք լույս տալ մեր գյուղին
Մեր գոմին, հյուղին...
Գիմշի սալերով, ոնց ավար առած,
Հասել են տեղը Սերգոն ու Մուքել
Հաղթանակ տարած.
Մոտորի համար հիմքեր են փորում,
Լուսավորության հոսքը աչքերում.
Մեղուների պես աշխույժ ու տենդոտ.
Մրջյունների պես եռանգով փութկոտ,
Ելել են գործի աստվածներն այն.
Որը կիր ու քար, որը մի գերան
Օձապտույտ խուլ արահետներով,
Անթափանցելի չհասնց լանջերով,
Վաքար գետերով
Էլեկտրակայանի նյութերն են կրում,
Հիմքի քարերը երգելով շարում։
Եվ թշվառ գյուղում, ոչ առաջներում
Մթին խավարի ժխորն էր հասում՝
Այսօր ցերեկվա արևի նման
Էլեկտրաշարժի ճանճկոն է խոսում.
Ուր գինամոլի արբած պտույտից
Մագնիսի կոկոն ձաղկունքն են կայծում,
Ուրախ, կարկաչում
Ծափահարությամբ՝ նոր աստվածներին—
Այն խոհան, զեզուն ստեղծագործներին—
Կեցցեներ գոչում։
Այն գյուղի ձիթի ճրագներն անուժ.
Որ մի ժամանակ թարթում էին լուռ,
Այսօր փոխվել են ջահի շիթերով
Եվ կալ ու կանաչ, անտառ ու խրճիթ
Ողողվել գոհար լույսի հուլիներով։
Խավարը երեկ—
Դարձել է ցերեկ...
Հե՛յ, ճակատներին աստվածների այն

Լույսեր են իջել մոլսիսանման.
Բացվել է գյուղի աչքը մտքերի,
Հոգին էլ քնար՝ ազատ երգերի.
Հասկացել է գյուղն լույսի զորություն.
Կեցցե՛ն խորհուրդներն, իր իշխանություն...

X

Ամայի դաշտում, տարածության մեջ
Փշերի մի խիտ անտառ է բուսել,
Գեղջուկը տխուր խորհում է խեղճ-խեղճ,
Որ չունի նա հող—հողն ակոսե...
Հեռու ներքևում հրեն Արագվան
Մռնչում է գոռ առյուծի նման,
Իսկ ինքը չունի մի առվակի ջուր
Որ գոնե այդին ազատի դաշտի
Անջրդի երաշտից.
Ու գալարվում է մրրիկի նման,
Ուզում է անել նա արմատահան
Անտառը փշի.
Ու որոշում է շաբաթօրյակով
— Փշի անտառը հիմքից արմատել
Ու ջրանցքներով այն շրջապատել...
Խոպան դաշտի մեջ ամբոխն է խոնվել
Երկու սեռից էլ, հազարից ավել...
Դիմել են աշխ փոթորկի նման
Վայրի հարձակման.
Եվ աստվածները ոգևորության
Հուրը աչքերում՝
Փշյա զորքի դեմ կոփվել են մզում...
Երեկո է... էլ չկա փուշ ու թուփ,
Դաշտը հայելի՝ ծով է ալեծուփ...
Կանգնել եմ ափին ծեծ կանաչների
Մրրուն պուրակում.
Ջրերն են վազում խաղաղ հոսանքով,
Նորածին դաշտը առատ ոռոգում,

Ջրերն են վազում, որ հողն այսուհետ
Ապրի իր կյանքով։
Եվ փառք է տալիս աստվածն աստծուն—
Նմանը նմանին,
Որ գյուղը ավեր եղեմ է դարձել
Մի հեքիաթային.
Եվ փառք է տալիս աստվածն աստծուն—
Նմանը նմանին,
Որ հուր-եռանդով արհավիրքներին
Դարձրել է հլու։
Օ՜, գեղեցիկ է ու գեղեցիկ է
Բնությունը մեր,
Եվ մարդը նրա աստվածը անմեռ.
Մի մեծ ընդհանուր արհեստանոց է
Տիեզերքը մեր,
Եվ մարդը նրա հարաշարժ բևեռ.
Տարերքն իր ուժով հողի, ջրի տակ
Այսօրից հետո մարդուն հպատակ.
Եվ թող ինչ մահվան դատապարտված է
Մոտիկ օրերում՝
Այսօր մոխրանա համաշխարհային
Կրեմատորներում։
Եվ թող փա՜ռք լինի, փա՜ռք լինի մարդուն,
Որ հասկացել է կոլեկտիվների
Կերտող զորությունն.
Եվ թող այսօրից կեցցեն խորհուրդներն,
Իր իշխանությունն,
Ուր կյանքն է ծլում՝
«Հաղթա՜նք, հաղթությո՜ւն»...

ՎԵՐՋԱԲԱՆ

Եվ խորհուրդներում բազմել են ահա
Երեկվա Սաքոն, Իվանն ու Թեդոն։
Հողաճումբի պես կաշտացած ձեռքեր,
Ակոսված դեմքեր,
Խոհուն ճակատով գետին են զարկել

Երեկվա իրենց բռնակալներին,
Երկիրք նմանվել մեծ աստվածներին։
Գործում է եռանդը մոտորի նման—
Արյուն բորբոքում
Ու կյանքը կերտում կարող վրձինով
Հանճարեղ ոգու։
Աճում են նրանք ու բարգավաճում
Կաղնիների պես և զարկ տալիս նոր
Կյանքի կառուցման։
Աստվածներն են այն,
Որոնք ծնվեցին բանվորի արյան
Հյութերից պոկված.
Նրանց մտքերի, նրանց վառ ոգու
Հույզերից երկնած։
Օ՜, գիտեմ, գիտեմ, հեռու չեն օրեր
Մե՛ծ աստվածներ,
Երբ ալ աստղերի վրայով ճամփա,
Ուղիներ բացած՝
Կտաք հրաման մեր երկրագնդին
Ա՛յլ կերպ պտույտ գալ,
Երբ մեծ արևից ջերմություն քաշած
Նոր հրաշքների կբանաք աշխարհ,
Նոր աշխարհների նոր սերունդներին
Լույս տալու համար...
Տխուր կռվից ետ նրանք հաղթեցին,
Արգելք ու խավար, երաշտ ու ծարավ
Ի չիք դարձուցին։
— Աստվածներն էին,
Այդպե՛ս կամեցան,
Այդպե՛ս խոսեցան...

1922

ՔԱՂԱՔԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

... Ու հայրս ասաց.
— Գնա՛, ո՛րդի ջան, աշխատիր դո՛ւ էլ,
Հացը մեր տաշտից վաղուց պակասել՝
Զորթան էլ չունենք, թե գլուխ պահենք...
Գնա՛, որդի ջան, աշխատիր դո՛ւ էլ...
... Ու մայրս ասաց.
— Գնա՛, անուշ ջան, քանի դու ջահել,
Ձեռքումդ կա ուժ, մեջքումդ՝ ղվաթ.
Մայրանի համար գնա բաժինք բեր...
Գնա՛, անուշ ջան, քանի դու ջահել...

Ու մեջքիս կապած երկու կորկի ճաթ,
Տրեխս՝ հագիս, դոլաղքս՝ հավաք,
Ճամփա ընկա ես դեպի Սև-Քաղաք...

* * *

Դե՛ մնաք բարով, մեր տուն ու բախչա,
Ձեր դարդերից եմ դադարգյուն ընկել.
Նա՛լար իմ ա՛պին գլուխը չալած՝
Կոռ ու բեգյառից վիզը բարակել...
Քույրս պառավել, տանն ա մնացել.
Նանս էծերի կոշտ պտուկները
Է՛նքան ա հանցել,
Որ ցամաքել են նրանք, չորացել...
Գալի՛ս եմ, քա՛ղաք, քո ումուդի՛ն ենք
Հիմա մնացել...

II

Ու մեր թալիշից ես տեղ եմ հասել,
Ընտեղից դայի Իվանենց տունը.

Ա՛յ տղա, սհենց էլ շհար եք տեսե՞լ,
Էս ո՞ւմն ա էսքան հարստությինը։

Դիշերները լուս՝ լուսընկի նման...
Պարախոդները ոնց են լոզ տալիս.
Հենց ա մեր բո՛ւլիք, մեր դազեր լինեն,
Մեր գեղի գյոլը միտս ա գալիս։

Բա՛ ըսհենց զարմացք երկիր եք տեսե՞լ...
Դիփ նոթ ու մազութ, դիփունք էլ սև-սև
Էստեղ մաշիններ, էնտեղ թորբաներ,
Բո՛ւղի մեջ կորած նոթի զավոդներ...

Մինը դրմբում, մեկէլը փշշում,
Մինը բարձրանում, մյուսը քաշանում,
Հե՛նց ա կորկոտի տինգ լինի բանում,
Հենց ես իմանում Թառթառն ա վշշում։

Էս դիփ դաբո՛ւլ ա, ընդո՛ւնակ ա մեզ.
Ամմա որ կանաչ ծառ ու խոտ չկա՝
Ցավը հենց է՛դ ա... ու չգիտեմ ես
Էս հարամ երկիր էլ ընչի՞ եկա...

Ջայից՝ նոթի հոտ, վեննիդ միշտ մազութ,
Նորդն էլ ընտեղ երեսդ չանդռում.
Իվա՛նն ասում ա ամսական տասնութ
Մանեթից ավել ըստեղ չեն առնում։

Ուրեմն էս ա՞ էն քաղաքը մեծ,
Որտեղ բուլեքում. ասում են, ոսկի,
Արծաթ ա թափած... էլ սրանից հետ
Ո՞վ կհավատա մարդկանց սուտ խոսքին։

Ուրեմն էս ա՞ էն հարստատ Թաքուն,
Որը գովում են մեր Գյուլստանում...
Ա՛յ հարա՛մ ըլի էս տեսակ հացը,
Ջի՛լ ա մնում, թե, հրես գա լացս...

III

Սիրելի Թյո՛ւնի,
Պարովագիրս խնդրեմ ընդունի.
Հենց նոր վերջացավ մեր աշխատանքը,
Ասեցի՝ գրեմ քեզ այս նամակը։
Միայն բեղամաղ չլինես, Թյո՛ւնի,
Եթե նամակս փիս գրած լինի,
Գրում եմ չոքած պպղակոճնիկին։
Որ դողդողում ա մեր մախավիկից.
Ա՛Թուն, գի՛տաս թա սա ինչ գազան ա՞...
Հարամի ասեմ, թե՞ սատանի չարխ...
Դե պատմեմ լսիր ընչի նման ա.
Մեր գեղի ծերին, մեծ գետի ռեխին
Տեսե՞լ ես էն մեր ճաղացի ակը...
Հենց նրա պես ա մեր մախավիկը...
Միայն նա՝ փետից
Սա դիփ՝ արկաթից։
Դե՛, էլ ինչ գրեմ,
Շատ երկարացավ
Էս իմ նամակը.
Հա՛, մնաս ընկավ.
Մեկ էլ ղրկում եմ քեզ ինը մանեթ,
Որ թոփ եմ արել էս ամսի միջին.
Մեր հարսին ասա, թող չնեղանա,
Որ գալս ընկավ ձմեռվա վերջին.
Ասում եմ, մի քիչ շոր ու շիրթ առնեմ,
Որ մեր ապորը քիչ քյոմագ անեմ.
Դե՛, մնաս բարով, եկա, քնեցի,
Որ առավոտը արթնանամ վեցին։

IV

Թյո՛ւնի, ասում ես «կյամ», «չորուկ ա տարին»...
Ցա՛նի գե կարամ ասեմ թե մի գա՛լ...
Հալբա՛թ պիտի կյաս, կյալդ ա բարի...
Ամմա իմա՛ցիր.
Էստեղ տանա հարս ու աղջիկ չկան,

Որ ամեն շաբաթ կիրակնամուտին
Վեններդ լվանան, փողքդ կրկատին.
Դրա տեղ ըստեղ մարդիկ շատ շուտով
Խելոքանում են, խելքի ծով դառնում։
Էն որ քուրայում կրակն ա ծամում
Դամուր-երկաթը...
Հենց ես իմանում, թե մարդն էլ էդպես։
Մի խամ երկաթ ա... Թակես՝ կդառնա
Մի բան պետքական՝
Մի նալ, մի գութան։
Կգաս, կտեսնես մեր էլեքտրիչնին...
Դիփ մի մավթուլ ա...
Էս մի մավթուլով սաղ էն զավոդը
Ջրաղվանի պես համ պլպլում ա,
Հա՛մ տալիս խոդը։
Ախ, Թյո՛ւնի ախպեր, էն ե՞րբ կլինի
Մեր ժողովուրդը իմանա բյութուն
Էս չարխ ու լուսի ուժի զորություն։

V

Էն որ ծեգ-ծեգին՝ առավոտները
Մեր վերցակները հարա՞յ են տալիս,
Էնպես էլ լոխ մեր սվիստոկները
Նրանց պես ուրախ դո՛ռա են տալիս։
Հազար մի դուդուկ տված ձեն-ձենի,
Հենց ա մեր նախրի պառանչը լինի...
Դե՛, մնաս բարով, սիրելի Թյո՛ւնի,
Պարովագիրս, խնդրեմ ընդունի.
Էս ա վերջացրի իմ աշխատանքը,
Բարով ստանաս դու իմ նամակը։

1912, Թիֆլիս

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ*

I

Երկու եղբայրներ՝ Օ՛հանն ու Թյունին
Ապրում են հիմա նավթահանքերում.
Կառուցման տենդոտ այս մեծ օրերին
Նրանք երկուսն էլ հանել են անուն։

Օհանը գյուղում երբեմն դամբչի՝
Հիմա դարձել է հմուտ մի դարբին.
Թյունին Բուխտայո՛ւմ անվան Ռլյիչի՝
Օրինակելի մի հարվածային։

Երկուսն էլ քայլած պադպոլի ճամփով
Քանի՛ անգամ են նետվել նրանք բանտ.
Օհանն անգամ իսկ քշվել է Տամբո՛վ,
«Բաիլո՛ւմ» նստել Թյունին անընդհատ։

Եվ այժմ նրանք երկուսով բովված
Հեղափոխության զտող կրակում՝
Դարձել են մի-մի հերոսներ գովված
Նավթահանքերի բանվոր աշխարքում։

Երկուսով նրանք համեստ ու խոհուն,
Ինչ գլուխը քարշ պտղատու ծառեր,
Մատաղ սերնդին կանաչ ու ցողուն,
Ասել, ունին դեռ ոսկի շա՛տ բառեր...

II

Պատահում է, որ ազատ օրերին,
Երկու եղբայրներ իրար են գալիս.

Հիշում են անցյալն իր մուժ օրերով,
Կարծես թե իրար հաշիվ են տալիս։

Օհանն ասում է.— Գիտե՞ս, Թյո՛ւնի ջան,
Թեկուզ իմ յա՛շը վաթսունհինգ դառավ,
Բայց ա՛հտ եմ արել իմ զնդանի տակ
Մեռնեմ, ոնց որ մի յաբու ձի, պառավ։

Բա՛զի մարդու պես, որ կորուստ ունի,
Մինչև չի՛ գտնում՝ չի հանգստանում,
Էնպես էլ ե՛ս եմ, մինչև որ ձեռքիս
Գործը չեմ պրծնում, քունս չի՛ տանում։

Էշխի եմ գալիս ու ջահելի պես
Ավելի սրտով վեր թակում սալին.
Ուզում եմ նոր կյանքը կռանեմ այնպես՝
Որ էլ հետ չգա զուլումն անցյալի։

Էն մութ անցյալի խանի՛ ու բյագի՛,
Որ բահա՛մ եկավ մեր Թալիշ գյուղում.
Հիմա մա՛տաղ եմ էս օրվան, թա՛-քի՛
Նա հաստատ մնա Սավետի հողում...

III

Թյունին էլ եղբոր էս մասլահաթին
Պատասխանում է նույնպես իր հերթին.
— Հա՛, Օհան ախպեր, ախպորս ասեմ,
Շատ թույն խմեցինք անցյալի թասեն...

Էն տարիք գնան ու հետ չդառնան...
Տունը միշտ տկլոր, դատարկ մեր մառան.
Մուկն ու ժորեխը, կամ եղաշտ տարին
Մեր ալվան արտեր ո՞նց մաղբուն արի՛ն...

Իսկ երբ ջիբերս մտնում էր մեկուց
Մի քանի գրոշ կամ շահի բիստի՝

* 1930 թվի աշնան Ստեփանակերտի կուսդպրոցի աշակերտությունը և ուսուցչությունը պատվիս կազմակերպած երեկույթում տվեց ինձ սոցիալական մի պատվեր՝ ավարտել «Քաղաքը» կիսավարտ պոեմս՝ 1912 թվին գրած, հաճույքով կատարում եմ հայրենակիցների սոցիալական պատվերը։

Էն էլ յա քյոխվեն, յա՛ Թալիշ բեգը
Եկում էր ձեռքնես, լա՛փ անում չի՛ստի։

Հիմա փառք լինի Սավետի կարգին,
Զավոդը մերը, հողը գյուղացուն.
Մենք տերը ազատ. մեր աշխատանքի,
Մոհտաջ չենք մնում հարամու հացին։

Շա՛տ ես աշխատում՝ տալիս են ավել,
Ծույլ-քոռամա՛լը մեր մեջ չունի տեղ.
Լա՛վ ես աշխատում—ուտում ես լա՛վ էլ,
Հալալությունն է տիրում ամեն տեղ։

Հիմա փա՛ռք լինի Սավետի կարգին,
Է՛լ ազգամիջյան կռիվներ չկան.
Ամենքս լծված Կոմունի կառքին՝
Զգում ենք գեպի մեր լավ ապագան։

Խոխեքը ձրի ուսում են առնում.
Բե՛զար ես՝ գնա հանգստյան տունը.
Թե պառավեցիր՝ ոտվից չես մեռնում,
Քեզ համար բա՛ց է սոբեզի գուռը։

Գեղին՝ տրակտոր. բանվորին՝ ավտո,
Ի՞նչ լավ է ասել Լենինն խմատուն.
Դեռ հըլա գու տես սրանից հետո
Ո՞նց ենք շինելու Սոցիալիզմի տուն...

Մեկ էլ, Օհան ջան, ա՛խպորս ասեմ,
Մի բան չեմ առնում մինչև այսօր էլ.
Երբ միտս ա գալիս ցեխ ու բաթքազում
Ձորի մեջ կորած մեր Թալիշ գյուղը՝
Հե՛նց եմ գիտում թա ջահելս եմ թազում,
Ցերիվ ա գալիս քյալլիս հըզուզը։

Ձեթի հրազի ու քոռ լամպի տեղ
Շատով կժզատ Իլյիչի լամպան.

Էս ուրախ օրին, ասում են, անգամ
Էշխի ա եկել մեր Քյո՛ռքին անբան։

Հիմա մեր գյուղում յավաշ հա յավաշ
Տափի տակերից տներ են ծնվում.
Ու մեր նախրապան Վանին հնամաշ
Ջա՛քմա ու ֆրենչ ա հիմա հագնում։

Թառթառը շուտով լույսերի աղբյուր,
Գործարան ունինք Եվլախում գտիչ.
Սիրտս թնդում ա, ա՛յ Օ՛հան ախպեր,
Մեր էս օրերի նվաճումներից։

IV

Ապա անցնում են երկու եղբայրներ,
Իրենց հին պաղպղ աշխատանքներին.
Թերթում են անցած օրերի գրքեր,
Ու խանդով հիշում գործերն անցյալի։

— Օ՛հան, միտդ ա՞,— ասում է Թյունին,—
Ո՞նց էր Շահումյան շաբաշից հետո
Վերստեր չափչփում, ցեխին, անձրևին
Քարոզի գալիս մեր զավոդ ոտով։

Հե՛յ-հա Ստեփա՛ն... ես չեմ մոռացել
Ամեն մի խոսքը նրա էն ճառի.
Ոսկի պես խոսքե՛ր... է՛ն որ ասում էր,—
Ջկա՛ երևույթ առանց պատճառի։

Ասում էր.— Գիտե՛ք, գիտե՛ք ընկերներ,
Կենցա՛ղն է բերում մեզ գիտակցության...
Եվ պատմությունը մինչև այսօր էլ
Դասակարգերի կռիվ է միայն...

Բա՛ բանանցեցի Միրուքը. Մելիք,—
Գյուղ ու քաղաքի դերվիշն էն շրջիկ.

Նրա թունավոր սուր նշտարներից
Դաշնակ ու հնչակ փախս էին տալիս։

— Հա՛, հա՛, Թյո՛ւնի ջան, լա՛վ. ագիտատոր
Տղերք ունեցանք... Ալյո՛շան, Ալին,
Բոգդան Գնունի, Ա՛վել, Ապո՛ստոլն,
Սուրեն Սպանդար ու Կեցխովելին...

V

Այսպես երկուսով խոսում են, դատում,
Ու վերջը գալիս այսպիսի հանգի.
Որ ժամանակ է իրենց գնալ տուն,
Հիմնել մի կոլխոզ՝ վուշ ու բամբակի։

— Ա՛խպորս ասեմ, խոսում է Օհան,
Բաքվին հայալ ա մեր երսուն տարին.
Գյուղը կա՛նչում ա, հիմա էլ նրան
Պե՛տք մենք լինենք միշտ հավատարիմ։

Մեր Ջրաբերդի հանդ ու գյուղերին—
Առատ իր ջրով, պարարտ իր հողով—
Կոմունիստ ա պետք... Դե՛, նրանց սերին
Վախտ ա դառնանք գյուղ—տնով ու տեղով։

Կուլակների դեմ կռվելու գնանք,
Մեր փորձով լինենք ոըհաթին քյոմակ.
Գնա՛նք, Թյո՛ւնի ջան, գյուղն Թա՛լիշ
Մի քիչ էլ ապրենք, բա՛լամ, գանք չա՛լիշ...

1931—Դիֆլիս

ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՊՈԵՄ

(Նախերգանք)

— Ասա՛, պապիկ, խոսքդ հալոցք։
Այն ո՞ւմ համար և այն ինչո՞ւ
Կառուցեցին Պետրոպավլովսկ.

— Նրա համար, ա՛յ իմ մանչուկ,
Որ հալածեն ու կաշկանդեն
Մեր ազատ միտք, մեր հատու խոսք։

— Ապա պապիկ, ինչո՞ւ համար
Կառուցեցին այն պայտաձև
Ձմեռային պալատը սև։

— Նրա համար, ա՛յ իմ սիրուն,
Որ բանվորին պայտեն, լծեն,
Եվ գյուղացու ծծեն արյուն։

Այս շենքերը քանի՞ տարի
Եղել են սոսկ հենարաններ
Թիրտ ու դաժան դահիճների.

Այս շենքերը քանի՞ տարի
Եղել են լոկ նշանաբան
Բռնության ու ոճիրների։

* * *

Բայց տեսնում ես դու Նևայի
Լայն ափերի ազատատենչ
Գործարաններն ծխերի մեջ.

Դու տեսնո՞ւմ ես հորիզոնում
Ո՞նց են վառվել, ո՞նց խլրտում,
Դոմեննների հուրը անշեջ.

Կամ տեսնո՞ւմ ես Պուտիլովյան
Հազարավոր պահակների
Հաղթ դիրքերը շարքով անվերջ։

Նրանք էին, սիրուն զավակ,
Որ հենց իրենց ծխաններից
Երկար ու ձիգ թնդանոթով,

Մի օր ցասման հուր ժայթեցին
Խայտառակ այն հորդաներին—
Վախի բերին սև ամոթով։

Նրանք էին, որ ձուլեցին
Կուտակ—կուտակ ռումբ ու գնդակ,
Ցրին նրանց հրանյութով։

* * *

Հոկտեմբերին կարմիր, ալվան,
Էն որ շուրջդ կարմիր, բոսոր,
Էն որ բաղի բարն են քաղում,
Մենք էլ, որդի, ահա այսօր
Հաղթանակի, մեր զարթոնքի
Բարն ենք քաղում մեր նոր բաղում.
Դե՛, լսիր, թե ինչ կպատմեմ
Ես քո կայտառ, ես քո պայծառ
Պիոներյան մատաղ օրին.
Դե՛, լսի՛ր, թե մենք ի՞նչ պատիժ
Այդ ցեցերին տվինք մի օր
Կարմիր, ալվան Հոկտեմբերին։

Այսպես ահա ծերուկ պոետ
Ու հրածին պիոները
Խոսում էին իրարու հետ.
Մեկը կրծքին քնա՛ր արծաթ—
Արծաթ մազով,
Մյուսը՝ կարմիր կապած փողպատ
Ալ աթլասով։

ԻՍԱԿԻ

(Ֆրագմենտներ)

(ԱՌԱՋԻՆ ՖՐԱԳՄԵՆՏ)

Մարմարաշեն կուռ պատերով ու սյուներով հոլանի
Կանգնել է նա—գոռ Իսակին—ժանտ պահակը կրոնի.
Ամեն սյունը նրա տիտան՝ գրանիտե՛մի կոթող,
Ամեն ճակատ մետաղաձույլ հորիզեֆներ են դյութող։

Թե բարձրանաս նրա տանիք ու գմբեթը վերամբարձ՝
Կհպականաս, թե քանիսի՞ նյութել է նա մահ ու լաց.
Ու կսոսկաս ողջ էությամբ, ու կժայթքի սիրտդ թույն,
Թե իմանաս հիմնարկումի նրա եղեռն պատմություն։

Ասում են թե տեղը նրա հազար դարուց էլ առաջ
Ծանծաղուտի, ճահիճների եղել է վայր մի անանց.
Ու Պյոտրը ցար, խենթ ու խելառ, իր քմայքով ահարկու
Կամեցել է այստեղ դառնալ մեծ տաճարին հիմնարկու։

Անծայր երկրի ողջ ծայրերին տվել է խիստ հրաման,
Որ աշխատող ձեռք ուղարկի ամեն մի գյուղ ու ավան.
Ու թափվել են այստեղ ճորտեր, հիմք են փորում, հողը թաց,
Բայց ճահիճը թաց է ու թաց, երախը՝ լիճ, աչքը՝ բաց։

— Որ այդպես է, թող գերանը աչքդ հանի, անզգամ,
Ասում է ցար Պյոտրը համառ ու կատաղում այս անգամ.
Գերաններով անտառներ է սրի քաշում անխնա,
Բերում մխում հունը նրա, որ ճահիճը չորանա։

Բայց ճահիճը թաց է ու թաց՝, երախը լիճ մեծացած՝
Ջուրը եկել ու խեղդել է արանքները նրա բաց.

— Եթե, ճահիճ, քեզ դեռ քիչ են գերաններն անտառի,
Թող որկորդ հիմա փակեն ոսկորները մարդկային...

Ու մարդիկ են նորից փտում մինչև կոկորդ ջրի մեջ,
Ու այստեղ էլ շիրիմ գտնում հազարներով ջրահեղձ։

Ու գոցվում է աչքը ագահ ու ճահիճն է ցամաքել,
Չէ՞ որ այնքան դիակներ է նա կլանել ու հագել։

Օ՜, Իսակի, հիմքդ անտակ ու անհատակ երախով
Ամրացել է բանվոր մարդկանց արյան թանձր շաղախով.
Այժմ ձայնը նրանց ապյան, որպես նշան բողոքի,
Արձագանքով անգթերկրյան կսասանի քո հոգին։

Դրա համար դու օրեցօր իջնում ես խոր դեպի ցած*,
Երբ լսում ես անեծք ու լաց հազարների մահացած.
Դրա համար ես ասում եմ, պիտ խորտակվես դու անհետ,
Քեզ չի օգնի ոչ մի Պյոտր... ու կրոնն էլ նրա հետ...

ՊԵՏԲՈՊԱՎԼՈՎԱԿ

(ԵՐԿՐՈՐԴ ՏՐԱԳՄԵՆՏ)

Որպես մի բիծ սև անցյալի—ոճիրների կառափնատուն
Պաղ ջրերում լայն Նևայի դարանել է ոխը արտում.

Ու կանգնել է դահիճի պես Բաստիոնը բանտարկումի,
Ճակատին էլ ցցել մի նուր—նշանարան գլխատումի.
Կարծես լարված ձիգ աղեղից վեր խոյացող հսկա մի նետ,
Որ թռչում է դեպի երկինք ու ամպերում կորչում անհետ։

Ու հսկում է ժանդարմի պես աչքը հառած էն մյուս ափին,
Ուր Պալատն է ձմեռային—ցարերի որջն այն սարսափի.
Վա՜յ թե ազատ միտքը ճախրող խռովարկու ոգիների
Մութ արևին ժանդ ցարերի մի աղետ կամ փորձանք բերի։

* Իսակի տաճարի հիմքը կառուցված լինելով ճահիճների վրա, շնորհիվ շենքի հսկայական ծանրության օրեցօր իջնում է ցածն։ Ս. Հեղ.

Պետրոպավլովսկ, դու նման ես հսկա գանգի մութ գիշերին.
Քո փոս ընկած խոռոչներով, քո արնակալ հուր աչքերով.
Ամեն խուցդ քարի դագաղ, կամարահուպ մի դամբարան,
Ամեն սյունդ ժանդարմների ու ցարերի լոկ հենարան։

Այստեղ, քարե քո վանդակում կարոտ լույսի, ազատության
Թառամեցին ծաղկահասակ Չերնիշևսկի և Նալբանդյան.
Ու քանիսը խելագարված մոնչացին առյուծի պես,
Թույն ըմպեցին ու կախվեցին... ու մարվեցին ճրագի պես։

Եվ իզուր չէր, որ Ավրորան հենց առաջին ազատ օրին
Պատերիդ տուկ ճայթեց ռումբեր ու ոգջունեց Հոկտեմբերին։

Պետրոպավլովսկ,

Այդ խտացած մեր վրեժն էր ընդդեմ քո բյուր ոճիրների,
Այդ կուտակված մեր ցասումի մահագույժը դահիճներին։

ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏ

(ԵՐՐՈՐԴ ՏՐԱԳՄԵՆՏ)

Ձմեռային դու գոռ պալատ, որ ձգվել ես այդպես հպարտ,
Որ գիշատիչ բազեի պես թևերդ գորշ փռել ազատ՝
Քո փառքը չէ, որ պիտ երգեմ, ոչ էլ շուքդ ես գովերգեմ,
Այլ անցածդ ճանապարհը ահա պիտի նշավակեմ։
Անփառունակ, գոռոզ պալատ,
Քո ծոցում էլ թույն են շնչել քանի՜ դավեր, քանի՜ ոճիր
Մինչ որ վերջին շունչը փչեր Նիկոլայն տխմար վերջին.
Օ՜, և քանի՜ կորիճների հանել ես դու մահավճիռ,
Քանի՜ լուսե մտքի ջահեր հանգել են քո լոկ մի շնչից։
Նրանք, որոնք պատվով տարել դրոշը մեծ գաղափարի,
Նրանք, որոնք զոհեր շարել ազատության ճանապարհին։
Եվ Ռըլե՛և, և՛ Կախովսկի, և՛ Մուրավյով-Ապոստոլն այն,
Որոնք ընկան փտած թոկից հրապարակում լայն Սենատի,
Երբ Նիկոլայ առաջինը դարանակալ վագրի նման

Պատերիդ տակ մռնչալով դողը բռնած տվավ հրաման,
— Դեկտեմբերյան ցնդվածներին ի՛ կախաղան տանել դատի...
Ոճիրն չէր քո առաջին, Ռոմանների դու գարշ պալատ,
Բայց սա դարձավ փառքը վերջին քո տերերի նախկին անպարտ.
Երբ հիմքիդ տակ արյունաներկ սալերն անգամ գրանիտե
Մուրավյովի հետ միասին հառաչեցին ու ասացին.
— Դժբախտ երկիր, խեղճ Ռուսի՜ա, ուր կախելն իսկ կարգին չգիտեն...

Վերջին նախճիր ու ոճիրդ ոճիրների մեջ բյուրավոր
Այդ հինգ թիվն էր, դաժան պալատ, հունվար ինը—սոսկումի օր.
Երբ Նիկոլայ արյունարբուն երևեցավ պատշգամբիդ
Ու արնաշերտ մի գիծ թողեց—վերջին գիծը անցած ճամփիդ,
Երբ Պուտիլով հացի համար ոտքի ելավ... իսկ ցարն անգութ
Ցորենի տեղ «բոմբոստներին» արճիճների մաղեց կարկուտ...
Բայց և այդ նույն պատշգամբեն մաղթանքներով ճամփեց ռազմի
Բոլոր նրանց, որոնք ելան էն սև տարին պատերազմի։
Ոճիրների դու որջ պալատ, մի տեղ գնդակ, մյուս տեղ օրհնանք
Սրտումդ ահ ու ծոցիդ մահ... հիշատակիդ արգահատա՜նք։

*
* *

Այսպես ահա երեք ճիվաղ, երեք հրեշ ու բռնակալ
Ձեռք ու մեջքով հենակ-օղակ բորսան նեցուկ արած իրար՝
Մեկը Դրակոն, մյուսը Ցերբեր, իսկ երրորդը Աֆիոնի թույն,
Գիշեր-ցերեկ մահ են նյութել—մի համերաշխ երրորդություն—
Որ հանգցնեն խավար շնչով ինչքան լույս կար էն մեծ երկրում,
Ինչքան կրակ ազնիվ ու վեհ խռովարկու հուր սրտերում։
Ահա ինչու մեծ Նևայի մրմուռ ջրերն տխուր, վրդով
Թախծում են միշտ ու մրմնջում մեծ հանճարի էն մեծ սրտով,
Ահա ինչու նրա ափից ազատ երգով ու բերկրանքով
Պուտիլովը կրակ ժայթքեց հուր-աչքերիդ հոխորտանքով։
Եվ պալատը Ռոմանների, ուր տիրում էր մահ ու շիրիմ,
Այդ օրվանից դասակարգի դարձավ մուզեյն հավատարիմ.
Եվ պալատը, ուր թնդում էր կախաղանի դատավճիռ՝
Այսօր խրոխտ իր ճակատին կրում է հաղթ դրոշ կարմիր։

ՊՈՒՏԻԼՈՎԿԱ

(ՉՈՐԲՈՐԴ ՖՐԱԳՄԵՆՏ)

«Եվ հուրերի ու բույրերի
Միջից ծնվեց մի գործարան
Պուտիլովկա—կարմիր հսկա—
Կարմիր անուն տվին նրան»։

Հ. Հ.

Պուտիլովկա, կարմիր հսկա, որ գարուց անց մի կյանք ունես,
Ներ պոետից պրոլետարի ջերմ ողջույնս պիտ ընդունես.
Ողջույն անցած ճանապարհիդ—հազարների արնով ներկված,
Փառք ու պսակ հաղթ այսօրիդ, պոետների գովքում երգված.
Պետրոպավլովսկ, Իսակիի ու Պալատի դեմ հանդիման,
Ինչպես խրոխտ հին բոլշևիկ՝ կանգնել ես դու սարի նման.
Գիրկդ առել աշխատանքի հերոսներին հազարաշատ,
Ամեն մեկը մի-մի տիտան պողպատաձույլ, խիզախ, ուժատ։
Հեռվից խաղաղ քաղաք ես մի—վրադ շղարշ մշուշապատ,
Կարծես մի սար մոխիր հագած, կամ թե ձյունած մի անապատ.
Մինչ սրտիդ մեջ քանի՜ կռիվ, թաքնված հուր կա խլրտուն—
Աշխատավոր հաղթ բանակի, խենթ հողմերի մի պատմություն։
Ծխերիդ մեջ հուր ու ժխոր, հոնդում ես առյուծի պես,
Մշուշներդ էն Երեքին ծառացել են խեղդել կարծես.
Մոնչում են մարդ, մեքենա, մրցում են կիրք, պայքար ու տենչ,
Ո՞վ-ում արդյոք, պիտի հաղթի այս ահռելի քաոսի մեջ։
Երկնած ամպե՞րդ են որոտում, թե՞ կայծակներ մեջդ ճայթում,
Կապար-երկի՞նքդ է այն պայթում, հրաբուխնե՞րդ լավա ժայթում,
Նոգիների օձի փշրո՞ց, հաղթ մուրճերի ծանր տնքո՞ց,
Թե՞ բակերումդ գետի վշշոց, հեղեղների թափ ու շմփոց...
— Այդ ցասումի ու զայրույթի քո լեզուն է այդպես կերտում
Երկաթների կուռ բարբառով վրեժ ու ոխ քո մեծ սրտում...
Ու ճնշումը էն բռնակալ ժանտ Երեքի էլ շտարար,
Եվ մի գիշեր բոցերիդ մեջ երեսդ վառ ալավ-ալա՜վ՝
Ռումբեր վառած, կամքդ լարած կրակների միջից ելար.
Եվ մռնչաց ահազանգիդ շեփորը հաղթ ցնցող աշխարհ,
Ու ռումբերի սիմֆոնի մեջ ծնվեց մի վեհ սքանչ պոեմ.
Հե՜յ ընկերներ, հիմա թողեք իմ երգերում նրան գովեմ։

ԱՅՆ ԳԻՇԵՐԻՆ

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՖՐԱԳՄԵՆՏ)

Հրացաններն այն գիշերին երգում էին՝ ազատությո՛ւն...
Նրանց երգից խրոխտ ու հաղթ Պի՛տերն էր ողջ զնգում, թնդում,
Գնդացիրները պատնեշներին կազմել էին մի սիմֆոնի՛,
— Ուռա՛, ուռա՛... էին կանչում, ոնց զորքերը կարմիր տոնին։

Մի տեղ ռումբերն էին գրոհում, այլ տեղ ճառում էր մորտի՛րան,
Ճարճատում են փողոցներում խարույկները ալ-հուրհրրան.
Եվ այս երգի հեղեղի մեջ Ավրո՛րան էր, որպես սոլիստ
«Ой ухнем»-ն* իր վեր քաշում թավիշ բասով, որոտալի։

Սիրտ են առել անասելի ճարտիկները այս երգերից,
Ու է՛լ թափով ծառանում են թշնամու դեմ ամեն տեղից.
— Խորհուրդները հե՛յ տալի՛ս ես, թե՞ դեռ էլի՛ չարդ ես ուզում,—
Ասում են ու էլի նորից երգ ու ռումբով առաջ վազում...

Այսպես ահա գնդացիրներ, թնդանոթ ու հազար ռումբեր
Հյուսել էին մի սիմֆոնի, անունը հաղթ ալ Հոկտեմբեր.
Այսպես ահա հազար շուրթեր երգում էին ի մի՛ բերան,՝
— Խորհուրդներին՝ իշխանություն, բանվորներին՝ դիկտատուրա։

Եվ իժերը, որ կծկվել են որոտներից այս գոռ երգի
Ջմեռային պալատի մեջ կսպասեին կռվի ելքին...
Մինչ Կերենսկին սահմանն անցած փախչում է դեռ դողն ի բերան։
Հոհոռում են նրա հետքից գնդացիրներն ու Ավրո՛րան։

Այն գիշերին ոսկի մազով աշխարհ եկավ մի պիոներ,
Արևածածկ կարմիր խաստով, անունն իր ա՛լ Հոկտեմբեր։—

Մոսկվա, Կրեմլի հիվանդանոց—1932

---

* «Հե՛յ ուխնեմ»-ը հռչակված ժողովրդական երգ է։ Հ. Հ.

ԼԵՆԻՆԳՐԱԴ

(ՎԵՑԵՐՈՐԴ ՖՐԱԳՄԵՆՏ)

I

Լենին-Քաղաք,
Որ մեր երկրի հեղաշրջման ընդվզումի ես մարմնացում,
Ուր այս երկրի պատմությունք աճել, սնվել է քո ծոցում՝
Ունի՞ս արդյոք կանալ, փողոց, որ արյունով չլինի ներկված,
Ունի՞ս անուն մի հերոսի, որ չհիշի այսօր ներկադ։

Միակ քաղաքն այս աշխարհում, ուր ամենից, ամենից շատ
Տեսել ես հար ու անքնդհատ կռիվ, պայքար ու բարիկադ.
Օ՜, և որքա՜ն թույն ես ըմպել տիրող օրենք ու կարգերից —
Ջոհ անկումի և զեխության, ոճիրների ու կրքերի։

Բայց և ինչպե՜ս մնացել ես անխոցելի, անպարտի պես,
Եվ քո առաջ խոնարհվում է այսօր աշխարհն մի մարդու պես.
Ա՜յ իմ ջահել գեղեցկուհի, մնացել ես անապական,
Եվ քո խաղաղ վեհության մեջ—որպես գալիք մեր ապագան։

Դրա՜ համար չափչփում եմ փողոցներդ խենթի նման
Ու չեմ գտնում իմ կարոտին, զմայլանքին ո՜չ մի սահման.
Ագահի պես ծծում եմ ես օդդ խոնավ ու ներս տանում,
Կարծես թույնից նիկոտինի արբենում եմ—չեմ կշտանում։

Ի՞նչ կա քո մեջ, Լենին-Քաղաք, այդ ի՞նչ հմայք ու թույր ունես,
Որ գեղատես աղջկա պես, երբ նայում ինձ—փայլում եմ ես.
Կա մի չքնաղ խոր վեհություն լուռ Նևայիդ ոլորտներում,
Խորհրդավոր գրավչություն քո համակարգ փողոցներում։

Կախարդիչ են գիշերներդ և՛ մայիսին, և՛ հունիսին,—
Մի-մի փերի սքանչելի—լույս շղարշում արշալույսի.
Ոչ արև կա, ոչ էլ լուսին, բայց և լույսի մի ջերմ կարոտ
Ջգում է քեզ և չգիտես, գիշե՞ր է այս, թե առավոտ։

II

Լենին-Քաղաք,
Ես խենթի պես շափշփում եմ փողոցներդ ազահարար,
Պրոսպեկտներդ երկարաձիգ, սկվերներդ վանդակապատ.
Պալատներիդ ճակատներին պահակ-սյուներ կան հոլանի,
Որոնք ասես հսկա բամբիռ, ձիգ քնարի լարեր լինին։

Հրեն քո մեծ ու լայնարձակ աղմկալի Զնամենկան։
Այստեղ քանի՞ իմաստ խորին, վառ հուշերի դրվագներ կան.
Դիմյանն այստեղ ցարի անունն քարին գրեց—տապանագիր,
Ծաղրի հանեց Պուգալոյին*, որ իմանա ամբողջ երկիր։

Ազատության կոչ ավետեց երկրին այստեղ Կարպը կազակ,
Երբ հասցրեց լիրբ սպայի պիղծ կզակին հնչուն ապտակ.
Ազդանշան էր դա՝ մի նոր, թե դիմանալ այս ռեժիմին
Էլ չի՛ կարող ոչ մի բանվոր, սալդաթ, անգամ կազակ հիմի։

Եվ Պո՛ւգալոն, որ կքված էր իրա պոչատ ավանակին,
Ինքն էլ խոշոր մի ավանակ—ցնցվեց դաղող էն ապտակից,
Բայց և նորից արձանացավ ու քարացավ տեղն ու տեղին.
Չէ՞ որ սա ծանր մի ապտակ էր Ռոմանների ամբողջ ցեղին։

III

Փետրվարից մինչ հոկտեմբեր զգում էինք մենք մեզ այնպես,
Ինչպես իր հոր տանից քշված մի խորթ զավակ, տնանկի պես.
Ինչպես հողից ու արմատից տեղհան արած կանաչած ծառ,
Ինչպես ամպով ծածկված արև, որ զրկվել է լույսից պայծառ։

Բայց, դե, գիտես, բանվոր ախպեր, Հոկտեմբերի հալալ զավակ,
Որ բոլշևիկն անկարող է հանգիստ մնալ զուսպ ու հավաք,
Մինչ չքանդի նա իր շղթան, մինչ բռնությունը չդադարի,
Օր ու գիշեր կպայքարի, մինչ որ կամքն իր կատարի։

* Պուգալո—խրտվիլակ, փորագրած էպիգրամ Ալեքսանդր երրորդի արձանի պատվանդանին Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։ Ս. Հեկ.

Ու մի օր էլ Պուտիլովը հազարաշատ մարտիկներով
Գրկեց, ձուլվեց Օբուխովին ու Նարվային կուռ շարքերով.
Ու չքացավ Պետրոգրադը Հոկտեմբերյան մի գիշերում...
(Մնացել է այս անունը մեզի Կերենսկու լոկ հուշերում)։

Գնդակը չէր հրաշք գործող այդ գիշերին Հոկտեմբերի,
Մ՛չ էլ սվինն ու գնդացիր, ոչ որոտը գոռ ռումբերի.
Հաղթանակեց այդ գիշերին երկրի կամքը, երկրի պոռթկում,
Որ խտացել, կուտակվել էր բանվոր մարդկանց ցասկոտ սրտում։

IV

Լենինգրադի փողոցներով ալ ու շքեղ, կարմիր ու վառ
Քայլում եմ ես ամենայն օր, որպես դյութված մի սիրահար.
Եվ որ կողմից անցնում եմ ես—այնտեղ մարդկանց ծփում է ծով,
Եվ ուր նայում—համակվում եմ համակրանքի խոր ակնածով։

Զգում եմ, որ թեև այստեղ չեմ մասնակցել Հոկտեմբերին,
Բայց իմ հոգին կռիվ տենչող՝ մասնակցել է այդ մեծ օրին.
Զգում եմ, որ թեև այստեղ ես չեմ թափել կաթիլ արյուն,
Բայց կյանքումս նրա համար այրել եմ ողջ իմ խանդ, ավյուն։

Հրեն անցավ կոմսոմոլկան կաս ու կարմիր թաշկինակով,
Շտապում է նա գործարան, կասես վառված հուր-կրակով.
Կերևի որ այսօր պիտի նրանք ձուլեն Դնեպրոստրոյին
Հարյուր հազար կիլովատի քայլերգ զնգող մի մեծ տուրբին։

Դյութել է ինձ մուգ բրոնզից կարծես կերտած էն տիտանը,
Օ՛, գիտեմ, նա հանգիստ չունի թե՛ զավոդում, թե՛ իր տանը.
Նոր գյուտեր է նա հորինում, որ երկիրըն ազատ շնչե,
Հոկտեմբերի ճակատը վեհ այսպես ծածկում ծաղկեփնջով։

Կաշվե բաճկոն ուսին քաշած ահա առույգ մի ծերունի,
Խորշոմներով դեմքը նախշած, ի՞նչ էլ շեշտված գծեր ունի.
Ես կարդում եմ նրա դեմքին պոեմը այն կռիվների,
Որ վարել է նա անկասկած շատերի հետ Հոկտեմբերին։

Լենի՜ն-քաղաք, սիրուն քաղաք, սիրում եմ քեզ խենթի նման,
Ու չեմ գտնում իմ կարոտին, զմայլանքի ոչ մի սահման.
Սիրում եմ քեզ ո՛չ թե այնպես, որ պերճ ես դու կամ շքեղ ես,
Սիրում եմ քեզ նրա համար, որ անունով ամեն տեղ ես։

Նրա համար,-որ քո գրկում պայքարել են հերոս մարդիկ՝
Ե՛վ Դեկաբրիստ, Ռաշնոշինեց, Նարոդովոլց ու Բայլշևիկ,
Կարակոզով ու Նեչան, Ալեքսեև ու Խալտուրին,
Պերովսկայա ու Ժելյաբով, Ա. Ուլյանով, մեծն Լենին։

Նրա համար, որ ստեղծել, կերտել ես մեծ դասի համար
Մի սքանչելի, վսեմ պոեմ, մեջը շարած հակինթ, գոհար,
Որ ձուլվել ես քո մեծափառ Նևայի հետ ու մեծացել,
Ու փարվելով այս նոր կյանքին, է՛լ ավելի դու վեհացել։

... Որ ճակատին քո տիտանի
Վիճակվել է դրած տեսնել բանվորական ողջ աշխարհի
Ամենամեծ հաղթ Սիմֆոնին...

(ՎԵՐՋԱԲԱՆ)

Գիտները իմ հրածին հիմա դարձել է կամամոլ,
Հանդիպեցի մեծ քաղաքում ես նրա հետ մի պայծառ օր.
Դեմքը ծածկած ազիամանով—տղամարդ է հիմա դարձել,
Աչքերիցը նրա ջահել ցայտում էին կարծես կայծեր։

Տասն եւչորս տարի անցած նայեմ տասնվեց դեմքին,
Վայելչակազմ իր հասակով նման է պերճ կիպարիսի.
Հիացմունքով հարց եմ տալիս, ո՞ւր ես, քաջաս, էքսան տարի,
Պատմի՛ր ինչ պատահեց ծեր—պատմիր քո շարք տարին։

— Սովորելու ես գնացի,— ասում է նա լուրջ ու խանդաղ,—
Առանց ուսման հիմա մնալ չի կարելի մեր օրերում.
Կոմունիստ ես թե կամամոլ, պիտ սովորես—ձգտես առաջ,
Թե չէ կյանքից ետ կմնաս, ոնց որ եղը ձիու առաջ։

— Ցերեկները աշխատանքի եմ գնացել մեր գործարան,
Գիշերները խմբերի հետ հաճախել եմ համալսարան.
Սովորել եմ, հե՜ պապի ջան, թե հիմա ո՞նց, ինչի՞ վրա,
Պիտի դաղենք մեր թշնամուն ու ջախջախենք գանգը նրա։

Սովորել եմ պողպատի պես լինել ամուր ու հաստատուն,
Չէ՞ որ այսօր կառուցում ենք մեր մեծ դասի սեփական տուն.
Սովորել եմ հալածել ես ամեն տեսակ պորտաբույծի—
Զոհել նրանց իմ խանդավառ հուր—տեմպերի կուռ հաբվածին։

Սովորել եմ ալմազի պես լինել կարծր, անխոցելի—
Կրակ նետեն, չեմ փշրվի, ցեխի՞ մեջ իսկ—փայլ գոհարի.
Այսպես ահա խորհուրդ, իմաստ մենք տվել ենք մեր նոր կյանքին,
Ու թռչում ենք թևին նստած այսօրվա մեր աշխատանքի։

Ու կանգնել ենք պահակի պես մեծ գալիքի էն կուռ շեմքին...
Պա՛պիկ, հիմա դու կարող ես հանգիստ մեռնել իմ հաղթ ձեռքին.
Չէ՞ որ մեզ պես արթուն, վստահ սերունդ ունես ջահելների,
Կառուցանող ու խանդավառ գլուխ թանցած միլիոնների...

ԹԻՖԼԻՍ

(ԷՊՈՊԵԱ)

I

Օ, Թիֆլիս սիրուն, օջախ հարազատ, երկրորդ հայրենիք.
Երբ ոտքս դրի առաջին անգամ հողդ գեղանի՝
Ինձ ողջույն տվեց ղողանջն ուրախ ձիաքարշերիդ,
Եվ հիացք բերող թռիչքը ճարպիկ կանդուկտորներիդ։

Ես այն ժամանակ մազերս քամուն տվող մի ջահել,
Լայնեզր ֆետրի գլխարկը քաշած՝ գլխիս սնահեր՝
Անհո՛գ, երազո՛ւն. սև կրեպդիշին շարփով սևաթույր՝
Փողոցներդդ մեջ կտաբածեի ջահելության բույր։

Աղմկալից էր ամեն ինչ այնտեղ—փողոցն ու շուկա՛ն—
Եվ կայտառ, զվարթ թաբախը գլխին կինտոն իսկ անգամ,
Մեծն Ադամյան այստեղ էր,— բեմից առաջին անգամ,
Ներշնչեց իմ մեջ ոգին ճշմարտի և գեղեցկության։

Օ՜ իմ հայրենիք խլրտումների, ես չե՛մ մոռանալ,
Թե ինչպես մի օր դասի ժամանակ Լադոն* էն խիզախ
Դաշույնը մխեց դեկան էկզարխի սիրտը բռնակալ,
Այդպիսով ուզեց բուրսայից վանել ստրկության վախ։

Ես այն ժամանակ բուրսային մոտիկ դեղատան բանվոր—
Ուր ներքին հարկում սրվակներ էի լվանում ողջ օր՝
Մափահարեցի Լադոյին հերոս իմ մութ նկուղում,
Ու հանդուգն միտք հղացավ անգամ իմ խենթ ուղեղում։

---

* 1886 թվին Թիֆլիսի սեմինարիայում ուսանող Լադո Լադիձեն դաշույնով սպանեց Բուրսայի լեկտոր մետրոպոլիտ Ջուզնովսկուն, նրա ազգատյաց քաղաքականության համար։ Սա Թիֆլիսի անդրանիկ, հեղափոխական ահաբեկիչ ակտն էր վրաց նարոդովոլցիների կողմից։ Ս. հեղ.

Մտածում էի... «Չվառե՞մ արդյոք դեղատունը ողջ,
Ու վերջ տամ այսպես հարստությանը կեղեքիչ տիրոջ,
Չէ՞ որ ես ունեմ գլխիս սև գլխարկ անարխիստների,
Եվ վիզս կապած փրուփռա՜ն վզնոց կրեպդիշինի...»։

Ու այդ օրից էր, որ իմ պատանյակ սիրտը խլրտուն
Ապրեց մի անուշ, մի լավ զգացմունք... կարծես թե Լադոն—
Դա իմ վրեժն էր, որ լուծեց մահով դաժան ռեկտորի...
Չէ՞ որ ես դպրոցից քշված նման զոհ էի։

II

Ու երկրորդ անգամ, իմ սիրուն Թիֆլիս, ես գիրկդ ընկա—
Ծուցարարների հոծ մի բազմություն եկել էր շուկա*.
Հանկարծ անվեհեր Առաքելն ընկեր—դեպոյի բանվոր—
Հանեց գրպանից մի կարմիր փաթեթ—շիլայի կտոր.

Կապեց այն ծայրից հաստ ու հաստատուն իր գավազանի
Ու օդը հանեց մոտիկ ոստիկան Գլեբով գազանի.
Առաջին անգամ Թիֆլիսը տեսավ դրոշակ կարմիր,
Ու ծեր բանվորն էլ առաջին անգամ մեր դրոշակակիր։

Եվ դրոշն օդում դեռ նոր էր փռվել բա՜րձր ու հպա՜րտ,
Երբ պայթեց հանկարծ համբողջ շուկայում մարսելյոզը հաղթ.
Վազեց ոստիկանն, ճեղքեց շարքերը դրոշը խլելու՝
Վարպետը սակայն չկորցրեց իրեն՝ ելավ կռվելու։

Հաստ գավազանի էն փշոտ ծայրով այնպե՛ս հարվածեց
Իր ախոյանին, որ ոստիկանի գանգը ճարճատեց...
Այսպես Թիֆլիսը առաջին անգամ մտավ պայքարի
Արյան հոսանքի՛ ու բռնության դեմ Նիկոլա ցարի։

Հե՜յ, տոն է եղել ամեն մի օրը վառվռուն կյանքիս
Ու չեմ իմացել ինչպես եմ հասել ոսկի հասակիս.
Հե՜յ, տոն էր օրը, երբ ոստիկանն ու ժանդարմը ցարի
Ինն հարյուր թվին մեր դեմ կատաղի ելան պայքարի։

---

* Սալդատսկի նախկին կոչեցյալ բազարը։ Ս. Հ.

III

Երրորդ անգամին սիրտս հրդեհեց, վառեց իմ արյուն
Անդրանիկ երթի փոթորիկը խենթ Ռուսթավելիում.
Կամոն լեգենդար բազմել էր հաստատ զույգ հաղթ ուսերի—
Իրեն ուղեկցող հազարների մեջ խոռում էր—ճառո՜ւմ...

Երթը կանգ առավ Գալիցինի գորշ պալատի դիմաց,
Ուր Կամոն օդում ձեռքերը ճոճում, աղաղակում էր.
— Չե՛ս մարսիլ, պալաչ, հայ դպրոցների կայանքը խլած...
Կոչում էր ցասկոտ բռունցքը սեղմած Կամոն մեր ընկեր։

— Խլածդ մի օր բրկիդ կնստի ոսկորի նման,
Թալանդ, թշվա՛ռ, քեզ թույն կդառնա մահ ու գերեզման...
Դպրոցից քշած հայ մանուկների աչքի ապառաստաք
Գնդակի հեղեղ կդառնա, ճիվա՛ղ, որ չամփրի քո կուրծք։

Ու հազարավոր մարտիկների մեջ զգացի այդ օր,
Որ ինձնից աճում, կերտվում է այստեղ պայքարի զինվոր.
Որ ես մի ալիքն այն մեծ հոսանքի՝ կործանող թափով.
Որին տարերքը առաջ է մղում ճիչ ու սարսափով։

Մեծ երախտիքով ու ակնածությամբ հիշում եմ հիմի
Իմ սիրուն Թիֆլիս, ինն հարյուր երեք թվին իր գրոհով.
Երբ բիրտ կոզակի մաթրախը կաշվին գաղեց մեջքն իմ,
Թավալեց գետին ու կոխով անցավ կրծքիս վրայով։

Հե՜յ, այդ վեհ օրից կուտակվեց սրտումս թույնը մաղձային,
Վրեժն անողոք—գազաններն դեմ... և հենց այդ օրից
Գրեցի խիզախ երգն իմ անդրանիկ—«Ամբոխն իմ աչքերում»...
Բայց ցենզորը «քաջ» զամբյուղ նետեց իմ առաջին գրքույր։

IV

Ես չեմ պարծենում, խոստովանում եմ լոկ համեստորեն.
Որ Դումայի տակ մեծ գործադուլի մեծ նախօրյակին՝
Կարմիր հինգ թվին զինվորի սվին երբ թնս խածեց՝
Այդ օրից իմ մեջ բողոքի, ցասման մի վեհ ծագեց։

— Թևիս արյունը թող հետագայում դառնա հոսող գետ,
Եվ ձուլվի այդ օր մյուս ընկերների թափված արյան հետ,
Ես պիտի դառնամ նրա փողհարն իր մարտիկներով,
Նրա մունետիկն շեփորս ծաղկած կարմիր լենթերով...

Օ՛, Թիֆլիս սիրուն, ուր աճել է պերճ հասակս գարուն,
Ուր ջահել արյանս ամեն մի ծփանք ցայտել է եռուն,
Ինձ համար դու միշտ եղե՛լ ես ծնող. հաբազատ նանիկ,
Ընկեր սիրելի, ուսուցիչ բարի, կավիս հայրենիք։

Ես չեմ պարծենում, խոստովանում եմ միայն հիացքով,
Որ Շահումյանի ու Միխայի հետ այստեղ հրճվանքով
Գործել եմ և ես գետնահարկերում... նրանց արյան հետ
Փոթորկող, անհաշտ ծփել է և՛ իմ արյունը պոետ։

Կայծակ Կամոյի քաջագործությանց հմայքների տակ
Վառվել է և՛ իմ բանաստեղծական խարույկի կրակ.
Ու դուրս է ժայթքե՛լ լավա առ լավա հրաբուխի նման
«Հեղափոխություն», «Նահատակներքդ», «Մեռան—չկրան...»։

V

Ես չեմ պարծենում, բայց համեստորեն խոստովանում եմ,
Որ իմ մարտական «Մե՛կ էլ, մե՛կ էլը» արտասանել եմ
Միտինգի ժամին Նախալովկայի մեծ հրապարակում,
Ինքս պաշարված լրտեսների հոծ ոհմակ-օղակում։

Իմ ընկերները դեպոյից եկած, գործարաններից,
Իրենց մեջ առած հույզերով ծփուն իրենց պոետին՝
Ծափահարել են, խրախուսել են ինձ սրտի խորքերից
Ու զգացել եմ, որ մեջքով ամուր հենված եմ պատին։

Իմ ընկերները միտինգի եկած գետնահարկերից
Խոսել են, ճառել ահռելի ձայնով փրփուր շուրթերին.
Թե՝ «Նիկոլ-ցարի մանիֆեստներին մենք չենք հավատում,
Կորչե՛ն խոստումներ, կեցցե՛ հինգ թվի հեղափոխություն...»

Հե՜յ սիրուն էր մեր պայքարը հզոր, հզոր ահռելի՜,
Ոստիկանության, լրտեսների դեմ, ու ժանդարմների.
Հրճվանք մեզ համար, այլ ո՜չ գալարումն խոլ երկունքների.
Հարսանիք ուրախ, կարկաչուն աղբյուր հնչուն երգերի։

Ուր ամեն մեկը մեզնից—մուրճ ու սալ, զա՜րկ ու կաղապար,
Որ գիտեր ձուլել, կերտել ու կռել միտք ու գաղափար...
Ու ես չիմացա, ո՞նց անցավ տոնը պայքարող կյանքիս,
Կամ ինչպե՞ս հասա վաթսունյոթ գարնան ոսկի հասակիս։

VI

Ես չեմ պարծենում, հիշում եմ միայն այն փունջը շքեղ,
Որոնց հետ ինձ էլ վիճակվեց ծաղկել, բուրել միատեղ.
Ահա Թիֆլիսն արծվի աչքերով, խոհուն ճակատով,
Հեղափոխական գրոհների մեջ, գիտե՞ք... մի հա՜տ էր.
— Այո՜, մի հա՜տ էր։

Եվ Ցուլուկիձե Սա՜շան անձնվեր, Սա՜շան անձնվեր,
Որ մոմի նման թոքախտից դաժան վառվում, հալվում էր...
Տիտանի էր մի... ու «Բրձոլայի» համարը վերջին
Ձեռքի մեջ մեռավ, որպես խմբագիր վերջին իր շնչին—
— Մահու իր շնչին։

Եվ Սերգոն ազնիվ և Սերգոն արծիվ հեղափոխական՝
Կայծակի խոսքով, խանդ ու ավյունի աղբյուր էր միայն,
Հե՜յ, ով ըմպել է, նա տաքացել է, երբ նրա շուրթից
Ուրա՜-խուրա՜ ցայտել են բոցեղեն կայծեր—կարմիր ու հուռթի
— Կարմիր ու հուռթի։

Անցել են արդեն տասնյակ տարիներ, ժամանակ ո՜րքան,
Հիմա պատկերել չեմ կարող անգամ օրս երեկվան.
Օրս, որ կանցներ արագ ու պայծառ արևի նման,
Երբ այրվում էինք թիթեռների պես էշխիցը նրա,
Լույսիցը նրա։

Օ՜, չքնաղ Թիֆլիս, հեղափոխական, իմ ծնող զվարթ,
Որ ինձ տվել ես այնքան կարմիր կաթ, այնքան կարմիր վարդ,
Շաղոտ շիթերիդ սնդող հյութով մինչ հասակս ծեր
Քո կրծքին փարված ամրացել եմ ես, աճել, մեծացել։

Ու դրա համար ես չեմ էլ հիշում, ո՞նց անցա կյանքիս
Այսօրվա ուրախ վաթսունյոթ գարունն ոսկի հասակիս.
Ու դրա համար քեզ պատիվ, Թիֆլի՜ս, քո այն զավակից,
Որ բյուր շարքերիդ հեղափոխական եզավ զինակից։

1933, Թիֆլիս

ԿԱՐՄԻՐ ԱՍՏՂԻԿԸ

I

Նամակ էր գրել հեռու մի տեղից—
Կարծեմ Ղազախի Իշևան գյուղից,
Թե՝ պո՛ետ, թեև ձեզ չեմ ճանաչում,
Բայց ձեր երգերովն եմ միայն շնչում.
Որբ եմ, միայնակ, անհա՛յր, առանց մայր,
Ծերուկ պապիս հետ ապրում եմ դժվար.
Աղքատ ենք... դրա մասին չեմ խոսում,
Բայց դարդ է դառել, որ չունեմ ուսում.
Ուզում եմ փախչեմ, գամ ձեզ մոտ, Թիֆլիս,
Գոնե այդպիսով բացվի աչքիս լիս.
Ձեզ շա՛տ եմ խնդրում, իմ ճարը արե՛ք,
Ինձ դեպի ուսում, դեպի լույս տարեք...
Այսպես էր գյուղից նա նամակ գրել—
Ու տակը Աստղիկ ըստորագրել.
Նամակն էլ, գիտե՛ք... գրել է խորով
Ու այրված սրտից—ոտանավորով։

II

Հիացա, երբ որ տեսի ես համակ
Խավար մի գյուղից այսպիսի նամակ.
Ասի, աղջիկն անշուշտ փրա մեջ—
Թաքցրած ունի փահմի կայծ անշեջ.
Հիշեցի թե ո՞նց էն մուժ օրերին,
Երբ զավակները չքավորների
Ուսում առնելու չունեին միջոց
Թափառում էին փողոցից-փողոց.
Հիմա դպրոցի լայն դռները բաց,
Զգտում են այնտեղ նրանք աչքարաց.
Ինչպես ծարավից եղնիկը մարած,
Ինչպես պատանին բանաստեղծ դառած...
Գրեցի, որ գա ու հետը բերի

Տետրակը իրա ոտանավորի.
Գրեցի, ինքս հեռացա գործով,
Իսկ գործը այսօր... գի՛տեք, էլի՞ ծո՞վ...

III

Վերադարձա ես մի քանի օրից—
Տեսնեմ Աստղիկը եկել է գյուղից.
Կոճղի նման հաստ, կարճլիկ հասակով—
Մի ժպտուն աղջիկ ամուր կղակով.
Երեսը նրա խոշոր է ու լայն,
Ոնց լի լուսնակ ու կարմիր թշեր
Դրա համար էլ անունը նրա
Այդ օրից դրինք Լուսնյակ գիշեր։
— Որտե՞ղ ես իջել, Աստղիկ, ո՞ւմ տանը...
— Ծանոթ բանվորի մեր գյուղից եկած,
Միայն տեղ չունեն, քնում եմ դռանը,—
Պատասխանում է աղջիկը շիկնած.
Ու կանգնել է նա իմ դեմ հանդիման—
Նրա աչքերում կարդում եմ պահանջ.
— Գյուղ չե՛մ դառնալու մինչ բանֆակ չերթամ—
Այստեղից այլևս ինձ չկա նահանջ...

IV

Մինչ կերթաս բանֆակ, ասում եմ, Աստղիկ,
Ժամանակավոր կապրես մեր տանը.
Ու մտածում եմ. ի՞նչ հաստ ու կարճլիկ
Աղջկերք ունի էս Հայաստանը...
Կապոցը ձեռքին էքսը եկել է
Ու տեղավորվել կնոջս սենյակում,
Բերել է նա իր տետրը երգերի,
Որոնց մասին ինձ գրել էր նամակում։
Կարդում եմ նրա ձեռագիրը ես
Ու հիանում եմ, հիանում այնպես՝
Որ անմիջապես ձեռքս եմ առնում
Հեռախոսի փողն—Լուսժողկոմ դառնում.

— Եկել է գյուղից մի աղջիկ փահմով,
Ուզում է մտնել հայկական բանֆակ.
Խնդրում եմ տեղ տաք նրան ապահով,
Ու նշանակեք ամսական թոշակ։

V

Մի քանի օրից Լուսնյակ գիշերը
Ունի թոշակ և հանրակացարան.
Իսկ ես կարդում եմ նրա հուշերը—
Մտածում՝ չտա՞նք սրան գործարան..
Հուշերում նրա տենչը բուռն է,
Ուզում է բանել գործարաններում.
— Էլ ընչի՞ս են պետք այս ուժեղ կռներ,
Արտադրությանը երբ չեն ծառայում...
Ու Աստղիկը մեր տեսնեմ մի օր էլ
Եկել է մոտս ժպիտով ջահել.
— Շնորհավորեցե՛ք, ասում է դուք ինձ.
Հենց նոր եմ գալիս մեր գործարանից.
Հիմա կոմսոմոլ ու մուրճհար եմ ես,
Որոնց երազել, ձգտել եմ այնպե՛ս...
Ուխտեցի մտնել այդ օրից զ... ող,
Երբ որ կարդացի ձեր նոր առավոտ...

VI

Կար մի ժամանակ, երբ կինը գյուղում
Կատարում էր լոկ տանու աշխատանք.
Իսկ հիմա տեսեք, ո՞նց է դողդողում
Երկաթի ձողը նրա բազկի տակ...
Բանը Աստղիկի թե այսպես գնա՝
Այսօրից ասենք բախտավոր է նա.
Թե՛ գործարանում իր օրինակով,
Թե՛ աշխատանքի բարձր որակով
Խանդավառել է իր ընկերներին,
Մրցումի կանչել կոմսոմոլներին.
Ու տեսեք ո՞նց է գործը ընթանում.

Պարծես հազար ձեռք մի տեղ են բանում.
Ահա՛ թե ուր է գաղտնիքը ծածկված
Մեր ամենօրյա անզուսպ վերելքի.
Կին ու տղամարդ միատեղ լծված
Հիմքերն են լեցնում մեր նորաշենքի...

VII

— Ցերեկը՝ բանֆակ, ապա գործարան,
Այնտեղից էլ տուն—հանրակացարան...
Ու որքա՞ն ուրախ, աշխույժ, կենդանի
Է անցնում այստեղից ժամանակը մեր...
Մենք քսան աղջիկ, ոնց մի ընտանիք,
Ապրում ենք ինչպես հարազատ քույրեր.
Շարել ենք արդեն պատի լրագիր,
Ինձ էլ կարգել են թերթի խմբագիր.
Ազատ ժամերին ամեն երեկո
Երեկույթներ ենք կազմում համերգով.
Կարդում ենք Լենին, խմբով, միասին,
Այսպես հոգ տանում մեր կրթման մասին.
Կոլեկտիվը մեր կոմսոմոլների
Այսպես է ահա դարբնում կամքն իր...—
Ասում է Աստղիկն մեր ծաղկափթիթ,
Ու շուրթին խաղում բախտավոր ժպիտ։

VIII

Կայտառ ու ջահել Լուսնյակ գիշերը
Հիմա բշիջի է մի քարտուղար.
Լսե՛ք, թե ի՞նչ են ասում հուշերը
Նրա տողերում գոհար ու ջուհար.
—Երանի օրին,— գրում է Աստղիկ,—
Երբ ինժեների կառնեմ կոչում ես.
Պիտի նշանց տամ, որ կնամարդիկ
Դիտեն աշխատել տղամարդու պես...
Այսպես է վառվել Աստղիկի սերը
Իրենց դպրոցում Իշևան գյուղի,

Սրանով փակել իրա հուշերը
Բնակիչն այն խոնավ մութ հյուղի.
Իսկ հիմա հասած մուրացին արդեն
Բանվորուհի է նա մի գիտակից.
Դե՛հ, թող խմանան կարմիր գծից դեն,
Ինչպե՞ս են կանայք մեզ աշխատակից։

II

Անցել են օրեր, անցել տարիներ,
Ու Աստղիկը մեր տեսնեմ մի օր էլ
Եկել է մեզ մոտ խոհուն ու լրջմիտ,
Ասում է՝ հիմա ես մի կոմունիստ.
Մտել եմ արդեն բարձրագույն դպրոց,
Ուր ամեն նոր օր—նոր խոսքի հնոց.
Ինժեներ եմ մի, ասում է հոմեստ,
Ուր գիտության հետ ուրվում ենք արբեստ
Հարվածային եմ, ու բրիգադի պետ—
Ինձ մեր գավառում կոչում են վերբեռ.—
Ասում է ժպտում, ուզում է գնալ,
Իսկ ես իր կրծքին տեսնում եմ մի աչ.
Աստղիկ՝ մի գյուտի համար իբրև վարձ՝
Աստղանշանով պատրաստարված...
Փաթաթված գլանից դու վազող ատաղ
Ժրաջան ազջիկ, կուզ միշտ կանաչ...

X

Շաղշոգուն փայլով Աստղիկը այդ վառ
Նա տեսավ ա՞ր գյուտի համար,
Ավճալու շրմուղը գտված շրի տեղ
Տալիս էր հանքաթ քսի չիլ ու ցեխ.
Ամեն մի ամիս քանի մի անգամ
Ֆիլտրը գտանող հանում են հողից
Ու տանում ցեխը մեխանիկական,
Որ նրան փրկեն վնասված տեղից.
Եվ ամեն անգամ նրա շտկելուն

Քանի հազարներ զուր կուլ է գնում...
Եկել է Ավճալ Աստղիկը մի օր
Ձեռին մի գործիք—անունը տուրբին
Ասում է՝ սա՛ է մի ռեգուլյատոր
Ջրմուղի համար կազմովն իր նրբին...
Այդ օրից ֆիլտրը ամեն մի ամիս
Քանի՛ հազարի օգուտ էր տալիս...

XI

Գյո՞ւղ վերադառնալ, տրակտո՞ր վարել—
Ի՞նչ կա, սրանից դյուրին առավել.
Ջ՛է, ձգտե՛լ, ձգտե՛լ վերելքից է՛լ վեր,
Ու բարձունքները հասնել, գրավել...
Ու Աստղիկը մեր ավարտած վուզը—
Ակադեմիա է հիմա էլ ուզում.
Ուզում է քիմիան ուսումնասիրել
Օսո-ավիախիմն այնպե՞ս է սիրել...
— Պետք է պաշտպանել թշնամիներից
Սահմանները մեր մեծ էս-էս-էրի...
Հիմա հասկացա, թե ինչու գյուղից
Քսանհինգ թվին գրել էր նա ինձ
Թե պո՛ետ, տվեք միջոց գամ Թիֆլիս,
Ուզում եմ բացվի խավար մտքիս լիս.
Ջկա՛ մի ամրոց լինի վիթխարի—
Որին բոլշևիկն ուզի—չտիրի...

XII

Նամակ ստացա Լենին—քաղաքից...
Նամակը դարձյալ իմ խինդ Աստղիկից.
Գրում է՝ պո՛ետ, քիմիան ավարտել
Ու պատրաստվում եմ հեռանալ արդեն,
Ճանապարհվում եմ Հեռու Արևելք,
Ընկեր էլ ունեմ—երջանիկ ենք մենք.
Հեղինակ եմ ես այժմ նոր գյուտի
Այդ էլ թող մնա մեր մեջը գաղտնի—

Դե, մնաք բարն... Թե լինի ասեն
Պատմիր մեզ, պոետ, այն գյուտի մասին,
Թե չէ գրածդ այդպես չի կրում
Առողջ փաստերի ռեալ պատկերում...
Փույթ չէ... մատս չեմ դնում կոճակին,
Նա զանգահարել կարող է ուժգին...
Հանկարծ ձայնը այն հասնի Հնդկաչին—
Ապա թշնամու որսող ականչին...

1934, Թիֆլիս

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

ԳԻՇԵՐԸ ԳԵՏԻ ԱՓԻՆ

Գոչգոչալով գնան է հոսում
Լուռ քարքարոտ ձորակից,
Հստակ ջրում աստղն է ցոլում
Աստղաճաճանչ երկնքից։

Փրփրաշատ ալիքները
Լերկ ժայռերին դիպչելով,
Երգ են երգում, մրմնջում են
Ափերի հետ լուռ լալով։

Գետը ժպտում է միջօրեին,
Իսկ գիշերում արտասվում,
Քանի՜ անճար, անտեր վշտեր
Նա պահում է իր կրծքում։

Քանի՜ խորունկ, արնոտ վերքեր
Ծածուկ ծովն է պարտկում,
Տանջված սրտի-ախ ու վախեր
Իր գոչումով խեղդոտում։

Նա գոռո՜ւմ է, նա գոչում է,
Ույժ է տալիս հոսանքին՝
Ծածուկ վիշտը, կրծող ցավը
Որ շուտ հանձնե մայր ծովին։

Գոչգոչալով գնան է հոսում
Լուռ քարքարոտ ձորակից,
Հստակ ջրում աստղն է ցոլում
Աստղաճաճանչ երկնքից։

ՄԱՆԿԻԿԻՆ

Պայծառ ճակատով
Շրթունքին ժպիտ,
Անուշիկ քնով
Քնած է մանկիկ.
Խաղաղ է քունը
Անդորր է ընչում,
Անմեղ շրթունքը
Երբեմն ժպտում.
Վրան նայելիս
Վիշտդ կրմոռնաս.
Ձայնը լսելիս՝
Ապրել կըցանկաս։

ԾԱՌԱՆ ՈՒ ԾԱՌԸ

«Նազիկ-ծաղիկ, դեմքդ շուտ տուր,
Թո՛ղ, որ նայեմ աչերիդ.
Տես մենակ եմ ու միշտ տխուր
Կարոտ տիրուն թշերիդ։

Թո՛ղ, որ կրծքիս պաղ ադամուրով
Ջրեմ, վամ ոտներդ.
Խոպան սրտիս սալերի տակ
Հով-զով անեմ երեսդ։

Շո՛ւտ տուր դեմքդ, նայիր վերև
Թերթիկներդ մեղմ շարժե,

Արի՛ գիրկս, սիրուն ծաղիկ
Հուժկու կրծքիս դու հենվիր...»

Նազիկ-ծաղիկը հոհոում էր
Մերուկ ժայռի խոսքերին,
Սիրեկանի հետ գրկված
Անցքը պատմում հովերին։

ԳԵՂՋՈՒԿԻ ԴԱՐԴԵՐԻՑ

Արտրս հասավ... երթամ քաղեմ
Հավաքեմ—
Ո՞ր մեկ ցավիս դարման անեմ
Ամոքեմ...
Խարխուլ տանրս փրտած գերան
Կախ ընկել՝
Սպառնում է մեզ ծանրության
Տակ թաղել.
Բալաներս՝ քաղցած, տկլոր
Եվ անուս,
Սիրտս ճմլում, լույսը խլում
Աչերուս.
Ավեր օջդիս սև հարկի տակ
Միակ սյուն
Զարքաշ կնկաս կուրծքն է ցավցել
Թուքն արյուն...
Մեր կերակուր պաղ ջուր, չոր ցամ
Գարի հաց,
Ես ի՞նչ ճամփով պարտքից պրծնեմ
Ով ասվածս։
Արտս հասա՜վ... երթամ քաղեմ,
Հավաքեմ,
Ո՞ր մեկ դարդիս դարման անեմ
Ու ապրեմ...

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԻԴԻԼԻԱ

Աղբրի մոտ կուժը ուսին
Սիրուն աղջիկ էր կանգնած,
Սև աչերը հառած գետնին
Դեմքը վշտով ամպամած։

Լիք թշերը կարմիր էին—
Քան պարտիզի վարդ բացված
Սաթ աչերը ցոլում էին—
Քան արշալույս նոր բացված։

Լնդհ աղջկան ի՞նչ հիշեցիր
Ա՛յ դու աղբյուր, անխոհեմ.
Նազ աղջկան ինչ երգեցիր
Բլբուլ դու քո երգերեն։

Փսփսացի՞ր հորոտ-մորոտ՝
Թե բուրմունքով դյութեցիր,
Հայ աղջկան վառ-կրակոտ
Սիրուն արձան շինեցիր...

Աղբրի եզրին, կուժը գետնին
Սիրուն աղջիկ էր նստած—
Նրա գիմաց շվին ձեռին
Կտրիճ տղա էր կանգնած։

Ու երգում էր կտրիճ տղան...
Աղբյուրը նա՜ւս-փուս քշքշում,
Խեղճ բլբուլը բացած թերան
Ձայն ու ծպտուն չէր հանում։

Նախշուն թիթեռ թրթռում էր
Ծաղիկների թերթերին—
Զով հովիկը սլանում էր
Անուշ բույրը շրթերին։

Ավալ ես ձրգում, սիրուն տղա,
Ահա քեզ ջուր—խմիր կուշտ—
Շա՜տ երգեցիր, կարիճ տղա,
Հոգնած-բեզրա՜ծ ես անշուշտ։

—Նազան ալչիկ, սև աչերիդ
Կրակով է սիրտս այրվում—
Քո ալվալա վառ թշերիդ
Համբույրով եմ պապակվում։

Աղբրի եզրին, տղի կրծքին
Սիրուն աղջիկն էր հենած
Կուրծքը-կրծքին, շուրթը-շրթին
Մերո դաշինք նոր կապած...

Նազ աղջկա վառ համբույրին
Աղբյուրն եղավ ձայնակից—
Կարիճ տղի սիրուն յարին
Բլբուլ լռեց նախանձից...

ՔՆՔՈՒՆ ՍԵՐ

Անձրևն ասաց—նազիկ-ծաղիկ,
Քեզ ի՞նչ վնաս եմ տվել—
Երբ երկնքից գերդաստ եմ գալիս
Շուռ ես տալիս թերթիկներս։

Անձրև ապրեր, չէ՞ Քեզ վնաս՝
Այլ ես տալիս եմ կյանքին,
Բայց Քեզ ասեմ չնեղանաս
Ես սիրա՜ռ եմ ցողիկին։

Երբ թափվում ես դու վերևից
Ընկնում Քեզա՛ կամ կրծքիս,
Քո այդ ծա՜նր կաթիլներից
Եռելքս է մազամ ցավիքից։

Իսկ ցողիկը չաղ է մազոտ
Քնքո՜ւշ նստում այտերիս,
Բյուր գույներով դեմքս զուգում
Հալվում խառնվում արցունքիս...»

ԿՈՒՋՔՍ...

Կուզե՞ս լինեմ անհուն երկնք՝
Ազա՜տ, հակինք ծալքերով,
Իսկ դո՜ւ կրծքիս ասող լուսաբեր
Ցոլա՜ աչքերով ցողերով։

Կուզե՞ս լինեմ բոզբոզ ծաղիկ
Նազուկ մեջքով, հոտավետ.
Իսկ դու նախշուն մեր թիթեռնիկ
Եկար՝ դեմքիս հոգի հետ։

Կուզե՞ս լինեմ զուլալ վտակ,
Իսկ դու նոճի իմ ափին.
Փարվեմ ոտքիդ կոհակ-կոհակ,
Փարվեմ կրծքիդ՝ մրափեմ։

Ինչ որ կուզես—ես կըդառնամ
Միայն ապրենք մենք սիրով—
Սիրո շնչից միշտ անքառամ
Միշտ չի՜նչ, հատակ արտերով...

ԱՓԵՐԻՆ

Հեռո՜ւ ափերին— դալար ափերին
Զուլալ ջրերի ձեն կուգա ինձի,
Կապուտ ամպերի փրփուր թևերին
Նիշուն հովերի երգեր լսեցի։

Հե՜յ կանաչ ափեր, մոքերդ կուգա՞,
Որ ես ձեր վրա չա՜ռ եմ խաղացել,

Դուք փրփուր ամպեր, երկնքի արքա,
Կհիշե՞ք ինչպես ձեզ մայիլ եմ մնացել։

Էնտեղ մեկ անգամ նստած աղբրի մոտ
Վարդ ու շուշանից ծաղիկ կհյուսեի
Բլբուլը կերգեր տխո՞ւր ու կարոտ
Ես էլ էնոր պես երգեր կասեի։

Դիմացս ելավ մեկ ճամփորդ տղա։
Էնոր ջուր տվի՝ էլի ծարավ էր.
— Աղջիկ, տուր սիրտդ՝ հոգիս հովանա
Սիրո ծարավ եմ— էն ինձի կբսեր...

Հե՞յ փրփուր ամպեր, դուք դալար տարփեր,
Դուք մեզ սիրեցիք— մենք էլ ձեզ սրտանց—
Հիմի դուք չկաք, էն գարուն օրեր
Ջմեռ են դարձեր, տխուր ու անանց...

8 հուլիսի 1905 թ.

ԱՆԵՐՔ

Անե՞ծք սերնդին, որ դեռ ճորտական,
Գետնաքարշ կյանքում ապրում է անհոգ
Հանցավոր կրքից տենչերով վարձկան,
Ամոթ չի զգում մնալով անոք.
Վայելքի գրկին, ապրուստը խլել
Ուժով տկարի արդար վաստակից.
Պատահած դեպքում սողալ ու լիզել
Ձեռքերն արյունոտ կորչելու ահից։

Անե՞ծք մայրերին օրորոցի մոտ
Սնոտի, ըստրուկ մտքերով լոքած.
Եվ տրտում նանիկ-օրորին լացոտ,
Որ իր կաթի հետ երգով տխրամած
Տալիս է անբիծ, անարատ հոգուն,
Ծորում նորածիլ, թարմ երակներով
Իր հյութն ըստրուկ գիշերներն անքուն։

Անե՞ծք քարոզչին, որ սուրբ սեղանից
Անկշտում փառքի ծարավը դեմքին,
Գոռոզ նայում է լքված զրկանքից,
Թշվառ ամբոխի ակնապիշ խմբին
Եվ կեղծ, քմահաճ մեկնություններով
Շոյում է տանջված, գգվանքի կարոտ
Անվերջ տրորված կյանքից անգորով,
Իր մոլոր հոտին... անեծք ու ամո՞թ...

Անե՞ծք գործչին՝ խեղկատակ բախտի,
Կուրորեն ջոկած այն ընտրյալներին,
Որ կեղծ դիմակով սքքազան ուխտի,
Զինվոր են գրվել և իդեալներին
Շահամոլությամբ միշտ խունկ են ծխում.
Սակայն իրական կյանքի մեջ անճար,
Հեռո՞ւ տանջանքից, հեռո՞ւ ամբոխից
Մութ անկյունների որպես սիրահար
Փախչում են լույսից և արդար ոխից...

Քա՞վ է... թող կորչի հիվանդ դարերի
Թողած այս ամեն այլանդակություն.
Փշրի հիմնատակ ըստրուկ օրերի
Գարշանքի արժան ամեն հատկություն։

15 հուլիսի 1905 թ.

ԻՆՁ ԱՍԻՆ

Ինձ ասին՝ արի մեզ մոտ երգչուհի,
Ապահո՞վ, հանգիստ կյանքի վայրերում
Հերի՞ք քո կրծքից ցավերդ հնչվի
Տգետ խուժանի աղտոտ հյուղերում։

Այդ մրուրակալ վայրում աննշան
Թախիծը ճակտիդ կրկորչես մի օր—
Ինչպես երաշտից խորշոմած շուշան,
Ինչպես թոթափող, հանգչող գիսավոր։

Արի՛, երգչուհի, մեզ ցոտ դեպի վեր,
Մեզ հետ է ույժը, մերն է ոսկին
Եվ անմեռ փառքի շքեղ դափնիներ,
Որ պիտ պտակեն քո ըմբոստ հոգին։

Ես կերգե՞մ ձեզ հետ քմծին բախտից,
Կեղեքիչ կյանքի ա՛վ խորթ զավակներ,
Որ շահագործված ոճրագործ ախտից
Վշտի հոսանքին դարձել եք ակներ։

Որ անհայտությանն գրկում հաստատ,
Տանում եք գրկանք, տանջվելով տենցան
Բռնակալ ույժին գոհում անդադար,
Փայփայած իրեն կյանք և ոսկեն բան։

Ես կերգեմ ձե՛զ հետ անմեղորից, հպարտ
Անշահ գործիչներ, որ ամենատաս
Վայելքից հեռու և սիրու անպարտ
Գոյության կռիվ մտաք անվեհեր։

Եվ թող մեր ձայնը տրթնացած կյանքի
Նոր արշալույսին դիմն անհոգող,
Եվ թող մեր սիրտը մեղսալից փառքի
Խարխլած ույժից չզգա ահ ու գող...

17 հուլիսի, 1905 թ.

ԵՍ ՇՈՂԸ ՏԵՍԱ

Ես շողը տեսա կարմիր, շեղտակի,
Որ վայր էր իջնում ոսկեհուռ բոցից,
Եվ ազդու ինչպես ոչն հրեշտակի,
Որ կյանքն էր օրհնում անհունի ծոցից։

Վիրավոր ընկա խոշոր գրկին—
Հոգնած էի թախտ, անդորրի կարոտ.
Ասի կընդունվեմ և լույսը կրկին
Կըշողա ճանկին կատան իր մոտ

Բայց նա չքացավ. ես խելակորույս
Առաջ վազեցի նրա հետևից,
Իմ երակներում եռում էր նոր հույս
Լույսը ժպտում էր դեմքիս վերևից։

Ա՜հ ըմբոստ կրակ. լքումն ես ատում,
Կորչի՜ անդորրը... Կրվազեմ նորից.
Միայն դու շողա, փայլի անհատնում,
Որ հասնեմ ես քեզ այս ժահրոտ խորից։

29 հուլիսի, 1905 թ.

* * *

... Էնտեղ մեկ անգամ նստած ագռի
Հորոտ-մորուքից դասատ կապիկի-
Բլբուլը կերգեր տրտո՜ւմ ու կարոտ.
Ես էլ էնոր պես տխո՜ւր երգեցի։

Գիտեմ հիմի էլ էնտեղ բլբուլ կա
Աղբյուրն էլ ժայռեն ծորը կրվազի.
Ես էստեղ դարձյալ էլ զարուն չկա
Անցածը գնաց... էն էլ երազ է...

30 հուլիսի 1905 թ.

ՄՐՄՄՈՆՋՆԵՐ

Վառ արևեն էրված, խանձված խոտ ու ծաղիկ
Ջով գիշերի հովը գրկած քուն մտան.
Ա՜խ ես էդ վառ սիրուդ բոցեն էրված ծաղիկ
Գիշեր չունեմ—հով էլ չկա՜ հոգիանամ։

Վարդ-թագուհին տաղավոտ վաղ բլբուլի հետ
Անմահական սիրո երգով կյանքն օրհնեց—
Ա՜խ իմ թուխս գարդից թոշնած ու սրտիս հետ
Լուսաբացին զարգլու կյանքին անիծեց։

Լուսնկայի ցոլքն երեսին լո՞ւռ ու մարմանդ
Զուլալ ալին մտորում է ձորի մեջ.
Ա՜խ պչերիդ ցոլքին կարոտ՝ ես հանդարտ
Լող եմ տալիս դարդ ու բալի ծովի մեջ։

Օգոստոս 1905 թ.

ՈՉ ԼԱԼԿԱՆ ԵՐԳԵՐ

Ո՛չ լալկան երգեր, ո՛չ անուշ օրոր
Ես չեմ երգելու աշխարհ քեզ համար—
Թեև վերքերդ խորունկ են՝ ծոր-ծոր,
Թեև տանջանքից չունես դու դադար։

Չէ՛, ազատ հոգիս ըմբոստ թևերով
Ավերակներիդ բու չէ լինելու—
Ոչ էլ քո սիրուց անքուն, օրերով
Սուգ ու շիվանի ձայն չէ՛ հանելու։

Դու շա՜տ քնեցիր... ետ՞ր մահվան քնով,
Բարբարոս կյանքի ձեռքին խաղալիք,
Ըստրկության մեջ քո հորդ արյունով
Դեսեր վազեցին և բոսոր ալիք։

Բայց դու մեռած չե՞ս, ո՛վ ըստրուկ տիտան,
Դեռ քո երակում արյուն է հոսում.
Ցնցվի՛ր, սթափվիր գոնե մի՛ վայրկյան,
Դիտակից մահվան ես չեմ ափսոսում...

9 օգոստոսի 1905 թ.

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԵՋ

Ամբոխական ծաղիկները տեղ դաշտում
Շարված են լուռ խմբակներով ներդաշնակ,
Եվ կարգապահ՝ քան զինվորը իր վաշտում
Սպասում են անգործության ժամանակ։

Ահա ելավ սպղարթախիտ անասուրից
Քամին սպա—լայն թևերով, զինավարժ
Եվ ժպտալով դալար դաշտին դեռ հեռվից
Ծաղիկ-զորքին շարժեց դիրքում լուռ, անշարժ։

—Մի աջ, մի ձախ—նա շշնջաց խնդագին,
Առաջ անցավ իր նժույգով սանձահար,
Ծաղիկների ծածա՜ն-ծածան խմբակին
Ուսանելով իր դաշտային խաղ ու պար։

Սավառնաթև թռչուններին նա խրոխտ
Հրամայեց զարնել քամքոր և թմբուկ.
Արձագանքին՝ հանել ուժգին, զիլ դղորդ
Եվ աղբյուրին՝ երգել ձայնով կամացուկ։

Եվ երկինքը՝ լանջը նախշած աստղերով,
Որպես հերոս մի փորձառու զորապետ
Իր ալեզարդ դեմքին ժպիտ ու զորով՝
Վայր էր նայում զուլագնդին ծաղկավետ։

Եվ խստությամբ պատվիրում էր ամպերին՝
Որոնք հոգնած ներհում էին ցեր ու ցան
Եվ շրջմոլիկ թափառական արևին,
Վառ շողերին—լույսի, ջերմի հրացան—

Ծաղիկներին առատ սնունդ հասցնել
Չխնայել իր երկնառաք ողջ բարին,
Ոնքուշ ծիլեր գիշեր-ցերեկ սնուցել
Աղոթքներով աչքը կապել սև չարին...

1905 թ.

ՄՐՐԻԿԸ ԳՅՈՒՂՈՒՄ

... Մրրիկն եկավ... խշխշացին
Սառ ու տունկ.
Ծաղիկները լո՞ւռ թափեցին
Արտասուք.

Նոտ ու ամբուլ այնպես տաստիկ
Վախեցան՝
Սվսվացին, ընկան գետնին
Ցիր ու ցան.
Հստակ ալին ահից խոպառ
Մալորված,
Վերբարձրացավ ճերմակ, փրփուր
Սանր հագած.
Փոշու ամպը պատեց օդում
Սրարշավ.
Հավ-մարդիկ պոչը քրքրեց
Ու անցավ։
Աքլորները աղբի կույտից
Վար իջան,
Պառույտ եկան, երերալով
Ու փախան։
Ներսի պատը թեսին պատհից
Իր գրկում,
Մատով մարեց վառ կրակը
Ջիրուխում։
Նեռը խրավ տան կատրվից
Բարկացած,
Իր օլորքի ազգ կծիկն է
Ճճճված.
Ու կշտամբեց չահել հարսին
Հորի մոտ—
«Կողքդ խփիր չա՛ստ փեշերդ—
Անամոթ...

1905 թ.

ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱԾՈՒ

Ես նայում էի ապշած, զարմացած...
Ահա ամբոխը և չահել, և ծեր
Գոռ պատանիներին իր կուրծքը աված
Կռիվ է մղում, խիզախ, անվեհեր...

Առույգ բանվորի ջլատ ձեռքերին
Կարմիր դրոշն էր հպա՛ռ ծածանվում...
Եվ պայթյունների ահեղ սրտոին՝
Ազատ երգերի թինդը խառնվում։

Ես ուզում էի հաղթանակն երգել
Այդ չահելների գեռ կյանք չտեսած,
Որ այնպե՛ս անվախ գիտեին մեռնել.
Սակայն հուզմունքից ձայնս էր նվաղած...

Մի ինչ-որ հզոր անհայտ զորությամբ
Իմ թույլ ծնկները գետնին էր գամում
Ու մի սրբազան շշուկ իմ հոգուն՝
«Զորի՛ր, աղոթի՛ր...» վրամս փսփսում...

Եվ ծունկ չոքեցի նահատակների
Շարեշար ընկնող դիակների առաջ...
Ու հավերժ փակվող ապյծաս աչքերի
Կապակը սրտումս... ես անցա հառաջ...

22 դեկտեմբերի 1905 թ.

ԻՆՉ ՄԻ՝ ՍԻՐԻՐ...

Ինչ մի՛ սիրիր՝ որպես գայլուն
Բողբոջ ծաղկին քնքշորեն
Կամ տաքարյուն քո առնական
Վառ հեշտանքով կուրորեն։

Երազնիրով մի՛ տարտնջոր
Հոգին չարքի անոգորդից,
Թե՛ ցիր դիմաց կյանքի անդունդ—
Դիերդն ու տմբիրն յուր միջից։

Թող որ քեզ հետ ես հանապարհի
Ծծեմ թույնը՝ տանջանքի,
Լինեմ ազատ խոսքի՝ սրամիտ,
Ցգտնեմ լույսին փրկանքի։

Եվ ամենքի վշտին մոտիկ
Մտնեմ այն մեծ խաչի տակ,
Որ տանում են ըմբոստ մարդի՝
Դե՛պ ընդհանուր նպատակ։

Թող փորձերից սիրտս մաշվի
Կրեմ զրկանք ես անվերջ.
Դալար ճակտիս կնճիռ շարվի
Այս բարբարոս կյանքի մեջ։

Եվ երբ հպարտ, ձորձեր հագիս
Ելնեմ կարոտ քեզ այցի՝
Այն ժամ չոքիր, փարվիր կրծքիս
Խնդրիր սերս կանացի...

Այն վառ սերը—որ չարգելեց
Լինել ինձ մարդ, կին և մայր,
Որ ընկերիս միշտ ըստուգեց՝
Երբ մենակ էր, վշտահար...

Ինձ մի՛ սիրիր ծաղկի նման,
Կուզեմ ապրել արժանի՝
Որպես հլուկեն՝ վշտի տիտան,
Որպես զավակ՝ խուժանի...

15 մայիսի 1906 թ.

ԵՍ ԸՄԲՈՍՏԱՑԱ...

Ես ըմբոստացա... խավա՛րը լացեց
Խիզախ բռունցքիս հարվածների տակ.
Իզուր դավադիր գիրկը նա բացեց,
Իզուր խոստացավ լինել հպատակ...

Նա սիրել էր ինձ այնպե՛ս խանդավառ
Եվ բերել աշխարհ դժվար երկունքով.
Աչերս կապած՝ բայց հոգիս կայտառ
Գգվել էր անվերջ, սնուցել կրծքով։

Նա աղջամուղջում մռայլ գիշերից
Ոչինչ չէր պահել ինձանից անտես,
Կուրացած տենչով միշտ իմ թշերից
Համբույր էր քաղել գթառատ մոր պես։

Ես ըմբոստացա՝— լո՛ւյսը սիրեցի
Եվ խելացնոր հարվածներիս տակ
Խավարը ընկա՛վ... ե՛ս... ես հաղթեցի
Փա՛ռք ու պատի՛վ ինձ, կեցցե՛ հաղթանակ...

Ձեզ՝ որ ապրում եք խավարին գերի՝
Ես իմ ուղիով թողել եմ նշան—
Բազում օղակներ իմ շղթաների՝
Որ փշրվելիս ծաղկեցրին շուշան։

Դե՛հ, դուք էլ եկե՛ք՝ եկե՛ք լույսի մու.
Անե՛ծք—ով չուզե զատվել խավարից.
Ես այստեղ հասա՝ ծագեց առավոտ.
Շուրջս լո՛ւյս, աղա՛ղ... Փառք ու պատիվ ինձ...

17 հուլիսի 1906 թ.

ԱՆՔԱՌՆ ԳԻՇԵՐԻՑ

Մութը պատեց դալարազարդ դաշտերին.
Թռչունները կամաց-կամաց քուն մտան
Քնաթաթախ ծաղիկների վաշտերին
Հոգնած քամին նստեց հսկիչ-պահապան։

Կեցի՛ր, քամի, բա՛ց աչքերդ սիրական՝
Հեքիաթ ասենք, որ քներս չտանի.
Տե՛ս վերևից մեզ է նայում լուսնկան—
Նա էլ մեզ հետ ընկեր լինել կըկամի.

Մենք երեքս էլ խեղճ ճամփորդ ենք աշխարհում
Տուն-տեղ չունենք, ընկեր չունենք բնավին.
Կեցի՛ր, քամի, ի՛նչ ես այդպես շուտ նիրհում,
Իմ աչերիս քուն չէ՛ եկել տակավին...

Իսկ թե ինչպե՞ս ես կուզեի մոռանալ
Խորո՞ւնկ, անվի՞շտ, զով թեերիդ, չա՞ն քամի...
Բայց դու լսիր, ի՞նչ ես տխուր, լռո՞ ինստեղ,
Ա՜խ, իմ քունը դեռ չի՞ տանի... չի՞ տանի...

21 հուլիսի 1906 թ.

*
* *

Թող երգս չգգվե քո հոգին,
Չբքաղե քո դեմքից մի ժպիտ.
Թող մենակ վշտիս հետ անմենկին
Մաշե ինձ խանդն անգութ ու կոպիտ։

Սիրո՞ւմ եմ, բայց դու այդ չգիտես—
Հպա՞ռտ է հոգս սեղը պոետի,
Որ ծածուկ, միշտ լռիկ ու անտես
Օրեցօր ծաղկի պես կբոցբոցի։

Եվ այսպես, մի օր ես քո մոտից
Ո՜ հանկարծ, որպես կայծ կբռնվեմ,
Անգիտակ, ոռնոտակ քո սրտից
Սև հոգի պաղ գրկում կբհանգչեմ։

12 սեպտեմբեր 1906 թ.

ԱՄԱՆ ՀԱՄԵՆԻՆՈՒՄ

Իմ սիրելի՜ ու թանկագին հայրենիք—
Հոգույս հատոր, գեղատեսիլ գոտ Կովկաս,
Հին ընկերներ, ծանոթ, քաջարի-տիպարներ
Բերրի Շիրակ, չինչ Վանա-լեռ, Ալազդաղ՝

Ուղարկում եմ հետո՞ւ Քեզի ապերջի
Ձեր կարոտավ գիշեր-ցերեկ անդադրում
Էրված սրտիս խորո՞ւնկ-խորունկ խորքերեն
Շա՜տ բարևներ... ու ձեզ սրտանց հանձնարարում։

Հավքե՞ր կուգան օդում ձգված շարքերով,
Ա՞ստղ կժպտի դեմքիս խաղաղ գիշերին,
Զովիկ քամի՞ն կանցնի մոտես հևալով,—
Առեղծվա՞ծը կմորմոքե իմ հոգին։

Ձե՜զ, սիրելիք—ձեզ կհիշեմ լուռ լարով
Զվող հավքի, հոմի, լուսնի, աստղերի
Ոտքերն ընկած, հուզված, անզուսպ փափագով՝
Խապար կառնեմ, խապար կուտամ, որ բերի...

Ա՜խ, հայրենիք... դարիզ տրտիս ամեն օր
Զայն են տալիս տանջանքներդ, լաց-կոկան,
Անքուն աչքիս, դեմքդ թշվառ, սգավոր
Միշտ լուռ-անխոս կանգնում դեմս հանդիման։

Կմտորեմ—մի՞թե տրտինքը նզովեց
Ջնաշխարհիկ՝ քեզ գեհենի ու շնչով՝
Որ մարդկության վայելքներից զատընկեց
Տարապանքի թույնը ծծես սողալով...

Թե՞ մարդկության աչքին դարձար փուշ ոտատակ
Ջնաշխարհիկ գոռ դնեցդ—հալածված,
Կամ արդարը գիրտ սրտերով քեզ անգարձ
Ա՜հ ուրացան... քեզ իմ եղեմ, իմ աստված։

Էլ ի՞նչ գրեմ, ի՞նչ մորմոքամ ու խոկամ
Սրտիս մեջն ես, աչքիս առաջ— միշտ անլուր-ս
Քանի կապրեմ քո վառ սերն անսահման՝
Չի ավերե— ո՜չ ջուր, ո՜չ սուր, և ո՜չ հուր...

Թե ե՞րբ կուգամ՝ մի հարցնիր—չգիտեմ,
Ավեր կյանքես տանջված սրտիդ ի՞նչ օգուտ.
Թեև անտուն, երկրե-երկիր թափառեմ—
Մի օր չոր դիս քե՜զ կբերե մահն անգութ...

Այն ժամ կուրծքս կբծքիդ սեղմած՝ երջանիկ
Ալազդաղի ծաղկոտ փեշին քուն մտած

Մոմոտա Ծայրին, ակն-աղբյուրին Մոտ-Մոտիկ՝
Հանգի՜ստ կառնեմ կըրակ սիրտըս քար կտրած...

Թե գիտենաս՝ ինչպես չուզեմ ես մեռնել
Գեթ մի անգամ, գեթ մի վայրկյան տեսնելու,
Որ տանջանքիդ մեծ ծովն իսպառ է տրոցել
Ձեռ ու ոտիդ չկա՜ շղթա ահարկու...

Գուցե ասես՝ մխիթարիչ խոսք չկա
Կարոտ սրտիս լալահառաչ նամակում—
Մի՜ կշտամբիր, տիեզերքը կխոկա՝
Հիվանդ դարին սին խոսքերը չեն օգնում...

Մնաս բարյա՜վ... էլ բան չունեմ գրելու
Բայց խնդրում եմ ես քեզանից սրտագին.
Ջերմ համբույրս, բարևներս ա՜ռ ու դու
Հանձնի շուտով ընկերներիս, փնարոգին։—

Եվ աստղազարդ ջինջ երկնքին՝ գիշերում
Ալագյազին, Արփա-չային, Շիրակին,
Սեզ դաշտերին, պաղ աղբյուրին, զով քամուն,
Վարդ շուշանին, անթառամին, նարգիզին...

Շատ մի՜ տանջվիր—խելոք մարդիկ ասում են,
Որ պիտ փոխվի աշխարհի մեջ ամեն բան՝
Ու մի արդար համայնացման մեծ կովին—
Տանջանքի տեղ սեր պիտ տիրե անսահման...

13 սեպտ. 1906 թ.

ԱՔՍՈՐԱԿԱՆԸ

Մութ, ցած նկուղում— երբ հիվանդ քնով
Հոգնած մարմինը առնում է դադար՝
Ու ըմբոստ հոգիս խանդավառ տենչով
Երազ է հյուսում չհանգչելու համար—

Դրսի աշխարհից վշտի հոգեմաշ
Խուլ հեծկլտանքի ձայներ եմ լսում—
Ու արթնանալով, քաղցից սրտամաշ
Օգնել եմ ուզում— սակայն չեմ հասնում։

Մարած տենչերիս կույտերի առաջ,
Երբ հուսո վերջին փլփլող կայծով
Լույս եմ տարածում, ու խեղդում հառաչ
Գե՛թ մի ժամ ավել ջնջել նոցանով—

Դրսի աշխարհից կուվող ամբոխի
Սուրբ ազատության կոչն եմ լսում—
Ու խելացնոր, զայրույթի, ոխի
Թույնով հոգիս լի—նորից սթափվում։

28 սեպտեմբերի 1906 թ.

ՄՏՔԵՐ ԿՌՈՂԻՆ

Ձա՜րկ, բանաստեղծ, զա՜րկ գրիչդ սայ-թղթին,
Կռե՛, կոփե՛—կուռ մտքերը մարդկության.
Կրակ սրտիդ թող կայծերը վեր թռչեն,
Խավարի մեջ ազատ փայլեն ու լույս տան։

Թող վույվույե քամին շուրջդ— նկուղում,
Կարիքի հետ երգեր հյուսե լալագին,
Սառած թղթին խեղճ գրչվող անտրտում
Շարեն մտքիդ ծաղիկները՝ իր կարգին։

Բուք-բորանին ծաղկոտ գարուն երազե
Սոխակների ալախոսիկ դայլայլով
Ու տանջանքի շղթաներում որոնե,
Անհայտ կյանքի քաղցրությունը գովելով։

Որ կույր մարդիկ ցածից նայեն քեզ վերև
Սեր ու գարնան դու մշտական խեղճ երգիչ,
Ու հիանան— որ քո կյանքին վառ արև
Միշտ փայլում է—երգդ է ուրախ սփոփիչ։

Իսկ երբ շուրջդ հավաքեցիր մեծ ամբոխ,
Յուրտ նկուղդ դառավ ուխտի օթևան՝
Զա՛րկ, բանաստեղծ, զա՛րկ գրիչդ անհողդողդ
Ու դուրս թափե սրտիդ մաղձը դատնության։

Երգե կյանքը—որին այնպե՛ս լավ գիտես,
Որին հոգուդ մի-մի զարկով զգացիր՝
Տառապանքը քիրտ կրտերից միշտ անտես,
Որոնց համար գիշեր-ցերեկ դու լացիր...

Զա՛րկ, բանաստեղծ, զա՛րկ գրիչդ սալ-թղթին
Կռե՛, կոփե՛ կուռ մտքերը մարդկության,
Կրակ սրտիդ թող կայծերը վեր թռչեն
Խավարի մեջ ազատ փայլեն ու լույս տան...

28 սեպտեմբերի 1906 թ.

ՄԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ո՛չ խաչ, մահարձա՛ն... անշուք հողակույտ
Ամայի գաշտում լո՛ւռ առանձնացած
Ընկած է անփույթ։

Անթիվ վերքերով վիրավոր կրծքում
Վեհ գաղափարի անհաղթ փոթորիկ
Էլ չի աղմկում։

Հոգնած գլուխը մայր հողի կրծքին՝
Ցավոտ աշխարհի լացը չի լսում—
Քնա՛ծ է հոգին։

Աստղերը—կանթեղ, ցոլքով հրավառ
Շիրմին լույս տալիս. բույսը բուրմունքով—
Խնկարկում բուրվառ։

Քամին թևերով գալիս է, դողում—
Ու մահասարսուռ ձայնով վշտացած
Ողբերգի՛ ասում։

Ո՛չ խաչ, մահարձա՛ն... կյանքի խաչը նա
Այնպե՛ս անվեհեր, ամենքի համար
Տարավ Գողգոթա...

2 հոկտ. 1906 թ.

ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ ԵՐԳԸ

Ծագեց լուսին... աստղիկները շարքերով
Կապույտ երկնի կրծքին նստած—շողացին։
Զովիկ քամին թռավ-անցավ սուլելով—
Խփեց ծովին—ալիքները լողացին։
Հեռո՛ւ ափին, մթության մեջ, դողդողուն,
Փլփլացին աղոտ կայծեր տներից։
Մի խո՛ւլ աղմուկ անոտած քաղաքներուն
Ինձ է հասնում, կարես մի այլ աշխարհից...
Ամպը—երկնից, աղին—ծովից, մակույկ, նավ
Ազա՛տ-ազատ ճամփա ընկան համարձակ։
Երկնի, երկրի, ծովի, ափի զարշավ,
Լո՛ւռ մեղեդին հոգուս տվեց արձագանք...
Ա՛խ շղթաներ... կո՛ւռ շղթաներ, մե՛զ նկուղ,
Նեղ պատուհան, ժանգոտ ձողեր, պահապան—
Գուցե չմ՛ոխեցրել մինչև հոգիս հրաբուղխ՝
Կը գա օրը—ազա՛տ կանցնեմ իմ ճամփան...

2 հոկտեմբերի 1906 թ.

ԱՎԱ՛Ղ ՇՂԹԱՆԵՐ

Ա՛յն լո՛ւյս օրերի—վառ գարնան համար
Ձեզ՝ սև շղթաներ, իմ կրծքի վրա
Կբրում եմ հրլու, տանջվում անդադար՝
Գիշերը՝ անքուն, ցերեկն՝ անբզգա։

Այն լո՛ւյս օրերի—սուրբ ազատության
Երկունքի ցավն է իմ հոգին կիզում,
Կեղեքված կյանքիս անվերջ դատնության
Միայն հույսերով վերջ եմ երազում։

Ա՜խ, սե՛ղ շղթաներ, անարդ հանգույցներ,
Դուք բի՛րտ կարգերի և՛ ույժ, և՛ տաղանդ—
Իմ կրակ օրախս իղձը անձնվեր
Մոլի բռնության գրեցիք պատանդ։

Ա՜խ սե՛ղ շղթաներ, ժանգո՛տ օղակներ,
Դե՛հ զընգզընգացեք հիմնը հաղթական՝
Այն լույս օրերի հիմնը-անվեհեր
Իվ ձեր գարշելի ոգբերգը մահվան...

4 հոկտեմբերի, 1906 թ.

ԵՐՋԱՆԻԿԸ

Դիշերն իջավ. համփա ընկավ
Մայր—լուսին,
Մի անտարբե՛ր, անհոգ ժպիտ
Երեսին...
Ամպիկները նրա համփին
Բոլորված
Եռ-եռ փախած՝ կասեն լույսից
Մոլորված։
«Ո՞ւր եք փախչում, ոյ սիմամբներ,
Շող-լույսից...
Շարքը պատե՛ք, շղթեր տանք
Երեսից...»
Ամպիկները— սիս՛ւր, սրտա՛մ
—Լռությամբ...
Երբ երգեցին հեծկլտանքից
Գոգալով.
—Աշխարհի մեջ տառապանքի
Մարդկության
Ապի-լեզի արցունքները
Մեզ ծնան.
Մենք վեր նչանք երկնից գագ. սեր
Հայցելու.

Ժանտ գերության կսկիծներին
վերջ տալու...
Լուսինն ավա՛ղ, Տիրոջ առաջ
Բարեխոս
Չուզե՛ լինել—անտարբեր է,
Լո՛ւռ, անխո՛ս...
Եռ ենք փախչում, լուսնից խորշում
Մեր ցավով՝
Երջանիկ է, սիրտը կարծր,
Անխռով։
Առավոտ վաղ երկիր կիջնենք
Անխնդում,
Ծաղիկների նորաբողբոջ
Թերթերում.
Կերգենք վիշտը տիեզերքին
Խեղճ մոլոր.
Միայն նա՛ է վշտին ընկեր
Ու սովոր...
Ու լողացին ամպիկները
Երկնքում,
Երկրի վշտով, լուսնից եռ-եռ
Անլքում։
Առաջ լողաց արագ-արագ
Մայր-լուսին՝
Մի անտարբեր, անհոգ ժպիտ
Երեսին։

4 հոկտեմբերի, 1906 թ.

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՂՈՂԱՆՋՆԵՐԸ

Ղողանջո՛ւմ են զանգակները... զողանջո՛ւմ են
ամեն օր
Տառապանքի կսկիծներից երգեր հյուսում
ահավոր—
Տանջված երկրի ցավոտ կրծքից ըմբոստ կռվի
կոչի ուժգին

Տարածվում է ամեն խավում ահեղ թափով՝
ամենքին։

«Դե՛հ, վե՛ր կացեք—ում սրտում դեռ մարդկային
Կոչման արժան գե՛թ մի նշույլ անմեկին
Թրթռում է տանջանքների բովի մեջ,
Վշտից, ցավից, գերությունից դեռ անշեջ։

Դե՛հ, վե՛ր կացեք—ում սրտում դեռ բռնության
Ավրող ձեռքից իդեալներ կրմխան—
Ով հոգնել է կորաքամակ՝ ապրելի դեմ
Միշտ սողալուց, թմբած հոգով և անզեն։

Դե՛հ, վե՛ր կացեք ու միացեք անխափան
Ըմբոստ հոգիք՝ գրկանքներից ցիր ու ցան.
Ով որ լինիք, ուր որ լինիք՝ միասին
Ողջունելու ազատության սուրբ լույսին...»

Ողջանչո՛ւմ են զանգվածները... զարթանչո՛ւմ են
ամեն օր,
Տառապանքի կոկիծներից երբեք հյուսում
ահավոր—
Տանջված երկրի ցավոտ կրծքից ըմբոստ կռվի
կոչն ուժգին
Տարածվում է ամեն խավում ահեղ թափով՝
ամենքին։

6 հոկտեմբերի 1906 թ.

ԹԱՆԼՎՈՐԻ ԵՐԳԸ

Հառա՛ջ, միշտ հառաջ... Անկի՛ գերության
Կաշկանդող շղթան.
Այսօր թե վաղը—մերն է հաղթանակ
Սուրբ ազատության։
Չէ՞ որ ծնունդ ենք ցուրտ նկուղների
Ճնհաց ու քաղցած,

Տառապանքների, տանջանքի սալին
— Կռած ու կոփված...
Չէ՞ որ անցել ենք կյանքի ճահիճով
Մենա՛կ, ուտրագի՛ր—
Ուժեղին՝ հլու, վզերս ծռած,
Որպես բեռնակիր։
Վայելուչ կյանքի շեղանք մատնակից,
Գծուծ ու մրոտ՝
Տիրողի հաճար մանոկ հառակից
Թշվառ մնացորդ...
Բա՛վ է, ընկերներ. պարզենք կոչացած
Մեր չլոտ ձեռքեր—
Հառա՛ջ համարձակ, կյանքի մեծ բեմում
Փոխվում են դերեր...

9 հոկտեմբերի 1906 թ.

ԱՅՆՏԵ՞Ղ ԳՆԱՑԵ՛Ք

Նվեր Եղիսաբեթ Գրիգորյանին

Այնտե՛ղ—ուր որ խեղճ գեղջուկն անհաց,
Տգետ՝ խավարի մեջ է խարխափում,
Ծրաշտից, ցրտից, անսերմ մնացած
Կծղած արտերը արցունքով թրջում.
Այնտե՛ղ—հանքերի մռայլ խորքերում,
Գործարաններում, ծոզի ափերին՝
Ուր որ բանվորն է բեռի տակ տնքում՝
Դե՛թ կուշտ ապրելու տանջանքը դեմքին.
Այնտե՛ղ--բանտերում՝ ուր շղթայակապ
Հիվանդ օրերի հերսն անտհ
Տանջվում է լռիկ, փշտով ամփսրատ,
Օրերը հաշվում անարգված մինչ մահ.
Այնտե՛ղ—ամառակ, լիտի ոլորքի
Թունալի գրկում ապրականության՝
Ուր որ մոռացված խեղճ ընկածների
Կյանքերն է մաշվում առանց դթության.

Այնտե՞ղ—ո՞ւր չկա՞ ո՛չ հույս, ո՛չ հավատ,
Ո՛չ սեր—միություն, ո՛չ մի տխրափանք—
Ուր որ կեղծիքը, սուտն հուսահատ
Իշխում է բարուն ու չկա՞ փրկանք—
Այնտե՞ղ գնացե՛ք...
Այնտե՞ղ գնացե՛ք—սոցիալիզմի
Լույսը տանելու այն մութ խավերում՝
Ուր որ իդեալը-խուլ տանջանքների
Մեղսոտ սեղանին միշտ զոհ է բերվում,
Այնտե՞ղ գնացե՛ք—երանց հավատար
Մարդկային կյանքի լուծը տանելու՝
Որպես «հովիվ քաջ» յուր հոտի համար
Պատասխանատու...

1906 թ.

ԳԵՂՋԿԱՌՀՈՒ ՄՈՐՄՈՔԸ

Ինձի երկինք ասաց սիրի՛ր,
Բերեց ծաղիկն ինձ համբույր.
Հովն էլ ասաց—հե՛չ մի՛ տխրիր
Ու սեր երգեց ինձ բլբուլ։

Աղբյուրն ասաց—առավոտ վաղ
Արի՛ գիրկս՝ յարիդ տես,
Մշուշն ասաց—ազգիկ ջինաղ.
Ահա՛ քեզ քող հարսի պես։

Խոր ձորակն ինձ տեղ տվեց,
Որ յարիս հետ թաքնվեմ.
Գաղ վտակը մրմունջ հանեց
Որ մեր ձայնը չլսեն...

Բայց մատնեցին մեզ շարքե՛ր
Գյուղը խոսեց մեզ վրա...
Ցաղջին ասաց մեր ատելիք
Իրար հետ չենք մտանա...

Ու ափսոս իմաց տվին.
Ա՛խ... ծամերս քաշքշեց.
Ատած տղին ինձ հարս արին,
Կարմի՛ր օրս խավարեց...

Չէ՞ որ երկինք ասաց—սիրի՛ր,
Բերեց ծաղիկն ինձ համբույր.
Հովն էլ ասաց հե՛չ մի՛ տխրիր,
Ու սե՛ր երգեց ինձ բլբուլ։

1906 թ.

ԳՐԱԼԵՏԱՐԻ ԵՐԳԸ

Ո՛չ զրկանք, ո՛չ մտրակ, կախաղան,
Ո՛չ դավեր բռնակալ բիրտ ուժի,
Մեր գլխին անպատիժ պիտ խաղան,
Պիտ մարեն մեծ հրդեհ վրեժի։

Կռվի մեջ այս կյանքում բարբարոս
Միշտ կրծքով պատրաստ ենք հարվածի,
Որ վառենք նոր կյանքի վառ փարոս,
Թոթափենք ճնշումը չար լծի։

Եվ ի՞նչ փույթ, որ փշոտ ու դժվար
Մեզ շավիղ վիճակվեց կույր բախտից.
Մեզ հետ է բազմություն հոծ, ստվար՝
Արթնացած գետնաքարշ ճորտ ախտից։

Բազուկը, որ կոփեց կուռ շղթան.
Թիկունքը, որ ծռվեց բեռի տակ.
Մտքերը, սողացող զոյության—
Ապրելու տենչանքից ոտնատակ։

Օ՜, երբե՛ք չեն դողա փշրելու
Ճորտ դարի հիմքերը խարխլած,
Շավղի տեղ լայն ուղի հարթելու
Գտնելու իրավունքն իր խլած...

1 նոյեմբերի 1906 թ.

* * *

Քաղցից արնաքամ հիվանդ հյուծվերի
Անույժ զանգվածից դուրս գալիս կյանքը
Թշվառ բանվորի։

Խոնավ նկուղում, ազատ ու փայփայր
Ագռաւոիկ կյանքի մի սև դիշերում
Նա եկավ գշխարհ։

Խավար էր շուրջը... պատի ծերպերում
Քամին ոռնոցով լուռ զրկանքների
Երգն էր երգում...

Երգն էր երգում հոգեմաշ վշտի
Լուռ տանջանքների — ու վիգուած ազատ
Դեմքը մանկիկի։

Մի մութ անկյունից վհատ տրտունջով
Նա նզովք ցանց նորածիր կյանքին
Անմեղ, անխռով։

Եվ հյուծված սրտի ջերմագին գոռալ
Որ նրան առավ-սեղմեց շոր կրծքին
Արցունք թափելով։

Այն նվաղ հյուծիկ, որ խեղճ մանկիկին
Հազարդ չոմեց առաջին քաղցի
Անգութ վայրկյանին։

Այն սմքած կրծքի զարկերն արագ,
Որ խուլ ձայներով նրա թույլ սրտին
Ազգեցին ստրատի։

Նա չհավանեց... ու գժգոհ ձայնով...
Յրտից կարկտոտած խփնավ ճիգուզամ
Բոզոքից լցրեց։

10 դեկտեմբերի 1906 թ.

ՁԱՅՆ ՏՈՒՐ ԱՄԵՆՔԻՆ

Տես, փրլփրլում են ավերակներիդ մախրի կույտերում
Վերջին շոր հացդ, վաստակիդ վերջին թեռմաշ փալասներ.
Փլատակներից՝ խավար գիշերում սև բուն անդադրում
Քեզ վա՛յ է տալիս նատեպեն, շուրջդ—ցրվածդ ոգեվներ։

Նայի՛ր, անհատիկ, ամուլ արտերիդ երիցից խոպան
Շրջմոլիկ քամին՝ թևերը փռած ագա՛ռ կրպարի,
Ծղրիդն է գարձել փանգնած ջաղացիդ միակ շաղացպան
Կրծդրա անքուն անգործ անիվիդ կերգն ազոթմի՛...

Նայիր ժանգն ինչպե՛ս ցիր հատ չերտերով գաթանիդ-բահիդ
Անգործ օրերի ստոր կնիքի գրաշմ է դրել.
Ավեր ախոռից երբեմն ատույգ կով ու եզներիդ
Ուրախ բառաչը, գոհունակության մնջոցն է լռել։

Նայի՛ր և շուրջդ, ինչպես բռնության ժանր լծի տակ
Կիսաքաղց, լքված վիճակում են մարդիկ տենդոտ զայրույթով,
Անհույս արտերում թուլնը վրեժի ուանանպատակ՝
Թշնամո՛ւն մոռցած, ձեռքերը ներկում հղոտ արյունով։

Սթափվի՛ր, թշվա՛ռ... ձայն տուր ամենքին՝ ա՛վ քո դառնության,
Քո արցունքներին, քո մատչ խաչին հեգել է ընկեր,
Ձեռք-ձեռքի տված՝ դուրս եկ կռվի գաշտ, որ որ մարդկության
Մի այլ, նոր կյանքի կոչնակն է հնչում—վեհ ավետաբեր...

12 դեկտեմբերի 1906 թ.

... ՀԱՆԳՅՐՆ�Ի՛Ր ՁԱՎԷՐԸ...

Խավա՛ր է... գիշեր... հեռա՛ն զենիթում
Մրշոլի միջից գալուկ դեմքերով
Նիրհում են անդորն աստղերը տրտում,
Սոսկումով պատած մարմքրում շուրջով։
Տգեղում է հողը ցնչով մահահոտ
Վիշտն է գալարվում երկրի երեսին,

Օդի թևերին կըսկիծի լացոտ
Մրմունջն է հնչվում չկա՜ և դուսին...
Բայց դո՜ւք կամեցաք մրցել երկնային
Վառ կանթեղների լույսի հետ նսեմ,
Եվ ձեր բազմաթիվ լապտեր-ջահերին
Մի ակնթարթում կյանք տվիք վսեմ։
Եվ ահա մրոայլ, անմարդ փողոցում
Մեջ կես գիշերին ձեր պալատներից
Շո՜ղում են լույսեր մթության ծոցում
Շքեղ զարդարված պատուհաններից։
Դուք տո՜ն եք տոնում ու զվարճանում
Այնտեղ՝ հոյակապ մտքի, հանճարի,
Ոսկու, արծաթի, վայելքի գրկում—
Ու բարեմաղթում ամենքին բարի...
Դուք տո՜ն եք առնում ու զվարճանում
Ուր ամեն քարը ունի պատմություն
Ցուր տակը ճըզմած թշվառ գանկերի,
Ուր որ աղյուսը ծծել է արյուն
Ու կաթիլները—աղի քըրտընքի...
Դուք տո՜ն եք տոնում խրոխտ թնդացնում
Ուրա՜խ քրքիջով բարձր պատերը,
Որոնց վրայից քաղցած, անխնդում
Ընկավ թշվառը, փշրեց ոտքերը...
Եվ լապտեր-ջահեր շողում են պայծառ
Ու լույս տարածում ձեր կուշտ դեմքերին՝
Մինչդեռ խիղճերդ կա՜ծր է ինչպես ժայռ—
Մշտական խավար՝ սրտերիդ բաժին։

Հանգցրե՜ք ջահերը...

Եվ թո՜ղ շարեշար ձեր ճոխ սեղանի
Շուրջը հավաքվեն քաղցած ու տըկլոր
Անտեր որբերը այն թշվառների՝
Որոնց դուք թողիք առանց հոր ու մոր։
Եվ թող շարեշար գծուծ, ոտաբաց
Շեմքերդ լիզող հավաքվեն մայրեր,
Որ փողոց ընկան մուրալու չոր հաց
Ու ձեր պալատում փնտրեն շիրիմներ
Այն բանվորների—ում կյանքի գնով

Երկինք բարձրացան շքեղ տներիդ
Բարձր պատերը ճարտար քանդակով
Վարդակ լինելու փարթամ կյանքերիդ։
Եվ թո՜ղ շարեշար, արնոտ, ուշաթաղ
Հոշոտված մարդկանց սև ուրվականներ
Խոնավ փոսերում թողած չոր դագաղ՝
Ձեզ այցի ելնեն տեսքով մահաբեր...
Ձեզ հետ տո՜ն տոնեն ու զվարճանան
Այլանդակ կյանքի վայրագ քրքիջով,
Երգեն զրկանքի երգը հոգեհան—
Չոր հացի երգը—մահվան մրմունջով։
Եվ խավարի մեջ խավա՜ր գործերիդ
Պատմեն արգասիք թշվառ անցքերի
Ու հանեն ահեղ դղրդ ու շռինդ—
Անարդարության սև կապանքների...

Հանգցրե՜ք ջահերը...

14 դեկտեմբերի 1906 թ.

ԵՎ ԵՍ ԵՐԳՈՒՄ ԵՄ ԿԱԹԻԼԸ ՎՇՏԻ

Ուզեցի երգել երկինք, աստղ, լուսնակ—
Թթեր կապուտակ.

Գարուն, խընդություն—ջահել օրերի,
Աչերը յարի։

Ուզեցի երգել՝կայտառ մրտքերիս,
Փարթամ երազիս

Անհուն-ծալքերից շըքեղ հյուսվածքով—
Երգեր հոգեթով.

Ազա՜տ ու ազա՜տ թրռիչքով անվախ՝
Ամենքից անկախ

Հուրհուրել սըրտիս կըրակը անշեջ—
Ամեն սրտի մեջ...

Ձեղավ... մոլեգին շունչը գարդերի,
Ընարուկ օրերի,

Տենչքս ավերեց... ու ես անարև,
Որպես խեղճ տերև,

Վազահաս աշնան մեռցնող շընչից,
Հալածված ցրտից՝

Ընկա խորշոմած տատասպանների
Եվ կապանների

Խավար անդունդը... Ահ, մեռան, կորան
Անդարձ հավիտյան

Փարթամ մրտքերիս շրջող հուրհուրանք.
Երազս՝ անկյանք...

Եվ ա՜ւան է փովել սրտիս մութ հովտում
Ու ցավն է վրխտում

Այնտեղ տնկածն... Ես նա դրում
Անքուն, անդադրում

Թշվառ մատաղահաստ ոստերն օրերի
Կանթեղը վրան...

19 դեկտեմբերի 1906 թ.

ՍԵՎ ՕՐԵՐԻՑ

Գետը եկավ գոչգոչալով
Խփեց քարին, քարափին
Ջուրը պղտոր, սիրտը խռով
Ալիքները մռնգին

«Սիրո՞ւն գետակ, ինչո՞ւ կուլաս
Դու մտածկոտ ու տխուր,
Ասա ո՞ւրդից և ո՞ւր կերթաս՝
Ո՞վ պղտորեց քո փրփուր»։

Անտե՛ր մնար կոզակ տղան
Երեկ գիշեր գյուղ իջավ,
Մարալի պես նազ աղջկան
Լիրբ կրքերին զոհ արավ...

Առավոտ վաղ թշվառ մայրը
Աչքատ դիակն ինձ տվեց՝
Ձեռուկ հայրը ափիս լոքած
Շո՛ւտ պարտկեց աղեբաց.

Դաշտեր, ձորեր անցա թաքուն
Կրծքիս սեղմած աղջկան,
Որ չիմանան ի՞նչ եմ տանում
Ու չինդա մեր դուշման։

Ահա հուզված ծովն եմ վազում
Անմեղ զոհին թաղելու,
Ա՜խ ո՞վ գիտե, ո՞վ իմանա
Վաղը ի՞նչ եմ բերելու։

Գետը եկավ գոչգոչալով
Խփեց քարին, քարափին
Ջուրը պղտոր, սիրտը խռով
Ալիքները մռնգին։

1906 թ.

ՀԵՌՈՒՍ

Ինչո՞ւ զարթնեցի... հայրենի երկրում
Լեռների գրկում—արծիվների մոտ,
Հանգչում էի ես—անո՞ւշ մրափում.
Գլուխս դրած քարերին մամռոտ։

Հասած արտերի ոսկեզօծ կրծքով
Զեփյուռն էր խաղում ժպիտը բերնին,
Դալար դաշտերի կրծքին խայտալով
Վտակն էր երգում իր հին մեղեդին։

Թովիչ շշուկով հովիկն էր շոյում,
Խփում թևերով սարի սմբուլին,
Ծաղկանց ականջին ինչ-որ փսփսում
Ծաղրում, բամբասում, հուզում իմ հոգին։

Երկինքն էր կապույտ, հովերը մրմունջ
Եղեմի բուրմունք—օդը հարազատ,
Ու սիրտս խաղա՜ղ նիրհում անմռունչ
Հայրենի հողի գրկումը ազատ...

Ինչո՞ւ զարթնեցի... կարոտ ու պապակ
Օտարության մեջ չորցած շրթերից
Ո՞վ հափշտակեց նեկտարն անարատ,
Ո՞վ զարթնեցրեց այդ քաղցր քնից։

1906 թ.

* * *

Ջրհորի մոտ փոքրիկ տղան
Կորագլուխ կը հեկեկար—
«Ինչո՜ւ կուլաս, ասի նրան
Ի՞նչ կորցրիր—չը գտար»։

Ա՜խ, մորաքույր, ես մի կարմիր
Անուշ խընձոր ունեի,
Հորի միջի տղին նայի՛ր,
Հետը խաղալ կուզեի։

Ասի, արի ես քեզ ձգեմ
Կարմիր անուշ խընձորս,

Դու վեր ձգիր, ես կը բռնեմ
Ու կը փորձենք ուժերը։

Հիմա խնձորս ինձ չի տալիս
Հորի միջի չար տղան,
Ա՜խ, մորաքույր, ինչո՞ւ լալիս,
Արտասվում է ինձ նման...

1906 թ.

ԿԵՍ ԳԻՇԵՐԻՆ

Արևն իջավ էապայլտին
Նազելի,
Աստղը ժպտաց խաղաղ լճին
Հայելի։

Մութը պատած կրծքին սեղմեց
Լեռներին,
Հովը վազեց ու գուրգուրեց
Բույսերին...

Գետն երգեց, ապրած կյանքի
Փառքերից...
Ծայրը լացեց կախված ձորի
Եզերքից...

Ավերակի խուլ ծերպերում
Բուն դրած
Ծղրիդն երգեց. գորտը ճահճում
Կուկռաց։

Բուն վույվույեց... ու տխրակին
Սեզ լեռներ
Լացին լռիկ... հեծկլտացին
Ծաղիկներ...

Լեռը սրբեց թաց աչքերը
Ափերով
Վազեց քամին, մտավ ձորը
Լուռ լալով...

Ու այդ խորո՞ւնկ լռության մեջ
Մի վայրկյան
Դեղաց երկրի կարծր կրծքից
Հոգեհան

Մի սրտամաշ տխո՞ւր հառաչ
Լալագին—
Սև մռայլի քողը քաշած
Իր դեմքին...

1906 թ.

Դու չե՞ս հավատում—կյանքի սև գիշեր
Այսօր թե վաղը, մի օր կը կորչի—
Սրտամաշ ցավը, զրկանք շղթաներ
Բանտի կուռ դուռը մի օր կը փշրի։

Դու չե՞ս հավատում—միությանն ուժի
Անխախտ կապերը հրաշք են գործում,
Եվ այն որ ստրուկ երազ կը թվի
Մի օր մեր կյանքին կը բերն խնդում

Դու չե՞ս հավատում, որ առանց կռվի
Բնության ծոցում չկա գոյություն,
Ապրելը այն ժամ-ղեկ կյանք կկոչվի,
Որ խլեշների ոտի ցանկություն։

Թե հավատում ես, որ սև գիշերին
Անշուշտ կհաջորդի ցոլուն արշալույս,
Հավատա՛ դու և առանցքանի վերջին
Նոր բարեկեցության այդին, փիրահույս։

1906 թ.

* *
*

...Միտքս արծիվ է—
Կապույտ երկնքում, ամպերի գրկում
Ազա՛տ ու անկա՛խ—թարգներիս հետ,
Վառ գնորքներիս անհուն չարքերում—
Նա թռչել գիտե։

Մի դրս հովիկ է—
Աստղերին մոտիկ, լուսնի տեսից
Փրփուր ամպերի փափկիկ թևերին
Անմահ աշխարհի բարձր վայրերից
Նա վազել գիտե։

Միտքս ցոզիկ է—
Դալար դաշտերում, ծաղկի թերթերին,
Գանգուր խոտերի, մամուռ սմբուլի
Կանաչ ու կարմիր բոզբոզ թևերին—
Անո՛ւշ կը նիրհե։

Միտքս հեղեղ է—
Անհույս ժամերին, սրտամաշ ցավիս
Վախկոտ զայրույթին սողալու հակման,
Կեղեքված կյանքին, բախտի զարկերին
Նա կը հեղեղե։

Միտքս վտակ է—
Տանջված կյանքի մահաշունչ ձորում
Տառապանքների ձայնին ձայնակից։
Սրտամաշ լացի կականին տրտում
Նա կը ձայնակցե։

Միտքս հրդեհ է—
Գերության սովոր, զրկանքից մաշված
Դժգոհ սրտերում, դարուկ մարմրուն
Վրեժի թույնին—բռնությամբ խեղդած
Նա կը բռնկե։

1906 թ.

ՆՎԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Կաց, աղբեր ջան—հնչ մի գնար,
Օտար երկրից խեր չկա.
Թող չմարի մեր օջախը,
Նրբա գլխին բուն չլա։

Մահի գիրկը ղարի՞պ-ղուրպա՞թ
Մենք շա՞տ ունինք, աղբեր ջան,
Էլ հետ չե՞ն գար... մեր քար ու քանդ
Տան չորս կողմն էլ շա՞տ դուշման։

Ուր որ առաջ վարդ կը բուսներ—
Փուշ ու տատասկ էլ չկա՞,
Ուր որ բլբուլ կը դայլայլեր—
Հեծկլտանքի ձեն կուգա։

Ասված կուտա— էս սև օրեր
Ջքվին-կերթան մեր երկրեն,
Կուգա գարուն—հին-հին ցավեր
Մեր չարչարված սրտերեն։

Արի՛ աղբեր, խորհուրդ անենք,
Մի ճար գտնենք ապրելու,
Արի նորից քար-կիր կրենք
Մեր փուլ տունը շտկելու։

Կա՛ց, աղբե՞ր ջան, հե՛չ մի գնար,
Օտար երկրից խեր չկա—
Թող չավերվի մեր վաթանը,
Նրբա գլխին բուն չլա...

1906 թ.

* * *

Ամենքը լուռ են... Ո՛չ խաչ, մահարձա՞ն,
Ոչ սին խոսքերի անտեղի հեղեղ,
Անօգուտ վշտի չկա՛ լաց կական
Ժամն է ահեղ։

Կոշտ, բիրտ բռունցքներ ճոճում են օդում
Հուժկու կրծքերից երդում ու նզովք,
Աչքերից սրտի ժանտ թույն առկայծում
Չի լալիս ոչ ոք։

1906 թ.

ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ՝

Սոխրաթավալ բլուրները ամպերի
Փքված, հպարտ պար են գալիս երկնքում.
Ճոճող կուրծքը սև, մթագնած եթերի
Նոցա ծանր ոտքերի տակ է տնքում։

Եվ մոլորված վարուժաններ հեիհև
Գլխապտույտ արուներ են որոնում,
Սև ամպերի կրծքին մի կետ, առանց թև
Կնոջ ճերմակ թաշկինակի նմանվում։

Թռչունները ցած են թռչում տագնապով.
Բների մեջ տիրում ճլվոց, վայնասուն.
Ճամփորդները տեղ են պտրում ապահով.
Իրարանցման մեջ է ամեն անասուն։

Հոխորտանքով վազվզում է պաղ քամին.
Փալար դաշտի շշմած բույսերին ծեծկում.
Որոնք դաժան դեմքին նայել չկամին,
Իրար փարված փոշոտ գետնին են պառկում։

Սաղարթախիտ նոճիները խշշալով,
Լայն թևերը թուխսի նման տարածած.

Անզոր տունկեր պարիսակում են խնդալով,
Հայհոյում են քամու ծնունդն անիծած։

Կացե՛ք ամպեր... ե՛ս որոտամ, դղրդամ,
Մրրիկ թեռվ ծեծկեմ, փշրեմ ու անցնեմ.
Պահվի՛ր կայծակ—հրե՛ շանթեր ես շաղ տամ
Իրար խառնեմ երկինք-երկիր ու հանգչեմ...

1906 թ.

ԳԻՇԵՐԸ ՇԱՐԱԿՈՒՄ

Խաղա՜ղ գիշեր է... մեգն օրորվելով
Մի ակընթարթում տարածվեց լուսիկ,
Երկնից դեպ երկիր այնպե՜ս դողալով
Կարծես չարքերից վախեցած մանկիկ։

Դալկացած աստղեր, քնաթաթիթելով
Լուսիկ աչերի սլաքթարթիչներ,
Մերթ փլփլալով դժգույն ցոլքերով
Ու անո՜ւշ նիրհով թմրան անտարբեր։

Աղամա մութը մեղմ ճոճաց երկրում,
Ու կախարդական լռության միջով,
Սլացավ ծովը, դժգոհ ու արտում
Բույսը ավվաց ու լռեց շուտով։

Մի ակնթարթում... նշկանչներ,
Դաշտ ու սև անտառ, ոչ օձապտույտ
Կարկաչուն գետակ, ոչ ձոր, քարափներ՝
Թշնամ ու տրինչ... լուսիկ խավար անփայթ։

Նիրհում է ոգին... խոտ, ծառ ու ծաղիկ,
Ժեռ քար, ապառաժ, աղբյուր ու վտակ,
Երկինք ու երկիր, միշտ ուսաղ հոգիկ
Ամբողջ բնության—անծայր ու անսպան։

Նիրհո՜ւմ եմ... սակայն հոգուս աչքերով
Դիտում եմ շուրջը զգում անզգա,
Առանց շարժվելու. ծծում դողալով
Մի սառը նեկտար—անարատ, անմահ։

Զգում եմ—որին տեսնել չեմ կարող,
Չեմ կարող գրկել, շոշափել, դիպչել։
Զգում եմ նրան, զգում ահ ու դող,
Որ չանցնի գնա քանի չեմ զարթնել։

Ահա նա—շուրջս, ինձի շատ մոտիկ
Կամ հեռո՜ւ այնտեղ՝ ամեն տեղ է նա....
Կամ մի ուրիշ տեղ, կամ ահավասիկ
Երկրում, երկնքում... զգում եմ որ կա...

Ուզո՜ւմ եմ տեսնել— զգում եմ ես ույժ.
Կրծքիս խոռոչի վերքերը բանալ,
Այն մե՜ծ վերքերից մարդկության անբույժ
Նրան ցույց տալու— աղերսել ու լալ...

Ես որոնել եմ նրան ամեն տեղ,
Ամեն օր, անքուն գիշերը լալով,
Տառապանքների կսկիծով ահեղ
Միշտ վառ հույսերով ու ջերմ հավատով։

Ա՜խ ես զգում եմ անշարժ, քարացած
Նրան իմ շուրջը—մարդով շոշափում՝
Սակայն նիրհում եմ՝ աչքերս փակած
Նիրհս է դյուրիչ, ու միտքս արթուն։

Ծծում եմ անհագ նրա կենսարար
Գոյության շունչը իմ երակներով,
Լցվում է սիրտս անվերջ, անդադար
Կյանքի բեղմնավոր կենդանի հյութով։

Ու սթափվում եմ... մշուշի կրծքին
Աշխույժ տեղում են լույսի ճառագայթներ,

Վառ ամպիկները դեմքով խեղդագին
Կուռ գուրգուրում են արևի շողերը։

Ահա սարերը. ձորակը, քարանձ,
Այնտեղ գետակը դալար ափերով,
Լեռնաշղթայի սահմանը ազատ
Եվ հին անտառը լո՜ւռ սևին տալով։

Անո՜ւշ ճվվոց, բուրմունք հոտավետ,
Խոտի փսփսոց, ծաղկի նազ մրմունջ,
Հիմքն են երգում ողջ բնության հետ
Տարածում հեռո՜ւ զգացված շշունջ։

Այստեղ, ինձ մոտիկ, հեռո՜ւ ամեն տեղ
Հնչում է խաղաղ, ներդաշնակ սիրով
Սրտաբուխ մաղթանք բնության շքեղ
Ուր նա եղել է, կա միշտ դարերով...

Եվ ես զգում եմ նրան իմ կրծքում
Զգում եմ գտնել—թափանցել անհայտ—
Վայրերի խորքը— այն անհուն հեռուն
Հոգուն տենչերու վայրը հարազատ։

Եվ ինձ զգում եմ հպա՜ռ ու վսեմ՝
Նայում եմ շուրջս իշխող հայացքով,
Որ նրա մասն եմ, մի փոքրիկ հյուլեն՝
Միտքս ամեն տեղ— անհաղթ թռիչքով։

1906 թ.

* * *

Ես երգիչ եմ սև օրերի
Մահասարսուռ օրհասի—
Կյանքի գարուն չեմ տեսել
Նախշուն ծաղիկ չեմ քաղել։

Ես ծգրիդ եմ ավերակի
Փլատակած ծերպերի—
Ուր մոխիրը դեռ տաք է.
Բուն միալար կը վայել։

Ես վտակ եմ արցունքների
Իմ խեղճ ազգի տանջանքի—
Մինչև հիմա չեմ չորցել,
Երկրի վրայից չեմ կորչել։

Ես երգիչ եմ սև օրերի
Մահասարսուռ օրհասի—
Արյան երգեր եմ երգել,
Հույսս լացով սնուցել...

1906 թ.

X-ին

Ասում է— լռի՜ր, լալկան երգերով
Զուր ես վիրավորում քո հիվանդ հոգին,
Մեր տխուր կյանքը մռայլ գույներով
Մեզ շա՜տ երգեցին ու ձանձրացրին։

Ասում է— լռի՜ր, գրչի խաղերով
Կանցնեն օրերդ անշահ ու անմիտ—
Նոր կյանքի գարուն չի վառ հույսերով
Մի՞թե չի հուզում քո ճնշված հոգին։

1906 թ.

* * *

Կուզեմ մարմնացած սեր լինել անշեջ,
Կամ թե երկնքում մի հզոր աստված—
Եթերում նստած չինչ ամպերի մեջ
Գողտրիկ աստղերը շուրջս թռլորած։

Անհուն բարձունքից վայր նայել սիրով
Գգվել հայացքով ոանչված հեռ աշխարհ,
Ու աստվածային սփոփիչ շնչով
Սեր ու հույս սփռել թշվառի համար։

Բանալ թևերս, պարզել լայն-ազատ
Տեղ տալ ստրկին— տերին հավասար,
Սրբել արտասուք, վիշտն անփարատ,
Իշխել ցավերին ու տիրել արդար...

Կուզեմ ես գրկել, գգվել տիեզերք
Կրծքիս գուրգուրել հոգնած գլուխներ,
Սիրել մարդկություն, անվերջ փայփայել
Ցավոտ աշխարհի չարքաշ որդիներ։

Երբ ես մարմնացած սեր լինեմ անշեջ,
Կամ թե երկնքում մի հզոր աստված—
Չե՛մ թողնի արյուն հոսի երկրի մեջ
Ոչ անվերջ արցունք աչքերից մարդկանց։

Որ նմաններս տանջվեն երկրում։
Դառնացած կյանքից վգեր ծառած—
Շքեղ եթերում, ամպերի գրկում.
Չե՛մ բազմի քեզ պես՝ բարբարոս աստված...

1906 թ.

ԽՈՐՀՐԴԱԼՈՒ ԱՄՐՈՑ

Հոգու խորքում, սրտիս մոտիկ մեն-մենակ
Անձեռագործ շքեղ ամրոց կա շինված—
Սրբատաշ են պատ, առաստաղ ու հատակ,
Զարդիր ձեռքեր նրանց երբեք չեն դիպած։

Քարերը լերկ՝ որպես կարծր գրանիտ
Սև վշտերի հրաբուխից մնացին,
Միակ դուռը ու ժանգոտած գրանիտին
Ճնշված կյանքի ուսի վրա կոփվեցին։

Շաղախել եմ ես աղյուսը ոգեղենքով
Տառապանքի կսկիծներից կաթկթված,
Զորացրել եմ սիրտ քրքրող հառաչով,
Խարույկ սրտիս բոցերովը դուրս ժայթքած։

Շրջապատել եմ պարսպով անառիկ
Սև-օրերի շաքարովը հնացած,
Որ չնայեն ու չտեսնեն նենգ մարդիկ,
Ու չհասնի նրան հայացք չարացած։

Պարսպից դուրս խո՛ր-խո՛ր վիհեր կան ձգված
Ուր մշտական մութ ու խավարն է ավրում,
Խավար մտքիս հեգ թևերին գոսացած
Երազների հիշատակներ գալարվում։

Անկուշտ թափով լայն բացված այն ծերպերում
Գերեզմաններ շարե. ի շար են կանգնած,
Ուր լալագին հեծկլտում են, կրծկրվում
Խոլ խղճիս վաղամեռիկ անդ թաղած։

Իմ ամրոցին հավատարիմ պահապան—
Ես շրջում եմ պիշերներիկ անդադրում,
Մեղմ երգելով իմ երգերից հոգեկան
Ու խնկարկում կսկիծներից ես բուրվառ։

Կամ խփում եմ հեգ քնարիս լարերին՝
Նոր հույսերի, հին վշտերիս հետ հյուսված,
Ու զողանջով տանջված սրտիս մեղեդին
Տարածվում է դեպի հեռուն թև առած։

Ամրոցիս մեջ, ցնորքներիս կույտերին,
Վառ հուշերի, երազների պատրերում
Անձեռագործ, քաշած սրտիս պաստառին
Մի ջինջ պատկեր... այնտեղ վազոց է կանգուն։

Արշալույսին՝ երբ մտքերիս ոսկեթանում
Նորափթիթ ծաղկում հոտաբույր ծաղիկներ—

Ես ծնկաչոք նրա առաջն եմ ընկնում
Ու բաց անում հուզված սրտիս գոց դռներս։

Սիրո հրդեհ բռնկվում է իմ սրտում
Ու խեղդոտում կսկիծներս իր թափով,
Նրա պատկեր կրակ կրծքիս եմ սեղմում
Ու ծածկում եմ այրվող խանդի համբույրով...

Լուռ հոսում են իմ աչքերից արցունքներ
Քաղցր հուզմունքի, սփոփանքի խնդության,
Որպես բյուրեղ վաղ ցողիկի կաթիլներ
Ծաղկանց թերթին գեղատեսիլ վառ գարնան։

Ու վշտերի փշերի տակ թաքնված
Բացվում սրտիս կոկոնները սիրաբույր,
Հոգիս զվարթ, թարմ մտքերս թև առած
Նկարում են մի նոր գարնան հրապույր...

Մոռացվում եմ... օտարանում տարակիր
Ես աշխարհից լոկ վշտերով ամպամած—
Որ չարիքից սնցած դեմքով իր պատիր
Մանկությունից ինձի մայր է խորթացած։

Զքանում են կնճիռներն իմ սրտից
Որ այնքան վաղ բախտի ձեռքով գծվեցին,
Ու վշտերի սև ամպերն իմ ճակատից՝
Միշտ կուտակված անփորձ կյանքի սխալից։

Դուրս է թռչում կրծքիս խորո՜ւնկ խորքերից
Անշահ սիրո վեհ սիրաբուղխ մեղեդին—
Որ սիրո՜ւմ եմ... անմահ սիրով՝ գիտակից
Ջրսիրվելուս... ուժ տվել եմ իմ հոգին...

Վերջալույսին՝ երբ ամպերն ալ հագած
Դեմ են տալիս վառ թշերն արևին,
Ու դրոշմում մեռնող շնչով վախեցած
Հրաժեշտի այն սրտաբուղխ համբույրին։

Մնաս բարյա՜վ, շշնջում եմ ծնկաչոք
Իմ սիրելու համբուրելով ջինջ պատկեր—
Հագնում դիմակ—որ չհասկանա ինձ ոչ-ոք՝
Թե ժամերով ես ո՞ւր, ինչպես եմ ապրել...

Հոգուս խորքում, սրտիս մոտիկ, մեն-մենակ
Անձեռագործ, շքեղ ամրոց կա շինված—
Ուր գեթ մի ժամ, մի րոպե ունեմ կյանք՝
Սիրտս ազա՜տ, երազներս թև առած...

1906 թ.

* * *

Հեռո՜ւ թախիծը—հոգուս ծաղկոցում
Ուր ցնորքներիս ծիլերն են աճում—
Ուր երազներիս հուսալի կրծքին
Երբեմն հոգնա՜ծ կը հանգչի իմ հոգին։

Ջնքուշ ծիլերը կը դողան թախծից
Կը սառչեն երազ, հույսը վշտալից,
Հոգիս մոլորված, կը նիրհեն խեղճը
Անկցի իմ սրտից մռայլ թախիծը։

1906 թ.

ԳԻՇԵՐ

Մո՜ւթ է աշխարհը... գիշերն է շնչում
Մայր երկրի վրա և ողջը խաղաղ,
Լո՜ւռ խորհրդավոր, անձայն, անհնչուն
Մորփեի գրկում տարածվեց գանդաղ։

Եվ խարխափելով մենակ, անընկեր,
Ուշացած քամին սողում է սարից—
Որպես սիրահար—որ սրտա՜նց կուզեր
Ամբողջ գիշերով գգվեր իր յարից։

Լինն ալիքներին փաթաթ անկողին,
Որ հանգիստ առնեն լուսատիրի հետ,
Սակայն իր կրծքում լուսին-սիրուհին
Սիրատարփ խաչով օրորում է վեհ-վեհ։

Ջեչոտ քարերը աղբյուրի եզերին
Խայտում են խանդով հստակ շիթերին։
Ավազներն ինչպես քաղցր երազից
Նիրհում են անհոգ ժպիտ շրթերին։

Խոժոռ ժայռերը—ձորակի հսկիչ
Կասես ձգտում են խորը թափանցել,
Բայց խավարի մեջ չեն տեսնում ոչինչ
Ում հետ բույսերը սո՛ւս թաք են կացել։

Կարելի՞ նիրհի՞լ... այստեղ, սրանց մոտ,
Այս խորհրդավոր անդորրը ճակտին՝
Կախարդ բույսի պես՝ մինչև առավոտ
Միայն քո լանջին կարոտ, սիրելիս...

1906 թ.

ՆՈՐ ԵՐԳ

Իմ պատասխանը...

1.

... Եկա ես ձեզ մոտ... ուզեցիք լսել ինձնից մի
նոր երգ.
Մի պա՞րզ, անպաճույճ, գլուխիկ կյանքի,
Ցշտի մոտհույզ,
Անլուր տանջանքի, քաղցած օրերի տրրտմագին
ցավերգ.
Որ նա ոլորտար հընչուն բամբիռով, գոռ
մրրրկահույզ.
Ղողանջեր ազատ, ձեր շուրջը անմոռ,
ներդաշնակ, սահուն,

Ձեզ միշտ հարազատ, լքված սրտերիդ՝ ընկեր.
մրտերիմ
Եվ տանջանքներիդ հընկա լեռների գագաթից
անհուն—
Բովանդակ աշխարհ տարածվեր անհաղթ, ձեզ
հավատարիմ...
Որ նա չընկներ քրմքերին գերի կամ հաճոյացող,
Հրդեհացած կյանքին չընդուներ ծոներ՝ որպես
հացի դին.
Որ նա չերգվելու ահից վախեցած չդղրդար-ահ
ու դող,
Երկնային տուրքի ունենար անկեղծ, վեհ,
ընթացք հոգին։
Որ փառքի համար ոսկի հորթերի առաջ
չընդողար,
Կամ չը խընկարկեր փրքուն խարտիրով յուղ
կապած ու կուշտ՝
Անարդար կյանքի բախտավորներին. ատից
չընդողար—
Սին ցնորքներից չընթաներ երբեք օդային
փամփուշտ...

2.

Կերգեմ քեզ համար... քեզ թրշվառ խուժան.
Անպաճույճ մի երգ, ձեր անտանելի
Կյանքի խալական զրկանքի դաժան՝
Լո՛ւ մեծ պատճառից—պահնք գիշերի...
Ձեզ նման աղքատ, Ձեզ նման հյուծված՝
Հիվանդ հյութերից ես ասա ծընունդ.
Խոնավ խրճիթում մշրուրը ծրծած՝
Օրրանիս փոխան; խավար էր, անդունդ։
Քայլս առաջին՝ զրկանքն երերեց.
Ապատ թոթովիս՝ ուժը բրունուիթյան.
Եվ տրգետ կյանքի շրջիան փնձ գերեց,
Լոկ երգը մընաց տենչերիս խրթան...
Ես՝ իմ ապրը երգման հրլու հրնազանդ,
Վայելքից հեռու, ձեր ցավին մոտիկ՝

Երգում եմ ահա ձեզ իմ սուրբ ավանդ՝
Որին դո՛ւք ինձնից լսել ուզեցիք։

3.

Հի՛ն ժամանակում շքեղ մի երկրի
Արգավանդ կրծքից մեծ գետ էր վազում.
Ջրում էր առատ դաշտերը բերրի
Հրսկա ժայռերի փեշերը լիզում։
Նրա ափերին, գյուղերից անթիվ
Գոհունակ կյանքի հեքն էր ոլորվում.
Ծռում աշխատանք, պրտրտվում անիվ,
Հասկերը պարարտ՝ հովից օրորվում,
Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր
Առույգ խաշների մընչոցն էր լսվում,
Ծաղկի և խոտի սիրատարփ հուշեր՝
Ներդաշնակ ձայնով անո՛ւշ սրվսրվում։
Խրոխտ լեռների կրծքից բարձրանիստ
Հազարան-ազբյուր, քրքրքլան շրվեժ՝
Հյուրընկալ գետում կառնեին հանգիստ,
Մամռոտ ժայռերից վազած գահավեժ,
Հետո՛ւ դաշտերում, լա յն ճյուղավորված
Հրստակ գետակներ ազատ խոխոջով
Ջրարշատ գետին սերտ միավորված
Հոսում էին գոհ, ուրախ մրմունջով։
Այն մրշտադալար ափերում խաղաղ
Հընչում էր թրռչնոց անհոգ դայլայլիկ,
Գես-պես ցոլքերով, ջինջ արծաթաշող
Նազ ոստումներով խաղում էր ալիք։
Այն վայրը զուրկ էր վրշտերի ախտից.
Կասես սուրբ եդեմ շընչոզի համար.
Անրսպառ աղբյուր երկնառաք բախտից
Հոսում էր այնտեղ՝ չրկար գործ-վատթար։
Եվ ապրում էին մարդիկ հիասքանչ.
Կյանքն էր հոսում խաղաղ հոսանքով.
Գետի հրգերին դընելով ականջ՝
Հուրին էր գյութում իր ըզբոսանքով։

4.

Մի օր հավաքվեց մի մեծ ծերակույտ
Դալար ափերի հյուրընկալ գրրկին.
Եվ ջահելների քրրքրջին անփույթ
Ցայնակցեց գետի սիրանույշ ոգին։
Այն շեն գյուղերից ափին գրբառատ
Խուրձեր դարսվեցին արտերից պարարտ,
Եվ ողկույզներից՝ հյութալի, առատ՝
Բարձրացան կույտեր խընամքով անպարտ։
Հարս և աղջիկներ ձեռք-ձեռքի տված,
Թարմ ծաղիկներից փրնջեր կրծքերին
Պրտղաբերության կապ՝ թե աստված
Օրհներգ կերգեին-ջինջ ալիքներին։
Ահա նրստում է մամռապատ քարին
Մի պատկառելի, ալեզարդ ծերուկ,
Խընդրում ամենքին վերջ տալ երգ, պարին՝
Ն.ո ժամ խաղաղել ոգելից աղմուկ։
«Մենք ամեն տարի մեր վաստակներից
Բերում ենք գետին նվեր, ողջակեզ՝
Որպես հավատիք կուշտ, գոհ կյանքերից,
Խաղաղ օրերի ողջույն սրրտակեզ։
Բայց այսօր, որդիք, մեր ծերակույտի
Խորհուրդը կուզե ամենքիդ հարցնել—
Ի՞նչ մի լավ անուն տալ մեր այս գետի՝
Ջրրին կենսարար՝ ու անմահացնել...»
Բարձրացավ աղմուկ, աղաղակ խընդում,
Ամբոխին տիրեց անասել բերկրանք՝
Ալեզարդ ծերի խոսքն ամեն սրրտում
Փոթորիկ հանեց. «Ի՞նչ լավ անուն տանք...».
Մինչև ուշ գիշեր հուզված, անհամբեր
Լարված մրտքերից արդյունք չրստացվեց.
Եվ չրքնաղ գետին արժան, պատվաբեր
Ոչ մի գեղեցիկ անուն չրնտրվեց։
Ամբոխին տիրեց թախիծ հուսահատ,
Լրսվեցին ձայներ, բողոք քրմածին,
Առաջին անգամ վիշտը անփարատ
Վրրդովեց սրրտեր՝ փոքրին և մեծին...

Լեռների լանջից այդ տխուր ժամին
Հընչեց քընարի մըրմունջ ներդաշնակ,
Գուսանն էր երգում. և զոքիկ քամին
Տարածում հեռո՛ւ մելանուշ նվագ։
Բերկրանքի շըշուկ տարածվեց օդում
Ու քարափ դիմեց ուրախ ամեն մարդ,
Եվ դալարազարդ, ընդարձակ դաշտում
Բարձրացավ հընչուն, աղաղակ զըվարթ։
— Երգի՛ր մեզ, գուսան, խրփի՛ր լարերին—
Հուզված այն մարդիկ խընդրեցին նրան.
— Մեր կյանքից երգի՛ր, գովի՛ր դու բարին,
Ընտրի՛ր մի անուն գեղին անանման։—
Գուսանը նըստեց լերկ, չեչոտ քարին,
Յուր շուրջը դիտեց հրճվանքով անհուն,
Դողդոջ մատներով խրփեց լարերին.
Քընարը հընչեց հնագի՛նդ, սահո՛ւն...

5.

ա... Եվ ես. ասված եմ
Անհաղթ, անասան,
Ձարին՝ միշտ ընդդեմ՝
Սեր, երգի գուսան։
Կուզեմ՝ գարուն է
Դալա՛ր, ծաղկազա՛րդ.
Ձեփյուռ կը բուրե,
Շուրջը՝ ցողազարդ։
Երբ ե՛ս եմ երգում—
Արքան եմ երկրի,
Քնության գըրկում
Հըմայող փերի...
Բաց է ինձ համար
Սըրտերը մարդկանց,
Անհայտի անծայր
Գաղտնիքն անթափանց։
Գիտեմ ճաշակել
Ռուսի թուխ բույր,

Հոգով գուշակել
Ամպերի հանգույր։
Քընությունն ինձանից
Ջունի մի գաղտնիք։
Ալին հորձալից՝
Ո՛չ մի արհամարիք
Մարդկանցն համար
Վըշտին ձայնակից՝
Ունիմ ես վեհ ձայն
Տրված երկնքից։
Առանց երգելի
Միջատ եմ չընչին...
Փորձանքին դեմ
Ընկճվողն առաջին...
Ակն եմ անքսպառ
Սիրո, բերկրանքի,
Կանթեղ լուսավառ
Փորձալից կյանքի...
Ո՛վ ժիր ժողովուրդ,
Քո հուզված սրտին
Տալիս եմ հանգուրդ։
Լըսի՛ր իմ երգին։
Երկա՛ր տարիներ
Իր ասատ ջրերով
Դալար պըտղաբեր
Բերրի ափերով
Ձեզ կյանք է տվել
Գետը այս սիրուն,
Շուրջը տարածել
Ե՛վ խինդ, և գարուն։
Բայց դեռ մոռանաք
Որ անթիվ գեղեր...
Ջրվեժ ու վըտակ
Բազմաթիվ ափնոր
Սերտ խոխոջելով
Հաճել են այստեղ
Եվ իրենց թանիով

Բաց արել հեղեղ։
Ահա բընության
Այս գործից արդար՝
Որ առատության
Բախտ է ձեզ համար,
Որ տարերային
Նույն իսկ կյանքի մեջ
Հզոր գերբնային
Ա՛յն ուժն է անշեջ—
Երբ նա ձուլված է
Մի սիրտ, մի հոգով,
Այնտեղ աստված է
Անխորտակ կյանքով...
Ահա գուսանիս
Խորհուրդը միակ,
Եվ երգած երգիս
Որպես օրինակ՝
«Միություն» անուն
Տվեք այս գետին,
Որպես պատվանուն
Միացած ուժին...»
Ամբոխի սրտից
Թռան ցընծություն,
Եվ գետը այն օրից
Կոչվեց «Միություն»...

6.

Երջանիկ կյանքի անիվն անխափան գընում էր առաջ.
Կույր բախտը ասես չէր ուզում երբեք զատվել ներանից.
Գարարտ ափերում ժիր գործն էր եռում անվիշտ, անհառաչ,
Կուռ բազուկներով խլում գոհ ապրուստ արգավանդ գետնից։

Անցան տարիներ... և ըմբոստացան գետ, աղբյուր, ջրվեժ.
«Միություն» գետի պանծալի փառքից խստաս կուրացած՝

Դավեր սարքեցին, ուզելով առնել ներանից վրեժ,
Որ նա սակավեր, էլ սընունդ չըտար մարգուն գոհացած։

Երբ գարնանային պայծառ արևի ջերմագին շողեր
Հալածեց երկրի կոշտացած ձյունի ըսպիտակ սավան՝
Անդ-անդաստանի և լայն դաշտերի փափկացած հողեր,

Ցեզ և գանգրահեր, բողբոջ բույսերը ելան երևան,
Ամեն մի գետակ, ջրվեժ ու աղբյուր իրար խոսք տված,
Թողին առաջվան հաշազատ ուղին, երկա՛ր օրերի
Անդուլ հոսանքով, բյուր արգելքներից շարունակ հարբած՝

Եվ ընկան օտա՛ր, հեռո՛ւ ճանապարհ... անանց քարերի
Կուրծքը քերելով, մենակ, անընկեր, իրարից բաժան...
Եվ սակավացավ ջուրը մեծ գետում, ափը չորացավ.
Այն խրոովարար, դավադիրների գործերից դաժան
Ուրախ քրքիջը վիրավոր սրտի հեկեկանք դարձավ։
Խորշոմեց ծառ, տունկ. չորացան արտեր, կանգնեց աշխատանք.

Տրխո՛ւր ափերից հեռո՛ւ չքվեցին կայտառ թռչուններ.
Սև սրգի փոխվեց երբեմն առույգ, բախտավոր, գոհ կյանը,

Ցիրուցան եղան մոլորված մարդիկ որպես ճիճուներ...
Եվ գետը՝ տրրտում, իր սակավ ջրի անուշ հոսանքով
Սահում էր լռիկ ամայի դաշտում մենակ, լալագին
Եվ մեռելային լռության միջին մաղձոտ անեծքով
Նըզովք էր կարդում ծաղկոտ ափերը ավեր դարձնողին...

7

Երգը վերջացավ... երնե՛կ թե շուտով
Ձեզ այցի գալի ձեռս մի քընար,
Իմ լեռ ցալերով, իմ ծով արցունքով
Ձե՛զ մոտ, ընկերներ, առնելու դադար։
Դողդոջ մատներով խբփեի լարին

Եվ երգ երգեի, նո՛ր երգեր ազատ,
Զեզ մոտ տեսնելով խորտակված չարին՝
Ներդաշնակ կյանքի հեքը հարազատ...
Գլուխքս հոգնած, դաշտերից ծեծկված,
Հանգչե՛ր անքաժան ձեր կուռ կրծքերին,
Եվ սորբ Միության գրրոշը պարզած,
Հպարտ փոզփոզեր իմ հանգիստ դեմքին...

1906 թ.

*
* *

Կուզեի տեսնել հոգուս խորքեր՝ իմ
Քեզ որպես նամփարդ ոտիդ կոթցրած
Ու գիշեր-ցերեկ անլուր, անդադրում
Ես քեզ հսկեի
Որպես իմ աստված։

Կուզեի որպես ծաղիկած պարտիզում
Պահել քեզ սոխակ թևերդ կտրած.
Որ երգանոցիս քողքոջ ծաղիկում
Լսվեց քո երգը՝
Ի՛մ սրտի սիրած։

Կուզեի կրծքիս օրրել անքաժան
Քեզ-իմ տանջանքի երգ ու վերքերով
Ու թեմանների շիրմիս մոհաբան
Շինվեր քո տաճար
Կարծր ժայռերով։

1906 թ.

ԹՇՎԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թշվա՛ռ ժողովուրդ... մոլեռանդ գերի՝
Փտած, խարխլած, անհայտ ուժերի՝
Որ այնպես թափով խոնարհվել գետես
Նաչ ու մասունքի զորությանն առաջ,

Որ այնպե՛ս հուսով կյանքիդ փրկությանն
Գուլ ես միշտ մուրում, մուրում հավիտյան.
Դեռ չզարթնեցիր դարերով քնից
Հուսախաբության մառոյ ցնորքից։

Դու այնպե՛ս խղճուկ, կյանքի շուկայում,
Ձեռքից ձեռք անցար լուիկ, անդադրում.
Բանտ ու աքսորի դու տաժանակիր
Եղար հարազատ, հլու որդեգիր։

Բայց հերի՛ք անարգ, եռամոլ մարդիկ
Շինեցին իրանց ջահի խարույկիք
Քո ցավն ու քո բախտ, թշվառ մուրացկան...
Մի՞թե այդ կյանքը սիրուն է այդպան...

1 հունվարի 1907 թ.

ԿԵՑՑԵՆ ՇԱՐՔԵՐԸ

Կեղծիքին սովորդ բանտերյան հարմար
Դրված է հիմքը մեր թշվառ կյանքի.
Եվ ստրկության քարերն անհամար
Հյուսում են շենքը մռայլ տանջանքի։

Բայց ահա ցնցվեց տիտանը, հանկարծ
Ըմբոստացումի թափից թեև առած
Խրատցրեց գոռ շարքերն ու մահվան
Զարկն իջեցրեց գահերին դատաստան...

Կեցցե՛ն շարքերը, մարտիկներն անգին
Կյանքի ու ինչքի հավասարության.
Կեցցե՛ն շարքերը, որ ստոր փառքին
Անդունդ են փորում, անարգ գերեզման...

1 հունվարի 1907 թ.

ՀԵ՞Տ ՏԱՐ ՔՈ ԽԱՉԸ...

Անծա՜յր տափարակ... գետինը-սառած,
Չյան կարծր շերտի հյուսնկալ գրկին
Դեմքը ցավագար խնամքով ծածկած՝
Լո՜ւռ մտորում է վիշտըն անմեկին...
Բքաշունչ քամին վազում սանձարձակ—
Ոռնում է, ճչում... կամ պաղ թևերով
Ծեծկում է գետնին և յուր անգունակ
Հի՜ն կսկիծներից երգում է լալով։
Մառախուղը գորշ տձև փեշերի
Ծալքերն երկնքում համարձակ ձգել,
Ծածկել է լքնաղ լուսնի, աստղերի
Լուսաբեր ցոլքն—ազա՜տ, անարգե՜լ...
Եվ ահա հեռվից ինչ-որ մութ գծեր
Սևին են տալիս, ճոճում անհաստատ,
Ճոճում, երերում՝ կասես ագռավներ
Քաղցից շվարած, ծարավ կամ քնհատ։
Եվ դաշտավայրի սպիտակ կրծքին
Որպես շորացած վերքերի սպիներ.—
Այն սև գծերը լուռ և մոլեգին՝
Տագնապ են ազդում, սարսուռ ահաբեր...

Ահա կանգ առան... խառնվեցին իրար...
Մի խո՜ւլ հարվածից տնքաց ու դողաց
Ամայի դաշտը... քամին թևահար
Պինդ փարվեց երկրին, քարացա՛ ճնաց։
Եվ մի սոսկալի, խոլ հեկեկանքի
Խեղդած հեծկլտանք տարածվեց դաշտում,
Մի ամոթապարտ, մեղսոտ պատրանքի
Դիվային քրքիջ շշնջաց օդում։
Ու աղեկտուր լալագին վշտի
Հոգոց դուրս թռավ երկրի երեսից.
Եվ սևին տվեց սև հաղթանակի
Գարշելի փառքին պատրաստված մի ցից...

Ամենքը լուռ են... Մի լուռ պատմություն
Մարդկային կյանքի մի հակա հատանք.

Ապրածի՝ վերջը, նորի՝ հայտնություն
Դարերի ճնշման պոռթկումի թափից
Ըմբոստ վիժվածքը տառապանքների,
Անարգ բռնության սուր ճիրաններից
Նորածիլ սաղմը ազա՜տ մտքերի,
Հավասարության միակ փրկարար
Վեհ գիտակցության ծնունդը հսկա—
Օրնիբուն փտող, անվերջ հողմահար
Տիրող կարգերի լուծն արճիճյա՝
Կանգնեցին անխոս, դեմ առ դեմ այնտեղ—
Այդ ոչնչացման տխուր հանդեսի
Սոսկալի ժամին... այն ժամին ահեղ,
Երբ սոսկ մարմնացած դարը կը խոսի...

. . . . . .

Քամին դողալով շոյում է, գգվում
Այն լուռ դեմքերին և իր վշտահար,
Մենակ, անընկեր կյանքից անխնդում
Պատմում է նրանց, լալիս անդադար։
Նա մերթ քծնելով սև ֆարաշայի
Երկար փեշերն է վախկոտ փողփողում,
Եվ այն ծեր ձեռքում բռնած սառ խաչի
Շուրջը զարմացած գալարվում, խաղում։
Նա մերթ այն դաժան դեմքերից ցասկոտ
Թռչում է հեռու ու սյունին դիպչում,
Կամ սյունին կապած էակի թախծոտ
Այրվող ճակատը պաղ թևով շփում։
Թշվա՜ռ էակի... նրան վերցրին
Մի պայթած ռումբի փշրանքների մոտ,
Որտեղ փորվել էր—իր չահել կյանքին,
Ջախջախված մարմնին—առանց ձեռ ու ոտ։
Բռնության ճնշող հաճույքին հարմար
Մի անդարձ անդունդ—ըմբոստի համար...
Եվ ահա ինքը՝ մարդկության որդին,
Տառապանքների, անարգ բռնության
Ըմբոստ մարտիկը—իր նմաններին
Փրկելու համար ելալ կախաղան։
Ի՞նչ հոգ խավարի սև հոգիներին

Որ նա կես մարդ է... որ նա տրորված
Արյունաշաղախ մի վիրտ մարմին,
Սպիների մի ցանց, ձեռք-ոտք կորցրած...
Չէ՞ որ թշվառի խիզախ կրծքի տակ
Դեռ ևս տրոփում են զարկերը վերջին,
Այն ըմբոստ հոգու տենչը անխորտակ,
Հագեցած վրեժի ցոլք կա աչերին։
Չէ՞ որ արնաքամ, շորցած շրթերում
Արհամարհանքի խաղում է ժպիտ,
Ու մի ստահակ, զոհունակ խնդում
Տիրում այլանդակ մարմնին չոր, վտիտ...
Հա՛, կատարվել է... պետք է շուտ մեռցնել
Բախտավորներին արհամարհողին.
Պետք է շո՛ւտ խեղդել, արմատից խլել.
Ըմբոստ խլրատան ծիլերը վերջին...

Եվ ահա թշվառ դատապարտյալին
Լուռ մոտենում է ծերուկ քահանան՝
Ստրուկի շղթան փշրել ուզողին—
Համբուրել, տալու հավատի շղթան...
Հե՞ռ տա՛ր քո խաչը...

Հե՞ռ տա՛ր քո խաչը-գործիքն հարմար
Անվերջ կեղծիքի, լպիրշ քաղաքության.
Անխախտ պատճառն—արված ուսնահար
Ամեն մի տենչի թշվառ մարդկության։

Հե՞ռ տա՛ր ազգերին տխուր կապանքի—
Վեհ ձգտումներին, սարդ ճշմարտության,
Գիտակից մարդի—ազատ վայելքի,
Շաղկապ իդեալի— հավասարության,
Եվ սատանական անվերջ չարդերին,
Անմեղ զոհերի անգութ ոչնչացման՝
Վաղո՛ւց կնքված ժանգոտ բանտերին...

Հե՞ռ տա՛ր մոլեռանդ, անմխիթար ու անհամ
Կեղեքիչների գենը—քառոտին՝

Որ այդ ոչնչվեց երկա՞ր, երբ ամեն անգամ
Տնքում էր մարդը— մտքով կո՞ւյր, անթև՞...

Հե՞ռ տա՛ր... նրանից արյուն է ծորում,
Վազում ոլորանքի, շարավի հեղեղ,
Բյուրավոր, անթիվ զոհերի լքում—
Ղողանջում մահվան նզովքով ահեղ...

Հե՞ռ տա՛ր—տրորված ըմբոստ զանգերի
Տաք-տաք, քաքախուն—արյունաշաղախ
Թարմ ուղեղներից—հավատողների
Կոփանքի սալը— և խաչդ՝ ավա՛ղ...
Ահա՛ մեր խաչը—սև սյունն անարգ,
Փրկության համար հանված Գողգոթա,
Ահա և ինքը՝ նոր լույսի զավակ,
Որ ազատության հարթում է ճամփա...

Բքաշունչ քամին վշտից կարկամած
Ոռնում է, ճչում. յուր պաղ թևերով
Ծեծկում է թմբին, կույտերի սառած
Փշրանքը արնոտ գուրգուրում լալով...

20 հունվարի 1907 թ.

ԵԿԵՔ ՄԻԱՍՆԱՆՔ

Այն ո՞վ է հոգնել կիսահանապարհ
Փշոտ ուղիում
Զրկանքի թափից
Արցունք է թափում
Առաջ գնալու չունի ույժ, հնար։

Այն ո՞վ է հաղթված մաշող կասկածից
Մարած իդեալի
Կորուստը լալիս.
Անշահ փորձերի
Երազած օրվան՝ հիշում կսկծից։

Այն ո՞վ է անհույս, թմրած ու անկյանք
Մենակ-անհավատ...
Օ՜ բերեք ինձ մոտ
Հոգի՛ս է ազատ
Ես հոգիս կուտամ—արիք միանանք...

26 հունվարի 1907 թ.

ԶԵԶ ԶԱՏՆ ԵՄ ՏԱԼԻՍ...

Զեզ ձա՛յն եմ տալիս՝ մշակ-բանվորներ,
Միշտ կորաքամակ, գետնաքարշ որդեր—
Որ աշխատում եք անխոնջ օրնիբուն,
Բայց չունեք սնունդ ձեր մարմնին-հոգուն։

Զեզ ձա՛յն եմ տալիս՝ հսկա լեռների
Կրծքերը ծակող խլուրդ ու գերի—
Ուր ամեն բեկոր ունի իրավունք
Պոռթկել ու ճզմել ձեր գանգ ու թիկունք։

Զեզ ձա՛յն եմ տալիս՝ հընազանդ գրաստ՝
Կրրած բեռներից միշտ զուրկ, աննպաստ—
Որ ապրողների հոգսն եք քաշում՝
Ու միշտ նվաղած, քաղցից լուռ մաշվում։

Զեզ ձա՛յն եմ տալիս՝ կատարելության
Մեծ կրկեսների աննկուն խթան—
Ուր որ աշխատանք—այնտեղ եք կանգնած,
Ուր վայելչություն՝ հեռո՛ւ, մոռացվա՛ծ։

Զեզ ձա՛յն եմ տալիս՝ խե՛ղճ մուրացկաններ.
Որ մուրում եք այն, որին դուք եք տեր.
Վարում եք, ցանում՝ առանց քաղելու,
Զրկանքի լուծը քաշում անլեզու...

Զեզ ձա՛յն եմ տալիս... ժամն է հասել,
Օրհասի ժամը—ցավիդ անասել—
Հառա՛ջ բանվորներ, հառաջ զրկվածներ
Միացած ուժով, անվա՛խ, անվեհե՛ր...

27 հունվարի 1907 թ.

ՍՈՎՅԱԼԸ

Ցրտից կարկամած, կիսամերկ տղան
Պաղ պատին հենած կանգնել է դողում,
Իսկ քամին գթով փարվում է նրան,
Կիսածածկ մարմնին սվսվում խաղում։

Լալիս է տղան... սառած թշերից
Աղի շիթերը դառն արցունքի,
Վայր են գլորվում, դեմքին թախծալից
Կսկիծն է տիրել լուռ տառապանքի։

Ոչ փոքրիկ ձեռքն է կարկառում մարդկանց
Ոչ սովորական խոսքերը թոթվում.
Ոչ էլ անցորդին աղերսում սրտանց
Ընկնում ետևից, նրան հետևում։

Նա լո՛ւռ է, անխոս... դալկացած դեմքին
Մի սարսուռ աղդող տենդ է վառ կիզում,
Աչերին՝ մի ցոլք, այնպե՛ս սրտագին
Կասես խնդրում է՝ «Ես հա՛ց եմ ուզում»...

31 հունվարի 1907 թ.

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՃԱՆՉՆԵՐԻՑ

Ինչպե՛ս ապշեցիք... կրած պարտության
Ստոր կնիքն է դրված ձեր ճակտին,
Իսկ սև խավարը— խայտառակության
Ճնշում է, մաշում ձեր մաղձոտ հոգին։

Ի՞նչ էիք կարծում. ըմբոստ ամբոխին
Քաղցը կընկճեր, բանտն ու շղթա՞ն,
Լափող հրդե՞հը, թե դաժանային
Մտքերի ծնունդ անարգ կախաղա՞ն...

Թե կարծում էիք նվաղած մարմնից
Շա՛տ առաք արյուն, կամ ստրկության,

Նանր լծի տակ, այն թշվառներից
Փետել եք վերջին ծիլն արիության։

Դուցե ցնորքին և թեթևամիտ
Հանդգնությանը տարվեցիք գերի—
Ու անարգեցիք հյուսված ու վոփա
Լքած ամբոխին, ույժը—բանվորի։

Հա-հա-հա-հա-հա... ով դուք խարխլած
Ստրուկ արերի հիվանդ վիժվածքներ,
Արթնացող կյանքի լույսից շվարած
Բռնության գահի շնչին բեկորներ։

Դեհ լավ խմացեք—ծերին-չահելին,
Ամբոխին քաղցած, գեղջուկին անհաց
Նա կյանքն է ձոնել իր ասուրբ խղճալին՝
Նրան չեն ընկճի դավ-մարդկանց—ոչ ասուված։

1 փետրվարի 1907 թ.

ՅԱ՞Ր ԻՆՁ, ՄԵՆ ՀՈՍԱՆՔ...

Ինչպե՞ս, ո՞ւր փախչել—որ աչքիս առաջ
Չգան ու շտապին արյունոտ զահեր.
Որ գիշեր-ցերեկ չլսեմ հառաչ՝
Սովի ու վշտի մորմոք գուժաբեր։
Որ շուրջս տիրող անարդարության
Ույժըն անդատիծ սիրտս վիրավոր՝
Չմաշե անվերջ ցավը հոգեհան,
Չփրշաքաղե մարմինս ամեն օր։
Ինչպե՞ս մոռացվել, չզգալ, շարտանվել,
Դաղված աչերիս տալ մի քիչ դադար.
Ուսկից ույժ գտնել—և չկարեկցել
Նմանիս լքման, տանջանքին— անճար։
Բայց արժե՞ փախչել—պահվել երկունքի
Ըմբոստ վայրկյանին, տարերքի ահեղ,
Տալ բռնկումին. մեծ ավետիքի

Լսել շրինդ—կովի փառահեղ։
Ընկճումը—կորչի՞... թո՞ղ լինի այնպես—
Ինչ պիտի՛ լինի... տա՞ր ինձ, մեծ հոսանք—,
Դանդաղ—չախչախի՛ր. քո փրփրադեզ
Դող ալիքներով՝ կուլ տուր և իմ կյանք։
Խփի՛ր, շպրտի՛ր վշտի ժայռերին
Կուրծքս—քրքրե՛... թող իմ արյունն էլ,
Արցունքս, հառաչ, ձուլվին, խառնվին՝
Թափ տան հոսանքիդ—թող մեռնիմ չահել...
Տա՞ր ինձ... ցաքերի խարույկ բովի մեջ
Թող եռա հոգիս. էլ մեկիկ-մեկիկ
Չծխա սրտիս մրուրն անշեջ—
Տա՞ր—ուր լափվում են՝ իդեալը, մարդիկ։
Ես թա՞փն եմ սիրում լոկ մի հարվածի.
Կռիվը— լինել կամ չլինելու.
Վերքը—մահացու, ցանցն արկածի՝ —
Ուր ակնթա՞րթն է—պատասխանատու...

5 փետրվարի 1907 թ.

ՍՈՎԸ

Խրճիթն է անծածկ. գոմ, տխոռ, մարագ
Եվ շտեմարան
Դատա՞րկ են, ավեր՝
Սովի հոգեհան
Տառապանքների տիպա՞ր--անգունակ...

Չըկա՞ փրրկություն, հույս, հավատ և հաց,
Կամ թե տաք անկյուն.
Ժանտախտն է լափում՝
Քաղցից անարյուն
Փըքված մարմիններ—անսի՞րտ, գըրկաբաց...

Արտերը ամուլ, սերմի են կարոտ.
Ջաղացն է կանգնել.
Վրխտում են գըծուծ

Մարդիկ անարգել
Կյանքի մբրուրում՝ սբրտերով վիրոտ։

Պատի ծերպերից վբզզում է քամին—
Վո՛ւյ-վո՛ւյ է կանչում.
Գյուղերում ավեր
Մբտրակն է շաչում—
Արնաքամ մեջքի լիզում է կաշին։

Հա՞ց... հա՞ց են ուզում արտերբ-խոպան,
Ջաղացբ՝ կանգնած,
Մարդբ՝ կիսամեռ.
Դիակը հյուծված
Քաղցից նվաղած կիսաբաց բերան։

Դե՛հ, հա՞ց կանչեցեք... ո՞վ գուք բբոնության
Անվարձ գբրաստներ.
Մուրացե՞ք չոր հաց,
Որին դուք եք տեր՝
Մինչ տակը ծծեք թույնը գերության...

Մինչ ազատության անհաղթ տենչանքի
Ցընցվեք երկունքից,
Եվ ոտքի կանգնեք
Խբրոխտ, բերկրալից
Այն լո՛ւյս, հարազատ մեծ ճամփին կյանքի...

9 փետրվարի 1907 թ.

ՁԵՂՃԱ՛Ք ԴՐԱՆՑ

Նա՝ ով տանջվում է մենակ, անբնկեր
Անհայտության մեջ, մարդկանցից անտես,
Եվ իղձբ, իդեալ ըմբոստ իր մտքեր
Խաղալիք դարձած բախտին սևերես,
Որ ծբնած օրից հալածվեց անգութ
Եվ վառ հույսերի և վեհ իղձերի

Խեղդվեց սաղմերբ բիրտ կյանքից անփույթ,
Սիրտբ—ավերակ թույն է ցավերի.
Նա՝ որ քաղցած է, շարունակ անհաց
Աղքատ օրերի հիվանդ գբրկի մեջ
Լուռ տոչորվում է ու միշտ գրկաբաց
Շուտափույթ մահվան փափագն անշեջ
Հուրհուրում հանգած մբտքի խավարում
Անհայտ հանգստի եռուն փափագով
Գիշեր ու ցերեկ, անլուր մտորում—
Գբնա՞լ շուտ կորչել իր անշահ կյանքով,
Նա՝ որ աղքատ է—մուրալ չի կարող
Գբծուծ կրծքի տակ ունի վեհ հոգի
Եվ գարշ բռնության տենդին անկարող
Չէ տիրել երբեք—բայց թե ստրկի
Կորչումից մաշվում և կյանքի թշվառ
Կեղծիքին անհաշտ խոկում է տբխուր
Վշտի ափերում լբված անբարբառ,
Որպես հողմերից հալածված փբրփուր,
Նա՝ որ սգում է անփորձ սբխալի
Կնիքի անջինջ հետքը ճակատին
Եվ իր բարդության դա՞ռն, ահռելի
Թափն է լափում մբտքի ընթացքին
Եվ խելացբնոր ընկնում է բոլոր
Մոլության սահուն աստիճաններից—
Աչքերբ փակած, գործերբ—մոլոր՝

Չբ խղճա՞ք դրանց...

Չբ խղճաք երբե՞ք... խբղճում են նրան,
Ով որ կարոտ է, ով կարիք ունի
Այդ կբծու, չբնչին գարշ ողորմության,
Խղճում են նրան— ով որ անվանի
Աղքատ է նստած մեծ ճանապարհին
Լի փողոցներում, հարուստ դռների
Անառիկ շեմքին, խոնավ մայթերին...
Խղճում են հանդուգն, անզգա պարզած
Աղտոտ ու ջլոտ ստոր ձեռքերին—
Որ մարդավայել ամոթբ մոռցած
Չունեն ինքնասեր և հպարտ հոգին...

Խղճում են կյանքի ուժան վայելքի
Եվ թեթևամիտ խեղկատակներին,
Որ այնպես հպարտ կամքին ամենքի
Դիտեն ծառայել—որպես հացի գին։
Իսկ նրանց՝ երբեք... այդ միշտ տառապող
Անխոս ու անձայն, անհայտ, անբողոք
Հսկա զրկանքի բովում դեգերող
Մոռացվածներին՝ կյանքում անողոք
Չը խղճա՞ք երբեք...
Չեռք կարկառեցեք հավասարության
Արդար ուղիով փրկեք աննշմար
Լափող հոսանքից—որ երբեք չգան,
Սրտերը հիվանդ չընկնեն վշտահար.
Դուք ծունկ չոքեցեք նրանց տանջանքի,
Զրկանքի առաջ. թե չլինեին
Այդ թշվառները—մեղքի պատրանքի
Վշտի մե՞ծ մասը մեզի էր բաժին...
Չը խղճա՞ք դրանց...

10 փետրվարի 1907 թ.

ԹՇՆԱՂՈՐՆԵՐԸ

Այդ մե՞նք ենք գալիս—
Մաշված բաճկոններ, յուղոտ ու մրոտ,
Տրորված գտակ, աղտոտ մազերով,
Մեծ մասամբ դեղնած, գծուծ և բոկոտ,
Երբեմն դժգույն, երբեմն անխռով,
Երբեմն քաղցի, լուռ տառապանքի
Սև կնճիռների անջինջ նիշերով,
Երբեմն ըմբոստ արհամարհանքի
Անզուսպ գայրույթի վրեժի թույնով.
Դեռ վաղ ծերացած հոգեմաշ ցավից,
Լույսի, թարմ օդի տենչանք գեմքերիս
Ու մարդավայել ապրելու հույսից
Դեռ խո՞ր վերքերի կսկիծ սրտերիս—
Այդ մե՞նք ենք գալիս...

Մե՞նք, բանվորներս՝ ուռած փորերի,
Շերտավոր ճարպի, ոսկու դեզերի—
Անվարձ ժշակներ...
Մե՞նք, բանվորներս՝ վշտի, արցունքի,
Կիսաքաղց կյանքի, բանտի, աքսորի—
Անբաժան ընկեր...
Մե՞նք, բանվորներս՝ ապրելու ահից՝
Կյանքի շուկայում ստոր վաճառքից—
Էժան ծախվածներ...
Օ՜ մեծ տղրուկներ, մարդկային կյանքի
Ստեղծագործության անարգ խեղդիչներ.
Դո՜ւք՝ փարթամության անառակ տենչի
Քնած խիղճերով թմրած խլուրդներ.
Դո՜ւք՝ ամոթապարտ գերեզման փորող
Գարշ դահիճներդ սուրբ ազատության.
Ձեր նմանների արյունը լափող,
Բողբոջ հույսերի դեռ հոգեհան,
Գուցե չե՞նք շոյում մեր տանջված դեմքով
Ձեր նուրբ ջղերը— հոգով քաղցածներ,
Դուք՝ կո՜ւշտ մարմիններ։

Չէ՞ որ մեր արյան մի-մի կաթիլով,
Ուղի ու լեղի թափած քրտնքի,
Դառն արցունքների անվերջ հեղեղով,
Մեր բազուկների հուժկու, ժրաջան,
Կոր թիկունքների, հոգու տագնապով,
Մեր գլխին պատրաստ ամեն մի վայրկյան
Զարաբաստ մահվան անլուր սարսափով
Սնունդ ենք առնում
Ապրում, յուղ կապում...
Եվ վաստակներիս չնչին փշրանքներ
Դժգոհ շպրտում քաղցած ամբոխիս.
Կասես մարդկության մենք խորթ զավակներ—
Դուք վայելչության, անարգար կյանքի
Ընտիր ըմբիշներ...

Հա՜, մենք ենք գալիս—
Դարավոր վշտի զրկանքի բովից,

Հալածանքների, գարշ ստրկության
Մոռացված խավից—
Կրծքով փշրելու փառքը փիրողին,—
Գահը բռնության—ստրուկի շղթան,—
Նոր ուղի հարթել մեր նմաններին,
Արժանի կոչման—հավասարության՝
Այդպե՞ս ենք գալիս...

1907 թ.

ԹՈՂ ՄԵՌՆԵՆՔ ՊԱՏԿՈՎ

Մի՞թե պիտ կորչենք՝ անհե՛տ, աննշմա՛ր,
Ճորտական կյանքի մութ անապատում.
Ավետյաց երկրի արշալույսն անմար
Անտե՞ս պիտ մընա մեր սրտին տրտում։

Մի՞թե պատմության մռայլ էջերում
Տեղ է մընացել մեր տանջանքներին,
Մի՞թե բնաջնջման ահեղ օրերում,
Պիտի միշտ մնանք նույն երկչոտ գերին։

Մի՞թե քաջության գե՛թ չնչին բեկոր
Մեր լքված կրծքում չըմնաց բընավ.
Ձե՞նք ըզգում պահանջ հանգըստի անդորր,
Ազա՛տ վայելքի սըրտակեզ ծարավ։

Ա՜հ, քի՞չ էլ, քի՞չ էլ... մեր ույժով վերջին
Անվախ, անձնվեր գընանք դեպ հառաջ.
Կյանքի և մահվան խուլ կռվի միջին
Թող թռչեն. հանգչեն, հանգչեն մեր ճիչ ու
հառաչ։

Այդ վրեժական, հըսկա կռվի մեջ
Թող ընկնենք ըմբոստ, փառահեղ պատվով՝
Եվ նոր սերունդի սրտերում անշեջ
Վառենք հըրդեհը մարտի անխռով։

1 մարտի 1907 թ.

ԴՈՒՔ ՏԵՂ ՉԵՔ ՀԱՍՆԻ

Նվեր բուրգանայերին

Զարթնելուց հետո՝ քնել չի լինի.
Կո՛վ է ձեզ պետք, կո՛վ անվհատ,
Որ դեն շպրտեք ձեր անտանելի
Լուծն ստրկության, արցունքն անընդհատ...

Դիտե՛մ անցյալը մռայլ է սաստիկ
Ներկայի առաջ դուք ույժ՝ աննշան,
Կռվի փոթորկից շուտ մեկի՛կ-մեկի՛կ
Կը թափվեք ինչպես տերևներ աշնան։

Եթե խիզախեք ու ընկնե՛ք ճամփա,
Միայն ձեզ համար անզեն, անընկե՛ր,
Թե դյուցազնության խորքերից ազահ,
Խլել ցանկանաք դափնե պսակները,

Դուք տեղ չեք հասնի։ Կես ճանապարհում
Կը նոսրանան ձեր շարքերն արդեն նոսր,
Ու գետնահարված՝ մեծ կռվի դաշտում,
Կը ժառանգեք միշտ սուգ, հառաչ, արտոսր...

4 մարտի 1907 թ.

ՀԱՅ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Ձեզ հի՛մն եմ երգում ազա՛տ ու հըպարտ՝
Հույսի և լույսի շողերը գրկած.
Թող շուրջըս կոծեն ճնշող, մեղապարտ
Խավարն ու շըղթան՝ անեծքում ընկած...

Տեսնում եմ ահա ձե՛ղ ոտքի ելած՝
Ճորտական կյանքին անդունդ եք փորում.—
Եվ հին կացության շեմքից խարխըլած
Ջինջ ապագայի խոստում եք բերում։

— Նում է ձեզ մոտ վրշտի, լացի ծով
Գոռ ալիքներով կուրծքերդ ծեծում.
Բայց դուք ոչի տուած վառ այգի բոցով
Առաջ եք գնում — համառ անհեծում։

Արթնացած մտքով ձեր հերոսային
Շարքերը հեռվից ժպտում են դեմքիս.
Չկա՞ գետնաքարշ հակումը նախկին՝
Եվ այդ տեսնելով հրճվում է հոգիս։

Ս՛ս սրտատրոփ ականջ եմ դնում
Համերաշխ հնչվող ձեր վեհ քայլերգին,
Սրտիս զորությամբ անհագ կլանում
Ձեր խոսքն ամեն, կոչը՝ վեհ, ուժգին...

Ձեզ հիմն եմ երգում — ես բազկատարած,
Օտարության մեջ ծնկաչոք, մենակ՝
Դրրոշը պարզած անցեք, բանվորներ,
Ափն է երևում ջինջ լուսավորված։

4 մարտի 1907 թ.

ԳՅՈՒՂԱՅՈՒ ՄՈՐՄՈՔԸ

Ջրվող հավքերի ուրախ երամներ
Վաթան են գալիս.
Նորածին գարնան որպես առաջին
Ողջույն — ավետիս՝
Օդն են աղմկել ուրա՞խ, երջանիկ
Երգերով անուշ,
Բուն են նորոգում, փափուկ տեղ շինում
Ձվերին քընքուշ։
Ճերմակ սալվանն անհետ լրջացավ
Երկրի երեսից,
Հողում փափկացած կը ծնի բույսեր
Կենարար լույսից։
Հե՛յ, փառքիդ մեռնեմ ողորմած աստված,
Ես ի՞նչ տիտ անեմ.

Անտուն գլուխս որ մեկ քարին տամ
Դարդից ազատվեմ...
Խրճիթս է ավեր, ախոռս դատարկ,
Գութանս՝ ժանգոտ,
Արտերս վաղո՞ւց արոր-տափանի
Գրգվանքին կարոտ...
Ջաղցած բալեքս հիվանդ նվաղած
Հաց են աղերսում,
Օրեցօր աճող պարտքերս անծայր
Իմ հոգին մաշում...
Հե՛յ, փառքիդ մեռնեմ ողորմած աստված,
Ո՞ր մեղքիս համար
Մարած-օջախիս գլխին դարձիր
Ինձ բու դիվահար։
Մի՛թե ե՛ս, մարդս, երկրի երեսից
Ջրրկանքից ճընշված
Պիտ մեռնեմ, կորչեմ միշատի ներքան
Ճզմված, կոխկրտած...
Չէ՛... հընար չկա այս անտանելի
Անարդար կյանքի
Ծանրացած խաչը քարշ տալ ուսերիս՝
Առանց փրրկանքի։
Թե քեզ չի հասնի դաղված սրտերիս
Մորմոք ու բողոք՝
Ես իմ ձեռքերով մահ կը պատրաստեմ
Կյանքին անողոք...

9 մարտի 1907 թ.

ԳԵՂԵՑԿ ՕՐԵՐՈՒՄ

... Եվ կը բարձրանա խառնակիչ շլթոթ.
Հուզված մրտքերից ահարկու հեղեղ —
Եվ մահաապատոտ տագնապի զիլ բոթ
Հընչուն բամբիռով կանցնի ամեն տեղ։

Եվ զենք կը դառնան՝ գանգատն ու շղթան
Մանգաղն ու խաչը — կը խոռնեն քարեր,

Անեծք և բողոք արձագանք կուտան՝
Եվ կը հեծկլտան արյունոտ դարեր։

Եվ կը բարձրանա վայրագ վայնասուն
Հյուսված կըրծքերի վերջին մարող ճիչ
Կը խառնվին իրար մարդ և անասուն
Ոտնատակ կերթա երկրում ամեն ինչ։

Եվ խոլ խավարի անթափանց ծոցում
Դեմ առ դեմ կելնեն չարն ու բարին՝
Գոռ, տարերային կըռվի հընացում
Մարտական փողից ույժ կառնե գերին։

Եվ այդ շըփումից կը պոռթկա շառաչ
Կը թռչեն կայծեր նեխված մրուրից
Կյանքի ու մահվան սըրտակեզ հառաչ
Կոլորվին երկինք անհայտ խորերից։

Եվ կընկնեն զոհեր անթիվ, անհամար,
Բըզըկտած կուրծքեր, գանգեր տըրորված
Եվ կը պարսըռեն աստղերն անմար՝
Ալ կը հագնեն ամպեր՝ կը սոսկա աստված։

Մի պահ կը տիրե կյանքի սև գիշեր
Ետ կը նահանջե բարին ուժասպառ՝
Տաք-տաք արյունոտ մարդկային լեշեր
Կը ծածկեն դաշտեր, որպես կարմիր փառ։

Եվ կը տարածվի չարի երգ, քըրքիջ՝
Ճանկը կը սըրե դիվային տանջանք—
Բայց ըմբոստ բարին հայտնվելով քիչ-քիչ
Հանկարծ կը ցնցվի և կառնե նոր կյանք։

Եվ հարվածների կը տեղա տարափ,
Լուսավառ արեգ կառնե գոյություն...
Եվ մեծ հաղթանա՜կ... և ջի՜նջ, ազա՜տ ափ...
Ողջո՜ւյն քեզ, ողջո՜ւյն—սուրբ ազատություն...

13 մարտի 1907 թ.

ԳԱՐՈՒՆՆ ԵԿԱՎ

Գարունն եկավ... միտքըս ծաղկեց
Էլ չե՜մ երգի ցավ ու դարդ։
Վըշտի ժայռից ես գահընկեց
Ընկա հովիտ ծաղկազարդ։

Ահա շուտով ես վար կառնեմ
Իմ քընարից սըգի քող
Աղա՜տ երգով կը սավառնեմ
Կիջնեմ սըրտիդ որպես ցող։

Եվ խրփելով իմ քընարի
Նազուկ մեջքին ոսկեթել
Գարո՜ւն կերգեմ—աչեր յարի՝
Որոնք գիտեն սիրտ դյութել։

Գարունն եկավ. փո՜ւչ աշխարհի
Էլ չե՜մ երգի ցավերից՝
Եվ երկնառաք իմ քընարի
Կը վանեմ թախիծ լարերից։

16 մարտի 1907 թ.

ԱԶԱ՜Տ ԻՆՔՆԻՇԽԱՆ...

Այս կյանքը՝ խարխուլ, հիմքերը՝ փըտած
Մեծ հեղաշըրջման թափի է կարոտ,
Ով որ ապրելուց դեռևս չէ հոգնած,
Ով մոռացվել է, արնաքամ, վիրոտ.
Ում ըմբոստ սըրտում իդեալն է ծըխում՝
Կյանքը պատրաստ է զոհել ամենքին,
Ում անբիծ հոգուց դեռ հույս է բըղխում՝
Դեռ չէ ճաշակել թույնը տանջանքին,
Ով օժտըված է հըզոր հավատով
Ձըգիտե ընկճվել փորձանքի ահից,
Ում այս ճահճացած, փըտող թավուտով

Լույսն է շողում անհուն երկնքից,
Ով թեև տեր չէ՝ գերվելուց խորշում,
Փառասեր տենչի չունի գայլ փափագ՝
Եվ իր նրմանի սողալուց գարշում՝
Հրպարտ բարձունքի ունի նրպատակ,
Ով որ սիրտ ունի՝ անտակ ու անծայր
Անկեղծ սիրով լի, խոնարհ բրնություն՝
Իրեն մոռացած ամենքի համար
Կարող է տանել զրրկանք, դառնություն,
Ով իր մարդկային արժանի կոչման
Կարող է մրնալ միշտ հավատարիմ,
Երբեք չէ ընկճվել հուսահատ լրման
Խավար դավերին անշահ ոխերիմ,—
Նա թող գա առա՛ջ... կանգնենք միասին
Կուռ թիկունքներով թույլերի առաջ,
Եվ ազատության սրրբազան լույսին
Միասին, շաղկապ՝ գրնանք ընդառաջ...
Երբ պատերազմ հրսկա կրռվի գոռ տարափ՝
Վերջին հոտանքի գայրույթը՝ ցասման,
Սև ալիքներով դիմե գեպի ափ՝
Լափելու անզոր շարքերը մարդկան—
Մեր բաց կուրծքերը նրրան դեմ տված
Կանգնենք դեմ առ դեմ որպես ախոյան,
Հին կյանքի հիմքը հեռո՛ւ շրպրտած,
Նորինը դնենք՝ ազա՛տ, ինքնիշխա՛ն։

16 մարտի 1907 թ.

ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ

Բարբարոս ուժի անվերջ դավերից
Ավեր է դարձել երկիրը պարարտ,
Նրրա լայն կրրծքում, ամեն խավերից,
Անեծք է հնչում կյանքին մեղապարտ...

«Ազգե՛ր, միացե՛ք... կուրծքս է խոնձվում
Անատաներ լափող հրդեհից անշեջ,

Արյուն արցունքով հողն է հերկվում,
Լացը տարածվում բերրի շերտիս մեջ։

«Կարո՞ղ է հոգիս գարնան դալարի,
Խընկաբույր ծաղկի երգին սիրահար,
Խոնջացած դեմքիս էլ չեն գալարվի
Ցողազարդ սրմբուլն ու հասկն օգսպար։

«Չի եռում անխոնջ, անդուլ աշխատանք.
Գութանի, բահի փայլին եմ կարոտ,
Լերդացած արյունն ինձ դարձած պատանք՝
Ճընշում է հոգիս, սիրտս ևս, ցավոտ։

Ես ձեզ կյա՛նք տվի, խիզախ հույսերով,
Սակայն դուք դառաք ստրո՛ւկ գեռնաքարշ,
Իսպառ խորթացած հողից հոգեթով,
Մրտաք լծի տակ հակումներից զարշ...

«Ես ձեզ ծնեցի ազատ, ինքնիշխան,
Ճընշեցիք իրար անարդ ձեռքերով,
Իմ բարիքներից կոփեցիք զրրաքան,
Բրռնացաք սրրտիս՝ ահեղ բանտերով։

«Իմ բյուր գանձերը ձեզ թողած ավանդ,
Ես ձեզնից մեկին չե՛մ զրրկել երբեք,
Բայց դուք, տխմարնե՛ր, կրծքիս այգաբվանդ
Սահմաններ զրրիք մտքով դյուրաբեկ...

Այսպես ձայնն երկրի վեհ, խորհրդավոր,
Իր ըմբոստ կոչի շեփորն է հնչում
Եվ բրռնության ուժն ահաբեկ, մոլոր,
Վերջին զոհերով հոգին է փչում...

17 մարտի 1907 թ.

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Հե՜յ... վեր կա՛ց, գեղջո՛ւկ. դո՛ւք, ընկեր-եղներ՝
Գնա՛նք շուտով արտ.
Հուժկու եռանդով սև կուրծքը ճեղքենք
Մայր հողի պարարտ։
Շրջենք հետ-առաջ, երկա՛ր գծերով
Փորենք ակոսներ՝
Սուրբ աշխատանքի որպես ժրաջան,
Անվախ հերոսներ...
Արևը ահա՜ փայլում է վերից
Գթառատ սիրով,
Անո՛ւշ գոլորշին շղարշի նման
Ճոճում դաշտերով։
Բացված բներից գործի է դիմում
Անհամար մրջյուն,
Մայր-հողն է ծնում, գետը տարածում
Թովիչ կարկաչյուն։
Հե՜յ... վե՛ր կաց, եղնուկ, հերի՛ք մրափես.
Վեր կա՛ց, սերմնացան՝
Գնանք շուտով արտ, շաղ տո՛ւր հատիկներ
Այնտեղ ցիրուցան։
Կարոտ եմ ինչպե՛ս հողի զով շերտում
Դեմքս պարտկել՝
Որտեղ գորշ որդեր անհոգ գալարված
Գիտեն միշտ պառկել.
Կուզեմ ես հյութոտ ծիլերի ցանցեր
Համբուրել սրտանց,
Հողի շշուկից արբել, մոռացվել
Խորքում անթափանց։
Հե՜յ... վեր կա՛ց, գեղջո՛ւկ, վեր կացե՛ք, եղներ,
Մի՞թե չե՞ք զգում—
Արտերը վաղո՛ւց սերմի կարոտից
Լալիս են, սգում։
Այս ի՞նչ եմ տեսնում... գեղջուկն է գալիս
Գլխակոր, տրտում.
Կիսամերկ, գծուծ, թախծոտ հայացքով

Ինչ-որ փնթփնթում։
Թշվա՜ռ, գա՛րշ միջատ, գե՛թ կուշտ լինելու
Ցունեցար հնար...
Ըստրուկ՝ կյանքի մեջ, արդար վաստակից՝
Հեռո՜ւ, անհրնա՜ր...

20 մարտի 1907 թ.

ԳԱՐՈՒՆ

Եկել է գարուն...
Արևը սիրուն,
Ցյունը հալածեց դաշտերի կրծքից
Եվ մեզ ազատեց ձմրան անեծքից
Իր շընչով քընքուշ
Ժըպտով սիրանույշ։

Ծաղիկների վաշտ
Համախոհ և հաշտ՝
Մե՜ղմ տատանվում են հովից սանձահար
Առվի խոխոջն է թովի՜չ միալար
Ալիքը՝ հըստակ
Հևքը՝ ներդաշնակ։

Այսպե՜ս լիներ միշտ
Եվ կյանքը՝ անվիշտ
Ժըպտար բընություն, ժպտեին մարդիկ
Շողար միշտ պայծառ հըրավառ արփիկ
Ցողը շողշողար՝
Ոչ ոք չդողար։

Եվ երգեր դալար
Հընչեր միշտ քընար...
Եվ երգիչը խեղճ քաղցից չմաշվեր
Եռնավ նըկուղում ցըրտից չը քաշվեր—
Իր գլխի վերև
Փայլեր վառ արև...

26 մարտի 1907 թ.

ԿԱԼԱՆԱՎՈՐԻ ԵՐԳԸ

Զնգա՛... հա, զնգա՛. գալարվի՛ր, ճնշի՛ր
Որքան ույժ ունիս.
Սևացած, ժանգոտ, պաղ օղակներով
Պինդ հպվի՛ր մարմնիս,
Քամի՛ր արանքում իմ ձեռ ու ոտից
Վերջին հյութն իսպառ,
Նվաստի՛ր սմքած, չորացած կաշուց
Ողջ կեցած պատառ...
Մենակյաց կյանքիս երգերը ախուր
Խեղդի՛ր քո հնքով,
Հիվանդ երազիս ցոլքը խաբուսիկ
Մարի՛ր անեծքով...
Զնգա՛... հա, զնգա գիշեր և ցերեկ
Անխափ և անքուն
Մեղսոտ բոնության տրպես արժանի
Միա՛կ փրկություն
Զնգա՛ շարունակ, վրդովի՛ր բանտիս
Գիշերվան անդորր,
Սև ժանգդ ներկի՛ր վառ կարմիր գույնով,
Արյունես ծոր-ծոր...
Ահա՛ նոսրացավ խոլ աղջամուղջի
Անթափանց խավար,
Նորածին արևին կապույտ երկնքում
Լուսեղեն կամար...
Դե՛հ, զնգա՛ քիչ է՛լ. քո ատոր փառքին
Մոտ է սև օրհաս՝
Արթնացած կյանքի վեռ գիտակցության
Վառ լույսն է՝ անսաս։
Լսո՞ւմ ես դրսից նորոգաշնակ երգի
Աղմուկն հաղթական,
Նա՛ է ցուցարար իմ ընկերներից՝
Քո դատը մահվան։
Շուտով կը պոռթկա այն լույս աշխարհում
Ահռելի մի դեպք՝
Եվ դո՛ւ, ո՛վ շղթա, կը մնաս անտեր,
Մոռացվա՛ծ, անպե՛տք...
Կամ թե դարբնանոց կերթաս կույտերով
Կուռ սալի վրա՝
Կը փշրեն հոգիդ և դու կը դառնաս՝
Գործիք առօրյա...
Դե՛հ, զնգա՛ ուժեղ, որքան ույժ ունիս
Պինդ հպվի՛ր մարմնիս—
Վերջին ցնցումիդ տագնապի թափից
Թո՛ղ հրճվի՝ հոգիս...

8 ապրիլ 1907 թ.

ՀԱՌԱ՛Ջ ԱՆՎԵՀԵՐ

Հառա՛ջ անվեհեր, հառա՛ջ միաբան,
Արթնացած կյանքի ծագում է արևին.
Շողերը պայծառ, լուսով անխափան
Հույս է ներշնչում կռվի տագնապին։

Եվ հեռագիտան բռնակալ ույժի
Շիրիմն է փորվում խա՛ր, անդնդային,
Ոճրագործության սև մահագույժի
Շեփորն է հնչում ձայնով երկնային։

Եվ օրըստորե շարքերը կռվող
Աճում են ըմբոստ անձնուրացներից,
Անհայտության մեջ հոգիք դեգերող
«Վրե՛ժ» են կանչում խոնավ հյուղերից։

Եվ գիտակցության շունչն ամեն սրտում
Մրրիկ է հանել արդար պահանջի,—
Ով ընկերական կռիվն է մտնում,
Նա ոչ մի ույժից հետ չի՛ նահանջի...

Հառա՛ջ անվեհեր, հառա՛ջ մինչև վերջ
Սուրբ նպատակին միշտ հավատարիմ—
Մահը անմահ է արդար կռվի մեջ
Եվ ուխտատեղի՝ մարտիկի շիրիմ...

1907 թ.

ՀԱԿԱԳԱՏԿԵՐՆԵՐ

Այնտե՛ղ խրախճանք շեն պալատներում,
Ոսկի և արծաթ
Սեղանը՝ առատ։

Այստեղ՝ սև կարիք, ճնշում, լափող սով.
Որբերի լաց, կոծ,
Քաղցածներ՝ անգործ...

Այնտեղ շքեղ փառք, անարժան պատիվ.
Ձեռքեր՝ արյունոտ,
Խղճեր՝ մրուրոտ.

Այստեղ՝ կախաղան, աքսոր, բանտ, մտրակ,
Կյանքի սև գիշեր.
Տրորված լեշեր...

Այնտեղ՝ փափկասուն, սպիտակ ձեռքեր,
Կյանքից հղփացած՝
Փորեր յուղ կապած.

Այստեղ կոր թիկունք, ձեռքեր կոշտացած,
Արտոնյալների՝
Թիրտ ուժին գերի...

5 ապրիլի 1907 թ.

ԱՊԱԳԱ

Տեսնում եմ ես իմ ապագան պայծառ,
Ըստրուկ օրերի խավարի միջից,
Սիրտս հևում է բերկրանքով կայտառ
Եվ թեավորվում միաքս անուրջից։

Ըմբոստ լուղորդի աննկուն հույսով
Ափին հասնելուց երբեք չունեմ վախ.

Գիտեմ՝ ուշ թե շուտ փարոսի լույսով
Ես տեղ կը հասնեմ հաղթող և անկախ...

Որքա՜ն բրոնություն, զրկանք և ցավեր
Անցա ու թողի ես իմ ետևից,
Որքան ճիշ, հառաչ, սրտերի ավեր
Ինձ հետևեցին մրմուռ ցավերից։

Որքա՜ն զոհերի անմեղ արյունով
Ներկված ալիքներ կուրծքս քերեցին,
Եվ գոռ հոսանքի հուսահատ թույնով
Կիսաճանապարհ ինձ անդունդ բացին,

Բայց խրրոխտ կոչնակն անհայտ խորքերից
Գիշեր ու ցերեկ ղողանջեց անխաթ՝
Եվ լույս շողերի պայծառ ցոլքերից
Միշտ կանգնած մընաց դեմքս ազատ ափ։

Ես այնտեղ կը հասնեմ... թեկուզ կիսամեռ
Տանջանքի թափից, ծերացած, վատույժ—
Իմ վերջին շընչով, երգերով անմեռ՝
Ձե՛զ, իմ հետնորդներ, տալու հույս և ույժ...

5 ապրիլի 1907 թ.

«ՀԱ՜Ց, ՀԱ՜Ց...»

Ձի՛լ ղողանջում են հընչուն զանգակներ
Ցնծության տոնի՝ իրիկվան պահին.
Եվ սուրբ հարության մուտքը լուսաթեր
Ավետում խրոխտ ամբողջ աշխարհին։
Արևի ցոլքն է՝ հրավառ, բոսոր.
Թափորն ամպերի՝ այնքան հիասքանչ.
Անմահ բնության շշուկը այսօր
Վիշտը վանելով՝ դյութում է ականջ։
Բայց ինչ-որ բան է կատարվում լռիկ—
Մերթ անձայն բերկրանք սիրտս մըրրկող.
Կամ թե սև թախիծ իր բռնազբոսիկ,

Կեղեքիչ շնչով ազդում է ինձ դող...
Այդ երկու շքոթ ազդեցության տակ
Զզջում եմ անհույս՝ խնդալուս համար.
Վիշտը՝ ամենքի վիշտը խո՞ր, անտա՞ղ
Ինձ գեթ մի վայրկյան չէ տալիս դադար...

2.

Ահա տներից ծուխը փորշագույն
Ճոճվում է հանգարտ, ծույլ գալարումով.
Համեղ ճենճերից արբեցած՝ խկույն
Չի ուզում անհետ կորսվել շտապով։
Վառվեցին ջահեր, անթիվ մեղրամոմ
Շեն, ճոխ տներում... սեղանը՝ առատ,
Որպես հարության պատմական կանոն
Լիք-լիք բաժակներ, ժպիտ գթառատ...
Մի պահ կուշտերի քրքիջ ու բերկրանք
«Քրիստոս հարյավ» բարեմաղթություն.—
Կացե՛ք, մի վայրկյան... թողեք խրրախճանք՝
Չի՛լ ղողանջեցին՝ հացը, կաքմեր ձուն...
Հա՛, հա՛, հա՛ «Հարյավ...» դուք կուշտ, կուշտ
մարդիկ։

Տեսնում ե՞ք արդյոք սեղանի վրա
Գինին է արյուն... հացը՝ թափանցիկ
Աղի՛ արտասուք... մրմը կը դողա...
Շքեղ սենյակում խոլական խավար՝
Ճի՛շտ այնպես, ինչպես Հուդայի հոգում,
Որ զազիր ձեռքով արծաթի համար
Մատնեց ու ծախեց աստծու որդուն...
Կացե՛ք մի վայրկյան... ոպասե՛ք քիչ էլ
Շքռայլության մեջ դուք շա՛տ եք կերած
Ինչո՞ւ տագնապով ձեզ անապարել՝
Այնքա՞ն հաստ շերտով յուղ ունիք կապած...

Տեսնում ե՞ք արդյոք. հիվանդատ տենչով
Այրվող աչքերի ագահ հայացքներ,

Որ ցամքած, անույժ, ոսկրոտի մատով
Քաշում են համեղ, յուղոտ փշրանքներ...
Ահա մանուկներ փորերով փքված
Ձեր ճոխ սեղանին սողում են մոտիկ,
Զորացած լիզուներ դեպի դուրս ձգած,
«Հա՛ց, հա՛ց...» աղերսում խո՞ւլ, սրտաճմլի՛կ...
Եվ վիրավորներ կախվում ձեր փեշից,
Ինչ-որ ասում են մահաջանչ ձայնով
Սև, արյունլվա բզկտած լեշից
Անջինջ հետքերի դրրոշմ թողնելով...
Եվրս մի վայրկյան ջահերը հանգան.
Անթափանց խավար... նման ձեր հոգուն
Որ ես-ի համար մատնեցիք լքման
Անզոր շարքերը տառապող մարդուն։
Եվ ահա լաց, կոծ, անեծք ու բողոք
Ներդաշնակ շքոնդ ազդարար ոխի՝
Հարության տոնին, ձայնով անողոք
Բերեց ձեզ ընծա վրեժն ամբոխի...

4.

Չի՛լ ղողանջեցին հնչուն զանգակներ
Թաթախման հզոր իրիկվան պահին.
Եվ քաղցածների կոչը գուժաբեր
Սարսուռ տարածեց ամբողջ աշխարհին...
«Տան-դո՞... հա՛ց... հա՛ց... հա՛ց...» տարածվեց
օդում

Գերեզմանային դիվահար ձայնով.
Եվ արձագանքը երկրի անխնդում
Սրլացավ երկինք բեկ-բեկ շշուկով...
«Քրիստոսը հարյավ»... առատ սեղաններ
Ձեզ են ըսպասում. կուշտե՛ր միացե՛ք՝
Լցրեք բաժակներ, երգեցեք երգեր,
Եվ թաթախվեցե՛ք... եթե կարող եք...

17 ապրիլի 1907 թ.

ԳՆԱ՛ ՆՈՅԱ ՄՈՏ...

Դու մի՛ սպասիր սեր, գգվանք, համբույր
Ցավագար սրտիս կնճռոտ ծալքերից,
Կամ թե վառ հայացք, երգեր—սիրաբույր
Անեծքից հյուսած արնոտ լարերից։

Երբ որ լուսնկան խաղաղ գիշերին
Սահում է լռիկ, նազելով դանդաղ,
Նորա կաթնածոր ցոլքի տակ ալին
Տխո՛ւր մտորում վշտից ուշաքաղ։

Գիտե՞ս որ նստած մոտիկ քո կողքին
Սակայն մտքերով հեռո՛ւ եմ քեզնից,
Ինչպես որ ճիճուն՝ անհաս երկնքին,
Ինչպես արծիվը՝ գալարվող որգից։

Դու սրտիդ տերն ես. զարնան գիշերից
Կուզես արբենալ, մոռացվել անհագ—
Սիրո, բնության թովիչ հուշերից
Ստեղծել շուրջդ ներդաշնակ նվագ։

Ես՝... նորան տվի մի օր ամենքին՝
Եվ դարձա երգիչ... ու այդ պատճառով
Միշտ քեզնից հեռո՛ւ, վշտով անմեկին
Այստեղ և այնտեղ ապրում եմ երգով։

Ահա այդ օրից ես ինձ կորցրած
Ունեմ սեփական մի հույզ, մի տենչանք
Տանջանքին մոտիկ, վայելքից ատված
Ապրելուս դեկն է— մարդկան մրմնչանք։

Այս նստարանին եթե գան, շարվեն
Մոլորված մարդիկ, ամբոխը՝ հիվանդ,
Վտիտ մանկիկներ կրծքիս գալարվեն—
Հյութերս կը տամ, կօրորե՛մ հանդարտ։

Նոքա՝ նախճիրի լուռ ականատես
Անոք ու մենակ՝ գտնեն ինձ ընկեր.
Բռնակալ կյանքում ատված, սևերես
Մրոտ սրտերի բանան ինձ դռներ։

Նոքա՝ որ անմեղ եղան ոճրագործ
Ձեռքերը ներկած եղբոր արյունով,
Ոտքերին շղթա, հագերին կեղտ, ձորձ՝
Ես կը լվանամ իմ արցունքներով։

Դու մի սպասիր ինձնից սեր, գգվանք՝
Նա բաժանված է թշվառ ամբոխին.
Գնա՛ նոցա մոտ, տար քաղց, սև զրկանք—
Որ չարժանանաս իմ ամբոստ ոխին...

29 ապրիլի 1907 թ.

ՀԵՌՎԻՑ—ՄՈՏԻԿ

(Նմանություն)

Ա՜խ, տվե՛ք ինձ ազատություն,
Կյանքին ազատ մոտենամ,
Աչն խավերին՝ ուր գերություն,
Ուր վիշտն է միշտ անթառամ։

Կյանքի փշերն ինձ բարձ լինեն,
Թարմ վերքերից ինձ վերմակ.
Նոցա թույնը, աղի լեղին
Ծծեմ՝ վշտի ես ժառանգ։

Եվ խայտալով իմ առաջին
Արյունն հանդարտ խոխոջե.
Ըմբոստացում հերոսային
Սրտիս մեջը տարածե։

Եվ ինձ ժպտի արշալույսին
Մի գիտակից արեգակ,

Եվ փորձերով իմ ճակատին
Խաղա ուժը անխորտակ։

Եվ ամբոխի ձայնն ականջիս
Իր բողոքը նվագե.
Արնոտ կրծքով փարվեմ սրտիս
Ինձ չընկճվել ուսանե...

Եվ հավատը, սեր, քաջություն
Գրկե հոգիս, չհագենամ...
Ա՜խ տվե՛ք ինձ ազատություն,
Կյանքին ազատ մոտենամ...

Բնագրից այլափոխեցի 1 մայիսի 1907 թ.

ՄԵՐ ՑԱՎԸ ՄԵԿ Է

Հե՜յ դուք զուլումի, դարդի ընկերներ,
Եկեք մեզ մոտիկ.
Մեր ցավը մեկ է, մեկ են արցունքներ,
Մենք՝ նման մարդիկ։

Մենք ծով արյունով, մենք՝ լեռ բեռներով,
Տկլոր ու քաղցած.
Դուք՝ լեռ բեռներով, դուք ծով արցունքով՝
Սոված ու ընկճված։

Մենք անարգ գերի, ձեռքներիս շղթա,
Մենակ և անոք,
Դուք՝ ճորտ ուժեղի, տանջված անխնա,
Ձեզ գտնի ոչ-ոք։

Ձեր ցավին ցավող, ձեր վշտին լացող
Բացի մեզանից.
Ինչպես որ մենք էլ՝ անկեղծ խղճացող՝
Բացի ձեզանից...

Ոճիրն է խնդում, մեր շուրջը պարում,
Մոլեգին խինդով՝
Որ մենք մենակ ենք, շուտ ենք պաշարվում
Իրա ցանցերով։

Հե՜յ դուք զուլումի, դարդի ընկերներ,
Արի՛ք, միանանք՝
Կանգնենք կողք-կողքի, հպարտ, անվեհեր
Եվ լավ խմանանք՝

Թե՝ ձեզ հա՞ց է պետք. մեզ սո՛վն է լափում,
Ուտել ենք ուզում.
Թե ձեզ հո՞ղ է պետք. մենք չունինք անկյուն,
Ապրել ենք ուզում,

Թե դուք տանջվո՞ւմ եք ծանր լծի տակ,
Փտում բանտերում՝
Մենք, մեր արյունի լճում անհատակ
Ամեն օր խեղդվում։

Հե՜յ դուք զուլումի, դարդի ընկերներ,
Եկե՛ք մեզ մոտիկ.
Մեր ցավը մե՛կ է, մեկ են արցունքներ
Մենք՝ նման մարդիկ։

12 մայիսի 1907 թ.

ԱՎԵՏԻՔ ԻՍՍՀԱԿՅԱՆԻՆ

Վաթանե՜ս էկաք... սաքերի փոշին
Ցարաբ վրայեդ դեռ չէ՞ հեռացել,
Նախշուն ծաղկունանց դիպած քո փեշին
Հոտից գե՛թ նշույլ դեռ չէ՞ մնացել...

Դեռ քո աչքերում՝ անթափանց գիշեր,
Քանի՞ սիրեկան պատկեր կան քաշված.
Զուլումի, դարդի կցկտուր հուշեր
Ցավերդ սրտիդ մեջ անջինջ մնացած...

Արի՛ ախպե՛ր ջան... արի՛ հարազա՛տ,
Վաթանիս կարոտն առնեմ ես քեզնից
Մի պահ թրթռամ, դուրս թռչեմ ազատ՝
Ղարիպ օրերի սրտամաղձ բնից...

Արի՛ ախպե՛ր ջան... արի՛ սիրելիս,
Նազան վաթանիս հոտն առնեմ քեզնից,
Հեչ չէ՛ մի վայրկյան ցավագար հոգիս
Թմրի անբզգա... մոռացվի՝ վշտից...

18 մայիսի 1907 թ.

* * *

Կա՛ց, ա՛յ հովիկ, մի փախչիր,
Գլուխդ մի՛ տար քարե-քար.
Հուզված կրծքիս ե՛կ փարվի՛ր
Օրո՛ր ասա ինձ համար։

Ու իմ սրտի զարկերից
Հյուսիր երգեր սրտառուչ.
Թաց աչերըս արցունքից
Սրբիր թևով զովաշունչ։

Ու տա՛ր հետդ անբաժան
Դեպ լեռները հարազատ,
Հանձնիր ծովին սիրեկան,
Հայրենիքի իմ անբախտ։

Որ արցունքս նա ցողե
Սեգ լեռների սմբուլին,
Սրտիս երգը թող հանձնե
Սիրագեղգեղ բլբուլին։

Կա՛ց, ա՛յ հովիկ, մի փախչիր,
Գլուխդ մի՛ տար քարե-քար։
Հուզված կրծքիս ե՛կ փարվի՛ր
Օրո՛ր ասա ինձ համար...

1907 թ.

ՍՊԻՏԱԿ ԳԻՇԵՐՆԵՐ

Լողում է լուսին. մի հանդիսավոր
Լռիկ մեղմությամբ ցոլում են աստղեր.
Եվ քնած երկրի կրծքին լայնարձակ
Անուշ շշունջով սլանում հովեր։

Շնչում են ծառեր, մեղմիկ սոսափում
Խոտ ու ծաղիկներ. գետը կարկաչով
Ափերին շոյում, օրոր է ասում,
Երկնքին ժպտում սպիտակ դեմքով։

Լողում են մտքեր, հոգնած ուղեղից
Կարծես խույս տալիս, երկնքին ժպտում
Աստղերին ձգվում ու ոգի դարձած
Ցնդվում օդում, տարածվում հեռուն...

Տաք անկողինս իզուր լայն բացված
Խաղաղ ու փափուկ իր գիրկը կանչում՝
Չկա՛ ինձի քուն, չկա՛ և մղում...
Սիրտս կրծքիս տակ կռիվ է մղում...

Բաց լուսամուտից գիշերը կասես
Ջերքով է անում, զեփյուռը խփում
Այրված դեմքիս ու մաշում հոգիս
Ու երկրից պոկած դեպի վեր տանում...

Շնչում են ծառեր, մեղմիկ սոսափում
Խոտ ու ծաղիկներ, գետը կարկաչով
Ափերին շոյում, օրոր է ասում
Երկնքին փարվում սպիտակ կրծքով։

Աչերս փակած, հովերին տված
Իմ նիրհող հոգին, կուրծքս լայնանում,
Ազա՛տ օդ շնչում, երազ-ցնորքով
Մտքերս թմրում գլ... քունս տանում...

1907 թ.

ԵՐԱԶ

Սավառնաթռ թռչում էի երկրում,
Աղջամուղջի խոլ, անթափանց ծալքերով
Ոտքերիս տակ տիեզերքը երերում—
Հեծկլտում էր իր դարավոր ցավերով։

Մթության մեջ չէր երևում ինձ ոչինչ,
Զգում էի, որ տանջանքն է գալարվում
Եվ բռնության ույժից չափված ամեն ինչ
Արդար կյանքին պատիր ցանցեր էր լարում։

Չգիտեի ո՞վ էր լալիս, ո՞վ տնքում
Տառապանքի ծանրակշիռ բեռի տակ,
Ո՞ւմ բողոքը այն անիծված բիրտ կյանքում
Հնչվելու պես լինում էր շուտ ոտնատակ։

Միայն սի՛րտս մղկտում էր անբարբառ
Գեթ մի՛ նշույլ աղոտ լույսի կարոտից՝
Որ տեսնեի տիեզերքը լուսավառ
Եվ թռչեի չարչարվածի նա մոտից։

Նոր խավարում մոլոր հոգիս նոցա հետ
Էար, բողոքեր միահամուռ շռինդով,
Եվ բռնակալ կյանքի անձուկ արահետ
Կուլ տար ինձի հեխորատալից չար խինդով։

Ես զարթնեցի... ստրուկ ու ճորտ երկրում,
Դեմքիս թախիծ, կարո՞տ ազատ թռիչքի,
Մորմոքալով երնեկ տվի ծիրանում
Սավառնաթռ թռչող արծվին էվհոգի...

3 հունիսի 1907 թ.

ԱԳԻԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ

Ապրել եմ ուզում, բայց ոչ մեղկ կյանքով
Անհայրենության մեջ, անշահ, բթամիտ,
Կամ արդ ու զարգին գերի ողջ մտքով՝
Որպես թույլ էակ, քնքուշ ու վտիտ.—
Այլ ձեզ հավասար, ձեզ պես բախտավոր
Ո՛վ դուք այր մարդիկ, ուժեղ և համառ
Փորձանքի դիմաց. առողջ, մտավար
Կատարելությամբ և մարմնով կայտառ։

Սիրել եմ ուզում՝ անկե՛ղծ, անդիմակ—
Ձեզ պես ինքնիշխան. որ երբ սիրեցի՝
Երգեմ աշխարհին իմ սիրո նվագ
Եվ սի՛րտս բանամ, սի՛րտս կանացի
Ամբոխի առաջ... նրա խիստ դատին
Արհամարհանքի դիմեմ վահանով
Եվ սո՛ւր նետերը ուղղված իմ սրտին
Փշրե՛մ, չախչախե՛մ աննվաճ թափով։

Գործել եմ ուզում ձեզ հետ հավասար,
Որպես ամբոխի հարազատ անդամ.
Եվ անկախության իդեալի համար
Թող գիշեր-ցերեկ, միշտ, ամեն անգամ
Երևամ հալածանք, երկրե-երկիր
Թափառեմ, տոկամ... և թող տառչանքի
Բեռը ինձ ճնշի թեև տարագիր
Միայն՝ ձեռք բերեմ խմաստը կյանքի։

Ուտել եմ ուզում՝ հանգի՛ստ ձեզ նման՝
Այն արդար հացից—որին ճարելու
Սուրբ աշխատանքին ավի իմ լծման.
Գոյության կռվում խոնարհ և հլու
Ամոթ չզգալով արհնած վաստակից
Թող թափեմ տգի՛ր քրտինք-արտասուք
Ապրուստս՝ բանվոր իմ ժիր ձեռքերից
Հոսեն ալ արյուն. հոգնի՛ իմ թիկունք։

Կռվել եմ ուզում. նախ՝ ձե՛զ ախոյան
Ձեր դիմաց կանգնած հի՛ն-հի՛ն վրեժով.
Որ անմտորեն, առանց գթության
Ինձ ճորտ դարձրիք սիրով և ույժով...
Ձեզ հետ իմ սեռի հաշիվը մաքրած—
Կռվել եմ ուզում և բիրտ կյանքի դեմ—
Ձեզ պես համարձակ, ձեր ձեռքը բռնած
Լինել-չլինելուն կանգնած դեմ առ դեմ...

9 հուլիսի 1907 թ.

ՆԱ Է, ԱՍՈՒՄ ԵՆ

Նա՞ է, ասում են... բանաստեղծուհին—
Եվ լո՛ւռ, ակնապիշ նայում են դեմքիս.
Ոմանք հիասթափ մնում են՝ որ հին
Տձև ու անզարդ շորեր կան հագիս։

Նա՞ է, ասում են... բանաստեղծուհին—
Անսովոր ոչինչ՝ կին է հողեղեն...
Օ՜ մարդիկ գուցե տեսնե՞լ կուզեին
Ուսերիս թևեր, դեմքս՝ լուսեղեն...

Դու ոչի՛նչ չասիր... բայց դու տեսար ինձ.
Ձեռքս բռնեցիր դողդոջուն և հեզ—
Այդ ակնթարթում իմ անկեղծ սրտից
Այնպե՛ս ջերմագին սիրեցի ես քեզ...

10 հունիսի 1907 թ.

ՄԵՆՔ ԷԼ ՄԻԱՆԱՆՔ

Էս ի՞նչ աշխարքի դարդն ու բալեն
Հերիք մեր ուսին յուր բեռը շարեն.
Աղի արցունքն էլ անգադար լալեն
Հերի՛ք աչքերիս ցոլքերը մարեն։

Էս բիրտ օրենքին հերի՛ք ղուլ-ղուրպան
Էղնին մեր գարնան ալ-կանաչ օրեր,
Ու չորս պատի մեջ մոռցված, անպաշտպան
Հերի՛ք մեր դիմաց փակվեն բաց դռներ։

Արի՛, քուրիկ ջա՛ն, ձե՛ն տանք աշխարքին,
Մեր ընկերներին թեզ ոտքի հանենք.
Էս սև, դարաքաշ, անվայել կյանքին
Մի ելք, մի ուղիղ ճամփա բաց անենք։

Արի՛, քուրիկ ջա՛ն, մենք էլ միանանք,
Էն մենե՛ծ, սուրբ կռվին էղնինք մասնակից.
Հերիք շղթայված ու գերի մնանք
Դուման մտքերով, շշմած զրկանքից։

Թող էն բախտավոր մեր տղա-մարդիկ
Շատ չհպարտանան, որ առաջ անցան,
Էնոնք առանց մեզ, հավատա՛, քուրիկ,
Թեզ տեղ չե՛ն հասնի—կընկնեն ցիրուցա՛ն...

Էրթա՛նք, քուրի՛կ ջան, անվա՛խ, միասին
Մեր արդար դատին զոհած ամեն բան.
Էն ազատ կյանքի սրբազան լուսին
Ամենքն են հավասար՝ կռվողը արժան...

2 հուլիսի 1907 թ.

ԳԱՐՈՒՆ Է

Գարուն է... գարո՛ւն... երգեր էլ չկան,
Վերքեր էլ չկան...
Անդորր են ուզում՝ մտքերս հիվանդ,
Մուսաս սիրավանդ։
Թո՛ղ ինձ հարազատ, թո՛ղ քիչ մոռացվիմ,
Նիրհեմ, չզգացվիմ,
Մեծ վիշտը սրտիս ծաղիկների մեջ
Մտորիմ անվերջ.

Նայեմ արևին—թող արտիս խորքի
Սառնամանիքի
Հալչեն ասուլյուներ—սեր ու խինդ թողնած
Արևից օրհնված
Թող առնեն ավյուն... գարո՜ւն է, գա՜րուն,
Անդորրն եմ սիրում...

10 հուլիսի 1907 թ.

ՆՈՒՅՐ ԵՐԳԻՉԸ

Ինչի՞ս է պետք ծաղիկ, գարուն,
Կամ արշալույս, վերջալույս...
Ինչի՞ս է պետք—ով է սիրուն,
Ով այլանդակ, խեղճ, անհույս։

Ինչի՞ս է պետք—ոչ չի լսում՝
Թշնամի է իմ երգին.
Ինչի՞ս է պետք—ով արտասվում՝
Ընդունում է իմ հոգին։

Ես ինձ համար ունեմ գարուն,
Ոչ ոք երան չի տեսնի
Ես ինձ համար ունեմ սիրուն,
Ոչ ոք նրան չի հասնի։

Անլույս աչքիս՝ լույսը կրծքիս—
Ինձ արշալույս, վերջալույս.
Եվ հարազատ մրմունջ երգիս՝
Ե՛ս ունկընդիր մինչև լույս...

30 հուլիսի 1907 թ.

ԱՐԾԱԹԻ ԾԱՐԸ

Ժեռ քարափին արծիվ նստած,
Արծիվ նստած ու երգեց.
Ջորի մթին ագռիկ տեսավ—
Նշխուն տեսքին զարմացավ։

«Հեյ, ջա՜ն աղջիկ, մարա՜լ աղջիկ.
Ափսո՜ս թռչել չգիտես.
Էդ ծմակում լռիկ-մնջիկ
Պիտի թողնես ծաղկի պես։

Թե թռչեիր—իմ ժայռերին
Քեզ թագուհի կընտրեի.
Քուն գար աչքիդ՝ իմ թևերին
Անուշ երգով կօրրեի...

Էդ աչքերդ՝ ինձ սև գիշեր,
Ժպիտդ՝ վառ արեգակ,
Անծեր երկինք քեզ չէր բշխեր
Ու կը լիներ հաստատ։

Ցարաբ թռչել հե՞չ չգիտես,
Քեզ ո՞վ ծնեց առանց թև.
Ցարաբ կյանքում հե՞չ սեղած չես
Օդում թռչել միշտ թեթև...»

Էսպես երգեց ժեռ քարափին
Հպարտ արծիվն անգուման.
Թռավ, անցավ սարեն, ձորեն,
Լալով բախտն աղջկան։

26 սեպտեմբերի 1907 թ.

ՏՐՏՈՒՆՋ

Իմ մրմուռ, միշտ անլուռ ցավերդով
Ա՜յ, անգին, քո հոգին ձանձրացա՞վ,
Որ անդարդ ու հանդարտ եղերքով
Հեռացար քեզ համար, առանց ցավ։

Իսկ ես հեզ, փրփրադեզ ծովի մեջ
Պիտ լողամ ու դողամ մինչև լույս.
Մինչ ծագի նոր այգի լուսաբեր
Վառ արփին սև ափին արշալույս

Լուսաշաղ, հուսաշաղ ջինջ շողին
Անհառաջ ընդառաջ ես կերթամ,
Եվ պսակ ու դրոշակ հաղթողին
Կը հյուսեմ ես վսեմ ու փարթամ։

Դու խաղճուկ, կամացուկ հետ կուգաս,
Կը ձգտես գողի պես ինձ սիրել.
Իմ ուլժից, վրեժից հետ կերթաս՝
Հաղթված և ատված անարգել։

1907 թ.

ՏԽՈ՛ՒՐ-ՏՐՏՈ՛ՒՄ

Տխո՛ւր-տրտո՛ւմ մտորում եմ
Նստած հուժկու գետափին,
Ալիքներին ես նայում եմ,
Ականջ դնում ծփանքին։

Մտորում՝ եմ—պարզ հեղուկի
Կաթիլներից բյուրավոր,
Երկրի կրծքին հարթած ուղի՝
Գե՛տն է հոսում դարեւոր...

Իսկ թե հայի թաց աչքերից
Մի ձուլվեին արցունքներ,
Ուղի շինած թափ հորձանքից
Ու անցնեին լեռ դաշտեր,

Իսկ թե հայի անմեղ արնից
Գետ ու վտակ կարկաչեր--
Անթիվ դարեր արյամբ ցողած՝
Սուգ ափերը նա ծեծկեր,

Իսկ թե հայի կուրծքը քերող
Հառաչները ժայթքեին,

Վշտերի հետ կյանքն ավերող
Քամի դարձած մնչային,

Քանի՜-քանի՜ անճար վշտեր
Արյուն ալիքն մեզ կերդեր,
Քանի՜-քանի՜ սուգ հառաչներ
Մրմունջ քամին կըսուլեր...

1907 թ.

ՍԻՐԵԼՈՒՍ

Նաղ մի՜ անել, կյանքը կարճ է,
Սիրելիս,
Ու մենք ճամփորդ մահի ցուպը
Ձեռներիս.
Մեր օրերը, տարիները
Սլացող,
Ու վառերազ-մուրազները
Կլանող
Տե՛ս, գնում են, էլ ետ չեն գա
Ամպամած
Կյանքի աշուն վրա կուգա
Անկասկած...
Նաղ մի՜ անել, կյանքը կարճ է,
Սիրելիս,
Ու մենք ճամփորդ, մահի ցուպը
Ձեռներիս...

1907 թ.

ՀԱՆԴԱՐՏ ԵՐԳ

Մի ծեր աղվես
Երգիչի պես
Բողբոջ վարդին կը գովեր.
«Թող իմ խոսքին,
Երգած երգին

Վկա լինեն զով հովեր՝
Որ քեզ նման
Նազ, անման
Երբե՛ք ծաղիկ տեսած չեմ.
Թե սուտ կասեմ
Կամ կը խաբեմ—
Քեզ մոտ հոգիս թող փչեմ»։
— Գիտեմ,— ասաց,
Վարդը խնդաց.
— Կը հավատամ, խնամի.
Նոր բան գիտե՞ս
Խնդրեմ երգես,
Թե չէ՝ քունս կը տանի...

9 հոկտեմբերի 1907 թ.

ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՂՈՂԱՆՋՆԵՐԸ

Արշալույսը ղողանջում էր բոսորավառ եթերից.
Արշալույսը շող էր մաղում ալ ամպերի շրթերից.
Արշալույսի հուր նետերից խավարն ընկավ վիրավոր,
Արշալույսի ազատ շնչից ես վեր թռա թևավոր։

«Տուր ինձ զանգակ, տուր ինձ ճաճանչ, ինձ լույս տուր՝
Ես ղողանջել, երգել կուզեմ քեզ նման
Հոգիներին՝ տառապանքին անձնատուր—
Որ վեր հանեմ ճորտ ու քնած չմնան։

Տուր ինձ զանգակ, տուր ինձ ճաճանչ, բոսոր լույս՝
Որ տանջանքի սև լեռների գագաթին,
Ես քեզ նման պարզեմ մի վառ արշալույս
Շիրիմ բանամ այս բռնակալ, խոլ մթին։

Տուր ինձ զանգակ, տուր ինձ ճաճանչ, ինձ լույս տուր՝
Ամպերիդ պես կուզեմ պարզել ալ դրոշ
Որ հոգեմաշ ցավերի թույնն ու մրուր
Շուտ դալկանան, կորչեն հավետ, անորոշ»։

Արշալույսը ինձ երգ տվեց բոսորավառ եթերից
Արշալույսի հիմնը թռավ իմ հուսավառ շրթերից.
Արշալույսի շողերի հետ սավառնաթև կը թռչեմ,
Արշալույսի լույսը գրկած՝ ըմբոստ երգեր կհյուսեմ...

16 հոկտեմբերի 1907 թ.

ԳՐՈՒԼԵՏԱՐԻ ԵՐԳԵՐԻՑ

Ո՛չ զրկանք, ո՛չ մարակ, կախաղան.
Ո՛չ դավեր բռնակալ, բիրտ ուժի
Մեր գլխին անպատիժ պիտ խաղան,
Պիտ մարեն մեծ հրդեհն վրեժի։

Կռվի մեջ—այս կյանքում բարբարոս
Օրրանից մենք սովոր հարվածի՝
Մեր արնով պիտ վառենք վառ փարոս,
Թոթափենք ճնշումը չար լծի։

Եվ ի՞նչ փույթ, որ փշոտ ու դժվար
Մեզ ուղի վիճակվեց կույր բախտից,
Շա՞տ ենք մենք—ամեն տեղ, հոծ, ստվար
Արթնացած գետնաքարշ, ճորտ ախտից։

Բազուկը, որ կոփեց կուռ շղթան,
Թիկունքը միշտ ծռած բեռի տակ,
Դլուխը սողացող գոյության—
Ապրելու տագնապից ուռնատակ։

Կոփվեցին տանջանքի սև սալին,
Ամրացան բիրտ կյանքի դասերից՝
Ու երբե՛ք չեն հակվի անցյալին
Ջեն խաբվի խաբուսիկ հույսերից։

Օ՜, երբե՛ք չեն դողա փշրելու
Նարխլած հիմքերը ճորտ դարի.
Շավղի տեղ լայն ուղի հարթելու
Զրկված, կեղեքած, խեղճ տարրի...

17 հոկտեմբերի 1907 թ.

ԹԱՆՎՈՐՈՒՀԻՆ

Մի՛ լար, բալա, թո՛ղ որ կարեմ,
Քանի լուսը չէ բացվել,
Քեզ անպատճառ հաց կը բերեմ—
Կարըս քիչ է մնացել։

Աչքդ փակե, խելոք քնիր,
Քո գիշերը չէ՛ ծախված.
Կը մեծանաս՝ էլ չես գտնիր
Ոչ անուշ քուն, ոչ էլ հաց։

Ես էլ քեզ պես աղջիկ էի,
Աղքատ տան մեջ մին ու ճար,
Հաց կար՝ չը կար չը գիտեի,
Բայց կուզեի անդադար...

Դեռ տարիքս չը լրացած,
Ինձ հորդ հետ կարգեցին,
Ջրկար՝ ապրուստ, չըկա՛ր չոր հաց—
Հացի համար ծախեցին։

Ում տունն որ հարս գնացի—
Մեզ պես աղքատ ու տկլոր—
Դարձա գերի ու շա՛տ լացի,
Լացի ծածուկ, ամեն օր...

Կեսուրս ինձի օր չէր տալիս,
Միշտ հորդ էր գանգատվում.
Հայրդ հարբած տուն էր գալիս
Խելացնոր ինձ ծեծում։

Ո՞ր մեկն ասեմ. դարդեր շա՛տ կան,
Երբ մեծացար՝ կիմանաս.
Բախտը սև է հայ աղջկան,
Տանջանքները՝ անպակաս...

Մի՛ լար, բալա, թող որ կարեմ,
Քանի լուսը չէ բացվել,
Քեզ անպատճառ հաց կը բերեմ—
Կարըս քիչ է մնացել։

20 հոկտեմբերի 1907 թ.

ՀԱՑԸ

Ո՞վ էր որ ցնցեց բթամիտ քնի
Թունոտ տիզմի մեջ մրափողներին.
Ո՞վ էր մրրեից հուրը գեհենի—
Տիրոջ դեմ հանեց հնազանդ գերին։

Ո՞վ զգալ տվեց բարբարոս կյանքի
Ամբողջ ծանրության սուգն ու լեղին.
Ո՞վ գերի վարեց արյուն-քրտինքի
Հեղեղը պղտոր խոպան, կեշտ հողին։—

Հա՜ցը, լակ հա՜ցը—այունը գոյության,
Որ աղիքներում սովամահ, անհյուր,
Մնեց պայքարը հավասարության,
Առաջ ընթացավ անսայթաք, անդուր։

Կեցցե՜ այդ հացը—հացը՝ սև, ճերմակ.
Հացը՝ ամեն տեղ, հացն ամենօրյա,
Որ համառ կռվով, ըմբոստ անդիմակ
Տարերքի ցասման բաց արեց ճամփա։

Կեցցե՜ այդ հացի երգն ամեն տեղ,
Իր մարտահրավեր շնչով անհամբեր,
Որ՝ ուր էլ գնա կը տանի այնտեղ
Սրբազան կռվի ջահը լուսաբեր...

29 հոկտեմբերի 1907 թ.

ԸՆԿԵՐ, ՁԵՌՔԴ ՏՈՒՐ...

Մենք՝ հնուց ընկճված, մենք՝ հնուց ջրկված—
Ինձ՝ զրկանք, փշեր, քեզ անկյանք գիշեր.
Խոր վերք կա սրտիս, խոր վերք դու ունիս՝
Ընկե՛ր, ձեռքդ տո՛ւր... խավա՛ր է ու մութ...

Որտեղ որ դու կաս՝ ինձ պես պիտ տոկաս,
Հոգիս հոգուդ դեմ—ճամփեդ ես գիտեմ.
Միշտ տեսա ես քեզ, ծուխում փրփրագեզ,
Ինձ պես վշտաբեկ, ինձ նման անպեկ...

Քո ճիչն ու բողոք, իմ երգն անողոք
Պիտ հնչեն զատ-զատ կյանքում անազատ,
Մեր սրտերի մոտ ուժը խավարչոտ
Ճանկը պիտ սրե—մեզ ջոկ-ջոկ տիրե...

Եվ խո՛ր, անհատակ տառապանքի տակ,
Բախտից չարանենգ մի օր մենք կընկնենք,
Ջնջվելու համար անհա՛յտ, աննշմա՛ր,
Որպես չնչին որդ, անարգ մնացարդ...

Ընկե՛ր, ձեռքդ տո՛ւր—ես՝ հույս, դու՝ փրկություն,
Իշխենք սարսափին—հասնենք լույս ուրվին.
Քեզ հետ ալեծուփ ծովն է ինձ անծուփ,
Քեզ համար ինձ հետ չկա՛ արահետ...

23 նոյեմբերի 1907 թ.

* * *

Սերը—հեշտալի ինքնամոռացում—
Անցավոր ցնորք լուսնակ գիշերի,
Հրդեհ հույզերի արբեցնող ծոցում
Նվագը շոյող, քնքուշ հույզերի
Երդումը—դրոշմ կեղծիքը ծածկող,
Լացը—միշտ անհայտ պատճառի աղբյուր,

Համբույրը—կրքի ուժը խնկարկող
Անմիտ տանջանքի, խանդի հրապույր
Կորչե՛ն ինձանից,
Ջեմ ուզում նորից

Լինել իմ սրտին հլու հպատակ.
Եվ մեղկ ու չնչին, միշտ աննպատակ
Կյանքում տեղ բռնած ուտել ու ապրել—
Ուտելով ապրել...

Եվ նայել վարից խղճուկ ու անզոր
Թե ինչպես արծիվն ազա՛տ ու հզոր—
Մի անքան թռչուն
Անկախ է թռչում...

Եվ հյութը ծծել անմեռ բնության
Եվ չտալ նրանց՝ որ միշտ ինձ կուտան—
Ջերմ, լույս, հրապույր
Ինձ՝ մարդուս անբույր...

Ո՞վ եք դուք, ո՞ւր եք բախտ, ճակատագիր,
Լքում ու տանջանք, անխաչ, խաչակիր,
Մրրիկներ՝ ծեծկող, հրդեհ ու անձրև,
Թախիծ՝ հուսահատ, սև ամպեր տձև,
Որոտ ու կայծակ, քաղց, կարիք, զրկանք,
Սև ուրվականներ
Կռվի խոր ակներ.

Ահա ես խիզախ ձեռնոցս եմ ձգում
Անհայտության մեջ ձեր դեմքին, հոգուն
Ձեզ կոչ եմ անում, կոչն հզոր մարդու...
Դուք չե՛ք զգացել բանական մտքի—
Իմ ըմբոստ հոգու գերիշխանության,
Ուժն անսասան—ուժը տարերքի
Նա գերի վարեց իմ մեջ ամեն բան
Սի՛րտ, սե՛ր, սիրական...

Գիտեմ այդ կռվում—իմ դեմքի վրա
Ձեր հարվածներից կիջնեն կնճիռներ.
Ձեր հանած փոշուց մոխիր կը մաղվի
Իմ սև մազերին, իմ քնքուշ կռներ
Կը դողան մի օր, խորունկ կը թաղվեն

Աչքերս խոշոր և մահվան անհաստ
Ցուպն իմ ձեռին, ծերուկ ու տկար
Կընկնեմ ճանապարհ.
Բայց ո՛չ հաղթահար...
Իմ միտքը, հոգին չունի ախոյան
Ձեզ մեկիկ-մեկիկ իմ կռվի ճամփին
Բզկտած թողած կանցնեմ—կը գնամ,
Պարտության կնիք—ձեր ամեն մի դին
Ես իմ սերնդին կը թողնեմ նվեր...
Եվ անձնանվեր
Իմ թողած տեղը կուգան նոր մարդիկ
Էլ դուք չեք իշխի ձեր չարաբաստիկ
Ույժերով բռնի—
Ջարը կըմեռնի...

25 նոյեմբերի 1907 թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

«Разливай в твореньях свет,
С полной силой создавая,
Ты поденщик и поэт
И трудись не уставая».
Фер. Фрейлиграт.
(Գերմ. գեմոկր. պոետ)

Ձեռքերդ՝ քնքուշ, աղտ, կոշտեր չկան,
Ծանր բեռի տակ չես թեքվել երբեք,
Մեծ փողոցներում չեղար մուրացկան
Հպարտ է եղել սիրտդ վշտաբեկ։

Անկաշառ սիրով, քո ցավը թողած
Ամբոխի վշտին եղար վշտակից.
Անձայն, անմռունչ, հոգսերով դաղված
Լոկ երգդ թնդաց կյանքի հատակից։

Տգետ ամբոխը դեռ չի հասկացել
Թե գարնան հուշեր ամեռն ես երգում...

Թե ըմբոստ երգով մենակ ես լացել՝
Անհույս թախիծն է իշխել քո հոգում։

Միշտ իրավազուրկ, անվարձ վաստակած
Տանջանքի հանքում դո՛ւ պրոլետար.
Քլունգի փոխան գրիչդ բռնած
Տվիր ամենքին—ոչինչ չդատար։

Կարո՞ղ ես արդյոք անել գործադուլ
Կենդանի խոսքդ դեռ արժեք չունի.
Պիտ գրես, թշվա՛ռ, պիտ գրես անդուլ՝
Առանց գրելու հոգիդ կյանք չունի...

Գրի՛ր ու գրի՛ր... խավարում անծիր
Աչքիվ մտքերդ կախիր ջահի պես.
Կյանքի խուլ ճահճում դու լույս արծարծիր՝
Լույսի հետ երբեք չես մնա անտես։

27 նոյեմբերի 1907 թ.

ԴԵՄ ԱՌ ԴԵՄ ԿՌՎԻ

Նայիր. ե՛ս անվախ ձեռնոցս եմ ձգում,
Կյա՛նք, քո երեսին,
Մրրի՛կ է, կռի՛վ իմ ըմբոստ հոգում—
Կարո՞ղ եմ լույսին։
Խփի՛ր— կը խփեմ— կռվել եմ ուզում,
Կռվել մինչև մահ.
Հաղթության դափնին իմ սիրտն է հուզում՝
Իմ սիրտն անահ...

Դու դաժան գեմքով եկա՞ր կանգնեցիր
Իմ լույսի դիմաց.
Ինձ—հզոր մարդուս գերիդ շինեցիր
Անձայն, անիմաց...
Չկա՞ քեզ ներում, զենքերդ վար դիր
Նա հին է՝ ես նոր

Տեսա՞ ես ինչպես աչքդ գավաղիր
Պակսեց օրեցօր...

Ընկճվե՞լ քո գալիքից—երբե՞ք չես տեսնի—
Արժան չե՞ս գրան.
Երբ մարմնին հաղթես՝ միտքը կը բուռնի
Տեսե՞լ ես նրան...
Նա է, որ խարխուլ, ստրուկ դարերի
Հիմքերդ է փորում,
Նա է, որ մոլոր, ընկճած տարրերի
Փրկանք է բերում...

Դարերդ արնոտ եկան, գնացին,
Ընկան սերունդներ,
Կարմիր կատափից անջինջ մնացին
Մեզ սուրբ պատգամներ.—
«Վերածնության արշալույսի դեմ—
Սրբազան կռվում
Գիտակից մտքով նորը հնի դեմ
Հաղթված չի մեռնում»...

14 դեկտեմբերի 1907 թ.

ՈՒ՞ԹԵ ՁԵՔ ԶԳՈՒՄ

Ինչպես գորշ, ճնշող մշուշն է ճնշում—
Մշուշը տարտամ, մոլոր գոյության.
Վերքը՝ հին, խորունկ սրտեր է մաշում,
Մաղում է անվերջ անձրևը լքման։

Կիսամերկ, անհաց, մութ, ցեխոտ կյանքում
Վխտում են մարդիկ տոլերի նման.
Եվ խավարի մեջ, խեղճ, խավար հոգում
Չկա՞ տենչ, հուզմունք՝ որ կանգուն մնան։

Որ մեկ վեր նայեն՝ միշտ ցեխին սոսկոր
Հայացքը ճեղքե թուխպը ասանգանքի.

Միտքը բանական թռչի թեաթոր
Դեպի վե՞ր ու վե՞ր վայրը փրկանքի։

Որ հուզվի անծուփ սնարը՝ ճահիճ,
Ուր անարգ քնին դարերն են վկա.
Ուր բռնությունը ծեր դայակ-դահիճ
Հսկում է անքուն և զարթնել չկա...

Ճնշում է՞... ճնշում մշուշը խավար—
Միահեծ իշխող գալարվող հոգում
Նրա սև գահը շրջելու համար
Պետք է մե՞ծ կռիվ... մի՞թե չեք զգում...

26 դեկտեմբերի 1907 թ.

ՔՆԱՂ ԷԻՆ...

(Հավերգ)

Ա.

Փերուզ երկնի լայն գրկում
Արծաթ ցոլքը երեսին—
Կոտրտվելով շորորում՝
Հուշիկ լողում է լուսին։

Իր լուսացող թևերում
Փռում ամպից անկողին,
Հեքիաթ ասում աղորում,
Որ քուն դնե աստղիկին։

Բայց կամակոր աստղիկի
Քունն է փախել աչերից—
Նա չի լսում մայր-լուսնի
Գգվանքները սիրալից։

Երան լուսինն անարգում,
Վերջ է տալիս օրորին—

Ու թաքնվում ամպերում
Քունն հաղթած աչերին։

Գեծին տալիս, թրթռում,
Աստղը փախչում է տեղից
Ու փերուզյա երկնքում
Վառ գիծ թողնում ետևից։

Բ

Մութ խրճիթում— մոր կողքին
Սև ծամերն արձակած
Սիրուն Սոնան տխրագին
Հառաչում էր բարձր ու ցած։

Կոկոն կուրծքը ծածանվում
Չկա՛ քնելու մի հնար—
Գալարվում է անկողնում
Մորից ծածուկ անդադար։

Ու տեսա՞վ նա աստղիկին
Մի վառ գծով փախչելիս—
Զգույշ թողեց անկողին
Ու դուրս թռավ խրճիթից։

Քնած էի՞ն... խրճիթում
Մայրը անդորր մրափում—
Եվ փերուզյա երկնքում
Լուսինն էլ չէր երևում...

*
* *

Եվ կախաղանի անարգ սյուներից
Ճոճացին նոքա—ազնիվ մարտողներ.
Կեղեքված կյանքի մեռցնող շնչից
Ինչպես ուշ աշնան դեղնած տերևներ։

Եվ մութ բանտերի մշտաբաց գրկում,
Զրկանք կրեցին ջանվեհեր սրտով,
Նոքա որ կռվի առաջին շարքում
Մեծ գաղափարին զոհվեցին սիրով։

Բայց միտքը մնաց... նրան խեղդելու
Դժոխքի որդին չունի մեքենա—
Եվ ճակատագրի զարկին ահարկու
Նա է լինելու վահան պողպատյա։

1907 թ.

ԿՈՎԿԱՍ

Բա՞րձր է այնտեղ... երկիրը հպա՞րտ,
Մատաղ կույսի պես կուրծքը դուրս ցցած,
Վիթխարի սարեր գլխով ձյունապատ
Կապույտ երկնքին, ամպերին հասած։

Եվ գետ ու վտակ, բարձրից խայտալով
Ընկնում, տարածում դալար դաշտերում,
Ու օձապտույտ կապուտակ գծով
Լայնաբձակ հովտի կրծքով գալարվում։

Սիրող աչերի կախարդող ժպտով
Գույն-գույն ծաղիկներ, սարերի սմբուլ,
Անո՞ւշ հովերին փարված բուրմունքով
Մրմունջ տարածում, քան երգիչ բլբուլ։

Ու լա՞վ է այնտեղ, նահապետական
Անպաճույճ կյանքը խաղաղ ընթանում,
Եվ պրոգրեսի քայլեր հաղթական
Դեռ ադամական կիրքը չի հուզում...

Բայց շա՞տ սև օրեր հասել են այնտեղ.
Բերրի երկիրն անգութ թշնամու
Վայրագ արշավից մոխրի կույտ դարձել—
Կորուստը լացել իր որդիներու...

Հրդեհ ու թալան, կոտրած անգութ
Լափել ու խոցել սիրտն աշխարհի,
Մխացող ցավից հուսահատ գաղութ
Ավեր դարձրել մե՜ծ տունը շենի...

Ու այն օրերի ավերիչ ձեռքով
Որպես մի կնիք հին-հին մեղքերի,
Սև ավերակներ տխո՜ւր գեմքերով
Կանգնած են լո՜ւռ... դարան բուերի։

Որպես ծիծեռնակ, հին բունը դարձած,
Քանի՜ հուսով լի երգեր են երգել,
Ու դեռ մխացող մոխրի գորշացած
Տաք կրծքին նոքա շենքեր կառուցել...

Ու մրմունջ հանում այնտեղ դյութալի
Ջքնաղ բնությունն... տարաբախտ որդուն,
Հույսով փայփայում որ սև օրերի
Մառնա իր քաշած միշտ լաց ու արյուն...

Բա՜ւբար է այնտեղ... երկիրը հպարտ
Մատաղ կույսի պես կուրծքը գուրս ցցած
Վիթխարի սարեր գլխով ձյունապատ
Կապույտ երկնքին, ամպերին հասած։

ԵՐԿՆՔԻ ՀՈՒՇԵՐԻՑ

Երկրից եկած գոլորշին՝
Ծով-օվկիանի ջինջ փոշին
Մի օր սաստիկ վհատված
Այցի եկավ առ աստված։
— Տե՜ր, հոգնել ենք վեր ու վար
Միշտ շրջելուց գերեվար.
Տուր արձակուրդ, վար իջնենք,
Մենք էլ մի քիչ օր տեսնենք։
«Իշե՜ք...» ասաց միամիտ,

Աստված՝ դեմքին մի ժպիտ։
Եվ փաթիլներ ժըրաջան
Երգ ու պարով վար իջան։
Իշխեց պառավ ցուրտ ձմեռ,
Դաշտը սգաց կիսամեռ,
Գետերն հստակ ու վճիտ
Հազան սառցե քղամիդ։
Պայթեց կռիվ զենիթում.
Աստղ ու լուսին խիստ տրտում
Դալուկ շղարշ քող հագած՝
Կեցան անլույս և հանգած։
Ոգիները օդային
Կպան տիրող սուրբ գահին,
Էլ չուզեցին գիշերով
Թռչել գողտրիկ հուշերով։
Ցուրտը հարթեց իր ուղին,
Փռեց քամուց անկողին.
Նորա շնչից չքացան
Արծիվ, ծիծառ ցիր ու ցան։
Մինչդեռ երկրի գոլորշուց՝
Ծով-օվկիանի ջինջ փոշուց,
Ո՛չ մի լուր կար, ո՛չ էլ ձայն—
Օրն ու ժամը դար դարձան։
Աստված կանչեց արևին,
Սիրով ժպտաց բարևին,
Հրե, թոսոր-լուսահեղ
Տվեց նրան նետ-նետեղ.
«Գնա՛, ով քաջ պատանի,
Գտի՛ր փոշին օվկիանի,
Քեզ արշալույս-վերջալույս
Կը տամ ընծա, աշքիս լույս։
Երկիր փախած գոլորշին՝
Ծով-օվկիանի ջինջ փոշին,
Որ սիրատարփ անուրջում
Իր սիրերգն էր մրմնջում,
Քընաթաթախ հառաչեց,
Հուր նետերից շուտ հալչեց,

Դեմքով տխուր, մեղապարտ
Ճոճվեց երկինք լո՜ւռ, հանդարտ։
Աստղ ու լուսին վեր թռան,
Սգի քողը վար առան.
Երկինք ուրախ, գոհ ժպտաց,
Ոգիք թռան գրկաբաց։
Այն օրվանից մինչ այսօր
Արփին հպարտ՝ հուր-բոսոր,
Երբ ծագում է, մայր մտնում
Հրաշավառ զենիթում,
Երկրից ելած գոլորշին՝
Մով-օվկիանի ջինջ փոշին
Հուր նետերի տարափից
Կարմրվում է ամոթից,
Որ հաղթված արևից
Եվ ծաղրված ամենից՝
Գիտի շրջե վեր ու վար
Ըստրուկ ու խեղճ, գերեվար...

1907 թ.

* * *

Ո՞ւր ես դու փախչում. կյանքի նեղ ուղին
Իզուր պիտ շրջես մենակ ծայրե ծայր,
Մի՞թե չարանենգ բախտի զարկերին
Ջանես հույս-հավատ կռվելու համար։

Ո՞ւր ես դու փախչում. վշտի հովիտում
Տե՛ս ո՞րքան դիակ թողին փախչողներ,
Նոքա որ հանգիստ էին միշտ փնտրում,
Առանց քաղելու կյանքի տատասկներ։

Եկ կռվենք, եղբայր. նոր կյանքի համար
Թեև վիրավոր ընկնենք մեծ կռվում,
Մեզ հետևողին հույս տալու համար
Զոհվենք հավատով. ո՞ւր ես դու փախչում...

1907 թ.

Ժպտա, սիրելիս. արև աչերիդ
Թող ցոլքը ընկնի սրտիս մութ խորքում,
Կյանքի մրրկից այնտեղ շատ կոկոն
Վարդեր կան թոշնած տխուր ու տրտում։

Ժպտա, սիրելիս—վշտի սառ շնչով
Մտքիս թևերը կանգնել են սառած—
Սիրաբուղխ ջերմի դողում կարոտով,
Որ թոչին ազա՜տ աշխարհը սիրած։

Ժպտա, սիրելիս—ու գարուն ժպտով
Նայիր իմ կյանքի վանդակի դռնից—
Ու կարոտ սիրտս սփոփե երգով
Ապրած վառ գարնան ծաղկոտ դաշտերից։

1907 թ.

ՍԳԻՏԱԿ ԳԻՇԵՐՆԵՐ

Արծաթափայլ լուսնյակ գիշեր
Ճարածվել է բուրմունքով,
Մեղմ ճոճում են ծառ ու թփեր,
Ու շշշնջում բերկրանքով։

Գիշերային լուռ ոգիներ
Թրթռում են իմ դեմքին,
Կախարդական ցոլում շողեր,
Եվ ժպտում է իմ հոգին։

Աստղ ու լուսին ինձ հմայած
Ա՜խ, տանում են դեպի վեր,
Ես թռչում եմ ոգի դարձած
Ու սլանում զով եթեր։

Մոռացվում են... մոռացվում են
Եվ կյանք մաշող տանջանքներ,
Ոգիները գուրգուրում են
Ու օրորում ինձ հովեր...

1907 թ.

ԵՍ ԱՒ ՆԱ...

Նա՝ մի աստղիկ է կապույտ երկնքում
Աստղոտ գիշերին պսպղում լռիկ,
Իսկ ես՝ պարզ վտակ կանաչոտ ձորում
Շողերը գրկած մտորում մնջիկ։

Նա՝ զով զեփյուռ է թևերը պարզած
Դալար դաշտերով անսանձ ծածանվում—
Իսկ ես՝ վառ ծաղիկ թերթերս բացած
Փարվում հոսանքին ու համբույր քաղում։

Նա՝ մի լինար է պարտիզում բուսած
Դալար ճյուղերը հովից օրորում—
Իսկ ես՝ մի ճամփորդ արևից այրված
Զով ստվերի տակ անո՛ւշ մրափում։

Նա՝ վարդի թուփ է սիրուն վարդերով
Սուք-սուք փշերը ծածկած, թաքցրած—
Իսկ ես՝ մի սոխակ սրտով վիրավոր
Գովում, գեղգեղում իմ վարդը սիրած...

1907 թ

ԻՆՉ ԻՆԵՂ...

1

Ինձ ի՞նչ նոր տարի, օրը՝ հին թե նոր.
Ինձ ի՞նչ տոնական հույզերի թափոր.
Երբ կյանքի սայլին մի գրաստ լծված
Սողում եմ առաջ անսիրտ կեղեքված։
Անարդարության սանձը շրթերիս
Զրկանքի փշից վիրավոր կրծքիս
Արյունն է ծորում
Խավար ժխորում։
Երբ շահել կյանքիս տենչերը բոլոր
Խլեցիք երեկ, կառնեք և այսօր.

Երբ ծաղիկնե՞րս ամբոխս վառ, փարթամ
Այսօր որ ապրա՝ նրա տեղ կուտամ...
Անձայն տանջանքը հոգուս միշտ ընկեր
Մոխիր է մաղել գլխիս սևահեր.
Բայց դուք չեք տեսնի իմ ճերմակ վարսեր,
Որ ճակատագիրը խինդով է հյուսեր։
Ինձ ի՞նչ նոր տարի այս հին կյանքի մեջ,
Ինձ ի՞նչ խաբուսիկ գերկրանք լուսաէջ,
Երբ ողջը խավա՞ր, նե՞ղ է ինձ համար
Երկինքը՝ ոճիր, արյունն է կամար...

2

Ահա պարզում եմ բաժակս լցված
Ողջո՞ւյն քեզ տարի...
Գալուստդ բարի...
Նայի՛ր, եռում է հեղուկը հուզված—
Հյութն է իմ կյանքից, փրփուրը՝ հոգուս—
Քնաթք, սեր, երազ, տենչ, խգեալ և հույս.
Հին ամբոցներիս փլատակներից,
Երբեմն գարնան թարմ ծաղիկներից,
Ուխտավոր մտքիս վինգրուկ, խունկ ու մոմ՝
Տրորված սրտիս արյունն անկանոն
Լցված է այստեղ...
Վրեժը տհեղ։
Խմորն է գինու. եռում է նրան
Եվ համբերության չափը անռամհնան
Լցված է արգեն...
Կանգնենք դեմ առդեմ։
Ողջո՞ւյն քեզ, տարի—դեհ առաջ արի...
Նայի՛ր. բոլորը, առանց կաթիլի
Վրեժն ըմպելի՝
Ցկա՞...
Տպի՞... տվի՞... քեզ, ով անկուշտ վամպիր,
Ամեն ինչ տվի...
Օրհնվի պայքարը տվող-առնողի...

1 հունվարի 1908 թ.

ԻՄ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Ես իմ հույզերից մի փունջ ծաղիկներ
Անբիծ եթերում սիրով ցանեցի.
Նրանց գգվեցին բյուրեղ ցողիկներ
Պայծառ ծալքերից ջինջ լուսաբացի։

Կյանքի գիշերում—մղձավանջի մեջ
Համր առաջ լողաց թախծոտ լուսընկան.
Հուսաշող լույսի հանգավ ելևէջ՝
Տեսա, թե ինչպես ծաղիկներս ընկան։

Ես իմ հույզերից մի փունջ ծաղիկներ
Տանջանքի ծոցում թաղեցի անձայն.
Տեղաց փորձերի պղտոր ցողիկներ
Իմ ծաղիկները ազա՜տ մեծացան...

3 հունվարի 1908 թ.

«ԱՇԽԱՏԱՎՈՐԸ»

Ջույգ կուռ բազուկներ ունեմ ես՝ անվարձ,
Որ կոշտ են, ամուր՝ քան մուրճը դարբնի.
Եվ փոշեթավալ, ծանր, վշտաբարձ
Գլուխ՝ միշտ հագած արյունոտ դափնի...

Սիրտս՝ ձեզ նման, մի սիրտ է մարդու
Սակայն սև՝, մթի՜ն, աղտոտ լաթի՝ տակ՝
Որ կեղեքում է ուժն արյունարբու
Եվ բնաջնջում ամեն նպատակ։

Կարծում են մարդիկ, որ չունեմ հոգի—
Սողուն եմ չնչին փոր հացի համար.
Գիտանի՜ սողուն՝ որ միշտ անհոգի
Ծծեն հյութերս—քրտինքս արդար...

Ծծեն... հղփացած, գոհունակ ժպտով։
Դուք ինձ չե՜ք վառի ոչ մի արշալույս.
Մանուկ հասակից տրորված սրտով,
Վերից կորցրի և՛ հավատ, և՛ լույս։

5 հունվարի, 1908 թ.

ԿԱՐՄԻՐ ԹԱՓՈՐԸ

Կարմիր թափորը գնում էր դանդաղ...
Ոչ աղի արցունք, ոչ թաղման լքում...
Սևի հետ կարմիր մի անշուք դագաղ
Ժիր բանվորների շղթայված ձեռքում,
Պսակ, ժապավեն, ժպիտ ու դեմքեր
Աչքեր, հայացքներ՝
Կարմի՜ր, ալ կարմիր...

Եվ բանվորության մահքայլերգն ուժգին.
Ուժգի՜ն ռազմի շեփորի նման,
Խրոխտ ու ցնցող շղերն ու հոգին՝
Որ սիրտ կը շանթեն, այնտեղ էլ մնան
Մինչև մահ անմեռ՝

Հնչո՜ւն, ներդաշնակ, զի՜լ ակորդներով
Հուզված կրծքերից վիժում էր, ժայթքում—
Այն սև թավամազ, հյուծված կրծքերով՝
Որ շա՜տ են կյանքում...

Ո՞վ էր պատկողը այդ չոր դագաղում.
Գուցե արտոնյալ մի կուշտ բախտավոր,
Որ պմեն դեմքից հուզմունք էր քաղում
Անկեղծ հարգանքի.
Օ՜, ո՜չ. մի աղտոտ հասարակ բանվոր,
Մի բմբոստ հոգի՝
Որ կյանքի կովում դառնալով պաշտպան
Լծի տակ տնքող բանվոր ընկերին,
Դավադիր՝ ցույցից ընկավ անպաշտպան
Սև մահի գերին...

Որ ազատության կոչնակի ձայնից
Արթնացած մտքով քաջ առաջ գնաց,
Կարմիր դրոշի կովին լծակից
Ալ զինվոր մնաց...

Նրան կը թաղեն սառ և սև հողում.
Փայտից գորշ մի խաչ կը տնկեն վրան.
Որդեր կծնեն կարմիր դագաղում,
Երկրից կը պակսի մի ուտող բերան.
Սակայն ամբոխը հրաժեշտ տալով

Իր ուխտի կնիք թարմ հողակույտին
Լուռ ետ կը դառնա նույն հողին տալով
Իր սիրտը միշտ այժմ քնած ու մթին.
Արծվի հայացքով կը թռչի հեռու
Մտքի անիվը կը պտտի արագ.
Իրականության նանիր ժխորում
Կյանքի և մահվան տագնապի տակից՝
Ուր որ չարիքը միշտ փոս է փորում
Արթնացող տենչին, մտքին գիտակից—
Կը բացավառվի հրգեհն վիթեմ
Կարմի՞ր, ա՛լ-կարմիր...
Զգո՛ւյշ այդ կարմիր-ալ թափորներից.
Զգույշ բանվորի այդ անփառք թաղման
Շիրիմը փորող կուռ բազուկներից՝
Նոքա կը մնան...
Միշտ մահ ծառացած, միշտ վրիժառու.
Ձեր ճաղատ գլխին որպես պատուհաս.
Զգո՛ւյշ դուք, հեռո՛ւ,
Նոքա կը բերեն ձեզ սև օրահաս,
Ձեզ մտքեր վարձկան,
Հղփացած, ճարպոտ տեր և տիրական...
Նոքա կը կանգնեն ձեր կյանքի ճամփին,
Իշխող թաթերիդ շիրիմ փորելու,
Ինչպես որ դրին բանվորի չոր դին՝
Լո՛ւ մահին հլու...
Նոքա կը մնան և կաճեն արագ,
Կաճեն ձեր ձեռքով, ձեր հարվածներից.
Եվ կոպիտ ուլժի տարափը վայրագ
Կը տեղա նորից...
Զգույշ այդ կարմիր—ալ դրոշներից,
Որ անմեղ արյան շեկ զոհարանի
Ծածկ է հուր բոց.
Նա էր բանվորի սրբություն սրբոց
Կարմի՞ր—ալ կարմիր...

8 հունվարի 1908 թ.

ԱՐԵՍ

Հավատիս սրբատաշ խորանում
Ձեզ համար վառ կանթեղ վառեցի,
Կյանքի մեջ—բանության օրրանում,
Կանթեղիս նուրբ շղթա կռեցի։

Դու լուսիդ վառ շողերն առկայծիր
Զոհերի ուն թմբին լույսդ անխոսի՝
Ուր անթաղ և անխաչ—ցան ու ցիր,
Հանգչեցին տեղ չհասած ու վհատ։

Ուխտավոր իմ հոգին աշխարհում
Տանջանքի կեռ ցուպը ձեռն առած,
Անդ կապրի՝ ուր ցավն է պաշարում,
Եվ լքման ձանձրույթն է բեռնած։

Դու վառվի՛ր, միշտ լույս տուր իմ կանթեղ,
Վերապրած քո հոգին գրկելու,
Մարտիրոս նշխարիդ փոշու տեղ
Կենդանի գրկիդ մեջ ընկնելու...

16 հունվարի 1908 թ.

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Մրրիկներն անհաշտ,
Անձրև, տաղ, երաշտ
Հանդես են բացել իմ շեն ծաղկոցում,
Ոճրև բարեկամ—
Դրդիչքը դժկամ
Թաղեց-արեն թուխպերի ծոցում։

Քամին ցո՛ւրտ, անգո՛ւթ
Սեծկում է անփույթ
Արտիս ծաղկոցի ճյուղերը սուտակ.
Տենչերս ամբան

Դալկահար խամրան,
Հույս՝ ա՛լ-կարմի՛ր մնաց հողի տակ։

Ծագի՛ր, իմ արև.
Տուր կյանքիս բարև.
Կապիր իմ սրտում հաշտության կամար.
Ես մի փունջ փարթամ
Ծաղի՛կ քեզ կը տամ—
Մեր այդ վարդավառ դաշինքի համար։

20 հունվարի 1908 թ.

ԳԱՆԳԸ

Ո՞վ է, լգիտեմ. գանգերն այլանդակ
Ջուրեն մի նշան—արտոնյալ կնիք.
Մահվան մանգազի զարկը դժնդակ
Դիպավ ձեր կյանքին՝ հավասար կընկնեք։

Կպչում եմ մատով՝ չոր է, դարշելի,
Դատարկ ճակատը թխկում է՝ կոպիտ.
Եվ ինչպես հիվանդ ահռռ գիշերի
Սարսափ են ազդում աչքերն անժպիտ։

Մնոտը՝ լա՛յն, լերկ. փոսը բերանի
Կասես պիտ ճչա ձայնով անողոք.
Անմեռ անդորրին ոչ թե երանի,
Այլ մահասարսուռ սազում է բողոք։

Ո՞վ է, լգիտեմ. կյանքի օթյակում
Գուցե բախտավոր կամ հայտնի անհատ.
Թե մի խաչակիր՝ որ տանջված հողում
Գեթ անմահության ուներ չինչ հավատ։

Գուցե անձնուրաց մի անհայտ հերոս,
Որ վախ լգիտեր՝ բայց մահից սոսկաց,

Թե՝ աշխատավոր թշվառ մարտիրոս
Հացի փոխարեն մահվան կեր գնաց։

Ոչի՞նչ, ոչ մի հետք... էլ ինչո՞ւ համար
Մտքեր, տենչ, երազ, կռիվ սանձարձակ—
Անհաշտ գոյություն. ա՜խ, ինչո՞ւ համար
Գերազանցության ոճիրը արձակ...

23 հունվարի 1908 թ.

ՓԱԹԻԼՆ ՈՒԶԵՑ

Փաթիլն ուզեց ինձի գգվել, գուրգուրել.
Իմ թշերը պաղ շրթերով համբուրել.
— Ես գարուն եմ, դու ցուրտ ձմեռ, ա՛յ փաթիլ.
Քո համբույրից դու կը դառնաս խեղճ կաթիլ։

Սառ հողի տակ մի օր կը հանգչեմ ես արձակ.
Իջիր վրաս երբ կամենաս համարձակ.
Իմ սև թմբից էլ չես հալչի այ փաթիլ,
Անջերմ, անկյանք ես կը դառնամ խեղճ կաթիլ։

Տիեզերքի տապ ու կիզող համբույրից
Որպես ծաղիկ թոշնած ու զուրկ եմ բույրից.
Ողջույս դանդաղ պիտի հյուծվի ու հալչի
Ոչ մի շրթի համբույրն էլ ինձ չի դիպչի...

9 փետրվարի 1908 թ.

* * *

Դեհ, հերիք այդտեղ սողաք անզգա
Վախկոտ ու անհաշտ, անհույս ու նսեմ.
Արդար բողոքի մրրիկը հսկա
Թող եռա վայրագ—ժամն է վսեմ։

Դարավոր ոխը անիմաստ կյանքի
Բռնակալ ուլժին խիտ ցանց է, ոստայն.

Որտեղ կուրորեն, առանց փրկանքի
Զոհ եք դառնալու գերված հավիտյան։

Մի սիրտ, մի հոգի միացեք հավերժ
Թող մահը ոռնա անլուռ, միալար.
Արյան հեղեղից կարկաչե ջրվեժ
Թող հնձվեն կյանքեր ջահել ու դալար։

Թող ըմբոստ հոգու տենչը բողբոջուն
Իր հարազատին ազատե քնից.
Գնդակը կրծքին տա հաղար ողջույն
Գանգերը պոկվեն ու թռչեն բնից։

Հրդեհը լափե խաչը քառաթև
Որ անարգ ծնվեց—թող անարդ կորչի.
Կիսալուսինը—մոլի կրքի դև
Սուր մինարեթից մի զարկով փլչի—

Արնոտ գահի տակ խարույկ թող վառվի
Հանցավոր ոճրի բորբոքված տիղմից—
Որ ազատության վեհ ուժը կռվի
Արթնացած մտքի նոր ածին սաղմից։

9 փետրվարի 1908 թ.

ԲԱՆԱՎՈՐՈՒՀԻՆ

Ծագի՛ր, արև, կարմիր արև՛, վառ արև,
Քունս ցավոտ գիշերվա հետ չքացավ.
Տո՛ւր բորբոքված, ցուրտ նկուղիս ջերմ բարև.
Քեզ հետ, արև, հույսն է անմար—չկա՞ ցավ։

Քեզ մոտ, արև, շողերիդ տակ ես այսօր
Թողնելու եմ քաղցած ու մերկ զավակիս.
Տո՛ւր հացի տեղ նրան շողեր ալ բոսոր,
Որ բանալիս չմորմոքա հեգ հոգիս։

Գգվիր նրան, գթոտ արև, տաք շնչով,
Թող կենսունակ ժպիտ փայլե երեսին,
Զրկված կյանքում նա ապրել է ոչնչով—
Կարոտ օդին, կարոտ ջերմին ու լույսին։

Եվ երբ հոգնած պառկե աղտոտ հատակին,
Գանգուր գլխին կապիր լույսից ջինջ կամար—
Երազներով քուն դի՛ր իմ խեղճ զավակին՝
Մայրդ, ասա՛, հաց բերեր քեզ համար...

Իսկ թե կյանքիս մահը հանկարծ տա բարև,
Ու հյուծված դիս գրկե անիվ՝ տուն չգամ,
Երբ հաց ուզե, ասա՛ որդուս վառ արև.
— Մորդ կերավ հացն անիրա՛վ, անզգամ...

18 մարտի 1908 թ.

*
* *

... Եվ սիրտս լացեց, երբ տեսավ կյանքում քուրին ոտնատակ,
Ուր լոկ տիրելու հաճույքն ունի անխոնջ նսպատակ։

Եվ լուռ դալկացավ կույս երազներիս կամարը շքեղ,
Անմեղ դատվածի լացն այն թրջեց կարգերը տգեղ։

Եվ ես գլխակոր ընկա թևաբեկ արծվի նման,
Ինչպես որ կընկնեն անմեղ հեքռանեք ցնորքով ռանյան։

Եվ մեկը երգեց ազդարար մի հիմն խաչակիր կյանքին
Մարտի դղրդանքնեք շարքա տարուսաց, հեղեց իմ հոգին...

Եվ մեկը երգեց սրտառուչ մաղթանք ազա՞տ ակորդով
Մի նուրբ, սրբազան շշուկ սլացավ իմ շուրջը—ոդով...

Եվ ես զգացի, որ հոգուս խորքում երգեր են աճում
Երգեր մե՞ծ կռվի, երգեր նոր կյանքի ազա՞տ, ղողանջուն...

Եվ լուռ, դալկացած կույս երազներիս պսակը շքեղ
Նոր հույս ու տենչի թարմ ծաղիկներով շղթաց գունագեղ...

26 մարտի 1908 թ.

*
* *

Սերդ սրտիս ծաղիկ ցանեց
Սակայն ջրել մոռացավ,
Գիժ կարոտն էլ մրրիկ հանեց
Ծիլ-ծաղիկս չորացավ։

Դեռ չհասած ցուրտ ու ձմեռ
Դեղին տերև ինձ տվիր,
Մի՞թե սերդ է շնչին թիթեռ
Օրից ավել չի ապրիլ...

27 մարտի 1908 թ.

*
*

...Եվ շղթան ճնշեց բանական մտքին,
Որ նա թևազուրկ ընկնի, խայտատիպ.

Ազատ հույզերի պապակող հոգին
Սին ցնորքներով ինքն իրեն խաբեր։

1908 թ.

*
* *

Վարդի թփի մոտ պատահանք իրար
Ես և ալախոս պոետն անտառի—
Նա կարմիր վարդին մի խենթ սիրահար
Ես գերի գուսան անհագուրդ կովի.

Նա իր նուրբ ձայնով այնպե՞ս դայլայլեց...
Հայացքը նրա անմիտ էր, խղճուկ.
Մեկը չարանենգ վանդակը բացեց
Պոետն անտառի գերվեց կամացուկ։

Սենյակում կրկին պատահանք իրար
Ես և ալախոս պոետն անտառի.
Նա էլ չէր երգում... սոխակը չկա՞ր
Ես հիմն երգեցի անհագուրդ կովի...

13 հունիսի 1908 թ.

ԳԻՇԵՐ

Լուսնի եղջյուրն ընկավ լճին.
Ճոճաց ուռին վարանոտ.
Մի շատ պարզ երգ երշեց նոճին,
Ճայը ճչաց ճահճի մոտ։

Եղեգնուտի թաց գրկի մեջ
Ինչ-որ ընկավ ու սուզվեց.
Խորունկ ափում ծագեց մի վեճ
Ջքնաղ ալին գոհ հուզվեց։

Ցենգանայի վառ խարույկից
Դալուկ կայծեր վեր թռան,
Եվ գգվելով զով հովիկից
Պեծին տվին ու մեռան.

Հենց այս դախարդ գիշերվա հետ
Կուզեմ մի նոր խնդություն,
Մի ակընթարթ—կորչել անհետ—
Եվ լո՜ւռ, լռի՜կ, լռություն...

14 հունիսի 1908 թ.

*
* *

Գեթ մի թույլ նշույլ, գեթ աղոտ ճաճանչ,
Գեթ աղքատ երազ—ինքնամոռացման.
Գեթ տրտում թախծի շունչը մտատանջ
Միտքը հմայող տեսիլի նման։
Գեթ կաթիլ արցունք—հանգիստ տանջվելու,
Կարկամած վշտի անբարբառ կսկիծ,
Գեթ քծնող ահի թոթվանքը հլու,
Հայտնի և անհայտ հարազանք կրծքից։
Անքուն գիշերից—հիվանդ դալկություն
Նուրբ կնճիռների պատճառը անհայտ.
Գեթ մի հյուլե հույս—հուսախաբություն,

Գեթ սին հավատի մի ծրդ հարազատ—
Ունե՞մ ես, չունեմ... չկա ինձ համար...
Հույսերս արծիվ շնչախեղդ մեռան
Ինչպես որդուկներ սմքած, ցրտահար
Եվ գերի ծնված այսպես կը մնամ...
Մի այլ, նորոգ կյանք չկա՞ ինձ համար...
Թող որ կեղեքվեմ— այդպես է կյանքը—
Ես իմ տանջանքը...
Ես շա՞տ եմ տանջվել... և դաժան կյանքում
Իբր օտար անցել վայելքի մոտից.
Տրտունջ չէ իջել իմ անբիծ հոգում
Նախանձ չէ քամվել իմ ազնիվ սրտից...
Եվ իմ խաչի տակ ժենակ ու անձայն
Մանուկ հասակից ճամփա եմ ընկել.
Ուրիշի համար լացել եմ միայն
Ուրիշի բեռը միամիտ գրկել...
Վերածնության արշալույսի հետ
Ջարթնեցի և ես— հարություն առա.
Տնանկ տենչերս չքացան անհետ
Ես նոր զանգակից թևավոր թռա.
Ո՞վ է մտմտում թե այս աշխարհում,
Ուր մեռելներն են ազատ բնակիչ,
Լույսին խավարն է հավերժ պաշարում
Տանջանքն է անափ ու չկա փրկիչ։
Թե ընտրյալների այս է օթևան
Ուր ույժն է լոկ սյուն կամարների տակ,
Վաստակյալները անտեր կարավան
Մեծ ճանապարհում ահի հետ մենակ...

1908 թ.

ՄՐՐԿԻՑ ՀԵՏՈ

Կռիվը լռեց... հի՞ն, հի՞ն օրերը
Ապուշ անդորրն է գերիշխող տիրում.
Ամբոխը նախկին երգերին գերի
Նիրհեց համրորեն. չարն է՝ իր գերում։

Գարմիր հոսանքը, ասես, երազ էր
Կամ չքնաղ տեսիլ՝ որ եկավ, գնաց.
Հոգին՝ որ երեկ ըմբոստ ճախրում էր,
Այսօր հուսախաբ, ընկավ գետնամած։

Եվ կյանքի կովում, որպես ուխտավոր
Ծոմ, պաս օրերից անույժ, դալկահար՝
Մարդիկ հին ուխտին գրվեցին զինվոր,
Դարձյալ ծախվեցին ապրելու համար։

Կռիվը խեղդվեց ծանր երկունքում.
Միայն նրա հևքն հածում է դժգոհ.
Չկա՞ փոթորիկ ամբոխի հոգում՝
Ապուշ անդորրն է՝ մրրկից հետո...

1908 թ.

ԽՈՀԵՐ

Եվ շղթայակապ, բարելավ կյանքի հևքին անգիտակ
Վերածնության մրրիկների մեջ մտա ոչընչով...
Ապրելու ահից կրծքումս խեղդած ամեն նպատակ
Գծուծ էի խիստ որոնումներիս անվստահ տենչով.
Ազատ ապրելու մորմոքը սրտիս, մենակ, լռելյայն
Տանջում էի ինձ—հե՞ր հպարտ հոգուս արձագանք չկա,
Որ այնքան անգութ բաղձանք է մեռնում վիժվածքի նման,
Որ մարդավայել հրապույր չունի վիճակն աղջիկ...

Եվ պարզ ճակատով, ինչ որ քանդելու կրքերից արբած
Մի նորոգ գործի թաղել միրաժին հոգիս գերիվար
Տանջանքի առաջ ես ծունկ չոքեցի հեզ ու գրկաբաց
Տանջանքի մռայլ բախտը ընտրեցի ուսերիս համար
Ու մի շարք անքուն մենակ գիշերներ—արցունքին ընկեր,
Ու մի շարք անմեղ զրպարտված օրեր տարու չափ երկար
Մահի պես անհայտ, վհատ սոսկումով ինձ էին գրկել
Վայելքի վայրկյան իմ թշվառ սրտին և կար, և չկար...

Եվ մի համառ ույժ՝ տարերքի նման անհաղթ, վճռակա՛ն,
Ինձ իր ազդարար կոչնակի ձայնով խլեց խավարից—
Աղջամուղջի մեջ շեշտակի ցցվող շողերի նման
Հոգիս տենչերի թեթև թևերին վեր առավ վարից։
Վա՛յ ձեզ, որ մտքիս փարթամ փնջերից վարդեր պոկեցիք
Ու ձեր գոսացած սնափառության առաք կեր ճարակ,
Որ անրջային նուրբ երազներիս ցոլքը խլեցիք
Ձեզ է պատկանում հարվածս վայրագ...

10 սեպտեմբերի 1908 թ.

ԱՍՏՂԵՐՆ ՈՒ ՄԱՐԴԻԿ

Ինձ շա՜տ են սիրում աստղերն ու մարդիկ.
Եվ ամեն անգամ
Երբ մարդիկ դժկամ
Իմ սիրտը գթոտ տանջում են սաստիկ
Աստղերն այն անբիծ
Դիշերվա ճամփից
Երազ են ցանում իմ կայտառ հոգում,
Եվ պեծին տալով վիշտս ամոքում...
Ինձ շա՜տ են սիրում աստղերն ու մարդիկ.
Եվ գիշերն աստղոտ
Երբ աստղերն աղոտ
Իմ սիրտը քնքուշ հուզում են սաստիկ՝
Մեկն ըմբոստ—հայտնի,
Մյուսն էլ՝ գաղտնի
Սեր, ժպիտ, համբույր ինձ են առաքում
Եվ օրս նաշխում սեթևեթ կյանքում...

30 սեպտեմբերի 1908 թ.

ՇԱՂՈՎ ՇՈՂՈՎ

Շաղի, շողի կյանքի նման չի՛նչ մնաս.
Շաղով, շողով, նաշխած ճամփա ունենաս.
Շաղից, շողից բախտը պակաս քեզ հյուսեր—
Քեզ, իմ ցնո՜րք, քեզ, իմ սե՛ր...

Ցովի, հովի ազատ կյանքը քե՞զ լիներ.
Ցովով, հովով անդորր նինջը գար, գրկեր.
Ցովից, հովից ճակտիդ համբույր տեղար միշտ—
Դու, իմ ցնո՜րք, դու, իմ վի՜շտ...

Շաղն ու շողը, ցովն ու հովը միասին
Միշտ անդադար քեզ պատմեին իմ մասին...
Շաղի-շողի, ցովի-հովի պես անհաղթ,
Դո՛ւ, իմ ցնո՜րք, դո՛ւ, իմ բա՜խտ...

8 նոյեմբերի 1908 թ.

ԷՏԱՊ

Գնում են լուռ, ծեր-ոս ջահել,
Այր ու կին...
Մեկն էլ հիվանդ օրորվում է
Սայլակին.
Կալաններն էլ սիրտ, սեղմ հպած
Խեղճ մարմնին
Արթուն հոգու խոր վերք տալու
Շեշտ ունին...

Գորշ կտավե տոպրակները
Պաշարով
Լուռ պիտ շրջեն այն գարշելի
Աշխարհով,
Ուր տարածված—բռնության չափ
Մեծ, ահեղ,
Թշվառ մարդուն չկա ազատ
Ոչ մի տեղ։

Գորշ կտավե տոպրակները
Պաշարով
Լուռ պիտ շրջեն այն բարբարոս
Աշխարհով,
Ուր արթնացող հոգու վերքին
Հյութի հետ

Ողջ սերունդներ չքանում են
Միշտ անհետ։

Դու, մեղկ մարմին, ժպիտ ու հաց
Որսացող,
Որ մտքիդ մեջ ոչ մի ճաճանչ,
Ոչ մի ցող
Դեռ չի սնել գեթ մի ծաղիկ
Այն գարնան,
Երբ գերագույն իդեալները
Կամրանան...
Գնա՛, շրջիր այս դահճանիստ
Աշխարհով,
Մինչ տոպրակդ լի է ձգած
Գաշարով...

27 հունվարի 1909 թ.

ԻՆՁ ՁԵԶ ՀԵՏ ՏԱՐԵՔ

Ես կը գամ ձեզ մոտ ուրախ, հոգեթով,
Կը նստեմ ձեզ հետ ձեր խարխուլ շեմքին,
Կհուզեմ ամենքիդ մայրական գթով,
Ժպիտ կը փռեմ ձեր հյուծված դեմքին։

Երգս ցնծության, ձեր մաշված կրծքից,
Կը վանե հեռու կասկած ու լքում...
Դուք կը մոռանաք մի պահ ցավ, կսկիծ,
Կոլորտա մրրիկ ամենքիդ հոգում...

Ինձ կասեք՝ «ելի՛ր, առ հնչուն քնար,
Խփիր համարձակ, երգիր մեր ցավից—
Ինչո՞ւ բիրտ կյանքում այդքան անհնար
Անույժն է տեղում ուժեղի դավից»։

Կասեք—«մենք անհաց, միշտ մերկ ու մրոտ
Շրջում ենք անվերջ անիվը կյանքի։

Սակայն, հանգստին օտար ու կարոտ,
Մինչ մահ ուսերիս լուծ կա զրկանքի։

Մենք ուր որ գնում, տանում ենք մեզ հետ
Ույժ և աշխատանք, արվեստ ու հանճար.
Վիթխարի լեռներ փշրելու վարպետ՝
Վարձկան բռունցքից ընկնում ենք անճար...

Խփի՛ր լարերիդ, ազդու երգ երգիր,
Վատնիր մեզ համար քո սերն ու կորով.
Էլ այսուհետև երկինքն ու երկիր
Չեն հոխորտալու մեր ծախված օրով»...

Ես աղջամուղջից մինչև վառ արեգ,
Կերգեմ ձեզ համար երգեր զվարթուն,
Միայն, երբ գնաք, ինձ ձեզ հետ տարեք
Որ ճգնաժամին ձե՛զ հսկեմ արթուն...

18 հուլիսի 1909 թ.

ՋԱՆԳԱԿՆԵՐԸ

Ես բաց եմ արել խորանը վրեժի, դռները՝ կռվի—
Եվ զանգակատան խրոխտ բարձունքից խիզախ և անահ՝
Որպես մի կորյուն, բացերում սնված ձագուկն արծվի
Որպես հրաշունչ վիժվածքը սարի—շիկացած լավա
Զանգերն եմ քաշում. թոկերը ամուր ձեռքերս առած,
Հնչուն մետաղի զողանջներն ազդու տարածում հեռու.
Վարսերս թել-թել սլացող քամու հոսանքին փռած,
Հայացքս՝ կրակ, հոգիս՝ հրաբուխ, սիրտս՝ քինառու
Զանգերն եմ քաշում և հետը երգում վրեժի, ոխի
Երգը ազդարար իմ ամբողջ կրծքի զորությամբ ուժգին.
Զանգերն եմ քաշում և հետը երգում թշվառ ամբոխի
Ծավն անտանելի հանցավոր կյանքի բռնակալ գրկին։

Շուրջս՝ խա՛ղ անգունդ և քաոսային անթափանց խավար
Դեպ ինձ են հասնում հոգեմաշ ճիչեր այն մեղկ աշխարհից,

Ուր ողջն է զոհվում կիսաքաղց մի օր ապրելու համար
Եվ հյուսվում շղթա մարդկային ազատ մտքի նշխարից.
Ուր նախճիրների արնահոտ ճահճից մոլոր ու շշմած
Վխտում են մարդիկ անշատ տենչերով, բայց իրար կողքի,
Եվ կորցրածից ճիգ թափում խլել գողի պես կամաց
Գեթ փոշուց փտած սավանի ծվեն գույք ու վայելքի.
Կամ թե դարավոր ճորտական կյանքի դրոշմով կնքված,
Սողում են այնտեղ գերության անշարժ, հոտած ճահիճում
Վախկոտ, գեռնաքարշ—որպես իժերի դարշատես վիժվածք,
Որպես խլուրդներ, իրենց օթևան մութ, սովոր որջում...
Եվ շուրջս ժխո՜ր... վարից ծառացած բիրտ բռունցքների
Ես սպառնացող ցույցերն եմ տեսնում ուղղած իմ երգին,
Որ այնպե՜ս ախորժ զողանջով հուզեց կոպիտ կրքերի
Նիրհն ու հանգիստ...

Սակայն ես զգոն, հուսով պսակված զանգերն եմ քաշում
Եվ արդար վաղվա պատգամը կրծքիս զողանջում ուժգին.
Բթամիտների ցնորքից սմքած սրտերը մաշում
Եվ խոր խոցերի ցանցերով պատում նրանց սև հոգին։

Իմ շուրջը ահա—զանգակատան մեջ մի հոծ բազմություն
Ջոր կմախքների, անշուք, մոռացված սև շիրիմներից.
Ագահ, լայն բացվող լերկ ծնոտներով, անմիս, անարյուն
Ամբոխն այդ անկախ և ինքնիշխանը մեզ—ապրողներից
Ինձ հետ միացած զանգերն են քաշում, շեշտող տագնապով
Իմ զողանջների ձայնին ահարկու դղորդ են բերում.
Այրվում է հոգիս ու ես լիովին համակված տապով
Կորչում եմ հպարտ ողջագուրանքով նրանց շարքերում...

Օ՜, ճանաչում եմ ես բանվորներին ծուռ ողնաշարից.
Որ աշխատել են լեռնահանքերի կրծքին ապառած
Հանգստի կարոտ ժիր բազուկների հարվածով ուժեղ
Լեռների կրծքից պոկել են հանքը անգույն և անտաջ
Ու հաճախ սմքած, տրորված գանգով կորչել են այնտեղ...
Ես ճանաչում եմ և վաստակավոր թշվառ գեղջուկին—
Բնության քմքից ապրուստ խլողին, որ իր քրտինքով,
Դրաստից հլու, զոհել է խոպան, կոշտ հողի շերտին
Աշխույժ ու եռանդ բոցք բոլորել իր չոր գիսակով

Եվ թողել անտեր բազմանդամ սերունդ մերկ ու սովատանջ
Անծածկ իմ խուղի ու սունկի նման աճող պարտքի հետ,
Որոնք աղմկոտ գործարանների արդյունքին ծախված
Գութանն ու արոր տվին մոռացման հավերժ ու հավետ...

Ողջո՜ւյն, ձեզ, ողջո՜ւյն լերկ կմախքներիդ շուրջս բոլորած,
Որ աշխատելով աղքատ, խոշտանգված մինչև գերեզման,
Ինձ ավանդ թողիք զանգերն այս հնչուն, թոկը ոլորած—
Որ երբ նոսրանա աղջամղջանիստ գիշերը լքման,
Հպա՜րտ բաց անեմ խորանը վրեժի, դոները կռվի
Եվ զանգակատան խրոխտ բարձունքից ժիր, արիաբար
Զանգերը քաշեմ...

— Ծագում է ահա գերիմաստ պայքար—
Պիտ հավասարվի բարձունքը ցածին,
Որ բարձրանալու բաղձանքի համար
Ուժեղն իր ուղու անհարթ կեցածին
Անուշի՜մեջքից չդարսե հարմար
Կամուրջ ու կամար...—

— Պիտ տեղափոխվինք «հետինք, առաջինք».
Անբեռ, բեռնակիր՝ այդ սովոր գործով
Նա պիտ կուշտ ուտե, ով թափեց քրտինք—
Իր գերին շինեց օրը, հող և ծով
Երկիր ու երկինք...—

Ողջո՜ւյն, բյուր, ողջույն, լերկ կմախքներիդ շուրջս բոլորած,
Որ հավերժության անդորր ծոցն էլ դուք հանգիստ չառաք.
Ինձ ավանդ թողիք զանգերն այս հնչուն, թոկը ոլորած,
Որպես մի արդար հատուցման ուխտի նվեր երկնատաք,
Որ մինչ մայր մանի արևը կյանքիս—մեռնեմ ապրելու—
Հպա՜րտ բաց արած խորանը վրեժի, դոները կռվի,
Այս զանգակատան խրոխտ բարձունքից միշտ որոտընդոստ
Զանգերը քաշեմ...

— Մենք էր գանք անհաղթ, ցասկոտ և քմբոստ
Որ կերտենք արևոտ կառույցը գոյության.

Կը բաշխենք մահին այնտեղ բազմողին.
Լծվածներն ազա՜տ շնչել կը փութան—
Կապրեն վայելուչ. լուծը կազմողին
Կը տանք սև հողին...—

Կյա՞նքը—լոկ ազատ. ապրե՛լ—հավասա՛ր...
Շատ ենք տառապել—էլ ույժ չմնաց.
Թե այս խորանի դռները տեսար՝
Եկ զանգահարենք ուրախ, սրտաբաց—
Հե՛յ, ինկե՛ր, վեր կա՛ց...—

4 նոյեմբերի 1910 թ.

ՄԵՐ ՌԱՆՎՈՐԸ

Ահա մայր մտավ արփին ոսկեհուր...

Մի էժան ծախված շաբաթ էլ անցավ.
Քա՜նի կուլ տվի առատ աղտ ու մուր՝
Ոչ հաց ունեցա, ոչ էլ օր անցավ...
Ու կես դար թափած իմ քրտինքն ու ջանք
Դեմքիս ցանց հյուսող կնճիռների հետ
Չտվին ոչ մի պսակված տենչանք,
Ոչ մի խոստացող բախտի պարհետ...
Խոշտանգված սրտիս գարունն էլ անհուշ
Մեռավ, խանդարված երազի նման
Եվ հոգու սնունդ ոչ մի երգ անուշ
Ինձ չէ ղրվելու մինչև գերեզման...

Ահա բարձրացավ աղմուկ, աղաղակ—
Անփարատ վերքեր բուժում է օրին.
Վարձը քրտինքի մտնում է քաղաք
Որպես շաղ ու շող խև ցարի հողին...
Ես վաղո՜ւց կարոտ հավերժ մոռացման
Ջանգիստ աղերսող ոսկորներիս հետ,
Նայում եմ ցավոտ բանվոր-բազմության։

Դեհ, սրթուն կացեք, որ խո՜ր ցավ զգաք,
Հյուծվելը անհաց, անօդ, անարգել...
Վաղը երբ նորից ծագե արեգակ—
Պետք է ձեզ գիտնալ լքումն անարգել...

18 մարտի 1911 թ.

* * *

Մի օր ես դաշտում, ծաղիկների մեջ, քուն էի մտել,
Աստղերն ու քամին ինձ շա՜տ որոնել և չէին գտել...

Երբ որ զարթնեցի, ես տեսա իմ դեմ ծնկաչոք բախտին,
Նա այլևս կույր չէր և ծառայում էր իմ «ոսկի թախտին»...

24 սեպտեմբերի 1911 թ.

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Դարձյալ ժպտացին գարուն և արև,
Իմ երակներում արյունը եռաց,
Ողջույն ձեզ, կյանք, վիշտ, ողջո՜ւյն, ջերմ բարև.
Ողջո՜ւյն ամենքիդ՝ կենդանի, մեռած։

Ուրախ եմ, կայտառ. կասես չէ եղել
Ճնշող բեռ կամ լուծ ուսերիս վրա.
Տառապանքի հետ կռիվ չեմ մղել,
Չեմ քամել կասես ժանտ թույնը նրա։

Հոգիս կանաչեց անզուսպ բերկրանքից։
Քի՜չ էլ և այնտեղ կը բացվի վառ վարդ.
Նզո՜վք, ով կուզե փախչել այս կյանքից,
Ով ապրած ցավից չունի ճակտին զարդ։

Նզո՜վք ձեռքերին՝ կոշտեր չբուսած,
Շռայլության մեջ քնքշացած մարմնին—
Ում բաժին բեռը անզորը ուսած
Ապրելու համար գերվել է մահին։

Մենք, որ հաց չունենք, ցավ՝ բազում, անթիվ.
Հանգիստ չենք գտնում մահվանից առաջ,
Եկեք մեր միակ այս տոնի առթիվ,
Վայելենք անդորր, անհոգս, անհառաչ։

Ձեզ հավերժ հանգիստ, որ կուվում ընկաք.
Մեզ ապրողներիս՝ սեր և միություն.
Փութալ, որ ծագե մտքի արեգակ
Ու հավերժ մնանք միասին արթուն...

12 ապրիլի 1912 թ.

ՄԵՆԵՐԴ

Սիրտս, սիրտս՝ հավերժական մի ամառ,
Սիրտս, սիրտս՝ միշտ կորովի, միշտ համառ
Սիրտս, սիրտս պիտ բաբախե քեզ համար
Սիրով անշահ, սիրով անմեռ ու անմար...

Սրտիս վրա վարդ է բացվում քո սիրույն,
Սրտիս վրա սոխակ երգում սեր, գարուն,
Սրտիս վրա խինդ ու ժպիտ՝ քե՞զ համար...

Սիրտս, սիրտս դարձած խարույկ մի անմար
Պեծին տալով պիտ հուրհուրա միշտ համառ՝
Սի՞րտս, սի՞րտս... ու պիտ այրվի քեզ համար...

15 մարտի 1913 թ.

ԽՈՒՀԵՐ

Գիտեմ սիրել, ատել—ապրել մոլեռանդ.
Լալ ու խնդալ ամբողջ թափով, լիովին,
Ինչ որ կերտել, ինչ որ անել քարոզանդ.
Խլել կուվով, անփութորեն տալ հովին՝
Միայն շնչել, միայն լինել, ապրել—հափրել պայքարի մեջ
մոլեռանդ...

Ինձ չէ գերել ոչ մի բաղձանք ապահով,
Որ ծանոթ չէ կռվի ահեղ տագնապին.
Անցնենք մի խինդ չանցավ սրտիս վրայով,
Առանց մրրիկ ես չեմ ձգտել այն ափին
Ուր որ հոգիս չէ քրքրվել փորձանքի թափ ու ահով...

Ու չկա ինձ հանգիստ, անդորր, մոռացում.
Վայելչագեղ անէության նիրվանա
Երգը վրեժի լարերով եմ ես ածում,
Եվ հարվածում ես չարիքին միշտ անահ
Ապրել, մեռնել պայքարի մեջ—ահա կյանքիս գոհացում...

21 հունվարի 1914 թ.

ՓԱՌՔ ԿԱՐՈՂ ՀՈԳՈՒՆ

Խաղաղ դաշտի մեջ
Վճիտ առու կար.
Նրա եզերքին
Ապրում էր անվեճ
Ծաղիկ մի տկար...

Անիվը սայլի
Դիպել էր նրան,
Լոկ կարոտ հոգին—
Վայելք ու փայլի—
Պահում էր իրան...

— Փա՞ռք, կարող հոգուն—
Շշնջում էր նա
Ու երգում թաքուն,
Որ մարդ չիմանա,

Ջասե այդ ի՞նչպես
Ապրում ես դու գեռ,
Կյանքը կը դիտես
Քան անհոգ թիթեռ,

Երբ ամայի բեռնած
Անցավ քո ուսից
Ու սիրտդ մնաց
Ջուրկ-զրկված լույսից։

— Փա՜ռք, անմեռ հոգուն...
Երգում էր համառ.
Ու չկա՜ր լքում
Այն ծաղկի համար...

2 փետրվարի 1914 թ.

ԵՍ ՈՒ ԴՈՒ

Գարնան օր էր, ջինջ առտու՝
Պատահեցինք ես ու դու...
Ու ինձ տվիր մի ալ վարդ,
Ասիր. «Ահա կրծքիդ զարդ»։

Բայց չունեի ես ոչինչ.
Օրն էլ այնպե՜ս պարզ էր, ջինջ...
Մի լավ սիրտ կար կրծքիս տակ,
Ասի—ա՜ռ քեզ հիշատակ։

Իմ անթառամ սրտի հետ
Գիտեմ, գոհ ես ու հպարտ...
Իսկ վարդդ ալ հոտավետ
Մի օր ապրեց՝ կրծքիս զարդ։

Խորշում իջավ իմ ճակատին
Կարոտեցի՛ այն ճամփին,
Ուր պատահանք ես ու դու՝,
Երբ գարուն էր, ջինջ առտու...

1914 թ.

ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ապրելու համար ողջը պետք է տալ—
Ույժ, խինդ ու եռանդ, օրերը ջահել.
Ցավի դեմ անաչ, արցունքը պահել,
Ժպտալը մոռցած սիրել ու գթալ։

Կանգնել մահվան դեմ—ապրելու համար՝
Ի՜նչ երջանկություն, չես էլ ծերանում.
Ժամանակն իզուր հանաք է անում
Ու պարտված քեզնից սահում աննշմար։

Քայլի տեղ թռիչք՝ հոգ չէ թե ընկար—
Վերից ընկնողը պառկած չի՛ մնա.
Թող հոգիդ ցավի սալին ամրանա՝
Ապրելն անպրգել, ապրելու համար...

1914 թ.

ՀԱՂԹՈՂԻ ՀԱՄԱՐ

Բացվել են արդեն վարդ, ծաղիկ նախշուն,
Ծովից ափ վազող Հովիկն է անուշ.
— Անարդար կյանքում մնայլ է, աշուն,
Անարդար կյանքում բողոքն է անույշ...
Ջապրած վայելքի էջ ունի առտուն,
Ոսկի է մաղվում ամպերի տակից.
— Ջարն է կեղեքում բանավոր մարդուն,
Ջարն է կաշկանդել միտքը գիտակից...
Ինձ տապն է բուժում չքնաղ Հարավի,
Թախիծս վանեց գարունը եղեմ.
— Շա՜տ էին նրանք, լույսին ծարավի,
Շատերն էլ հիմա լույսին են ընդդեմ...
Ի՜նչ փույթ, թե թոշնի վարդ, ծաղիկ նախշուն,
Հմայքը գարնան մեռնի աննշմար.
— Միայն շեն կյանքում չը լինի աշուն,
Շեն կյանքը ծաղկի հաղթողի համար...

1915 թ.

ՉԵՂ ՏԱՄ...

Ողջույնս ձեզ—հոգնած, վհատ այր ու կին,
Որ շատ տալիս՝ քիչ եք խլում հացի գին...
Բանուկ ձեռքով նախշուն աղջիկ, ժիր տղա՝
Ձեր սրտերին գարունը վարդ թող տեղա...

Հոգուս բոլոր զանգակներն են զողանջում,
Կյանքը սրտիս խրախճանքի է կանչում,
Կուզեմ բազմել, շուրջը գարնան սեղանի,
Ինձ են սպասում ցնորքներս գեղանի...

Լքումն անկցի—որ միշտ սրտին կը շոքի,
Չի խնայի լավին, վատին—ո՛չ ոքի,
Եվ կը ցանե փուշ ու տատասկ-այն ուղին,
Որ հարթեցին ընտրյալները—մեզ թողին։

Ու այդ ուղով տեղ հասնելու վառ սիրուց
Թվացել է կյանքն ինձ գարուն դեռ վաղուց,
Ապրած վշտիս ձիգ տարիներ կան վկա,
Սակայն սրտիս ո՛չ մի կնճիռ դեռ չը կա՛...

Ու չեմ զգում, որ ծա՞նր բեռ եմ ուսած,
Չեն ճերմակել վարսերս երկար ու հյուսած,
Լայն կրծքիս տակ պաղ աղբյուր կա գորովի,
Կիսեմ, ձեզ տամ մեծ պաշարն իմ կորովի...

Տամ՝ դիմանաք, ետ չը մնաք, վայր չընկնեք
Լուսաբացին գիշերվա պես չը քնեք—
Ու տեղ հասնեք հոգնած, վհատ այր ու կին,
Որ շա՛տ տալիս, քիչ եք խլում հացի գին...

1915 թ.

ՀԱՌԱՋ ԳՆԱԼՈՒ

Կանգնել ես վհատ. չես շարժվում բնա՛վ—
Հոգնել ես վաղո՛ւց—
Թևերդ թոչնան ու միտքդ էլ քնավ
Հլու սողալուց...

Դիմանալու հետ սապատն էլ կաճի
Մանր լծի տակ...
Ու քիչ կը մնա նայել միշտ ճահճի
Հույզերով խորտակ...

Հառաջ գնաքուն ես ողջը տվի—
Էլ բան չմնա՛ց...
Մի՞թե հուսաշատ հավատը կատվի
Երբ կյանքն է քնած.

Խոսքս անկաշառ շաչում է օդում
Կտրուկ թրի պես.
Ես իմ վաստակած պատառն եմ ուտում—
Այդ ե՛ս եմ այսպես...

Ու թող ատեն ինձ, ծեծկեն նախանձով,
Խայթեն օձի պես;
Կը գնամ անահ իմ խոսքով—զանձով
Կտրուկ թրի պես...

3 հունվարի 1916 թ.

ՄԵՆՔ

Մենք ժիր ենք, արի
Տենչերով աղատ,
Զրկանքը կոփեց մեզ ույժ վիթխարի՝
Ելի՛ր հարաղատ...

Մեզ—լույսին ծարավ—
Մութ նկուղներում—
Ճնշեց անպատիժ դավը անիրավ՝
Ու գտավ ներում...

Մաշեց մեզ շղթան,
Հնձեց մահն անսիրտ.
Ու մնաց անմեռ մեզ կյանքի խթան
Խոսքը ճշմարիտ.

Թե երկրի վրա,
Գետնի խոր շերտում,
Հնոցի առաջ՝ մենք ծախված օրվա
Արձանն ենք կերտում...

Թե լծի տակից,
Անարգ սյունից կախ,
Մահի ահն ատած մտքով գիտակից
Կյանք կուզենք անվախ...

Մերն է սուրբ երդում—
Կովե՛լ հարազատ...
Հոգուս մեջ անզուսպ մրրիկ է խնդում՝
Ելի՛ր հարազատ...

10 հունվարի 1916 թ.

ՈՒՂԻՆ ՔԱՐՔԱՐՈՏ

Որպես խոստացող թովչանքը գարնան
Որպես անփորձի երազներն անահ՝
Դյութել է հոգիս ուղին քարքարոտ—
Գոռ մրրիկների քաշում եմ կարոտ։
Շա՛տ եմ հուսացել
Ողջունել այգին...
Դեռ չի լուսացել
Խնդար իմ հոգին...
Ու կարոտն այնպե՛ս հպել է կրծքիս,
Չը կա ցանկություն անդորր վայելքի.
Տարտամ օրերն էլ սնում են կսկիծ,
Մինչև ե՞րբ հսկել գալուստը ելքի...

1916 թ.

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Ահա իջան օրեր պայծառ ու թովիչ.
Հույս է բղխում արեգակի վառ բովից.
Անհոգ մտքի երազներն են հեշտալի։

Ամեն մի շունչ իր գարունն է օրհներգում.
Կյանքն է եղեմ—այսօր ոչ ոք չի հերքում,
Ոչ ոք մաշող լքման անուն չի տալի։

Մեղմանում է մրրիկն ապահ տրտունջի,
Բնությունը սերմնացանն է անուրջի,
Ու կը նախշե խոստումներով ապառնին։

Ի՞նչ բախտ է այս, որ ապրում եմ—չմեռա
Կրծքիս խորքում չհանգած հրդեհ կը եռա
Ցնորքներս էլ թիթեղի պես թև կառնեն...

11 մարտի 1916 թ.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Գնում ենք մենք կուռ հաղթական շարքերով
Նորոգ կյանքի հիմք փորելու միասին.
Հինն է մեզ դեմ իր խարխլած կարգերով,
Որ հասել է իր վերջնական օրհասին։

Ելե՛ք, ելե՛ք, դուք, աներկյուղ միաբան՝
Ազատ կյանքի օրինական տերն ենք մենք.
Ելեք, բռնենք անհաղթ կռվի լույս ճամփան,
Ոճրի փառքի քարը քարին չթողնենք։

Կեղեքվողին մենք պիտ բերենք նոր պատգամ—
Հացի համար լծված շապրի շեն կյանքում.
Մեզ հետ միայն բարին կռփող ուժեր կան
Եղբայրության սյունք պահող միշտ կանգուն։

Եվ ազգերին մենք կփրկենք աղետից—
Որ ձեռքից ձեռք էլ չծախվեն շուկայում,
Մենք պիտի տանք խաղաղության ավետիս,
Որ կյանքն ազատ մնա ամուր ու կայուն։

1917 թ.

ՄԱՂԹԱՆՔ

Խշխշում են ոսկեկար
Ու ոսկեթել ծոպերով
Դրոշները մեծ կռվի.
«Հազա՜ր բարի դու եկար,
«Հազա՜ր բարով դու եկար,
«Փառքդ մնա՛ թող երկար
«Խորհուրդդ մեծ մեր կռվի»...

Կարմիր ծո՜վ է օդի մեջ...
Հաշտ կընթանան փոքր ու մեծ
Համառ զինվոր վեհ կռվի.
«Հազա՜ր բարի դու եկար,
«Հազա՜ր բարով դու եկար.
«Փառքդ մնա՛ թող երկար
«Կարմիր փառքը մեր կռվի»...

6 մարտի 1917 թ.

*
* *

Մենք այրում ենք ամեն օր
Մի օր ապրած, մեղավոր
Եվ սպասում անհամբեր
Այլ մի օրվա հուսաբեր։

Ու մի օր էլ կը ծագի
Օրը համառ բաղձանքի,
Իսկ մենք—կյանքի գործը մեծ—
Որդ կը սնենք փոսի մեջ...

8 հոկտեմբերի 1917 թ.

ՆՈՐ ՕՐԵՐ

1.

... Էլ չունիմ ես դադար ու նինջ,
Անդորր վայրկյան կամ մոռացում.
Տագնապն այնպե՜ս գերել է ինձ,
Որ շշմել եմ—չեմ մտածում.
Առաջվա պես ձեզ չեմ ժպտա—
Քարացել են խոսքերս անուշ.
Ձեզ ո՞վ կասե, ո՞վ կը գթա՝
Ինձ հուզելու էլ չունի ույժ...
Ճնշում է ինձ ամեն մի իր,
Խաղաղ հարկի կարգը հնութ.
Ողջն ինձ համար մեղք ու պատիր,
Ողջն ինձ համար ատելու նյութ...
Դուրս եմ վազում խելակորույս՝
Այս օրերի կարոտս էր հո՜ույժ...

2.

Գնում են լուռ, խորհրդավոր
Ընկեր դարձած բանվոր, զինվոր.
Շարքերը սերտ, բազում ու հոծ
Կոչերն հանդուգն ու հաղթական.
Խեղդած բողոքն ընկավ փողոց,
Էլ լռելու ջանքեր չկա՞ն,
Դեն երկնչում անձի ահով—
Միությունը գահ կը քանդի...
Լավագույնի անմահ մահով
Բացվում է սև դուռը բանտի.
Ո՞վ կը հանդգնի սահման գծել
Տարերային այս ույժի դեմ.
Այսօր ամենքն են հասկացել,
Որ կյանքը սոսկ մեզ էր ընդդեմ...

3.

Ղողանջում է խոսքս ազատ.—
«Վերքը խոր էր, արթնացանք շուտ,
«Էլ չենք ապրի տենչերով զատ
«Ու կը ջնջենք ամեն մի սուտ,
«Ամեն մի դավ, կապանք ու բանտ,
«Ամեն մի գործ՝ նենգ, եղկելի,
«Ամեն մի ծես՝ մեզ հնազանդ,
«Որով այնպե՛ս մեր կյանքն է լի,
«Որ իշխում է մեր մտքերին,
«Որ սողանք մենք անհաշտ, բաժան,
«Որ բռնության լինենք գերի,
«Մեզ հեշտ ընկճե ույժը դաժան,
«Որ հավիտյան մնանք գրաստ—
«Ողջը ծախու, ողջն անիմաստ...

4.

Չկա՞ ճնշում—չարի դրոշմ,
Նոր օրերն են մեզ ապավեն.
Միտք է հուզում կարմիր դրոշ,
Կարմիր մեխակ ու ժապավեն,
Դեմքերը գոհ բանվորների.
Ջորքն ապատամբ ույժով կարող—
Որ գործ վատթար էլ չի ների—
Կույր դենք չինել էլ չի կարող...
Ղողանջում է կոչն հազթական
Ու մրրկում սիրտս ու հոգիս.
«Բոլո՛ր նրանց, որ զոհ ընկան՝
«Հավե՛րժ հանգիստ, հավե՛րժ հանգիստ...
«Ու ջե՛րմ ողջույն նոր օրերին,
«Որ տապալենք մեզքերը հին...»

1917 թ.

ՎԵՐԱԴԱՐՁ

Պառավել է կապանքներին
Նայելուց,
Ու մոռացել նիստ ու կացը
Վայելուչ.
Սաղրվածքն անփույթ, հագուստները
Անխնամ,
Տենդոտ խոսքը հառաչանքի
Է նման...
Խավարել է՝ ինչ որ ուներ
Կանացի.
Տանջված սրտում էլ դարուն չի
Կանաչի.
Էլ մի ծաղիկ չէ բացվելու
Իր համար—
Նա իր մասին մոռացել է
Մեզ համար...

Հոր հարկի տակ, որպես ազատ
Մի թռչնակ,
Կապրեր անհոգ, իր վիճակից
Գոհունակ։
Ապա մի շարք անփորձ հույզեր
Սիրասուն,
Նլք որոնող պահանջները
Իր հասուն՝
Մրրկեցին սիրտը ազնիվ
Աղջկա,
Որ իր երկրում ազատ մտքին
Թախտ չկա՞...
Ու նա կորավ հորձանքների
Գրկի մեջ,
Նմանի հետ կատարելու
Գործը մեծ...

Տարիներով կարճած կյանքը
Սիբիրում՝
Տխո՜ւր ու սև պատկերներ է
Միտք բերում...
Լկտի ծաղրը, վիրավորանք,
Սեծ ու քաղց
Քանի՜-քանի՜ անմեղ զոհեր
է քաղած...
Իսկ գավազիր պատվերները
Ժանտ գահից,
Մահաշրշուկ թախիծը լուռ
Տայգայից՝
Ձմրան երկա՜ր, սառնամանիք
Գիշերով
Ամեն մի հույս զարգարել են
Փշերով...

Սակայն կարոտն անփառունակ
Վաթանի՝
Արթուն միտքը բարձունքները
Կը տանի
Ու կը վառե կրծքերի տակ
Սուրբ մի հուր,
Որի հանդեպ բանտն էլ, մահն էլ
Զո՜ւր են, զո՜ւր...
Նրա դեմքին ես նայում եմ
Երկյուղած.
Քույր իմ, դարձիր տոնի առթիվ
Ինձ մոտ կաց.
Թո՜ղ աղոթեմ, թող կյանք հայցեմ
Քեզ համար,
Որ քո մասին դու մոռացար
Մեզ համար...

1917 թ.

ՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ

Հոգուս բոլոր զանգակներն են զողանջում—
Արժանացա ազատ կյանքի ողջույնին.
Էլ ո՜չ մի ցավ գթոտ սիրտս չի տանջում՝
Մարդիկ-ընկեր իրարու դեմ ոխ չունին։

Հինը մեռավ. կեցցե՜ հինը մեղսալի,
Որ ընդվզեց մտքերն ստրուկ դարերով.
Թոթափեցինք պատրանքը հին սխալի,
Հաշտ արթնացանք այս նոր այգի արևով։

Ո՜րքան ազնիվ տենչեր ֆջան մեր առաջ—
Ազատ կյանքը արդար փորձ է պահանջում,
Ու ես հպարտ, հանուր բախտից թև առած՝
Հոգուս բոլո՜ր զանգակներն են զողանջում։

Օ՜, ողջո՜ւյն Քեզ—բյուր ողջույններ գոհության—
Ազատությո՜ւն կյանքի, խղճի և խոսքի.
Դահավիժվեց քեզ վանառող նենգ Հուդան,
Արյունոտ են նրա օրերն ու ոսկին...

Օ՜, ողջո՜ւյն Քեզ—բյուր ողջույններ, փառք անբաժ՝
Ազատությո՜ւն եղբայրության զորավիգ.
Դու մեզ բերիր բարօրության նոր համբավ
Ու չքացավ չարի նյութած արհավիրք...

25 հունիսի 1917 թ.

* * *

Խորհրդում ես օրեցօր
Դեռ չծաղկած դու, իմ սիրտ.
Ոտքիդ տակին քար է չոր,
Շուրջդ քամին պաղ ու բիրտ։

Ու խանձված արևով,
Որ սիրեցիր խելագար,
Քեզ չշոչեց ոչ մի հով։

Քեզ վիճակված բախտ չկա՞ր
Միշտ բախտ ձոնող ազնիվ սիրս

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՄՈՏ

Լուռ նայում եմ ես զարգարուն
Խաչերին,
Շիրիմների մոտ արտասվող
Աչերին.
Կոթողներին՝ գրանիտե,
Մարմարե,
Փլփլացող ջահին, որ միշտ
Անմար է...
Բնազդորեն շշնջում եմ ես
Սրտնեղ
«Ո՞ւր է, ո՞ւր է զղջում, արցունք
Փունջ շքեղ՝
Լո՞ւռ քնել են մեռելները
Մոռացված,
Նրանց պետք չէ ոչ փառք, ոչ հաց—
Ոչ աստված»...

Նրանց պետք չէ ոչ փառք, ոչ հաց—
Ոչ աստված,
Կարեկցության, գորովի խոսք
Ուշ ասված.
Չէ՛, չե՛ն տեսնի նուրբ քանդակը
Մարմարի,
Ոչ էլ լույսը կանթեղի, որ
Չի մարի...
Ազնիվ խնկի բույրն էլ վավրա,
Խենթ քամին,—

Մեռելները մեռած հիշվել
Չկամի՞ն...

Ազնիվ խնկի բույրն էլ կավրե.
Խենթ քամին,
Մեռելները մեռած հիշվել
Չկամի՞ն...
Խոսքը զղջման ու կարոտի
Մնամեջ
Էլ մուտք չունեն ունայնության.
Փոսի մեջ.
Էլ չի հուզվի պաղած սրտում
Ոչ մի լար,
Թեկուզ այնտեղ որդեկորույս
Մայրը լար...

11 հունիսի 1920 թ.

ԱՇՆԱՆ ԳԻՇԵՐՈՎ

1

Գիշեր է, պաղ, ուշ...
Շուրջս մեգ, մշուշ.
Ճոճում է առաջ
Ձին ցրտից սառած.
Դաշտում տափարակ
Մաղում է բարակ
Անձրևը աշնան.
Ինչպե՞ս շուտ թոշնան
Ջերմ լույսի կարոտ
Նաղիկն ու արոտ...

2

Ի՞նչպես շուտ գնաց
Ժպիտը երկնի.
Երկիրը քնած
Էլ կյանք չի՛ երկնի.
Դաղտնիք չեն պահում
Անտառն ու այգին,
Թուխպն է սահում
Սգի՛ քող հագին...
Քամին էլ բոլո՛ր
Գիտցածը պատմեց
Ու մնաց մոլոր
Կյանքի ցավը մեծ...

3

Առաջ ենք ճոճում.
Մութն արագ աճում,
Խառնում է իրար
Աշխարհը արար.
Եվ ողջն անգգա,

Թվում է չկա
Ուղի կամ կայան,
Անկյուն-ապաստան—
Խոստացող մի էջ՝
Անծայր դաշտի մեջ...

4

Կառապանը ծեր
Երգում է դանդաղ.
Դեռ չէ մոռացեր
Մորմոքներն անթաղ—
Վաղո՞ւց վայելած
Համբույր ու ժպիտ
Ե՛վ կարոտ, և լաց
Խոսքով պարզամիտ
Պատմում է շվար
Հարազատ դաշտին,
Կասես չկա ծայր
Անամոք վշտին...

5

Չգիտեմ թե ո՞վ
Իր թեթև թևով
1921 թ.

ՆՈՐԸ ԿՈՓԻՐ

Ջա՛րկ կռանը. կռանը ջա՛րկ
դու սալին
Այրիների ու որբերի սուգ երկիր.
Նո՛ր կոփիր, որ ետ չգա
մեղսալին—
Էլ չմնաս դու անտերունչ,
տաբագիր.
Ջա՛րկ կռանը, կռիր, կոփի՛ր,
աներկյուղ,
Էությունս ողջ
Գրկել է դողդոջ
Եվ կրքից անույժ
Շշնջում անո՛ւշ,
Աննվաճ անցիր
Գիշերը անծիր.
Ապրողի համար
Աստղերն են անմար,
Դաշտը՝ մի՛շտ նախիշուն,
Ու չկա՞ աշուն...»

6

Գնում են առաջ.
Իսկ ձին սիրտ առած—
Առանց երկյուղի—
Արդեն իր գյուղի
Սահմանն է մտել—
Ուղին է գտել...
Ահա և ծանոթ
Գյուղը դետի մոտ..
Մշուշն էլ նոսր,
Ջունի արտոսր.
Ծագող արևի
Ցոլքը կ'երևի...

1921 թ.

ՆՈՐԸ ԿՈՓԻՐ

Ջա՛րկ կռանը. կռանը ջա՛րկ
դու սալին
Այրիների ու որբերի սուգ երկիր.
Նո՛ր կոփիր, որ ետ չգա
մեղսալին—
Էլ չմնաս դու անտերունչ,
տաբագիր.
Ջա՛րկ կռանը, կռիր, կոփի՛ր,
աներկյուղ,
Ջնա՛ղ երկիր այրիների, որբերի.
Կարմիր գործը թող որ ծաղկի
շեն ու գյուղ—
Խլված դատդ քո ձեռքերով
հետ բերի.
Կանցնեն օրերն այս հոգսերի
լծի տակ
Ու կյանք կառնեն դաշտերդ
առատ և բերրի,
Իսկ դու կապրես միայն լույսին
հպատակ,
Ջնաղ երկիր այրիների,
որբերի...

1921 թ.

ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ահա եկա ես թևավոր—երգիս հետ—
Ողջունես ձեզ, ձեռքեր բանուկ, կոշտացած,
Որ նոր կյանքի հոգսն անվեհ կը կիսեք՝
Կարմիր լույսից ձեր բաժինն ստացած.

Կարմիր լույսից ձեր բաժինն ստացած՝
Ծառացել եք չարի դեմը շարքերով,
Որ տապալվեն բռնության մեջ բթացած
Օրենքները իրանց մեղսոտ կարգերով—

Օրենքները իրանց մեղսոտ կարգերով,
Ահը հացի առատ վատնած ջանքի տեղ,
Արդար վաղվան զոհված անթիվ կյանքերով
Անհավասար կռվի տագնապն հույժ ահեղ.

Ողջունես ձեզ, այլակրոն, այլացեղ
Լավագույններ, հարած անսուտ այս կռվին,
Հանգիստ չառած ձեր ձեռքերովն ուժեղ
Լոկ ձեզ համար ջինջ պատգամներ պիտ կռվին.

1921 թ.

ԳԱՂԹԱԿԱՆ ԿԻՆԸ

Ավեր պատերի պաշտպանության տակ
Իր բունն է շինել կինը գաղթական,
Ձորձերով զուգել մարմինն ու հատակ,
Իր հարկն երկնի դամարն հաղթական։

Արևը, անձրև, բամիներն անսանձ
Հյուրերն են նրա—անրաժան ընկեր,
Որ մտքի ծալքում չապրի ոչ մի գանձ,
Ուր զրկանքն անահ իր խաչն է տնկել։

Քաղցած ու բոկոտ սերունդը նրա
Աճում է ազատ փոշոտ փողոցում.
Առատ հող մաղում ուսերի վրա—
Դեռ սիրտը չապրած անխնա խոցում։

Քո՛ւյր իմ, թո՛ղ չոքեմ տանջանքիդ առաջ.
Ես—մեղկ վայելքի մշտատենչ գերիս.
Թո՛ղ քո հույսերից մի վառ կայծ առած
Լույս տամ գիշերով լքված մտքերիս...

9 հունվարի 1922 թ.

ՔԱՅԼԵՐԳ

Հալածական և ուսերիս ծանր լուծ,
Մենք հոգնեցինք չարի խաչը կրելուց.
Մեր արյունով միշտ ներկվել են սար ու ձոր,
Բախտի նման երազել ենք հացը չոր—

Ելե՛ք, ելե՛ք մութ ու խոնավ հյուղերից,
Ելե՛ք, ավեր ու թալանված գյուղերից,
Թե անձնուրաց ու համերաշխ միանանք
Էլ չենք լինի անույժ, հաղթված ու տնանկ։

Քանի հլու խոնարհվեցինք բիրտ ույժին,
Այնքան կյանքից քիչ ստացանք մենք բաժին.

Մեր մտքերն էլ կույր ու տկար—առանց թև
Տիրողներին ճորտ են եղել հարատև—

Ելե՛ք, ելե՛ք, մութ ու խոնավ հյուղերից,
Ելե՛ք, ավեր ու թալանված գյուղերից՝
Թե մենք սիրով, եղբայրաբար միանանք,
Էլ չենք լինի անույժ, հաղթված ու տնանկ։

Վախկոտները միայն կռվել չկամին.
Ով մեզ հետ չէ, նա է մեր խեղճ թշնամին.
Բա՛վ է, որքան մեզ կեղեքեց կյանքը նենգ,
Այս կռվի մեջ մենք խնայել չգիտենք—

Ելե՛ք, ելե՛ք մութ ու խոնավ հյուղերից,
Ելե՛ք, ավեր ու թալանված գյուղերից։
Թե միասին—ընկերաբար միանանք,
Էլ չենք ապրի անհայտ, ատված ու տնանկ։

10 հունվարի 1922 թ.

ԳԱՂԹԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

... Խոնավ ցախերի թշշոց խաթույկին
Քլթքլթում է ժիր մրոտոտ կաթսան.
Նրա մոտ նստած ծերուկ այրն ու կին
Հուշերն են կծկում—ի՞նչ օրի հասան։

Հարսն աչագեղ իլիկն է մանում
Եվ ծածուկ լալիս կյանքը բնավեր.
Օրորում ոտքով որդուն անանուն
Ում սիրո համար վիշտը չի՞ բավեր...

Մանում է հլու, անխոս, անգանգատ
Վիշտը խճճում մանած թելի մեջ,
Եվ իր մայրական գութը խանդակաթ
Չի սնել մտքում մի բողոք, մի վեճ...

Մանում է համառ, մանում օրն ի բուն,
Որ վիշտը հատնի փափուկ բրդի հետ,
Որ իր օջախին էլ չվայե բուն,
Իր մաշած ճամփով նորից դառնա ետ...

Մի բուռն ցասման թե ահ ու դողի
Սարսափ է աճում իմ սրտի խորքում
Կի՞նը, որին ես ճորտ, քնած թողի,
Դեռ օր չի՞ տեսել... մտել է խոր քուն...

24 Հունվարի 1922 թ.

ԿԱՐՄԻՐՆԵՐԸ

... Ու գնում են անհաց, անահ
Փոշոտված.
Մտքերը թարմ իսկ սրտերը
Հոշոտված,
Նրանք կյանքի անվին ուսով
Դարձրին,
Զրկվածների կորած բախտը
Հարցրին,
Ու բազմացան շարքերն անթիվ
Քանակով,
Որ հեղեղեն հողը Կարմիր
Բանակով։
Հետք չմնա անփառունակ
Անցածից.
Որ չխլվի անզոր, տկար
Քաղցածից։

1922 թ.

ԱՍՏՂԱԿԻՐ

Հանի՞ր պատյանից
Դու սուրդ անպարտ
Ու անահ կանգնի՞ր
Գալիքի դիմաց,

Կարմի՞ր աստղակիր...
Կարմիր աստղակի՞ր,
Փառքով է նախշած քո անցած ուղին.
Կարմիր կովի մեջ
Զունի՞ս մրցակից
Ու չե՞ս ունենա...

Քո զարկից փախան
«Ազնիվ» գողերի
Լեգեոնները մութ ուղիներով,
Ահարեկ, շվար,
Եվ արժեքավոր
Ծանրոցներ ուսած,
Քաղցին անգիտակ,
Անհայտ վայրերում
Նոթի սատկելու
Անտուն շան նման...

Քո զարկից փախան
Վարձկան ու ծախված
Թուլամորթները թալանի ծարավ.
Որ տիրողների շահերին գերի—
Նենգ ու չարանյութ
Արարքների հաշտ—
Ջանացին խլել
Մեր խորհուրդների տիրապետության
Փառքն ամրակուռ,
Նորից կերտելու
Գահի, շղթայի, մտրակի, բանտի,
Ոճրի բռնության
Գարշելի ուժը— դարերի ավանդ...

Քո զարկից փախան
Դավաճանները,
Դահիճներն արնոտ,
Որ պիղծ ձեռքերով
Խեղդում էին մեզ—

Մեր տենչերն ըմբոստ,
Ու ծմակներում
Միշտ հորդոր կարդում հավատարության...
Եվ ահա նորից
Չքացող տարրի, շահերով ճոպված
Անհաշտ շարքերում
Պատուհանների
Շարվում են ցանկեր
Ընդդեմ մեր երկրի...
Չորս տարվա հսկում
Գոտեպնդվեցին կեղեքիչները
Ամեն տեսակի
Կրոնի, ազգի...
Մի տարվա հանգիստ՝
Ու ետ են դառնում
Քո ծեծած մարդիկ...
Իսկ դու, աստղակիր,
Հանի՛ր պատյանից
Քո սուրը անպարտ
Ու անա՛հ կանգնիր
Գալիքի գիմաց...

1922 թ.

ՍՈՎՍԵՍ ԱՐԱՋԻ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԱՐԵՎԸ

Լսո՞ւմ եք... սպասեք մի փոքր, ես ձեզ կպատմեմ բոլորը սկզբից...

Գնո՞ւմ եք... լավ, ես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

— Սիրուն կակաչներ, լավ լսեցեք արևի պատմությունը...

Աղջիկս հիվանդ էր...

Գիտե՞ք, նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր, նախշունիկ դեմքով, ոսկեգանգուր մազերով։

Աղջիկս հիվանդ էր...

Բժիշկը եկավ, իջավ մեր բնակարանը։ Նա տխուր էր, ինչո՞ւ...

Հա, հիշում եմ, նա չէր սիրում ներքևի հարկերը...

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին։

— Խոնավ է,— ասաց,— պիտի փոխեք բնակարանը, պիտի արևկող սենյակ ճարեք...

— Քանի՞ երեխա ունեք,— հարցրեց։

— Երեքն էին, երկուսը մեռան, մնաց այս մեկը... Ազատեք իմ աղջկան, նա մեր տան հոգին է...

Նա ինչ-որ դեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց։

— Հայրիկ, ի՞նչ գրեց բժիշկը,— հարցրեց աղջիկս։

— Արև գրեց, սիրելիս, արև գրեց, որ փայլի քեզ վրա ու ազատի ցավից...

Ու այն օրը գնացի արև փնտրելու, գնացի շատ հեռու՝ քաղաքի ծայրն ու գտա արևկող մի բնակարան։

— Սիրուն կակաչներ, արևի զավակներ, ավելի լավ չէ՞ր ձեզ մոտ բերեի իմ ոսկեծամիկ աղջկան։

Դուք նրան կզուգեիք կարմիր ու կանաչ...

Բայց, հա, գիտեմ, դուք նրան հաց չէիք տալ... Դուք սընկված եք վաղորդյան ցողով...

Լսեք, ես գեռ չեմ վերջացրել...

... Մյուս առավոտ պիտի տանեի աղջկանս արևի տուն, բայց երբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը...

Հետո եկան մարդիկ ու նրան տարան...

Ու երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզանից, մենք բոլորս այրվեցինք լալուց, իսկ ես դարձա արևի հիվանդ։

Ես գնում էի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպասում արևածագին։

Ու միշտ տեսնում էի աղջկանս՝ արևը գրկած և իր մազերը նրա վրա փռած...

Բայց երբ պատմում էի արևի մասին, կինս ու մայրս չէին հավատում, նրանք կարծում էին, թե ես խելագար եմ, և ողբում էին այրված, ցամաքած աչքերով։

Ու մի օր էլ ես դիմեցի արևին.

— Հզոր արև,— ասի,— մի մեծ գանգատ ունեմ քեզանից... ինչո՞ւ դու մի շողք խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար նրան...

Նա տխրեց ու մթնեց։

— Գնա՛,— ասաց,— հայտնիր աշխարհին, ասա՛, վերևի հարկը արևի շողքերը խլեց, ստվեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց էն ոսկեհեր աղջկան...

1913

ԿԻՍԱՍ ՏՈՒՆԸ

Այդ այն օրերին էր, երբ ամեն ինչ շարժվեց։

Երբ մութ խորշերից ձայնեց դարավոր բողոքը, երբ բացվեցին փակ բերանները...

Այն ժամանակ Սարգիսը վերադարձավ քաղաքից ու հայտարարեց գյուղի հրապարակում.

— Էլ հարուստ-աղքատ չկա, սրանից դեռը բոլորս մին ենք...

Շուտով եկան նրա հետևից և ուրիշները՝ նույն հովերով, ու ամբողջ գյուղը զզրդաց նոր խոսքերի տարափից։

Պատմում էին քաղաքի անցքերից, շշմեցնում գյուղացիներին նոր բերած մտքերով։

Այդ օրերին էր ահա, երբ Սարգիսը ուրախ սրտով սկսեց իր նոր տան շենքը. նա բարձրացրեց պատերը, բայց չկարողացավ ծածկել ու սարքել իր տունը...

Ու անցան ամիսներ, անցավ այն ժամանակը...

Սարգիսը մնաց գյուղում, քաղաքում էլ գործ չկար...

Նա ման էր գալիս լուռ, ինքն իր մեջ խորասուզված, աշխատելով աննկատելի գարձնել իրեն։ Խունացել էր նրա չուխան, որի վրա երևում էին երկու մեծ կարկատաններ, դժգունել էր նրա դեմքը, իսկ նրա տունը դարձյալ կիսատ էր...

Անցել էր այն ժամանակը, կյանքը նորից իր նախկին հունի մեջ էր ընկել։ Գյուղի հրապարակում դարձյալ իրենց առաջվա դիրքերն էին գրավել երկու վաշխառուները՝ հաստափոր Սանդրոն և նիհար, չոր Մարտիրոսը։

Ու ամեն անգամ, երբ Սարգիսը լուռ անցնում էր գյուղի շուկայով, Մարտիրոսը տերողորմյան ձգելով, սպասում էր, որ նա մոտենա ու կամացուկ ասում.

— Սարգի՛ս, կարելի է փող ա հարկավոր, արի տամ, տունդ վերջացրու...

Ու նրա ոսկրոտ դեմքի վրա խաղում էր խորամանկ ժպիտը և մանր աչքերը խայթում էին հեգնող փայլով։

Սարգիսն անցնում էր լուռ, արհամարհանքով, բայց ահա նրա առաջ էր գալիս հաստափոր Սանդրոն, շրջապատված իր համախոհներով։ Դեռ հեռվից նա բղավում էր իր հրճվալից խրխնջող ձայնով.

— Սարգի՛ս, բա ասում էիր հարուստ-աղքատ չկա, բա ինչի՞ չես տունդ շինում, կիսատ ա մնացել...

Սարգիսն այրվում էր այդ խոսքերից,— նրանք հիշեցնում էին անցած օրերը, երբ նա ինքն էր հարձակվում այդ երկու վաշխառուների վրա,— ու էլ չէր համբերում.

— Շատ մի եղակալիլ,— ասում էր,— մի առվով որ ջուր է գնացել, մին էլ կգնա... ողջ աշխարհի տունն է կիսատ մնացել։ Մենակ իմը հո չի։ Լավ իմանաս՝ էն օրերն էլի կգան, տունս կշինեմ, քու աչքն էլ կհանեմ...

— Հա՛-հա՛-հա... մի՞ն էլ կգան,— հոհոում էր Սանդրոն, ու ծիծաղից փքվելով՝ ավելի էր լայնացնում իր տեղը։

Եվ նրա հետ ներդաշնակ հոհոում էին իր շուրջը պատած համախոհները։

— Ծիծաղիր, ծիծաղիր, տեղդ լենացել է, ամա լավ մի՞ող

պահիր, քանի էս խալխի ցավը կա, էն օրերն էլի ուզտի նման կլոքեն դառնդ առաջ,— ասում էր Սարգիսը, կծու հեգնանքով չափում ոտից գլուխ Սանդրոյին ու հեռանում դանդաղ քայլերով։

Գնում էր ու իր այրվող աչքերով ելք էր փնտրում այն նեղ փողոցներում...

Ու որպես մի արձան էն անցած օրերի՝ խորհրդավոր լռությամբ հանդիպում էր նրան իր կիսատ տունը...

1913

ՎԻՐԱՎՈՐ ԹՌՉՈՒՆԸ

Անցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ հալածված էն շքեղ լույսերից, քարերի տապից, խեղդող փոշուց...

Կուրծքս հիվանդ է, աչքերս մթնում են, ծնկներս ծալվում, իսկ դու, սևերես, կրկնում ես անվերջ.

— Գնա՛, գնա...

Ես քեզ վաղուց եմ ճանաչում, ով սևերես կարիք, դու գիշեր ցերեկ հետևում ես ինձ, հալածում...

— Հիշո՞ւմ ես... դու տարար ինձ այն մեծ խանութը, ուր ամեն ինչ կար՝ ուտելու համար, բայց այդ ծով-ուտելեղենի մեջ ես քաղցած էի ու Տանտալի նման չէի կարող ձեռք տալ և ոչ մի բանի։ Ես՝ մի գալուկ օրիորդ, նստած այնտեղ, միայն գանձում էի տիրոջս փողերը...

Հիշո՞ւմ ես, երբ առաջին անգամ ոտ դրի այնտեղ, երբ խանութի տերը զիջեց մորս աղաչանքին ու ինձ ընդունեց... Նա ինձ հավանեց ու գաղտնի հրճվանքով ասաց իր մտքում.

— Կգա ժամը, և գառը կլինի ողջակեզ...

Ես ընդունվեցի և առժամանակ հանգիստ առա... Կարճատև՞ հանգիստ...

Նա միշտ նայում էր ինձ իշխողի ժպտով, նա ցանկանում էր ինձ, իսկ դու, սևերես, շշնջում էիր դռան արանքից.

— Զոհվի՛ր, գառնուկս... եթե չհպատակվես, ցուրտ ձմռանը կմնաս մայթերի վրա...

...Եվ ահա մի օր տերս հայտնեց իր կամքը. գազանի ժպտով մեկնեց ձեռքը դեպի ինձ, ուզեց ճաշակել իր ստրկուհուն, բայց համբույրի տեղ մի ապտակ իջավ նրա մսեղ դեմքին։

Նա ապշեց, կատաղեց, ուզեց հարձակվել նորից, բայց ես արդեն դուրսն էի...

Ու այն օրից ես եկա ձեզ մոտ, ո՞վ անհյուրընկալ մայթեր, ես ընկերացա քեզ, ո՞վ սեազգեստ կարիք...

... Անցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ հալածված էն շքեղ լույսերից, քարերի տապից, խեղդող փոշուց...

Կուրծքս հիվանդ է, աչքերս մթնում են, ծնկներս ծալվում, իսկ դու, սևերես կարիք, կրկնում ես անվերջ.

— Գնա՞, գնա...

1913

ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

Ամեն օր նա գնում էր հեռագրատան նույն ճանապարհով։

Տարիների ընթացքում այդ փողոցները սովորական էին դարձել ինչպես իր բնակարանը, սովորական էին դարձել նույնիսկ այն մտքերը, որոնք ծագում էին ճանապարհի զանազան կետերում։

Հասնելով երկու փողոցների անկյունին, նա մտածում էր՝ մի՞թե միևնույնը չէ, թե որ կողմով կգնամ, կյանքն արդեն լծել է ինձ իր մեծ բեռին, և ուր էլ գնամ, բաց չի թողնիլ...

— Չէ, պետք է վճռել այն գլխավոր հարցը,— ասում էր նա ինքն իրեն քաղաքային այգով անցնելիս,— ո՞ւմ համար է այս կյանքը, որ ես քարշ եմ տալիս. ինձ համա՞ր... Բայց ես ահա ոչ թե ապրում եմ, այլ մեռնում օրեցօր... կնո՞ջս, երեխայիս համա՞ր,— բայց նրանք էլ ինձ նման են՝ նույն դալուկ դեմքերը, փշրված սրտերը...

— Ո՞ւմ համար է այս բոլորը,— կրկնում էր նա, քայլերը դանդաղեցնելով,— հա, գիտեմ՝ այն երջանիկ զույգի համար, հարուստ ու անհոգ... նրանք գալիս են հեռագրատուն ծիծաղելով, մեկ-մեկու ձեռքից գրիչը խլելով, գրում են, ջնջում, նորից գրում։ Հաճախ հեռագրեր են տալիս, այն էլ ի՞նչ զվարճալի ու չնչին բաների մասին. «Շնորհավորում ենք քո անվանակոչությունը, մենք առողջ ենք, առողջ է և մեր շարաճճի շնիկը»... Նրանք շնորհավորում են, փառաբանում այս կյանքը, իսկ ես անիծում եմ... անքուն գիշերներով հեռագրում եմ, չխկչխկացնում և զվարճության այդ բեռը հասցնում իր տեղը։

— Փո՞ղը, փողը,— կրկնում էր նա մտնելով հեռագրատան շեմքը,— ամեն ինչ կփոխի, ամեն ինչ կվճռի... փողը ինձ կազատի այս անտանելի մթնոլորտից, կեղտոտ հատակից, տաժանելի աշխատանքից...

— Ո՞վ անիծված վանդակներ,— ասում էր նա, ներս մտնելով իր ձանձրալի սենյակը, ուր արդեն սպասում էր նրան ծերուկը։ Նա սովորաբար ամենքից վաղ էր գալիս ու կարդում էր իր փոքրիկ, կոպեկանոց լրագիրը։

— Բարև, ի՞նչ նորություն կա քո լրագրում,— հարցնում է նա ծերուկին։

— Մեզ համար ոչինչ, մեզ վիճակված է միայն աշխատել և աշխատել...

— Բայց, երևակայիր, —ասաց Մելանյանը,— հանկարծ վիճակախաղում տանես երկու հարյուր հազար, թևեր առնես, դուրս թռչես այս հոտած վանդակից ու պտտես աշխարհի շուրջը...

— Է՜հ, երանի քեզ, դու դեռ երազում ես, դեռ երիտասարդ ես, իսկ իմ բանն արդեն վերջացած է... Ես էլ մի ժամանակ երազում էի, բայց քեզ պես համառ երազող դեռ չեմ տեսել. այնքան ուժեղ է քո հարստանալու ձգտումը, որ երբեմն թվում է, թե կհարստանաս։ Բայց երևակայիր, հանկարծ քո իղձը կատարվի... Դու, իհա՛րկե, հետևյալ օրը մեզ՝ քո ծառայակիցներիդ կարհամարհես. այդպես է կյանքի օրենքը... կգաս մի օր շքեղ վերարկուով, հպարտ քայլերով կմոտենաս մեր փոքրիկ պատուհանին և կոպիտ տոնով կպայթես.

— Սա ի՞նչ խայտառակություն է, ինչո՞ւ եք ուշ հասցրել իմ հեռագիրը... Դու, իհարկե, երբեք չէիր հասկանալ, որ մենք անասելի ծանրաբեռնված ենք գործով, ավելին կասեմ, դու դրանով չէիր բավականանալ, հեռախոսով կհայտնեիր մեր կառավարչին, որ մեզ նկատողություն անի։ Եվ այդ կլիներ աշնան մի անձրևային, լացող օր... Չէ, թող քո այդ դաժան ձգտումները...

... Փոքրիկ պատուհանում երևաց հաճախորդի ձեռքը և հեռագրի կապույտ թուղթը։ Նրանք ընդհատեցին խոսակցությունը։ Վանդակում նորից տիրեց սովորական չխկչխկոցը։

Ծերուկը տխուր էր։ Նա երեխայի նման խռոված դեմք ուներ։ Տարօրինակ պայքար էր ծագել այդ երկուսի մեջ երևակայական հարստության շուրջը։ Ամեն անգամ, երբ ծերուկը լսում էր Մելանյանից վիճակախաղերի, հարստանալու մասին, նրա սիրտը գոռանում էր։ Նա մեքենաբար գրում էր անդորրագրերն ու մտքում կռվում. «Ուզում է հարստանալ, ստրկացնել հազարավոր մարդկանց... Չէ, թող քո այդ համառ երազը, քո չար դավադրությունը»...

* * *

Այսօր Մելանյանը գնում էր տուն նույն սովորական ճանապարհով՝ պաշարված իր մտքերով. նա կարծես շտապում էր, որ իր սենյակում վճռի իրեն տանջող հարցը։

Մի խավար տուն էր այն, ուր արևը մուտք չուներ։ Երկու սենյակներից մեկը իրեն էր հատկացրել։ Կարծես մի տխուր ոգի էր թագավորում այնտեղ։ Կինն ու փոքրիկ աղջիկը նրա տրամադրությանն էին հարմարվում, իսկ այդ տրամադրության լավ մասերը վաղուց վերացել էին։ Նա ժամերով ետ ու առաջ էր քայլում սենյակում ու մտածում, մտածում... Քայլելուց մաշվել էր փոքրիկ կարպետը, որը ձգած էր սեղանի առաջ։

Այդ երեկոյան նա մի առանձին թափով էր քայլում սենյակում՝ անձնատուր եղած իր մտքերին։ Նրան գրգռում էր այն ժխորը, որ տիրում էր փողոցներում՝ մոտակա տոնի պատճառով։ Անգիտակցաբար նա շարունակում էր մտքում այն խոսակցությունը, որ ունեցավ ծերուկի հետ։

«Մերո՛ւկ,— ասում էր նա,— ամեն անգամ, երբ ես ձգտում եմ հարստության, դու վիճում ես. դու խանգարում ես իմ հարստանալուն»...

Ու երևակայում էր, թե ինչպես ծերուկը՝ նստում է իր փոքրիկ, սառը սենյակում և ծխում է, ծխում... Նրա առաջ՝ սեղանի վրա փոքրիկ, կեղտոտ հեշտաեռը թշթշում է տխուր,— ու հիշեցնում անցյալը...

Նա մոտենում է ծերուկին և ասում ականջին.

— Մերուկ, լսո՞ւմ ես, դու խանգարում ես իմ հարստանալուն...

Մերուկը հանկարծ ոտի է կանգնում ու ասում զայրույթով.

— Իսկ դո՛ւ, դո՛ւ, խանգարում ես մեր ապրելուն, դու ուզում ես հարստանալ, ելնել մեր ուսերի վրա...

Եվ ո՞վ զարմանք... հանկարծ թվում է, թե հեշտաեռն սկսում է բարձր թշթշալ, գոլորշի է թողնում... ծերուկի հետևից հարյուրավոր մարդիկ են երևում ու ձեռները բարձրացրած սպառնում են, գոչում.

— Դո՛ւ, դո՛ւ, խանգարում ես մեր ապրելուն...

Ու Մելանյանը հանկարծ ասես հալվում է հազարավոր մարդկանց տաքությունից ու միանում է նրանց հետ։

— Ես ձեզ հետ եմ,— հանկարծ գոչում է նա,— ես ձեզ հետ եմ...

...Նա ներս է մտնում մյուս սենյակը, ուր կինն ու երեխաները էին ու շփոթված, բարձր ձայնով կանչում է.

— Ես ձեզ հետ եմ... Գնա՛նք բոլորս միասին.

Փոքրիկ աղջիկը, որ զբաղված էր գույնզգույն թղթերից շղթաներ շինելով՝ տոնածառի համար, ու իր կինը մնացել էին ապշած։

Նա գրկում է աղջկան, որը ուրախությունից շվարած՝ փարվում է հորը, կարծելով թե մոտակա տոների առիթով է նրա ուրախությունը, ու իր ձեռքի կարմիր շղթան փաթաթում է հոր վզին։

Կարծես ծանր աշխատանքից հանգստանալով, Մելանյանը ույայծառացած դեմքով նստում է աթոռին։ Հեշտաեռը հզոր հևքով քլթքլթում է, գոլորշու քուլաներ թողնում, ու թվում էր, թե զսպված գոլորշին էլ՝ բռնկված նույն մտքերով, գոչում էր.

— Բոլո՛ր միասին... բոլո՛ր միասին...

...Մոտենում էր Նոր տարին։

Գործի մեջ թաղված՝ Մելանյանը հեռագրում էր անընդհատ ու չխչխկացնում մեքենան, շնորհավորական հեռագրեր հաղորդելով։ Թվում էր, թե դրսի ամբողջ աղմուկը նրան էին հանձնել, որ ղեկավարի։ Այդ ժխորում նրա վառ երևակայության մեջ լսվում էին բյուրավոր ամբոխի ձայներ։ Նա չխչխկացնում էր՝ շնորհավո՛ր, շնորհավո՛ր, ու թվում էր մի ուրիշ, մեծ տոն է երկրի վրա, թե հսկա զանգերն են ղողանջում օվկիանից օվկիան, ամբողջ աշխարհին ու ինքը կանգնած բարձր մի աշտարակի վրա, գոչում է բյուրավոր ամբոխին.

— Ուղղեցե՛ք կորացած մեջքերը, ծաղկեցրե՛ք թառամած կանաչները... Ջկան այլևս վանդակները... դուք ազա՛տ եք, ազա՛տ...

1913

ԿԱՐՄԻՐ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Պատերազմի դաշտը այն դաշտն է, ուր ծաղիկները լալիս են նույնպես վիրավոր ու հաշմանդամ...

Մի հատիկ ծաղիկ է շոյում դեմքս, երբ մոտեցնում եմ գետնին, այն էլ աշնան դեղին ծաղիկ է,— մահվան ծաղիկը...

— Մենավո՛ր ծաղիկ, թող ըմպեմ քո ցողը, ծարավս հագեցնեմ, թեկուզ մահվան թույն լինի այդ։

Բայց դու արյունոտ ես, վիրավոր ինձ նման...

... Դիակնե՞ր... անվե՞րջ դիակներ...

Նրանք ընկած են խառնիխուռն, թշնամին ու բարեկամը միասին։

Եվ բոլորի դեմքին դրոշմած է մի չարված անշարժություն, ասես ամեն մեկը մեխել է հիշողության մեջ իր տեսածը և սպասում է, որ ահեղ ձայնով պատմի աշխարհին։

... Անգղերը պտտվում են վերևում...

Նրանք իջնում են, մոտենում զգուշությամբ, ապա զգալով մեռելությունը՝ համարձակ հոշոտում են մարմինները։

Ահա նրանցից մեկը կտցահարում է թափված ուղեղը...

— Հարգա՞նք, ո՞վ անգղ, դեպի մարդկային ուղեղը... նա արժանի էր ուրիշ վիճակի,— շանթահար ուղեղը... բայց այժմ գարձել է անգղերի կերակուր...

* *
*

... Ջո՞ւր, մի կաթիլ ջուր...

Շարժվում եմ առաջ օրհասական հիգով։

Ինչ էլ լինի, պիտի փնտրեմ, պիտի գտնեմ ջուրը...

Հազիվ երկու քայլի չափ փորսողում եմ ես ու ընկնում թուլացած։

Դիակները պատել են շուրջս ու չեն թողնում հեռանամ։ Նրանք կանչում են չորս կողմից, հրավիրում իրենց լուռ խոհերին...

Տաժանելի ուղեղ, դու կպայթես այս լուռ խոսակցությունից...

Այս լռությունը մի հզոր աղմուկ է, որից փրկություն չկա...

* *
*

Առջևս ընկած է արյունոտ մի դեմք, հոյակապ մի մարմին...

Պատառոտած վերարկուի տակից երևում է ժամացույցի երկաթե շղթան, կախված փոքրիկ պատկերով։

Մոտենում եմ մի փոքր, նայում պատկերին ու սիրտս սկսում է բաբախել ուժգին։

Երկդիմի պատկեր է, երկու իմաստասիրների խոհուն ճակատներով։

Եվ հիշողությունս այրվում է, փնտրելով այն մարդուն, որի ձեռքին տեսել եմ այդ պատկերը։

— Ես քեզ ճանաչում եմ, ընկեր։

Օ՜, լավ կլիներ չճանաչեի, չզատեի քեզ այս անթիվ դիակներից...

Պատմիր, այդ ինչպե՞ս եղավ, որ մենք թշնամի ենք իրար, որ իմ ողջույնի տեղ դուցե քեզ հանդիպեց իմ դաժան գնդակը։

Բայց դու չես կարող խոսել, բերանդ լիքն է արյունով և մահվան խավարն իջել է աչքերիդ...

... Հիշո՞ւմ ես այն երեկոն, երբ դուրսը բուք ու ձյուն էր, իսկ այն անշուք տանը կրակը վառվում էր օջախում դուրեկան ճարճատյունով։ Ու մենք՝ օտարազգի ընկերներս, ի մի հավաքված, խոսում էինք գալիք օրերից... Եվ դու, հիշո՞ւմ ես, ժպիտը դեմքիդ շլնում էիր մատներով այս փոքրիկ պատկերը...

Գիտեմ, ընկեր, էն օջախում կրակը մարել է արդեն, և մութ դիշերները՝ շների ոռնոցից արթնացած, քո փոքրիկ տղան կծկվում է մոր գրկում ու հարցնում.

— Հայրիկը ե՞րբ կգա։

Իսկ մայրը՝ արցունքները զսպելով ասում է.

— Շուտո՞վ, շուտով...

Ասում է ու ասես հավատում, որ դու կվերադառնաս...

* *
*

... Երեկոն գալիս է։ Լռում են թնդանոթները։

— Ո՞վ հաղթեց, մե՞նք, թե՞ դուք... ե՞ս... թե՞ դու... լսվում են մարդկային ձայներ,— եկել են վիրավորներին հավաքելու։

Գալիս են, շարժում դիակները, ապա հրում են ինձ ու ասում.

— Թող մնա, թող մեր թշնամին փտի էս ամայի դաշտում...

* *
*

— Թող մնանք էս ամայի դաշտում, արյունոտ ընկեր։

Մենք կսպասենք գիշերվան ու կելնենք, կզարթեցնենք դիակներին անթիվ ու կքայլենք դեպի քաղաքները քարահատակ...

Բուք ու բորանի հետ մենք կխուժենք ամենուրեք, շրջիկ ա

շրխկոցով կբանանք փակ դռներն ու ներս կտանենք ցրտահար, արյունոտ մեր ճշմարտությունը...

Մենք ահեղադղորդ փողեր կհնչեցնենք, դժոխային սարսուռ կտանք մեր դահիճներին ու հրեղեն պատգամներ կնետենք աշխարհից աշխարհ...

Ու կգա այն օրը... Հաղթական կամարների տակով մենք կանցնենք նոր կյանքի շարքերով...

— Ընդունի՞ր համբույրս. ընկեր, արյունոտ, կարմիր համբույրս...

Կտրվել է մեր ընկերական շղթան. եկ, միացնենք ամուր և ամուր...

Եկ հանգչենք միասին այս արյունոտ դաշտում մինչև ելնելը...

— Մինչև ելնելը...

1915

ՀԵՔԻԱԹԸ

Այդ երեկո էլ, ըստ սովորության, երեխաները հավաքվել էին Մարգարի տանը և անհամբեր սպասում էին նրա խոստացած հեքիաթին։

Դուրսը ձյուն էր։ Երկար ձնագնդի խաղից հետո նրանք ներս վազեցին այն ժամանակ, երբ Մարգարն իր համեստ ընթրիքը վերջացնելով, թիկնել էր թախտին, օջախի մոտ ու քթի տակ մռմռում էր. «Ննջյա, Վարդան, անուշ քնով»...

Օջախում ծուլ-ծուլ թշթշում էին թաց փայտերը, լցնելով սենյակը ծխով։ Մի թիթեղյա անապակի ճրագ, որը կախված էր սևացած սնից, հազիվ էր լուսավորում սենյակն իր աղոտ լույսով ու երևան հանում տան խղճուկ պարագաները՝ դիմացի պատի թարեքն իր հասարակ ամանեղենով։

Մարգարի կինը երեխաների լվացքն էր անում, լաթերը փռելով բուխարու մոտ, իսկ մայրը ծալապատիկ նստած կրակի մոտ գուլպա էր գործում, ստեպ-ստեպ հորանջելով ու երեսը խաչակնքելով։ Երեխաներից փոքրերը քնած էին, իսկ երկու տղաները խաղում էին մեծ բրդոտ կատվի հետ, որը ուշադրություն չդարձնելով նրանց վրա, հանգիստ մռլտում էր։

Ամեն ինչ այնտեղ տրամադրում էր մի անդորր քնի։ Միայն

երեխաներն էին, որ պատրաստ էին երկար ժամերով նստել, միայն թե Մարգարը հեքիաթներ պատմեր։ Ամբողջ գյուղում նրա նման հեքիաթ պատմող չկար։

* * *

Եվ Մարգարն սկսում է, ասես երգելով, աչքերը փակ, կույր աշուղի նման, սկսում է պատմել իր սիրած մեծ հեքիաթը՝ հրեղեն թռչունի և երեք եղբայրների մասին։ Իսկ երեխաները շնչները զսպած՝ ագահությամբ որսում էին նրա ամեն մի խոսքը։ Ու չնայած դուրսը ձյուն-ձմեռ էր, նրանք տեսնում էին մտքով մայիսյան դաշտեր ու ծաղիկներ, ջինջ երկինք, ամրոցներ...

... Յոթ սարերի հետևում հրեղեն թռչունն է ապրում իր ոսկե վանդակում։ Ու նրա շուրջը հաստ, ամրակուռ պատեր են քաշած ու երկաթե մեծ դռների մոտ սև, դաժան վիշապները, հսկում են դիշեր ցերեկ...

Եվ ահա երեք եղբայրները մեկ-մեկու հետևից գնում են այդ հրեղեն թռչունը փնտրելու, բայց միայն փոքր եղբայրն է տիրապետում նրան, հաղթելով ածդահա վիշապներին։ Սակայն ճամփին դավաճան եղբայրները, որոնց նա ազատել էր վիշապներից, խաբելով իջեցնում են նրան հորի մեջ, ապա առնելով նրա վաստակած հրեղեն թռչունը, թողնում են նրան և գնում...

* * *

... Հանկարծ դռան շեմքում շունը հաչաց և վազեց դեպի փողոց, միանալով ուրիշ շներին, որոնք հարձակվել էին անցորդի վրա։ Ա մուկի մեջ լսվեց մի ձայն.

— Մա՞րգար, ա՞յ Մարգար...

— Քեզ են կանչում,— հայտնեց Մարգարի կինը վախեցած ձայնով։

Մարգարը, կարծես քնից նոր արթնացած, հոնքերը կնճռելով ականջ դրեց, ապա ոտները ձգելով տրեխների մեջ ու գլխին փափախ դնելով՝ դուրս եկավ փողոց։ Դուռը բաց մնաց և դրսից մի անախորժ սառնություն փչեց։

Նա շուտով վերադարձավ այլայլված դեմքով։

— Աղեն կանչել է,— ասաց նա, ցրտից ու հուզմունքից սրթսրթալով, ու սկսեց ամրացնել տրեխները։

Նա գնաց, երեխաներն էլ նրա հետևից տխուր դուրս եկան փողոց։ Ջքացան երևակայությունից հրաշալի պատկերները. նրանց կծկում էր ձմռան ցուրտը, իսկ տների մութ անկյուններից չարագուշակ փսփսուկով կարծես դաժան աղայի անունն էին տալիս, որը կտրեց վառ հեքիաթը...

* *
*

Բայց ինչո՞ւ այդ օրվանից Մարգարը կարծես պապանձվեց, ու էլ երբեք չէին լսվում նրա հեքիաթները։ Երկար ժամանակ երեխաները չէին հասկանում, բայց ահա մի օր, գարնան սկզբին, նրանց առաջ բացվեց տխուր գաղտնիքը։

Այդ օրը եկավ մի աստիճանավոր տանուտերի ու նրա օգնականի հետ, եկավ նայեց Մարգարի տունը, ինչ-որ գրեց։

— Եկել են տունը վեր գրելու,— ասում էին հարևանները, — փող էր պարտ աղային, չտվեց, հիմի տունը խլում են ձեռքից...

Մարգարը կանգնել էր գլխակոր, քարացած դեմքով։

Միայն երբ նրա ականջին հասավ երեխաների լացը, մոտեցավ աստիճանավորին.

— Աղա, խնդրում եմ համբերեք... աշխատանք կանեմ, պարտքս կտամ...

Բայց աստիճանավորը չթողեց, որ նա իր խոսքը վերջացնի։

— Գնա քո պարտատերին խնդրիր, օրենքը չի համբերում։

Նրանք գնացին, բայց դեռ երկար լսվում էին Մարգարի մոր ու կնոջ աղերսական լացը, նրանց հուսահատ գոչերը։ Սակայն զուր էին նրանք ծնկները թակում, ձեռքերը բարձրացնում. Մարգարի տունը խլեցին, իսկ գարնան վերջերին նա հեռացավ գյուղից։

Ահա թե ինչու աղան կանչեց նրան էն մութը, ցուրտ գիշերը, ահա թե ինչու կտրվեց հրեղեն թռչունի հեքիաթը...

* *
*

Անցել են տարիներ...

Այն տեղը, ուր Մարգարի տունն էր, երևում է փլատակների մի կույտ։

Միայն սևացած պատի մի բեկոր հիշեցնում է, որ այնտեղից երբեմն ծուխ էր ելնում։ Խափանված է վաղուց նաև ջրհորը տան առաջ, իսկ նրա տեղը երևում է կիսով չափ հողի մեջ թաղած մի քար։

Եվ ամառվա լուսինը սահում է, անցնում, խորհրդավոր ստվերներ ձգելով փլատակների վրա։

Ու ծղրիդներն անվերջ, կրկնում են երգը տխուր...

Այստե՞ղ.. այստեղ... երբեմն... մարդիկ էին... ապրո՞ւմ... ապրում...

Ու այս ժամերին թվում է՝ խափանված ջրհորից ձայներ են գալիս... այն հեքիաթի երրորդ եղբայրն է՝ ինքը Մարգարն է, որ ճգնում է ելնել մութ հորից...

Ու այս ժամերին թվում է՝ խափանված ջրհորից ձայներ են գալիս... ու հեռուներից թռչելով գալիս է չորրորդ եղբայրը. նա սլանում է ամպերից վեր իր կարմիր նժույգով, գալիս է ազատելու Մարգարին իր խավար բանտից...

1918

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՅԳԻՆ

Կեսգիշերին մոտ էր, երբ խնջույքը վերջացավ։

Հյուրերը երաժիշտների ուղեկցությամբ ծանր ու բարակ գնում էին այգիների ճամփով։ Երբեմն նրանք կանգ էին առնում, ուրախ բացականչություններով խրախուսում երգչին, ապա նորից հնչում էր նվագի ձայնը, հետզհետե մարելով տարածության մեջ։

Այգետերը՝ կանգնած մեծ դռների առաջ, երեսը դարձրած հյուրերի կողմը, մտքով մասնակցում էր հեռացող երաժշտությանը։ Ահա վերջին ձայներն էլ մարեցին գյուղի մեջ. լսվեց շների կարճատև հաչոց ու ամեն ինչ հանգստացավ։ Աշունքվա աստղալից գիշերը դարձյալ սփռեց իր լռությունը։

Հանկարծ այգու փոքրիկ դռնակը ճռռալով բացվեց, ու այնտեղից դուրս նայեց մի դեմք՝ իր երկար մորուքով։ Վախի մի սարսուռ անցավ այգետիրոջ մարմնով։

— Ո՞վ ես,— հարցրեց նա դողդոջուն ձայնով։

— Ես եմ, աղա.. ուշացար, հենց իմացա հյուրերի հետ գնացիր։

— Ակոփ, դու ե՞ս... ալքումս ուրիշ մարդ երևաց։

— Չէ, աղա, ուրիշ մարդն էստեղ ի՞նչ է շինում։

Ակոփը շարունակում էր նայել այգեպանին հատուկ խուզարկու հայացքով, բայց տեսնելով, որ աղան չի խոսում, դեմքը նորից ներս տարավ, զգուշությամբ փակելով դռնակը։

Այգեպանը հինգ տարի էր ծառայում էր Ամիրյանի մոտ, բայց ինչո՞ւ այս անգամ ուրվականի նման զարզանդ բերեց վրան։ Թվում էր, թե փշե ցանկապատերից ինչ-որ փսփսուկներ է լսում։ Ու վախի տագնապով նա շտապ ներս մտավ այգին, երևակայելով, թե հետևից մարդիկ են գալիս։

* *
*

Տարօրինակ, մոայլ ու ամայի տպավորություն էր անում այժմ իր տունը, նրա լուսավառ պատշգամբը, ուր մի փոքր առաջ հնչում էին քեֆի ուրախ բացականչները։ Ներքևի հարկի խավար, սև պատուհանները զարհուրելի աչքերով նայում էին սանդուղքների տակից, կարծես հազարավոր ոգիներ դարան մտած սպասում էին նրան։

Կանգ առավ տատանմունքի մեջ։ Նա կուզեր հենց այդ րոպեին թողնել ու գնալ քաղաք, ազատվել այս այգուց, որի ամեն մի վայրը, ամեն մի ծառը կարծես սպառնում էր իրեն։

Բայց ահա լույսի շերտում նորից երևաց այգեպանը. նա պտտվում էր սանդուղքների մոտ, որ այն ճոխ սեղանի մնացորդներից ինքն էլ մաս ստանա։ Նրան տեսնելով, տերը փոքր-ինչ հանգստացավ և իսկույն հրավիրեց։

— Ակոփ, արի վերև, դու էլ մի բան կեր։

Այգեպանը բարձրացավ տիրոջ հետևից ու քաշվելով մի կողմ, կանգնեց պատշգամբի ծայրին։

Տերը նստեց, ծանր թիկնելով աթոռի մեջքին։ Նրա դալուկ դեմքը արտահայտում էր ինչ-որ ներքին հիվանդություն։ Ածիլած նիհար դեմքի վրա նշմարվում էին ժամանակից առաջ սպիտակած քեղերը։

— Ակոփ, արի նստիր,— կանչեց նա, երբ նկատեց որ այգեպանը հեռու կանգնած սպասում է։

Ակոփը զգույշ քայլերով մոտեցավ սեղանին, նստեց աթոռի ծայրին ու սկսեց ախորժակով ուտել խորոված մնացորդները։

Տերը նախանձով գիտում էր Ակոփի առողջ ուտելը և ակամայից համեմատում իր հետ։ Ահա այժմ էլ իր հիվանդությունը նորից

գլուխ է բարձրացրել, և մռայլվում է դեմքը։ Ծանր, ծակող ցավն սկսում է ստամոքսից ու պտտում, անցնում ամբողջ մարմնով։ Նա կիսաբաց աչքերով նայում է և մեկ տեսնում է այգեպանին, մեկ կորցնում նրան, մեկ տեսնում է նրա ոտքերի մոտ մի շուն, մեկ էլ նկատում է, որ այդ նրա փափախն է ոտքերի մոտ դրած։

Իսկ Ակոփը շարունակում էր ուտելը, մեկ-մեկ էլ լցնում էր բաժակը գինով ու կենացներով խմում։

Տերը հանկարծ սթափվեց մի կենացի վրա, անգիտակցաբար «ողջ լինես» մրմնջաց ու սկսեց լուռ նայել այգեպանին, կարծես ուզում էր հիշել, թե ո՞վ է նա։

* *
*

Ակոփն արդեն կշտացած՝ վառեց չիբուխն ու սկսեց ծխել դանդաղ, կարծես դիտմամբ երկարացնելով իր բավականությունը։ Ծառան քնաթաթախ դեմքով հավաքեց սեղանի ամանեղենն ու տարավ ներքև։ Ամիրյանը շարունակում էր ննջել։

— Աղա, տեղդ ննջում ես, կմրսես,— ասաց Ակոփը։

— Քնած չեմ,— պատասխանեց տերը, ապա հանեց ծխախոտի անուշահոտ գլանակներն ու սկսեց ծխել, զրուցելով այգեպանի հետ։

— Երանի քեզ, Ակոփ, ապրում ես առողջ ու հանգիստ, մեղ պես հազար ու մի ցավ չունես։

— Է՜հ, աղա, քեզանից ինձ երանի չի հասնիլ, ամբողջ օրը մեջքս ծռած բանում եմ, աշխարհի լավ բաներից հեռու։ Բայց դե էն էլ ուղիղ է, մեծ կյանքը մեծ ցավեր ունի։ Աղա, քեզ էլ հայտնի է, որ ես երեսուն տարի է աշխատում եմ էս այգում... Ինչքան բան է տեսել էս աչքս... Լավ միտս է՝ ութ տարի սրանից առաջ՝ հենց էս ժամանակ էս այգու տիրոջը սպանեցին...

Տերը, չնայած, որ լսել էր դրա մասին, բայց այստեղ, այս ժամին նա ցնցվեց այդ խոսքից, ասես սպանությունը իրեն էր վերաբերում։ Ու ինչպես հաճախ պատահում է, նա՝ կամենալով վերջ տալ այդ անախորժ պատմությանը, հենց ինքը ակամայից նպաստեց, որ այգեպանը պատմի եղելությունը։

— Վերջը ո՞նց եղավ, բացվե՞ց սպանությունը, թե չէ։

— Բացվեց, բայց ուշ բացվեց, ուղիղն ասած, էն սպանողը մեղքի մեջ ընկավ իր նամուսի պատճառով...

— Ինչքան էլ նեղված լիներ, մեծի պատիվը չպետք է մոռանար... փչացած, ավազակ մարդ է եղել։

— Աղա, դու որ գլխից իմանաս, կտեսնես, որ էն մարդը իրեն նամուսի կրակից էդպես բան արավ։ Նա էս այգումն էր աշխատում, իմ օգնականն էր, մի սիրուն կնիկ ուներ շարմաղ երեսով... Դու ասա, թե էդպես էշխով աղջիկը որտեղի՞ց պատահեց էդ աղքատ մարդուն։

Սրանց գալուց մի քանի շաբաթ անց՝ տեսա, որ մեր աղի աչքը կպել է էդ կնկանը։ Առաջ ո՛վ էր տեսել, որ նա երկու օրից ավելի նստեր այգում, բայց հիմի շաբաթներով էր մնում։ Գնում-գալիս էր, աչք ածում, ինչ բաներ ասես, կտորեղեն թե ականջի օղեր բերում նրա համար։ Կանչում էր տուն, մթամ գործ էր տալիս, մարդուն էլ շուտ-շուտ դես-դեն էր ղրկում։ Էսպես օր-օրի վրա անց կացավ, տեսնում եմ կնիկը կակղում է, մարդն էլ տանը չի։ Խաթեն գալիս է, ես էլ չեմ իմանում ի՞նչ անեմ։ Մի անգամ էլ սիրտս չհամբերեց՝ ասի՝ աղա նա էլ մարդ է... շատը նամուսի խաթրու կյանքից ձեռք է քաշում... Բայց ո՞ւմ ես ասում, — ծիծաղեց վրես։

— Դու հին մարդ ես,— ասաց,— չես հասկանում. ա՛յ էս իմ այգին, էս էլ իմ այգեպանը. ուրիշի ապրանքին հո ձեռք չե՞մ տալիս...

Դե ի՞նչ ասեի, ի՞նչ ուժ ունեի, գլուխս թափ տվի ու սուս կացա։

Մի օր էլ էդ կնկա մարդը կանչեց ինձ ու հարցուփորձ արավ։ Բանից դուրս եկավ, որ գլխի է ընկել։ Ես էլ շառի ահից չեմ ու չում անելով անց կացրի բանը։ Բայց մարդը չէր հանգստանում, կրակն ընկել էր ջանը, դես էր գնում, դեն էր գնում, միտքը ձեռից բաց չէր թողնում։

Տեսա որ բանը դժվարանում է, ասի՝ ա՛յ տղա, քանի որ մեջդ կասկած է ընկել, լավ կանես կնկանդ առնես, գնաս քո գեղը։ Նա էլ վերջ ի վերջո հոժարվեց, միայն փող ուներ ստանալիք, աղեն էլ էստեղ չէր, ասաց՝ որ գա հաշիվս կառնեմ, կքոչեմ էստեղից։

Աղեն որ եկավ, էս տղեն ուզում էր փողն առնել, բայց նա գլխի էր ընկնում, որ միտքը գնալու է՝ ինքն էլ չէր ուզում կնկանը բաց թողնի, ձգձգում էր, էսօր-էգուց էր անում։ Իսկ կնկա հետ էլ քիչ էր մնում աշկարա՝ սեր քաշի։ Դե կրակը թաքցնել կլի՞... Բանն էն տեղը հասավ, որ մարդն ամեն բան իմացավ։ Եկավ դարդը պատմեց ինձ... իրեն աչքով տեսածը... Հազիվ նրան հանգստացրի, ուշքի բերի։ Էլի խորհուրդ տվի, որ գնա էստեղից, նա էլ առանց փողի, առանց հաշիվն առնելու վեր կացավ կնկով ու երեխով քոչեց, գնաց։

Էդ օրից մի ամիս անցկացավ. ես էլ հանգստացա, ասի կրակից ազատվեցինք։ Բայց դու մի ասիլ մարդը իր մուռը պահած՝ թաքուն մեկ-մեկ գնում-գալիս է, որ իր մտքում վճռածն անի։ Մի գիշեր էլ, երբ մեր աղեն էստեղ քեֆ էր անում, գալիս է ու մի մութը տեղից թվանքով նշան է դնում... Ի՞նչ երկարացնեմ, հենց էդ ժամանակ մի գնդակ եկավ ու մեր աղի կյանքին վերջ տվավ։

Միտս է՝ էս սանդուղքների վրա կանգնած թամաշա էի անում, աղեն քեֆից ծանրացած, վեր կացավ սեղանից ու օրորվելով առաջ եկավ որ պարի, մեկ էլ տեսանք՝ վեր ընկավ ու շունչը փչեց։

Ակոփը նորից լցրեց չիբուխն ու ծխի խոշոր քուլաներ դուրս թողնելով, ընկղմվեց մտածմունքների մեջ։

* *
*

Տերը լուռ էր ու անհանգիստ, սարսուռն անցնում էր մարմնով ու կծկում. թվում էր, թե կաշկանդված էր շղթաներով և ոչ մի շարժում չի կարող անել։ Ու մի դեմք նրա աչքից չէր հեռանում. անթարթ նայելով, համառությամբ մոտենում էր ու մոտենում։ Եվ ինքը նրա առաջ նվաստանում էր, զգում էր, որ ոչ մի բան չի փրկիլ այդ դաժան հայացքից։

Դա այն մարդն էր, որ այդ առավոտ մոտեցավ նրան փողոցում ու չտեսնված համարձակությամբ պահանջեց իր աշխատավարձը։

— Վեց ամիս է, չարչարում ես... Վարձս տուր, թե չէ ես գիտեմ, թե ինչ կանեմ...

Իսկ ինքը կոպիտ մերժեց նրան, նույնիսկ զանգատվեց պրիստավին, և ծեծել տվավ։

Եվ այժմ նա ամեն բան կտար, միայն թե հեռացներ իր մտքից այդ սպառնացող աչքերը, որոնք համառ ու անթարթ մոտենում էին իրեն... Ու հանկարծ նա սոսկումով զգաց, որ իր վախի պատճառը հենց այդ դեմքն է...

— Հիմի, աղա, դու ասա. ինչի՞ցն էր էդ ամենը,— շարունակեց այգեպանը,— ինչի՞ցն էր, որ էն մարդը դադարդյուն էլավ ու իր տունը քանդեց։ Մի ամիս չքաշեց, բանը բացվեց,— ասում էին իրեն թշնամին էր մատնել... Ինչ որ է՝ մարդուն տարան, կորցրին, նրա տան ծուխը կտրեցին...

— Երես են առել... երես են առել,— հանկարծ միջամտեց տերը իր խեղդված ձայնով, դեմքը կնճռելով ստամոքսի ցավից։

— Չէ, աղա. մեկը չի, երկուսը չի. ես իմ աչքով շատ բան եմ տեսել... էս աշխարհում մի ծուռ բան կա, մինչև ուղղվի, հանգըստություն չի ընկնիլ։ Հերս պատմում էր, որ էս այգու վրա անեծք կա... Ասում են մի ժամանակ սրա հողը ժողովրդինն է եղել. մի օր խանը դուրս է գալիս զբոսնելու, տեսնում է ու շատ հավանում էս տեղը։ Կանչում է իրան մարդկանց ու հրաման տալիս, թե չորս կողմը պատեցեք ու ինձ համար այգի շինեցեք։ Ժողովուրդը տեսնում է, որ բանն էդպես է, կռիվ է գցում. մեջը արյուն է թափվում. բայց խանն իրենն անում է, ու մինչև անգամ հողը ժողովրդին վարել է տալիս։ Ասում են հենց էդ գիշերը մի ալևոր մարդ այգու չորս կողմը պտտում է ու անիծում, ասում է «ո՛չ ուտեք, ո՛չ մարսեք»... ու էն օրվանից դեսը էս այգին հանգստություն չունի...

* *
*

Տերը հանկարծ զարթնեց ցնցումից։ Նա ննջել էր ու երազով ընկել։

Նրան թվում էր, թե գնում է մի նեղ ճամփով, որի երկու կողմից փշե ցանկապատեր էին, որոնք քանի գնում, մոտենում էին իրար... Տագնապով առաջ էր գնում։ Ահա ցանկապատերը միանում են ու սեղմում նրան... Հանկարծ մի մեծ փուշ ծակում է նրա կողը...

... Զարթնում է։ Նայում է առաջը՝ այգեպանը չկա։ Սարսափած վեր է կենում, անցնում է պատշգամբի ծայրը, որ կանչի, բայց այդ րոպեին հանկարծ լսվում է հրացանի պայթյուն, նա զգում է մի մահացու ծակող ցավ։

— Ծգնեցե՞ք,— կանչում է հատված ձայնով ու վայր ընկնում։

1916

ԱՐՅՈՒՆՈՏ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Ամեն առավոտ, արհեստանոց գնալիս, ես մի քանի րոպեով կանգ էի առնում մի շքեղ տան պարտեզի առաջ ու հրճվանքով նայում զարմանալի գույնզգույն ծաղիկներին։

Բայց ամեն անգամ հեռանում էի դառը մտածմունքով։

— Երանի ձեզ, ծաղիկներ,— ասում էի,— ձեզ այդպես քնքուշ պահում, գուրգուրում են, նույնիսկ աշնան ցուրտ գիշերները խարիսներով ծածկում են, որ չմրսեք, իսկ ինձ՝ օր չի անցնում, որ չծեծեն...

Ես իմ փոքրիկ տեղովս այնպես էի մտածում, որ մարդս մի ծաղիկ էլ չարժի։

Բայց մի աշնան առավոտ ատեցի այդ ծաղիկները...

Այդ օրը մի դժբախտ օր էր ինձ համար։

Վարպետը հանձնել էր ինձ նորոգելու մի զույգ կոշիկներ, իսկ ինքը գնացել իր գործերով։

Ես էլ փոքր էի, ուշքս տվել էի փողոցում խաղացող աշակերտներին ու շարունակ նրանց կողմն էի նայում։ Մեկ էլ տեսնեմ՝ մեխը ծուռ խփվեց ու ճեղքեց կոշիկի կաղապարը։

Հենց այն գլխից ատում էի այդ կաղապարները,— նրանք հիշեցնում էին ինձ մեռելի ոտքերը,— շատ անգամ այդպես էլ տեսնում էի երազում։

Վարպետը վերադարձավ երեկոյան դեմ գազազած. երևում էր՝ գործը, ավելի շուտ՝ քեֆը չէր հաջողվել, օրն էլ կորել էր։

Նա իսկույն իմացավ իմ դժբախտության մասին և կատաղած սկսեց ինձ ծեծել։

Մինչ այժմ էլ սարսուռ է անցնում մարմնովս, երբ հիշում եմ այդ ծեծը. կարծես նա վճռել էր միանգամից վերջ տալ իմ գոյությանը։ Նա երկար կծեծեր ինձ, եթե պատահմամբ ներս չմտներ իր ծանոթ կոշկակարը։ Նրանից քաշվելով, վարպետը դադարեց ու ինձ փողոց դուրս ձգեց։

Աղի-աղի լաց լինելով, քայլերս ուղղեցի դեպի վարպետի տունը։ Մտածում էի, թե ինչպես միշտ, այս անգամ էլ նա կհանգստանա ու կմոռանա, բայց սխալվում էի։

Տուն վերադառնալուն պես նա նորից հարձակվեց և մի քանի հարված տալով, վռնդեց ինձ փողոց, գոռալով.

— Գնա՛, կորի՛ր, էլ չերևաս, թե չէ կսպանեմ...

Կանգնել էի փողոցում մոլորված, սիրտս լքլքալով ու ցածր ձայնով հեկեկում էի։

Իսկ աշնան քամին վզզում էր, փշաքաղում մարմինս, ասես մորակում էր, քշում ինձ։

Անցնում էի դեսուդեն ու մտածում՝ ո՞ւր գնամ, ինչպե՞ս անցկացնեմ այդ երկար, դաժան գիշերը։

Նայում էի դիմացի լուսավոր պատուհաններին ու երանի տալիս այն տղաներին, որոնք մայրական փայփայանքով պարուրված, տաք անկողիններում անուշ-անուշ քնած էին։

Իսկ իմ մա՞յրը... Նա շատ հեռու էր, գյուղում, և իսկի չէր կասկածում, թե ինչ օրն է ընկել իր որդին...

Այս դրության մեջ ես մոտեցա այն շքեղ մեծ տանը։ Նայեցի պարտեզի կողմը, և իսկույն մի միտք անցավ գլխովս։

Ես հիշեցի, որ աշնան ցուրտ գիշերները այդ պարտեզի ծաղիկների վրա խսիրներ էին ծածկում, որ չմրսեն։

Հենց այդ առավոտ տեսել էի խսիրները։

«Ի՞նչ կլինի,— մտածում էի,— եթե անցնեմ պարտեզը, մտնեմ այն խսիրների տակ ու պատսպարվեմ ցրտից։ Առավոտը շատ վաղ կհեռանամ, չեն նկատիլ ինձ, իսկ եթե նկատեն էլ, մի՞թե չեն ներիլ, եթե իմանան իմ դրությունը»...

Լավ նայեցի չորս կողմը, տեսա մարդ չկա, բարձրացա ցանկապատի վրայով և իջա պարտեզ։

Մտա խսիրների տակ ու մի կերպ ոտներս կծկելով՝ պատսպարվեցի։ Գետինը խոնավ էր. ծաղիկների հոտը շշմեցնում էր։ օրվա ցնցումները դեռ տանջում էին ինձ։ Երկար ժամանակ քուն չէր տանում, բայց վերջապես ես քնեցի և շատ խորը։

... Սակայն իմ զարթնելը շատ դառն էր։

Երազի պես զգացի, կարծես ինչ-որ ծանր բան վրաս ընկավ։ Սուր ծակծկող ցավը կրկնվեց, ու վեր թռա տեղից, նստեցի։

Հիշում եմ՝ պայծառ օր էր. արևն ընկել էր վրաս ու տաքացրել։ Բայց մի ակնթարթում ամեն ինչ աչքիս ծածկեց մի հրեշավոր դեմք՝ մեծ, մորթե փափախով, որն արջի նման կատաղած՝ հարձակվում էր ինձ վրա։

— Շո՛ւն, ավազակ,— գոռում էր նա,— ի՞նչ կասի իմ տերը։

Ասում էր ու կոպիտ հարվածներ տալիս՝ նախ փայտով, ապա ձեռներով։

Քիչս արյուն էր կաթկթում. կիսարթուն դրության մեջ շշմել էի, չիմանալով թե ինչ է կատարվում։ Վեր թռա տեղից, բայց նա վայր ձգեց ինձ։

Նորից ճիգ արի, վեր կացա և օրորվելով դուրս փախա պարտեզի բաց դռնով, հետևիս թողնելով արյան կաթիլների հետքերը։

... Ահա այդ օրվանից ես ատեցի այն շքեղ տան ծաղիկներն ու ամեն տեսնելիս թվում է ինձ, թե նրանք արյունով են ջրվում. թվում է, թե էն կարմիր ծաղիկները իմ արյան կաթիլներն են...

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎԸ

Օրվա ծանր աշխատանքից հոգնած, բանվոր Մինասյանը երեկոյան նստել էր սեղանի առաջ ու գոգն առել իր մի տարեկան երեխային։ Նա զգում էր մի դուրեկան հանգստություն, որ տարածվում էր նրա ամբողջ մարմնով։

Նրա առաջ դրած էր մի բաժակ թեյ ու լրագիր. բայց նա ինքնամոռացության մեջ թիկնել էր աթոռին և ընկղմվել անորոշ մտածմունքների մեջ։ Երեխան շարունակ վեր-վեր էր թռչում դեպի լամպի լույսը, բայց միշտ հանդիպելով հոր ձեռքերին, որոնք լայն գրկել էին նրան, զարմանքով ետ էր նայում, ապա նորից սկսում իր շարժումները։

Դուրսն անձրև էր, աշունքվա բարակ ու անընդհատ անձրև։ Տների խողովակներից տաղտկալի երաժշտությամբ անվերջ թափվում էր ջուրը։ Վերևի հարկից լսվում էին խուլ ձայներ, որ թվում էր, թե գալիս էին շատ հեռվից, մի ուրիշ աշխարհից։

Դրսից երբեմն լսվող կառքերի ձայները նրա առաջ պատկերացնում էին քաղաքի փողոցները, ուր լապտերները խոնավության շղարշով պատած, օազիսի նման գրավում էին հազվագյուտ անցորդներին։ Ապա կառքերի հետզհետե մարվող ձայներին հետևելով, նրա երևակայությունն անցնում էր քաղաքից դուրս, դեպի իրենց գյուղի մութ ու ամայի դաշտերը, տերևազուրկ ծառերը, անանցանելի ցեխն ու շների ոռնոցը։

Նա տեսնում էր իր մորը, նստած մեն-մենակ իր տանը, վառարանի առաջ... Ի՞նչ է շինում այժմ այդ համառ կինը, որին նա երբեք չկարողացավ տեղափոխել քաղաք։ Անցյալ օրը իրենց

գյուղացիներից մեկն ասաց, որ մայրը թեթև, ոտի վրա հիվանդ է... Ո՞վ գիտե, ինչ դրության մեջ է... Նա երբեք չի գալ քաղաք, նա իր գյուղի, իր տան հետ ամուր է կապված...

* *
*

Դուռը բացվեց, ներս մտավ Մինասյանի կինը, ձեռքերը մինչև արմունկները բաց, հետը բերելով լվացքի հոտը։ Նա սպիտակած, թշտած մատներով բռնել էր մի նամակ, որն արդեն ճխլվել էր ու կեղտոտվել։

— Էսօր մի գյուղացի բերավ, ասաց աղգական է, բայց ես չճանաչեցի։

Նա նամակը դրեց սեղանի վրա ու նկատելով, որ երեխան անհանգիստ շարժումներով դեպի իրեն է ձգտում, շտապով դուրս գնաց դեպի խոհանոց։

Մինասյանը վերցրեց ծրարը։ Անշուշտ նամակն իր մորից պիտի լիներ, բայց ինչո՞ւ այս անգամ հասցեն գրված է ավելի վարժ ձեռքով։

«Սիրելի որդի,— գրում էր մայրը,— քանի տարի է, աչքս ջուր կտրվեց քեզ ճամփա պահելով։ Օրերը համրելով ապրում էի, միշտ աչքս դռանը, միշտ սպասելով, որ ահա որդիս կգա ու իմ ամայի տունը կշենացնի... Ինչ թացքնեմ քեզանից, միշտ իմ սրտի խորհուրդն էն է եղել, որ մի օր էլ դու ընտանիքովդ գաս էստեղ ապրես, քու պապերի, քու հոր օջախի ծուխն էլի վեր անես, ու իմ սիրտն էլ փառավորվի, տեսնեմ աչքիս առաջ թոռներիս ու հարսիս, իսկ դու էլ ազատվես էդ թանկ ու կրակ քաղաքից։ Ախր էլ ի՞նչ կյանք է, որ ջուրն էլ փողով ես առնում։

Է՛հ, ինչ ասեմ, որդի, գիշեր-ցերեկ մտածում էի, ախ ու վիշ անում, առավոտներն էլ վեր կենում, տանը մտիկ տալիս, շատ անգամ սիրտս փշաքաղվում էր, երբ տեսնում էի մի տեղ գերանը փտած, մի տեղ կտուրը քանդված։ Ինչքան եմ ձեռքերով, մատներով շարշարվել, որ մեր տունը քանդվելուց ազատեմ... Երբ ուրիշներն էլ էին ասում, թևս ավելի էր կոտրվում... Հա՛յ տունդ քանդվում է, հայ մենակ մնացիր, տղեդ մտից հանել է քեզ... Ես լսում էի, մեջս լաց լինում, ամա բերանիցս մենակ մի խոսք էր դուրս գալիս.

— Հուսո՛վ եմ, հուսով...

Բայց դե ի՞նչ արած, իմ բախտս ուրիշ ցավ բերեց... Մի

օր էլ գիշերվա մեծ անձրևից հետո, երբ տանից դուրս էի գալիս, շեմքը փուլ եկավ, գերանի ծերը դիպավ ուսիս... շատ չանցած, մնացածն էլ քանդվեց ու ես մնացի ուրիշի դռանը։ Մի շաբաթ է, պառկած եմ քրոջս տանը։ Տեսա, որ դրությունս լավ չի, էսօր կանչեցի մեր վարժապետին, որ էս նամակը գրի, ինչ-որ սրտումս պահած ունեմ, իմ ազիզ որդուն, իմաց անի... Ո՞վ գիդի, կարելի է մինչև էս նամակի տեղ հասնելը, ես կենդանի չլինեմ, ու թե էս էլ իմ վերջին խոսքն է, որդի, էլի ասում եմ, հուսով եմ, որ դու կգաս, մեր ավերակ տունը կշինես, քու օջախի ծուխը կլինես։

Մնամ քեզ սիրող ու քեզ կարոտ մնացած մայրդ»։

* *
*

Մինասյանը մի շնչում կարդաց նամակը։ Նա զգաց, որ մայրը մեռած է, գիտեր, որ միայն վերջին րոպեն կարող էր իր համառ մորը ներշնչել այդպիսի նամակ։ Ու տարիներով թաքնված, անթեղված զգացումներն սկսեցին շարժվել իր մեջ։ Խորին ափսոսանքը, խղճահարությունը բռնեց նրան։ Նա ճգնում էր պատկերացնել մորը, բայց իզուր, կարծես դիտմամբ նա ծածկում էր դեմքը։ Հեռանում դեպի հավիտենական լռությունը...

Դրա տեղ գալիս էին մանկական հուշերը, երբ ինքը գյուղում էր, մոր փեշի տակ։ Հիշում էր մի օր, աշնան վերջերին, երբ սաստիկ քամուց հետո իրենց տան առաջի թթենին մերկացած, տխուր նայում էր։ Եվ ինքը, որ միշտ մանկական հետաքրքրությամբ հետևում էր տերևաթափին, ուզում էր անպատճառ նկատել, թե ե՞րբ կընկնի վերջին տերևը, այս անգամ տեսավ, որ մի հատիկ տերև է մնացել ծառին։ Ու երբ ցույց տվավ մորը, նա ասաց.

— Տերևը որդին է, ծառն էլ մերը, էդ մեկ տերևը շատ է սիրում մորը, չի ուզում բաժանվել... Դու էլ թե ինձ շատ ես սիրում, ինձանից չես բաժանվիլ...

...Մինասյանը նորից վերցրեց նամակը, որ մի անգամ էլ կարդա, բայց երեխան հանկարծ մի ճիչ արձակեց ու ճանկելով նամակը, վայր գցեց ներքև, սեղանի տակ։

«Վերջին տերևը»,— անցավ նրա մտքով,— վերջին տերևն էլ ընկավ...

Եվ արցունքի երկու կաթիլներ հանդարտ սահեցին նրա աչքերից...

1916

ԽԱԼԻՉԱՅԻ ԵՐԳԸ

Ամեն օր, այն բանուկ փողոցում անցորդները լսում էին Մահմեդի ձայնը, նրա սրտմաշուկ խալիչայի երգը։

Երգին ձայնակցում էր վտիտ մի սազ, որ Մահմեդի մատների տակ հառաչում էր խուլ ու ճնշված նվագով։ Ձայնակցում էր Մահմեդին և իր փոքրիկ տղան, որ թելը կոտրած ճուտիկի նման կծկվել էր գետնին, արձանացել իր հողագույն դեմքով։ Նա օրորվելով երգում էր ակամա, կրկնելով հոր խոսքերը.

— Հե՜յ, խալիչա, խալիչա...

Երգում էր Մահմեդը, դիմում անցորդներին առավոտից մինչև երեկո։ Նրա դեմքը, քամուց ու փոշուց ծեծված, գզգզված մորուքով, ասես այրվում ու հանգչում էր անընդհատ։ Հարյուր տեղից պատառոտված մի ձորձ վրան, թաղիքե մաշված թասակը գլխին, նա իր սիրտն էր բացում քաղաքի առաջ, որ սովի մեջ գալարվող ընտանիքը պահի։

Անցնում էր աշխատավորը, լսում երգը, բոպեապես կանգ առնում, հիշում այն օրերը, երբ Մահմեդի աչքերը տեսնում էին արևի լույսը, երբ նրա երեխան խաղում էր, վազվզում...

Մոտենում, ձգում էր իր պղնձե լուման և տխուր մտածում հարվածող բախտի մասին, որ իրեն էլ գուցե սպասում է Մահմեդի սև օրը...

Մոտենում էր երբեմն նաև կուշտ, եղակալած վաճառականը շտապով ձգում երգչին մի մաշված շահի ու խնդրում ալլահից, որ հեռու պահի իրեն կույր Մահմեդի բախտից...

* *
*

Երեք տարի առաջ էր, երբ Մահմեդը ամեն առավոտ, դեռ լույսը չբացված, շալակում էր իր տղային ու շտապում դեպի քաղաքի ծայրը, խալիչայի արհեստանոցը։ Փողոցում նա պատահում էր իր նմաններին։ Խումբն անցնում էր մթնում խարխափելով, ոտաբոբիկ, պատառոտած շորերով, ծանր գլուխներով ու քաղցած փորերով։ Շատերը Մահմեդի պես ոսկրացավով հիվանդ երեխաների շալակած՝ տանում էին իրենց օգնելու, որ փոքր-ինչ ավելի վաստակեն։ Անիծում էին ու գնում,— ինչ որ ստանում էին, հացի փող հաղիվ էր դառնում,— գնում էին մեռնելու՝ ապրելու համար...

Քաղաքի ծայրին, խոնավ, կիսամութ դարբասում լույսը բացվելուն պես սկսվում էր տաժանակիր գործը։ Ամենքը բռնում էին իրենց տեղերը՝ դազգահների մոտ և Մահմեդը՝ նկարն առաջին, իր անուշ ձայնով երգում, թելադրում էր, թե որ թելը որին կցեն։ Բանվորները խումբ-խումբ կրկնում էին նրա երգը.

Կարմիր թելը կանաչին,
Կարմիր թելը կապույտին,

Կրկնում էին ու՝ շը՜րխկ... շը՜րխկ, շարժում դազգահներն ու նախշուն թելերը շարում խալիչայի մեջ։

Ամեն կեսօրին, նամազից հետո, գալիս էր արհեստանոցի տերը, լուռ ընդունում խոնարհ բարևները։ Նա գիշատիչ հայացքով շփում էր մորուքը, ու դիտում իր հերթական զոհին, որին պիտի հայհոյի և սպառնա, որին ծեծի ու վռնդի, նրա տեղը մի ուրիշ, ավելի էժան բանվոր գտնելու համար։

Նա ամեն ինչ գիտե, նույնիսկ ճանճերի շարժումը։ Արհեստանոցի պահապան Ալին, որին «անոթի Ալի» էին կոչում, իր շիլ աչքերով ամեն ինչ դիտում էր, լրտեսում, շատ անգամ նա ստիպված հնարում էր ու պատմում տիրոջը։

Հավատարիմ Ալին, տկլոր ու կլիսաքաղցած, միայն տիրոջ անունով էր կշտանում,— այդպես էր արևելյան վաճառականի օրենքը,— «Պահապան շունը երբեք չպիտի կշտանա, որ հավատարիմ ծառայի»...

* *
*

Ոսկրացավի բույն էր խոնավ արհեստանոցը։ Հիվանդ էր Մահմեդը, հիվանդ էր նրա տղան ու ողջ արհեստանոցը։ Բայց քանի ոտքի վրա էր, քանի երեխային կարող էր շալակով գործի տանել, նա հիվանդություն չէր անվանում այդ, այլ աղքատություն։

Բայց մի օր ճակատագիրը հարվածեց նրան ընդմիշտ ու անդարձ։

Մի առավոտ, երբ նա երեխային շալակած արհեստանոց էր գնում, տղան հանկարծ հառաչեց ու ասաց խորհրդավոր ձայնով.

— Հայրիկ, ես քո զավակն եմ, դու ինձ սիրում ես, չէ՞... Տա՜ր ինձ, գերեզմանը փորիր, մեջը դիր... Մի՛ տանիլ ինձ խալիչայի արհեստանոցը...

Մահմեդի ծնկները թուլացան։ Նա հանկարծ զգաց, որ կյանքի թելը կտրվեց իր մեջ, ու էլ ոչ մի հաշիվ չունի այս աշխարհում։

Հետևյալ օրը նա մենակ գնաց գործի. երեխան արդեն կոնդացել էր և չէր կարողանում շարժել նույնիսկ ձեռները։

Երգում էր, թեպետ Մահմեդը, բայց ծանր դարգն իր սրտում, մտաղբաղ, երբեմն նույնիսկ մոռանում էր ու «կարմիր-կապույտ թելերի» տեղը ախուր բայաթի էր մոմռում։ Աչքերն արդեն այրվում էին, պզտորվում, մի քանի անգամ խալիչայի նկարը խառնել էր ու թելերը շփոթել։

Իսկ տերը ամեն ինչ գիտեր գիշատիչ բազեի նման իր մաղձոտ աչքերով պտտվում էր Մահմեդի շուրջը, մորուքը շփելով։

Ու մի օր էլ նա կատաղած, փրփրած հարձակվեց Մահմեդի վրա ու ծեծելով, թքելով դուրս շպրտեց փողոց, լավ հիշելով իր վաշխառու հոր խրատը.

«Մի մարդու, որ քամեցիր ու մզեցիր իսպառ, դուրս շպրտիր փողոց»։

* *
*

Ամեն առավոտ երեք ստվերներ մահվան դատապարտվածների դալկությամբ ծանր անցնում են փողոցով։ Փոքրիկ աղջիկը լարսավի մնացորդներով ծածկված, առաջնորդում է կույր հորը դեպի շուկա։ Հոր շալակին իր կոնդ տղան է, իսկ ձեռքին իր տխուր սազը։ Թերում է դրանց փոքրիկ աղջիկը, հասցնում փողոցի մի անկյուն ու ամոթխածությամբ ետ փախչում շտապով։

Հայրը տնքալով ու հառաչելով վայր է դնում տղային, լարում է իր սազն ու սկսում երգել իր մեծ դարդը, իր «խալիչան»..., հյուսում է իր երգն ու սպասում անցորդների ողորմության։

Կարմիր թելը կանաչին,
Կարմիր թելը կապույտին,
Ա՜խ, խալիչա, խալիչա...
Ուրիշի ոտքերը փափկացրիր.
Երեխիս ոտքերը տարար,
Ա՜խ, խալիչա, խալիչա...

Ձայնը մզկտում է, այրվում, պատերը կրծում, բողոքում, ու մնում անպարսման, որպես ամեն ինչ արևելյան էն քաղաքում...

1922

ԱՐՍԱԹԻ ՏԱԿ

Աժդահա, վիթխարի այդ մարդն անշուշտ Իրանի մեծ հերոսների ժառանգներից էր։ Բարձրահասակ, լայնաթիկունք, խոշոր դեմքով՝ խոհեմ մորուքի ու խիտ սև հոնքերի շրջանակի մեջ։ Կապտավուն աչքերում նախնական հավատ ներշնչող մի փայլ կար, և միաժամանակ անվախ ու անշար հայացք կյանքի բոլոր արհավիրքների դեմ։

Սակայն զենք ու դրահի տեղ նրա վրա կար միայն մի մեծ փաթան։

Բնականաբար մշտակ էր Հասանը, բայց ծանրությունների հետ նա կարծես խաղ էր անում։ Ապրանքների ծանր հակերն ուսին փաղում էր, թռչում։

Բայց ո՞ր չար աչքը նրան դիպավ, ո՞ր սատանան նրա մեջ մտավ ու ափերեց էն լեռ-մարմինը։

Մի օր առավոտից երեկո նա անընդհատ ապրանք կրեց, լցրեց եկրոպուկան մեծ պահեստն ու երբ քրտինքի մեջ լողում էր մի քամի եկավ, «սաթլչամ» բերավ նրա վրա ու անկողին ձգեց մի ամբողջ ամիս։

Նրա միակ բժիշկը մայր բնությունն էր, որն այրող տենդի մեջ, կյանքի թելն էր պահպանում։

Երբ նա ուշքի եկավ, առաջին ձայնը որ լսեց, իր կնոջ հառաչանքն էր ու շորս երեխաների ճիչը։

— Հայրիկ, հա՞ը...

Ցիդ ճիչը սոր առեղներով ծակծկում էր նրան, ու դեռ տակաթին չամոքված, նա վեր կացավ, մեջքին դրեց իր փաթանը և օրորվելով գիմեց իր ծանոթ շուկան։

Այնքան թուլացել էր, որ փալանն իսկ թվում էր նրան կապարից շինած։ Տաքության ալիքները շրջում էին մարմնի մեջ, քաշում գետի անկողին։ Շունչը ծանր էր, գլուխը պտտվում էր, կարծես անդունդի վրա օրորվելիս լիներ։

Ահա կանգնել է Հասանը այն խանութի առաջ, որի համար քանի-քանի ծանր հակեր է տարել ու բերել, տեսնում է նորից այն արձանի նման անշարժ նստած վաճառականին, որ դայլան է քաշում։ Ներս է մտնում, գլուխը թեքելով բարև է տալիս, բայց վաճառականն իր գաժան դեմքով չի ուզում նկատել նրան։

Նորից բարևում է Հասանը նվաղած ձայնով ու սպասում։

Վաճառականը վերջապես բարեհաճում է ու նշան անում գործակատարին.

— Տարեք արծաթ փողը անգլիական բանկը։

Հասանը խոնարհ ուղտի պես վրան է առնում արծաթե զոռաններով լի պարկերն ու առաջ շարժվում։

Վա՜յ էն շարժվելուն... ամեն քայլափոխին աչքերին պեծեր են փայլում, դողում է ամեն բոպե. կարծելով թե վայր է ընկնում։

Իսկ հուլիսյան արևն այրում է, խայթում և համառորեն հետևվում նրան, ասես մտնում նրա մարմնի խորքերը։

Մի տեղ նա կանգ առավ, հենվեց քանդված պատին. ինչպե՞ս է, որ վայր չընկավ, մի գերմարդկային ճիգ նրան ազատեց։ Ի՞նչ մեծ ցանկություն էր գալիս մեջը՝ թափել անիծված արծաթե փողերն ու փովել գետնին, թեկուզ հավիտյան հանգիստ առնելու շարքաշ կյանքից։

«Է՜հ, թեկուզ մեռնես՝ պիտի տեղ հասցնես... Ճակատագիր է... Այսպես չի՞ ասել իմաստուն Ֆիրդուսին.

— Մի օր մարդն է ալանի վրա, մյուս օրը ալանը՝ մարդու վրա»...

Կարելի է մի օր էլ բախտը Հասանին կժպտա...

Ասում են ծովի էն կողմը մեզ նման չէ, էնտեղ բանվորների իշխանությունն է... Հավատալո՞ւ բան է... ո՞ւր է թե գան, աչքերս ջուր կտրվեց...

Նորից շարժվում է դանդաղ, երերուն։ Ահա անգլիական բանկը, բայց որքա՜ն հեռու է թվում։

Օ՜, երբեք իր կյանքում նա այդպիսի սոսկալի ճիգ չի արել...

Աչքերը մթնում են, նա չգիտե, երազո՞ւմն է, թե՞ արթուն է, շարժվում է, բայց թվում է, թե ինքը չի այդ անում, այլ մի ուրիշ ուժ մղում է իրեն։

Մոտենում է բանկին։ Սանդուղքները որքա՜ն բարձր են...

Հասանը վերջին ճիգն է անում, մոտենում է սանդուղքներին, բայց առաջին աստիճանի վրա ոտքը դնելուն պես վայր է ընկնում...

Արծաթը զնգում է ու լռում. մի խոր հառաչ է ելնում Հասանի կրծքից, վերջի՜ն հառաչը... Արյունը հոսում է նրա բերանից ու ներկում սանդուղքի աստիճանները։

Լուռ ու անտարբեր նայում է բանկը, լուռ ու արհամարհող հայացքով անցնում է հաճախորդ վաճառականն իր քարացած դեմքով, չի շտապում նույնիսկ բանկի պահապանը։

Ընկած էր Հասանը, որպես մի զոհ՝ մեհյանի առաջ։ Նրա շրթունքների վրա զայրույթի անեծքն էր դրոշմվել,— իր միակ ժառանգությունը, որ նա թողնում՝ էր քաղցած երեխաներին։

Իսկ այն բարձր մինարեից կրոնավոր զիլ ձայնով կեսօրվա աղանն էր կանչում, կարծես ասում էր ընկած Հասանին.

«Այսպե՞ս է... այսպես է օրենքը երկնքի և երկրի»...

1924

ՀԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

— Դնեք այս պատի ժամացույցը... լավն է, կծառայի ձեզ երկար, անխափան... Տեսեք ի՞նչ պինդ փայտից է... Գուցե կուզեք պահարա՞նը...

Ասում էր պառավ կինը շուկայի անկյունում, ցույց տալով հին, փորը ընկած պահարանն ու նրա վրա դրած ժամացույցը։ Նրա դեմքը բազմաթիվ կնճիռներով ակոսված է, նա աղերսանքով նայում է ամեն անցնողի ու խոնարհաչքերով սպասում պատասխանի։

Սակայն անցորդներն աչքի տակով նայում են այդ տարօրինակ հին իրերին և ոչ մի կապ չզգալով նրանց հետ, հեռանում են՝ մեկը ժպտալով, մյուսն ուսերը վեր քաշելով։

Ճիշտ որ տարօրինակ ժամացույց է։ Նա այնքան հազվագյուտ է, որ այժմ էլ ընկեր չունի։ Կինամոնագույն, տեղ-տեղ մաշված ու դեղնած, ներքևը լայն, ասես ծալապատիկ նստած բուդդայական կուռք լինի, նույնիսկ աչքեր էլ ունի, որոնց տեղ բանալիների անցքերն են ծառայում,— մեռած աչքեր, որոնք նայում են քարացած հայացքով։ Նիհար հռոմեական թվանշանների շրջանակի վրայով պտտվում են ալաքները, ասես ամաչելով իրենց շարժումից։ Իսկ լայն պղնձե ճոճանակը, ծանր հեալով անցնում է աջից ձախ, ձախից աջ, ու ամեն անգամ հասնելով մեջտեղը՝ ասես գաղտնի տնքում է մի հին ցավից ու նորից շարունակում իր ճամփան, միալար ու տաղտուկ։

— Ջը՛կ... չըկ... չըկ...

Ու այս հին իրերին ներդաշնակ է պառավի զգեստը. նրա սև շորերն ու գլխարկը հագնում էին տարիներ առաջ, իսկ այժմ նրանք հնություն են, թեպետև խնամքով պահված։

— Գնեք այս ժամացույցը,— կանչում է պառավ կինը,— իսկ եթե կուզեք, այս ալբոմն էլ կծախեմ, շատ գեղեցիկ է... Լավ հիշատակ է... է՜հ, չէի ծախիլ, բայց ինչ արած...

Սակայն անցորդները դարձյալ չեն գնում ոչ մի բան։ Պառավը բոպեապես լռում է և բաց անում ալբոմը։ Պատահմամբ նա թողել է մեջը ամուսնու պատկերը... Ահա և նա. օրինավոր մորուքով և բեղերով, ակնոցավոր, խոժոռած դեմքով մի մարդ, որը միշտ վախ էր ազդում ամենքին, նույնիսկ իր կնոջը, մանավանդ, երբ հագնում էր իր փայլուն կոճակներով, մարմնին պինդ կպած համազգեստը...

Կինը նայում է պատկերին ու բոպեապես սլանում մտքով դեպի անցյալը, տեսնում է մի ընտանիք, ծանր կահավորումով սենյակներ, սեղանի մոտ մի դաժան ամուսին, մյուս սեղանին դասերը սերտող վախկոտ երեխային ու... լռությո՛ւն, լռությո՛ւն։ Ամեն ինչ հլու հնազանդ էր այնտեղ... Նույնիսկ հեշտանուն ասես վախենում էր պինդ ձայն հանել, իսկ ինքը՝ կինը, որը փսփսում էր նրա շուրջը, ոտքերի ծայրերով էր մանգալիս, որ չգրգռի իր ամուսնուն... Ճյդպես էր և աղախինը, որը համարյա չէր խոսում, այլ միայն կատարում էր հրամանները՝ աչքերը ցած գցած։

Եվ ժամացույցը, այդ հնազարյան կուռքը, իր բուի աչքերով լուռ նայում էր ու հավանություն տալիս կաշկանդված կյանքին։ Իսկ ճոճանակը, որպես պղնձե ստրուկ, անցնում էր աջից ձախ, ձախից աջ, և միալար հաշվում էր վայրկյանները...

— Այդ-պե՞ս... այդ-պե՞ս...

... Կինը նայում է ամուսնու պատկերին, խորասուզվում անցյալի մեջ ու մտածում, թե որտե՞ղ է ինքը և ի՞նչ է անում։

Նրա մոտով անցնում են բարձր քրքիջով մի խումբ դպրոցականներ, պիոներներ, կինը սթափվում է, վախենում, ապա նորից սփսում.

— Գնանք այս ժամացույցը, շատ լավն է, տեսնեք ինչ ամուր է... Նա կծառայի ձեզ երկար, անխափան...

Ոչ ոք չի մոտենում հնավանդ, երկու թագավորների շրջանով անցած ժամացույցին, որը միայն ինքը գիտե, թե ինչպես խարխուլ է իր ներսը, թե ինչպես տարիները խանգարել և մաշել են իրեն...

Իսկ ճոճանակը պառավ-պառավ շարժվում է աջից ձախ, ձախից աջ, և հասնելով մեջտեղը, կարծես գաղտնի տնքում է մի հին ցավից ու հառաչում.

— Մեռնո՞ւմ եմ... մեռ-նում եմ...

1924

ԿԱՐՄԻՐ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

I

190... թվի ամառը ուսանող Փանյանը որպես ռևոլյուցիոներ աքսորվել էր Մոսկվայից և ապրում էր ոստիկանության հսկողության տակ։

Երկու շաբաթ անգործ ու անփող թափառելուց հետո, նա գտել էր մի մասնավոր դաս և նրա հույսով վարձել սենյակ քաղաքի ետ ընկած թաղում։ Սենյակի միակ պատուհանը նայում էր նեղ ու ծուռ փողոցին, իսկ հորիզոնը ծածկում էր դիմացի հին տունը, որի պատը՝ ծծված երկար տարիների խոնավությամբ, վաղուց էր կորցրել իր երբեմնի սվաղը, բացելով հին ձևի աղյուսների շարքերը։ Սենյակն այնքան փոքր էր, որ նրա մեջ զգալի տեղ էին գրավում ուսանողի գրքերը։

Ցանտիրուհին՝ հին սովորություններով մեծացած մի կին, երկյուղ էր զգում այդ հաստ գրքերից ու պատերին կպցրած երկար մազերով պատկերներից։ Բայց ամենից շատ նրան անհանգստացնում էր ուսանողի «անգործությունը». նա համարյա ամբողջ օրը նստած գրքեր էր կարդում։ Մի քանի օր դիտելուց հետո նա ասաց իր ամուսնուն, որը ճոթեղենի վաճառական էր։

— Գիտե՞ս, մեր նոր կենողը ուրիշ տեսակ մարդ է երևում, մի գլուխ գրքեր է կարդում ու պատերին էլ կպցրել է երկար մազերով «ֆարմազոնների» պատկերներ։

— Հիմի ասելդ ինչ է, վախենում ես ես էլ ֆարմազոն դառնա՞մ։

— Չէ, էն էի ասում, որ անգործ է երևում, ինչո՞վ պետք է սենյակի վարձը տա։

— Հեր սխնաթ, ահագին տղա է, մի հինգ մանեթ չի՞ ճարի, որ տա։

Ցանտիրուհին հանգստացավ, նկատելով, որ ամուսինը չի բարկանում իր արած «սխալի» համար։ Բայց նրա հետաքրքրությունը գրգռում էր ուսանողի տարօրինակ կյանքը, ուստի և շարունակ խուզարկու հայացքով հետևում էր նրան։

Ամեն անգամ, երբ ծառան աշխույժ շարժումներով մաքրում էր ուսանողի սենյակը, տանտիրուհին ներս էր մտնում, իբր թե օգնելու համար, բայց իսկապես նրան տանողը կանացի հետաքրքր-

քրրությունն էր, նա ուշի ուշով գննում էր ուսանողի սեփականությունը։

Սեղանի վրա մի հաստ գիրք կար, ով գիտե, ավետարա՞ն էր, թե՞ մի ուրիշ, ավելի խորհրդավոր գիրք... Մի օր էլ չհամբերեց, կանչեց հարևանի փոքր տղային ու ցույց տալով հարցրեց.

— Երվանդ, էս ի՞նչ գիրք է։

— Վրեն «Կապիտալ» է գրված։

— Կապիտալը ի՞նչ է։

— Ռուսերեն է, չգիտեմ։

Ամբողջ օրը տանտիրուհին կրկնում էր մտքում «Կապիտալը» խառնելով «կլապիտոնի» հետ։ Երբ երեկոյան վերադարձավ ամուսինը՝ նա հարցրեց.

— Սերգո, կապիտալը ի՞նչ բան է։

— Բա վաճառականի կնիկ ես, չես իմանո՞ւմ... կապիտալը փողն է էլի...

— Փո՞ղ... ի՞նչ խելոք է էլել մեր նոր կենողը, մի գիրք ունի, վրեն կապիտալ է գրած, միշտ էն է կարդում։

— Երևի ուզում է հարստանալ, ի՞նչ կա, հիմի ամենքը գիշերցերեկ հարստանալու մասին են մտածում։

«Խելոք տղեն» այդ օրվանից նստեց տանտիրուհու մտքում։ Շուտով նա ավելի ամրացավ այդ համոզմունքի մեջ, երբ իմացավ, որ Փանյանը մասնավոր դաս ունի։ Այժմ աշակերտը ինքն էր գալիս պարապելու ուսանողի մոտ։

Եվ քանի որ տանտիրուհին մի անբուժելի հիվանդություն ուներ՝ իր բարեկամներին ու ծանոթներին ամուսնացնելու հիվանդությունը, ուստի այդ տեսակետից էլ սկսեց մոտենալ և Փանյանին։

«Խելոք տղա է, ուշք ու միտքը փողի վրա... էսպես տղին կսազի մեր Նատալիին... Մեղք է քույրս, աղջիկը հասել է, չի իմանում ոնց ճամփու դնի»։

Եվ ահա այդ մեծ հարցը սկսվեց քննության առնվել երկու քույրերի մեջ։ Տանտիրուհին հայտնում էր քրոջը իր դիտողությունները ուսանողի մասին, մասամբ ծածկելով թերի կողմերը։

Ծրագիրն իրագործելու համար տանտիրուհին երբեմն հրավիրում էր ուսանողին թեյի կամ սուրճի, հյուրասիրում քաղցրավենիներով, թխվածքներով ու զգուշությամբ հարցեր տալիս, նոր «հանգամանքներ» իմանալու համար։

— Որ ուսումն ավարտեք, ի՞նչ պետք է դառնաք

— Ադվակատ եմ լինելու։

— Լավ գործ է, Ասլանյանի պես սեփական տուն, սեփական կառք կունենաք։

— Հա՛, իհա՛րկե,— Համաձայնում էր Փանյանը, ժպտալով։

— Բայց մենակությունը լավ չի... Ինչի՞ չեք պսակվում...

— Ես ոչ թե ադվակատ, այլ վարդապետ պետք է դառնամ,— կատակով պատասխանում էր Փանյանը։

— Չէ, հանաքը դենը, եթե մի լավ նամուսով աղջիկ ելի, օրինավոր ընտանիքից, բաժինքով, չեք ուզի՞լ...

Ուսանողն զգաց, որ «ցանց» է պատրաստվում, բայց կատակով համաձայնություն տվեց։

— Հա, եթե մի այնպես աղջիկ պատահի, հարուստ, գեղեցիկ, այն ժամանակ կմտածեմ...

Տանտիրուհին ժպտում էր, հյուրասիրում բազմատեսակ քաղցրավենիներով ու մտքում ասում.

— Կամաց-կամաց կկակղես... մի օր էլ ոտդ թել կկապենք...

* *
*

Ամառվա արևը մայր մտնելու մոտ էր։ Քաղաքի փողոցները, տները կարծես մեծ հրդեհից հետո, անդրադարձնում էին կուտակած տաքությունը, ջերմ ալիքներով ողողում անցորդներին։

Ուսանող Փանյանը վերջացրել էր իր դասը, մի ժամ էլ կարդացել պատմական մատերիալզմի մասին ու դուրս եկել փողոց։

Վերջերս նրան տանից դուրս վանողը իր ողբալի ֆինանսական վիճակն էր. երկու օր էր, նա չէր ճաշել, իսկ այսօր հավաքել էր թամբաքվի վերջին փշրանքներն ու հազիվ մի անգամ ծխել։ Սենյակի վարձն էլ պայմանավորվել էր սկզբից վճարել, սակայն բացի խոստումներից դեռ ոչինչ չէր տվել։ Լավ է, տանտիրուհին՝ նկատի առնելով, որ ուսանողը փեսացու է, քաղաքավարի և փափուկ ձևով էր հիշեցնում, թե չէ այս կողմից էլ դրությունը ողբերգական կլիներ։

Միակ հույսը մասնավոր դասն էր, բայց դա էլ թարսվել էր. ամեն օր մտադրվում էր փողն ուզել աշակերտից, բայց հենց մոտենում էր ասելու րոպեին, հետաձգում էր մյուս օրվան։ Ուրեմն մնում էր պարտք անել, բայց ո՞ւմից... բոլոր աղբյուրներն արդեն

պատռված էին Անդուամենանքիվ, նա դարձել էր գաղթ փողոց, Հուսալով, որ կհանդիպի որևէ ընկերոջ կամ ծանոթի և կփրկվի այս դրությունից։

Նրա արտաքինի վրա աղքատ ուսանողի դրոշմ կար, հագին ուսապան ձնի կապույտ բլուզ էր ու վրան կապած փնջավոր, բարակ գոտի Շալվարը մաշված էր, տվաղված ու «հայելի» դարձած, ուսանողական գիտարկը խոնջացել էր, գնդակներից կանաչի փոխվել, իսկ կոշիկները բավականաչափ կարկատաններ ունեին։

Փանյանի դեմքը իր խոժոռած խիտ հոնքերով, ակնոցի տակից նայող քննական-հարձակողական հայացքով «ժիտողական» արտահայտություն ուներ։ Մեջը վիճացող նոր գաղափարներով թնավորված, նա պահանջ էր զգում վիճելու, նոր հավատի բերելու ամենքին, տապալելու «բուրժուական ամրությունները»։

Փողոցի անկյունում նա կանգ առավ, որոշելու համար, թե ո՞ւր պիտի գնա, ո՞ւմ պիտի դիմի պարտք անելու համար, բայց դրա փոխարեն հիշեց նոր կարդացած գիրքը։

Անասելի շոգին ամեն քայլի հետ քրտինքը վրա էր տալիս։ Նեղ փողոցների ծանր, գարշահոտ օդը ճնշում էր։ Հասնելով փոքր հրապարակին, Փանյանը հանկարծ ցնցվեց։ Էլի էս կողմովն անցա... գրողը տանի, չէ՞ որ վճռել էի դեսը չգալ...

Նրա շփոթության պատճառը պատուհանից նայող օրիորդն էր, իր տանտիրուհու քրոջ աղջիկը։ Օրվա որ ժամին էլ անցնեիք, կտեսնեիք նրան հրապարակի կողմի պատուհանից դիտելիս։ Նայում էր աչքի տակով, բայց նկատում ամեն ինչ, կարծես լուսանկարում էր անցորդներին։

Ամեն անգամ, երբ Փանյանն անցնում էր այս տան առջևից, ընկնում էր շփոթության մեջ։ Այնպես էր թվում, թե օրիորդը նկատում է նրա արտաքինի վրա ինչ-որ ծիծաղելի բան. թվում էր, թե շորն է պատռված կամ մի բան թարս է հագել, բլուզի տակից շապիկն է երևում, և այլն, երևակայությունը պատկերացնում էր մի շարք այպիսի պատահարներ։

Հենց որ օրիորդը նկատում էր ուսանողին, նա մի առանձին հետաքրքրությամբ սկսում էր նրա վրա իր հայացքը և աչքերը չռում՝ ագահությամբ, առես վախենալով, որ կարող է մի բան բաց թողնել առանց նկատելու...

Ու ամեն անգամ իրար տեսնելիս, նրանց մեջ սկսվում էր մի

անարօրինակ լուռ խոսակցություն, որն այս անգամ կարելի էր թարգմանել այսպես.

Օրիորդը— Ի՞նչ ես «ավարա» ման գալիս, պսակվիր հետս... փող, բաժինք կբերեմ, տուն կդնես, կհարստանաս...

Ուսանողը— Քո բաժինքի հետ դու կբերես և քո սահմանափակ, քաղքենի ուղեղը...

Օրիորդը— Ի՞նչ ես երևակայում. տե՛ս, կոշիկդ պատռվել է, սպիտակ գուլպան երևում է... (աչքերը չռած դիտում է ուսանողի կոշիկները)։

Ուսանողը— (Շփոթվում է, կարմրում մինչև վիզը)։ Փո՞ւհ, մոռացա, որ կոշիկս պատռված է... գոնե թանաքով սևացնեի սպիտակ գուլպան...

—Պետք է վերջ տալ այս կոմեդիային,— ասաց ինքն իրան Փանյանը, անցնելով օրիորդի «քավարանից»։ Սակայն նա միշտ այսպես վճռում էր ու հետո մոռանում, իսկ տանտիրուհին շարունակում էր հարսնախոսությանը, չնկատելով ուսանողի զավեշտական վերաբերմունքը։

Օրիորդն արդեն գիտեր հարսնախոսության մասին։ Ամեն օր երկու քույրերը կշտադատում էին ուսանողին՝ մեկ ոգևորվելով նրա ապագա դիրքով, մեկ կասկածելով։ Սակայն դրականը միշտ հաղթում էր բացասականին, և Փանյանն օր-օրի վրա ամրանում էր ինստիտուտի գիրքում։

* *
*

Նեղ փողոցից դուրս գալով, Փանյանն ընկավ խանութների շարքը։ Վաճառականները՝ նոր զարթնած հետաճաշյա քնից, նստել էին խանութների առաջ ու թմրած աչքերով նայում էին դիմացը, ծույլ-ծույլ հովհարելով թաշկինակներով բաց կրծքերը։ Պիջակները հանած, ժիլետների կոճակները արձակած, նրանք գերազանցում էին իրար փքված փորերով, կախ ընկած թշերով ու հաստ, արյունակալած վզերով։ Երբեմն նրանցից մեկն ու մեկը կապիտ ձայնով կանչում էր գործակատարին, ապսպրում զովարար խմիչքներ, ու թերևուն պես խմում ուղղակի շշերից։

Փանյանն անցնում էր թունոտ հայացքներ ձգելով ճարպակալած դեմքերին ու խորհրդածում. «Ախ, ռևոլյուցիա, ո՞ւր ես, մի պարս շպրտես այս գիշատիչներին իրենց որջերից...

Մինչդեռ նա անցնում էր այսպես խրհրդածելով հանկարծ նկատեց, որ իր շուրջը իրարանցում է ընկել։ Վաճառականները շտապշտապ վեր էին թռչում, հագնում պիշակներն ու կանգնում խանութների առաջ։

Ուսանողը ետ նայեց։ Հայտնի հարուստ Թարխանյանն էր գալիս։ Այսօր նա բավական ուշ էր վերադառնում իր գրասենյակից, երևի մի անակնկալ լուր էր ստացել։

Նրան ուղեկցում էին մի խումբ աչքի ընկնող վաճառականներ, որոնք սովորաբար միանում էին շքախմբին իրենց խանութներից, Համբարձում Գերասիմիչին մեծարելու, նրա աչքը քաղցրացնելու համար։

Թարխանյանը գալիս էր ծանր, իշխողի քայլերով ու քայլերի հետ զուգընթաց կանոնավոր շեշտով խփում էր գետնին իր արծաթագլուխ ձեռնափայտը։ Միահեծան իշխանի նման նա ծանրացնում էր իր ամեն մի շարժումը և թունոտ հաճույքով ընդունում էր իր վրա դարձած հպատակվող հայացքները։ Նրա գոռոզ դեմքը՝ իր վրա խոժոռած հոնքերով, ջղուտ կնճիռներով ու գազազած աչքերով մի ձգտում էր ցուցադրում՝ ընկճելու, ստորացնելու մարդկանց։ Խանութների առաջ շարված վաճառականները խորը գլուխ էին տալիս, բայց Թարխանյանը ձևացնում էր, իբր չէր նկատում։ Իր շուրջը պատած վաճառականները, մեկմեկու առաջ կտրելով խոսում էին հետը, ամեն կերպ աշխատելով իրենց վրա դարձնել ուշադրությունը, բայց նա լսելու էր տալիս ու աջ ու ձախ դարձնելով դեմքը, մեքենաբար հարցնում.

— Հը՞։

Խոսողը նորից էր կրկնում իր ասածը, բայց Թարխանյանը իր արհամարհող բարձրությունից ողորմության պես ուշադրության մի փշրունք էր ձգում ու համարյա մեքենաբար կրկնում.

— Հա՜...

Ու այս «հը»-ի և «հա»-ի մեջ նա դիրիժորի նման ղեկավարում էր շրջապատի քծնող վաճառականներին։

Մի րոպե Թարխանյանի և ուսանողի հայացքներն իրար հանդիպեցին։ Թարխանյանի մեջ մի անախորժ զգացում անցավ Փանյանի չխոնարհվող դեմքից, որը նրա աչքի համար անսովոր ու խորթ էր։

Ուսանողը կանգնել էր հպարտ ու ձիգ և հեգնող ժպիտը դեմքին, շեշտակի նայում էր Թարխանյանին։ Նա ասում էր մտքում.

— Պատմության դիալեկտիկան քո գերեզմանն է փորում օր ու գիշեր...

Թարխանյանի շքախումբն արդեն անցել էր, բայց Փանյանը մի քանի րոպե դեռ նայում էր հետևից։ Ապա սթափվելով, նա ամուր խփեց գետնին ձեռնափայտով ու շարունակեց իր ճամփեն։

* * *

Մեծ հրապարակի անկյունում Փանյանի աչքին ընկավ «Պարիկմախեր Ժորժի» ցուցանակը։ Բացի ճակատի մեծ ցուցանակից, կար և մի փոքրը վարսավիրանոցի անկյունի ուղղությամբ։ Քամին ծռել էր ցուցանակը և «պարիկմախերի» տեղ թողել միայն «մախերը», բայց ինչպես երևում էր՝ Ժորժը (կամ ղազախեցի Գևորգը) դրա մասին իսկի չէր էլ մտածում։

Ուսանողը ներս մտավ վարսավիրանոց։ Նրա առաջ բացվեց մի հոյակապ տեսարան. մեծ հայելու առաջ, գլուխը մարմարե սեղանին հենած, քնել էր Ժորժը և խռմփացնում էր իր մեծ քթով։ Մի առանձնահատուկ վարսավիրային անուշահոտություն էր տիրում ներսը, որից այդ շոգ պահին կարելի էր ուշաթափվել։

Ուսանողը մտադիր էր հիմնովին սափրելու մորուքն ու բեղերը՝ դեմքը փոխելու նպատակով, որովհետև երեկոյան պիտի գնար բանվորական ժողովի։ Բայց Ժորժի խռմփոցն այնքան համոզիչ էր, որ նա սիրտ չարավ զարթնեցնելու, մանավանդ որ ապառիկ պիտի սափրվեր։

Անցնելով բուլվարը, նա ըստ սովորության կանգ առավ գրախանութի առաջ, նոր լույս տեսած գրքերին աչք ածելու համար։ Երբ ուզում էր անցնել վիտրինայի երկրորդ մասը, հանկարծ նկատեց աջ կողմից մի մարդու, որը կասկածելի թվաց, թեպետ հագել էր բանվորի հասարակ շորեր, բայց երևում էր՝ ինտելիգենտ էր, և իրեն բանվոր էր ձևացնում։

Նրան մատնում էին իր գաղտնի հայացքները, որ նա մեկմեկ աչքի տակով դարձնում էր ուսանողի վրա, ու շինծու անտարբերությունը, իբր թե իսկի չէր հետաքրքրվում Փանյանի գոյությամբ և միայն գրքերին էր նայում։

«Գաղտնի ոստիկան է»,— անցավ Փանյանի մտքով, նա մի քանի րոպե դիտմամբ կանգնեց վիտրինի առաջ, իբր թե չի նկա-

տում ոչինչ, ապա հեռացավ դանդաղ քայլերով, որպեսզի կասկածչհարուցի, մինչև որ հասավ փողոցի անկյունը։

Այստեղ նա մատնեց իր անփորձությունը. թեպետ գիտեր, որ չպետք է ետ նայել, բայց չհամբերեց, ետ նայեց։ Գաղտնի ոստիկանը դարձյալ կանգնած էր ֆիտրինայի առաջ և աչքի տակով հետևում էր ուսանողին։

Տեսնելով ճանապարհը դեպի աջ, Փանյանն արագացրեց քայլերը, նա ընկավ նեղ փողոցների ցանցը, պտույտ տալով նորից դուրս եկավ քաղաքի կենտրոնը։

Նա ներս մտավ ծորմի վարսավիրանոցը և տափրվելուց հետո շտապեց դեպի քաղաքային փոքրիկ այգին, որտեղ պիտի հանդիպեր բանվոր Մարգարին։

2

Մի փոքրիկ այգի էր, այնքան փոքր, որ միայն անճարացած քաղաքացին կարող էր նրան այգի համարել։ Մի քանի փոշոտված ծառեր, մի քանի մարգեր, նստարաններ։ Շրջապատի փողոցների փոշին ու աղմուկը ազատ մուտք ունեին այնտեղ, այնպես որ կարելի էր նույնիսկ հարց տալ. ինչո՞վ է զանազանվում այգին փողոցից։ Կարճ ասած,— փոքրիկ այգին այն իլլուզիաներից էր, որոնց մարդիկ հավատում են, ուստի և նա լավ էր կատարում իր դերը։

Ամառվա երեկոներն այստեղ էին հավաքվում համեստ կարողության և համեստ երևակայության տեր մարդիկ,— մանր ռնտաղության տերեր, երեսուն-քառասուն ռուբլի ռոճիկ ստացող ծառայողներ, կոտր ընկած վաճառականներ, հանգստացող ծերունիներ։

Կար մի խումբ, որը հաճարյա ամեն երեկո գալիս էր, գրավում միևնույն նստարանն ու զրուցում, տկսելով եղանակից, ապա անցնում քաղաքականության, կրկնելով փոքրիկ լրագրի փոքրիկ դատողությունները՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի մասին։

Այնուհետև պատմում էին պատերազմներից, հին-հին բաներից ու վերջը գալիս, կանգ առնում հարուստների վրա, խոսում նրանց նիստ ու կացի, բնավորությունների, թողած կտակների մասին։

Զրուցում էին հանգիստ տոնով, առանց շտապելու ու մեջ-մեջ բարձր ձայնով հորանջում։ Այնպիսի անդորրություն էր տիրում, ասես վաղուց սահմանված կարգով մի հին սրբազործված պատմություն էին կարդում։

Ու ամեն երեկո, նույնպես որոշ կարգով գալիս կանգնում էր երկնքում՝ այգու դիմաց, Մեծ Արջի համաստեղությունը, ու ժպտալով նայում ներքև իր յոթ աչքերով, կարծես ուրախանալով, որ երկրի վրա էլ կան համաստեղություններ՝ նույնպես հաստատուն և կանոնավոր ընթացքով։

Ներս մտնելով այդպես, Փանյանը երկու անգամ պտույտ արավ, բայց չհանդիպեց բանվոր Մարգարին։ Տառուղիով անցնելիս՝ նա հանկարծ դիպավ իր ընկերոջը՝ Միքայելյանին։

— Բարև, Աշոտ։

Միքայելյանը կարծես վեր թռավ։

— Փանյան, դու ե՞ս,— հարցրեց խանձված ձայնով։

— Հը՞, ո՞նց ես... բեր ձի ծիտեմ, էսօր երջանիկ դրության մեջ եմ՝ ոչ ճաշել եմ, ոչ ծխել։

Միքայելյանը հանեց գրպանից ծխախոտի տուփը, ապա մի թղթադրամ ու դրեց Փանյանի ձեռքին։

— Ուրիշ ի՞նչ կա,— հարցրեց Փանյանը մեծ բավականությամբ ներս քաշելով թամբաքուի ծուխը։

— Նույն դրությունը շարունակվում է,— տխուր պատասխանեց Միքայելյանը։

— Երևի այնքան ես տարված, որ էլ ուրիշ բաների մասին չես մտածում, կարդացի՞ր էն...— հարցրեց նա ցած ձայնով։

— Կարդացի, բայց ուշքս վրաս չէր։

— Ուրեմն դեռ էլի ատով-գլխով տարված ես։

— Էհ, ի՞նչ անեմ,— հառաչանքի տոնով պատասխանեց Միքայելյանը, ձեռքը հուսահատորեն շարժելով վերևից ներքև։

— Դե՛հ, ցտեսություն,— ասաց Փանյանը չուզենալով խանգարել նրա միայնությունը։

Միքայելյանը հազիվ լսելի ձայնով հրաժեշտ տվեց ու շարունակեց ետ ու առաջ քայլել։

Արդեն մի շաբաթից ավելի էր, Միքայելյանը այնքան հաճախ էր գալիս այստեղ, որ հանդուգն իր տանն էր դարձրել այս փոքրիկ այգին։

Նրա գաղտնիքն այն էր, որ սիրահարվել էր դիմացի տանն ապրող օրիորդի վրա, բայց նրա ծնողները, իրենց «գայլեղ» չտեսնելով Միքայելյանին, խստիվ արգելել էին օրիորդին տեսնվել նրա հետ, նույնիսկ վերջերս տանից դուրս չէին թողնում։

Ամեն երեկո մի քանի անգամ օրիորդը երևում էր այգու դի-

մացի պատշգամբում, կանգնում էր լապտերի մոտ, որպեսզի «նա» տեսնի ու իր լուսնի նման սպիտակ, թախծոտ դեմքը դարձնում էր դեպի այգին։

Նույն րոպեին ուսանողն էլ դուրս եր գալիս այգուց ու կանգնում փողոցի լապտերի տակ, որպեսզի «նա»-ն տեսնի, ու սիրաբորբոք հայացք էր նետում դեպի պատշգամբը, մրմնջալով սիրային խոսքեր։

Այսպես նայում էին իրար, մինչև որ օրիորդը հիշում էր մոր խստությունը ու ներս մտնում սենյակը։

«Լուսինը» մայր էր մտնում և Միքայելյանը սրտակոտոր վեղադառնում էր այգին ու շարունակում քայլել մինչև ուշ գիշեր, լցնելով ծառուղին իր ախ ու վիշով ու թամբաքվի քուլա-քուլա ծխով։

* *
*

Բաժանվելով Միքայելյանից՝ Փանյանը մտածում էր. «Ահա կանցնեն օրեր, օրիորդի ծնողները կհաշտվեն, Միքայելյանն էլ կավարտի, կամուսնանա ու կդառնա մի «զոնտիկավոր» քաղքենի»... Այո, նա էլ այգում նստած «Համաստեղությանն» է պատկանում...

Իսկ «Համաստեղությունն» արդեն հավաքվել էր, բազմել նստարանի վրա։ Բայց այսօրվա խոսակցության մեջ ինչ-որ անհանգստություն էր նկատվում, ու ձայներն էլ սովորականից բարձր էին հնչում։

Խոսում էր տնատեր Բուդաղյանը։

— Ախպերս, ես ասել եմ և կասեմ,— օրենքը պետք է էնպես պինդ լինի, որ էս ճամփից դուրս եկած մարդկանց հախիցը գա։ Հիմի խոսքս ինչի՞ վրա է,— իմ տունը, կարելի է տեսած լինեք,— նոր տուն է, է՛հ, լավ կենողներ էլ շատ եմ ունեցել։ Բայց հիմի մի բանվոր է ապրում ներքևի սենյակում,— ի՞նչ ասեմ, ուղղակի աստծու կրակ է... Առաջվա ժամանակը ո՞վ կլներ բանվորի կամ արհեստավորի ձենը։ Սա մի ուրիշ բան է, էլ դադար չի տալիս։

— Ի՞նչ է ուզում,— հարցրեց կողքին նստող «նախկին» վաճառականը։

— Ի՞նչ է ուզում, կռիվ է ուզում, մեկ ասում է՝ տունդ խոնավ է, ինչի՞ առաջուց իմաց չարիր, մթամ ես խաբել եմ... էն օրն էլ

կանգնել է, թե տունդ ճեղքված է, պետք է կամիսիա կանչել տամ, որ քննեն, տեսնեն։ Մեկն ասի, առաջինը՝ իմ տունը քանդվելու ի՞նչ ունի, դրանից էլ լավ տո՞ւն... վրա երկուսն էլ ապրանքը իմը չի՞, հավանում չե՞ս, գնա ուրիշ տեղ, թող իմ խոնավ սենյակը ինձ մնա...

Հանկարծ նստարանի առաջ պայթեց մի անսովոր, ուժեղ ձայն, որը բոլորովին խորթ էր համաստեղության կարգերին։

— Ստի հերն անիծա՞ծ, թե քո տունը չի քանդվում։

Բուդաղյանը վեր թռավ տեղից։

— Էստեղ էլ դադար չես տալի՞ս,— գրգռված պատասխանեց նա,— ի՞նչ քո գործն է, թե ո՞ւմ տունն ինչպես է. չես ուզում, գնա էնտեղ, որտեղից եկել ես։

— Ջեմ գնա, մինչև կամիսիա չբերեմ, ինձ որ խաբեցիր, բա քեզ կմարսեցնե՞մ։

— Ապրանքը իմը չի՞... Գնա էլի, թե չես ուզում։

— Ինչ ապրանք, էդ որտեղի՞ց, քո ձեռքով է շինվա՞ծ, թե՞ ինձպեսների։

— Խաթա՞ ես գլխիս, ի՞նչ ես կուպրի նման կպել, ես գիդեմ, դու ուզում ես իմ տան գլխին խաթա բերես, համա ներողություն կանես, հենց դուրս անել տամ, որ իմանաս, թե օրենքը որտեղ է։

— Ո՞ւմ դուրս անես, մի փորձի տեսնեմ...

— Ախպեր, գնանք, էստեղ էլ չեն թողնում մարդ հանգստանա....

Ու արագ քայլերով դուրս գնաց այգուց։ Նրան հետևեցին «համաստեղության» մյուս անդամները, վախենալով որևէ «անկարգությունից»։

* *
*

Փանյանը հենց սկզբից նկատեց, որ խոսողը բանվոր Մարգարն էր։ Երբ Բուդաղյանը դուրս գնաց այգուց, նա մոտեցավ Մարգարին ու թևքից քաշեց։

— Էս ո՞ւր ես, չերևացիր ժամանակին։

— Դո՞ւ ես, Լևոն... չճանաչեցի։ Գնան...

Նրանք դուրս եկան այգուց և կանգ առան մոտակա ոչ բանուկ մի փողոցում։ Խոսում էին ցածր ձայնով։

— Ժողովը հետաձգեցինք վաղվան՝ նույն ժամին, էսօր չհաջողվեց։

— Էս ի՞նչ կուլի մեջ էիր։

— Ձեր իմանաս, թե ինչ ազատակամ մարդ է իմ տանտերը, չես զարմանալ. էդ լիրբը գնացել մատնել է, թե մեր տանը ժողովներ ենք անում։ Լավ է, առաջուց իմացա, թե չէ կարող էինք ծուղակի մեջ ընկնել։ Եկան խուզարկեցին, բան չգտան, դե ինչ՝ բրկե, առաջուց մաքրել էի։

— Մի քիչ անզգույշ էիր խոսում։

— Էնպես կատաղած էի էդ անիծածի վրա, որ հենց նրա ագռավի ձենը լսեցի, էլ չկարողացա համբերեմ, որ կախաղան էլ տանեին, էլի կասեի։ Ա՜խ, մի դրա դատաստանն ինձ տան, ես գիդամ, թե ինչ կանեմ։

— Բայց էս երեկո նրանց «դաստեն» խանգարեցիր։

— Հա, լավ են իրար գտել... սրանք որ կան, էն մեծ բուրժուաների մանր-մունր տականքներն են, բայց երանցից ավելի են հարահրոց անում։ Ռևոլյուցիոներների մասին, որ լսում են, էնպես են թեքները գորցնում, ինչպես սհեղ դատաստանն է գալիս։

— Ուրի՞շ... ընկերները ո՞նց են։

— Լավ են, հետզհետե գործադուլի տրամադրություն է ստեղծվում։ Պետք է ուժեղացնենք կռիվը, միշտ պատրաստ պահենք մեր զենքերը... Ճիշտ է, մենք տանջվում ենք, բանտարկվում, աքսորվում, բայց վերջը հաղթանակը մերն է...

Տիրեց բոպեական լռություն։ Մարգարը ուշադրությամբ նայում էր փողոցի ուղղությամբ։

— Տեսնո՞ւմ ես, Լևոն,— ասաց նա,— հրեն մեկը էն անկյունից մեզ հետևում է՝ կա՛մ ինձանից է կպել, կա՛մ քեզանից, ասենք դու «նորընծա» ես, բայց արդեն դիտողության տակ ես։

«Նորընծա» խոսքից ուսանողը կարմրեց, ինչպես երբեմն կարմրում էր, երբ ասում էին՝ «բեղերդ նոր են դուրս եկել»։ Չնայած, որ նա նոր էր ասպարեզ իջել, բայց նրան փոխանցված ռևոլյուցիոներ էր հաշվում։

— Դե ցրվենք, թե չէ կկպչի։ Ուրեմն վաղը՝ էլի նույն տեղը, ժամի 9-ին։ Դու աջ գնա, ես՝ ձախ։

Մարգարը հեռացավ արագ քայլերով, իսկ ուսանողը մի քանի փողոց անցնելով, մտավ կաֆենատուն, շտապ կերավ մի բաժակ մածուն, գնեց ծխախոտ ու քայլերն ուղղեց դեպի տուն։

Լուսինը դուրս եկավ, մի առանձին խորհրդավորություն և գնդշություն սփռելով ամեն ինչի վրա։ Ուսանողը գնում էր ամայի փողոցներով, ծխում էր ու խորհրդածում։ Այսուհետև իր կյանքի նպատակը թվում էր որոշ։ Դա իրեն կոչված էր համարում մի մեծ, դժվարին գործի համար և զգում էր, որ այդ գործը նախ և առաջ պահանջում է անձնազոհություն։ Ու երբ մտածում էր անձնազոհության մասին, թեթև ամպի նման մի տխրություն էր իջնում ու հարց տալիս ինքն իրեն՝ արդյոք պատրա՞ստ է զոհվելու այդ վեհ գործի համար...

Լուսինը նայում էր վերևից ու թվում էր՝ ավելի էր վեհացնում նրա մտքերը։ Երևակայությունը թռչում էր հեռու ու մեկը մյուսից ավելի գրավիչ պատկերներ ստեղծում...

Ահա ընդհանուր գործադուլ է՝ իր ղեկավարությամբ խմբվել է քաղաքի բանվորությունը... Հանկարծ նա նկատում է, որ զորքը շրջապատել է... այն վճռական մոմենտն է, երբ պիտի համազարկ տա, ու նա՝ Լևոնը, մի բարձր տեղից դիմում է զինվորներին։

— Ընկեր զինվորներ, եթե ձեր մեջ չի ցամաքել պրոլետարի արյունը, չի սպառվել վեհ ազատության սիրտը, դարձրեք ձեր զենքերը մեր ընդհանուր թշնամու դեմ...

Եվ հանկարծ... զինվորները ձգում են զենքերն ու գրկախառնվում բանվորների հետ, և ռևոլյուցիան հաղթանակում է...

Տարված երևակայությամբ Փանյանը վերադարձավ տուն։

3.

Ժողովը քողարկելու նպատակով բանվոր Աբրամը սեղան էր սարքել, դրել էր մի քանի շիշ գինի, երշիկ, պանիր, կանաչի, սնդանի մեջտեղն էլ բազմեցրել էր մեծ հեղինակներ։

Դրսում նա կանգնեցրել էր իր տանտերի տարեկան տղային, որպեսզի ոստիկան կամ ուրիշ կասկածելի մարդ տեսնելուն պես իմաց անի։

Ժողովականներից արդեն վեց հոգի եկել էին։ Վերջապես եկավ և ղեկավարը՝ Պետրոսը, գունատ դեմքով։

— Քեզ ենք սպասում,— ասաց Մարգարը,— հը՞, դուրս կպսկածելի մարդ հո չտեսա՞ր։

— Չկար։ Ես հենց դիտմամբ ուշ եկա, որ մի լավ աչք ածեմ։

— Էդ շները, ինչպես երևում է, գործադուլի հոտն առել են, էլ պիշեր-ցերեկ դադար չեն տալիս։

— Էդ նրանից է, որ մենք պառավ նանի նման մի գլուխ խոսում ենք ու հետաձգում գործադուլը,— ասաց բանվոր Ստեփանը,— վաղուց պիտի սկսեինք, տղամարդ ենք՝ դե խփենք գնա, էլ ի՞նչ ենք մի ամիս փիլիսոփայություն անում։

Նա վեր կացավ ու ձեռքերը գրպանում քայլեց սենյակում։

— Դու էլ հենց քո ձին ես քշում,— պատասխանեց Արամը՝ քառասունի մոտ բանվոր, մորուքի ու բեղերի մեջ կորած դեմքով,— մի չորս կողմդ էլ նայի, տես ինչքան անգիտակից ընկերներ ունենք, առանց պատրաստելու չի կարելի սկսել գործը։

— Էհ, դուք էլ միշտ հին երգն եք երգում,— ասաց Ստեփանը, կանգնելով Արամի դիմաց,— պատրաստ չեն... էդ քանի՞ ենք լսել, իսկ ես ասում եմ, պատրաստ չեն լինիլ. դու պետք է քո հետևից քաշես նրանց։

— Քաշելուն կտրվել էլ կա. պիտի ամուր կապենք հետներս։

— Զարմանալի է, ինչո՞ւ ավագ ընկերներդ էդպես կամաց եք շարժվում։

Բանվոր Մարգարը մոտեցավ Ստեփանի հետևից ու նրա ականջից քաշեց.

— Դե, շատ մի բոբոթալ. դու դեռ ժանդարմի ու բանտի երես չես տեսել և լավ կանես քո փորձված ընկերներին հետևես, շտապողին տղա չի ըլիլ։

— Իսկ կամաց գնացողին իսկի աղջիկ էլ չի լինիլ։

— Դե, ընկերներ, սկսենք,— ասաց Արամը։

Փանյանը նստել էր թախտի վրա ու մտքում կրկնում էր զեկուցման սկիզբը զանազան վարիանտներով։

— Խոսքը ձերն է, ընկեր Լևոն,— դիմեց Արամը։

Փանյանը՝ զսպելով իր շփոթությունը, սկսեց, բայց ոչ այնպես, ինչպես ինքը ենթադրում էր։ Մի քանի րոպեից հետո շփոթությունն անցավ և զեկուցումն ընկավ իր բնական հունը։ Ունկնդիրները լարված հետաքրքրությամբ լսում էին ու վարակվում նրա ոգևորությամբ։ Պրոլետարիատի անցած արյունոտ կոիվները մշուշապատ հեռվից հանձնարարում էին շարունակել պայքարը մինչև վերջնական հաղթանակը։ Մեջները կուտակված դժգոհությունը բռնկվում էր ու պահանջում.— Պետք է կռվել...

Փանյանը վերջացրեց իր զեկուցումը կոմունիստական մանիֆեստի խոսքերով. «Պրոլետարները ոչինչ չեն կորցնի, բացի իրենց շղթաներից, բայց ձեռք կբերեն ամբողջ աշխարհը...»։

Վերջանալուն պես Ստեփանը վեր կացավ տեղից ու Փանյանի ձեռքը պինդ սեղմեց։

— Ընկեր Լևոն, տղամարդի պես խոսեցիր։

— Ընկերներ, ես կարծում եմ, որ մենք էլ հարցերով չդբաղեցնենք ընկեր Լևոնին, այլ անցնենք գործնական խնդիրներին։

— Ուղղակի խոսենք գործադուլի մասին,— միջամտեց Ստեփանը։

Այդ ժամանակ հանկարծ ներս մտավ Արամի տղան ու շնչասպառ ասաց։

— Մեր կողմը պոլիցիա է գալիս...

Բոլորը վեր թռան։

— Լավ տեսա՞ր,— հարցրեց Արամը։

— Հա, երեք հոգի էին։

— Ընկերներ, պետք է ցրվել,— ասաց Մարգարը։

— Գուցե ավելի լավ է, նստենք իբր թե քեֆ ենք անում,— առաջարկեց Արամը։

— Չէ, էդպես կարող ենք բոլորս թակարդն ընկնել,— ասաց Մարգարը,— պետք է ցրվել մեկ-մեկ։

Փանյանը բանվոր Արամի տղայի՝ Սուրենի հետ դուրս եկավ փողոց։

Լուսինը դեռ չէր ծագել։ Փողոցը մութն էր ու խորդուբորդ։ Վերջապես հոգնած ու քրտնքի մեջ կորած նա հասավ իր բնակարանը։

* *
*

Տուն վերադառնալով՝ Փանյանը նկատեց սանդուղքների և պատշգամբի վրա արտակարգ լուսավորություն։ Տանտիրուհու բնակարանից անսովոր ձայներ էին լսվում, ըստ երևույթին հյուրեր կային։

Մտնելով սենյակը, նա մեկնվեց մահճակալի վրա ու մտածում էր իր ընկերների մասին՝ թե արդյոք կարողացա՞ն ազատվել։ Մտածում էր նույնպես՝ թե որտե՞ղ անցկացնի այս գիշեր, գուցե կարելի է մի ավելի ապահով տեղ գտնել։

Դուռը ծեծեցին։ Նա վեր թռավ, կարծելով, թե ոստիկանությունն է իր հետևից եկել, բայց տեսավ տանտիրուհուն։

— Էս ո՞ւր ես, ինչքան ժամանակ է, սպասում եմ. համեցեք մեզ մոտ, հյուրեր ունիմ։

— Շնորհակալ եմ. գլուխս ցավում է, չեմ կարող։

— Է՛, ջահել տղեն էլ կասի՞, թե գլուխս ցավում է... Արի, գնանք օրիորդների հետ ծանոթացնեմ։

— Շնորհակալ եմ,— նորից կրկնեց Փանյանը։

— Չէ՛, չէ՛, անպատճառ պետք է գաս։

— Լավ, մի քիչ կարգի բերեմ շորերս ու կգամ։

«Սա լավ առիթ է,— մտածեց Փանյանը, տանտիրուհու դուրս գնալուց հետո,— պետք է բուրժուական կյանքով ապրել, ռևոլյուցիոն գործունեությունը քողարկելու համար»։

Երբ նա ներս մտավ, դահլիճում արդեն հավաքվել էին հյուրերը։ Բոլորը հանկարծ լռեցին, հետաքրքիր հայացքները դարձնելով Փանյանի վրա։

Ուսանողի բնական շփոթությունը կրկնապատկվեց, երբ հյուրերի մեջ նկատեց տանտիրուհու քրոջ աղջկան։

— Խնդրեմ, ծանոթանաք,— ասաց տանտիրուհին,— քրոջս աղջիկն է, օրիորդ Նատալյան։

Փանյանը կարմրած մոտեցավ օրիորդին ու առանց նայելու նրա դեմքին, ձեռքը մեկնեց։ Ապա տանտիրուհին մոտ տարավ նրան փոքր հյուրերին ու ծանոթացրեց։

Երկու օրիորդ էին հրավիրել, սեռուկ ու տգեղ՝ օրիորդ Նատալյային «ֆոն» տալու համար, որպեսզի նա ավելի գեղեցիկ երևար։ Կային տիկիններ, գիմնազիստներ, մի զինվորական դպրոցի ուսանող ու տանտիրոջ խանութի գործակատարը։

Օրիորդ Նատալյան նստած էր մի առանձին, ձգված պոզայով, կարծես մի դեր էին հանձնել նրան և շարունակ կասկածում էր, կարո՞ղ է արդյոք կատարել այդ դերը։ Կարմիր մարմինը կորսետի մեջ ճնշվում էր, շնչառությունն արգելվում։ Շփոթությունից կարմրում էր ու քողարկում իր բնական դալկությունը։

Փանյանը նստեց աղատ աթոռներից մեկի վրա։ Դիմացի երկու տիկինները սկսեցին քշշալ, մեկ-մեկ հայացքը դարձնելով ուսանողի վրա։

«Երևի արտաքինս են բաշխատում,— մտածում էր Փանյանը,—

ի՞նչ հիմարություն արի, որ եկա, պարզ է, բերել են մեզ Նատալյայի հետ ծանոթացնելու և «գործը» սարքելու համար...»

— Ինչի՞ եք սուս կացել, ջահելներ չե՞ք. ինչ եղավ ձեր խաղը,— ասաց տանտիրուհին։

Գիմնազիստները վեր կացան ու շարունակեցին ընդհատված խաղը։ Նորից սկսվեց շարժումն ու աշխույժ ծիծաղը։ Փանյանը ինքն իրեն տիպելով մի կերպ մասնակցում էր, միօրինակ ժպիտը պահելով դեմքին։

Խաղերից հետո մի տիկին նստեց խանգարված պիանոյի մոտ ու սկսեց վալսի եղանակը։

Զույգերն սկսեցին պտտվել։ Օրիորդ Նատալյան սպասում էր, որ Փանյանը իրեն կառաջարկի պարել, բայց նա չմասնակցեց պարերին։

Երբ օրիորդ Նատալյան սկսեց պարել գիմնազիստներից մեկի հետ, Փանյանը դիտելով նրա կարճ, ճնշված հասակը, ներս ընկած վիզը, խղճահարվեց ու տխրեց, աղջկան ուզում են մի կերպ սաղացնել և չեն կասկածում, թե որքա՞ն հետու եմ ես փեսայի դերից...

Ընթրիքի ժամանակ առաջուց ծրագրված «զուգադիպությամբ» օրիորդ Նատալյան և Փանյանը իրար կողքի ընկան։ Թամադա ընտրվեց տանտիրուհու առաջարկությամբ իրենց գործակատարը, որին առանձին հրահանգներ էր տրված կենացների վերաբերմամբ։

Խոսակցությունը օրիորդի և Փանյանի մեջ չէր կապվում, որովհետև Նատալյան՝ վախենալով տգետ երևալուց, շարունակ «այո» կամ «ոչ» էր պատասխանում, իսկ ուսանողը մտազբաղ էր, դժվարությամբ էր նյութ գտնում խոսելու համար։ Հանախ նրա երևակայությունն անցնում էր նոր խաչմանված մոդոմին, պատկերացնում էր, թե ինչպես ընկերները դուրս են գալիս փողոց, դիտում են շորս կողմը... իսկ հետո, ո՞վ գիտե, ինչ...

Կենացները զույգ-զույգ էին առաջարկում և ամեն անգամ երգում էին սիրային ու ազգային երգեր։ Մի առանձին ոգևորությամբ և աղմուկով խմեցին օրիորդ Նատալյայի և Փանյանի «թանկագին» կենացները. բոլորը ցանկանում էին, որ «նրանք հասնեն իրենց մուրազին», ծաղկեն ու առաջադիմեն։

Ուսանողն քնկել էր տրագիկոմիկական դրության մեջ։

«Պետք է վերջ տալ այս հիմար դրության... Վաղվանից բոլոր թելերը կկտրեմ»,— ասում էր նա ինքն իրեն։

«Թանկագին կենացի» վրա օրիորդ Նատալյան խեղդվող ձայնով երգեց «Ջայն տուր ով ծովակ», վիզը ձգելով, ճիգ թափելով նա երգում էր, իսկ ուսանողը մտածում էր. հիանալի՞ պատկեր... Նատալյան իմ կինը կլինի...

Վերջապես հյուրերը վեր կացան։ Տիկինները հրաժեշտի ժամանակ հրավիրում էին Փանյանին իրենց տուն։

Երբ բոլորը գնացին, տանտիրուհին մոտեցավ ու ասաց Փանյանի ականջին.

— Հավանեցի՞ր։

— Ո՞ւմ։

— Օրիորդ Նատալյային... Որ գիտենաս, ինչ ոսկի աղջիկ է. սաղ քաղաքում սրա հատը չի գտնվի։

Փանյանը ծիծաղեց և շնորհակալություն հայտնելով, գնաց իր սենյակը։

* *
*

— Ո՛ւհ, վերջապես ազատվեցի կոմեդիայից,— ասաց ուսանողը, ձգվելով մահճակալի վրա։ Մտածում էր, թե ի՞նչ ձևով վերջ տա այս հարսնախոսությանը, որը հանաքից դանակի էր անցնում։ Սակայն հոգնածությունից նա չէր կարողանում մտածության թելը առաջ տանել և ասում էր. «Վաղը կմտածեմ»...

Աննկատելի կերպով նրա քունը եկավ, բայց մի քանի րոպեից հետո հանկարծ զարթնեց։

Մուտքի դռան զանգը պինդ քաշեցին։

«Գալիս են խուզարկելու»,— անցավ նրա մտքով, բայց տեղից չշարժվեց. ականջները լարած հետևում էր ձայներին։

Մի քանի րոպեից հետո դրսի դուռը ծեծեցին։ Լսվեցին ոտնաձայներ։ Սանր կոշիկներ էին, բայց զգույշ էին քայլում։

Ահա բարձրանում են պատշգամբը, մոտենում են իր սենյակին...

Հանկարծ կոպիտ ձեռքով դուռը թխկթխկացրին։

— Ո՞վ է,— հարցրեց Փանյանը։

— Ոստիկանությունն է, բացեք։

Դուռը բացվելուն պես ներս խուժեց ժանդարմական սպան, և ոստիկանները շրջապատեցին ուսանողին ու սկսեցին խուզարկել նախ իրեն, հետո էլ սենյակը։ Քրքրեցին գրքերը, անկողինը, սպիտակեղենը։

Փանյանն իրեն համարում էր փորձված և զգույշ ռևոլյուցիոներ, բայց որքան եղավ զարմանքը, երբ հանկարծ գրքերից մեկի մեջ գտնվեց մի կասկածելի նամակ...

Խուզարկությունից հետո, երբ արձանագրություն էին կազմում, ներս կանչեցին տանտիրուհուն։ Երևում էր, նա չէր հասկանում գործի էությունը, որովհետև ոստիկաններից մեկը հանգստացնելու նպատակով ասել էր նրան, թե Փանյանին վկա են կանչում մի գործի համար։

Երբ ամեն ինչ վերջացավ, Փանյանը հանձնեց իրեղենները տանտիրուհուն, ասելով, թե ինքը գնալու է, և կկարգադրի, որ գան վերցնեն։

— Քա, գնո՞ւմ ես... էլ չես գալո՞ւ... Բա Նատալյա՞ն... հարսնացո՞ւն...

Նա այնքան միամտորեն ասաց այդ, որ ուսանողը չկարողացավ ժպիտը պահել։ Նա ոչինչ չպատասխանեց, միայն ասաց մտքում. «Իմը կարմիր հարսնացուն է»...

— Խնդրեմ չխոսել,— հրամայական տոնով ասաց ժանդարմական սպան։

Փանյանին տարան բանտ։

1927

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՌԱՎՈՏԸ

Կարմիր զորքերը մոտենում էին, գրավելով կայարան առ կայարան, ու քանի մոտենում էին, այնքան ավելի էր ճեղքվում քաղաքի տրամադրությունը։ Կյանքը բևեռվել էր երկու ծայրերում. մի մի տեղ, քաղքենիների շրջանում, կարմիրների ամեն մի նվաճում բերում էր իր հետ մղձավանջ, սև գիշեր, իսկ մյուս ծայրում, բանտում այդ լուրերն ընդունվում էին ցնծագին խանդավառությամբ. այստեղ գալիք ազատությունը շաղկապվում էր վարդագույն արշալույսի հետ...

* *
*

... Գիշեր էր, ցուրտ ու խավար։ Բանտի կծու հոտերով լցված մթնոլորտի մեջ, սառը գետնի վրա պառկած էին բանտարկյալները։ Աղոտ ու պղտոր լույսի տակ երևում էին ցրտից կծկված մարմինների շարքերը։

Օրվա լուրերը հուզիչ էին. կարմիրներն արդեն մոտեցել էին նախավերջին կայարանին։ Վաղ առավոտից, բանտը մեղվանոցի նման բզզում էր, արձագանքելով դրսից եկող այդ լուրերին։ Այժմ էլ, ուշ գիշերին, բանտարկյալները քնած երազում էին ցնցող ուրախության թևերի տակ։ Մթայն անկյունում մի խումբ մարդիկ դեռ արթուն քչփչում էին, քննում մոտալուտ իշխանության՝ ռևկոմի կազմը։

Կեսգիշերը վաղուց էր անցել, երբ հանկարծ զրնգալեն բացվեց բանտի դուռը և մի դաժան, թավ ձայն գոչեց, ձգելով.

— Վրստա՜տ... (ֆանգնե՜լ)։

Բոլորը ոտքի են կանգնում ցնցված, ու բոլորի մեջ խայթող ցրտի սարսուռի հետ ներս է սպրդում մի մռայլ միտք՝ «եկել են գնդակահարելու»...

Կանգնում են երկու շարքով ու սպասում. բոպենները դիտմամբ ձգում են ահաբեկելու համար։ Գաղտնի բաժնի պետը իր երկու պահապանների հետ նայում են, շանթում բանտարկյալներին մոլեգին աչքերով։

Ապա սկսում են կարդալ ազգանունները ձայնի կոշտ, հրամայական շեշտով ու տեղ-տեղ կանգ առնելով՝ նշաններ դնում ցուցակի մեջ։

Գաղտնի բաժնի պետը դուրս է կանչում իր ընտրած երկու բանտարկյալներին, ապա ձեռքով նշան անում, որպեսզի մնացածները ցրվեն իրենց տեղերը։

Երկու զոհերը շտապով հավաքում են իրերը ու արագ շշուկով խոսում շրջապատող ընկերների հետ։ Տանում են գնդակահարելու։ — անցնում է շշուկը մեկից մյուսին... մահվան դաժանությունը կասեցնում է խոսքերը... սեղմում են ձեռքերը, համբուրվում խորը հրաժեշտով։

— Մնա՞ք բարով, ընկերներ, մենք էլ չենք գառնալու,— ասում են նրանք ու բաժանվում։

Հանկարծ Վոլոդյան, որն ամենափոքրն էր ընկերների մեջ, բղավում է հիստերիկ ձայնով.

— Դահիճնե՞ր...

Գաղտնի բաժնի պետը ետ է դառնում, կանգնում խմբված բանտարկյալների դիմաց ու մռնչում, արյունոտ աչքերը չռելով.

— Ո՞վ ասաց։

Բոլորը լռում են։

Վոլոդյան ուզում է դուրս ընկնել, ասել՝ «ես եմ», բայց հետևից կանգնած ընկերները քաշում են փեշից, հասկացնելով, որ լռի։ Բոպեաչափ բաժնի պետն ու բանտարկյալները աչքերը հառած նայում են իրար, կարծես չափելով իրար ուժերը։

Պետը ձեռքը դնում է ատրճանակի պատյանի վրա, ձեռացնելով, թե ուզում է հանել։ Կատաղի վրեժը բռնկում է բանտարկյալներին. թվում է, թե մի փոքր ցնցում ևս՝ ահա բոլորը կհարձակվեն ու կխեղդեն նրան։

Ու կարծես զգալով այդ ահավոր բռնկումը, նա սթափվում է ու բավականանում միայն բոռալով.

— Մալչա՜տ... (լռե՜լ)։

Ապա մի քանի վայրկյան էլ կանգ է առնում և դուրս գնում գինվորական քայլերով։ Բոլորը զգում են, որ պետը ահից ստիպված նահանջի դիմեց ու հուզված շրջապատում են Վոլոդյային։

— Վոլոդյա՛,— դիմում է ընկերներից մեկը,— մի՞թե չես հասկանում, որ արանք մի պատճառ են փնտրում, որպեսզի բոլորիս գնդակահարեն։ Մենք չպետք է զուր տեղը նոր զոհեր տանք, չէ՞ որ մեր ընկերները շուտով կմտնեն քաղաք...

— Չե՛մ կարող համբերել, հասկանո՞ւմ ես, չեմ կարող,— ասում է Վոլոդյան, բռունցքները ցնցելով։

Քունը փախչում է բոլորից։ Հուզված ջղերը երկար ժամանակ չեն հանգստանում։ Բայց, գալիս է պահապանն ու պահանջում, որ գնան իրենց տեղերը։

Նորից պառկում են ու ցածր ձայնով խոսում, ծխելով հասարակ, կոշտ թութունը։ Խոսում են իրենց երկու ընկերների մասին... Նրանց արտերում հնչում են վերջին հրաժեշտի խոսքերը.

— Մնա՞ք բարով, ընկերներ, մենք էլ չենք գառնալու...

Գիշերն անցնում է անհանգիստ. կայարանի կողմից լսվում են շոգեկառքերի խուճապային աուլացներ, ապա տիրում է խորհրդավոր լռություն...

Աշշալույսը ողջունում է բանտի պատուհաններից, ասես ժպտում է հազարավոր դեմքերով...

Վաղ առավոտից բանտի դուռը բացվում է ու էլ չի կողպվում... Պահապանը ներս է մտնում ու թարևում քծնելով. նրա դաժան, գորշ դեմքին այնքան է սազում ժպիտը, որքան ազատությունը՝ բանտին։

— Եթե ուզում եք, կարող եք դուրս գնալ,— առաջարկում է նա։

Բայց ոչ ոք չի դուրս գնում, չհավատալով Թշնամու առաջարկին. չէ՞ որ կարող են փախչողների տեղ դնել ու գնդակահարել...

Սկսվում են այն սպասողական, միջանկյալ մոմենտները, երբ հին կառավարությունը չքանում է, բայց նորը դեռ չկա. երբ քաղաքը զրկվում է իր իշխանությունից, իր դեմքից...

* * *

Ջանցած մի քառորդ ժամ, հանկարծ փողոցով ծիծեռնակի թևով թռչում է մի ձիավոր կարմիրբանակային ու կտրուկ կանգ առնելով բանտի առաջ, ներս է ընկնում գավիթը։ Նրան նկատում են բանտի պատուհաններից ու դուրս թափվում։ Բարձրանում է մի ցնծագին աղմուկ, մի աննկարագրելի ճիչ, որը դուրս է քաշում բանտից բոլորի՞ն, բոլորին...

Դուրս են թափվում հեղեղի նման, շրջապատում կարմիրբանակայինին, սեղմում են ձեռքը, փաթաթվում են ձիուն...

Կարմիրբանակայինը՝ շշմած այս անսպասելի պաշարումից, ամոթխած կարմրում է, ժպտում, կարծես զարմանում, թե մի՞թե ինքը կարող էր այդքան ուրախություն պատճառել...

Մի քանի րոպեից հետո նա հազիվ է կարողանում ազատվել ու շարժվում է դեպի դուրս՝ իր հետ շարժելով բանտի ամբողջ բանակը։ Բոլորը կուտակվում են փողոցում։

Դեմքերը պայծառանում են մի ներքին լույսով. մի րոպեում մոռացվում են ամիսների տանջանքն ու զրկանքը. երեկվա օրը թվում է վաղուց անցած մի անախորժ երազ...

Մինչ ընկերները շարվում են երթի, քաղաքից գալիս է Վոլոդյայի քույրը, փաթաթվում է եղբորն ու համբուրում ուրախության արցունքներով...

— Ընկերները գնդակահարված են...— հայտնում է նա տխուր ձայնով։ Լուրը տարածվում է շարքերում ու վառում ցասումով։

— Սրիկանե՞ր... դահիճնե՞ր...— գոչում են շորս կողմից։

Վոլոդյան դարձնում է երեսը դեպի բանտն ու ասում արտասվախառն ձայնով.

— Մնա՞ք բարով, զոհված ընկերներ, մենք ձեզ չենք մոռանա՞ ներքեք։

Փողոցը լցվում է մարդկանցով, շարքերի ծայրը կորչում է հեռվում։ Հնչում է Ինտերնացիոնալը ու հետզհետե ծավալվում հարյուրավոր ձայներով։ Իսկ բանտի շենքը մնում է հետևում, որպես շատ հին, բորբոսնած անցյալ...

Երթը շարժվում է...

Սկսվում է սովետական առաջին օրը...

1932

ԸՆԿԵՐ ՄՈՒԿՈՒԶԸ

1

Ամեն՝ինչ փոխվում էր, բացի Մուկուչից։

Տասը տարի էր, ինչ նա պահապան էր կաշվի գործարանում։ Այդ միջոցին պետական կարգերը երկու անգամ հեղաշրջվել էին, գործարանի գլխով հինգ կառավարիչ էր անցել, բայց դժվար թե մեկն ու մեկը նկատեր Մուկուչի վրա որևէ փոփոխություն։ Եվ ում էլ հարցնեիր, այն էր ասում, թե աչքը բաց է արել, տեսել Մուկուչին նույն հագուստով և նույն տեղը։

Ամեն նորեկ կառավարիչ նկատում էր Մուկուչին առաջին օրը՝ գործարանն ընդունելու ժամանակ, երբ անհրաժեշտ էր լինում այցելելու նրա ամեն մի անկյունը։ Եվ ամեն անգամ ընդունելու ձեռնարկությունները վերջացնելուց հետո նոր կառավարիչը դիմում էր Մուկուչին այս խորհրդավոր խոսքերով.

— Հա՛, դու էլի շարունակիր գործդ, մինչև այդ մասին կարգադրություն կանեմ։

Սակայն այդ կարգադրությունը չէր լինում և Մուկուչը՝ որն իսկի չէր էլ հասկանում այդ ասածի իմաստը, շարունակում էր մնալ իր պաշտոնում։ Այնուհետև, ինչպես կարգն է՝ նա մոռացվում էր, կամ լավ է ասել՝ չէր նկատվում։ Կարճ ժամանակում նորեկ մարդու աչքն այնպես էր ընտելանում, որ Մուկուչին նայելիս թվում էր, թե նա էլ գործարանի սյուներից մեկն է, որ պիտի մնա ընդմիշտ և անփոփոխ։

Մուկուչի արտաքինն էլ կարծես խոսք էր տվել անփոփոխ մնալու։ Նա միջին տարիքում էր, այսինքն այն հասակում, երբ Մուկուչի նման մարդիկ առանձնապես երկար կանգ են առնում և սահող ժամանակից դուրս մնում։ Նրա մատ, կոշտ գծված թուխ դեմքը՝ իր լայնախիստ, հիմնավոր քթով ու անխնամ սև մորուքի մեջ թաղված, փքված տեսք ուներ։ Ինչի՞ց էր ուռած նրա դեմքը

քաղցածությունի՞ց, թե՞ շատ ննջելուց, ավելի ճիշտ՝ երկուսից էլ։ Անշարժ, խոշոր աչքերի մեջ միայն մոտիկից տեսնողը կնկատեր քարացած հոգսի ու թախծի արտահայտություն։

Ամառ-ձմեռ կտեսնեիք Մուկուչին նույն գորշ, կեղտի գույն հագուստի մեջ։ Թեպետ նրա կիսավերարկուն բարակ, գինվորական կտորներից էր հավաքած (որոնք վաղուց կորցրել էին նախնական գույնի հետքերը), բայց տակն այնքան լաթեր էր հագած, որ հեռվից Մուկուչը նմանում էր շարժվող պարկի։ Մաշված, սև մորթե փափախն ամբողջություն էր կազմում մազերի հետ, կարծես հենց գլխից բսած լիներ։

Բա՝ ամենից հետաքրքրականը Մուկուչի կոշիկներն էին, որոնց վրա արձանագրված էր կաշվի թանկության ողջ պատմությունը։ Նրանց հիմքը երբեմն կազմում էին մի զույգ ամերիկյան ծանր կոշիկներ, որոնք երկու մարդու ոտքերից անցնելով՝ ենթակ հասել էին Մուկուչին։ Կարկատանների թիվն այնքան շատ էր, որ կոշիկների հիմնական կաշին այլևս չէր նկատվում։ Եվ ինչո՞վ ասես չէին ամրացված կարկատանները՝ թելերով, մեխերով, երկաթալարերով։

Ճիշտ է, պիտի խոստովանել, ամեն կառավարիչ հենց գործարան մտնելու առաջին օրից նկատում էր այդ տարօրինակ հակասությունը, որ չնայած Մուկուչը կաշեգործարանի պահապան է, նրա կոշիկները ողբալի վիճակի մեջ են, ու կարգադրում էր՝ թեկուզ օրենքից դուրս նրան կաշի տալ կոշիկների համար։ Սակայն մի քանի օրից հետո Մուկուչը փոխանակում էր այդ կաշին ալյոսի հետ, ու իր հին կոշիկները շարունակում էին մնալ իրենց փտավոր դրության մեջ։

Ուղիղն ասած, Մուկուչն այնքան էլ չէր մտահոգվում այդ առիթով, լավ իմանալով, որ թեկուզ նոր կոշիկները կարել տար, մեկ է նորերը պիտի մաշվեին, ինչպես տվորաբար մաշվում է ամեն մի կոշիկ, իսկ հները՝ նա արդեն համոզված էր անմաշ, հավիտենական էին։

2

Առաջին անգամ տեսնելով Մուկուչին, կասեիք գաղթական է, բայց որ հարցնեիք, կասեր՝ փոքր հասակում հոր հետ գաղթել է այսինչ գյուղը, այնտեղից էլ այնինչ գյուղը, հետո էլ մի ուրիշ

գյուղ, իսկ թե որտեղի՞ց էր սկիզբն առել այդ թափառական հայը, մնում էր մշուշի մեջ։

Ասենք Մուկուչն այնքանով էր գաղթական, որ իր ամբողջ հարստությունը լաթերից կազմված անկողին էր ու մի մաշված պղինձ, և իր ամբողջ ունեցածը կարող էր հետը ման ածել։ Այս հանգամանքն էլ մտահոգություն չէր պատճառում Մուկուչին, քանի որ նա ապրում էր այն տարիներում, երբ ամբողջ հայ ազգը գաղթական էր դարձել։

— Դու ասա հաց լինի, թե չէ մնացածը զատարկ բան է,— կրկնում էր նա սովորաբար։

Իր ընտանիքը՝ կնոջն ու չորս երեխաներին, Մուկուչը տեղավորել էր գործարանին մոտիկ մի ավերակ տան մեջ. եթե այս անակնկալ հյուրերը չլինեին, այդ տունը գժվար թե մարդու երես տեսներ։ Պատշգամբի տանիքն աջ կողմից թեքվել էր ներքև, հետո կարծես փոշմանելով, հետադարձել էր փլվելը։

Երեխաները, որոնցից ամենամեծը յոթ տարեկան էր, ամբողջ օրը կատվի ձագերի նման մլավում էին։ Մուկուչը վաղուց էր ընտելացել այդ տարօրինակ լեզվին. դա հացի լեզուն էր...

— Հա՞ց,— այդ էր միաբար հնչում օր ու գիշեր Մուկուչի ընտանիքում։

Այդ էր պատճառը, որ ամեն անգամ պետական կարգերը փոխվելիս Մուկուչին հետաքրքրողը հացն էր լինում։ Օրական մի քանի անգամ սրան-նրան կհարցներ.

— Ազիզ ա՞, ասում են հացի փայերը պետք ա ավելացնեն։

Ո՞վ էր ասել, որտե՞ղ էին ասել, եթե կուզեք գուցե ոչ ոք էլ չէր ասել, այլ միայն Մուկուչի ջերմ ցանկությունն էր թելադրում այդ լուրը։

Երբ սովետական իշխանության օրով Մուկուչին գործարանի հացը բերող նշանակեցին, ուրախությունից նրա լուսկյաց լեզուն բացվեց, հենց իմանաս հացի փոքր փայերն ինքը պիտի վերցներ։ Էլ մարդ չմնաց, որին չասեր.

— Բանվորի հացը ես պիտի բերեմ։

Որ իմանաք ինչ եռանդով էր կատարում նա այդ պարտականությունը.... Հացի մեծ պարկն ուսին նա ոչ միայն չէր հոգնում, այլ հանգստանալ վայելում էր, կարծես մեկը խաղցնում էր նրա մեջքը։ Այնքան դուրեկան էր հացի մոտիկությունը, նրա տաքությունը,

նրա անուշ հոտը, որ նա կուզեր միշտ կպած լիներ այդ պարկին։ Երբեմն նույնիսկ երազանքի մեջ էր ընկնում. մտածում էր, թե հանկարծ իրեն են տալիս այն մեծ հացերից մեկն ու ասում.

— Մուկուչ, տար, քեֆ արա։

Բայց որ հացը բաժանվում էր ու պարկը դատարկվում, նրա երազներն էլ փախչում էին։ Այդ չափած-ձևած հացի փայից նրա ստամոքսը բան չէր հասկանում...

Իսկ այն օրերին, երբ հացն ուշանում էր, և Մուկուչը ստիպված էր լինում ժամերով սպասել պարենավորման բաժնում, նրա սիրտը սև ամպերով էր պատում. միշտ նրան թվում էր, թե էս է՝ կգան ու կասեն.

— Էլ հաց չկա, ինչ ուզում եք արեք։

Բայց հետո մտածում էր՝ չէ՞ որ բոլոր բանվորներն ու ծառայողները միասին են հաց ստանում. իհարկե, եթե միայն Մուկուչի նման խեղճերը լիներին, բանը բուրդ կլիներ, բայց դե որ մեջները կան կառավարիչն ու ուրիշ «աղա մարդիկ», այդ պատճառով հացը չեն կտրիլ...

Օրվա մեջ մի քանի անգամ Մուկուչը գնում էր տուն և ամեն գնալով թյուրիմացության մեջ էին ընկնում թե ինքը, թե իր կինը։ Մուկուչի քաղցած փորը թելադրում էր նրան, թե մի գուցե կինը բանջարեղեններից կերակուր է պատրաստել, իսկ կինն էլ իր կողմից կարծում էր, թե Մուկուչը մի տեղից հաց է ճարել՝ բերում է տուն։

Հիասթափումը բաց էր անում առանց այն էլ գազազած կնոջ բերանը, նա սկսում էր նորից զիլ ձայնով իր սովորական «հացի կռիվը».

— Գլո՞ւխ է բերել. աչքս լիս, դատարկ տուն է գալիս, էլ չի ասում երեխեք ունեմ...

Ձայնը հետզհետե ուժեղանում էր. Մուկուչի ականջները ցընցվում էին ծղրտոցից։ Չնայած նա մեծ համբերություն ուներ, բայց էլ չէր հանդուրժում.

— Ի՞նչ ես զուռնեդ սկսել... Դե հերիք է, մի էս խալխին էլ մտիկ է՞։

Ասում էր ու շտապում դեպի գործարան, բայց մինչև տեղ հասնելը նրան կարծես ուղեկցում էր իր կնոջ ականջները ծակող ձայնը։

8

Եկել էր սովետական իշխանությունը, ալեկոծել ամենքին, որն ուրախ էր, որն անիծում էր մտքում՝ հարստությունից, դիրքից զրկվելու պատճառով։ Նոր իշխանության առաջին օրերի խանդավառությունը, այն ոգևորված ճառերը, շարժվող կարմիրները Մուկուչին էլ գրավեցին. միտինգներին, ժողովներին նա էլ մի քանի անգամ մասնակցեց։ Կանգնում էր ամենահետին տեղը, լսում ճառերը. երբեմն թվում էր, թե ամեն ինչ հասկանում է,— չէ՞ որ խոսում էին իր նման խեղճերի իրավունքների մասին։

Բայց ահա անցնում էր մի քանի օր, հացը նեղում էր Մուկուչին. նրա մտքերը շփոթվում էին, ճառերը թվում անհասկանալի, ու նա սկսում էր նահանջել...

Հա՞ց, հաց... նա կուզեր բոլոր ձայները, բոլոր ճառերը հազար բերանով մի խոսք ասեին, և այդ խոսքը լիներ իրեն տանջող ու այրող հացը։

Եվ ահա Մուկուչի մտքում էլ իր հին հարցն էր միայն շարժվում ու ամեն խոսելիս առաջը գալիս.

— Ուղի՞ղ է, ասում են հացի փայերը պետք է ավելացնեն։

Ո՞վ էր ասել, ո՞ւմ էր ասել,— դարձյալ մնում էր անհայտ։

Այն մնացած բաները, որոնք հացից դուրս էին, այն քարոզն ու ճառերը Մուկուչը համարում էր «խոսք ու զրից»։ Այդպես զրույց են անում գյուղացիք՝ կիրակի օրերը կամ ձմեռվա երեկոները, երբ կուշտ ուտելուց հետո խոսում են հենց այնպես, քեֆի համար։ Իսկ քաղքցիք, որոնց Մուկուչը համարում էր «աղա մարդիկ», այդ զրույցը կարող էին անել ամեն ժամանակ։

Այդ «աղա մարդկանց» թվին էր դասում Մուկուչը բոլոր քաղաքի շորեր հագած ու գրի սև ու սպիտակը ջոկող մարդկանց, որոնց մեջ էր հաշվում և սովետական ծառայողներին։ Չնայած, որ հացը և ուրիշ մթերքները, նույնպես և ռոճիկներն իր ներկայությամբ էին բաժանում, բայց Մուկուչը միշտ այնպես էր կարծում, թե նրանք մի ուրիշ տեղից հաց էլ՝ «ամեն բան էլ» ստանում են։

— Սովին մեզ պես խեղճ մարդը կդիմանա. աղա մարդը ո՞նց կդիմանա,— ասում էր Մուկուչն ինքն իրեն։

Դե մանկությունից սկսած Մուկուչն այդպես է տեսել աշխարհիս կարգերը. իսկ այդ վաղուցվա բաները նրա մեջ այնպես պինդ են նստած, ինչպես այն անկոտրում ընկույզները, որոնց ինչքան էլ խփես՝ միջուկը չես հանիլ։

4

Միայն այդ հո չի՞, Մուկուչը շատ բան է տեսնում ու լսում. ինչքա՜ն է փոխվել աշխարհը, բարձրինը ցած է ընկել, ցածրինը՝ բարձրացել, բայց պետք է լավ իմանաք, որ ամեն բանի վրա Մուկուչն իր հանգի՝ «մուկուչավարի» էր նայում։

Ինչ խոսք, մտածում է նա. լավ է, որ հիմի ամենքն իրար քնկեր են ասում. Մուկուչը սիրում է այդ խոսքը. բայց ինչի՞ց է, որ բոլորն իրան «տնավարի» միայն Մուկուչ են ասում։ Ամենքը մոտովն անցնելիս կանչում են.

— Մուկուչ, քեֆդ ո՞նց է։

Իհարկե, Մուկուչը գանգատ չունի, գործարանում ամենքը հետը սիրով են վարվում, բայց թե որ կարգ է, պատիվ է, թող իրեն էլ «հընկեր» ասեն. թե չէ Մուկուչի տիրոջը պակասում է։

Հիմի ասում են խեղճերի, բանվորների իշխանություն է. բայց դե բանվոր էլ կա՝ բանվոր էլ, մինը հրեն նախագահ է, մյուսը՝ քարտուղար, մինը՝ բջիջ, մինը՝ տեղկոմ։ Հրեն Սերոբը ո՞նց է ոտը ձգում, կառավարչի հետ հավասար է ծած գալիս, Մուկուչի վրա էլ վերևից է մտիկ անում։ Ինչի՞ Մուկուչին էլ մի տեղ «գլխավոր» չեն նշանակում. ա՜յ, թե ուզում են, կարգն էսպես է,— թող մի մարդ նշանակեն, որ գա, ինչպես մայրը երեխանց հաց է բաժանում, այնպես էլ նա բաժանի՝ մեծությունն էլ, իրավունքներն էլ։ Թե չէ Մուկուչին բան չի հասնիլ, հարյուր տարի էլ որ անցնի, նա էլի կմնա առաջվա պես։

Մի ասեք, տեսնենք, ինչի՞ գործարանի սափրիչը միշտ Մուկուչին «ցանում է». ամեն անգամ, երբ նա ներս է մտնում սափրվելու, միշտ ասում է.

— Մուկուչ, դու լավ կանես՝ քիչ հետո գաս. էս հերթը որ պրծնեմ, կազատվեմ...

Այդպես, քանի անգամ Մուկուչը գնացել է սափրիչի մոտ ու էլի այդ խոսքերը լսելով, ետ է դարձել. վերջն էլ խռովել է ու էլ չի գնում։ Նրա մորուքը դարձել է ինչպես մի ավել, ամբողջ երեսը ծածկել է։ Մուկուչը լավ է իմանում, որ սափրիչը չի ուզում աշխատել իր նման հասարակ մարդու համար ու իր կոշտ մորուքի վրա ածելիներ մաշել։

Բայց դե Մուկուչը հո կույր չի՞, տեսնում է, ինչպես այդ «ժուլիկ» մարդը նոր առած ածելիները փոխում է իր սեփական հների հետ։ Գողանում է զոգնոցի ու երեսսրբիչի համար տված կտորներից, այն էլ՝ էս թանկ ու էրակ ժամանակը։ Մուկուչն իմանում է, որ այդ պոռշը-կտրած փուչ մարդը սովետական սափրիչ է դառել, որ իր գործերը դրստի, սարքը գազանա ու հետո իր համար չոկ արհեստանոց բաց անի։

Այդ բաները Մուկուչը գիտե, բայց չի ուզում վատամարդ լինել, իսկ եթե դատաստանն իրեն տան՝ ինքը գիտե, թե ինչ կանի այդ անիրավին։

... Ճիշտ որ, ամեն ինչ փոխվում էր բացի Մուկուչից...

Այս էլ Մուկուչի բախտից էր։

Եկել է մի նոր կառավարիչ, մի հատառ մարդ, կարճահասակ, նիհար, ակնոցն աչքերին։ Նախկին կառավարիչներին հակառակ՝ նա ոչ միայն միշտ նկատում է Մուկուչին, այլև համարյա ամեն օր նկատողություն է անում նրան։ Շարունակ դեսուդեն է վազում, մտնում, նայում է գործարանի բոլոր անկյունները։ Թե ինչ էր նրա միտքը, Մուկուչը չէր հասկանում։ Նա շշմել էր ու չէր իմանում ինչպե՞ս շարժվի, որ կառավարչին դուր գա։ Մի ամսվա վրա Մուկուչի հույսն արդեն կտրվել էր։ Նա այնպես էր մտածում, թե կառավարիչը վճռել էր իրեն հեռացնել և միայն մի պատճառ էր փնտրում։

Սակայն այս ծանր բեռն էլ կտաներ Մուկուչը, եթե մի դեպք չպատահեր, որը նրան տակնուվրա արավ,— մի առավոտ իմացվեց, որ գործարանի պահեստից մի մեծ կտրոց կաշի են գողացել։

Էլ ի՞նչ հարցնենք Մուկուչից. օրական քանի՞ անգամ նրան հարցուփորձ էր անում կառավարիչը. հետո միլիցիա էին տանում, էլի խոսացնում։ Ու ամեն անգամ Մուկուչը մի գլուխ էն էր տալիս կառավարչից, թե՝

— Պահապան ես, ուրեմն մեղավոր ես։

Մուկուչը երկի՞նք, գետինք է անում, թե այդ գողությանը տեղյակ չէ, բայց ինչպես նկատում էր, չէին հավատում։ Գնում-գալիս էր գազազած կառավարիչը, էլի իր ձին էր քշում.

— Պահապան ես, ուրեմն մեղավոր ես։

Այս ցավերը բավական չէին. նրա կինն էլ մյուս կողմից էր

Մուկուչի սիրտը տակնուվրա անում։ «Մուկուչին բանտ պետք է տանեն»,— լսել էր նա հարևան կանանցից ու ամեն օր ծնկները թակելով՝ սուգ ու շիվան էր անում։

— Բա էսպես բան կըլի՞,— ասում էր նա,— որ մարդուս շառի մեջ գցեն, տուն-տեղով կորցնեն... Բա մի մարդ չկա՞, որ տիրություն անի, էս խաթից ազատի, բա չե՞ք տեսնում, որ մեջը թշնամություն կա...

— Ի՞նչ ես ճղճղոցդ վեր արել. մի իմ սրտին էլ մտիկ է՞,— ասում էր Մուկուչը, աշխատելով «տղամարդավարի» լռեցնել կնոջը, բայց նա էլի շարունակում էր իր սուգ ու շիվանը։

Նա լաց էր լինում, գլխին հավաքում հարևան կանանց. երեխաներն էլ նայում էին ու սարսափահար՝ սկսում մեկը մյուսից բարձր հեկեկալ։

* *
*

Օրը մթնում է, Մուկուչի սիրտն էլ նրա հետ։

Մտել է գործարանի գավթում գտնվող խոնավ դարբասը, որի դուռն ու պատուհանների փեղկերը չկային, նստել է մի քարի վրա ու գլուխը քարշ նայում է գետնին։

«Էհ,— մտածում է Մուկուչը,— բանս վերջացած է... բանտ կտանեն, բա ի՞նչ պիտի անեն... մթամ ո՞վ է իմ տերը... իմ գլուխը չհանեմը, ի՞նչ պիտի անեն երեխեքս...»

Ո՞վ պիտի գողանար այդ անիծած կաշին... բացի այն փուլ սափրիչից ուրիշ ո՞վ կարող էր անել... Աշխարհիս կուրությանը մտիկ՝ քանի օր է էդ անիրավը փսփսում է կառավարչի ականջին... դե պարզ բան է, Մուկուչից է խոսում, ինձ վրա է գցում գողությունը...

Օրը մթնում է, Մուկուչի սիրտն էլ նրա հետ...

Հանկարծ նրա ականջին պայթեց մի ձայն.

— Մուկուչ, էս ո՞ւր ես։

Մուկուչը վեր թռավ ու խարխափելով, առանց ձայն հանելու դուրս եկավ գավիթ։

Բանվոր Մարգարն էր։

— Ա՛յ տղա, որտե՞ղ ես. մի ժամ է ման եմ գալիս. դե ե՞կ հետս, գնանք։

«Սա էլ մի ուրիշ խաթա է,— մտածում է Մուկուչը,— դե էն է միանգամից սպանեն պրծնեն, էլ ո՞ւր են ժողովում, ուրիշների առաջ խայտառակ անում»—։ Հակառակի պես Մարգարը տանում է նստացնում Մուկուչին հենց առաջին շարքում,— դե պարզ բան է, ուզում են այնպես անեն, որ ամենքը լավ տեսնեն նրան ու մի լավ խայտառակեն։

Էս ինչքա՞ն մարդ է հավաքվել... բոլորն էլ բարկացած են... Ավելի լավ չի՞, որ Մուկուչը մեռնի, կորչի ու այսքան մարդկանց մեջ առակ չդառնա...

Տեսնում է Մուկուչը՝ բեմի վրա մեծ սեղան է դրած, կարմիր մահուդը վրան քաշած. շուրջը նստել են հինգ-վեց հոգի։ Մոտ մարդիկ են, բայց օտար են թվում։ Մինն ասի՝ նրանց ի՞նչ վատություն է արել Մուկուչը, որ այդպես խոժոռած երեսներով են նայում։

Վախը մի կողմից, ամոթը մյուս կողմից... Այս ի՞նչ կրակի մեջ է ընկել Մուկուչը. դարնան տաք եղանակ է, բայց նա սարսուռի մեջ է, այնպես է թվում, թե էս է՝ պիտի դողացնի...

Կողքին նստած բանվորները խոսում են, սիրտ են տալիս Մուկուչին, բայց նա ասես չի լսում՝ նրա միտքը շատ հեռու է...

Չէ՛, պրծած բան է... Մուկուչը կորած է... Ի՞նչ պիտի անի նա այսքան մարդկանց դեմ, որոնք բոլորն էլ լավ խոսում, հասկանում են. դե պարզ բան է՝ կառավարչին կպաշտպանեն. չէ՞ որ նա «աղա մարդ» է, իրա նման խեղճ ու կրակ չի... հրեն, ոնց է նստել ու ակնոցի տակից այնպես է մտիկ անում, կարծես ասում է՝ էդ բոլորդ որ կաք, իմ բռի մեջն եք...

Ի՞նչ պիտի ասի Մուկուչը, թե որ իրեն խոսացնեն, կասի՝ ես մի խեղճ մարդ եմ, ի՞նչ գիտեմ, գողացել են. իսկ թե ո՞վ է գողացել՝ երկինք, դետինք, չեմ իմանում...

Մուկուչի աչքին է ընկնում դիմացի պատին կպցրած Լենինի մեծ պատկերը։

«Ասում են լավ մարդ է,— մտածում է նա,— ա՜խ, թե էս տեղ լիներ՝ ինձ կօգներ... ես էս օրը չէի ընկնիլ...»

Զանգահարում են. ժողովն սկսվում է, ինչ-որ բաներ են ասում, որ Մուկուչը չի հասկանում։ Նա ուշքի է գալիս այն ժամանակ, երբ սկսում է խոսել բանվոր Սահակը. նրա ձայնը ամենքից

բարձր է, խոսելն էլ ամենքը հասկանում են։ Ինչ բարկացած է՝ ասես բերանից կրակ է թափում. երևի Մուկուչի վրա է բարկացել... Միայն զարմանալին այն է, որ, հրեն, «ընկեր Մուկուչ» ասաց... թե չարացած է Մուկուչի վրա, բա ինչի՞ է պատիվ անում՝ «հրամայեցեք» ասում։

Այդ դեռ բանվորական չէ, նրա ճառի ժամանակ կառավարիչը վեր-վեր է թռչում, ոնց որ մեխերի վրա լինի նստած, շուտ-շուտ մատ է բարձրացնում, մթամ ուզում է շուտով պատասխանի... Ու դեռ Սահակը փոսքը չվերջացրած դուրս է գնում ժողովից՝ մինչև ականջները կարմրած ու փնթփնթալով։ Բոլորը նայում են կառավարչին. իսկ Մուկուչի կողքին նստած բանվոր Սերգոն ասում է նրա ականջին։

— Հը, տեսա՞ր, Մուկուչ, ոնց հուշտ արինք քու կառավարչին. մեզ բանվոր կասեն, հա՞...

Չէ, էստեղ ուրիշ բան է երևում... էլի են խոսում, էլի «ընկեր Մուկուչ» են ասում. պարզ է՝ նրան գովում են. ասում են՝ Մուկուչը ոչ ցուրտ է հարցրել, ոչ քաղցածություն. միշտ իր գործի վրա ուշադիր կոգնած է էլել, ոնց որ մի զինվոր... թե կառավարիչը լավ կառավարիչ է, իսկի մի օր հարցրե՞լ է, թե Մուկուչը ո՞ւրտեղ է քնում գիշերը, ո՞նց է ապրում...

Էլ ի՞նչ կասկած... Մուկուչին օգնում են, պաշտպանում են... Նրա սրտի կապված թելերը բացվում են. հենց իմանաս սառած եղել է Մուկուչը ու հիմի տաքությունից ետ է գալիս։

Նա արդեն սկսել է տեղն անհանգիստ շարժումներ անել. լարված, շունչը պահած՝ լսում է ամենքին ու զարմանք բան. ամեն ինչ հասկանում է...

Մեկ էլ հանկարծ Մարգարը փեշից քաշում է։

— Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին,— նորից կրկնում է նախագահը։

Մարգարը մոտենում է Մուկուչի ականջին ու ասում.

— Մուկուչ, հիմի դու պիտի խոսես. ինչ որ ասելու ես՝ ասա, մի՛ քաշվիլ։

Մուկուչը վեր է կենում. մի քիչ սպասում է, որ շունչը տեղը բերի ու հետո ասում է ցածր, խանձված ձայնով։ Բոլորը լռում են և ուշադրությամբ լսում։

— Դե ես մի խեղճ մարդ եմ, բայց իմ նամուսը չեմ ծախել...

Ես էդ զողությանը տեղյակ չեմ... Միայն կասեմ՝ վատ մարդու ճանկ եմ ընկել... Դուք գիտեք ու ձեր խիղճը...

Ասում է, ծանր շնչով նստում։ Նախագահն էլի մի քանի խոսք է ասում, մի երկու մարդ էլ կարճ խոսում են ու ժողովը վերջանում է։ Բանվորները շրջապատում են Մուկուչին, ամեն կողմից սիրտ տալիս.

— Ընկեր Մուկուչ, քեզի լավ պահիր, հետևիցդ սարի պես կանգնած ենք։

Խոսում են, ձեռքերն ուսին դնում ու ամեն կողմից ընկեր կանչում...

Մուկուչը դուրս է գալիս փողոց։ Այնպես է սիրտը լցվել, հենց իմանաս էս աշխարհում չլինի։ Գնում է տուն, թե գործարան, ինքն էլ չի իմանում։ Էս ինչքա՞ն պաշտպան ունի։ Բա ինչո՞ւ մինչև հիմի գլխի չէր ընկնում... Ասես չորս կողմը հազար ձեռ է գալիս ու ամենքը մի բերան՝ «ընկեր Մուկուչ» են կանչում...

Այնպես է լցվել Մուկուչի սիրտը, որ ի՞նչ հաց, ի՞նչ նեղություն, նա թեկուզ կյանքն էլ տա, հոգը չէ։ Ասես մեծանում է, ածդահա դառնում, կոները լցվում են ուրյունով ու հպարտ-հպարտ կանչում է, իմաց անում բոլորին.

— Հե՛յ, լավ իմացեք սրանից դենը ես մենակ չեմ... Էլ ոչ մի բանից չեմ վախենում...

7

Անցել էր երեք տարի, երբ ես նորից վերադարձա իմ հայրենի քաղաքը։

Մի երեկո գնացել էի բանվորական ժողով, որը հրավիրված էր քաղաքական մի հարցի առթիվ։ Լսում էի խոսողներին ու միաժամանակ նայում չորս կողմը նստած բանվորներին և համեմատում մոտիկ անցյալի հետ։ Որքա՞ն բան էր փոխվել։

Երեք թե չորս հոգու խոսելուց հետո ականջիս հասավ նախագահի՝ բանվոր Սահակի, հուժկու ձայնը.

— Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին։

Թեմ ելավ մտքերը կարճ խուզած մի բանվոր, փոքր-ինչ կանգ առավ, ապա սկսեց խոսել այն զգացված տոնով, որ հատուկ է ակտիվիստի վրա սիրահարված բանվորին։

— Ընկերներ, քանի՞ տարի է, մեզ շրջապատել են, ուզում են

խեղդել, փորձեցին զոռով հաղթել, չեղավ, փորձեցին սովով հաղթել, չելավ... Թող լավ իմանան՝ էն ժամանակն անցել է, մեր միտքը, մեր աչքերը բացվել են. էլ սրանից դենը մեզ ոչ մի բան չի հաղթիլ...

Մափահարությունները թնդացին ամբողջ դահլիճում։

Խոսողի դեմքը կարծես ծանոթ լիներ. ուզում էի հարցնել կողքիս նստած բանվոր Մարգարին, բայց նա ինձ կանխեց։

— Գիտե՞ս, ով է էդ խոսողը,— ասաց նա.— մեր հայտնի Մուկուչն է։

— Ինչպե՞ս թե Մուկուչը. բա ո՞ւր գնացին նրա խուպան մորուքը, նրա փթանոց կոշիկները։

Մարգարը ծիծաղեց.

— Հենց բանն էլ այդ է... Մուկուչի կոշիկներն ու նրա հացի պարկը թանգարան ենք ուղարկել. մորուքն էլ, ինչպես տեսնում ես, ածելիի բերանն է ընկել. թե որ Մուկուչի կնիկը չլիներ, բեղերն էլ կածիլեր։

— Իսկ ինչպե՞ս վերջացավ այն գործը. միտս է՝ այն ժամանակ ինչ-որ գողության հարց կար...

— Բա ի՞նչ ես կարծում, մենք կթողնե՞նք, որ մեր Մուկուչի քեֆին դիպչեն. կառավարիչն էր գահլա տանում։ Նրան հեռացրինք, շատ էր հին կարգերի հետևից ընկնում... Գողությունն էլ մի ամսեն վրա բացվեց. այն անպիտան սափրիչն էր արել։ Հիմի Մուկուչին բանվոր են ընդունել։ Որ իմանաս՝ ի՞նչ սիրով է բանում, կասես քսան տարեկան լինի...

... Ես վերադառնում էի տուն մտքերով պաշարված։ Քայլում էի, վերհիշում անցյալը։ Մտածում էի, թե ինչպե՞ս փոխվեց մեր Մուկուչը... Ու ականջիս շարունակ հնչում էր Սահակի հուժկու ձայնը, նրա ասածը.

— Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին...

1924

ՕՂԱԿՈՒՄ

Ակումբի ընթերցարանում մնացել էին բանվոր Մադաթը և երկու կոմերիտականներ։

Մադաթը թիկնել էր աթոռին և հանգստացող աշխատավորի բարյացակամ ժպտով նայում էր երիտասարդներին։

Նավթահանքերում երկար տարիներ աշխատելուց հետո Մադաթի դեմքն իր շեկ մորուքով ծծվել էր գորշ գույնով ու տեղ-տեղ սևին էր տալիս մանրիկ բծերով։ Երբեմնի կապտավուն, վճիտ աչքերը պղտորվել էին, կոպերը կարմրել։

Նա նայում էր ու խորհրդածում, թե ժամանակը փոխվել է, ու սրանք էլ այնպես չեն ապրում, ինչպես ինքը և իր ընկերները տասնյակ տարիներ առաջ։

— Ընկեր Մադաթ, մի բան պատմիր անցյալից,— ասաց Ռուբենը։

— Ա՜յ ջահելներ, էդ որ անցյալից հարցնում եք, անցյալի դարդը իմանո՞ւմ եք։

—Ինչպես չէ, ընկեր Մադաթ, մենք շատ բարձր ենք գնահատում մեր հին ընկերներին,— ասաց Ռուբենը։

Մյուս ընկերը խորհրդավոր ժպտում էր, կարծես համաձայնվելով Մադաթի հետ։

— Հենց, օրինակի համար էս մեր Վաղոն,— շարունակեց Մադաթը, ձեռքը ուղղելով նրա կողմը,— նստել է փառավոր, ոտը ոտի վրա դրել, գազեթ է կարդում. իսկի մտածո՞ւմ է, որ առաջվա ժամանակը, եթե ժանդարմը էդ տեսակ գազեթի մի կտոր գտներ բանվորի մոտ, բանտում կփտացներ նրան. բայց հիմի որ Վաղոյին խոսացնես, կասի Մադաթը հին մարդ է, լավ չի հասկանում հարցերը...

Վաղոն լսելով խոսակցությունը, լրագիրը թողեց ու մոտեցավ Մադաթին։

— Չէ, ընկեր Մադաթ, քու անունը, ա՜յ, էստեղ եմ պահել,— ասաց նա, ձեռքը դնելով սրտի վրա։

Մադաթը ժպտաց։ Պարզ երևում էր, որ նա չէր նեղանում, կատակով էր խոսում։

Բոպեաչափ նայելով Վաղոյին, Մադաթը թեթև տխրեց։

— Քեզ որ տեսնում եմ, Վաղո, միտս է գալիս մեր հին ընկերներից մի լավ տղա, մի քիչ դու նրան նման ես տալիս. էնպե՞ս կուզեի, որ նա էլ մեր մեջ լիներ...

Տղաները զգալով, որ Մադաթը պատրաստվում է պատմելու, նստեցին նրա կողքին։

— Լավ միտս է,— շարունակեց Մադաթը,— աշունքվա վերջին էր, էն թոռ ու թացին, որ եկավ էն տղեն ու ծառայության մտավ մեր նավթահանքերում։ Նա նոր էր եկել գյուղից, իսկ ես

արդեն հինգ տարի էր, աշխատում էի։ Ջահել, հասակը տեղը, կրակոտ աչքերով տղա էր։ Ար տեսնում էի նրան նավթի ու ցեխի մեջ, սիրաս ցավում էր, ասում էի՝ ապահո՞ս տղա. դու էլ մեզ պես պետք է կյանքդ մաշես, նավթոտվես ու կերպարանքից ընկնես... էդպես մտքդ ափսոսում է, երբ տեսնում է տարից եկող թովան արջառներին, մտածում է, թե նրանք էլ ծանր բեռի տակ կընկնեն ու էն սիրուն տեսքը կկորցնեն...

Էս տղեն նկատի-չնկատի՝ ոնց որ թիսպի տակից արև դուրս եկավ մեզ համար։ Ուրախ էր, սրտաբաց ու համարձակ. Շատ լավ ձեն ուներ. մեկ էլ տեսար, մի երգ, մի բայաթի վեր քաշեց ու էնպես կլկլացրեց, որ սիրտդ հետը տարավ։ Իրիկունները կազարմում երգում էր, սաղ ածում, նազլներ պատմում, մեկ-մեկ էլ սկսում էր կառավարչին, ինժեներին ձանձրանալ. ծիծաղից թուլանում էինք, համ էլ թաքուն ականջին ասում.

— Մեր տղա, խելոք կաց, էստեղ լրտեսող մարդիկ կան, խաթի մեջ կգցեն քեզ։

Բայց նա վախենալ չէր, շատ անգամ հենց ճակատին կխփեր խոսքը, որ զարմանում էինք, թե որտեղի՞ց է էդ համարձակությունը։

Մեր ուսուցիչները ընկերները մեզ պաշտպանում էին նրանից, մտածում էին, թե մի օր էլ, երբ աչքերը կբացվեն, կմիանա մեզ հետ։

* *
*

Եկավ գարունը։ Դե մեր նավթահանքերում ի՞նչ գարուն. ցեխից ազատվում էինք, թոզի ճանկն ընկնում։

Հենց որ արևը մի քիչ բարձրացավ, երկինքը երեսը պարզեց, էս մեր Սամելը (էդպես էր նրա անունը) ափերի տաքացավ. միտն էր բերում իրանց կանաչ սարերն ու ասան ագրյուռները. երգում էր, հենց խմանաս երգով հարբում էր։

Նրա երգի պատճառով հաճախ կռիվ էր ընկնում կառավարչի հետ։ էդ կառավարիչը մի կոպիտ, հաստ կաշի մարդ էր, կարճ բոյով, պոչը կտրած վերարկվով, սապոգները հագին։ Ամեն անգամ նկատողություն էր անում Սամելին. բայց չէր կարողանում շատ ձենը բարձրացնի, քանի որ վախում էր մեզանից, տեսնում էր, որ մենք նրան պաշտպանում ենք։

Մի օր էլ էդ կառավարիչը գլուխը կորցրած սպասում էր ինժեներին։ Ինչ-որ գործիք էր փչացել, շատ էր վախում. դիտեր, որ ինժենները գա, շան լափը պետք է գլխին տա։ Հենց էդ ժամանակ էլ Սամելն իրան բայաթին էր վեր քաշել։ Կառավարիչը մի քանի անգամ գազազած գնաց եկավ, խնթեց Սամելին.

— Արա ձենդ կտրի, թե չէ վերջը վատ կլինի։

Սամելն էլ թե՝

— Վատը թող վատին լինի, ինչի՞ չպետք է երգեմ։

— Էս է ինժենները կգա քեզ դուրս կանի։

— Թե նա մարդ է՝ դրա համար չի դուրս անիլ։

— Դե սո՛ւս, զահլեա մի տանիլ, թե չէ ես ինքս դուրս կանեմ։

— Հետո որ դուրս անես, կմարսե՞ս...

Էդ ժամանակ մեր տղերքը մի քիչ ձեն ու ձուն արին, որ վախեցնեն կառավարչին։

— Արա, էդ ի՞նչ բան է... ի՞նչ է ուզում,— լսվում էին ամեն կողմից։

Կառավարիչը տեսավ, որ Սամելի քամակին մարդ կա, դուրս եկավ փնթփնթալով։

Մեկ էլ տեսանք, ինժենները եկավ ֆայտոնով։ Կառավարիչը նրա առաջն ընկավ, խռնարհ խոսքերով ուզում էր քաղցրացնի, բայց երևում էր, չէր հաջողվում։

Էդ ինժենները մի դաժան մարդ էր, մեծ, դուրս ցցված քթով, մանր, բզով ծակած աչքերով, երեսն էլ ոնց որ երկու տախտակի մեջ սեղմակացրած։ Ար Էրևում էր մեր աչքին, սրտերս սևանում էր։ Ինչքան էլ ամեն բան տեղը ըլեր, էլի նա պետք ա անպատճառ նկատողություն աներ, գոռգոռաց ու հայհոյեր։

Ֆայտոնից վեր եկավ, մի քիչ առաջ անցավ ու կանգնեց. ականջին ընկավ մեր Սամելի ձայնը, երեսը ծռմռեց ու վրա պրծավ կառավարչին.

— Դու էստեղ ինչացո՞ւ ես։

Կառավարիչը տրրթնեց։

— Չէ՛, մի առա տեսնենք, դու կառավարիչ ե՞ս, թե ժանգոտ երկաթի կտոր. դու գործին մտի՞կ ես անում։

— Մտիկ եմ անում։

— Բա էդ որ երգում է, չե՞ս լսում, մի գեսը կանչի տեսնեմ, ո՞վ է էդ քուռակը։

Կամավարիչը վազեվազ գնաց կանչեց։ Սամելը եկավ, առաջը կանգնեց։

Ինժեները մի խեթ նայեց Սամելին։

— Էստեղ թատրո՞ն է, որ բերանդ զուռնա ես շինել։

— Զուռնան քո բերանն է, որ էդպես անպատիվ բաներ ես ասում։

— Սո՛ս, ինչպե՞ս ես համարձակվում էդպես պատասխան տալ,— գոռգոռաց ինժեները։

— Դու մարդավարի հա՞րց ես տալիս, որ ես մարդավարի պատասխան տամ։

— Դո՛ւրս, դո՛ւրս կորի, քո ոտը չլինի էստեղ... պոլիցիա կանչեցեք...

Բայց էդ ժամանակ մեր տղերանցից մի քանիսը դուրս եկան նրա առաջը։ Մեզ տեսնելուն պես գույնը գցեց, փնթփնթաց ու գնաց. եթե մնար, բանը վատ կլիներ, շատ էինք դաղված նրանից։

— Ընկերնե՛ր,— ձեն տվեց բանվոր Դանիելը,— էլ համբերելու տեղ չի մնացել. թե որ բան է, մեր Սամելին հեռացնեն, մենք պիտք է նրան պաշտպանենք...

Սամելը զարմացած նայում էր. նա չէր սպասում, որ իրեն էդպես կպաշտպանեն։

— Սա՛մել,— ասացի ես,— պինդ կաց, քամակիդ կանգնած ենք։

— Ես էլ ձեզ հավատարիմ ընկեր,— ասաց նա,— որտեղ դուք, էնտեղ էլ ես։

Էդ դեպքից հետո Սամելի անունն ավելի վեր ելավ. բանվորներն ուրիշ աչքով էին նայում նրան։

Մենք մի լավ պարտիական ընկեր ունեինք—անունը Մուքել էր, նա որ առաջին անգամ տեսավ Սամելին, ասաց մեզ.

— Սրա մեջը բաներ կան, կամաց-կամաց առաջ քաշեցեք, սովորեցրեք։

Դրանից հետո մի շաբաթ էր, ամեն օր սպասում էինք, թե էս է, Սամելին կհեռացնեն գործից։ Հետո իմացանք, որ ինժեները հենց դեպքի օրը պահանջել էր Սամելին դուրս անել, բայց էդ ժամանակ հանքատերն ասել էր.

— Էդ գործը թողեք, ես ինքս կկարգադրեմ։

Իհարկե, մի ուրիշ ժամանակ հանքատերը մի րոպե էլ չէր պահիլ Սամելին, իսկ հիմա հանգամանքներն էնպես էին, որ վախենում էր գործադուլից։ Բայց նա էլ ուրիշ ճանապարհով էր բանը գրստում...

Մի երեկո տեսնենք, եկան ոստիկանները, հարցրին Սամելին։ Նրա բախտից էդ ժամանակ տանը չէր։ Խուզարկեցին առաջ նրա իրեղենները, հետո էլ անցան նրա կողքի բանվորներին։

Իսկույն գլխի ընկանք, որ Սամելին մատնել են։ Մեր ջահելներից մեկին ուղարկեցինք, որ իմաց անի։ Ասպարեցինք, թե «քեզ ուզում են ձերբակալել, գլուխդ ազատիր, գնա գյուղը, մինչև որ գործը կմոռացվի»։

Էդ աղեն գտել էր Սամելի տեղը ու իմաց արել։ Հենց էդ գիշերը նա գնացք էր նստել ու ճանապարհ ընկել դեպի իրենց գյուղը։

* *
*

Գարունքվա կանաչի էն անուշ ժամանակն էր։ Սամելը, որ գալիս է գյուղը, հերն ու մերը շատ են ուրախանում, բայց մի կողմից էլ անհանգստանում են, թե ինչի՞ էսպես շուտ վերադարձավ քաղաքից։ Սամելը հնարում է, թե արձակուրդ է առել, եկել է հորն ու մորը տեսնելու։

Նա օգնում է հորը, տան գործերը կարգի գցում, իսկ ազատ ժամանակը գյուղացիների հետ խոսք ու զրից անում։ Դու մի ասի, որտեղ նստում է, մեզանից լսած բաներն իրար կապում, քարոզում է։

Պատահել է, որ գյուղը պրոպագանդիստ ենք ուղարկել, նա էնքան բան չի կարողացել անի, ինչքան Սամելը։ Խոսելուս բաց չի թողել պրիստավին, իրենց գյուղի քյոխվին, կուլակներին...

Սամելի խոսածները մի քանի օրից հետո հասնում են պրիստավի ականջը ու նրա հանգստությունը խանգարում։ Հանաք հո չի՞— պրիստավի ռայոնում ռևլյուցիոներ էր լույս ընկել...

Իսկույն կարգադրում է քյոխվին, որ լավ հետևի էդ խառնակիչին՝ «բունտովչիկին» ու իրեն իմաց անի ամեն ինչ։ Ինքն էլ չի համբերում, մի օր գնում է Սամելանց գյուղը, որ անձամբ ծանոթանա «գործի» հետ։

Դե առաջվա ժամանակ պրիստավին գյուղում թագավորի նման էին ընդունում, քյոխվեն ու քեթխուդաները դիմավորում էին, նրա ձիու սանձը պահում, գլխովը պտիտ գալիս։ Երեսը շատ

խմելուց ուռած, բոլորն նման կարմրած, բեղերն ոլորած մեն էր գալիս ու ինչ ուզում էր, անում էր։

Օրը կիրակի է լինում, փողոցը լիքը գյուղացիներով։ Պրիստավը՝ շրջապատված կուլակներով, անցնում է փողոցով, չերքեզին հագին, դաղախի փափախը թեք դրած, հաստ մտրակը ձեռքին։ Գյուղացիները մեկ-մեկու հետևից վեր են կենում նստած տեղից ու գլուխ տալիս։

Սամելն էլ էդ ժամանակ գյուղացիների հետ նստած զրից անելիս է լինում։ Պրիստավը երևում է թե չէ, բոլորը վեր են կենում ու գլուխ տալիս, իսկ Սամելը մնում է իր տեղը նստած։

Քյոխվեն պրիստավի հետևից աչքով-ունքով է անում Սամելին, ձեռքով նշան տալիս, որ տեղից վեր կենա, բայց նա էլ ի՞նչ տղա էր, որ էդպես բաներին ուշք դարձներ... Մինչև անգամ իր կողքի գյուղացիներին ասում է.

— Արա, ի՞նչ հիմար ժողովուրդ եք, դրանք ո՞վքեր են, որ էդպես պատիվ եք տալիս։

Պրիստավը նկատում է, որ մեկը տեղից վեր չկացավ, պառկները կրծոտում է ու հերսոտում։

— Ո՞վ է էդ լիրբը, որ տեղից վեր չի կենում,— հարցնում է պրիստավը։

Քյոխվեն էլ փսփսում է պրիստավի ականջին.

— Էդ նստողը քաղաքից եկած էն տղեն է, որի մասին իմաց եմ արել ձեզ։

Պրիստավը մանրամասն հարցուփորձ է անում Սամելի մասին, տակն ու գլուխն իմանում, ու հրամայում քյոխվին, որ երբ լավ մթնի, գնա ու ձերբակալի նրան։

Սամելի բախտն էստեղ էլ է բանում։ Գզիրներից մեկն իրանց բարեկամն է լինում, էդ հրամանի մասին հայտնում է նրա հորը։ Լուրն առնելուն պես, Սամելն էլ ժամանակ չի կորցնում, նստում է ձին, թռչում երկաթուղու կայարան, էնտեղից էլ գալիս է նորից քաղաք։

Պրիստավը ընթրիքի է նստում գյուղի ամենահարուստ կուլակի տանը։ Քեֆի թունդ ժամանակը, երբ նա թագավորի կենացն է առաջարկում, ու էդ կենացի վրա ցանկանում, որ թագավորի թշնամիները կործանվեն, աչքով է անում քյոխվին ու կամաց ասում.

— Էն բանի ժամանակն է, գնա...

Քյոխվեն էլ գնում է տեսնում՝ ո՞չ Սամել կա, ո՞չ էլ ծնողներն

են իմանում, թե ո՞ւր է գնացել։ Հարցուփորձ են անում ու գալիս սևերես պրիստավի ականջին հայտնում, թե նապաստակը փախել է...

Դե հարբած մարդն ի՞նչ է իմանում, թե իրան ի՞նչ են ասում. ոչ մի կարգադրություն չի անում, և Սամելը ողջ-առողջ հասնում է քաղաք։

* *
*

Մի երեկո ժողով էինք արել մեր հայտնի ընկեր Մուքելի մոտ՝ մայիսի 1-ին ցույց կազմակերպելու համար։ Մեկ էլ տեսնենք, ներս ընկավ Սամելը։ Մուքելի կինն ուզեցել էր մի քիչ դուրսը պահի նրան, որ իմաց անի մարդուն (ո՞վ գիտե, կարելի է կասկածելի մարդ էր), բայց Սամելը չէր համբերել, ուղղակի մտել էր սենյակը։

Նա բոլորիս մի բարև տվեց և լուրջ մոտ գնաց Մուքելին, բռնեց նրա ձեռքից ու թափ տալով ասաց.

— Մուքել, թե ինձ սիրում ես, իմ անունը գրի պարտիայի մեջ։

Մուքելը ծիծաղեց.

— Ա՛ ջահել, շատ ես շտապում. մի նստիր, պատմիր տեսնենք, ի՞նչ է պատահել։

Սամելը սկսեց պատմել իր գլխին եկածը։

Մուքելը մորուքը բռնած ժպտում էր։

— Տեսնում ե՞ս, Սամել,— ասաց նա,— թե քաղաքումն ես, ասում են ռևոլյուցիոներ ես. թե գյուղն ես գնում, էլի են ասում, ինչպես երևում է, դու վերջը ռևոլյուցիոներ ես դառնալու...

— Հենց էդպես է, ասա ջուրն ընկի, կրակն ընկի, ես էլ կանեմ. միայն թե հիմի ինձ գրես պարտիայի մեջ։

— Դեռ սպասիր, ծանոթացիր մեր ծրագրի հետ, հետո կգրենք։

Սամելի երեսը ուրախությունից այրվում էր։

Դրանից հետո Սամելը սկսեց կանոնավոր հաճախել մեր հավաքույթներին ու կատարում էր իր ավագ ընկերների պատվերները։

* *
*

Եկավ մայիսի 1-ը։

Էդ օրը ցույց էինք կազմակերպել։ Բանվորները խումբ-խումբ ամեն կողմից եկան, հավաքվեցին նշանակված տեղը՝ մեծ հրա-

պարակը։ Կարմիր դրոշակը բարձրացրինք ու բանվորական մարսելյոզ երգելով շարժվեցինք առաջ...

Հանկարծ չորս կողմից թափվեցին ձիավոր կազակները, շրջապատեցին մեզ ու սկսեցին խփել թրերով։

Մենք անզեն էինք, նրանք զինված. ձեռք ընկած քարերով, փայտերով խփում էինք. կամ ծառս ելում, ձիաներից վեր գցում նրանց։

Ամենից տաք կռիվը դրոշակի մոտ էր. մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ. երբ մեկ էլ կազակները հարձակվեցին. ծանր վիրավորեցին դրոշակակիր բանվորին, Սամելը առաջ ընկավ ու քաշեց, ազատեց դրոշակը։ Բայց երկար չմնաց նրա հաղթությունը։ Կազակները նորից վրա տվին ու սպանեցին Սամելին...

Էսպես վերջացավ նրա ծաղիկ կյանքը...

... Տղաներն անշարժ նայում էին Մադաթին. նրա աչքերում արցունքներն էին փայլում...

1928

ԱՉՔԸ ՎԱԽԵՑԱՎ ՀԱՆԵՍԸ

Ամեն անգամ, երբ քաղաքից մի մարդ էր գալիս, լիներ դա կոոպերատիվի հրահանգիչ, կոմերիտների շրջիկ, նույնիսկ կին բաժնի վարիչ, միևնույն է, Հանեսը պիտի նրա առաջը ելներ, մեծ մասամբ գյուղից դուրս, որ մարդ չտեսնի ու միշտ նույն խնդիրը կրկներ.

— Հընկեր, խնդրում եմ ինձ օգնեք...

Աչքերը չռած, հևիհև, նա այնպիսի տեսք ուներ, կարծես հետևից վազում, հալածում էին, և շուտափույթ օգնություն էր աղերսում։

Քաղաքի մարդը կանգնեցնում էր ձին, ու Հանեսն սկսում էր իր վարելահողի պատմությունը.— էս բալշևիկի կառավարությունը որ եկավ, Սիմոնի արտը խլեց ու տվեց իրեն՝ Հանեսին։ Ու հիմի նա չի կարողանում տերություն անել արտին, օգտվել նրանից.— Սիմոնը կռիվ է գցում, չի թողնում մոտ գնալ... իսկ էդ Սիմոնը ամենահարուստ մարդն է գյուղում։

— Խնդրում եմ մի էնպես հրաման տաս, որ Սիմոնը վերջ տա, էլ կռիվ չգցի, ու արտն էլ ինձ վրա պինդ հաստատվի...

Նորեկը մնում էր շվարած, տեսնելով, որ գործը իրեն չի վերաբերում, բայց խորհուրդներ էր տալիս, թե ո՞ւմ պետք է դիմի, կամ նամակ էր գրում այս կամ այն պաշտոնյայի անունով և շարունակում իր ճանապարհը։ Սակայն Հանեսը գոհ չէր մնում ո՛չ տված խորհուրդներից և ո՛չ նամակից ու էլի շարունակում էր իր դիմումները ամեն մի քաղաքից եկողին։

Հանեսին այնպես էր թվում, թե ոչ ոք չի ուզում հասկանալ իր դարդը ու ամեն մեկը, որին նա դիմում է, միշտ աշխատում է գործը ձգել գյուղի մարդկանց վրա, փոխանակ իր ձեռքով վճռելու, կամ քաղաքից կարգադրելու։ Ոչ ոք չէր մտածում, թե էս Սիմոնը՝ գյուղի ամենահարուստ մարդը (որի մոտ Հանեսը երեք տարի նոքար է եղել). օրը ցերեկով իր արտը չի տալ գյուղի մարդու ասելով... էն էլ ո՞ւմ... ամենախեղճ, ձենը փորն ընկած մարդուն, որի ավելորդ անունը «աչքը վախեցած Հանես» էր...

* * *

Այդպես էր Հանեսի ավելորդ անունը, և զուր չէր կպել նրան այդ անունը։ Ասենք պիտի խոստովանել, Հանեսի վախը մի ուրիշ տեսակ էր,— նա չէր վախենում գազաններից, սատանաներից. նա վախենում էր «աղա-մարդկանցից»։ Դեռ մանկությունից պրիստավ, քյոխվա, չինովնիկ (աստիճանավոր) մարդկանց տեսնելիս նա փախչում էր, թաքնվում։ Մի անգամ, երբ Հանեսը դեռ յոթ տարեկան էր, քաղաքից եկել էր մի չինովնիկ մարդ, հետն էլ բերել էր իր փոքրիկ տղային։ Մի օր էլ սա մտրակ էր շինել ու վազվզում, խաղում էր։ Հանկարծ տեսավ Հանեսին, վազեց նրա կողմը։ Հանեսը վախից գլուխը կորցրած, սկսեց վազել, ու մի շնչում ընկավ իրենց տունը, դուռը չրխկացնելով։

— Ա՜յ տղա, ի՞նչ ես վազում,— հարցրեց հայրը։

— Էն աղի տղեն,— հազիվ կարողացավ ասել Հանեսը։

— Լավ, ի՞նչ կա վախելու...

Հանեսը գիտեր, որ հայրը չէր կարող պաշտպանել իրեն աղա-մարդուց. չէ՞ որ նա մի անգամ տեսավ, թե ինչպես մի կակարդավոր մարդ քյոխվի հետ միասին ծեծեցին իր հորը հարկահավաքի ժամանակ...

Դեռ 15 տարեկան էր Հանեսը, երբ նրա հայրը մեռավ։ Թաղ-

ման օրը բարեկամ, հարևան, բոլորը, ասես խոսքը մեկ արած՝ տիրտ էին տալիս Հանեսին։

— Վախ՛ լ մի, Հանես, ղոչաղ էաց. ոչով չի կարող քեզ մի չոր ասի, սարի պես քամակիդ կանգնած ենք...

Բայց շատ չանցած՝ Հանեսը ուրիշ խոսքեր լսեց։ Էն տիրտ տվող հարևանը՝ Առաքելը, վարելու ժամանակ Հանեսի արտից մեջ գցեց, զավթեց բավական տեղ, ու երբ Հանեսի մայրը գնաց, որ առաջն առնի, հարևանը կատաղած գոռաց.

— Գնա, թե չէ հենց կտամ, մարդուդ տեղը կընկնես։

Մի ազգական էլ մյուս արտը վերցրեց, խոստանալով կիսովի վարել, բայց կեսի տեղ մի քառորդը տվեց, իսկ հետևյալ տարին այդ էլ չտվեց, ու արտը մնաց նրա ձեռքին։

Մայրը փորձեց գանգատվել, բայց շուտով համոզվեց, որ վանգն ավելի է մեծանում,— դեռ գանգատը չվերջացած, գողացան նրա միակ կովը. բոլորը գիտեին, որ այդ գողությունը գանգատի վրեժն էր։ Ու մայրը լռեց, սարսափած ուժեղների շառից։ Երբ պատանի Հանեսը խոսում էր դրա մասին, մայրը միշտ լռեցնում էր.

— Որդի, սուս կաց, էն զորքաների հետ չենք կարող կռվել. տնով տեղով ջուր կմաղվենք, մինչև վերջին թիքեն էլ կխլեն, լավն էն է սուսուփուս ապրենք. մի կտոր հաց կճարենք. գնա նոքար մտի, հնազանդ աշխատի, մինչև որ կմեծանաս, հետո տեսնենք, կարելի է մի դուռը բացվի։

Հանեսը նոքար մտավ, ու իր բախտի պակասը լրացավ։ Աշխատում էր գիշեր-ցերեկ ու քանի շատ էր աշխատում, այնքան ավելի էին հայհոյում, ծաղրում ու ծեծում։ Օր-օրի վրա նա խեղճացավ։ Մի վախ իջավ նրա վրա, ձայնը փորն ընկավ։

Երբ մի քանի տարուց հետո Հանեսի մայրը մեռավ, նա ավելի խեղճացավ։ Ամեն մի ուժեղ ձայն, ամեն մի խեթ հայացք նրան դող էր բերում։ Ու այդ ժամանակ էր, որ նրա անունը կպավ «աչքը վախեցած Հանես»։

Այժմ Հանեսն իրեն լավ էր զգում միայն գյուղից դուրս, հանդում, անտառում՝ տավարի ու ոչխարի հետ. նա ուրախ կլիներ, որ խակի չվերադառնար գյուղ, ուր մարդիկ փշի մացառների նման ճամփա չէին տալիս նրան։ Եթե տավարը պահելիս մեկ-երկու ընկեր էլ պատահում էր, նա մոռանում էր իր ցավերը։ Ամենից շատ նա մտերմացել էր իր ընկեր Սիրաքի հետ։ Սիրաքը պատմում էր

Հայաստանի ավազակների մասին, հետո երազում էին, թե ինչպես իրենք էլ ավազակ են դառնում, գալիս են իրենց գյուղը, բոլոր զորքաներին գերի են տանում։ Էդ տեսակ իգիթին թեկուզ սպանեն, ի՞նչ կա որ. դժվարը էս նոքարությունն է, էս հայհոյանքը, ծաղրը...

* *
*

Դեռ մինչև բոլշևիկների գալը գյուղում հաճախ խոսք էր ընկնում նրանց մասին։ Հանեսը չէր մասնակցում խոսակցությանը, վախենալով մի վտանգավոր բան թոցնել բերանից։ Բացի դրանից նա լավ գիտեր, որ թեկուզ իմաստուն խոսք ասեր, բանի տեղ չէին դնի, կծաղրեին, քանի որ ինքը աղքատ էր։

— Դո՞ւ էիր պակաս,— կասեր զորքաներից մեկը,— ի՞նչ ես հիմար-հիմար դուրս տալիս։

Դե, այդ խոսքին ի՞նչ պատասխան տար Հանեսը, կռիվ գցել չէր կարող,— կռվի համար «մեջը» է հարկավոր, իսկ ինքը մի խեղճ մարդ է։ Ճիշտ է, հիմա նա տուն էր դրել, կնիկ, երեխաներ ուներ, էլ նոքար չէր, բայց աղքատ էր, սովի ձեռքից չէր կարողանում ազատվել։

Մի անգամ միայն, էն ամենաշունչ սովի օրերին, երբ նորից խոսք ընկավ բոլշևիկների մասին. Հանեսն էլ չհամբերեց.

— Ա՜խ, մի գան, է՛,— ասաց նա սրտով,— մի գան էս անիծ բրավներից ազատեն։

Ասաց ու ինքն էլ զարմացավ, թե էդ ինչպե՞ս ասաց. շորջ կողմը նայեց, տեսավ, որ հավաքվածները իրա նման աղքատներ են. ունևորներից միայն երկու հոգի էին, նրանք էլ հեռու կանգնած, չլսեցին։

Հանեսը սրտից էր խոսում,— սովը եկել էր, երեխաները հաց էին կանչում, իսկ իր քարքարոտ արտից նա համարյա ոչինչ չէր ստացել, մյուս կողմից էլ պարտքի տակ տնքում էր։ Միտքը խառնվել էր, մի ճամփա չէր գտնում, որ ազատվի էս նեղությունից։ Դուրսը ինչ-որ կատարվում էր, Հանեսը դժվարությամբ էր գլխի ընկնում։ Պատերազմը, թագավորին գցելը, այս խառը բաները նրա համար ամպով ծածկված սարերի նման էին։ Միայն այն էր տեսնում, որ քանի գնում, սովը հաղթում էր, որ գյուղի ունևորները օր-օրի վրա ավելի էին ագահանում ու դեղեքում։ Այնքանը գիտեր Հանեսը, որ ատում էր նրանց, ատում էր մահից ավելի, ու թե

դատաստանն իրեն տային, ո՞վ գիտե, թե ինչ կաներ... Բայց նրա ձեռքից ի՞նչ կգար, չէ՞ որ նա խեղճ, անձեն մարդ էր...

Այսպիսի օրերին, երբ Հանեսը լսում էր բոլշևիկի մասին, այդ խոսելը մոռացնում էր նրա ցավերը։ Ինչ որ ասում էին նրանց մասին, վեր էր քաղում ու ինքն իրան մտածում, սպասում, անհամբեր սպասում, որ մի օր գան...

Այսպես խոսեցին-խոսեցին գյուղում, մեկ էլ տեսան՝ եկան... Մինչև Հանեսը կհասկանար, թե ի՞նչ է կատարվում, եկան, նրան էլ տեղահան արին, ժողովի կանչեցին։ Գնաց տեսավ, որ գյուղի աղքատները նստած՝ այնպես են խոսում, հենց իմանաս ամեն մեկը հիգ օրավար հող ունի ու չորս լուծ եզներ։ Ինքն էլ ուրախացավ, բայց միշտ զարմանում էր.

— Աղքատների իշխանություն... ո՞նց թե, բա աղքատների իշխանություն կլինի՞... նոքարը տիրոջը հավասա՞ր...

Այդ էլ դեռ ոչինչ, ամենից զորեղն այն էր, որ գյուղի ռևկոմը՝ քաղաքից եկած Բագրատի առաջարկությամբ վճռեց ամենաաղքատ գյուղացիներին հող տալ, խլելով հարուստների մասից։ Հանեսին ընկավ Սիմոնի արտը։ Այնքան զարմացավ Հանեսը, որ կասկածում էր՝ չլինի թե կատակ են անում։

Մինչև այսպես կասկածում էր, տեսավ մի օր էլ գութան, եզներ իրար հավաքեցին ու Հանեսի ներքևի արտը ուրիշների հետ վարեցին։

Այստեղ արդեն Հանեսը մտածեց.

— Դե, էլ ի՞նչ, էն է նոր օրենք է... օրենքի դեմ ո՞վ կարա խոսի...

* *
*

Հանեսի տված վարելահողը երկու կտոր էր, մեկը ճամփի տակը, մյուսը՝ վերևը։ Ներքևի մասը հենց սկզբից վարեցին ու ցանեցին, իսկ վերևինը թողած էր խոպան՝ աշունքավարի համար, և այժմ խոտի տեղ էր։ Հենց որ խոտը հասավ, Հանեսը գերանդին առավ ու գնաց հնձելու։

Խը՜շ-խը՜շ սկսեց հնձել ու քանի հնձում էր, այնքան ավելի ձեռները բացվում էին ու թափն ինքն էր տանում-բերում գերանդին։ Արդեն Հանեսը գործով տարվել, ինքն իրեն մոռացել էր, երբ հանկարծ ականջովն ընկավ Սիմոնի ձայնը.

— Դու էդ ո՞ւմ շունն ես, որ արտս հնձում ես։

Հանեսը ցնցվեց նրա ձայնից, կանգ առավ. նրան թվաց, թե ինքն էլի առաջվա նման նոքար է Սիմոնի մոտ, ու հիմի նա եկել է գործի ժամանակ, ճղճղում է, հայհոյում, ինչպես առաջ էր անում։

— Ես օրենքով եմ հնձում,— ասաց նա հազիվ լսելի ձայնով։

— Ի՞նչ օրենք, քիթդ ու պռունգդ որ ջարդեմ, էն ժամանակ կիմանաս, թե օրենքն ի՞նչ է։

— Օրենքը ընդունում չե՞ս, դե ես կգնամ նախագահին կկանչեմ, տենամ, ի՞նչ ջուղաբ կտաս նրան։

— Ջհաննամը գնաս. ինչ ուզում ես արա, ես իմ արտը քեզ չեմ տալ. էն որ ցանեցիր ներքևումը, էն էլ քթիցդ կհանեմ... Դուրս կորի, ասում եմ։

Հանեսը նկատեց, որ գալիս էր և Սիմոնի մեծ տղան՝ ձեռքին մի դագանակ։ Պարզ էր, եկել էին Հանեսին այնպիսի ջարդ տան, որ ձեռք քաշի այդ արտից։ Ուժը նրանց կողմն էր, երկու հոգու դեմ ի՞նչ կարող էր անել։

Ու գերանդին ուսին դնելով, Հանեսը շտապ քայլերով հեռացավ արտից։ Սիմոնի տղան ճամփեն ծռեց, որ նրա առաջը կտրի, բայց հայրը չթողնց։

— Թող գնա կորչի էդ շունը. ինքն է փախչում, էլ ո՞ւր ես գնում։

Հանեսը գնում էր, կատաղությունից արագ հևալով, հայհոյելով Սիմոնին։

Ուղղակի գնաց հեղկոմի նախագահի մոտ։

— Սիմոնը թողնում չի արտս հնձեմ։

— Գլուխը քարովն է տալիս։ Ինչի՞ չի թողնում։

— Կռիվ է գցում. եկել էին ինքն ու տղեն՝ փետերը ձեռներին, հիմի դո՛ւ գիդաս թե արտը ինձ է տված՝ հնձեմ, թե չէ, էա ի՞նչ բան է...

— Արա, մի գնացեք Սիմոնին կանչեցեք,— ասաց նա իր քարտուղարին։

Սիմոնը եկավ փնթփնթալով։

— Ինչի՞ չես թողնում, որ էս մարդը հնձի։

— Բա իմ արտը թողնեմ ուրիշը հնձի՞...

— Դու էդ խամ-խամ խոսելը թող, թե չէ կբանտարկեմ։

— Ջհաննամը, եկեք սաղ տուն-տեղս էլ տարեք, ձեզ ըլի...

Ասաց ու փնթփնթալով հեռացավ։

Հանեսը մյուս օրը գնաց, հնձեց արտը։ Էլ Սիմոնը չեկավ։ Բայց երբ խոտը լորացավ, Հանեսը հավաքեց, բլուրեց ու մինչև սայլ ու լծկան կգաներ, որ տուն տանի, մեկ էլ եկավ տեսավ, որ խոտը չկա...

Սիմոնը խոտը հավաքել տարել էր։ Էլի գործը հասավ նախագահին։ Այս անգամ Սիմոնին երեք օր բանտարկեցին, ստիպեցին, որ խոտը հետ տա, բայց Հանեսը միայն կեսի չափ ստացավ ու դրանով էլ բավականանալով, էլ չգանգատվեց։

Ահա այդ օրվանից սկսվեց Հանեսի արտի պատմությունը։

— Չէ,— ասում էր նա ինքն իրեն,— հաստատ օրենք չկա, որանից բան չի դուրս գալ։ Էն է, թե քաղաքից եկած մարդը մի բան անի, թե չէ էստեղի մարդուց օգուտ չկա։ Մեր գեղի մարդիկ միշտ ուրիշի ձեռին, ուրիշի խոսքին են մտիկ անում։ Օրինակի համար Հանեսը գնում է գանգատվում նախագահին, դե նա էլ աղքատներից է, ինչքան չլինի, մի քիչ քաշվում է Սիմոնից, կարելի է սրտումը մի քիչ էլ վախում է, մտածում է՝ ով է իմանում, ժամանակը ինչպես շուռ կգա... Ուղիղ է։ կարգադրություն անում է, բայց այնպես պինդ բան չի բռնում, որ միանգամից կտրցնի, ու Հանեսը հանգիստ վայելի իր արտը։ Չէ՛, հաստատ օրենք չկա...

Նա ոչ մի կերպ չէր հաշտվում այն մտքի հետ, թե իրենց գյուղացիք կարող են նոր իշխանություն կազմել, նա կուզեր, որ բոլոր իշխանավորները քաղաքից գային։ Թող դան, նստեն, միանգամից իրենց ձեռքով հաստատեն ամեն ինչը, թե չէ՝ մեր մարդը էլի հին օրենքով կանի, ամեն բան կփչացնի...

Ու դրանից էր, որ Հանեսը աչք բռնեց քաղաքի ճամփին։ Միշտ սպասում էր, թե մի մարդ կգա ու իրան ձեռքով գործը կվճռի, կհաստատի, այնպես պինդ կհաստատի իր վրա էն հողը, որ էլ հազար Սիմոններ գան, չեն կարող քանդել...

Այդ էր պատճառը, որ Հանեսը ամեն քաղաքից եկողի առաջ էր դուրս գալիս, իր արտի պատմությունն էր անում ու խնդրում կարգադրություն անել, որ Սիմոնն էլ կռիվ չգցի...

* * *

Քանի մոտենում էր վերևի արտի հնձելու ժամանակը, Հանեսն ավելի էր անհանգստանում։ Նա էլի շարունակում էր դիմումները ամեն մի քաղաքից եկած մարդու, բայց միշտ դժգոհ

էր մնում։ Մի նոր հույս էր բացվել Հանեսի համար. երկու շաբաթ առաջ ընտրել էին հեղկոմի նոր նախագահ, որը թեպետ տեղացի էր, բայց երկար ժամանակ եղել էր դուրսը՝ բոլշևիկի կռիվներում, նրանից օտարի հոտ էր գալիս և դրա պատճառով էլ նա Հանեսի արտին մոտ էր։ Բայց Հանեսը տատանվում էր, գանգատվի՞, թե՞ չէ.— վայ թե նա էլ ուրիշների նման կիսաբերան կարգադրություն անի։

Վերջապես, երբ արդեն արտը հասել էր, և էլ ուրիշ ելք չէր մնում, Հանեսը սրտապնդեց ու գնաց նախագահի մոտ։

Առավոտ էր. նախագահը մտրակը ձեռքին, պատրաստվում էր գնալու շրջանի կենտրոնը, երբ մոտեցավ Հանեսը։

— Հը, ի՞նչ կասես. Հանես։

— Սաղությունս, խնդրում եմ, ինձ օգնություն անես... կարելի է քեզ հայտնի է, կառավարությունը ինձ վրա նշանակել ա Սիմոնի արտը. հիմի էտ Սիմոնը չի թողնում, որ օգտվեմ, սրանից առաջ երկու անգամ կռիվ է գցել, հիմի էլ հնձի ժամանակն է, էլի կռիվ է ընկնելու. խնդրում եմ էնպես կարգադրություն անես, որ էտ Սիմոնը էլ մոտ չգա։

Նախագահը ժպտաց, մի աչքը կուչ ածելով.

— Էս ո՞ր օրն է, որ վախում ես, գնա հանգիստ հնձի, ոչով կարալ չի բան ասի։

— Ի՞նչ անեմ, մենակ մարդ եմ, նրանք երկու հոգով են գալիս, ասենք, թե եկան խփեցին, ի՞նչ պիտի անեմ։

— Ես քեզ ասում եմ՝ գալ չի. հիմի նա մի թաքուն տեղի է մտնի գալիս, որ մեղանից ծածկվի։

— Չէ, չէ, Երվանդ, նա էնպես կատաղած մարդ ա, հենց դուռ գալիս է փետը ձեռին, էլ օրենք-բան չի հարցնում։

— Ա՜յ տղա, դու ոնց որ տեսնում եմ՝ հանաք չես անում. բա չես ամաչում՝ էս օրվա օրը վախենո՞ւմ ես Սիմոնից։

— Երվանդ, դու Սիմոնին լավ չես ճանաչում. նա էս նոր բաները չի ընդունում. նա մենակ մի բան է իմանում, որ էտ արտը իրանն ա... խնդրում եմ էնպես սաստես, որ էլ կռիվ չգցի։

Նախագահը ժպտալով նայում էր Հանեսին։

— Հենց ես խնդրում, կասես խեղճ, անօգնական լինիս. էնդուր են անում որ չաչը վախեցած Հանես. ամոթ է. էլ մի խոսիլ. գնա հնձիր, թե Սիմոնը համարձակվի գա կռվելու՝ հենց գոռա վրեն, որ

ետ փախչի։ Աչքերդ բաց արա՝ հիմի աղքատների իշխանությունն է, նա պտի քեզանից վախի և ոչ թե դու, իմացա՞ր...

— Չէ, չէ, ես հաստատ գիտեմ, նա էդ բաներից քաշվողը չի. խնդրում եմ, մի բան արա, էդուց հնձելու եմ...

Նախագահի դեմքը լրջացավ, նա աչքը ավելի կուլ ածեց. կարծես մտածում էր, թե ի՞նչ պիտի անի։

— Դե, ես գնում եմ շրջանը. էլի ասում եմ, պինդ կաց, մի մտցիդ էլ չեն կարող դիպչիլ. իսկ եթե վախենում ես, քեզ մի գրություն կտամ, որ ապահով լինես։

Նախագահը նստեց սեղանի մոտ, վերցրեց այնտեղ դարսած հաստ, վարդագույն թղթի կտորներից մեկն ու դրեց խոշոր տառերով հեղկոմի որոշման մասին։ Ապա, վերջացնելով, վերկացավ տեղից։

— Էս թուղթը հետդ կտանես, թե որ բան է, Սիմոնը գա, կասես՝ նախագահը կարգադրել է, որ մոտ չգա արտին, թե չէ պատիժը մեծ կլինի... Իգիթի նման կկանգնես, կհայտնես, որ իմ հրամանով ես եկել... դե՛, գնա, ցույց տուր, որ տղամարդ ես, իմացա՞ր։

Հանեսը վերցրեց վարդագույն թուղթը, նայեց, հետո, աչքերը բարձրացնելով՝ դիտում էր նախագահի դեմքը, կարծես կասկածում էր նրա ասածների վրա։

— Ասում ես տանե՞մ,— հարցրեց։

— Ոնց որ քեզ ասի, էնպես արա, տղամարդ կաց, դե, մնաս բարով, ես գնում եմ։

Հանեսը ծոցը դրեց գրությունը ու գնաց տուն։ Գնում էր ու մտածում։

— Այ տղա, ո՞նց թե էս թուղթը... հանա՞ք է անում... բա էն կատաղած մարդուն էս թուղթն ի՞նչ պիտի անի... ի՞նչ ասեմ...— հանգստացնում էր ինքն իրեն Հանեսը,— կարելի է թե սրա մեջ մի զորություն կա, որ մարդը տվեց... դե, նախագահ է, հո հասարակ մարդ չի...

* * *

Առավոտը ծեգին Հանեսը վերկացավ, մի երկու բուռը ջուր տվեց երեսովը, մաշված աղլուխով սրբեց, հետո վերցրեց սեղանի թուղթը և ծոցը դրեց։ Կինը շորերը հագնելիս նկատեց այդ.

— Դու էլ զարմանք մարդ ես, շատ էլ նախագահը քեզ տալիս

է էդ թուղթը, բա դու ի՞նչ ես մտածում, էն զոռբա Սիմոնը գրանից կվախի՞...

— Դե մարդը նախագահ է, որ խոսք է տվել՝ հո իր խոսքը գետին չի գցիլ. էս թուղթն իրեն հրամանն է. նա իմանում է, որ զորություն ունի, թե չէ՝ ինչի՞ պետք է ինձ տար։

Հանեսը մի շոր հաց փաթաթեց աղլուխի մեջ, վերցրեց մանգաղն ու եղանը, ճամփա ընկավ դեպի արտը։

Գնում էր վարանոտ քայլերով, կարծես մեկը ետ էր քաշում, ու քանի գնում էր, ավելի էր սիրտը պղտորվում. ինչ ասես չէր անցնում նրա մտքով.

— Հիմի որ գա ինձ տա սպանի, հետո՞... Երեխեքս որբ կմնան, դոնեդուռ կընկնեն, ձեռիս էլ մի թվանքից-խանչալից չկա..

Հիմի ես հնձելու եմ գնո՞ւմ, թե՞ կռվի, էս ի՞նչ օր է... ավելի լավ չի՞ միանգամից տամ սպանեմ էդ շանը, ինչ ուզում են թող անեն, մի օր էլ մեռնելու չե՞նք, է՛հ, երեխանցս էլ մի ճար կլինի։

Հանկարծ հիշեց նախագահի խոսքերը՝ Իգիթի նման կկանգնես, ու սիրտ առավ։

— Ինչի՞ պիտի ես նրանից վախենամ, նա էլ ինձ նման մի մարդ չի՞, նա որ էդպես բարձր ճղճղում է, էդ էլ նրանից է, որ երես է առել առաջվանից, հիմի նրա ժամանակն անցել ա, հիմի ես պետք է բղավեմ։ Թե ինձ մի վնաս տա՝ ինքն էլ կպատասխանի... ինչի՞ց ես վախում...

Այսպես գնում էր Հանեսը, մեկ խեղճանում, մեկ սիրտ առնում, հիշելով նախագահի ասածները։ Վերջապես հասավ արտին։

Զով առավոտ էր. արտերից հաշանի դուրեկան բուրմունք էր գալիս։ Կանաչով եղերված արտն օրորվում էր քամուց։ Խորհրդավոր լռություն էր տիրում, կարծես ցողունի մեջ մարդիկ էին թաքնվել, տապ արել։

Հանեսը մի քանի քայլ առաջ անցավ արտի եղերքով, ապա խրեց գետին եղանը ու նրա ծայրին թելով կապեց նախագահի տված վարդագույն թուղթը։

Սկսեց հնձել։ Ծանր էր շարժվում ձեռքը, կարծես մի բան մանգաղի առաջն էր ընկնում։

Արևի առաջին շողքերը խփում են արտին ու հանկարծ աչքերը ծակող լույս է սփռում... Հեռվից լսվում են հնձվորների ձայները։ Հանեսը կանգնում է, մեջքը քիչ հանգստացնելու համար ու մտածում է.

Երևում է, էն անիծված Սիմոնը ձեռք է քաշել, էլ չի գալ. թե եկող էր, առաջուց կգար...

Բայց հենց ուզում էր կռանա, շարունակի հունձը, մեկ էլ հանկարծ մի ճղավոց լսեց, ասես մի բան տրաքվեց նրա ականջի մոտ։

— Արա, հա՛յ, ա՛յ շուն, էդ ո՞ւմ արտն ես հնձում, դուրս կորի, թե չէ վերջդ եկել է...

Հանեսը ցնցվեց այդ դաժան ձայնից. նրան թվաց, թե ինքը պապանձվեց. մի խոսք անգամ չի կարող ասել։ Բայց հանկարծ՝ որքան ուժ ուներ հավաքեց ու մի անորոշ ձայն հանեց, մի ճղավոց, ու գրանից սիրտ առավ։

— Դուրս կորի, ասում՝ եմ, թե չէ գալիս եմ ջարդեմ։

— Ի՞նչ ես գահլա տանում,— հանկարծ ծղրտաց Հանեսը, ավելի բարձր, քան ինքը սպասում էր,— տեսնո՞ւմ ես, էն եղանի վրա նախագահի թուղթն է՝ թե կարաս նրան պատասխան տուր... օրենքով եմ եկե՞լ, թե՞չէ...

Մի րոպե Սիմոնը վարանեց, աչքը դարձնելով դեպի եղանը, չլինի՞ թե նախագահն է հրամայել։ Բայց մեկ էլ որ նայեց Հանեսին, տեսավ նրա գզգզված շորերը, խճճված մորուքը ու խոր ընկած աչքերը, տեսավ նրա խեղճ նոքարի դեմքը ու էդ խեղճի ձեռքին մանգաղը, որով նա իր արտը հնձում էր, էլ չհամբերեց՝ «ո՞վ, էս ճիճուն իմ արտը խլի՞...»։

Ու արագ վազեց դեպի եղանը։

Նկատելով նրա շարժումը դեպի թուղթը, Հանեսը կատաղած թռավ ու հենց Սիմոնը ձեռքը մեկնեց, որ հանի գետնից եղանը, հանկարծակի մի ուժգին հարված տվեց իր մանգաղով նրա վզին, մի հարված, որ երբեք կյանքում չէր տվել։

Սիմոնն ընկավ գետին, ինչ-որ ձայն հանեց, մի քանի շարժումներ արավ ու մնաց անշարժ։ Արյունը երևաց վզին, հոսեց ներքև ու ներկեց գետինը։

Սպանեցի,— անցավ Հանեսի մտքովն բայց այդ միտքն էլ նրան չէր զարմացնում։ Այդ րոպեին նա գիտեր միայն մի բան, որ եթե Սիմոնը վեր կենա, նա նորից կխփի։

Բայց Սիմոնը չէր վեր կենում, չէր շարժվում նույնիսկ։

Հանկարծ հավաքվեցին գյուղացիները, կարծես մեկը նրանց կանչել էր, հավաքվեցին Սիմոնի շուրջը, շարժեցին նրան, գլուխը տմտմացրին։

— Հանես, ա՛յ քու տունը չքանդվի, էս ի՞նչ ես արել, բանը բանից անց է կացել...

— Հա՛, իմացե՛ք, ա՛յ խալխը, ես եմ սպանել,— ասաց Հանեսը մի չտեսնված ձայնով.— հա՛, սպանել եմ, ու թե վեր կենա, մին էլ կսպանեմ...

Ու կանգնել էր մի չտեսնված տրամադրությամբ, հենց իմանաս տարիների ծանր բեռը վերցրել էին վրայից,— տարիների տանջանքի, հայհոյանքի ու ծաղրի վրեժն էր միանգամից լուծել...

Կանգնել էր Հանեսն անշարժ, ինչպես մի զինվոր՝ պատրաստ ամեն վտանգի, իսկ նրա դիմաց եղանի վրայից նայում էր նախագահի վարչագույն թուղթը, թեթև քամուց տարուբերվելով...

1927

ԼՈՒՅՍԵՐԸ

Ամեն երեկո, երբ խավարը սև քուլաներով սփռվում է ձորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պայծառ ու զվարթ շարվում են լույսերը։ Շարվում են էլեկտրական լույսերն ու ժպտում ուրախ ցոլքերով, ասես կանչում են նայողներին դեպի ժամանակավոր շենքերը, ուր մինչև քնելը լսվում է բանվորների խոսք ու զրույցը, ծիծաղն ու երաժշտությունը։

Բայց ահա հետզհետե լռում են ձայները բանվորական տներում, ու համատարած լռության մեջ սկսում է իշխել գետի վշշոցը, կարծես գիշերները, օգտվելով խավարից, գետը թաքուն վարում է։

Երբեմն այդ միալար համերգը խանգարում է երկաթուղու շոգեկառքի անհանգիստ սուլոցը, որը կրկնվում է ձորում արձագանքելով ու հետզհետե հանգչում։ Երբեմն էլ մի մոլոր քամի է գալիս ձորն ի վեր, թեթև սուլում է ու պատեպատ ընկած ճամփա է փնտրում իր համար։

Իսկ ձորի եզրերին, հանդիպակ ժայռերի վրա ձգվում են, պառկում հսկա ստվերները, նայում շարաշուք աչքերով ներքևի լույսերին ու մեղամաղձ հոգով ականջ դնում գետի հին, միալար վշշոցին։

Գիշերվա այս հանգստյան ժամերին թունելներում անընդհատ եռում է աշխատանքը։ Այնտեղ, լեռան ներսը, ինչ-որ խորհրդավոր մարդիկ, իրենց վարված մկանները միացրած մեքենաներին, հա-

մառորեն պատռում են ժայռի կուրծքը, ուղի են բանում ջրի համար։

Գիշերվա այս ժամերին ձորալանջի կածաններով լույսեր են շարժվում, երբեմն խումբ-խումբ, երբեմն զատ-զատ։ Թունելի բանվորներն են դրանք, որ վերջացրած իրենց հերթը, վերադառնում են մոտակա գյուղերը։ Նրանք բոլորը լապտերներ ունեն ձեռներին՝ վտանգավոր նեղ կածանները լուսավորելու համար։ Խորհրդավոր են թափառող այդ լույսերը. նրանք մերթ ծածկվում են ժայռերի հետևում, մերթ նորից հայտնվում։ Ու թվում է հեռվից, թե մարդիկ չեն շարժվողները, այլ հսկա լուսատիտիկներ են թռչում օձապտույտ կածանների վրայով։

* * *

Այս գիշեր Ակոբն էլ լապտերը ձեռքին բարձրանում է ձորամտի կածանով։ Նա մենակ է, ինչ-որ գործով ուշացել է, ետ մնացել ընկերներից։

Ծանր է ճամփան, խորդուբորդ։ Ակոբի ոտները դիպչում են թափված քարերին, ընկնում են ջրի ու ցեխի մեջ, դեմ ընկնում ժայռերին։

Ծանր է վերելքը, բայց նա սովոր է, չի նկատում։ Նա քայլում է, մտածում օրվա դեպքերի շուրջը ու այս ու այն թփի, ժայռի նշանով, սովոր աչքերով հաշվում է իր անցած տարածությունը։ Երբեմն նա կանգ է առնում, շունչը ետ բերում, նայում ներքևի լույսերին։ Ու միշտ այդ լույսերից մի արտասովոր ուրախություն է գալիս Ակոբի մեջ, կարծես մի նոր, խանդավառ աշխարհ է այնտեղ, ուր ընկնողը մոռանում է իր անձնականը, իր առօրյան։

Բաքվից է եկել Ակոբը, եկել է այնպիսի եռանդով, ասես մի երկու օրում ուզում է վերջացնել ամբողջ հիդրոկայանը։ Թունելի աշխատանքից հետո հանգստյան ժամերին էլ նա գյուղում կոլխոզին է լծվում ու իր թափով վարակում բոլորին։

Կանգնում է Ակոբը ճամփին, շունչ առնում, նայում ներքևի լուսաշխարհին, մտածում է՝ ահա կանցնի մի երկու տարի, հիդրոկայանը կյանք կտա նոր գործարաններին, իսկ այնտեղ՝ ձորի լանջին, ժայռի վրա կբարձրանա Լենինի հսկա արձանը, ու աչքերը կդարձնի դեպի հեռուները...

Երբ Ակոբը մոտեցավ աղբյուրի ժայռին, հանկարծ ինչ-որ

շփթոց ընկավ ականջը,— կարծես մեկը կածանի մի կողմից մյուսն անցավ, հետևից շարժելով մանր քարերը։ Նա կանգ առավ, ականջ դրեց։ Լուռ էր չորս կողմը. ներքևից լսվում էր միայն գետի վշշոցը։

— Գուցե գայլ էր կամ թափառական շուն,— անցավ նրա մտքով, բայց իսկույն նրան ցնցեց մի ուրիշ ենթադրություն,— իսկ եթե թշնամիներից՝ գյուղի կուլակներից էր... չէ՞ որ ամեն օր նրանք սպառնում են կոլխոզի պատճառով...

Նա շարժվեց առաջ դանդաղ, զգույշ քայլերով. մտածում էր, թե ինչպե՞ս պիտի անզեն պաշտպանվի հարձակման դեպքում։ Բայց մինչև այդ մտածելը հանկարծ հետևից դուրս թափվեցին երկու հոգի ու հարձակվեցին նրա վրա։ Պայման էին դրել—լուռ մնալ, որ չճանաչվեն, բայց մեկը նրանցից չհամբերեց, կատաղած ձայն տվեց.

— Ա՜յ, ես քու եկած ճամփեն...

Մի ակնթարթում Ակոբը ետ դարձավ, նկատեց խանչալի փայլը, բայց նույն վայրկյանին մյուս հարձակվողը փայտի հարվածով փշրեց նրա լապտերը։ Ու սկսվեց կռիվը մթության մեջ։ Ակոբը վրա ընկավ, ձեռքերն արյունոտելով բռնեց խանչալից ու մի ուժեղ հարվածով գլորեց գետին իր դիմացինին։ Մյուս ախոյանը, նկատելով իր ընկերոջ անկումը, թողեց ու փախավ։

Ակոբը՝ ականջը ձայնի պահած, կանգ առավ մի քանի րոպե, որ թվաց մի երկար ժամ։ Ձայն-ծպտուն չկար։ Վերջապես համոզվելով, որ վտանգ չկա, նա շարունակեց իր ճամփան։ Հանկարծ ոտքի տակը զրնգացին ապակու կտորներ։ Նա խորը թախծով կանգնեց իր կոտրած լապտերի մոտ, կարծես հրաժեշտ էր տալիս մեռած ընկերոջ, ու վերցնելով լապտերի երկաթե կմախքը, առաջ ընկավ։

Հազիվ մի քանի քայլ արած, նա զգաց, որ արյունահոսությունն ուժեղանում է։ Վերքերը մժմղում էին, արյունը ջապկի մեջ ծծվում, սառչում էր։ Նստեց մի քարի վրա, հանեց շորերն ու պատառոտելով շապիկը մի կերպ կապկպեց վերքերը։ Երբ վեր կացավ տեղից, գլուխը պտտվում էր, թուլացած մարմինը հրաժարվում էր շարժվելուց։ Խարխափելով մթնում, շարունակ դեմ ընկնելով քարերին, թփերին, նա երկար շարշարանքից հետո ուժասպառ տուն հասավ։

* *
*

Մի փոքրիկ գյուղական տուն էր Ակոբի կացարանը, առջևը սրահ, ներսը երկու սենյակ՝ մխոտած առաստաղով։ Մի սենյակը լուսավորված էր հասարակ լամպի աղոտ լույսով։

Ակոբը թխկացրեց դուռը։ Ներսից մեկը շտապով մոտեցավ ու բացեց։

— Էս ինչի՞ ուշացար, Ակոբ։

— Գործ ունեի,— ասաց Ակոբը նվաղած ձայնով։

Մարգոն էր, իր նշանածը։ Նա առաջ ընկավ, վառեց լամպը Ակոբի սենյակում։

Հանկարծ լույսի մեջ նկատելով Ակոբի սփրթնած դեմքը, արյունոտ, կապկպած ձեռքերը, Մարգոն մնաց սարսափած։

— Ի՞նչ է պատահել, Ակոբ,— հարցրեց նա շնչասպառ, հազիվ կարողանալով արտասանել խոսքերը։

— Ոչի՛նչ։

— Չէ, Ակոբ, մի ծածկիլ,— ասաց Մարգոն, դողդոջուն ձայնով։

— Մի վախիլ, Մարգո... ճամփին վեր ընկա...

Մարգոն սկսեց հեկեկալ։

— Մարգո, ասում եմ մի վախիլ, էգուց էլի գործի կգնամ։

Աղմուկից զարթնեց մյուս սենյակում Մարգոյի մայրը. նա ներս եկավ ու տեսնելով իր աղջկան, ասաց.

— Մարգո, դու գնա քնի, ես Ակոբին մտիկ կանեմ։

— Էլ ի՞նչ քնեմ, մի տես, է՛, Ակոբն արյունլվա է էլել...

— Վա՛յ, աղջի, ի՞նչ ես ասում...

— Ոչինչ, մայրիկ, ուշ մի դարձնի, բան չկա,— հանգստացնում էր Ակոբը։

Մայրը մոտեցավ Ակոբին, տնտղեց վիրավոր տեղերը, ու ծնկները վերհատելով, մնաց շվարած։ Հետո հիշելով, որ մի բան պիտի անել, գնաց շտապով, խարխափելով, դես-դեն դիպչելով կրակ վառեց, ջուր դրեց՝ վերքերը լվանալու համար։ Ապա զարթնեցրեց իր տղային, Մարգոյի փոքր եղբորը, ու մի մահակ տալով ձեռքը՝ շներից պաշտպանվելու համար. ուղարկեց բուժքի հետևից։

Մինչդեռ մայրը՝ ուշքը կորցրած, փսփսում էր կրակի շուրջը, ստեպ-ստեպ ինքն իրեն խոսելով, Մարգոն ձգեց թախտի վրա

Ակոբի անկողինը, հետո նստեց կողքին ու քնքշորեն շոյում էր նրա ձեռքերը ու նայում աչքերին։

Մարգոյի եղբայրը վերադարձավ, դուռը շրխկալեն բացեց ու հայտնեց, որ բուժակը տանը չի,— նրան շտապ կանչել էին հարևան գյուղը։

Մարգոյի սիրտը ճմլվեց այս լուրից։ Դժբախտ պատահարից ճնշված՝ նա մի նոր աղետ էր համարում այս զուգադիպությունը։ Նա օգնեց մորը, լվաց տաք ջրով Ակոբի վերքերը, կապեց մաքուր փալասներով ու պառկեցրեց անկողնում, չկարողանալով զսպել իր արցունքները։

Նա շարունակ պատվում էր Ակոբի շուրջը,— մեկ վերմակն էր ուղղում, մեկ բարձը, նայում էր աչքերին, ականջ դնում շնչառությանը։ Ակոբը պառկած էր կիսարթուն. նա կսկծում էր վերքերի ցավից. խոժոռած դեմքը արտահայտում էր զսպված զայրույթ, խիտ, սև հոնքերը մոտեցել էին իրար, կնճռել ճակատը։ Երբեմն նա ցնցվում էր, բռունցքները սեղմում, և բացելով աչքերը, կարծես զարմացած նայում էր մոտը նստած Մարգոյին։

Երբ Ակոբը երկրորդ անգամ զարթնեց, Մարգոն խոնարհվեց նրա դեմքի վրա։

— Ակոբ, ուղիղն ասա, ո՞վ էր քեզ խփողը...

— Մարգո, քեզանից ի՞նչ թաքցնեմ—ինձ վրա հարձակվեցին երկու հոգի։

— Ո՞վքեր էին։

— Մթնում չիմացա՝ երեսները բաշլուղով ծածկել էին, միայն մեկի ձենը Սարոյենց Միկիչին նման ուվեց։ Ասենք դե ովքե՞ր պետք է լինեին—մեր գյուղի կուլակները, մեր կոլխոզի թշնամիները... Բայց ոչինչ, վրեժը կգա իր ժամանակին...

— Չէ, Ակոբ, էդ ավազակների հետ գլուխ մի դնիլ, կսպանեն...

— Ես նրանց դեմ սուր ու հրացանով չեմ դուրս գալ, ուրիշ զենքով կկռվեմ, նրանց աչքի փուշը մեր կոլխոզն է, ես էլ հենց դրան զոռ կտամ. դա նրանց ավելի կսպանի։

— Ես էլ քեզ կօգնեմ, Ակոբ, սիրտդ լավ պահի։

Ակոբը ժպտում է, մոռանալով ցավերը. նրան մեծ ուրախություն են պատճառում Մարգոյի խոսքերը։

Մարգոն էլ ուրախանում էր, որ Ակոբի ուշքը վրան է, որ երությունը շատ ծանր չէ, ու թաց աչքերով ժպտում էր նրա ժպտի

դիմաց, զգալով հոգեկան մի ջերմություն իր սիրած մարդուց, որի հետ պիտի մի երկու ամսից հետո ամուսնանար։

Նա երևակայում էր, թե ինչպես Ակոբի հետ գործի կմտնի, ինչպես դուրս կգա կխոսի ժողովներում, ինչ եռանդով կաշխատի...

* *
*

... Ակոբը քնած էր անհանգիստ, հաճախ շփոթվում էր, դեն ձգում վերմակը, ինչ-որ անկապ բառեր ասում։ Մարգոն շարունակ նստած էր նրա գլխավերևը և սրտի մորմոքով նա լսում էր Ակոբի զառանցանքն ու մռայլ մտքերի մեջ ընկնում. նրա ծանրանալու հետ ինքն էլ էր ծանրանում։

Ակոբն այրվում էր տենդից։ Նրան թվում էր, թե մահճակալի տակից վառում են իրեն, հետո իբր վառվում է տունը, ու ինքը դուրս է թռչում, ընկնում դաշտերը, սարերը... Անցնում է կանաչներով, սառնորակ աղբյուրների մոտով, բայց հենց մոտենում էր, որ խմի, ինչ-որ զինված մարդիկ հարձակվում են ու չեն թողնում...

Նա առաջ է գնում, հասնում է ձորին։ Նայում է ձորին ու զարմանում. դիմացը բարձրացել է մի հսկա արձան։ Արձան է կարծես, բայց միևնույն ժամանակ, և կենդանի մարդ,— Լենինն է իր առաջ, լույսով ողողված։ Նա խորաթափանց աչք է ածում չորս կողմը։

— Ընկերնե՞ր...— կանչում է նա։

Ձայնն արձագանքում է ձորում, անցնում է հեռո՞ւ, հեռու ու հասնում հազարավոր ընկերներին։ Ակոբը տեսնում է. ահա ձորում շարժվեցին հիդրոկայանի բանվորները՝ լապտերները ձեռքներին, ահա և ձորամտի կածանների երկայնքով ձգվեցին լույսի ժապավենները։ Ուր էլ նայում էր, որքան աչքը կտրում էր,— նույնիսկ աննշան շավիղների վրա երևում էին լապտերներն ու շարան-շարան գալիս դեպի Լենինը...

Նայում է Ակոբը լույսերին ու հանկարծ սթափվում,— չէ՞ որ ինքն էլ պիտի առնի լապտերն ու գնա ընկերների հետ... Չէ՞ որ Լենինը այս գիշեր զորատեսի է հրավիրել բանվորներին...

Շտապում է Ակոբը դեպի տուն՝ լապտերի հետևից, բայց ներս մտնելով տեսնում է կոտրած է լապտերը, մնացել է միայն երկաթե ցանցը... Դառնացած սրտով վերցնում է այդ մնացորդն ու գնում, մխանում շարքերին։

Քայլում է Ակոբը լուսավոր շարքի մեջ տխուր, գլխիկոր։ Թվում է նրան, թե բոլո՞ը, բոլորը իրեն են նայում, որ գնում է կոտրած, խավար լապտերով...

Բայց հանկարծ հնչում է նորից, ցնցում է ձայնը Լենինի.

— Ընկերնե՞ր...

Ու բոլորը կանգ են առնում տագնապահար։

— Ընկերներ...

Շարքերը ճեղքված են...

Լույսը մարած է մի տեղ...

Մթին է տալիս մի տեղ...

Իրարանցումը բռնկում է շարքերը,— ո՞վ է, ո՞վ է,— անցնում են հարցերը խռովահույզ ալիքներով,— Ակոբն է,— գալիս է պատասխանը հակառակ ալիքներով, ու խոսքը հասնում է Լենինին։

— Ընկեր Ակո՞բը...— հարցնում է նա,— ինչո՞ւ, ինչո՞ւ է խավար նրա լապտերը...

Ակոբը դուրս է գալիս շարքից ու գնում դեպի Լենինը,— ա՜խ, ինչպե՞ս նա պիտի կանգնի Լենինի պայծառ աչքերի տակ իր կոտրած, խավար լապտերով...

Մի պահ Ակոբի լեզուն կապվում է, մնում է լուռ, բայց երբ բարձրացնում է գլուխը, տեսնում է Լենինի դեմքը, նրա լայն սրտից ինքն էլ սիրտ է առնում...

— Ընկեր Լենին,— ասում է,— գիշերը տուն էի գնում գործից, ճամփին հարձակվեց դասակարգային թշնամին, վիրավորեց ինձ, կոտրեց լապտերս...

— Դասակարգային թշնամի՞ն...— դեմքը խոժոռում է Լենինը։

— Դասակարգային թշնամին...— անցնում է շշուկը երկար շարքերով։

Ու գալիս են ընկերները, կուտակվում Ակոբի շուրջը։ Այնքան շատ են լույսերը, այնպես այրում են Ակոբին... Զգում է նա՝ բոլոր լույսերն իրենն են ու էլ չի տանջվում կոտրած լապտերից...

Ու խոսում է Լենինը մի ուրիշ, հրեղեն լեզվով, որի նմանը չի լսել երբեք Ակոբը, խոսքերն ընկնում են գարնան թարմ որոտների նման ու ցնցում սրտերը...

... Զարթնում է Ակոբն ու զարմանքով նայում իր շուրջը... Չկա գիշերվան տեսիլը... Իր առաջ Մարգոն է ժպտում, ժպտում են պատուհանից արևի առաջին ճառագայթները... Չէ, իր վերքերը վտանգավոր չեն, նա դեռ կապրի ու կաշխատի...

* *
*

... Ամեն գիշեր, երբ խավարը սև քուլաներով սփռվում է ձորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պահակների նման շարվում են լույսերն ու ժպտում ուրախ ցոլքերով։

Գիշերվա այդ ժամերին ձորամտի լանջերին շարժվում են լապտերները, թունելի բանվորները։ Նրանց մեջ է դարձյալ Ակոբը՝ իր նոր լապտերը ձեռքին...

1930

ՓՈՒՇ ԱԲԵԼԸ

1

Եթե առաջներում հարցնեին, թե մեր գյուղում ինչ նշանավոր մարդ կա, նախ՝ կասեին Փուշ Աբելը։

Եվ ճիշտ որ, Փուշ Աբելի անունով լիքն էր մեր գյուղը, իսկ նրա այգին, նրա տունը մի-մի հեքիաթ էին մեզ համար։

Փուշ Աբելի դեմքը մի անգամ տեսնողը չէր կարող մոռանալ։ Նույնիսկ հանգիստ ժամանակ նա այնպիսի արտահայտություն ուներ, կարծես հերստոած մեկի հետ կռվում էր։ Աչքերն արյունակալած, բերանը կիսաբաց. երեսի կնճիռները դեպի ականջները ետ քաշած, նա հիշեցնում էր հարձակման պատրաստվող, մոռացող գամփռի։

Աբելի անուն տվողն անպատճառ պիտի հիշեր և նրա տունն ու այգին. ինչպես թուրն առանց պատյանի՝ դժվար էր երևակայել այս երրորդությունն իրարից բաժան։ Աբելի տունը գյուղի վերևն էր, առանձնացած ու շրջապատված բարձր ցանկապատով։ Ի՞նչ կար այդ ցանկապատի ներսը. մի սովորական գյուղական տուն, իր մառանով ու կողքի գոմով։ Բայց միշտ թվում էր, թե այնտեղ մի ուրիշ, չտեսնված տուն է, նրա բնակիչներն էլ խորհրդավոր մարդիկ են ու զբաղվում են ինչ-որ անհասկանալի գործերով։

Մի առանձին վախով էին անցնում գյուղացիք այդ տան մոտով. միշտ ահ կար, որ Աբելի սև, կատաղի գամփռը կարող էր բաց թողած լինել, իսկ նրա ձեռքից ազատվելու հնար չկար։

Տունը նայում էր դեպի լայն ձորը, որի երկու ափին փռված էին այգիները։ Մի քանի քայլ հեռանալով իր տնից, Աբելը կարող

էր պարզ տեսնել վերևից իր այգին, որն ամենախոշորն էր գյուղում և գրավել էր ամենալավ տեղը։

Աբելի այգին էլ նրա տան նման առանձնացած էր մյուսներից։ Որ կողմից մոտենայիր նրան, ձեր առաջ կցցվեր բարձր ու խիտ փշե ցանկապատը, որի սուր փշերը սպառնում էին մոտեցողին։ Գյուղում այդպիսի բարձր ցանկապատ ոչ ոք չուներ։

Ամբողջ տարին Աբելը իր ցանկապատի հոգսին էր, նույնիսկ ձմռան ամիսներին, երբ մյուս այգեստերերը մոռանում էին ցանկապատերի գոյությունը։ Այդ նրա հիվանդությունն էր. միշտ փշապատում էր ու չէր հագենում։ Գյուղացիք երբեմն սրախոսում էին, թե «Փուշ Աբելի ձեռքից որ գա, երկնքի կողմից էլ կփշապատի իր այգին...»։

Գյուղում պատմում էին, որ հենց այդ պատճառով էլ նրա անունը դրել էին Փուշ Աբել։

Այգին մի փոքր դուռն ուներ, որի բաց տեսնելը նույնքան հազվագյուտ էր, ինչպես բնության մի արտակարգ երևույթ։ Միայն այգեքաղին, երբ խաղողով լիքը կողովները դուրս էին բերում սայլի վրա բարձելու համար, գուցե հաջողվեր բոպեապես, գաղտագողի ներս նայել. բայց նայողը պիտի իսկույն հեռանար դռնից, որովհետև այդ հետաքրքրությունը թանկ կարող էր նստել։

Այգու ներսը մի տարօրինակ վայրենի խնամք էր նկատվում։ Ամեն մի վազի, ամեն մի ծառի վրա նկատվում էր Աբելի շորշոփը, ամեն ինչ, կարելի էր ասել՝ նման էր Աբելին։ Այնտեղ կային նեղ, ճնշող ծառուղիներ, մութ ու խոնավ անկյուններ, բազմաճյուղ ու խիտ տնկված վազեր ու ծառեր, որոնք իրենց ստվերներով խանգարում էին միմյանց։ Աբելն ագահությունից շատ ճյուղեր էր թողնում ու վազերը խտացնում, կարծելով թե դրանով ավելի արդյունք կստանա։

Նրա այգում խաղողն ամենից ուշ էր հասնում և մնում էր կանաչ, կիսաթթու։ Այնտեղ շատ կային ձմեռվա պինդ, ատամները կոտրող տանձեր, դառնահամ խնձորներ ու սերկևիլներ։

Համարյա ամբողջ տարին Աբելը չէր բաժանվում իր այգուց։ Երբ այգեքաղից հետո, երեխաներն ազատ շրջում էին բոլոր այգիներում, խաղողի մնացորդները փնտրելով, Աբելի այգին դարձյալ մնում էր անմատչելի նրանց համար։ Աբելը շարունակում էր հսկել նույն եռանդով, կարծես խաղողը նոր էր հասնում։

Ասում էին, որ նա այդպես պաշտպանում էր իր սեփակա-

նությունը մինչև ցուրտը ոսկորներն առնելը։ Նույնիսկ ձմեռը, երբ տաք օր էր լինում, նա չէր համբերում, գնում էր այգուն «ակը տալու», երբեմն ուշք չդարձնելով ցեխի վրա, որն ահագին ճոմբեր էր կուտակում նրա ոտքերի վրա։

Տաք ամիսներին նա գալիս էր այգին ամենից վաղ և վերադառնում ամենից ուշ, մթնով։ Շատերը չտեսնելով նրան վերադառնալիս, կարծում էին, թե նա գիշերն այգումն է անց կացնում, բայց այս ենթադրությունը սխալ էր. նա միայն խաղողի հասած ժամանակ էր գիշերում այգում։

Գյուղում ասում էին ծիծաղելով, թե Փուշ Աբելը չի մեռնելու, քանի որ չի կարող բաժանվել այգուց՝ կամ հետը պիտի տանի, կամ ինքը մնա նրա հետ...

* *
*

Ճնշող լռություն էր տիրում Աբելի այգու շուրջը։ Բայց բավական էր, որ ճամփով անցնողը մի փոքր կանգ առներ նրա ցանկապատի մոտ, իսկույն նրա ականջին կպայթեր մի զարզանդ ձայն։

— Էդ ո՞վ ես, ի՞նչ ես շինում էստեղ։

— Քեզ ի՞նչ, ես ճամփովն եմ գնում։

— Թե միտքդ ծուռ չի, ինչի՞ ես կանգնել։

— Ճամփեն էլ հո քոնը չի՞, դու քո այգուն մտիկ արա...

— Հայ շո՜ւն... շա՜ն...— վրա էր տալիս Փուշ Աբելը իր ամենաընտիր հայհոյանքները։ Երբեմն նրան ձայնակցում էր իր վիթխարի գամփռը, որի հաչոցը թնդանոթի ձայնի նման ցնցում էր լսողին։

Ահաբեկված անցորդը շտապում էր հեռանալ, հետզհետե արագացնելով քայլերն ու ինքն իրեն նախատելով, թե ինչո՞ւ խոսքի բռնվեց էդ «բայղուշ» մարդու հետ։

Աբելի մասին այն կարծիքը կար, թե նա սատանի նման երևվում է այնտեղ, որտեղ իսկի չես սպասում։ Երբեմն խաբվելով լռությունից, կարծելով թե Աբելը այգում չի, երեխաները դրսից քար էին նետում նրա ծիրանու կամ ընկուզենու փողոցը դուրս ընկած ճյուղերի վրա։ Բայց հանկարծ, կարծես գետնի տակից լույս էր ընկնում Փուշ Աբելը, գիշատիչ գազանի արագությամբ

հարձակվում երեխաների վրա, ծեծում ու հետո թողնում հեռանում։

Ավելի մեծ ահ էր ազդում, երբ նա բաց էր թողնում այգում կապած գամփռին. նրանից տղաներն ավելի էին վախենում, քան գայլից։

Սակայն տղաներն երբեմն վրեժը հանում էին Աբելից. նրանք երկու խմբի էին բաժանվում ու, առաջուց ապահովելով իրենց փախուստի տեղը, բարձր ձայնով կանչում էին իրար.

— Էհե՜յ... տնսա՞ր...

— Ո՞ւմ, ո՞ւմ...

— Փուշ Աբելին...

Աբելն իսկույն արձագանքում էր ճղճղոցով, բայց, ավա՜ղ, նա ոչինչ չէր կարող անել. տղաներն իսկույն թաքնվում էին մոտակա այգում։

Այս հանգամանքը սովորական էր. շրջակա այգիներում բանող գյուղացիները հաճախ իրար ձայն էին տալիս նույն ձևով։ Աբելի ավելորդ անունը դիպչում էր նրա ամենախոցելի կետին։ Եթե հնար լիներ, նա հազար գամփռ բաց կթողներ այդ հանդուգն մարդկանց գզելու համար։

2

Ձմեռվա ամիսներին, երբ Փուշ Աբելն իր այգին չէր գնում, նրա տունը դառնում էր մի կատարյալ ամրոց։ Եթե նրա բացակայության ժամանակ այս կամ այն աղգականի կինը գալիս էր նրա կնոջ մոտ, այժմ այդ էլ էր կտրվում։ Այստեղ էլ, ինչպես և այգում, Աբելը կասկածում էր իր տան մոտ անցնող ամեն մարդու, ու շան հաչոցի հետ ինքն էլ էր ճղճղում ու հայհոյում։

Ուրիշ մարդկանց դուր էր գալիս սոխակի, սարյակի ձայնը, իսկ Աբելի ամենասիրած ձայնը շան հաչոցն էր։ Քանի շատ էր հաչում շունը, նա ավելի էր խրախուսում նրան ու կերակրում։

Այդ ձմեռվա օրերին գյուղի վերի կողմից շարունակ լսվում էր Փուշ Աբելի զիլ ձայնը։ Օրական քանի անգամ նա դուրս էր գալիս, կանգնում ձորափին ու դիտում վերևից իր այգին։ Եթե պատահմամբ մի ճամփորդ իր էշով կամ եզներով կանգ էր առնում այգու ցանկապատի մոտ, Փուշ Աբելն արդեն «իրեն ուտում էր», գոռում էր, դղրդացնում ձորը։

Իսկ տանը նա կովում էր ու բղավում ամենաչնչին առիթով,— ինչո՞ւ իր կինը սղոցը հարևանին է տվել, ինչո՞ւ են հաց տվել աղքատին, ինչո՞ւ շանը լավ չեն նայել և հազար ու մի այսպիսի պատճառներով։

Ու ամեն բանի պատասխանատուն վերջ ի վերջո իր կինն էր, որի անսպառ համբերությունը միայն կարող էր դիմանալ Աբելի անվերջ կռիվներին։

Նա մի հյուծված, ոսկրացած այտերով կին էր, ամառ-ձմեռ գլուխը փաթաթած հաստ շալով, աչքերը միշտ կարմրած ու լացակումած, ասես թանձր ծխի մեջ էր ման գալիս։

Նա շարունակ ահաբեկված էր իր ամուսնուց ու շշմած ծառայի նման չգիտեր, ի՞նչ անի, որ գոհացնի նրան։ Միշտ ցրված ինքն իրեն խոսում էր ձայնով, այնպես որ եթե մեկը նրան ծածուկ հետևեր, կարող էր այդ մենախոսությունից իմանալ, թե ինչ է կատարվում Աբելի տանը։

Երբ Փուշ Աբելը վերադառնում էր այգուց, նա դեռ տուն չհասած գոռում էր փողոցից.

— Է՛յ, շներ, դուրս եկեք։

Կինը, երբեմն աղջիկը վախեցած դուրս էին ընկնում։ Մանավանդ կինը այնքան էր ինքն իրեն կորցնում, որ շվարած կանգնում էր առաջը։

— Ի՞նչ ես աղոթածի նման կանգնել,— ասում էր Աբելը,— տար էս խուրջինը։

Խուրջինը տանում էր, էշը կապում, առաջը խոտ գցում, հետևում, որ մարդու ամենաչնչին հրամանը կատարվի, բայց Աբելի փնթփնթոցը չէր դադարում։

— Էս խոտը ո՞նց ես ածել... ա՛յ, մի տամ սպանեմ...

Այնուհետև կովի հերթը գալիս էր իր տղաներին։ Նրանք հոգնած, ջարդված, ոտները լվանալուց հետո թիկնում էին թախտի վրա, մութքին։ Աբելը խեթում էր, համարելով նրանց թիկնելը անթույլատրելի ծուլություն։

— Ա՛յ գյաղեք, էն արտը վարեցի՞ք,— հարցնում էր նա հենց առաջին խոսքից։

— Հա՛, կեսը պրծանք։

— Բա էն Մադոյանց կողմից ի՞նչ արիք։

— Էնպես թողինք,— պատասխանում է մեծ տղան, որն իր արտաքինով հոր նման էր։

— Բա չկարացի՞ք նրանց արտից մի քիչ մեջ գցեք։

— Ուզում ես մեզ տան սպանե՞ն... նրանք շատվոր են,— ձայնը բարձրացնելով պատասխանում է մեծ տղան։

— Կորեք, է՛... ձեր հերն էլ կասի, թե տղերք ունեմ։

— Դե գնա դու ինքդ արա, թե ուզում ես։

Ու երկուսն էլ սկսում էին աղմկել, հին ու նոր հիշել։ Դրսից այնպես էր թվում, թե հայր ու տղա, պետք է իրար սպանեն։

Մյուս օրը հայրը հետները գնում էր, հարևանի արտից բավական տեղ վարում, իրեն արտին միացնում։ Այդ պատճառով սկսվում էր մի արյունահեղ կռիվ ու երկու կողմն էլ ջարդված գլուխներով վերադառնում էին տուն։

Գյուղում արդեն բոլորը համոզված էին, որ Փուշ Աբելի հետ հարևանություն անելն անկարելի է, քանի որ սահմանավեճերն ու կռիվերն անսպառ էին։ Առաջներում նա կովով ու ծեծով իր այգու երկու հարևանների «գլուխը կերել էր»— մեկի ուսն էր ջարդել, մյուսի աչքը կուրացրել։ Ամեն տարի նա նորոգում էր իր ցանկապատը և հարևանի հողից «գավթում»։

Աբելի համար սովորական բան էր և մշակների հետ կռվելը։ Առանց վարձը կտրելու նա երբեք մշակին չէր արձակում. մշակները փորձում էին գանգատվել, բայց գյուղում բոլոր իշխանությունները ձեռք էին քաշել Փուշ Աբելից և աշխատում էին ազատվել նրա գործերից։

Տանեցիք միշտ ահ ու դողի մեջ էին նրա անվերջ կռիվներից։ Հենց որ կռվի ձայն էր գալիս, Աբելի կինը խսկույն թուլանում էր ու ծնկներին վեր հատում։

— Վա՛յ, քոռանամ ես, երեխանցս, մարդիս սպանեցին... Հասե՛ք, օգնեցեք...

Ասում էր ու նվաղում։ Երեսովը ջուր էին տալիս ու հազիվ ուշքի բերում։

Կռվում էր Աբելը ամեն տեղ՝ այգում, արտում, տանը։ Նրա համար կռիվը նույնքան սովորական էր, ինչպես հացն ու ջուրը։

3

Բոլշևիկների գալուց Աբելը սխալվեց, նա կարծում էր, թե գալիս են առաջվա ռուսները և չէր հավատում այն ամենին, ինչ նրանց մասին պատմում էին։ Առհասարակ նա անհավատ էր հենց

ռևոլյուցիայի սկզբից. դուրսը պտտվող լուրերը նրա մի ականջից մտնում, մյուսից դուրս էին գալիս։

Երբ նրան ասացին, թե թագավորին վեր են գցել, հարցրեց.

— Բա նրա տեղն ո՞վ է, ախպե՞ր է, թե՞ տղեն։

— Ոչով, հենց էնպես, առանց թագավորի են կառավարելու։

— Ի՞նչ ես խոսում,— հարձակվեց Աբելը,— իսկի մի այգին էլ առանց տիրոջ չի կառավարվում, մի թագավորություն կկառավարվի՞...

Մի բան միայն նրա համար պարզ էր,— պատերազմից սկսած՝ ժամանակը խառնվեց, հացը պակասեց, մշակը երես առավ, իրեն թշնամիներն ու վնասողները շատացան։

Աբելի գործն այդ տարիներին բավական դժվարացավ,— առաջվա նման էլ չէր կարողանում մշակի վարձը կտրել և մեծ ճիգեր թափելով էր պահպանում իր բարձր ցանկապատը, որը կարծես առաջվա զորությունը կորցրել էր և էլ չէր վախեցնում մարդկանց։

Երբ եկան բոլշևիկները, և Աբելը համոզվեց, որ նրանք իր ուզած մարդիկը չեն, մի մռայլ ամպ իջավ նրա վրա։ Նա տապ արավ, թաքնվեց իր այգում ու մտածում էր, թե գուցե էս «պատուհասն» էլ անցնի. հարկավոր է միայն աչքին չերևալ, որպեսզի իր վրա ուշք չդարձնեն, իր ունեցած հարստությունը չխլեն։

Նա իր ականջները փակել էր «դրսի» խոսակցություններից, որովհետև նրանք իրեն հակառակ էին։

Ու փակված իր այգում, տեսնելով, ինչպես բույսերը վաղուց սահմանված կարգով գարնանը կանաչում, ծաղկում էին ու աշնանը թառամում, թվում էր նրան, թե աշխարհումն էլ ոչինչ չի փոխվել ու ամեն ինչ էլի հին, հաստատված կարգով կգնա...

Այդ ժամերին նա մոռանում էր դրսի ալեկոծ, խառնիխուռն գործերը, զգում էր իրեն իր թագավորության մեջ— էլի էն վազերը, էն ծառերն են, էլի էն Աբելն էր, տիրություն անող Աբելը...

* *
*

Աշնան մեղմ, ամպամած օր էր։ Այգիներում դեղնած վազերն ու ծառերն ասես տապ արած սպասում էին, թե ե՞րբ կփչի զորեղ քամին, տերևաթափ կանի իրենց։

Աբելի այգու առաջ կանգնած էին չորս հոգի՝ գյուղսովետի քարտուղարը, երկու կատարածու և մի միլիցիոներ։

Դուռն ուժգին թակում էին և ձայն տալիս Աբելին։

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում,— լսվեց հանկարծ Աբելի ծղրտոցը։

— Միլիցից է եկել, բաց արա։

Կատարածուն դիտմամբ սկսեց «միլիցից», որովհետև Աբելը կարող էր հակառակվել, չբացել դուռը։ Այդ խոսքը նրան կակղացրեց, դուռը ճռռալով բացվեց, ու եկվորները կռանալով ներս մտան դռնից։

Աբելը կասկածոտ հայացքով դիտում էր նրանց ոտից գլուխ, աշխատելով իմանալ նրանց գալու նպատակը։

Քարտուղարը,— մի ցածրահասակ, բարի դեմքով երիտասարդ,— Աբելին տեսնելուն պես շփոթվեց։ Նա իսկույն բացեց իր հասարակ կտորից շինած թղթապանակը և օգնության կանչեց թղթերին։

— Աբել, մենք երկու անգամ քեզ կանչել ենք, բայց դու չես ներկայացել. հիմա եկել ենք հայտնելու գյուղսովետի որոշումը. ահա կարդում եմ...

Նոր էր սկսել կարդալ քարտուղարը, երբ Աբելն զգալով մի շարագուշակ բան, իսկույն կտրեց թելը։

— Ինչի՞ համար եք եկել։

— Գյուղսովետը որոշել է քո այգին հանձնել գյուղատնտեսական դպրոցին, իսկ քեզ նորմայով տալ ուրիշ այգի...

— Ի՞նչ,— ծղրտաց Աբելը, վառոդի նման բռնկվելով։ Նա ավելի շուտ կհավատար, որ ինքն այդ օրը պիտի մեռներ, քան թե այս որոշմանը։

— Ո՞ւմ բալն ես տալի... Քո հո՞րն է, թե տերը մեռած է...— գոռում էր նա։

— Ուրեմն դու չե՞ս ուզում կատարել գյուղսովետի որոշումը։

— Ինչ ես գլխիս պատարագ անում. ես կենդանի տեղովս չեմ տալ, իմանո՞ւմ ես, թե՞ չէ...

— Դե՛հ, գործը կհանձնենք միլիցիային,— ասաց քարտուղարը ու դուրս եկավ այգուց, թողնելով միլիցիոներին և կատարածուներին։

Երբ նրանք վերադարձան գյուղսովետի գրասենյակը, նախագահը հարցրեց.

— Հայտնեցի՞ք որոշումը։

— Այո՛, հայտնեցինք, բայց չի ուզում կատարել,— ասաց քարտուղարը։

— Գործը հանձնեցեք միլիցիային. դրա հետ մարդավարի խոսելն անկարելի է,— կարգադրեց նախագահն ու շարունակեց իր ընդհատած խոսակցությունը։

* * *

Մի շաբաթ միլիցատանը նստելուց հետո Աբելը դուրս գալուն պես վազեց դեպի այգին։ Երբ նա տեսավ դուռը կիսաբաց, նոր միայն զգաց, որ իսկապես մի դժբախտություն է պատահել իր այգուն։ Ներսից լսվում էին աշխույժ ձայներ։ Այնտեղ աշխատում էին աշակերտները՝ գյուղատնտես ուսուցչի ղեկավարությամբ։

Կատաղությունից ինքն իրեն կորցրած, Աբելը ներս մտավ ու մի ձող հանելով գետնից, հայհոյելով վազեց դեպի աշակերտները։

Նրա դաժան ձայնից վախեցած, աշակերտները ուրուրից հալածված հավի ճտերի նման ցրվեցին վազերի մեջ։ Ծառուղիում մնաց միայն ուսուցիչը, որն օտար լինելով, չգիտեր, թե ինչ է կատարվում։

Հանկարծ փայտի ծանր հարվածն իջավ նրա ուսին։ Սաստիկ ցավից նա ճչաց։

— Սրիկա, ինչպե՞ս ես համարձակվում...

Նա երկու ձեռով պինդ բռնեց ձողից։ Աբելն ափսեց քաշքշել ձողը և մոտ էր հաղթելու, երբ աշակերտները՝ նկատելով ուսուցչի կոիվը, ամեն կողմից դուրս թափվեցին ու շրջապատեցին Աբելին. որը ձողից բռնեց, որը ձեռից ու բոլորովին կաշկանդեցին նրան։

Աբելը հրում էր աշակերտներին, աքացում, բայց նրան չէր հաջողվում ազատվել այդ փոքրիկ, բայց բազմաթիվ ձեռքերից։

Ուսուցիչն արդեն ազատվել էր Աբելից ու սաստիկ հուզված զոռզոռում էր.

— Լիրբ, դու գիտե՞ս, որ սա դպրոցի այգին է։

— Բաց թողեք, է՛, մի տամ սպանեմ... էդ ո՞ւմ բաղն ես եկել...

Շուտով դուրս եկան և մնացած աշակերտները. նրանց մի մասը պիոներների նման ձողերն առած՝ պահակ կանգնեցին։ Հենց որ Աբելը շարժվում էր, նրանք էլ իջեցնում էին ձողերը և

ստիպում նրան հանդարտվելու։ Կատաղությունից նա հայհոյանքներին էր զոռ տալիս։

— Երկու հոգով գնացեք, իմաց արեք գյուղսովետին,— կարգադրեց ուսուցիչը։

Աշակերտներից երկուսը վազեցին դեպի գյուղը։

Վերջապես եկան կատարածուներն ու միլիցիոներները և տարան Աբելին աղմուկով ու շարշարանքով։ Երբեք կատարածուներն ու միլիցիոներները այդպիսի ծանր գործ չէին ունեցել։ Ավելի հեշտ էր հարյուր մարդ տանել, քան Փուշ Աբելին։

4

Աբելը մի ամիս նստեց ուղղիչ տանը և այնտեղից դուրս եկավ շատ ընկճված։ Նա այժմ համոզվեց, որ իր այգին ո՛չ իր ուժով, ո՛չ էլ որևէ միջոցով չի կարող վերադարձնել...

Նրա մեջքը կոտրում է այն, որ հույս չուներ նույնիսկ իր տղաների վրա։ Ընդհակառակը, նրանք խորհուրդ էին տալիս համաձայնել ամեն ինչի հետ։ Մինչև անգամ ամենախիստ կերպով արգելել էին աղմուկ հանել այգու առթիվ։ Ու նա ստիպված լռում էր ու զգում էր իրեն սղմված ու ճնշված, ինչպես այն օրը, երբ ամեն կողմից շրջապատված էր աշակերտներով։

Նրա ձեռքը գործի չէր կպչում։ Շարունակ ման էր գալիս մտամոլոր, լռած աչքերը գետնին հառած, ասես մի բան էր կորցրել ու փնտրում էր անհույս։ Հետո նստում մի քարի վրա, աչքերն ուղղում մի կետի, ապա վեր կենում, նորից քայլում ախ ու վիշ անելով։

Երբեմն իջնում էր ձորը, մոտենում էր այգուն, տեսնում էր իր ցանկապատն ու զարմանում, որ այդ ցանկապատն այժմ իրեն տիրոջ դեմ է, իրեն ներս չի թողնում...

Ի՞նչ անի, կոտրի՞ դուռը, պատռի՞ ցանկապատը... Չէ՛, սա էդպես բան չի անի... Նա ավելի շուտ եկեղեցին կկողոպտի, քան թե իր ցանկապատի վրայով կանցնի։

Նրա կինն արդեն թաքուն սուգ էր անում մարդու վրա, համարելով նրան խելագարված, ու մի ճար էր փնտրում ազատելու համար։ Գրքացն ասել էր, թե խաչիցն է, պետք է մատաղ անել, բայց այդ բանը դժվար էր իրագործել,— Փուշ Աբելի հետ խոսելն անկարելի էր։

Մի օր էլ, նկատելով, որ Աբելը ման է գալիս աջ ու ձախ տատանվելով, կինը վախեցած վազեց տերտերի մոտ։

— Տերտեր ջան, մի տիրություն արա, մարդս ձեռիցս գնում ա...

Տերտերն սկզբում շվարեց, որովհետև ինքն էլ վատ դրության մեջ էր, բայց իր հին փեշակը հիշելով, խոստացավ ճանապարհի բերել Աբելին։ «Էլի ինչքան չինի, մի կրճունք մնացած կլի ինձ համար»,— մտածում էր նա, հույս տածելով, որ կարող է օգտվել Աբելից։

* * *

Նոր էր տերտերը պատրաստվում Աբելի մոտ գնալու, երբ ինքն Աբելը ներս մտավ, ձեռին մի կապոց բռնած,— բերել էր մի գավաթ գինի, հաց և մի եփած հավ։

Առանց «օրհնյա ի տերի», նա լուռ նստեց թախտին։

Տերտերի աչքերը փայլեցին, կապոցը տեսնելով։

— Էս բաները թող տանեն պատրաստեն,— ասաց Աբելը խոժոռած դեմքով։

Տերտերն իսկույն կանչեց տիրուհուն ու պատվիրեց սեղան սարքել ու ավելի ոգևորվեց, ուշքի եկավ, ինչպես տոթից խեղճացած բույսը անձրևից հետո։

— Աբել, ոնց որ տեսնում եմ, շատ ես քեզ դարդին տուր տալիս. մի՞թե չես տեսնում՝ ամենքս էլ նեղացած ենք, բայց համբերում ենք, մտքիդ հետևից մի՛ ընկնիր. երևի մի օր աստված քաղցր կնայի մեզ վրա...

Աբելը լուռ էր։ Նա չէր նկատում ինչպես տիրուհին գցում էր օխոցը, ինչպես տերտերն ագահությամբ ուտում էր ու իրեն էլ հյուրասիրում։ Նա ուշքի եկավ այն ժամանակ, երբ տերտերն ուժով նրա ձեռքին դրեց հավի մսի կտորը հացի հետ։ Երբ կերան ու խմեցին, տերտերն արդեն կատարը տաքացած՝ ըստ սովորության սկսեց մորուքը շոյել։ Աբելը լուռ նայում էր նրան։

— Տերտեր, մի խորհուրդ ունեմ քեզ հետ,— ասաց նա,— քու խելքդ ոնց ա կտրում, էս մեր աշխարհը տեր ունի՞, թե՞ չէ։

Տերտերը մի քանի անգամ շոյեց մորուքը։

— Դե առաջ աստված երկնքից էր տիրություն անում, թագավորն էլ երկրից. հիմի թագավոր չունենք, երկիրն անտեր է մնացել։

— Բա ասում են Լենինն է մեզ կառավարում։

Տերտերը զարմացած նայեց Աբելին, բայց իսկույն հարմարվեց նրա ասածին։

— Հա, ասենք թագավորի տեղ Լենինն է, ուղիղ է, բայց ի՞նչ... Նրա ասածները չեն կատարում. բա նա ասել է, թե եկեղեցին թատրոն շինեցե՞ք...

— Ես էլ էդ եմ մտածում, թե նա աշխարհիս կառավարիչն է, բա կհրամայեր, որ իմ բաղը ուսումնարանին տա՞ն... Նա որ իմանար, կհրամայեր էդ բանն անողներին Սիբիր ուղարկել... Ի՞նչ ծածկեմ քեզանից, տերտեր... Ուզում եմ գնամ Լենինի մոտ գանգատ անեմ. հասկացնեմ, բաղս ազատեմ էդ տնաքանդներից։

Տերտերը նորից զարմացած նայեց Աբելին։ «Էս Աբելից չի. ո՞նց թե էսպես բան... խելքը ծուվել է»,— անցավ նրա մտքով։

— Լավ ես ասում,— համաձայնեց նա,— բայց առաջինը, որ Լենինը, ասում են, հիվանդ է, վրա երկրորդն էլ՝ նրա տեղը հեռու է, ծախս շատ կուզի։

— Ինչ ունեմ-չունեմ կծախեմ, կգնամ... մենակ մի բան եմ խնդրում, որ տղերանցս համոզես, որ թողնեն...

— Լա՛վ, կխոսեմ, կաշխատեմ համոզել,— համաձայնեց տերտերը, նորից մտածելով.

— Խելքը շաղվել է...

5

Ջյունը հանդարտ գալիս էր ու փափուկ նստում, կարծես մոռացությամբ ծածկելով ամեն ինչ։ Աբելը նստել էր մոխրագույն ձիու վրա, հաստ քուրքը հագին, մեծ փափախը գլխին, վերևից էլ բաշլուղը կապած։ Իր հագած հաստ շորերով նա համարյա երկու անգամ ավելացել էր մարմնի ծավալից։

Ձին դանդաղ քայլում էր, իսկ Աբելը տարվել էր իր մտածմունքներով։ Նա գնում էր երկաթուղու կայարանը, այնտեղից էլ պիտի գնար Մոսկվա՝ Լենինի մոտ։

Ի՞նչ դժվարությամբ գլուխ բերեց այս բանը. տղաները մի շաբաթ էր, կռվում էին, չէին թողնում, որ գնա, բայց չկարողացան «կոտրել» նրան։ Նույնիսկ թույլ չտվեց, որ ճանապարհ դնեն մինչև կայարանը։

Քանի հեռանում էր գյուղից, այնքան ավելի նրա մտքերը

թռչում էին հեռու։ Ահա նա մտածում էր, թե ինչպես կհասնի Մոսկով, կգնա Լենինի մոտ, փափախը կվերցնի ու խոր գլուխ տալով կդնի ոտների առաջ, ու կասի.

— Պարոն Լենին, աստված հաստատ պահի քո կառավարությունը... ես քու ոտի թոզն եմ... (պետք է մարդու պատիվը պահես, որ նա էլ խնդիրքդ լսի քաղցր աչքով)... Պարոն Լենին, քո մարդիկ հրամանդ էնպես չեն կատարում, ինչպես հարկավոր է։ (Էստեղ Աբելը լաց կլի, որպեսզի Լենինի սիրտը մղկտա)։

— Քու փամիլն ի՞նչ է,— կհարցնի Լենինը։

— Իմ փամիլն Աբել Քաչքոտյանց է։

Լենինի աչքերը պեծին-պեծին կանեն, նա շարացած ոտները գետին կխփի ու կասի՝

— Էս ովքե՞ր են իմ հրամանը շուտ տվել, ինչպե՞ս են համարձակվել էսպես պատվավոր մարդուն նեղացնել... Էս բոպեին թելեգրամ տվեք, որ սրանց գյուղսովետի մարդկանց չաթեն ու բերեն էստեղ, որ ես խիստ պատիժ տամ...

Աբելի մտածմունքները կանգ առան, երբ նրա դիմաց երևաց կայարանի շենքը։

Նա երկար պտույտ տալով գնաց երկաթգծի մյուս կողմը, իր ծանոթ խանութպանի մոտ, որի միջոցով պիտի ձին հետ ուղարկեր։ Կրպակի առաջ ձիուց իջնելով և ներս նայելով, Աբելը մնաց զարմացած. այնտեղ մի ուրիշ մարդ էր առևտուր անում։ Մինչ նա կանգնած մտածում էր, թե ի՞նչ պիտի անի, հանկարծ հետևից լսեց մի ծանոթ ձայն.

— Բարով ես եկել, քեռի Աբել։

— Բարով, Մուքելը էս ո՞նց է, խանութում ուրիշ մարդ է։

— Է՜հ, էն վաղ էր, որ էշը կաղ էր, բա չես ասիլ, խանութը ձեռքիցս առան։

— Ո՞վ առավ։

— Ի՞նչ մի՛ամիտ բան ես հարցնում, դե էլ մասնավոր խանութներ չկան, հիմի կոոպերատիվ են սարքել։

— Բա հիմի ի՞նչ պիտի անես...

— Դե ի՞նչ ասեմ... տեսնենք, կարելի է մի բանի կպչեմ... իսկ դու ո՞ւր ես գնում։

— Հեռու եմ գնում, Մուքել, Մոսկվա...

— Մոսկվա՞,— զարմացավ Մուքելը,— էդ ի՞նչ գործով։

Աբելը նրան մի կողմ քաշեց ու պատմեց ամեն ինչ։ Մուքելը մնաց ապշած ու հեգնանքի ժպտով նայում էր Աբելի դեմքին։

— Ա՜յ քեզ բան... քեռի Աբել, կարելի է կատակ ես անում։

— Ի՞նչ կատակ, սրտիցս արյուն է կաթում։

— Մոսկվա՞... Լենինի մո՞տ,— կրկնեց Մուքելը,— գիտե՞ս ինչ կա, Աբել, ես հենց իմանում էի մենակ իմ գլուխն է շաղվել, որ չի իմանում, թե ի՞նչ անի, դու մի ասիլ, դու էլ իմ օրումն ես։ Բա մի մտածիր, ո՞ւր ես գնում, ո՞ւմ մոտ ես գնում։

— Ո՞նց թե,— իր հերթին զարմացավ Աբելը,— գնում եմ գանգատվելու, որ էստեղ ինձ նեղացնում են...

— Ասում ես գանգատվելո՞ւ... դու երեխա՞ ես, բա աչքդ չի՞ տեսնում, որ ամբողջ երկիրը մի օրենքով է շարժվում, էդ օրենքն էլ Լենինն է հաստատում։

Աբելը շշմած նայում էր Մուքելին։

— Բա Լենինը ուշադրություն չի՞ դարձնիլ...

— Ա՜յ մարդ, խելքդ հավաքիր, երազումդ հո չե՞ս,— ես էլ մտածում էի, թե ինչ ուզում է լինի, սուս ու փուս իմ մասնավոր առևտուրը կշարունակեմ, բայց դե նրանց աչքը ինձ էլ տեսավ,— խանութս վերցրին։ Հիմի նոր օրենքով կոոպերատիվ է հարկավոր... դե իմ բանը վերջացավ...

Աբելի գլխին կարծես փայտով խփեցին։ Նա զգաց, որ Մուքելը ճիշտ է ասում, բայց իր համառությունը չթողեց։

— Չէ, պետք է գնամ ամեն բան պատմեմ, նա ուշք կդարձնի, պատիժը կտա...

— Դե լավ, դու գիտես, Աբել, միայն թե էն էլ իմացիր, որ Լենինը հիվանդ է, ո՞վ գիտե, իսկի մարդ չի ընդունում։

— Հիվա՞նդ է,— ջղայնորեն հարցրեց Աբելը։

— Հա, էդպես է. լրագրում գրած էր այդ մասին։

Աբելը ավելի շշմեց։

— Բա ինչ պիտի անենք։

— Դե ի՞նչ պիտի անես, կերթաս գյուղը և սուս ու փուս տանդ կնստես։ Տղաներդ ի՞նչ են անում։

— Է՜հ, նրանք ինձ հակառակվում են։

— Դու էլ հենց նրանց հետևից գնա։ Դե, թե ուզում ես, ուղիղ խոսքս հենց էդ է, որ ասացի, մնացածը դու գիտես։ Ես գնում եմ, իմ ցավն էլ քոնից պակաս չի։

Ու խանութպանը գնաց։

Աբելը հեռացավ երկաթգծից, նստեց մի թաց քարի վրա ու մտածում էր, թե ի՞նչ պետք է անի։ Նա այժմ նմանում էր այն գյուղացուն, որը քաղաքում մթերքներ վաճառելուց հետո նստում է գյուղի ճանապարհին՝ մի թաքուն տեղ և ժամերով հաշվում է փողերը։ Հաշվում է և չի կարողանում ծայրերը գտնել...

Գնացքը եկավ ու մեկնեց, բայց նա դեռ նստած էր։ Վերջապես վեր կացավ տեղից, միառժամանակ մտամոլոր քայլեց, իր հետևից ձիուն քաշելով, ապա նստեց նրա վրա ու դանդաղ, անկամ շարժեց դեպի գյուղը։

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Աշուն է։ Զորագլխին թառած գյուղը վերջացրել է իր դաշտային աշխատանքները։ Ամայի կալերում երևում են խոշոր դարմանի մնացորդները, որոնք հետզհետե դժգունում են խոնավությունից, իսկ նրանց շուրջը, տեղ-տեղ կանաչին են տալիս ցորենի ծլած հատիկները։ Ծանր, մռայլ ամպերը գալիս, կանգնում են շրջակա բլուրների վրա ու սպառնում ներս խուժել գյուղը։ Պարտեզներն օր-օրի վրա դեղնում են, ու տերևները, կարծես վախեցած, անհանգիստ սոսափում են ցրտաշունչ քամիներից։

Գյուղը դատարկվել է տղամարդկանցից, նրանք բոլորն էլ աշխատում են ներքևի ձորում, որտեղ արդեն մի տարի էր, ինչ սկսվել էր հիդրոկայանի կառուցումը։ Տներում մնացել էին կանայք, երեխաներն ու կաթուկ ծերունիները։ Միայն Մուքելն էր, որ չէր մասնակցում այդ աշխատանքին, ու մենակ մնալով, տխրում էր աշնան ծառի նման։

Մուքելը հիսունից անց էր, բայց դեռ առույգ էր ու երիտասարդի նման աշխատունակ։ Նա գյուղը եկողի աչքն էր ընկնում իր հին տարազով, որը համառորեն պահպանում էր անխախտ։ Նրա շուրջն ինչ ասես հագնում էին, խառնելով գյուղն ու քաղաքը, իսկ Մուքելին միշտ կտեսնեիք իր պապական շալի չուխայով, արխալուղով ու ծանր, մոթալի փափախով։ Հագնելիքի մնացած պարագաներն էլ պահպանվում էին իրենց կարգով։ Գյուղացիներին զրգռում էր Մուքելի այդ մոլեռանդ ձգտումը դեպի հին տարազը։ բայց մանավանդ զրգռում էր այն, որ նրա հագուստը միշտ կարգին էր, միշտ հոր էր թվում։ Իրենք քա՜նի շոր էին մաշել նրա չուխայի

հետ, բայց տես, նրանն ասես մի շաբաթ առաջ լինի կարած։ Նրա խնամոտ ու զգույշ վերաբերմունքը դեպի իր հագուստն առակ էր դարձել գյուղում. նրա մասին պատմում էին, որ միայն թուրքական զորքերի գալու օրն էին տեսել շորերը ցեխոտ։ Երբ մեկին ասում էին, թե շորդ մաշվել է, նա պատասխանում էր.

— Ինչ անեմ, Մուքելի չուխան հո չի, որ անմաշ մնա։

Մանավանդ նա սրբության նման փայփայում էր իր պատվավոր մոթալի փափախը, որը սև էր, կոնաձև, գագաթը փոսած։ Տուն դառնալիս նա հագցնում էր այդ փափախը կարմիր չթից կարած մի տոպրակի մեջ ու այդպես դնում պատի մեջ շինած պահարանի մի առանձին դարակի վրա, որպեսզի չմաշվի ու չփչանա փոշուց։

Երբ Մուքելը դնում էր գլխին այդ փափախը, նա հին «քյադխուդայի» պատկառելի տեսք էր ստանում։ Ու իր խոշոր, նահապետական դիմագծերը՝ մեծ, հիմնավոր քիթը, ծանրախոհ աչքերն ու ակոսված ճակատը, առատ բեղն ու մորուքը, այնպես ներդաշնակում էին փափախի հետ։ Իսկ երբ նա նստում էր գյուղի հավաքատեղն ու զրուցում հասակավոր մարդկանց հետ, այդ բոպեներին թվում էր, թե շուրջը ոչինչ չի փոխվել, թե մի հին նահապետ է խոսում ծանրակշիռ խոսքերով, ու իր սև սաթի տերողորմյայի խոշոր հատիկներն էլ դանդաղ չրխկալով իրար հետևից, հաստատում են նրա ասածները, կրկնելով.

— Ճշմա՜րիտ է, ճշմա՜րիտ է...

Մուքելի հետ զրուցողները մեծ մասամբ ծերունիներ էին, կամ իր հասակի մարդիկ, նրանք իրար լավ էին հասկանում ու իրենց հավանությունը տալիս գլխի շարժումներով։ Նստում էին հին մարդիկ, գովաբանում հին, «աստծու օրհնած» աշխարհն ու քննադատում, ժխտում նորը։ Ու ոչ ոք չէր զարմանում նրանց քննադատությունից, ինչպես չէին զարմանում, որ ծերունիները ձեռնափայտով են ման գալիս ու սիրում են ժամ գնալը։ Գյուղի կոմերիտականները, ջահելները, նրանց մոտով անցնելիս՝ քըմծիծաղ էին տալիս ու իրար ասում.

— Ծանր արտիլերիան հավաքվել է...

Բայց ես մոռացա ասել ամենագլխավորը. Մուքելը մի սրբություն ուներ, որը պահպանում էր ջերմեռանդ կրոնավորի երկյուղածությամբ։ Դա մի հին կաշեկազմ աստվածաշունչ էր, որը ժառանգություն էր մնացել իր հորից, իսկ նա նվեր էր ստացել մոտա-

կա վանքի մի վարդապետից։ Այդ աստվածաշունչը պահում էր հաստ քաթանի պարկի մեջ, պահարանի նույն դարակի վրա, որտեղ և փափախն էր դրած։

Ինքը գրագետ չլինելով, Մուքելը երբեմն հրավիրում էր տիրացու Գրիգորին, հյուրասիրում էր նրան, արաղ խմացնում, ու կարդալ տալիս ջրհեղեղի ու Բաբելոնի աշտարակաշինության պատմությունները, ապա վերջը՝ երեք գլուխ սաղմոս։ Շատ էր Մուքելի սրտին մոտ գալիս վրեժխնդիր պապի՝ աստծու բարկությունը, նրա պատիժներն ու հանդիսավոր հաշտությունը ծիածանի կամարի նշանով։ Ապա սկսում էին ցածր, խորհրդավոր ձայնով երկար ու բարակ զրուցել աստվածաշնչի զանազան պատմությունների շուրջը, աշխատելով նշաններ փնտրել նրանց մեջ ներկա ժամանակի վերաբերմամբ, ու բաժանվում էին իրարից, ավելի հուսադրված իրենց աստծու հզորության ու վրեժխնդրության վրա։

Շատ էր պտտվում ու պաշտում իր աստծուն Մուքելը, բայց վատ օրերի էր հանդիպել. ամեն կողմից քննադատում էին, տատանում նրա ամուր, «անսասան» գահը։ Ինքն իր մեջ ուժ չզգալով պաշտպանվելու համար, նա գազազում էր ջահելների հարձակումներից ու խախտում իր նահապետական հանգստությունը։

Ահա այդ աստծու պատճառով էր, որ նա թշնամացել էր սովետական իշխանության հետ, որովհետև նա այնպես էր մտածում, որ եթե աստված չկա, օրենք էլ չկա, մարդ կարող է սպանել, թալանել, ամեն ինչ անել։

Մնացած բաներում նա եթե բարեկամ չէր, թշնամի էլ չէր և «յոլա էր տանում» իր գործը։ Իբրև միջակ գյուղացի նա մեծ զգուշությամբ պահպանում էր միջակության նորման, ծառի նման քշտելով իր տնտեսության ավելորդ շիվերն ու ճյուղերը, որպեսզի չընկնի կուլակների և ուռճացածների շարքը։

Վախենալով, որ կդիպչեն իր աստծուն, կխախտեն իր հավատն ու ծեսերը, նա խուսափում էր ժողովներից, և առհասարակ, «օրենքի» հետ գործ ունենալուց։ Ասենք այդ մեկը ժառանգական էր նրա մեջ. հոր մասին էլ պատմում էին, թե նա էլ խուսափում էր «օրենքի» հետ շփվելուց և իր ցարական հարկերը վճարում էր պատուհանից, որ իրեն չկպչեն ու մի շատ չգցեն վրան։

Բայց այս ընթացքը տանելի էր, երբ հարցը վերաբերում էր ժողովներին, իսկ այժմ գյուղի բոլոր տղամարդիկ աշխատում են հիդրոկայանում, փող են տուն բերում, «պայոկներ» ստանում, իսկ

ինքը, Մուքե՞լը... նա մնացել է մենակ ու տխրում է աշնան ծառի նման, և որ գլխավորն է՝ նա տատանվում է...

Նա ինքն իրեն զբաղեցնում էր, որպեսզի խցանի իր մտքերը, բայց իզուր. տանը փսփսում էր զանազան մանր-մունր գործերի շուրջը՝ գոմն էր մաքրում, սայլի կոտրած ճաղը փոխում, շտկում ցանկապատը, հետո նստում էր կնոջ մոտ, ճախարակի առաջ, բամբասում էր մեծ տղային, որը քաղաքում բանվոր էր, ապա դուրս էր գալիս փողոց ու հանդիպելով հատ ու կենտ ծերուկներին, զրուցում էր նրանց հետ, հորանջում ու վերադառնում տուն, երբ ստամոքսը զգացնել էր տալիս ուտելու ժամանակը։ Ու որտեղ էլ լիներ, մտքում շարունակ որոճում էր այն միտքը, թե ահա, բոլորն էլ աշխատում են ձորում, փող են տուն բերում, իսկ ինքը մնացել է տանը։ Ինչո՞ւ է նա այդպես գտնվում մյուս գյուղացիներից... Նրա մեջ ինչ-որ մի կասկած կա, որ եթե բանվոր գրվի, մի պատուհաս կգա գլխին, կկորցնի իր հին պապերից սրբազործված աստծուն...

Բայց այժմ նա տուն է վերադառնում փողոցից, դանդաղ քայլում է ու նորից տատանվում. Հը՞, գնա՞մ, թե չգնամ... առաջինը՝ փողը քաղցր բան է, վրա երկուսը՝ էլքան մարդ բանում է ձորում, բա ես ի՞նչ եմ... ես էլ նրանցից մեկը... ոչով չի ասում, թե էնտեղ նեղություն են տալիս...

* * *

Վերջապե՞ս...

Մուքելն էլ բանվոր է գրվել հիդրոկայանում և աշխատում է խիստ կանոնավոր, դեսուդեն չընկնելով վեճի չլուծելով քննկերների հետ։

Ընդհանուր եռուզեռը, աշխատանքի լարված թափը վարակում է Մուքելին, արագացնում նրա ձեռն ու ոտը։ Չորս կողմը մարդ ու մեքենա իրար խառնված մի եռանդուն ժխոր էին առաջացնում։ Վերև ու ներքև մրջյունների նման վխտում էին բանվորները, քանդում հողը, ձեռնասայլակներով կրում շինանյութերը. վագոնիկներն անընդհատ բարձրանում ցածրանում էին ռելսերի վրայով։ Երբեմն Մուքելը բոպեապես կանգ էր առնում ջունչը տեղը բերելու համար, նայում էր շուրջը սփռված խառնիճաղանջ բազմության վրա ու զարմացած բացականչում.

— Պա՜հ, էսքան էլ մարդ, էսքան էլ մեծ գո՞րծ...

Միայն մի բան ծանրություն էր տալիս նրա մտքին, ինչպե՞ս պետք է հիդրոկայանը ջրից լույս ստանար. որքան էլ նա հարցուփորձ էր անում սրան ու նրան, էլի չէր կարողանում լիովին հասկանալ, ու դրանից թերահավատում էր, մտածելով. Խելքի՞ բան չի, ջրիցը լիս չի դուրս գա...

Բայց շատ չանցած պատահեց այն, ինչ կարող-էր պատահել միայն Մուքելին. մի օր գործից հետո եկան իմաց արին, թե ժողով է լինելու։ Մուքելն ըստ իր սովորության, ուզում էր չգնալ, բայց իր համագյուղացի ջահել բանվորները պնդեցին, թե անպատճառ պետք է բոլորը ներկա լինեն։ Մուքելն ակամա ենթարկվեց, նրանք էլ տարան նստեցրին ակումբի առաջին շարքում, լավ իմանալով, որ բպմամարդ ժողովից Մուքելը նահանջելու տեղ չի ունենալ։

Մի քառորդ ժամ անց ժողովը սկսվեց, բայց ո՜վ զարմանք, կենտրոնից եկած մի ընկեր հակակրոնական մի դասախոսություն արավ...

Մուքելը նստած էր մոտիկ ու պարզ լսում էր ամեն ինչ. վա՛յ էն լսելուն. ամեն խոսքի վրա մերթ կարմրում էր, մերթ սփրթնում, ինքն իրեն կրծում էր, անիծում բախտը, ուզում էր դուրս գալ, բայց խիտ կանգնած ամբոխի միջով հնար չկար։

Ու մնաց Մուքելը մինչև վերջը և դուրս եկավ բոլորի հետ, քրտնքում կորած, այլայլված ու գնաց դեպի գյուղը՝ շշկլված եղի նման խուսափելով մարդկանցից, անիծելով դասախոսին։

Ու էն գնալն էր, որ գնաց, էլ չվերադարձավ իր աշխատանքին, նույնիսկ աշխատավարձն ստացավ ուրիշի միջոցով։ Հիդրոկայանը մթնեց նրա աչքերին։ «Ոտս կոտրեր՝ չգայի էդ Բաբելոնի աշտարակը շինելու»,— կրկնում էր նա հաճախ ու վրա տալիս իր թունդ անեծքները։

* *
*

Մի շաբաթ էր, Մուքելը լուռ ու մթագնած էր։ Ժամերով նստած զրուցում էր իր տերողորմյայի հետ։ Նա կուզեր հիշողությունից հանել իր լսած դասախոսությունը, ազատվել նրանից, բայց ընդհակառակն էր լինում. հակակրոնական մտքերը մեկիկ-մեկիկ հանկարծ գալիս էին ու աներես հարցնում, թե որ աստված կա, սրան ի՞նչ կասես... Ու նա ակամայից սկսում էր որոճալ այդ

միտքը, ու վերջը զգալով, որ անզոր է հերքել, հերսոտում էր, կորցնում էր հավասարակշռությունը։ Մտապբաղ ու ցրված դրության մեջ նա նույնիսկ սկսել էր աչքաթող անել իր հագուստը. նրա ուսերին երբեմն նկատվում էին դարմանի հետքեր, շատերն էլ առաջվա նման չէին փայլում։

Մեծ տղայի գալն ուշքի բերեց նրան, մոռացության տալով իր ճնշող մտքերը, բայց դա էլ երկար չտևեց։ Երեկոյան թեյից հետո, Պետրոսը, մտերմական ու կիսահեգնական ժպիտն երեսին, սկսեց հարցուփորձ անել հորը.

— Հայրիկ, էդ ո՞նց է, քո բանը գլուխ չի եկել հիդրոկայանում...

— Ոտս կոտրեր, չգնայի էն բրիշակը,— ասաց Մուքելը մռայլ տոնով։

— Ինչպե՞ս թե... էսքան ժողովուրդը բանում է, ի՞նչ պակաս բան է։

— Հա, էդքան մարդ են հավաքել, որ ճամփիցը հանեն, անասնված դարձնեն. բայց թող էդ անողները լավ իմանան, որ իրանց արարմունքն անպատիժ չի մնալ. հին ժամանակ էլ, երբ Բաբելոնի աշտարակը սկսեցին շինել, ուզում էին գլուխը մինչև երկինք դուրս բերել. բայց աստված իմացավ մարդկանց ծուռ միտքը, լեզուները խառնեց ու աշտարակը փուլ եկավ։ Հիմի էլ սրանք եկել են ասում, թե աստված չկա, մենք մեր հնարքով պետք է ջրից լիս հանենք. իսկ աստված լսում է էդ բոլորն ու սպասում, որ մի օր իրանն ասի, որ պատիժ տա...

— Էլի քո Բաբելոնի աշտարակը չես մոռացե՞լ, էդ հեքիաթները հնարել են հոգևորականները ժողովրդին խաբելու համար... Դու աչքդ բաց արա. տես, թե մարդն իր գիտությամբ, իր աշխատանքով ինչե՞ր է ստեղծում...

— Բա ջրիցը լիս դուրս կգա՞... տե՜ր, մեղա քեզ...

— Մենակ էս մեր հիդրոկայանը հո չի. քանի տեղ են շինել, կարող ես գնալ քո աչքով տեսնել։

— Ի՞նչ տեսնեմ, հրեն մեր գեղումն էլ սներ են տնկել մթամ էլեկտրականի համար, կբերեն սների մեջ նավթ կածեն, վերևի ծերից կվառեն, հետո կասեն, թե ջրիցը լիս ենք հանել, դա սուտ բան է, աչքակապություն է։

Պետրոսը չկարողացավ ծիծաղը պահել։

— Դե լավ, հայրիկ, թե որ էդպես չես հավատում, արի պայ-

ման կապենք. Ես կխնդրեմ ուսուցչին, որ քեզ հետ պարապի, համ գրագիտություն սովորեցնի, համ էլ ամեն բան բացատրի, ինչ որ հարկավոր է. հետո էլ, երբ հիդրոկայանը վերջացնեն, լույսը վառեն, դու էլ համոզվես իմ ասածին, քո պարտքը լինի, որ դուրս գաս, ժողովի առաջ հայտնես, որ սխալվել ես։

Անսպասելի առաջարկից Մուքելը հանկարծակի եկավ ու դեմքը խոժոռեց, ոչինչ չպատասխանելով։

Բավական երկար լռությունից հետո նա ասաց, կշտամբանքի ձևով գլուխը շարժելով.

— Ուրեմն դու էլ էն անօրեն-անաստվածների հետ միացե՞լ ես, մի ասա տեսնեմ, բա ո՞վ է ստեղծել երկինքն ու երկիրը...

Ընդհատված վեճը նորից սկսվեց. խոսք խոսքի վրա բռնկվեց հայր ու որդու հին կրոնական կռիվը։ Հետզհետե տաքանալով, նրանք բարձրացնում էին ձայները, գրավելով հարևանների ուշադրությունը և շփոթեցնելով Մուքելի կնկան, որն այժմ միայն ցանկանում էր իր որդու կարոտն առնել։ Նա մեկ-մեկ միջամտում էր, որպեսզի դադարեցնի վեճը, բայց ոչ մի ազդեցություն չէր անում։

— Հայրիկ, ես քեզ բան եմ ասում, դու աչքդ բաց արա. էդ տերտեր, վարդապետ, եպիսկոպոս, աստված, աստված են կանչում ժողովրդին խաբելու համար. հարուստներն աղքատների արյունը ծծում են, հոգևորականներն էլ օրհնում են, որ իրենք էլ մասն ստանան...

Բայց Պետրոսը իր գլխավոր զենքը դեռ պահում էր վերջին։

— Մի խաբեբա էլ մեր տեր-Մաթևոսն է, ա՜յ, թե չես հավատում, կարդամ նրա գրած հրաժարականը...

Այս ասելով նա հանեց ծոցից լրագիրն ու կարդաց.

«Հարգելի հայրենակիցներ.

Երեսուն տարի շանուակ քահանայություն անելով, ես խաբել եմ ձեզ սուտ առասպելներով ու հեքիաթներով ու դրանցով շահագործել եմ ձեզ։ Այժմ, զղջալով ու զգալով իմ վնասակար գործունեությունը, խնդրում եմ ներողամիտ լինեք և մոռացության տալով իմ անցյալը, թույլ տաք ինձ այսուհետև ապրել ճակատիս քրտինքով և արդար վաստակով։ Այսօրվանից ես հրաժարվում եմ քահանայությունից։

Նախկին Տեր-Մաթևոս Դանիելյան»։

Հարվածն այնքան ապշեցնող էր, որ մի րոպե Մուքելին թվաց, թե Պետրոսը հնարում է, բայց ի՞նչ... լրագիրը ձեռին էր, էլ ի՞նչ հնարել...

— Թո՜ւհ քու նամուսին...— ասաց Մուքելն ու դեն շպրտեց իր

ձեռքի տերողորմյան, որ նա անում էր իր կյանքի ամենահուզված րոպեներին։

Նա փոքր-ինչ լռեց, ապա վեր կացավ տեղից.

— Լավ, Պետրոս, քու պայմանին համաձայն եմ. թող էդպես լինի, ոնց որ ասացիր, կամ դեսը, կամ դենը... Ա՜յ, ձեռք եմ տալիս քեզ...

Պետրոսը լրջություն տալով դեմքին, մեկնեց իր ձեռքը։

* * *

Մի տարի էլ անցավ, անցավ ձմեռն ու եկավ թարմ ու պայծառ գարունն իր բուրալից կանաչներով, ծաղիկներով։ Նոր ծաղիկների հետ նոր լուրեր էին գալիս, թե հիդրոկայանը ավարտվելու է և մայիսի մեկին պետք է լինեի նրա բացումը։ Քանի մոտենում էր ժամանակը, Մուքելն ավելի էր անհանգստանում, հիշելով Պետրոսի հետ կապած պայմանը։ Բայց ի՞նչ... Մուքելն իր խոսքի տերն էր, նա պետք է աներ այն, ինչ որ խոստացել էր...

Այո, Մուքելն իր խոսքը կկատարի, միայն նա անհանգստանում է, թե ո՞նց պետք է դուրս գա ժողովրդի առաջ, ու հայտարարի իր «նոր հավատի» մասին... Այդ է նրա դժվարությունը։ Իսկ որ ինքն առաջվա Մուքելը չի, ի՞նչ կասկած կարող է լինել։ Իր առաջվա սրբությունը՝ աստվածաշունչը, փոշակալել է արդեն պատի պահարանում, ու ինքն իսկի ձեռքը չի տալիս, և ոչ էլ թողնում է, որ տանեցիք ձեռ տան... Նա արդեն օտար էր իրեն համար։

Փոխվել է Մուքելը ու ինքն էլ է զարմանում, թե ինչպես եղավ էս բոլորը, ինչպես հետզհետե անցնող օրերի հետ ազատվեց հին հավատից։ Ու պարզեց, իր մտքերը, որոնք այնպես խառնվեցին տեր-Մաթևոսի հրաժարականից հետո։ Բայց նա մինչև այժմ էլ չի մոռանում «խաբեբա» տերտերին, չի կարողանում ազատվել իր հերսից. ամեն անգամ նրան հիշելիս միշտ կրկնում է. «Թո՜ւհ քո նամուսին...»։ Նրա ինքնասիրությունը վառվում է, որ տերտերն իրեն էլ ուրիշների հետ խաբել է երեսուն տարվա ընթացքում...

Բայց ես դարձյալ մոռացա ամենագլխավորը. Մուքելը պարապում էր ուսուցչի հետ այն ժամանակից, երբ նա պայման կապեց իր որդու՝ Պետրոսի հետ։ Այժմ գրագետ է, փոքրիկ գրքեր է կար-

գում, երկար մտածելով ամեն երեսի վրա։ Համարյա ամեն օր գնում է ուսուցչի մոտ, զրուցում նրա հետ, կարդում դասը, լսում նրա բացատրություններն ու նոր բեռնով ծանրացած վերադառնում էր տուն, ինքն իրեն ասելով՝ ա՜խ, թե էս բանն առաջ կլիներ...

Փոխվել է Մուքելը... Այժմ ամեն անգամ իր տերողորմյայի հետ զրուցելիս միշտ ասում էր մտքում.

— Էսպես էլ բա՞ն... էլեկտրականը, դու մի ասիլ, իմ տերողորմյայի մեջ է եղել, ես անտեղյակ...

Վերջապես եկավ հիդրոկայանի բացման օրը... Ահա Մուքելը կանգնած է գյուղի հրապարակում, բազմության կենտրոնում, էլեկտրական սյունի մոտ... միտինգն արդեն վերջանալու մոտ է, և գյուղսովետի նախագահը ձայնը տալիս է Մուքելին...

Նա մոտենում է նախագահին, բարձրանում է տախտակամածի վրա, ձեռքին բռնած իր աստվածաշունչը։

Հանկարծ երեկոյան մթնշաղը ցնդվում է էլեկտրական լույսից, ու ժողովուրդը միաբերան կանչում է ցնծագին.

— Կեցցե՛,— հնչում է երկար ու կրկնվում նորից ու նորից։

Երբ նախագահը հանդարտեցնում է ժողովականներին, բոլորի ուշադրությունն սկսում է կենտրոնանալ Մուքելի վրա։

— Ա՜յ ժողովուրդ,— ասում է նա,— էսօր մեզ համար մեծ աշքալիսեք է, մեծ ուրախություն, ես էլ ձեզ հետ ուրախանում եմ, բայց երանի մեր ջահելներին, նրանք հենց տակից ապրելու են էս լուսավոր կյանքով։ Ասում եմ, ուրախանում եմ, բայց սրտիս վրա մի բան կա ծանրացած, որ ուզում եմ ձեզ հայտնի անել. ես շատ եմ մեղանչել, շատ եմ վատ խոսել, թե էս հիդրոկայանն անաստվածների գործ է, ու էնպես էի մտածում, թե աստված կպատժի ու կկործանի նրանց շենքը, ինչպես որ կործանեց Բաբելոնի աշտարակը։ Ա՜յ ժողովուրդ, շատ ժամանակ իմ աշքերը խավար էին, ես չէի հասկանում, որ էս նոր լիսը ոչ թե սուրբերից ու աստծուց է, այլ մարդու գիտության, նրա հունարի, աշխատանքի գործ է, ես էս բոլոր պայծառ բաները սուտ ու կեղծ էի համարում, իսկ էս աստվածաշունչը՝ ճշմարիտ։ Հիմի բերել եմ հետս մեր հին օրենքի, մեր խավար ժամանակի գիրքը՝ աստվածաշունչը, բերել եմ էս տոչորացնող գիրքն ու ձեր առաջ դնում եմ էլեկտրականի տակ։

Այս ասելով նա աստվածաշունչը տարավ ներքև ու դրեց սյունի տակ։

Ամբողջ ժողովուրդը մնացել էր զարմացած Մուքելի խոսքերից ու մանավանդ այդ վերջին վարմունքից։

Պետրոսը կանգնած էր հոր հետևն ու հրճվում էր. կարծես ինքն էլ մի ուրիշ հիդրոկայան էր կառուցել իր հոր սրտում, իսկ հրապարակորեն հայտաբերելով նրա հոր համոզմունքը, նույնպիսի հիդրոկայաններ պիտի կառուցվեին և շատերի սրտերում...

1932

ԼՈՒՍՆԻ ՇՈՂԵՐՈՎ

1

— Աչքդ լույս, Գուրգեն, մեզ մոտ մի ուսանողուհի է գալու,— ասաց սովխոզի վարիչն իր մոտ կանգնած պրակտիկանտ ուսանողին, ցույց տալով նոր ստացած նամակը,— կարծում եմ քո գիտական հետազոտություններից ավելի հետաքրքիր զբաղմունք կունենաս...

— Զուր ես կարծում, որ մի ուսանողուհու պատճառով ամեն ինչ կմոռանամ,— ասաց ուսանողը վճռական տոնով։

— Կասկածում եմ... ասա տեսնեմ, եթե գա մի գեղեցիկ օրիորդ, ժպտա երեսիդ, չե՞ս տարվիլ երազներով...

— Ընդհակառակը, ես նրան էլ կլծեմ գիտական աշխատանքի և խստապահանջ կլինեմ...

— Ծրիտասարդությունն ավելի լուրջ է ձևանում, քան է իսկապես...

— Բայց կատակ ես անո՞ւմ, թե՞ ճիշտ գալու է։

— Հը՞, արդեն հետաքրքրվեցի՞ր,— ասաց գյուղատնտեսը, թեք նայելով ու ժպտալով իր դեմքի կնճիռներով,— բայց էլ ոչինչ չեմ ասիլ. պետք է տեղ թողնել երազելու համար...

— Ռոմանտիկ երազները ձեր հին սերնդին են պատկանում, մենք նայում ենք կնոջն առանց մշուշի, առանց քողի...

— Էլի ինձ հին աշխարհն ուղարկեցի՞ր, ուրեմն քո ասելով ես էլ փրկություն չունե՞մ անցյալից։

— Դու թեպետ անցել ես հեղափոխական ուղիով, բայց ակամա, կոշիկներիդ հետ բերել ես անցյալի փոշին...

— Հե՜յ գիտի անցյալի հերոսներ, մի զարթնեք, տեսեք, ինչպե՞ս է որակում ձեզ ընկեր Գուրգենը...

— Հարցից շեղվում ես, ընկեր Միքայել, խոսքը ռոմանտիկ տրամադրությունների մասին է, ո՞վ է ուրանում, որ անցյալում պայքարել են հերոսաբար։

— Այո, պայքարել են, տանջվել բանտերում, տապալել ֆեն կարգերը, որպեսզի հետո գուրգենիկները գան նստեն պատրաստի սեղանի շուրջն ու մեզ էլ քննադատեն...

— Էլի՞ ձեր մեջ խոսեց հին ինքնասիրությունը. ես, իհարկե, բարձր եմ գնահատում անցյալի պայքարը, բայց մի՞թե մեր սերնդի վրա պակաս ծանրություն է դրած։

— Ուզում ես ասել, թե դուք լարված աշխատանքի մե՞ջ եք. ես այդ անտես չեմ անում, բայց դու հաճախ մոռանում ես, որ կա մի ուրիշ՝ բարձր պայքար, որը կապված է հերոսության հետ...

— Ուրեմն, քո ասելով, մեզ փրկություն չկա՞, մինչև չանցնենք հերոսության կամուրջով։

— Այո, ճիշտ է, և ասեմ ինչո՞ւ,— միայն փոթորիկի ժամին է որոշվում, թե ո՞վ է հերոսը, ո՞վ է պատրաստ ճակատամարտի ելնելու... Դուք, նորերդ, մեծ բանաստեղծի ասելով՝ գիտեք թե ինչ եք, բայց չգիտեք թե ինչ եք լինելու... ձեր աշխատանքը մոտեցում է միայն, բայց ոչ լիակատար հատուցում... Երբ միջնադարյան ասպետը երդում է տալիս իր ուխտին, նա գիտեր, որ մի օր պիտի գնա մինչև վերջ—մինչև անձնազոհություն...

— Անձնազոհությո՞ւն... ահա թե ինչ, կներես, ընկեր Միքայել, բայց դու անցյալի մեթոդներով ես մոտենում նոր կյանքին։ Եթե ես տալիս եմ բոլոր ուժերս սոցիալիստական շինարարության, ուրեմն ի՞նչ հեռանկարների մասին է խոսքը։

— Մի՞թե պարզ չէ իմ տեսակետը, ամեն անգամ, երբ դու համոզում ես քեզ և ուրիշներին, որ կոմունիզմի անշեղ զինվոր ես, պիտի իմանաս, որ այդ խոսքերը հատուցում են պահանջում, որ պիտի գնաս մինչև վերջը՝ մինչև անձնազոհությունը...

— Բայց ասա խնդրեմ, մի՞թե ձեր սերունդը պայքարելիս միայն անձնազոհության շավղով էր ընթանում։

— Գնացողը գնում էր մինչև վերջը, լքողը լքում էր, բայց զտումն առաջանում էր առաջին քայլերից, և ամենամաքուր զտողը՝ անձնազոհության հեռանկարն էր...

— Ընկեր Միքայել, մենք նորից սկսում ենք մեր հին վեճը, և կարծում եմ՝ իրար չենք համոզելու, ավելի լավ չէ՞, քանի որ

տեղը եկավ, պատմես, թե ինչպես է սկսվել քո ռևոլյուցիոն գործունեությունը, դու մի քանի անգամ ինձ խոստացել ես...

— Լավ, քանի որ խոսքը եկավ, պատմեմ, թե ինչպես առաջին անգամ պրակտիկայի գնացի, առայժմ այդքանով բավականացիր... Այն ժամանակ՝ ամառվա սկզբին, ինձ ուղարկել էին պրակտիկայի Հարավային Ռուսաստանի մի խոշոր կալվածք։ Նրա տերն ամեն ամառ ընդունում էր միայն մի պրակտիկանտ-ուսանող, վախենալով երկուսից, և առհասարակ, հոգնակի թվից, որովհետև նրա կարծիքով դրանից կարող էր ռևոլյուցիա ծագել։ Գնալով այնտեղ, ես շուտով համոզվեցի, որ այդպիսի մթնոլորտում անկարելի է որևէ լուրջ գիտական աշխատանք ձեռնարկել։ Հազիվ գործը սկսած, առաջս եկավ կալվածատիրոջ կինը՝ հղփացած մի գեղեցկուհի, որը փնտրում էր միայն հաճույք, նորություն. գալիս էր այգին, մոտս կանգնում, ու սկսում շաղակրատել աչքերիս շեշտակի նայելով, ինչ-որ ներշնչումներ անելով։

— Այս բույսերը դո՞ւք եք հավաքել,— հարցնում էր,— ի՞նչ գեղեցիկ են... բայց գիտնական չդառնաք, նրանք շատ ձանձրալի մարդիկ են. իսկի չեն կարողանում կանանց զբաղեցնել... Այսօր շատ աշխատեցիք, կհոգնեք, գնանք վերև, կակաո խմելու... այնտեղ կպատմեք ինձ այս հետաքրքիր բույսերի մասին...

— Այդպես, մոտ երկու շաբաթ նա պտտվում էր իմ շուրջը, իսկ ես Հովսեփ-գեղեցիկի դերը կատարելով, խուսափում էի նրա ցանցերից. նա շարունակ առաջ էր խաղում, իսկ ես ետ էի նահանջում։ Հաճախ խնդրում էր ինձ ուղեկցել իրեն մինչև կալվածքի ծայրին գտնվող մատուռը, որի շուրջը թաղված էին իրենց տոհմի ներկայացուցիչները։ Գնում էր թախծոտ դեմքով, իբրև թե աղոթելու, բայց իրապես սիրաբանելու նպատակով։ Ինչպես հետո իմացա, ամեն ամառ նա նույն կերպ սիրաբանում էր բոլոր պրակտիկանտների հետ։

— Իսկ ամուսի՞նը,— հարցրեց Գուրգենը։

— Ամուսինը մատների արանքով էր նայում, նա էլ իրեն հաշիվներն ուներ,— կալվածքն ստացել էր կնոջ բաժինքի հետ, այդ պատճառով էլ կնոջ ձայնն ավելի ուժեղ էր հնչում։

— Ա՜յ քեզ լավ պրակտիկա,— ասաց Գուրգենը,— ֆեոդալական-բուրժուական կուլտուրան ես ուսումնասիրել՝ փարթամ կյանքը, սերն ու աղոթքը...

— Շտապում ես, ընկեր Գուրգեն, դեռ կարդա մյուս երեսը,

հետո ասա... Երկար չտեսեց այդ խաղը. պետք է ասեմ, որ ես այն ժամանակ արդեն տարված էի ռևոլյուցիոն գաղափարներով։ Ինձ համար ավելի քան պարզ էր, որ այդ հեքիաթային շքեղությունը հիմնված է քաղցած գյուղացիների ուսերի վրա։ Հիշում եմ՝ մի լուսնյակ գիշեր, երբ կալվածատիրոջ հյուրերը հարբած գոռոմ-գոչում էին պատշգամբում, ես քայլում էի այգում երկար ու ձիգ ծառուղիներով ու խորհրդածում ապագա ռևոլյուցիայի մասին։ Ու հենց այդ գիշեր ինձ ձերբակալեցին և տարան նահանգական քաղաքը։ Բանն այն է, որ ես այդ կալվածքի մոտի գյուղում մի խմբակ ունեի, որի հետ պարապում էի՝ ռևոլյուցիոն գաղափարներ արծարծելով... Այնուհետև շարունակվեց իմ հեղափոխական կյանքն իր բանտերով, աքսորներով, բայց դա երկար պատմություն է, դրա մասին մի ուրիշ անգամ...

— Բայց լմոռանաս, ընկեր Միքայել, որ քո ռևոլյուցիոն գործունեությունը սկսել ես ռոմանտիկ լուսնի շողերի տակ...

— Իսկ դու էլ փոխանակ ինձ քննադատելու, ավելի լավ է խոստովանես, որ ինքդ էլ ունես այդ երազներից...

— Ո՛չ, մենք էնտուզիաստներ ենք, բայց ոչ ռոմանտիկներ։

— Դու այն հասակումն ես, որ ոչ միայն լուսինը, այլև արևը ռոմանտիկ կդարձնես... բայց լավ, թող քո ասածը լինի, էնտուզիաստ ասենք։ Ես էլ հենց այդ քո էնտուզիազմի վրա մի գաղտնի պլան եմ կազմել, որ այժմ պիտի բացեմ. այստեղ մոտիկ մի գյուղ կա, որի շեֆը մեր սովխոզն է. այդ գյուղը կուլակների ազդեցության տակ խորշում է կոլխոզից։ Ահա թե ի՞նչ է սպասում քո էնտուզիազմին...

— Ինչպե՞ս կանխեցիր իմ ծրագիրը, ես էլ հենց նույն մտադրությունն ունեմ։

— Ուրեմն այս կետում հին ռոմանտիկն ու նորագույն էնտուզիաստն իրար ձեռք են մեկնում։ Այդպես, ընկեր Գուրգեն, մտածիր այդ ծրագրի շուրջը, իսկ ես գնամ աչք ածեմ մեր տնտեսությանը, տեսնեմ ի՞նչ նվաճումներ ենք ունեցել այսօր։

Ասաց ու հեռացավ արագ. կարծես սթափվելով ոչ-գործնական խոսակցությունից։

...Արևը մայր էր մտնում, լուսավորելով հեռավոր լեռների գագաթները։ Ամառվա երեկոյի հովն էր փչում, թարմություն ներշնչելով ցերեկվա շոգից թմրած մարդկանց։ Սովխոզի ծառուղիներով վերադառնում էին բանվորները։ Նրանց մի մասը խմբվել էր կոոպերատիվի դռանը, սպասելով հացին, իսկ մյուսները՝ նստած ճաշարանի առաջ, երկար սեղանների մոտ, թեյով էին զբաղված։ Մշտական բանվորների կանանցից որը ջուր էր տանում աղբյուրից, որն էլ երեխային էր փնտրում, կամ սամովարը տաքացնում էր չոր փայտի կտորներով։ Շենքերից մեկի ճակատին ռադիոյի բարձրախոսն ինչ-որ ժողովրդական եղանակ էր սկսել։

Երեկոն իջնում էր, հետզհետե խտացնելով իր քողը։ Տեղ-տեղ փայլող էլեկտրական լամպերը, մթին հակառակ՝ քանի գնում, ավելի էին պայծառացնում լույսերը։

Գուրգենը դանդաղ քայլերով ետ ու առաջ էր գնում ծառուղիով, մտածելով Միքայելի հայտնած լուրի շուրջը՝ թե ուսանողուհի է գալու։ Մի ուրախություն էր իջնում վրան.— Ինչ արտաքինով, ինչ բնավորության տեր կլինի նա,— կարծես հարցնում էր նա ինքն իրեն ու երևակայության մեջ ստեղծում էր ցանկալի պատկերը... Ահա նա գալիս է, իր գեղեցիկ, պայծառ դեմքով, ու լրցնում իր սիրտը մի նոր զգացումով... Ծանոթանում է իր՝ Գուրգենի ծրագրերի հետ, հափշտակվում, թև է տալիս... ապա մշուշապատ հեռվում նկարվում էին իր ապագա գիտական հետազոտությունները, գյուտերը՝ մի արտակարգ ոգևառ թափով...

2

Հինգ օրից հետո, երեկոյան դեմ, սովխոզի գլխավոր շենքի գավթում մի կառք կանգ առավ։ Կառքից իջավ մի օրիորդ՝ մոխրագույն, համեստ զգեստով, գլխաբաց, կարճ մազերով։ Նա բարձրանալով վերև՝ պատշգամբ, աչք ածեց պատուհաններին։ Գուրգենն այդ ժամանակ, ինչ-որ կարևոր գործ վերջացրած՝ ինքնամոռացության մեջ բարձր շվշվացնելով քայլում էր սենյակում։ Պատուհանից նկատելով օրիորդին, նա իսկույն ենթադրեց, որ եկողն ուսանողուհին է, և իսկույն դուրս եկավ պատշգամբ։

— Այստե՞ղ է ընկեր Սամվելյանը,— հարցրեց ուսանողուհին թեթև հուզվելով, ենթադրելով, թե Գուրգենն է սովխոզի վարիչը։

— Այո, նա այստեղ է ապրում, բայց երկու օրով գնացել է քաղաք։

— Ես եկել եմ որպես պրակտիկանտ...

— Ընկեր Սամվելյանին արդեն գրել են ձեր մասին։

— Ուրեմն կարո՞ղ եմ այստեղ իջևանել։

— Այո, իհարկե... դուք այստեղ նստեք, ես կբերեմ ձեր իրերը։

— Ո՛չ, ես ինքս կբերեմ,— ասաց ուսանողուհին ու արագ քայլերով իջավ սանդուղքներով։ Գուրգենը հետևեց նրան։ Կարծես երկուսն էլ մրցում էին իրար հետ, թե ո՞վ շուտ կհասնի կառքին։ Օրիորդն ուզում էր միանգամից վերցնել բոլոր իրերը, Գուրգենը հազիվ կարողացավ վերցնել մի կապոց։

Իրերն առժամանակ տեղավորեցին Գուրգենի սենյակում։ Սկսվեց սկզբնական ծանոթության կցկտուր խոսակցությունը.

— Դուք որտեղի՞ց եք գալիս, ընկեր։

— Բաքվից, իսկ դուք վաղո՞ւց է այստեղ եք։

— Մոտ քսան օր։

— Մի՞թե միայն դուք եք այստեղ որպես պրակտիկանտ։

— Մի շաբաթ առաջ չորս ուսանողներ էլ կային, բայց նրանց շտապ կարգով ուղարկեցին գյուղերը, ես մնացի, որովհետև ինձ հանձնարարված են գիտական աշխատանքներ։

— Իսկ ո՞վ է փոխարինում վարիչին։

— Առայժմ ես։

Ուսանողուհին հանեց իր վկայականները և տվեց Գուրգենին։ Գուրգենը կարդաց՝ լուրջ արտահայտություն տալով դեմքին։

— Առայժմ պահեք,— ասաց Գուրգենը,— հետո երբ կգա ընկեր Միքայելը, նրան կհանձնեք։

Մի քանի սովորական հարցերից հետո Գուրգենը ցանկանալով միայնակ թողնել ուսանողուհուն, որպեսզի նա կարգի բերի իրերը, առաջարկեց.

— Դուք այստեղ հանգստացեք, իսկ ես կերթամ սամովար պատվիրելու։

Կես ժամից հետո սամովարն արդեն սեղանի վրա էր։ Հասմիկը (այսպես էր ուսանողուհու անունը) աննկատելի ստանձնեց տանտիկնոջ դերը,— սկսեց կարգի բերել սեղանը, թեյի համար տեղ բաց անելով։ Նա ժպտում էր, մաքրելով սեղանի փոշին, հացի ու պանրի մնացորդները, թղթի կտորները, իսկ Գուրգենը կարմրում էր, աչքերը սևեռելով նրա վրա։ Ամեն անգամ, երբ Հասմիկը հայացքը դարձնում էր սենյակի որևէ կողմը, Գուրգենը հուզվում էր, նրան թվում էր, թե ուսանողուհին քննադատում է մտքում իր փնթի սարք ու կարգը, թափթփված, փոշոտ գրքերը, անկարգ դեսուդեն ընկած սերմերի պարկերը, սրվակները։

Ամեն ինչ պատրաստելուց հետո, նրանք նստեցին թեյի իրար դիմաց ու սկսեցին խոսել՝ սկզբում գյուղատնտեսական հարցերից, ապա անցան ուսանողական կյանքին. պատմում էին ծիծաղելի դեպքեր ուսանողների և պրոֆեսորների կյանքից։ Սակայն նրանց հետաքրքրողն ավելի իրար լսելն էր, քան խոսակցության նյութը։ Մի գուրեկան, գուրգուրող զգացում էր գալիս մեջները, կարծես վաղուց մտերիմ էին ու երկար բացակայությունից հետո գտել էին իրար։

Աննկատելի վրա հասավ մութը։ Գուրգենը վեր կացավ, վառեց էլեկտրական լամպն ու օգտվելով ընդմիջումից, սկսեց կարգի բերել իր պարապմունքների սեղանի վրայի գրքերն ու իրերը։

— Վերջերս շատ փնթի եմ դարձել, ընկեր Հասմիկ, կներեք, որ ձեր ներկայությամբ եմ դասավորում գրքերս։

— Ոչինչ, երևի շատ եք տարվել գիտական աշխատանքով։

— Այո, այդ էլ կար։

Մինչ Գուրգենն զբաղված էր իր գրքերով, Հասմիկը դիտում էր նրան. «Լուրջ տղա է երևում,— մտածում էր նա,— երևի պրոֆեսոր է դառնալու... մի քիչ փնթի է, բայց ոչինչ, կանցնի... պրոֆեսորի արտաքին ունի՝ լայն ճակատ, խոշոր դիմագծեր, խիտ հոնքեր... ոգևորված կխոսի...»

Ու իսկույն Հասմիկն ինքն իրեն երևակայեց նրա օգնական. «Իրար էսպես նք. նա շագանակագույն, գանգուր մազերով, կապտավուն աչքերով, իսկ ես սևուկ... իմ սև, խոշոր աչքերով, զարմացած կնայեմ նրա դեմքին մի քիչ ներքևից, (ես ցածր եմ նրանից)... բայց ինչ ծիծաղելի աղջիկ եմ, այնպես եմ համեմատում ինձ նրա հետ, ասես հետն ամուսնանալու եմ...»

Գուրգենը եկավ նստեց տեղը։

— Ընկեր Գուրգեն, որտե՞ղ եմ գիշերելու։

— Այս հարևան սենյակում։

— Իսկ եթե վարիչը վերադառնա՞։

— Նրա սենյակն այն մյուսն է։

— Ուրեմն սենյակն ապահովվա՞ծ է։

— Ոչ միայն սենյակը, այլև ամեն տեսակի աջակցություն։

— Շնորհակալ եմ։

Դուռը կիսով չափ բացվեց, արանքից ներս նայեց այգեպան Մուկուչը։

— Ինձ կանչո՞ւմ էիք։

— Արի, լավ ժամանակին եկար, սամովարը կտանես, հետո էլ կասես կնկանդ, որ գա էս կողքի սենյակը մաքրի, ընկերը պետք է այդտեղ ապրի։

— Բարով եք եկել,— ասաց Մուկուչը, գիմելով Հասմիկին,— էս ո՞նց է բանը, հընկեր Գուրգեն, հարսնացո՞ւդ է։

— Չէ,— ասաց Գուրգենը ծիծաղելով,— ընկերը պետք է մեզ մոտ աշխատի։

— Հա՞, գյուղատնտես է դառնալո՞ւ, ա՜յ թե կնանիք սովորում են, է՜. մի թվանք գցելն է մնում, վա՜յ թե էն էլ ձեռներիցս խլեն։ Մենակ իմ կնիկն է, որ ամեն բանից վախենում է. գնում է էս մոտիկ գեղը, կնանոցից սուտ լուրեր բերում։ Ես գիր սովորեցի, իսկ նա ասում է դժվար է, կարալ չեմ...

— Ես կհամոզեմ, կսովորեցնեմ,— ասաց Հասմիկը։

— Ա՜յ լավ բան կանես։

Նա հավաքեց բաժակները սինու վրա, վերցրեց բոլորը սամովարի հետ ու տրեխները հատակին քսմսելով դուրս գնաց։

Մի քառորդ ժամից հետո, պատշգամբ բարձրացավ նրա կինը, զրնգալեն բացեց հարևան սենյակի դուռը, ու սկսեց թրխկացնելով մաքրել։ Մի ուրիշ անգամ նա կմաքրեր ու առանց իմաց անելու, կիջներ ներքև, բայց այժմ, լսելով Մուկուչից, որ Գուրգենի մոտ աղջիկ է եկել, հետաքրքրությունը բռնել էր։ Նա ներս մտավ, կանգնեց դռան շեմքին, աչքի տակով դիտեց Հասմիկին ու ասաց.

— Սենյակը պատրաստ է։

Ու նորից հայացքը նետելով Հասմիկի վրա, դուրս գնաց։

Հենց նոր էին տեղափոխել Հասմիկի իրերը մյուս սենյակը, երբ ներս մտավ Միքայելը։

— Ա՜, բարով, Գուրգեն, բարով եք եկել, ընկեր,— ասաց նա Հասմիկի ձեռքը սեղմելով։

Հասմիկը հայտնեց իր գալու նպատակը։

— Թեպետ ես տանը չէի, բայց կարծում եմ, ընկեր Գուրգենը ձեզ լավ ընդունած կլինի։

— Այո՛, շնորհակալ եմ հյուրասիրությունից։

— Դե, ընկեր Գուրգեն, պատրաստվիր, աչքի առաջ ունեցիր, որ սոցմրցում է լինելու քո և ընկերոջ մեջ։

— Մի՞թե,— ասաց Հասմիկը,— ուրեմն գործս բավական դժվարանալու է։

— Ոչ թե ձերը, այլ իմն է դժվարանալու,— վրա բերեց Գուրգենը։

Սովորական հարցուփորձից հետո, ընկեր Միքայելն ասաց Հասմիկին.

— Էս ի՞նչ լավ է ձեր գալը, մեկ-մեկ տանտիկնոջ աչքով կնայեք մեր սարք ու կարգին, ապրուստին...

—Տղամարդիկ շարունակ պնդում են,— ասաց Հասմիկը,— թե կնոջը պիտի ազատել ընտանեկան մանրուքից, բայց հարմար բոպեին իրենք են մղում մեզ դեպի այդ մանրուքը։

— Անցյալի ժառանգությունն է,— ասաց Գուրգենը թեք նայելով ընկեր Միքայելին։

— Դե, Գուրգեն, սկսիր, անցյալի բոլոր մեղքերն ինձ վրա բարձիր...

— Կենացի ժամանակ չէ՞ որ ասում են՝ թույլ տվեք հանձինս ձեր՝ խմելու... և այլն,— ասաց Գուրգենը ծիծաղելով։

— Հա, լավ ես գտել «անձս»... ընկեր Հասմիկն, իհարկե, այդպես չի մտածում։

— Ես ձեր ասածի մեջ մի առանձին բան չեմ տեսնում,— պատասխանեց Հասմիկը,— իսկ ինչ վերաբերում է տնային գործերին, կարծում եմ, պետք է կոմունայով աշխատենք։

— Ես համաձայն եմ,— ասաց Միքայելը։

—Ես էլ իհարկե,— ավելացրեց Գուրգենը։

— Դե ինձ կներեք,— ասաց ընկեր Միքայելը,— ես միայն մի քանի բոպեով եկա. շտապ կարգով պիտի զեկուցում ներկայացնեմ, դուք էլ հոգնած կլինեք, պիտի հանգստանաք։

Ամեն մեկը քաշվեց իր սենյակը։ Գուրգենը քառորդ ժամի չափ մտամոլոր քայլեց սենյակում, անուշադիր թերթեց գրքերը, ապա դուրս եկավ պատշգամբ։ Հասմիկի դուրս գնալուց հետո սենյակը կարծես հանկարծ դատարկվեց, դարձավ անհրապույր, ամայի։

Նա նստեց պատշգամբում թողած մի խարխուլ աթոռի վրա։ Դիմացը՝ երկնքում, լուսնեղջյուրն էր՝ իր խտացրած լույսով, ու կողքին մեղմ, պսպղուն աստղը։ Երկնակամարում սփռված աստղերը նայում էին հեռավոր ժպտով, ասես մրցելով իրար հետ, թե որն ավելի պարզ կերևա։

— Ինչո՞ւ եմ այսպես անհանգստանում, զգացումներիս տեղի տալիս,— մտածում էր նա,— մի՞թե ընկեր Հասմիկի գալու պատճառով... Գուցե նրանից է, որ միայնության մեջ էի, կտրված

ընկերներից, ու առաջին պատահած ուսանողուհին պետք էր ուժեղ տպավորություն աներ վրաս... Հիմա եթե գա ընկեր Միքայելը, տեսնի ինձ այս սենտիմենտալ դրության մեջ, կասի.— հը՞, ո՞նց ես, մեր տղա, երազո՞ւմ ես լուսնի հետ..

Ու այդ մտքից սթափված, նա շտապով ներս մտավ սենյակը, իսկույն հանվեց, պառկեց անկողնում։ Բայց երկար ժամանակ քունը չէր տանում, պտտվում էր անկողնում, ականջ դնում հարևան սենյակին, որտեղ Հասմիկն էր,— ոչ մի շշուկ չէր լսվում։ «Հասմիկը երևի քնած է ճամփորդի խորը քնով ու երազում ծիծաղում է իմ սենտիմենտալ դրության վրա»,— ժպտաց Գուրգենն իր մտորումների վրա ու ընկավ քնի գիրկը։

3

Հետևյալ առավոտ Գուրգենը զարթնեց սովորականից ավելի ուշ՝ դռների թխկթխկոցից։ Արևն ընկել էր պատուհանից ներս ու տարածել սենյակում թուլացնող շոգ։ Նա վեր թռավ շշմած ու սկսեց հագնվել անկամ, կարծես ոչ մի ցանկություն չուներ շարժվելու։ Բայց հանկարծ ականջին ընկավ պատշգամբից Հասմիկի ձայնը, ու կարծես սառը ջրի կաթիլներ ընկան աչքերին, միանգամից զարթեցրին։ «Չէ՞ որ Հասմիկն այնտեղ է»,— անցավ նրա մտքով, ու շտապ-շտապ հագնվելով դուրս եկավ սենյակից։

— Բարև,— ողջունեց նրան Միքայելը,— ի՞նչ եմ տեսնում, ընկեր Գուրգեն, այսքան քնե՞լ, սա քեզանից չի, հենց առաջին օրվանից տեղի ես տալիս։ Ես ու ընկեր Հասմիկը քեզ ենք սպասում։

— Ես պատրաստ եմ,— ասաց Գուրգենը։

Նրանք միասին թեյ խմեցին ու հետո դուրս եկան ընկեր Հասմիկին ծանոթացնելու սովխոզի հետ։

Հասմիկը հագել էր բաց-կապույտ, բարակ զգեստ, դեկոլտեով, թևերը կիսաբաց։ Նրա մեջ արդեն չքացել էր նորեկի անվստահությունը, և իրեն զգում էր, որպես իր հարազատ միջավայրում։

Հասնելով այգուն ընկեր Միքայելն ասաց.

— Ընկեր Գուրգեն, թեպետ իմ պարտականությունն է ընկեր Հասմիկին ծանոթացնելու մեր տնտեսության հետ, բայց կներես, որ շատ եմ զբաղված, խնդրում եմ քեզ վրա առնես այդ գործը։

— Լավ,— ասաց Գուրգենն ուրախանալով, կարծես հենց

իր ցանկությունն էլ այդ էր։ Նա իսկույն Հասմիկին հետն առած, ճանապարհը ծռեց դեպի սովխոզի այգին։

— Գուցե ձեզ համար ժամանակի վատնում է ինձ ծանոթացնելը,— ասաց Հասմիկը, փորձելու նպատակով։— Ես կարող եմ հետաձգել մի ուրիշ անգամի...

— Ընդհակառակը՝ շատ ուրախ եմ, որ ինձ վիճակվեց ձեզ բացատրություններ տալ, բայց ինչո՞ւ այդ միտքը եկավ ձեր մեջ։

— Սենյակից դուրս եկաք դժգոհ դեմքով, և ես ենթադրեցի, թե պատճառը ես եմ։

— Ո՛չ, դա թյուրիմացություն է, երեկ գիշեր ուշ քնեցի, հիմա էլ վեր կացա ծանր գլխով, դա էր պատճառը, և ուրիշ ոչինչ, այժմ արդեն անցավ։

Նրանք անցան ծառուղիներով, տեղ-տեղ կանգ առնելով այս կամ այն ծառը դիտելու համար։ Երկուսի փոխադարձ ձգտումն էր՝ լինել միասին և որքան կարելի է՝ մարդկանցից հեռու։

Կես ժամի չափ այգում շրջելուց հետո, Գուրգենն առաջարկեց.

— Նստենք այս ծառի տակ, փոքր-ինչ հանգստանանք։

Նստեցին ծառի լայն ստվերում ու լուռ նայում էին գետնին, խոտերը պոկոտելով։ Բույսերի բուրմունքի ալիքների հետ մի ինչ-որ սիրտ լցնող զգացումն էր գալիս։ Երկուսն էլ զգում էին, որ ուրախ էին իրար մոտ լինելուց, բայց խոսում էին այլ բաներից։

Հասմիկը հանեց թաշկինակը և ուղղեց գրպանը։

— Այդ ինչ շատ բաներ կան ձեր գրպանում։

— Շատ չէ, բայց մի մեծ բան ունեմ։

Ու հանեց ատրճանակը։

— Ատրճանա՞կ,— զարմացավ Գուրգենը,— ինչո՞ւ համար եք պահում։

— Ջանազան դեպքերի համար։

— Հետո՞,— անգիտակցաբար հարցրեց Գուրգենը։

— Հետո՞... երբ գնում եմ պրակտիկայի, հետս տանում եմ այս ատրճանակը... բայց ինչո՞ւ այդպես հուզվեցիք...

— Ո՛չ, չեմ հուզվում... բայց ինձ մի քիչ տարօրինակ թվաց...

Գուրգենը լռեց։ Մի հիասթափում անցավ վրայով, ասես փա-նաչ ծառը հանկարծ տերևաթափ եղավ նրա առաջ։ Նա պատկերացնում էր Հասմիկին նուրբ զգացումներով մի կին, և հանկարծ՝ այդ ատրճանակը...

— Շարունակենք մեր էքսկուրսիան,— ասաց Հասմիկը, լռու-

թյունը խախտելով ու տեղից վեր թռչելով։ Գուրգենը հետևեց նրան։ Գնացին բանջարանոց։ Մուկուչն աշխատում էր մարգերում, գլխին կարմիր աղլուխ կապած։

— Բարև, Մուկուչ,— ասաց Գուրգենը,— ինչպե՞ս է բանջարանոցդ։

Մուկուչը բարձրացրեց կորացած մեջքն ու հենվեց բահին։

— Բարով եք եկել. կաղամբի վրա որթն է երևացել։

— Ոչինչ, միջոցներ ձեռք կառնենք։

Երբ նրանք բավականաչափ հեռացան, Գուրգենն ասաց.

— Մուկուչը մեր հին աշխատողներից է, նոր բաների հետ այնքան էլ չունի, բայց եռանդով աշխատող է։

Հետևյալ մարգերում աշխատում էին երիտասարդ գյուղացիները։

— Սրանք մեր նոր պրակտիկանտներն են,— բացատրում էր Գուրգենը,— լսել են կարճատև կուրսերը և այժմ անցել են գործնական աշխատանքի։

Բանջարանոցների շարքը դիտելուց հետո, նրանք վերադարձան կաթնատնտեսական մասը։ Մի քանի շենքեր բաց թողնելով, նեռս մտան նոր կառուցած գոմը։

— Մանկությունից իմ առաջ պատկերացել է գոմը որպես մութ, նեխված՝ աղբի մեջ կորած մի որջ,— ասաց Գուրգենը ժպտերես,— և հիմա ամեն անգամ, երբ ներս եմ մտնում այս լուսավոր գոմը, տարօրինակ է թվում, որ ոչ մի մութ անկյուն չկա, հատակը բետոնից է, կանոնավոր բաժանված ընդարձակ մսուրներ են ու մաքրություն...

Գոմի մեջ մնացել էին մի քանի հորթեր ու մի հիվանդ կով։

Հասմիկը շոյեց, գուրգուրեց ցեղական խոշոր հորթին։ Դուրեկան շոյանքից զգացված, հորթը բարձրացրեց գլուխն ու մանկական պարզությամբ լայն բացած աչքերով նայում էր, կարծես խնդրելով, որ էլի շոյի վիզը։

Նրանք դուրս եկան գոմից, անցան լայն ծառուղիով ու դարձյալ բաց թողնելով մի շարք պահեստաշենքեր, կանգ առան արևկող մի բացատի առաջ, որտեղ շարված էին կարգով փեթակներ։ Ուզում էին ներս մտնել, բայց մեղվանոցում աշխատող շրջանային հրահանգիչն ու մեղվաբույծը զգուշացրին։

— Ընկերներ, դուք զինված չեք ցանցով, մեղուները կարող են հարձակվել ձեզ վրա։

— Պիտի հպատակվենք,— ծիծաղեց Գուրգենը,— մի ուրիշ անգամ դիմակներով ներս կմտնենք։

Երկար ծառուղին բերավ նրանց թռչնաբուծարանը։ Ընդարձակ այգու մի մասում, որը դրսից ցանցով պատած էր, կանաչի մեջ ծաղիկների նման տարածվել էին սպիտակ հավերը։ Նրանց մի մասը ձյունաթույր գծով շարվել էին առվի գծով ու կարմիր կատարները շարժելով, ջուր էին խմում առանց շտապելու, կարծես խաղալով։

Նրանք ներս մտան ճուտերին հատկացրած շենքն ու այնտեղ հանդիպեցին թռչնաբուծարանի վարիչին, որը մտահոգված, ինքնամփոփ դիտում էր ցանցապատ շրջանում ծվծվացող սպիտակ ճուտերին։

— Ինչպե՞ս են ճուտիկները,— հարցրեց Գուրգենը, բարևելուց հետո։

— Հիվանդությունը շարունակվում է...

— Մասսայական բուծարանները միշտ համաճարակի վտանգի մեջ են, անշուշտ մենք պիտի սովորենք մի շարք սխալներ անելուց հետո...

— Կովում ենք օր ու գիշեր, տեսնենք ի՞նչ կլինի։

Վարիչի առաջնորդությամբ նրանք այցելեցին ինկուբատորների բաժանմունքը, հավաքները, դիտեցին հետևի այգում հավերի ու հնդկահավերի զանազան ցեղերը։ Երբ դուրս եկան թռչնաբուծարանից, նրանց առջևից անցան երեք թխսկան, երեքն էլ սպիտակ, նրանք միացած ման էին ածում նորելուկ ճուտերին։

— Մի՞թե չեն կովում,— հարցրեց Հասմիկը։

— Ո՛չ, չեն կովում,— ասաց վարիչը,— կովի ազդակները վերացած են՝ կերն ապահովված է, նշանակություն ունի և այն, որ բոլորը մի գույնի են թե՛ ճուտերը, թե՛ թխսկանները։

— Ա՜յ քեզ կոմունա,— ասաց Հասմիկը, չկարողանալով աչքերը հեռացնել տարօրինակ երրորդությունից։

— Ինկուբատորից ստացած ճուտերը փոքր-ինչ ավելի հիմարիկ են լինում, քան թխսկաններինը,— շարունակեց վարիչը,— սրանք ավելի աշխույժ են ու առույգ տեսք ունեն, բացի դրանից թխսկանը բավական բան է սովորեցնում իր կչկչոցով։

— Այստեղ շատ բան կա անելու,— ասաց Հասմիկը, երբ նրանք դուրս եկան այգուց ու գնում էին դեպի փորձադաշտը,— ես

պրակտիկայի ժամանակ աշխատում եմ ծանոթանալ տեղում եղած բոլոր ճյուղերի հետ։

— Դուք ուզում եք էնցիկլոպեդի՞ստ դառնալ։

— Այնքանով, որքանով այդ չի խանգարիլ իմ հիմնական մասնագիտությանը։

Փորձաղաշտում շրջանային գյուղատնտեսը բացատրություններ էր տալիս մի խումբ կոմերիտականների։

— Զարմանալի է,— ասաց Հասմիկը,— որ տնտեսությունն էլ գնում եմ, ամեն տեղ դպրոցի տպավորություն եմ ստանում։

— Այո՛, մենք էլ հենց դրան ենք ձգտում։

Փորձաղաշտը դիտելուց հետո նրանք վերջացրին առաջին ժուցիկ պտույտն ու վերադարձան իրենց բնակարանը։

— Իսկ այստեղ կա՞ լաբորատորիա։

— Այո՛, կա, ներքևի հարկում, բայց դեռ կարգին սարքավորված չէ։

— Կարելի՞ է տեսնել։

— Ինչո՞ւ չէ։

Նրանք իջան մի կիսախավար սենյակ, որտեղ պատերի մոտ շարված էին մի քանի պահարաններ զանազան նմուշներով ու քիմիական նյութերով։ Սեղանի վրա անկարգ թափված էին զանազան իրեր և նյութեր՝ փոքրիկ պարկերով։

— Ներեցեք, ընկեր Գուրգեն, պիտի ասեմ, որ անկարգ դրության մեջ է լաբորատորիան, եթե թույլ կտաք, ես կարգի կբերեմ։

— Ընկեր Միքայելը թույլ կտա։

— Վաղվանից կսկսեմ։ Բացի դրանից, ես կուզեի, որ մեր աշխատանքները որոշ պլանով ընթանային։

— Այդ պլանն արդեն կազմված է, կքննենք և կաշխատենք խիստ կարգով հետևել նրան։

Գուրգենը մի առանձին շեշտով արտասանեց «խիստ կարգով» բառերը, ցույց տալով, որ ինքը լուրջ է վերաբերվում գործին։

Հասմիկը նայեց նրան նույնպես լուրջ և միաժամանակ թաքնված մտերմական հայացքով, որը կարծես ասում էր՝ կլինեմ քո լավ և գործունյա ընկերը...

4

Սովխոզի վարիչը նորից քաղաք է գնացել։ Գուրգենն ուրախ է, որ մենակ է մնալու Հասմիկի հետ։ «Գուցե նա քաշվում է ընկեր

Միքայելից,— մտածում էր նա,— այժմ այդ արգելքն էլ չկա, կարող է ավելի պարզ արտահայտվել...»

Առավոտը վաղ, արևածագին, նրանք միասին գնում էին այգին՝ ծառերի վնասատու միջատներ փնտրելու։

Առավոտը շողշողում է, գուրգուրում, հրապուրում, և այդ հրապուրանքի կենտրոնում Հասմիկն է։

Նրանք միջատներ փնտրելով հեռանում են, խորասուզվում երկար ծառուղիների մեջ։

Ահա դարձյալ մի ծառ, որի վրա միջատներ կան։ Հասմիկը քլփորում, կանչում է Գուրգենին, մտերմաբար նայելով նրա դեմքին։

—Տեսեք, ընկեր Գուրգեն, որտե՞ղ են թաքնված։

Գուրգենը մոտենում է ու անգիտակցաբար ձախ ձեռը դնելով Հասմիկի ուսին, նայում է նրա ցույց տված տեղը։ Այդ րոպեին Հասմիկը հանկարծ մի կողմ է քաշվում։

Գուրգենը կարմրած աչքերը հառում է գետնին, կոշիկի ծայրով քանդելով գետինը։

Իսկ Հասմիկը, մի քանի րոպե կենտրոնացնում է ուշադրությունը ծառի վրա, միջատներին դիտելով, ապա ցանկանալով մոռացության տալ եղածը, նա ասում է բարձր ձայնով.

— Ընկեր Գուրգեն, հիշո՞ւմ եք այս միջատի անունը։

— Ո՛չ, մոռացել եմ,— պատասխանում է Գուրգենը լրջորեն, չնայած որ հիշում է։

«Ուզում է հանգստացնել,— մտածում է նա,— բայց արժե՛ արդյոք լուրջ ուշադրություն դարձնել...»

Ու լուռ վերադառնում են երկար ծառուղիով։ Գարձեալ նույն Հասմիկն էր, նույն Գուրգենի առաջ, բայց քողով ծածկված, անհասկանալի...

Թռչնաբուծարանի մոտ Հասմիկը բաժանվում է։

— Ես պիտի ինկուբատորների ջերմաչափը ստուգեմ,— ասում է նա, ներս մտնելով ներքևի հարկը։

Գուրգենը մտացիր անցնում է ծառուղիով, բարձրանում է վերև՝ իր սենյակն ու նստում սեղանի մոտ։ Պիտի թեյ խմել, պիտի սկսել զբաղմունքները, բայց ձեռքին գործ չի կրոչում։ Նա հանում է իր հուշատետրն ու գրում նոր երեսից։

«Հենց առաջին տեսնելուց Հասմիկը շարունակ պտտվում է երևակայությանս մեջ ու խառնում զբաղմունքներս։ Ես սեր չեմ

ընդունում, միայն զգում եմ ուրախություն նրան տեսնելիս ու տխրում եմ բաժանվելիս։ Ես սեր չեմ ընդունում, բայց ամեն անգամ, երբ ուզում եմ պարզ ձևով վճռել այդ կարգի հարցերը, անսպասելի կերպով միտքս խճճվում է ինչ-որ բարդություններից և ընկնում եմ հակասությունների մեջ։ Ահա այդպիսի մի տարօրինակ բարդություն է և ընկեր Հասմիկը... Մաթեմատիկայի մեջ կան իռացիոնալ, երևակայական թվեր, կյանքում էլ կան տարօրինակ, իռացիոնալ բնավորություններ, որոնց թվին է պատկանում ընկեր Հասմիկը։ Նա կարծես ունի և սովորական կնոջ հատկություններ, բայց այդ բոլորը ծածկված է մի քմահաճ ինքնասիրության տակ, որը դարձնում է նրան անհասկանալի, անլուծելի»...

Գուրգենի մտքերն ընդհատեց Միքայելը, երբ նոր վերադառնալով քաղաքից, ներս մտավ իմանալու, թե ի՞նչ է կատարվել իր բացակայության ժամանակ։

— Ընկեր Գուրգեն,— բարևներս... հը, ո՞նց ես, կարծում եմ՝ հիմա գիտությունը թողած՝ բանաստեղծությամբ ես զբաղվում։

Գուրգենին թվաց, թե Միքայելը նկատեց իր այժմյան «զբաղմունքը» և հանկարծակիի գալով, կարմրեց։

— Ո՛չ, այդպիսի բան չկա,— ասաց նա, շտապով ծածկելով տետրը։

— Ինչպե՞ս են ընթանում գործերը,— ասաց Միքայելը նստելով աթոռին։

— Ոչինչ, լավ են։

— Էհ, վերջապես թափ տվի վրայից զեկուցումներս ու թվերը։ Իսկ դու, Գուրգեն, ի՞նչ փուլի մեջ ես, հուսով եմ, որ դեռ չես սիրահարվել...

— Էհ, ընկեր Միքայել, դու կարծես մտադրվել ես ինձ շարունակ կարմրացնել։

— Ինչո՞ւ պիտի կարմրես, ձեր սերունդը մերի համեմատ մի տասը տարի առաջ է թողնում կարմրելը։ Բայց կատակը մի կողմը, ի՞նչ տպավորություն է թողնում ընկեր Հասմիկը։

— Ես նրանից շատ բան եմ սպասում, պատրաստված ու եռանդուն աղջիկ է, միայն բնավորության մեջ կան տարօրինակ դծեր...

— Է՛հ, ո՞ր կրթված կնոջ մեջ չկան տարօրինակ գծեր, դա նրանից է, որ ազատագրված կինն իր երևակայությամբ ավելի շատ է ցանկանում, քան կյանքը կարող է տալ ներկայումս, իսկ

երբ մարդ իր «կարողությունից» ավելի է պահանջում կյանքից, նա ջղայնանում է.. մենք հետաքրքրվենք միայն նրա աշխատանքով։

— Աշխատանքի կողմից հարվածային է, ամեն տեղ հասնում է, գյուղատնտեսության բոլոր ճյուղերին հետևում է։ Աշխատում է անգրագիտության վերացման գործում, էլ ի՞նչ մնաց...

— Լավ է, լավ է... շատ ուրախ եմ, մեր սովխոզում հենց ձեզ նման երիտասարդներ էին պակասում, այժմ այդ էլ կա, ուրեմն կարող ենք մեր ծրագրերը լիովին իրագործել, մանավանդ այն կոլխոզի ծրագիրը, որի մասին քեզ արդեն ասել եմ։ Մի քիչ կարգի բերեմ մեր տնտեսության գործերը, այն ժամանակ դրանով կզբաղվենք միասին...

— Ես սպասում եմ քո հրամանին,— ասաց Գուրգենը, մոտենալով մանրադիտակին։

Միքայելը շտապ քայլերով իջավ ներքև։

5

Կյանքն ընթանում էր եռուն աշխատանքի մեջ։ Հասմիկն արդեն փաստորեն դարձել էր Գուրգենի օգնականը՝ նրա գիտական հետազոտությունների մեջ։ Նա սիստեմատիկաբար դիտում էր փորձադաշտի բույսերը, հավաքում էր նմուշները, հետևում էր բոլոր ճյուղերի աշխատանքներին։ Երբեմն էլ Գուրգենին քշում էր դուրս, իսկ ինքն զբաղվում մանրադիտակով։

Աննկատելի կերպով նա դարձել էր և Գուրգենի վերահսկիչը, — մի առանձին խանդով հետապնդում էր նրա գործերին ու հեգնանքով նկատողության արժանացնում նրա անկարգությունը։ Գործի շուրջը նրանք բավական մտերմացել էին և «դու»-ով էին խոսում։

Այսօր էլ նրա ձեռքը ընկավ Գուրգենի տետրերը, որոնց մեջ չավարտված հոդվածներ էին զանազան հարցերի շուրջը։ Սեղանի արկղում դիտողության թերթիկները տեղավորելիս նա հանեց տետրերն ու սկսեց թերթել։

— Էս ի՞նչ բաներ են,— ասաց Հասմիկը, նայելով վերնագրերին։

«Ռեակցիոներների արշավանքը միջավայրի ազդեցության դեմ...»։

Գուրգենը վեր թռավ տեղից։

— Որտեղի՞ց ձեռդ ընկավ այդ տետրերը,— ասաց նա, կարմրելով,— դա մի հոդված է դարվինիզմի հարցերի շուրջը։

— Կուզես, էլ չեմ կարդա, կարծում էի դիտողություններ են, ուզում էի կարգի բերել։

— Արդեն ուշ է արգելելը, կարող ես շարունակել։

Հասմիկը շարունակեց։

«Կոլեկտիվը կենդանական աշխարհում...»։

«Էներգիայի կուտակումը բույսերի սերմերի մեջ կամ գենետիկայի հեղաշրջումը...»։

Գուրգենն սկսեց քայլել սենյակում։ Ապա մոտեցավ Հասմիկին, որը զարմանքով դիտում էր նրան ու ձեռքը խրելով իր խիտ մազերի մեջ, ասաց.

— Զարմանալի եռուն ժամանակում ենք ապրում, ընկեր Հասմիկ, մարդ ուզում է հազար ուղեղ, հազար ձեռք ունենա, ամեն գործի հասնի... Մի կողմից մեջս վառվում է գիտության ծարավը, գլխումս վխտում են գենետիկայի հարցերը, թվում է, թե մի նշանավոր գյուտ պիտի անեմ, հեղաշրջում կատարեմ, հարյուրապատկեմ բերքատվությունը... Մյուս կողմից էլ մի ուրիշ ձգտում է գալիս մեջս՝ ուզում եմ ոտով-գլխով նվիրվեմ սոցիալիստական շինարարության գործնականին... Մի տո՛ւր այդ տետրը։

Գուրգենը վերցրեց տետրը ու սկսեց թերթել։ Բայց բոպեաչափ աչք ածելուց հետո ձգեց սեղանի վրա ու նորից սկսեց քայլել։

Հասմիկը շարունակեց կարդալ։

— Օ՜հ, սա արդեն կարգից դուրս է,— ասաց նա ժպտալով,— «Սերը կամ սեռը պայծառ արևի տակ—չքողարկված խոհեր...»։

— Չէ՜, մի՛ կարդա,— կանգ առավ Գուրգենը,— դրանք թռուցիկ նկատողություններ են...

— Որոնք սպառնում են լուրջ տրակտատներ դառնալ և ամեն ինչ հեղաշրջել...

— Հեգնանքը Հասմիկի տարերքն է։

— Իսկ երևակայությունը՝ Գուրգենի... երբ այդ սիրո մասին հոդվածը վերջացնես, թույլ տուր վերնագրի տակ, փակագծերի մեջ գրեմ՝ ընկեր Գուրգենի հազար և մեկ հակասությունների մասին...

— Իսկ դրա տակ ես կավելացնեմ՝ ընկեր Հասմիկի հազար ու մեկ տարօրինակությունների մասին...

— Թողնենք այս փետուրամարտը և անցնենք գործի. քեզ սպասում է մանրադիտակը, իսկ ինձ՝ փորձադաշտը... Մի բան

միայն կուզեի նկատել, հարգելի պրոֆեսորացու, որ այս բոլոր հոդվածներն սկսած ու թողած են, եթե այդպես շարունակես, ամբողջ կյանքդ կիսատ կմնա...

— Լավ պտուղն ուշ է հասնում...

— Անուրջնե՜ր և կամուրջնե՜ր... Թևերդ շատ ես լայն արձակում, բայց մոռանում ես, որ ամենաուշ հասնող պտուղը զկեռն է, որի հասնելը միաժամանակ և փտել է նշանակում...

— Ճաշակիդ ինչ ասեմ, եղեմական պտուղները թողած, ընկել ես զկեռի հետևից։

— Եղեմական պտուղները բավական վտանգավոր են քեզ համար,— ասաց Հասմիկը ժպտալով ու դուրս գնաց։

Գուրգենը շարժեց գլուխը, նույնպես ժպտալով, նա մի քանի բոպե լուռ քայլում էր, մտածելով. որքան աղջիկներ կային քաղաքում, որոնք այնպես թեթև էին նայում իրենց փաղաքշանքներին, իսկ ինձ վիճակվել է մի ինչ-որ հանելուկային կարծրություն... Մեկ տեսնես՝ մոտ-մտերիմ է թվում, մեկ էլ հանկարծ դառնում է խուսափուկ՝ սնդիկի նման... որտե՞ղ է վերջապես Հասմիկի «կվինտ-էսենցիան...»։ Այսօր էլ տետրերիս հասավ, իմացավ իմ կարծիքը սիրո մասին, որ ես չեմ ընդունում սերը... Այդպես՝ օր-օրի վրա ես մերկանում եմ գաղտնիքներից, իսկ Հասմիկը մնում է անլուծելի մի «սֆինքս...»։

Ապա վեր թռավ ինքն իրեն ասելով.— Է՜հ, ինչ եմ զգացումների հետևից ընկել... աշխատանք, գիտություն, սոցիալիստական շինարարություն...

Ու նորից վրա ընկավ իր մանրադիտակին։

Իսկ Հասմիկն այդ ժամանակ գնում էր դեպի փորձադաշտն արևակեզ ճամփով ու մտածում Գուրգենի մասին. «Ճիշտ է, նա արդեն ընտելացել է իր՝ Հասմիկի բնավորությանը, և զուտ ընկերական հարաբերությունների սահմանից դուրս չի գալիս։ Բայց նրա զգացումները լարված են, թվում է, թե ամեն բոպե պատրաստ է արտահայտվելու... Իսկ եթե այդ լինի, ինչպե՞ս կլինի, մի՞թե իր հոդվածի «չքողարկված» ձևով... և ի՞նչ կհետևի այդ բոլորին...»

Նա անցնում էր դաշտով՝ տարօրինակ, երևակայական վեճի բռնված Գուրգենի հետ, ճգնում էր համոզել նրան ինչ-որ իրեն՝ Հասմիկի համար կարևոր հարցում, որը Գուրգենը կարծես դժվարությամբ էր հասկանում։

Խոտերի խշխշոցը նրան սթափեցրեց, կանգ առավ, կարծելով թե օձ է, բայց իսկույն նկատեց, որ լորտուկ է անցնում սահուն գալարումներով։ Վրա վազեց բռնեց ու հետո երկու ձեռքով պինդ պահելով սկսեց դիտել։

«Եթե դու թույն ունենայիր, անշուշտ մարդիկ քեզ ավելի կհարգեին,— ասում էր մտքում Հասմիկը, դիտելով լորտուկի անօգնական, աղերսող դեմքը,— օձի նման քո մեջ էլ կտեսնեին իմաստության խորհրդանիշը... Եվայի և ամբողջ մարդկության մեղքի սկզբնապատճառը կհամարեին, և ոչ թե անպատկառ ձեռներով կշոշափեին քեզ»։

Լորտուկի հետզհետե ուժեղացող շարժումներից սարսուռ զգալով, Հասմիկը բաց թողեց նրան ու շարունակեց ճանապարհը։

«Չէ, Գուրգեն,— շարունակում էր նա իր վեճը,— ես հաճույք չեմ, ես ուրիշ եմ... ես փոքր-ինչ թույն եմ քեզ համար...

Փոքր-ինչ թույն անհրաժեշտ է նրա՝ տղամարդու մեջ նստած հին կենցաղի մնացորդների դեմ... չէ, մինչև նա չգիտակցի իմ մեջ նստած երկրորդ կնոջ, ես նրա մտերիմը չեմ լինի»։

Նա մտավ փորձադաշտն ու սկսեց իր սովորական դիտողությունները։ Բայց հազիվ մի տասը րոպե էր անցել, երբ նրա ականջին հասավ խոսակցության ձայն։ Ետ նայելով, նա նկատեց Միքայելին ու Գուրգենին, որոնք միասին խոսելով մոտենում էին։

— Ողջույններս, ընկեր Հասմիկ,— բարձրաձայն կանչեց Միքայելը։

— Բարև։

— Ինչպե՞ս եք, գո՞հ եք մեր սովխոզից։

— Գոհ եմ, մանավանդ նրա համար, որ այստեղ շատ բան կա անելու։

— Ա՜յ, ինչ հրաշալի խոսք եմ լսում... Բայց չմոռանանք, որ միայն ձեր պրակտիկայով չպիտի սահմանափակվեք, մենք ուրիշ գործ էլ ունենք անելու. մոտակա գյուղերից մեկում պետք է կոլխոզ հիմնենք, մենք նրա շեֆն ենք, չգիտեմ Գուրգենն ասե՞լ է, թե՞ չէ։

— Ասել է, և ես էլ իմ պատրաստակամությունն եմ հայտնել։

— Լավ, շատ լավ, ուրեմն, ընկերներ, դուք երկուսով կլինեք ավանգարդը, իսկ ես էլ կգամ ձեր հետևից, որպես արիերգարդ։ Նախապատրաստական աշխատանքները վերջացնելուց հետո կդիմենք գործի...

— Սոցարշավի եռյակը հայտարարում եմ կազմված,— ասաց Գուրգենը,— որոշումը կայացած է...

— Ստորագրում եմ,— ասաց Հասմիկը։

— Ես էլ հաստատում եմ դաշտային կնիքով...— ասաց Միքայելը,— իսկ այժմ, ընկերներ, սկսենք մեր փորձադաշտի ուսումնասիրությունը...

6

Արդեն մի շաբաթ էր, Գուրգենն ու Հասմիկը բանակցությունների մեջ էին գյուղի ղեկավար ընկերների հետ՝ կոլխոզ հիմնելու առթիվ, նրանք շտապում էին, իսկ Միքայելը շարունակ հետաձգում էր, պատճառ բերելով, թե պիտի նախօրոք ուսումնասիրել գյուղի պայմանները, բայց նրա միտքն ուրիշ էր,— նա ուզում էր կազմակերպել «արշավը» գյուղատնտեսական մեքենաների ուղեկցությամբ, որոնք նորոգվելու կարիք ունեին։ Այս կետի մասին նա չէր հայտնում Գուրգենին ու Հասմիկին, ցանկանալով նրանց հանկարծակի բերել մեքենաների հանդիսավոր երթով։

Վերջապես Միքայելը հայտնեց, որ կարելի է սկսել «սոցարշավը»։ Այդ օրը Գուրգենն ու Հասմիկը արտակարգ հուզման մեջ էին, շարունակ օգտվում էին ամեն մի առիթից, որ թողնեն գործն ու խոսեն կոլխոզի մասին։

Նրանք երկուսով դուրս եկան սովխոզից ճաշից հետո։ Որոշված էր ժողով հրավիրել երեկոյան։ Միքայելը պիտի գար առանձին։

Զով օր էր. թեթև քամին ծփում էր հասած արտերի վրայով, հետը բերելով թարմ ծղոտի բուրմունքը։

— Ի՞նչ ես վազում, Գուրգեն,— ասաց Հասմիկը ծիծաղելով,— կարծես հրդեհի ես շտապում։

— Իսկ դու, ինչո՞ւ ես ծիծաղում, դու ավելի ես կասկածելի...

— Ես նայում եմ հետևիցդ ու մտածում, թե բնավորությանդ ո՞ր գծերը կծաղրեն ապագայում, երբ պրոֆեսոր կդառնաս։

— Օհո՜, դեռ պրոֆեսոր չդառած արդեն ավանսով ծաղրո՞ւմ ես։

— Ի՞նչ կա որ, դա մի սովորական երևույթ է,— ամեն մարդ ծիծաղելի է դառնում, երբ նրա բնավորության գծերն ընդհանուրի սեփականություն են դառնում։

— Է՜հ, թող հաջողվի պրոֆեսոր դառնալ, համաձայն եմ, մի

քիչ էլ ուսանողների բերանում ծամոն դառնալ, իսկ եթե Հասմիկը լիներ ուսանողների մեջ, իսկի էլ չէի նեղանալ։

— Ինչո՞ւ դեպի ինձ այդպիսի բացառություն։

— Դեպի քեզ ես առանձին վերաբերմունք ունեմ...

— Չես էլ նկատում, որ քայլերդ քեզ հակասում են, շարունակ առաջ ես ընկնում, թողնում ես ինձ միայնակ...

— Այո՛, ընկեր Գուրգենի քայլերն են հակասում, իսկ ընկեր Հասմիկի լեզուն...

— Դա շատ համարձակ հիպոթեզ է, ես էլ քո վերաբերմամբ մի հիպոթեզ ունեմ, որ ավելի մոտ է ճշմարտության։

— Այսի՞նքն։

— Ինձ թվում է, որ ընկեր Գուրգենը, չնայած իրեն նոր մարդ է համարում, դեռ չի ազատագրվել հին կենցաղի հոգեբանությունից...

«Փորձում է»,— անցավ Գուրգենի մտքով։

— Ինչ-որ պահած բաներ ես դուրս բերում,— ասաց Գուրգենը,— անսպասելի գյուտեր ես անում, եթե քո ասածը ճիշտ է, դա վերաբերում է ընդհանուրին, ուրեմն կինը նույնքան խճողված է հին կենցաղով, որքան և տղամարդը։

— Բայց զտումը պիտի սկսել տղամարդուց, որպես նախկին իշխողից... մի բանաստեղծի ասելով, կինը ոչ միայն բնության ստեղծածն է, այլև տղամարդու երևակայության... ահա այդ «երևակայող» տղամարդը տեսականում կնոջը դարձրել է մի «երկնային» էակ, իսկ իրականում՝ միայն իր հավելվածը...

— Այո՛, առաջ այդպես էր, իսկ ա՞յժմ...

— Իսկ այժմ ենթագիտակցական ծալքերում դեռ շարունակվում է նախկին «հավելվածային» վերաբերմունքը...

— Ուրեմն ես, որպես տղամարդ, մահացու մեղքե՞ր եմ ունեցել... իսկ ինձ թվում է, ընդհակառակը, որ դու տարված ես հիվանդագին ինքնասիրությամբ, տղամարդու ամեն մի խոսքը քեզ թվում է կնոջ իրավունքների խախտում... Դա նշանակում է, որ դու հոգեբանորեն դեռ չես մարսել կնոջ և տղամարդու հավասարությունն ու ընկել ես հակառակ ծայրահեղության մեջ՝ ստեղծելով կնոջ մասին մի ուռճացած կարծիք...

— Հրաշալի ես վիճաբանում, Գուրգեն... ուղղակի հաբձակումներս ետ ես տալիս, մեղադրում ես, փոխանակ արդարանալու...

— Իմ ասածը զուտ ճշմարտություն է, եթե առաջ կար նեղտղամարդկային մոտեցում, այժմ՝ հանձինս Հասմիկի՝ արտահայտվում է նեղ-կանացի մոտեցումը, պետք է ընդունենք, որ կինը, իր ենթագիտակցական ծալքերի շնորհիվ, դեռևս չի կարողանում հարմոնիզացիայի ենթարկել իր զգացումներն ու ընկերական հարաբերությունները...

— Օհո՛, դու դեռ պրոֆեսոր չդառած՝ արդեն կեղծ վկայություններ ես տալիս գիտության մասին։

Նրանց վեճը ընդհատեց հետևից եկող ավտոմոբիլի թավ ու երկար սուլոցը։ Նրանք փութկոտ քաշվեցին ճանապարհի մի կողմը, ու երկուսն էլ հանկարծ բացականչեցին.

— Ընկեր Միքայելն է...

Ավտո-ապրանքատարը գալիս էր հետևից քաշելով կալսելու մեքենան, ապա գալիս էր տրակտորը, որը քաշում էր հնձելու մեքենան։

Ավտոյի շոֆերի կողքին նստած էր ընկեր Միքայելը։

— Վա՛յ, ա՛յ քեզ անակնկալ, էս ինչ մեքենայական երթ եք կազմակերպել, ընկեր Միքայել,— ասաց Գուրգենը մոտենալով ավտոյին, երբ նա կանգ առավ։

— Սա մեր սոցարշավի արտիլերիան է,— ասաց Միքայելը,— առանց այս ծանրակշիռ արգումենտների ձեր էնտուզիազմը կարող է ջուր կտրել։

— Դա ի՞նչ աջթեքումային մտքեր են։

— Թող կոլխոզը գլուխ գա, հետո ուզում ես աջ թեքման մեջ մեղադրիր, ուզում ես՝ ձախ.. իսկ դու այն ասա, ինչպե՞ս է ձեր էնտուզիազմը...

— Մեր էնտուզիա՞զմը... ամբողջ ժամանակ վեճի մեջ էինք։

— Ինչի՞ մասին։

— Նոր կնոջ մասին։

— Կոլխոզո՞ւմ։

— Ո՛չ, ընդհանրապես։

— Օ՜, ամոթ էնտուզիաստներին, որ ուղղակի դավաճանություն է, շուտ արեք, բանվոր մտեք, թե չէ բաններդ բուրդ է... դե, նստեք ավտո. տեմպերից շեղված մարդկանց մեքենան կշտկի...

— Ընկեր Միքայել, հակաճառելու շատ բան ունեմ, բայց առայժմ հետաձգում եմ,— ասաց Գուրգենը։

Գուրգենն ու Հասմիկը նստեցին ավտոն։ Մեքենան նորից շարժվեց, խուլ աղմուկ հանելով։

Նրանք էլ չկարողացան խոսել, որովհետև ավտոն ինչ-որ փոս ընկավ, սաստիկ ցնցեց նրանց։ Երկուսն էլ սկսեցին քրքջալ։

Մինչև գյուղ հասնելը ուրախ տրամադրությունը հետևում էր նրանց։

7

Արտասովոր երթը նկատելով, գյուղի երեխաները խումբ-խումբ վազում էին մեքենաների հետևից, իրենց ճիչերով ուժեղացնելով աղմուկը։ Իրիկնադեմի երկար ստվերներում նստած հատուկենտ ծերունիները վեր էին կենում տեղերից ու զարմանքով նայում, ապա դանդաղ քայլերով դիմում դեպի գյուղի կենտրոնը, իմանալու, թե ի՞նչ «խաբար է». ջրի գնացող կանայք ապշած, շեղ հայացքով դիտում էին նորեկներին։

Մեքենաները կանգ առան գյուղի հրապարակում՝ դպրոցի առաջ։ Իջնելուն պես Միքայելը մարդ ուղարկեց գյուղսովետի նախագահի հետևից, ապա նկատելով, որ հետաքրքրվող գյուղացիները հետզհետե խմբվում են իր շուրջը, սկսեց բացատրություններ տալ մեքենաների մասին։

Արևը մայր էր մտնում։ Ամառվա երեկոյի այն ժամերն էին, երբ ցերեկվա շոգից թմրած գյուղը նորից արթնանում, աշխուժանում է։ Կանայք շտապ ջուր էին կրում կժերով կամ ավելում բակերը, փողոցներով անցնում էին կանաչ խոտ բարձած ձիաներն ու էշերը, շուրջը տարածելով նոր հնձած խոտի թարմ բուրմունքը։

Գուրգենն ու Հասմիկը անցուդարձ էին անում մոտակա նեղ փողոցներով, դիտելով տների բակերը։ Մի տան առաջ նրանք կանգ առան։ Աշխատանքից նոր վերադարձած գյուղացին երկու ձեռքով բռնած իր փոքրիկ երեխային, վեր-վեր էր թռցնում, մեծ զվարճություն պատճառելով նրան։ Երեխան անընդհատ քրքջում էր ու ձեռները շարժում։ Կինը քլթքլթացնելով ջուր էր ածում կժից պղնձի մեջ, աղջիկն ավելում էր բակը, սաստիկ փոշի բարձրացնելով, իսկ պառավ նանը կովն էր կթում։

— Ահա քեզ մասնավոր սեփականության իդիլիան,— ասաց Գուրգենը—սեփական տուն, սեփական պարտեզ ու այգի, սեփական կով, և այլ բարիքներ... միանգամայն կարելի է հիանալ...

— Բայց ավա՜ղ, այդ իդիլիան իր վերջալույսն է ապրում... Մի նայիր, երեխան լավիկն է, չէ՞։

— Հենց այդ լավիկն էլ մեծանալուն պես քար է ձգելու մասնավոր սեփականության գլխին։

Նկատելով նորեկներին, գյուղացին դադարեց երեխայի հետ խաղալուց ու զարմացած նայում էր նրանց, կարծելով թե իրեն մոտ են եկել։ Անհարմարություն զգալով այդ անհանգիստ հայացքից, Գուրգենն ու Հասմիկը հեռացան, վերադառնալով նորից դեպի հրապարակը։

Այնտեղ արդեն բազմությունը լցվել էր։ Տիրում էր մի ժխոր, որի լեյտմոտիվը կազմում էր տրակտորի խուլ դղրդոցը։ Միքայելը դիտմամբ շարժման մեջ էր պահում նրան՝ «արտիլերիային» հաղթական տոն տալու համար։

Վերջապես եկավ գյուղսովետի նախագահը, մոտ երեսուն տարեկան՝ դեմքն արևից այրված ու անխնամ մազակալած, նա ամոթխած բարևեց Գուրգենին ու Հասմիկին, ապա ամբոխը ճեղքելով, մոտեցավ Միքայելին, որն այդ րոպեին բացատրում էր տրակտորի մասերը։

— Բա՜րև, բա՜րև,— բացականչեց Միքայելը, ձեռք տալով նախագահին,— ահա ինչպես տեսնում ես, եկել ենք, ժամանակը կարճ է, պիտի շուտով սկսենք ժողովը։

Ապա մի կողմ քաշելով նախագահին, հարցրեց.

— Խմաց ես արե՞լ տղերանց, չքավորականների ժողով արե՞լ ես։

— Հա՜, ինչպես չէ, հիմա էլ ես ինքս եմ ասել ամենքին։

Շուտով եկան գյուղի ղեկավար ընկերներն ու բարևելով նորեկներին, շրջապատեցին նրանց։ Գյուղացիներն ուշադրությամբ դիտում, շոշափում էին մեքենաները, կամ անկարգ խմբվելով, սպասողական հայացքով նայում հյուրերին, ցածր ձայնով զանազան նկատողություններ անելով իրար մեջ։ Գյուղի քահանան թաքնվել էր հաստ չինարու հետևն ու գաղտագողի դիտում էր ամեն ինչ։

— Հը՜, ինչպե՞ս է մեր սոցիալիստական սեկտորի տրամադրությունը,— հարցրեց Գուրգենը բչիջի քարտուղարին։

— Ոչինչ, լավ է։

Փոքր-ինչ զրուցելուց հետո, գյուղսովետի նախագահն ասաց.

— Դե՜, ընկերներ, կարող եք սկսել ժողովը։

Նրանք ներս մտան դպրոցի դահլիճն ու շարվեցին բեմի սե-

զանի շուրջը։ Մի խումբ գյուղացիներ շտապով ներս գնացին նրանց հետևից ու գրավեցին առաջին կարգերի նստարանները։ Մյուսներն ավելի դանդաղ՝ հետզհետե լցվեցին դահլիճ, բերելով իրենց հետ դրսի աղմուկն ու դաշտային աշխատանքի քրտնքի հոտը, որով ծծված էին նրանց շորերը։ Նստարանների վրա այլևս տեղ չկար, նոր եկողները խմբվում էին դահլիճի հետևը կամ միջանցքներում։

Աղմուկը հետզհետե կենտրոնանում էր մի կետում, որտեղ երկու խումբ վեճի էին բռնվել իրար հետ։ Դրսից լսվում էր մեքենաների աղմուկը։

Լուսնի խոշոր բոլորակը երևաց սարերի հետևից ու երեկոյան մթնշաղն աննկատելի կերպով միացավ նրա մեղմ լույսի հետ։ Բակում ծվծվում էին երեխաները, երբեմն մագլցելով պատուհանների վանդակներով ու հետաքրքիր հայացքներ նետելով դահլիճի ներսը։ Պատուհանների տակ խմբվել էին գյուղի կանայք ու ճչում, աղմկում էին տարօրինակ իրարանցման մեջ։

Լսվեց զանգի ձայնը։ Դահլիճ ներս բերին երկու լամպ, մեկը դրին բեմի սեղանի վրա, մյուսը կախեցին պատի մեխից։ Նախագահը կանգնած, փոքր-ինչ սպասեց, դիտելով իր սովոր աչքերով դիմացի հասարակությունը, մտքում գուշակելով, թե ի՞նչ ելք կստանա ժողովը, ապա սկսեց, փոքր-ինչ շփոթվելով հյուրերի ներկայությունից.

— Ընկերնե՛ր, ձեզ բոլորիդ հայտնի է, որ ամեն տեղ հիմնում են կոլխոզներ, իսկ մեր գյուղը ետ է մնացել էդ ծրագրից, պատճառը նա է, որ մեզ մոտ մի շարք կուլակ էլեմենտ-տարրերն իրենց մութ պրովոկացիայով մոլորեցնում են չքավոր ու միջակ գյուղացիներին, որ նրանք ետ կենան կոլխոզից։ Հիմի ի՞նչ է մեր անելիքը՝ մենք պետք է առաջ տանենք սոցիալիստական շինարարության գիծը, պետք է միջոցներ ձեռք առնենք՞ էդ մութ էլեմենտ-տարրերի դեմ ու ասենք չքավորներին ու միջակներին.— ահա այս է մեր իսկական սովետական ծրագիրը... էս հարցում աջակցելու համար մեզ մոտ հյուր են եկել ընկերները. նրանք օգնելու են մեզ ոչ միայն իրենց խորհուրդներով, այլև գործով։ Ընկերները կբացատրեն մեզ կոլխոզի նշանակությունը։ Այժմ կխոսի ընկեր Գուրգենը։

Գուրգենը հանկարծակիի գալով իրեն անունը տալուց, տեղից վեր թռավ, մի քանի վայրկյան հայացքն ուղղեց ունկնդիրների վրա, ու ձեռքով անգիտակցաբար շոյելով երկար մազերը, սկսեց.

— Ընկերնե՛ր, մենք եկել ենք ձեզ մասնակից անելու այն սոցիալիստական շինարարությանը, որ ծավալվում է մեր ընդարձակ Միության մեջ։ Սովետական իշխանության առաջին օրերից ամենքի համար պիտի պարզ լինի, որ պրոլետարիատի հաղթանակը նշանակում է սոցիալիզմի հաղթանակ, ու եթե այդ սոցիալիզմի երթը մինչև այժմ հապաղել է գյուղացիական սեկտորում, դրա պատճառն այն է, որ պրոլետարիատի լծակիցը՝ գյուղացին, իր հետամնացության պատճառով չի կարողացել միանգամից թափ տալ իրենից հին կյանքի ժառանգությունը։ Իսկ այսօր արդեն մեր չքավոր ու միջակ գյուղացիությունը գիտակցում է իրեն շահերը։ Բայց մենք դեռևս ունենք դասակարգային թշնամիներ՝ կուլակներ, ունենք և անհատներ միջակ գյուղացիների մեջ, որոնք իրենց անգիտակցության շնորհիվ ենթարկվում են նրանց։ Ինչ վերաբերվում է կուլակներին, մենք գիտենք, որ հետզհետե ցամաքեցնելով շահագործման այն հյութերը, որոնք նրանց կյանք էին տալիս, կդարձնենք նրանց արհամարհելի մի ուժ, իսկ անգիտակից միջակներին դեռևս պիտի համոզենք խոսքով ու գործով, ցույց տանք իրենց դասակարգային իսկական ուղին...

Հետզհետե խորանալով հարցի մեջ, Գուրգենը կանգ առավ կոլխոզի նշանակության վրա. պազեց նրա գերազանց հանրօգուտ ուժը թե՛ տնտեսական, թե՛ կուլտուրական ասպարեզներում։ Ապա նա դիմեց բատրակներին ու չքավորներին, հրավիրելով նրանց հիմք դնել կոլխոզին ու հետզհետե լայնացնելով իրենց շարքերը, ամբողջ գյուղը դարձնել կոլխոզային մի խոշոր բջիջ։

Թնդացող ծափահարությունները ոգևորեցին Գուրգենին. ինքնամոռացության մեջ նա ժպտաց իր կողքին նստած Հասմիկին, թաշկինակով սրբեց ճակատի քրտինքը։ Հասմիկի փոխադարձ ժպիտը նրան ավելի թևավորեց, այդ ժպտի մեջ նա տեսնում էր քաջալերում և մի նոր մտերմություն։ Մի պահ նա կարծեց, թե իր ճառի շնորհիվ կոլխոզի հաջողությունն ապահովված է, բայց հենց որ ծափահարությունները դադարեցին, մեկ-մեկու հետևից լսվեցին խանգարիչ ձայներ.

— Մեզ պետք չի կոլխոզը... ուզում չենք...

Նախագահը խեթ նայեց հետևի շարքերին ու զանգահարելուց հետո ձայն տվեց Միքայելին։

— Ընկերնե՛ր, նախագահը ձեզ բացատրեց մեր գալու նպատակը,— ասաց Միքայելը, մտերմական զրույցի տոն տալով իր

ձայնին,— Ճիշտ է, մենք եկել ենք ձեզ օգնելու, բայց մի ուրիշ կերպով. մենք ուզում ենք մի էնպես հիմնավոր գործ բռնել, որ միանգամից ձեր ձեռքից բռնի, վեր քաշի։ Շատ անգամ եմ ձեզանից լսել, թե ռանչպարությունը մենակ մարդու գործ չէ, բայց ի՞նչ կասեք, եթե ձեր ուզած չորս-հինգ մարդու տեղ հարյուրավոր մարդիկ միասին աշխատեն, ահա էս կոլեկտիվ գործ է, որ ձեզ թե կտա, ձեր ուժը շատ և շատ անգամ կավելացնի...

Միքայելն սկսեց բացատրել կոլեկտիվի առավելություններն անհատ տնտեսության հանդեպ, ապա անցավ մեքենաներին, օրինակներով ու թվերով բացատրելով մարդու և մեքենաների աշխատանքի տարբերությունը։

— Հիմի ես ձեզ հարց եմ տալիս,— շարունակեց նա,— ուզո՞ւմ եք, որ ձեր աշխատանքը մեկի տեղ տասն անգամ ավելի արդյունք տա։

— Ուզում ենք,— վրա տվավ մոտիկ նստածների մի խմբակ։

— Ուզո՞ւմ եք ձեր աշխատանքի տերը լինել, ազատվել կուլակների շահագործումից։

— Ուզում ենք,— նորից լսվեց նույն խմբակի կողմից. բայց իսկույն հետևի շարքերից լսվեց.

— Ձենք ուզում կոլխոզը... մեզ հարկավոր չի...

Երբ աղմուկը փոքր-ինչ մեղմացավ, Միքայելը բարձր ձայնով առաջարկեց.

— Ընկերնե՛ր, ձեր միջից մինն ասում է՝ ուզում ենք. մյուսն ասում է՝ չենք ուզում, բայց բանը բղավելով չի, բանը համոզելով է, թող էդ հակառակները բացատրեն մեզ, թե ինչո՞ւ չեն ուզում. կարելի է թե նրանք կհամոզեն...

Գուրգենը ջղայնորեն ձեռքը շարժեց ու ասաց Հասմիկի ականջին.

— Էլի ընկեր Միքայելն իր հին մեթոդը գործադրեց... Հիմա սրանն ինչ իրար կխառնվի։

8

Միքայելից հետո խոսողը պիտի լիներ Հասմիկը, բայց բջիջի քարտուղարն առաջարկեց նրան գնալ բակը և պրոպագանդա մղել կանանց մեջ։ Հասմիկը վեր կացավ ու արագ քայլերով դուրս գնաց։

Դահլիճում, ընդհանուր աղմուկի մեջ մի քանի հոգի մատ էին բարձրացրել, խոսք էին խնդրում։

— Գյուղի կուլակները չեն եկել,— ասաց բջիջի քարտուղարը Գուրգենի ականջին,— բայց նրանք իրենց տեղը ուղարկել են մի քանի միջակ ենթակուլակների։ Հիմի նրանց ենք ձայն տալիս, որպեսզի օղակի մեջ առնենք։

— Խոսքը պատկանում է ընկեր Հովակիմին,— ասաց նախագահը։

Տեղից սկսեց խոսել մի գյուղացի, խոշոր ու ոսկրոտ դեմքով, հագած թեպետ հին, բայց խնամքով պահած չուխան։ Նա նայում էր թեք հայացքով դեպի աջ, իր լայն ու խիտ բսած սև մորուքը դուրս ցցած, կարծես նա բոլորի գլխների վերևից դիմում էր մեկին, որը ժողովից դուրս էր նստած։

— Էնպես որ մենք շնորհակալ ենք, որ մտածում եք մեր մասին, բայց մեզ հարկավոր չի կոլխոզը։ Օրինակի համար՝ ասենք ես աշխատավոր մարդ եմ, առավոտը վաղ, մութը-մութը վեր եմ կենում, գնում գործի, իսկ մեր մեջ էնպես թամբալներ կան, օրը ճաշ է դառնում, նոր են աչքերը տրորում, վեր կենում։ Հիմի եթե բերենք իրար խառնենք թամբալին ու աշխատավորին, նրանց ունեցածը հավասարեցնենք. ի՞նչ դուրս կգա, էն դուրս կգա, որ էշը կդատի, ձին կուտի, էդ կոլխոզը որ կա՝ թամբալների համար է, դրանից մենակ խանգարմունք առաջ կգա, թամբալը չի լավանա, իսկ էն լավ աշխատողի ձեռներն էլ կթուլանան, նա էլ կասի—ինչի՞ եմ շարշարվում ուրիշի համար։ Հիմի իմ ասելն էն է, որ թողեք ամեն մարդ իրեն տան, իրեն ունեցածին տեր ելի, էն ժամանակ ամեն բան լավ կգնա...

Հանկարծ մեկը զիլ ձայնով նրա խոսքը կտրեց.

— Էդ ո՞նց է, երբ ես քու բատրակն էի, ես բանում էի. դու մտիկ էիր անում, թամբալը դու չէիր, ուրիշն է՞ր... Թե կուզես՝ թամբալը նա է, ով որ ուրիշի աշխատանքով է ապրում։

Գյուղացին լայն երեսը դարձրեց նրա կողմը, ուզեց ինչ-որ ասի, բայց նրա ձայնը խլացրին, սկսեցին ամեն կողմից վրա տալ նկատողություններով։

— Բա որ մանեթին կես մանեթ շահ էիր առնո՞ւմ, միտդ չի՞։

— Մշակի հաթը ո՞նց էիր կտրում...

Գյուղացին նկատելով, որ իրեն «բուրդը գզելու են», ձեռնտու համարեց լռել ու նստեց, տապ արավ։ Բայց այդ էլ չօգնեց, դուրս եկավ խոսելու իր նախկին բատրակ Երվանդը։

— Ընկերնե՛ր,— ասաց նա,— էստեղ մեզ ասում են, թե կոլ-

խոզը հարկավոր չէ, բայց ովքե՞ր են ասողները՝ կուլակի մարդիկ... կուլակների համար, ի՞նչ ասել կուզի, չի հարկավոր ո՛չ կոլխոզ, ո՛չ էլ սովետական իշխանություն, դրանց համար միայն հարկավոր է, որ ամեն բան մնա իր առաջվա տեղը, որ իրանք տեր ըլեն, մենք նոքար, բայց էդ հին ժամանակն անցավ։ Ձեզ համար կոլխոզը մահ է, գնացեք ձեր գլխներին վայ տվեք, իսկ մենք՝ չքավորներս ու բատրակներս ուզում ենք, որ կոլխոզ լինի, և մեր ուզածն էլ կանենք...

Նրա խոսելու վրա հետևի շարքերից ձայն տվին.

— Շա՜տ է հասկանում, խելքին զոռ ա տալիս...

— Փիլիսոփա է դառել գլխներիս։

Երվանդը խիտ հոնքերը խոժոռած, իր տեղից արհամարհող հայացքով նայեց հետևի շարքերին, ու ասաց հեգնող շեշտով.

— Ինչքան ուզում եք ոռնացեք, ձեր հայ-հայը գնացել է, վայ-վայը մնացել...

Աղմուկը դեռ չէր դադարել, երբ բեմին մոտ եկավ մի գյուղացի՝ գլխաբաց, կեղտոտ քաթանի շապիկ հագած, բոբիկ ոտները տրեխների մեջ ձգած։ Նա շապկի վզկապը բաց էր թողել, ցուցադրել իր կրծքի մոլախոտի նման իրար կծկված մազերը։ Հինգ մատը միանգամից բարձրացնելով, նա մոտենում էր, մեծ քիթը ցից արած, աչքերը մեծամտորեն հառելով նախագահի վրա.

— Խոսք եմ ուզում, տալի՞ս եք. թե՞ չէ,— բղավում էր նա այնպես բարձր, ասես մի սարից մյուսն էր ձայն տալիս։

— Խոսիր տեսնենք,— ասաց նախագահը, հազիվ զսպելով իր բարկությունը։

Դահլիճի ուշադրությունն անցավ խոսողի վրա, և աղմուկը դադարեց։

— Էդ որ դուք ասում եք, թե կոլխոզ գրվեցեք, իսկի մեր դարդը քաշո՞ւմ եք, թե՞ չէ. դուք քաղաքում լավ ուտում-խմում եք, լավ հագնվում ու գալիս մեզ ասում, թե հընկերներ, եկեք կոլխոզ մտեք (այս ասելով նա նայեց Գուրգենի վրա), թե որ դուք մեզ հընկեր եք, ձեր լավ պինջակն ինձ տվեք, ձեր շաղ ռոճիկն էլ հետը, իսկ իմ մաշված, քրտնակեր շապիկը դուք հագեք, ա՜յ, էն ժամանակ եկեք միասին աշխատենք, կոլխոզ սարքենք... թե որ էդ կոլեկտիվը լավ բան է, ինչի՞ չեք քաղաքում սարքում, եկել եք գեղի վրա չոքել... չէ, մենք չենք ուզում կոլխոզ, մենք ուզում ենք ձեզ նման ուտել, խմել ու սիրուն աղջկերանց հետ ման գալ...

Նա կանգ առավ, ինքնաբավական հաղթական հայացքով ետ ու առաջ նայեց և թվում էր, թե էլի պիտի շարունակի, բայց նրա վրա էլ թափվեց ռեպլիկաների անձրևը։

— Սարո՜, էդ ե՞րբ չքավոր դառար։

— Շորերը տանը թողել է, տկլոր է եկել։

— Մարդարի արաղը լավ թունդ է կպել...

Աղմուկը նորից բռնկվեց, երկու կողմերը իրար մկրտում էին կծու խոսքերով ու հայհոյանքով։ Զանգահարումը խառնվում էր աղմուկի հետ, ոչ մի ազդեցություն չանելով։ Բեմի վրա՝ սեղանի շուրջը նստածները տեղներից վեր կացան։ Միքայելը մոտեցավ բեմի ծայրին ու ձեռքերը տարածելով դիմեց ժողովրդին.

— Ընկերներ, հանդարտվեցեք։

Երբ աղմուկը դադարեց, Միքայելը խոսք խնդրելով դիմեց Սարոյին, որը դեռ կանգնած էր բեմի առաջ։

— Ընկեր, դու ասում ես, թե քաղաքում կոլեկտիվ չկա, քաղաքում եղե՞լ ես։

— Եղել եմ։

— Բա էնտեղ կոլեկտիվ չե՞ս տեսել։

— Չէ՛։

— Բա գործարաններում, հիմնարկներում մարդիկ ո՞նց են աշխատում, միասի՞ն, թե ջոկ-ջոկ։

Սարոն բերանբաց նայում էր Միքայելին։

— Ես էն եմ ասում,— նորից սկսեց նա իր ճղճղան ձայնով,— որ էդ ձեր լավ շորերը տվեք, մենք էլ հագնենք, ձեր ռոճիկն էլ հետը, էն ժամանակ միասին ընկեր կլինենք...

Հանկարծ Գուրգենը հանեց իր սպիտակ պիջակն ու ձգեց Սարոյի վրա։

Սարոն վերցրեց պիջակն ու հանկարծակիի գալով, չգիտեր ինչ անի։

— Արա, ետ տուր, ամոթ է,— բղավեցին հետևի շարքերից։

— Հիմի ո՞նց ես, Սարո, դու լավ, քաղաքի պինջակ ունես, ես չունեմ,— բղավեց առաջին շարքերի գյուղացիներից մեկը։

Սարոն շվարած մեկնեց պիջակը նախագահին ու իսկույն դուրս գնաց դահլիճից։

Մինչ այդ, Միքայելը ետ նայելով Գուրգենին, գլխի շարժումով կշտամբում էր նրան, որն ի պատասխան դրա ժպտում էր։ Հասմիկը ներս եկավ կանանց ցրվելուց հետո, հոգնած, կնճռած ճակա-

տով։ Տեսնելով Գուրգենին պիջակը հագնելիս, և իմանալով պատճառը, ժպտաց, ապա վերցնելով մի թղթի կտոր, գրեց վրան ու զգուշությամբ դրեց Գուրգենի առաջ։

«Հերոսությունից մինչև ծիծաղելին մի քայլ է, Գուրգեն...»։

Գուրգենը նայեց Հասմիկին ճնշված ժպտով, ապա նույն թղթի վրա պատասխանեց.

— Սա պատասխան էր կուլակների դեմագոգիային։

Դահլիճի մյուս ծայրի աղմուկը հանկարծ դադարեց, և ուշադրությունը կենտրոնացավ նոր խոսողի վրա։ Կանգնած էր Սարգիսը՝ փոքրահասակ, սև բլուզի վրա պիջակ հագած, խորամանկ, փոքրիկ դեմքով մի մարդ, անհամաչափ երկար սպիտակահեր բեղերով ու պսպղուն աչքերով։ Նա վերկացավ, փոքր-ինչ պաուզա տվեց, ապա սկսեց.

— Դուք՝ ուսումնական մարդիկ, եկել եք մեզ լուսավորելու, խորհուրդներ տալու, բարով եք եկել, միայն ասենք դուք բժիշկ եք, մենք էլ հիվանդ, շատ բարի, ինչո՞վ եք մեզ բժշկելու, դուք ասում եք կոլխոզ մտեք, համեցեք, գնանք տեսնենք կոլխոզն ի՞նչ է. հենց իմանաս կոլխոզի մեջը սատանա է նստած, որ ամեն ինչ շուտ է տալիս, փչացնում... երբ որ բանն էդպես է, պատճառն ի՞նչ է, որ դուք մեզ էնտեղ եք ուղարկում...

Չքավորների խմբից շեկ Վանին խոսքը կտրեց։

— Կոլխոզը փորիդ վնաս է,— ասաց ջահել բատրակներից մեկը ծիծաղելով։

— Կոլխոզի սատանան դու ես, էլ ո՞ւր ես ուրիշի վրա գցում, — ասաց բատրակ Երվանդը։

Սարգիսն ինչ-որ մրթմրթաց նրանց հասցեին ու տեղից դուրս եկավ։ Կարծես նրա նշանին սպասելով, հետևի շարքերը շարժվեցին. աշակերտական նստարանները ետ ու առաջ քաշելով, վերևի տախտակները թխկթխկացնելով։ Նրանք բղավում էին, գնալով դեպի մուտքը։

— Չե՛նք ուզում... Չենք ուզում...

Բեմի վրա կանգնած էր բժիշկի քարտուղարը և ուզում էր խոսել, բայց իրարանցումն ու աղմուկը հնարավորություն չէին տալիս։ Նա նիհար, ջլուտ ու խոժոռած դեմքը հառել էր հետևի շարքերին, հազիվ զսպելով ցասումը։

Երբ մնացողները կենտրոնացան առաջին նստարանների վրա,

նախագահը զանգահարեց ու ապա պատվիրեց դռները փակել։ Բատրակ Երվանդը գնաց դուռը փակելու։

Բժիշկի քարտուղարը աչք ածելով դահլիճում մնացողներին, ասաց ուժեղ և ինքնավստահ ձայնով.

— Ընկերնե՛ր, առաջին անգամը չէ, որ կուլակները ոտնձգություններ են անում մեր սոցիալիստական շինարարության դեմ. նրանք իրենց հետևից տարան մի քանի անգիտակից միջակների, բայց նրանց ջանքերը զուր են, մենք կշախշախենք դասակարգային թշնամուն... Ես դիմում եմ ձեզ՝ գիտակից բատրակներիդ, չքավորներիդ, դուք պիտի սերտ կպչեք կոլխոզին ու հետզհետե լայնացնեք նրա շրջանը...

Բատրակ Երվանդը ձայն խնդրեց.

— Ընկերներ, մեր ժողովից հեռացան կոլխոզի հակառակ մարդիկ՝ ենթակուլակները, էդ ավելի լավ է, մեր թշնամիները գնացին։ Ես առաջարկում եմ, ուղղակի ցուցակի մեջ գցենք՝ ով ուզում է, թող կոլխոզի անդամ գրվի։

Առաջարկությունն ընդունվեց։ Երբ ցուցակագրեցին, պարզվեց, որ անդամագրվել են 37 տնտեսություն։

— Ուրեմն, ընկերներ,— ասաց Միքայելը,— կարող եմ շնորհավորել ձեզ, կոլխոզի հիմքը դրված է, այս անդամագրված ընկերները վաղը կգան ժողովի, կբացատրենք ամեն ինչ, ցուցումներ կտանք։

Կես ժամի չափ գործնական հարցերի շուրջը խորհրդակցելուց հետո, ժողովը ցրվեց։

— Այժմ ընկեր Հասմիկ և ընկեր Գուրգեն, մենք կարող ենք գնալ,— ասաց Միքայելը։

Նրանք նստեցին ապրանքատար ավտոն ու ճանապարհ ընկան դեպի սովխոզ։

9

— Մինաս, կամաց քշիր, թե չէ ջարդուփշուր կանես մեզ,— դիմեց Միքայելը մեքենավարին։

Մինասը դանդաղեցրեց ավտոյի ընթացքը։

— Դե, ընկեր էնտուզիաստներ,— ասաց Միքայելը,— մեր գործը կարող ենք կիսով չափ հաջողված համարել, բայց դեռ շատ բան կա անելու, պետք է աշխատել միշտ վառ պահել կրակը...

— Բայց, ընկեր Միքայել, դու այսօր իդեալիստական թեքման մեջ էիր ընկել,— ասաց Գուրգենը։

— Ինչպե՞ս թե,— զարմացավ Միքայելը։

— Դու ուզում էիր համոզել ենթակուլակներին, մոռանում էիր, փիլիսոփա Հոբբսի խոսքերը։ «Եթե մաթեմատիկական ճշմարտությունները մարդկանց շահերին հակառակ լինեին, նրանք երբեք չէին ընդունվի...»։

— Մի՞թե այդ տպավորությունն ստացար, իսկ ես ուզում էի նրանց ասպարեզ քաշել՝ ճանճերին սպիտակի վրա նստեցնել, որպեսզի երևան ու քննադատության տակ ընկնեն... Բայց զարմանալի է, Գուրգեն, դու միշտ ինձ մեղադրում ես զանազան թեքումների մեջ, իսկ քոնը մոռանում ես. օրինակ՝ հենց քո պիջակի պատմությունը...

— Ի՞նչ թեքում ես տեսնում դրա մեջ։

— Կարճ ասած, դա մի ջահելություն էր, դու ենթարկվեցիր պրովոկացիայի և քո վարմունքով ցույց տվիր, որ նրանց տեսակետի վրա ես կանգնած։ Բայց քանի որ լավ վերջացավ, այնքան էլ չպետք է հարձակվել ընկեր Գուրգենի վրա։

— Ուրեմն երկուսս էլ թեքման մեջ ընկանք, մնում է ընկեր Հասմիկը։

— Օ՜, իմ բանը շատ դժվար էր,— պատասխանեց Հասմիկը,— դուրսը կանայք ինձ գզում էին, իսկ դուք ներսը հանգիստ նստած էիք։ Ի՞նչ սուտ լուրեր, ինչ պրովոկացիա ասես, որ առաջս չէին գնում։ Այնքան խոսեցի, որ գլուխս դմբդմբում է։ Բայց էլի վերջը կարողացա ֆրոնտը պատռել և կանանց մի մասն իմ կողմը քաշեցի։ Հենց որ նրանց ղեկավարուհիները նկատեցին այդ, իսկույն ցրվելու հրաման տվին, վախենալով, որ մյուսներին էլ չհամոզեմ։ Դե, իհարկե, նրանց հավատի բերելը մի օրվա բան չի, պիտի երկար ջանք թափել...

— Քանի ընկեր Հասմիկն այստեղ է, հուսով եմ, որ այդ աշխատանքն էլ իր վրա կվերցնի,— ասաց Միքայելը։

— Արդեն վերցրել եմ վրաս ու մինչև նպատակիս չհասնեմ, չեմ հանգստանալ։

Խոսակցությունը դադարեց ավտոմոբիլի կանգ առնելու պատճառով։ Պարզվեց, որ մեքենայի մեջ ինչ-որ փչացել է, Գուրգենն ու Հասմիկը օգտվեցին հանգամանքից և շարունակեցին ճանապարհը ոտով, իսկ Միքայելը մնաց։

Միքայելն իջավ ավտոյից ու կանգնած նայում էր հեռացող զույգի հետևից, որը լուսնի կաթնամշուշի մեջ մի առանձին խորհրդավորություն էր ստանում։ Ու մի խառն զգացում էր գալիս մեջը. նա և ուրախ էր, տեսնելով, ինչպես նոր կյանքի համար նոր սերունդն էր լծվում գործի իր թարմ եռանդով, ու միաժամանակ մի տխրություն էր գալիս մեջը՝ մի մտածմունք, թե ինքը անցնող սերունդ է... որքան էլ ինքը համընթաց քայլում է նրանց հետ, այնուամենայնիվ, լուսնի տակ անցնող շողշողուն զույգի քայլերն ուրիշ են, նրանք ավանգարդ են... և ի՞նչ խոսք, նրանք արդեն սիրահարված են, նույնիսկ գուցե առանց գիտակցելու... Ու մտքերը թռչում էին դեպի անցյալը, խուռն երամով ելնում էին հիշողության մեջ իր թարմ տարիները՝ ընկերները, առաջին ռևոլյուցիայի հուզումնալից ելևէջները.. Հիշում էր իր սիրած Օլգային՝ այն անձնվեր աղջկան, որը գալիս էր բանտ, իրեն տեսնելու, և որն այնպես զոհվեց հետագայում...

Նայում էր հեռացող զույգին, որը հետզհետե լուծվում էր հեռվում մշուշի մեջ ու խոսում անցյալի հետ, հին հույզերը նորոգվում էին, խռնվում մեջը... ու կարծես քշելու համար իր շուրջը վխտացող անցյալի ստվերներին, նա ձեռքով մի շարժում արավ ու նայեց մեքենային. արդեն երկրորդ անգամն էր սուլիչն իմացնում, որ պատրաստ է գնալու։

Նա նորից նստեց ավտոն ու շարունակեց իր ճանապարհը։

Հասմիկն ու Գուրգենը քայլում էին լուռ։ Հասմիկի մեջ մի կասկած անցավ, թե Միքայելը կարող էր իր մասին ոչ-ցանկալի ենթադրություն անել, բայց նա դուրս վանեց այդ մտքերը՝ կանացի թուլություն համարելով դրանց. «Ուրեմն ես էլ մի սովորական, թույլ ու վախկոտ կին եմ... մտածում էր նա, իմ մեջ է՞լ է ապրում կաշկանդող հին կենցաղը... Իսկ ես Գուրգենին էի մեղադրում...»։

Գուրգենը նայում էր Հասմիկին, ու թվում էր նրան, թե այժմ ուրիշ կին է իր հետ գնում, ինչ-որ փոխվել է նրա մեջ. նա զգում էր, որ ավելի մտերիմ է իրեն, որ ինչ-որ մեծ կապ կա իրենց մեջ, մի մեծ գործ, որի հանդեպ իր բոլոր անցյալ զեղումները փոքր են, երկրորդական...

Բայց և այնպես մնում էր լարված դրության մեջ, շարունակ ձգտում էր Հասմիկի թևը մտնել. իսկ նա խուսափում էր, աննկատելի հեռանալով նրանից։

— Ընկեր Հասմիկ, արի այս կարճ կածանով կտրենք, բարձրանանք մեր սովխոզի հետևի բլրի գագաթը, հրաշալի գիշեր է, նստենք այնտեղ ու զրուցենք, իսկի քունս չի տանում...

— Գնանք, ես դեմ չեմ,— ասաց Հասմիկը, չնայած որ մեջը ինչ-որ տատանվում էր։

Նրանք դուրս եկան ճանապարհից ու ընկան նեղ կածանը։ Այժմ արդեն նրանք քայլում էին իրար մոտիկ, համարյա իրար դիպչելով։

— Հասմիկ, ի՞նչ կասես մեր արշավի մասին։

— Ավելի լավ անցավ, քան ես սպասում էի, ինձ թվում է, ընկեր Միքայելը չափազանցում էր դիմադրությունը։

— Այո՛, նա որպես հին մարդ, շատ զգույշ է, բայց գուցե հիմք ունի...

Գուրգենն ուզում էր իմանալ Հասմիկի կարծիքն իր ելույթի մասին, բայց անհարմար էր զգում ուղղակի հարց տալ։ Կարծես գուշակելով նրա ցանկությունը, Հասմիկը ասաց.

— Մասնավորապես Գուրգենն այսօր ցույց տվեց, որ կարող է պայքարել...

Ապա բոպեաչափ կանգ առնելով ավելացրեց.

— Ես մինչև այժմ քեզ ընդունում էի որպես գիտության էնտուզիաստ, այժմ քո մեջ մի ուրիշ մարդ էլ բացվեց՝ սոցշինարարության մարտնչող...

Գուրգենի այտերը վառվեցին այդ խոսքերից։

— Չգիտեմ ինչո՞ւ, Հասմիկ,— ասաց նա հուզված,— ես միշտ դժգոհ եմ ինքս ինձնից, միշտ ինձ թվում է, թե չասացի այն, ինչ-որ ասելու էի, չարի այն, ինչ անելու էի... Այսքանը գիտեմ, որ լծվել ենք մի մեծ ու դժվար գործի և պիտի նպատակին հասնենք...

— Եվ իհարկե, կհասնենք...

Քայլում էին, խոսում ամայի դաշտում, ինչ-որ ասում էին, վերևից էր անցնում, իսկ ներքուստ անտես թելերով կուտակվում էր մի զգացում, որի անունից կարծես խուսափում էին։

Մոտ կես ժամից հետո նրանք արդեն բլրի վրա էին։ Թիկնելով գետնին՝ խոտերի վրա, նայում էին առաջները սփռված լուսնազարդ տեսարանին։ Լուսինը սահում էր երկնքի ջինջ, բաց-կապույտի վրայով. փայլում էր ներքևի այգու բարդիների գագաթներին,

մութ ստվերներով լցնելով նրանց տակերը։ Թեթև հով էր փչում, խաղում շնչի հետ, ասես բերում էր բարձունքներից ինչ-որ տարօրինակ զգացումներ, մտքեր...

10

Գուրգենը պառկել էր, գլուխը հենած արմունկներին ու լուռ նայում էր մերթ առջևը սփռված տեսարանին, մերթ գողունի՝ երեսը դարձնում էր Հասմիկի կողմը։ Նա մեծ ցանկություն ուներ արտահայտելու իր մտորումներն ապագա գործունեության մասին՝ միասին գործելու, պայքարելու մասին, սակայն մի ուրիշ, մտերմական տոնով, որի մեջ կուզեր հնչեցնել և իր առանձին, թաքնված զգացումները։ Բայց ինչո՞ւ Հասմիկը խուսափում է առանձին մտերմությունից։ Երբ նրանք մենակ մնացին, թվում էր, թե շատ մոտ են իրար, անբաժան ընկերներ են, և առանց Հասմիկի նա չէր կարող երևակայել իր ապագան, բայց այժմ դարձյալ ինչ-որ մշուշ իջնում է, ծածկում Հասմիկին, հեռացնում նրան իր աչքերից։ Թվում է, թե նա մի բարձր գագաթի վրա է ու ինքը մաքառելով պիտի հասնի նրան։ Ու նորից շարվում են նրա առաջ տարօրինակ խոչընդոտները, նորից Հասմիկը դառնում է «իռացիոնալ»։

«Եթե մոտենամ,— մտածում էր Գուրգենը,— ասեմ, ես քեզ սիրում եմ, նա անպատճառ կհեգնի, կասի՝ դու միանգամայն ծիծաղելի ես, չէ՞ որ դու չես ընդունում սերը... ուրեմն այդ կողմից նավերս այրել եմ... եթե ասեմ, արի ամուսնանանք, ապրենք միասին, ինչպես ապրում են շատերը, այդ խոսքերը կհնչեն նրա ականջին այնպես գռեհիկ, ինչպես մի նուրբ երաժշտություն հանկարծ վերջանար կովի բառաչով, նա երևի այդ դեպքում մի զարմացական-հեգնական հայացք կնետի վրաս, կսկսի խնդալ ու կթողնի հարցը առանց պատասխանի, իսկ ինքնասիրությունս չի թույլ տալ նորից կրկնելու։ Ուրեմն ո՞րն է Հասմիկի «կվինտ-էսենցիան», ո՞րն է այն հանգույցը, որից կարող եմ ելնել... կամ գուցե այս բոլորը նրա կողմից մի խաղ է, որի նպատակն է ինձ տանջել...»

Նորից նա նայում էր առջևի տեսարանին ու շրջում էր մտքերը, անցնում ապագա գործունեության հեռանկարներին։

Իսկ Հասմիկը հենվել էր գետնին արմունկով ու մյուս ձեռքի ափով երեսը ծածկել, բայց մատների արանքով գաղտագողի դիտում էր Գուրգենին, նկատում էր նրա ստեպ-ստեպ իրեն ուղղված

Թարավի հայացքները։ Մի բոպե նրա մեջ մի խենթ ցանկություն եկավ՝ խառնշտել Գուրգենի մազերը, կատարյալ իրարանցում ու ապշեցում առաջացնել նրա մեջ, բայց մի սառը միտք բարակ օձի նման դուրս սողաց միջից ու ասաց. «Հասմիկ, զգաստ, թեպետ Գուրգենն այժմ մի ուրիշ՝ ավելի պայծառ փայլ ստացավ աչքիդ, բայց ջուրը դեռ չի պարզվել վերջնականապես. տղամարդիկ անգիտակցաբար հետևում են իրենց նախկին հոգեբանության. նրանք ձգտում են մեզ դարձնել իրենց «հավելվածը»՝ ակոմպանիմենտը... թող Գուրգենը պարզապես ցույց տա, թե ինչ եմ ես նրա աչքում, թող տեսնի իմ մեջ այն մյուս Հասմիկին, այն ժամանակ... Չէ, փոքր-ինչ թույն դեռ անհրաժեշտ է...»

Նա գլուխը բարձրացրեց ու ցանկանալով հանել Գուրգենին ճնշված լռությունից, հարցրեց.

— Ինչի՞ մասին ես մտածում, Գուրգեն։

Գուրգենը հանկարծակիի գալով, իսկույն չպատասխանեց.

— Ապագայի մասին,— ասաց նա բառերը ձգելով,— այսպիսի լուսնկա գիշերները, երբ նայում եմ խաղաղ, քնած տեսարանին, թվում է, թե ժամանակը կանգ է առնում, կուզեի մի անընդհատ վառ ցերեկ լիներ, եռուն գործերով լի... Այս բոպեիս աչքիս առաջ անցավ մեր այցելած գյուղը, ու մեր գործն ինձ վրա թվաց շատ դանդաղ, կարծես սայլով ենք ընթանում... անհամբերությունից միտքս թռչում է առաջ ու տեսնում եմ մեր ամբողջ երկիրը, նույնիսկ երկրագունդը վերածված համատարած սոցիալիզմի...

— Այսինքն անում ես այն, ինչ-որ գիտության մեջ, այնտեղ էլ ապագա գյուտերով բազմապատկում ես բերքատվությունը, այլ խոսքերով՝ Գուրգենը լուսնի ազդեցության տակ երազում է, իսկ նրազները մեծ գրողի ասելով ծույլ ուղեղի զավակներ են...

«Էլի խփեց անպիտանը»,— մտածեց Գուրգենն ու խայթվածի նման վեր թռավ, նստեց տեղը։ Կարծես նրան բարկացնելու համար Հասմիկն էլ նստեց։

— Ձուր ես կարծում, թե վաղվա գալիքը երազ է,— ասաց Գուրգենը լուրջ տոնով,— չէ՞ որ մեր կյանքն այժմ մի արշալույս է, որը և՛ ներկա է, և՛ ապագայի նախերգանքը...

— Գուրգեն, դու ամբոխավարություն ես անում առանց ամբոխի, հարցը ոչ թե վաղվա գալիքի մասին է, այլ քո գիգանտ թռիչքների մասին, որ անում ես երևակայության թևերով...

— Իսկի էլ չէ, մեր բոլոր ճանապարհները տանում են դեպի

կոմունիզմ. դու մոռանում ես, որ մեր կյանքը մեծ պլանի մեջ է առնված և օրեցօր ներկան լուծվում է ապագայի մեջ...

— Բայց դու թռչում ես բոլոր պլաններից դուրս ու պտտվում ես վերջնականների շուրջը...

— Իսկ դու, որ այդպես հարձակվում ես, չե՞ս ձգտում միշտ գերակատարել պլանները, ուրիշ խոսքով՝ չե՞ս թռչում պլաններից դուրս։

— Շնորհավորում եմ, Գուրգեն, դու ընկար քո իսկական ուղին, այժմ դու՝ ըստ սովորության, կսկսես հարձակվել ինձ վրա, վերագրելով ինձ այն, ինչ ես քեզ եմ վերագրում։

— Ո՛չ, ես մտադիր չեմ հարձակվելու. այսպիսի մի գիշեր, երբ բնությունը խոսում է ուշացած պոետների ու մարգարեների հետ, երբ նույնիսկ գորտերը քնքշանում են և իրենց կոկոցը բայթի են դարձնում՝ ես զինադադար եմ հայտարարում Հասմիկին՝ ապագայի մասին խոսելու համար...

— Օ՜հ, ինչ բանաստեղծական էր նախերգանքը... խոստովանիր, Գուրգեն, եթե ես այստեղ չլինեի, այս գիշեր մի ուտոպիա կգրեիր «Լուսնի աշխարհը» վերնագրով։

— Ինչո՞ւ չէ, կգրեի, բայց ոչ թե «ուտոպիա», որ նշանակում է «ոչ մի տեղ», այլ կգրեի «պանտոպիա» այսինքն՝ «ամեն տեղ»...

— Եթե այդպես է, զինադադարը ընդունում եմ, պայմանով, որ լավ թռիչք կատարես դեպի ապագան... դե թռի՛ր լայն թևերով, բայց չմոռանաս և ինձ... տես, լուսինը ժպտում է մեզ, ու գորտերն էլ իրենց պատմական դերն են կատարում, նրանք կոկռում են ուտոպիաների վրա, կարծելով թե իրենց ճահիճներից դուրս էլ ոչինչ չկա...

— Չէ, Հասմիկ, դու առաջ ընկիր, որ հավատամ թե իսկապես գալիս ես հետս։

Հասմիկ.— Լավ, ես եմ սկսում. դե, լսիր ուշի ուշով... ուրեմն՝ տարիներ են անցնում, թե որքան, այդ թող ինքը ժամանակն ասի, ու մենք միասին գալիս ենք նորից դեպի այն գյուղը, որտեղ մենք այսօր նվաճեցինք միայն 37 տնտեսություն։ Թռչում ենք «Դեպի ապագա» օդանավով, ազատ ու զվարթ, չզգալով ո՛չ սահմաններ, ո՛չ արգելք, ողջ երկրագունդը մեկ է, ուր ուզում ես իջիր. ամեն տեղ քեզ զգում ես աշխատավոր մարդկության մի բջիջում՝ ընդհանուր սոցիալիստական կարգերում... մեզ ուղեկցում են պրո-

Ֆեսոր Արեգյանը ու մի քանի ուրիշ գիտնականներ, որոնք վերադառնում են Բոմբեյի գիտական կոնգրեսներից...

Հայաստանի առաջին քաղաքից մեր դեմ են ելնում բազմաթիվ օդանավեր, շրջապատում են մեզ պսակաձև, ինչպես այն փոքրիկ ձյունաթույր ամպիկները, որոնք ընդգրկել են լուսնին... Դա կլինի արևածագին, ու ողջ էսկադրան կբոցավառվի արշալույսի նարնջի գույներով ու կհնչի ռադիոյով մի նոր, վերամբարձ Ինտերնացիոնալ...

Մենք թռչում ենք պտույտներ անելով Հայաստանի վրայով, մեր առաջ սկսվում է մի հրապուրիչ երկիր, այնքան տարբեր մեր առաջվա տեսածից... Ամեն տեղ ուր աչքն էր զարնում, կենդանության մի շքեղ պատկեր էր ցայտում, նախկին չոր, անապատային ու ժայռոտ վայրերից հետքեր չէին մնացել, որքա՜ն բուսականություն, որքան ջրեր-առուներ ու լճակներ, պուրակներ, այգիներ... բազմաթիվ հիդրոկայաններ, գործարաններ... ու դալար սարերի, դաշտերի մեջ փայլում էին քաղաքներն ու գյուղերը, մեկը մյուսից գեղեցիկ... Գուրգենը նայում է հափշտակված, բոպե առ բոպե լսվում էր նրա բերանից՝ հիանալի՜... հրաշալի՜, սքանչելի... Վերջապես, երբ նրա ոգևորությունը հասավ իր գագաթնակետին, նա հանկարծ վճռեց այլևս թողնել գիտությունն ու նվիրվել բանաստեղծության. իսկույն հանեց իր ծոցատետրն ու սկսեց գրի առնել մի պոեմ, որի առաջին տողերն այսպես էին.

Նորոգված երկիր, պլանաչեն երկիր,
Ես քեզ տեսա արևի շողերով...

... Գուրգենն անհանգիստ շարժում արավ.

Գուրգեն.— Հասմիկ,— ասաց նա,— դու հասմիկորեն ես տանում գործը, ես բողոքում եմ։

Հասմիկ.— Բողոքիր, բայց իմացիր, որ մեր խոսքը ազատ է Արագածի հովերի նման, բայց ոչ նրանց նման թեթև և դու, իհարկե, ջերմ պաշտպան կլինես ազատ խոսքի... իսկ այժմ շարունակենք մեր ճամփորդությունը...

Մենք ուշադրությամբ հետևում էինք, աշխատելով նկատել մեզ ծանոթ վայրերը, բայց համարյա ոչինչ չէինք կարողանում գտնել։ Վերջապես երկուսս էլ ցնցվեցինք, երբ առաջին պտույտից հետո պրոֆեսոր Արեգյանն ասաց.

— Ահա Երևանը, նա այժմ վերածված է չորս կոմբինատ-քաղաքի...

Մենք ագահությամբ հառեցինք աչքներս ներքև, Հասմիկը նայում էր նախկին կայարանի կողմը, կարծելով թե կգտնի մյուս թաղերը, բայց գործարաններն էլ չէին նկատվում, նրանք առանց ծխնելույզների էին, իսկ նրանց շուրջը այնքան նոր շենքեր, նոր ծառաստաններ կային, որ նա չկարողացավ մի բան պարզել։ Գուրգենն էլ նայում էր համալսարանի կողմը, բայց այստեղ էլ դժվար էր մի բան որոշել։ Նախկին Երևանից բան չէր մնացել. միայն Զանգուն էր ձգվել օձի նման, բայց նրա ափերն էլ բոլորովին փոխված էին։

— Այս չորրորդ կոմբինատի վերին մասը հատկացրած է գիտության և գիտնականներին,— ասաց Արեգյանը,— ուսանողները «վերացական» թաղ են անվանում...

Մենք նայեցինք վերևի կողմը, ամենից աչքի ընկնողն աստղադիտարանի աշտարակաձև շենքն էր։ Նրա գագաթից հանդարծ թռան դեպի մեզ մի խումբ ուսանողներ, չարաճճի պտույտներ և ութաձև հանգույցներ անելով օդում, նրանք բարձրացան մեր վերևն ու բաց թողին կարմիր թերթիկների մի հորդ անձրև։ Թերթիկների վրա գրած էր՝ «Կեցցե՛ն կոմունիստական շինարարության անդրանիկ մարտիկները...»։ Գուրգենի ինքնասիրությունը որոշ թրթիռներ ունեցավ այդ բառերից, իսկ Հասմիկի դեմքն ամբողջովին մի մեծ ժպտի վերածվեց։ Մենք նշաններով ողջունեցինք ուսանողներին ու դուրս եկանք քաղաքի շրջանից։ Սավառնում էինք դանդաղ ու հոճվում նորանոր տեսարաններով։ Ահա մոտեցանք Սևանա լճին, որն արդեն մի հրաշալիք էր. լազուր ջրերը շրջապատված էին սոճիների վերասլաց անտառներով, որոնց խիտ կանաչների մեջ հսկա ծաղիկների նման փայլում էին գունավոր շենքերը։ Դժվար էր գտնել մի ուրիշ վայր, ուր բնությունն ու մարդկային արվեստն այդպես ներդաշնակ զուգորդվեին։ Գուրգենը նայում էր հմայված, նա սպառեց իր պոեմի մեջ հին բանաստեղծության ողջ արսենալը,, քրտնաթոր եղավ ու մնաց դժգոհ... Նա շարունակ ետ ու առաջ էր շրջում ածականները՝ «գեղահրաշ», հրաշագեղ...», «գեղածիծաղ», «ծիծաղագեղ...», «զարմանահրաշ», «հրաշազարման...», ու վերջը չկարողացավ արտահայտել իր մեջը հորդացող զգացումները, զայրույթով նետեց մատիտը լճի մեջ... Կարծես այդ նշանին էին սպասում. այդ բոպեին ներքևից մեզ նկատեցին լճի վրա շարված հիդրոպլանները ու հսկա բադերի նման խմբով բարձրացան դեպի մեզ՝ ողջունելու... Այդ էքսպրոմտ

դիմավորումն այնքան ցնծալի էր, որ Գուրգենը մոռացավ իր անհաղող բանաստեղծական դերյուռը... Հիդրոպլաններն ընկերացան մեզ, ու մենք շարունակեցինք պտույտը...

... Գուրգենը խայթված այդ չարաճճի հարձակումներից, ջղայնության նշաններ էր ցուցադրում։

Գուրգեն.— Խոսիր, խոսիր, Հասմիկ, ոգևորվիր, այդ բոլորը մենք արձանագրում ենք...

Հասմիկ.— Իրր թե դժգոհ ե՞ս, բայց եթե դժգոհեցիր, որ քեզ բանաստեղծ դարձրի, այժմ պիտի ուրախ լինես, որ ազատեցի քեզ այդ պաշտոնից, մանավանդ, որ քեզ մեծ վտանգ էր սպառնում. գու գիտե՞ս, որ հայտնի Ֆուրյեն իր ուտոպիայի մեջ իր ապագա ֆալանստերներում, շատ անհաճելի պաշտոն է առաջարկում անշնորհք բանաստեղծներին...

Գուրգեն.— Այսի՞նքն...

Հասմիկ.— Ամաչում եմ մինչև անգամ ասել... փողոցները մաքրելու պաշտոնը...

Գուրգեն.— Այդ դեպքում անհրաժեշտ կլինի պատժել և քեզ, որպես ինձ բանաստեղծ դարձնողին...

Հասմիկ.— Համաձայն եմ, ընդունում եմ իմ պատիժը և լռում, առաջարկում եմ քեզ շարունակել մեր ճանապարհորդության նկարագիրը...

Գուրգեն.— Լավ, շարունակենք մեր երթը, դեպի ապագան...

11

Գուրգեն,— ... Հասմիկը՝ ըստ սովորության այնքան էր տարվել տեսարաններով, որ մոռացել էր մեր ճանապարհորդության բուն նպատակը։ Վերջապես մեզ ուղեկցող պրոֆեսոր Արեգյանը հարցրեց.

— Որտե՞ղ կուզեիք իջնել, ընկերներ։

— «Ցեցակեր» գյուղում,— ասաց Հասմիկը։

— «Ցեցակեր» գյո՞ւղ,— հարցրեց Արեգյանը, դեմքի բոլոր կնճիռները հարցականի վերածելով,— բայց մեզ մոտ այդպիսի անուններ չկան...

Բոպեաչափ մտածելուց հետո, նա ասաց.

— Ձեզ կարող է օգնել հնագիտության պրոֆեսոր Ակնոցյանը, որի հետ ձեզ քիչ առաջ ծանոթացրի։

Պրոֆեսոր Ակնոցյանը հանեց իր ճամպրուկից մի պատմական քարտեզ ու երկար փնտրելուց հետո՝ բացականչեց.

— Գնանք. նախկին «Ցեցակեր» գյուղն այժմ ընկնում է 51-րդ կոմունիստական բջիջի շրջանում։

Արեգյանն իսկույն կարգադրեց, որ մեզ իջեցնեն հենց այդ բջիջում։ Մեզ ուղեկցող օդանավերն ու հիդրոպլանները հրաժեշտ տալով մեկնեցին իրենց տեղերը։

Մենք իջանք մի կոկիկ քաղաքում՝ մի բարձր սպիտակ շենքի առաջ։ Երկար ժամանակ մնացել էինք ապշած հիացմունքից. լայն փողոցի բոլոր տները շրջապատված էին ծաղկանոցներով ու պուրակներով։ Տպավորությունն այն էր, կարծես մենք գտնվում էինք մի շքեղ կուրորտում, որի շենքերը կառուցված էին հատուկ մրցությամբ՝ մեկը մյուսից գերազանցող։ Վերջապես Հասմիկը՝ որպես հին մտածողությունից դեռ չազատագրված՝ հարցրեց Արեգյանին.

— Սրանք ձեր հանգստյան տնե՞րն են։

Պրոֆեսորը ժպտաց ներողամտաբար։

— Ո՛չ, սրանք մեր սովորական տներն են, որտեղ կարելի է աշխատել և հանգստանալ։ Մեր սակավաթիվ հիվանդների համար մենք ունենք հատուկ կուրորտներ, բայց ընդհանրապես, հեշտ հաղորդակցության շնորհիվ, մեր առաջ բաց են բնության ամենագեղեցիկ վայրերը՝ թե՛ հանգստանալու, թե՛ զվարճանալու համար։

Հանելով ծոցից հնագետ պրոֆեսոր Ակնոցյանից վերցրած քարտեզը, Արեգյանը ցույց տվեց մեզ նախկին «Ցեցակեր» գյուղի տեղը։ Հասմիկն ագահ աչքերով դիտում էր շրջակայքը, բայց այնքան էր փոխվել տեսարանը, որ միայն բլուրների ընդհանուր գծերն էին հեռավոր կերպով հիշեցնում անցյալը։ Չորս կողմը ծառազարդ ու ծաղկազարդ, ընդհանուր բանջարանոցներով ու այգիներով, մի թիզ հող չկար առանց մշակման, իսկ հոյակապ տները, գործարանները, կանոնավոր լայն փողոցները... չէ, սա շատ հեռու էր նախկին «Ցեցակեր» գյուղի պատկերից...

— Հե՛յ գիդի «Ցեցակեր» գյուղ, որտե՞ղ ես,— ասաց Գուրգենը,— հիշո՞ւմ ես, Հասմիկ, ամռան երեկոն, նեղ ու ծուռ փոշոտ փողոցները, գյուղացու իդիլիական բակը, մեր սոցարշավը Միքայելի հետ...

Այս խոսքերի վրա Հասմիկի աչքերը պղտորվեցին, նա ոչինչ չպատասխանեց ու երեսը դարձրեց մյուս կողմը, իր հուզմունքը ծածկելու համար։

— Ինչո՞ւ ես տխրում, Հասմիկ,— հարցրեց Գուրգենը։

— Տխրում եմ, որովհետև մեզ համար էլ անելու բան չի

մնացել... ախ, չէ՞ որ մենք պիտի «Ցեցակեր» գյուղի կոլխոզի 37 տնտեսությունը վերածեինք համատարածի, չէ՞ որ ես պիտի պրոպագանդա մղեի գյուղի կանանց մեջ...

— Որքա՜ն միամիտ ես, Հասմիկ, մեզ համար այստեղ էլ աշխատանք շատ կա... մոռացիր «Ցեցակեր» գյուղը, նա արդեն պատմություն է...

Խոսակցությունն ընդհատեց պրոֆեսոր Արեգյանը։

— Այսօր գյուղատնտեսական ինստիտուտում զեկուցում է լինելու բանջարաբուծության նոր ձևերի մասին,— ասաց նա,— կարծում եմ դա ամենալավ սյուրպրիզն է ձեզ համար։

Մի քանի րոպեից հետո մենք արդեն մի մեծ շենքի առաջ էինք, որը շրջապատված էր հազվագյուտ ծառերով։ Երբ ներս մտանք դահլիճ, նա արդեն լիքն էր հասարակությամբ. հիմնական զեկուցումն արդեն սկսված էր։

Զեկուցման ժամանակ մենք այնքան նորություններ իմացանք ագրոկուլտուրայի զարգացման մասին, որ տասը տարում հազիվ կարող էինք յուրացնել, փոխվել էին ոչ միայն գիտության տվյալները, այլև նրանց մշակելու մեթոդները։ Արհեստական անձրև, արհեստական լույս, ջերմություն... ֆիզիկան ու քիմիան սերտ միացած ագրոկուլտուրայի հետ։ Պարզվեց նույնպես, որ եզանակների գուշակումը նույնքան հեշտ հիմունքների վրա է դրված, որպես և աստղագիտությունը։ Այս բոլորը Գուրգենը լսում էր օբյեկտիվ սառնասրտությամբ, իսկ Հասմիկը ցուցադրում էր իր դեմքին անհամբեր հետաքրքրություն, շարունակ զարմանքի արտահայտությամբ փոփոխելով իր դեմքը։

Մեզ սթափեցրեց պրոֆեսոր Արեգյանը։

— Պետք է շտապել,— ասաց նա,— այսօր մեզ մոտ հյուր են գալու Հնդկաստանի ընկերները, դա ձեզ համար բավական լավ առիթ է...

Մենք դուրս եկաք գյուղատնտեսական ինստիտուտից. մեր առաջ հանկարծ բացվեց անմոռանալի տեսարան. ամբողջ փողոցը բռնված էր մարդկանցով, զանազան ձևի ինքնաշարժ մեքենաներով, իսկ վերևում երկու հարկով շարժվում էին օդանավերը, ուղեկցելով եկվոր ընկերներին։ Մենք միացանք երթին։ Երաժշտությունը, մարդկանց խանդավառ կեցցեներն ու կոչերը, ողջը մի վերացնող համերգ էր կազմում։

Հյուրերն իջան աշխատանքային պալատում, որի ընդարձակ դահլիճում հավաքվել էր ահագին բազմություն։ Տարօրինակ պատկեր էր. մենք տեսնում էինք առաջներս Հնդկաստանի ընկերներին, և միաժամանակ ռադիո-հեռատեսի միջոցով դիմացի էկրանների վրա երևում էր Հնդկաստանի այն քաղաքը, որտեղից նրանք եկել էին, տեսնում էինք այնտեղի միտինգը, և նրանք էլ փոխադարձաբար մեզ էին տեսնում... դա միջազգային միջերկրային միտինգ էր. Հնդկաստանի բանվորը, հաղթելով տարածությունը միտինգում էր Հայաստանի 51-րդ կոմունիստական բջիջի հետ։

Հանդիսավոր ճառի մեջ կոմբինատի մի բանվոր ասաց.

— Ամբողջ աշխարհը հառել է Հնդկաստանի գիտական կոլեկտիվի վրա, այնտեղ մոտենում է իր ավարտմանը մի խոշոր գյուտ, որի շնորհիվ արևի էներգիայի օգտագործումը պիտի ավելանա հարյուր հազար անգամ։ Մի ուրիշ կետ ևս գրավում է համաշխարհային ուշադրությունը. դա Անդրկովկասն է, որի գիտական կոլեկտիվները նույնպես միացած ուժերով զբաղված են նորագյուտ «նեոֆիտ» մետաղով, որի միջոցով հաջողվել է ատոմալուծել մի շարք նյութեր և որը նույնպես խոստանում է մոտ ապագայում ատոմային էներգիայի հսկայական աղբյուրներ, մի նոր հեղաշրջում գիտության մեջ...

Մեծ խանդավառությամբ ռադիոյի միջոցով լսվեց պատասխան-ճառը Հնդկաստանից.— միաժամանակ մենք և՛ տեսնում էինք, և՛ լսում խոսողին։

Մենք դուրս եկանք այդ միջերկրային միտինգից բոցավառ տրամադրությամբ։

Ճաշից հետո մենք այցելեցինք «կոմունա» տներից մեկը, որտեղ ապրում էին կոմբինատի բանվորները։ Այնտեղ էր ապրում և պրոֆեսոր Արեգյանը։ Հասմիկը մի առանձին հետաքրքրությամբ հարցուփորձ էր անում, ծանոթանում կոմունայի կյանքին։

— Այս նույն կենցաղն է տիրում և մեր բոլոր տներում,— ասաց Արեգյանը.— ամեն տեղ ընդհանուր ճաշարան, մանկապարտեզ, ակումբ-գրադարան, ընթերցարան, կինո-հեռատես և կինոթատրոն, կարելի է ասել՝ ամբողջ տունն ապրում է որպես մի մեծ ընտանիք...

Պատասխանելով մեր հարցին, նա ասաց.

— Մեր աշխատանքը տևում է միայն չորս ժամ, բայց մեզ մոտ մեծ ծավալ է ստացել կամավոր աշխատանքը, որը ուղղակի

հրաշքներ է անում իր ստեղծագործական թափով։ Մենք հաղթիվ ենք կարողանում տեղավորել բոլոր ցանկացողներին։

Երեկոյան մենք բարձրացանք տան վերևի տեռասը, որտեղ «կոմունարները» հանգստանում էին այդ ժամերին։ Մեր առաջ բացվում էր մի շքեղ տեսարան, ամեն կողմից մեզ կարծես ողջունում էին հարևան բլիջների, կոմբինատների զվարթ, շողշողուն լույսերը։ Արեգյանը ցույց էր տալիս կոմբինատներն ու բացատրում.

— Ահա մեր հարևան արհեստական կաշվի կոմբինատը, իսկ նրա ձախ կողմը քիմիական կոմբինատն է... այն բարձր աշտարակը՝ արհեստական անձրևի կայանն է... և այդպես շարունակվում են մեկ-մեկու հետևից կոմբինատ-բլիջները,— ամբողջ երկրագնդի բոլոր մասերում... Մենք ուշխատանքի ենք լծել բոլոր գետերն ու գետակները, հիդրոկայաններ կառուցել, լծել ենք քամին ու արևը,— ասում էր Արեգյանը,— երկիրը գիտության օգնությամբ վերանորոգվել է, փոխել իր վաղեմի դեմքը. մեր ամբողջ աշխատանքները, մեր ամբողջ կյանքը մեծ պլանի մեջ է առած, կա մի մեծ, համաշխարհային պլանային խորհուրդ, որը տարեկան չորս տնգամ ժողով է ունենում երկրագնդի զանազան կետերում...

Նա փոքր-ինչ լռեց խորհրդածելով, ապա շարունակեց.

— Պլա՜ն, ամեն ինչ պլանի մեջ է... նա ընդգրկում է մեր ամբողջ կյանքը, նա է նախագծում և ուղեգծում, նա է կազմակերպում մեր կամքը, ուժ է տալիս մեր բոլոր ընդունակություններին... Զարմանալի է, թե ինչպես անցյալում մի խորաթափանց ուղեղ կարողացել է նշմարել պլանի այդ հզոր նշանակությունը. խոսքս Սպինոզայի մասին է, որն ասել է՝ եթե մարդիկ ապրեին որոշ պլանով, նրանց չէր կարող տիրանալ ոչ մի նախապաշարմունք... ահա այդպես, պլանը՝ մեծ Հոկտեմբերի այդ ծնունդը, դարձել է մեր աշխարհաղգացման ամուր հենարանը...

Մեր շուրջը նստած հասարակությունը՝ խմբերի բաժանված, գրուցում էր զանազան հարցերից. մի տեղից լսվում էին գիտական տերմիններ, մյուս տեղից՝ գրողների, երաժիշտների, նկարիչների անուններ։ Այս մի խմբում բուռն վիճաբանություն է փիլիսոփայության մասին, լսվում են ականավոր փիլիսոփաների անունները։

— Սրանք ձեր գիտնականնե՞րն են,— միամտաբար հարցնում է Համմիկը։

— Ո՜չ, սրանք մեր բանվոր-բանվորուհիներն են,— պատասխանեց Արեգյանը ներողամիտ ժպտով։

Տեռասի ծայրին՝ էկրանի վրա երևաց կինո-հեռատեսի պատկերը, ակամա գրավելով մեր ուշադրությունը։

— Որտե՞ղ կուզեիք լինել այս երեկո,— հարցրեց Արեգյանը։

Ծրագիրն այնքան մեծ էր, որ մենք մնացինք շվարած, թատրոն, երաժշտություն, դասախոսություններ... որը ընտրենք՝ հիանալի է...

— Դուք կարող եք այդ բոլորը տեսնել և հենց այստեղ նստած,— ասաց Արեգյանը։

Նա ցույց էր տալիս քիչ-քիչ ամեն բանից։ Ահա մի գիսպուտ ապագա քաղաքի հատակագծի շուրջը, ահա մի ներկայացում, մի հմայիչ... բանաստեղծ Ամպյանի դասախոսությունը...

Արեգյանը կանգ առավ։

— Այս բանաստեղծը շատ օրիգինալ մարդ է. նա թարգմանել է հույն բանաստեղծ Արիստոֆանի «Թռչունները» կոմեդիան և այժմ ապրում է օդում՝ մեր նոր ձևի «օդանավ տներում»... այնտեղից էլ դասախոսում է...

Մենք դեռ երկար խոսում էինք Արեգյանի հետ ու քանի մոտ էինք ծանոթանում «ապագայիններին» կյանքին, այն ավելի մտերիմ ու հարազատ էր դառնում մեզ համար...

Երբ մենք իջնում էինք տեռասից, Համմիկը նորից աչք ածեց շրջակայքի լուսաշող տեսարանին ու ասաց.

— Գուրգե՛ն, այս բոլորը երա՞զ է, թե՞ իրականություն։

— Համմի՛կ, դեն ձգիր այդ հին բառերը, այնտեղ, որտեղ գոյություն ունի պլանը, ի՞նչ գործ ունեն երազները...

Համմիկը նայեց Գուրգենին մի թափանցող հայացքով, որը շատ բան էր ասում...

12

Առավոտը զարթնեցինք արևածագին մի նոր-անուշ Ինտերնացիոնալի ձայնից։

Արեգյանը ներքև իջավ դահլիճ, բարևեց։

— Որտեղի՞ց է լսվում երաժշտությունը,— հարցրեց Գուրգենը։

— Այսպես ասած՝ մեր «ատրուշանից»— արևի ուժակայանից, նրանցից մեկը մեզանից մոտ է։ Ամեն առավոտ, երբ արևի առաջին ճառագայթներն ընկնում են կայանի վրա, նա հնչում է Ինտերնացիոնալը։ Բայց մենք շուտով գնալու ենք բերքի տոնին. դուք պետք է անպատճառ ներկա լինեք։

Փոքրիկ օդանավով մենք թռանք ու իջանք մի ընդարձակ դաշտում։ Տարօրինակ գույնզգույն մի բազմություն էր սփռվել այնտեղ, կարծես մարդ-ծաղիկներ էին բուսել դաշտում։ Այստեղ ներկայացնում էին կենդանի պատկերով գյուղատնտեսության պատմության բոլոր անցած շրջանները, ու դրա համար էին խայտաբղետ հագուստները։

Ահա մի խումբ կիսամերկ մարդիկ, հասարակ փայտերով փորում էին գետինը, ահա մի ուրիշ խումբ բահերով էր վարում, հետո գալիս էին փայտե շուքը, գութանների տեսակները, և վերջապես՝ տրակտորը, կոմբայնն ու էլեկտրագութանը։

Հանկարծ դրոշակները ծածանեցին, նշան տալով. ամբողջ դաշտի բազմությունն սկսեց երգել, թնդաց մի հզոր, մասսայական երգ։

Արեգյանը կրկնում էր երգի խոսքերը, մեզ ծանոթացնելու համար. դա աշխատանքի հիմն էր, նրա մի մասը միայն մնաց մեր հիշողության մեջ։

— Անցավ շահագործող, գիշատիչ շրջանը մարդկության, անցան պատերազմները, խաղաղ աշխատանքը տիրեց ողջ երկրին... փթթում են ծաղիկները, փթթում են սրտերը, աշխատանքը մերն է հիմա, աշխարհը մերն է հիմա...

— Թնդանոթները մեքենաներ դարձան, թունավոր գազերը պարարտանյութ, ողջ երկրագունդը մի աշխատանոց է հիմա, մի սրտով է բախում, մի սոցկարգով ապրում.. աշխարհը մերն է հիմա, աշխատանքը մերն է հիմա...

— Արևափայլ դաշտերով քայլեցեք ազատ, հպարտ ճակատներ հովերին արեք, քշված են անդարձ կեղեքողներն, ու կոմունիզմի դրոշն է մեր առաջ... աշխատանքը մերն է հիմա, աշխարհը մերն է հիմա...

Հասմիկն ու Գուրգենը լսում էին հմայված, նրանք լուռ ձեռք-ձեռքի տվին, ինչ-որ զգացմունք հորդում էր նրանց մեջ, մղում էր դեպի այդ արևավառ կյանքը...

— Բայց այդ րոպեին հանկարծ ամեն ինչ մշուշով ծածկվեց, ինչ-որ օդանավ բարձրացրեց մեզ ու սլացավ դեպի ներկան... մենք իջանք ներքև լուսնի շողերով սովխոզի բլուրի վրա, ափսոսալով, որ ապագա կյանքի միայն մի չնչին մասը տեսանք...

... Երկուսն էլ անգիտակցաբար ձեռք-ձեռքի էին տվել ու նայում էին իրար թափանցող հայացքով, ասես նոր էին ճանաչում

միմյանց... Մի ակնթարթ ևս՝ իրենք էլ չիմացան, թե ինչպես գրկեցին իրար մի երկար կարոտ համբույրով...

Լուսինը մոտեցել էր հորիզոնին ու նայում էր գունատ, իր հեռավոր սառնությամբ. լուսաբացը հետզհետե տարածվում էր ու վերցնում առարկաների վրայից աղջամուղջի քողերը. աքաղաղներն իրարից վառված՝ հետզհետե ուժեղացնում էին իրենց կանչը, դիմացի պուրակը շարժում էր իր կատարները վաղորդյան հովից. ներքևի ճամփով անցնում էր գյուղացին, Գյուլեի երգը շվացնելով։

— Ի՞նչ բերինք ապագայի երկրից,— հարցրեց Գուրգենը։

— Մի օդանավ բերինք՝ «Դեպի ապագա» օդանավը, նա այժմ մեր թևերն է դառել...

— Մեր նոր թևերը...

— Լույսը բացվում է, Գուրգեն, գնանք ուղղակի դեպի աշխատանք՝ դեպի փորձադաշտը...

— Գնանք դեպի մեր կոլխոզի 37 տնտեսությունը, որի շարունակությունը մենք տեսանք ապագայում,— ասաց Գուրգենը, Հասմիկի ձեռքը սեղմելով։

Նրանք վերկացան աշխույժ թափով։ Բացվող լույսի մեջ երկուսն էլ իրար թվում էին նո՛ր մարդ, նոր եռանդով, կրկնապատկված ուժերով...

Կարծես թև առած իջան բլուրից ու քայլերն ուղղեցին դեպի փորձադաշտ։

Երբ մոտեցան փորձադաշտին, հանկարծ նրանց դիմաց երևաց Միքայելը՝ ձիով։

— Էս որտեղ եք, ա՛յ քաջեր,— ասաց նա,— մթնումը թաքնվում եք, լուսումը երևում... գիշերս չեմ քնել, շատ անհանգիստ էի, մտածում էի՝ չլինի՞ ձեզ փորձանք է պատահել...

Նրա ձայնը դողում էր հուզմունքից, ասես իր հարազատ զավակներին էր հանդիպում։

— Ոչինչ չի պատահել,— պատասխանեց Գուրգենը,— քունները չէր տանում, նստած խոսում էինք բլուրի վրա։

— Խոսում էինք ապագայի մասին,— ավելացրեց Հասմիկը։

— Դե դուք տեղովն ապագա եք, էլ ի՞նչ ապագա եք ուզում։ Ի՞նչ ուրախ եմ, որ ձեզ տեսա, դե՛, գնանք փորձադաշտ։

Միքայելը հասնելով, իջավ ձիուց փորձադաշտի ծայրին, հանեց ծոցից դիտողության տետրերն ու մետրը, տվեց Հասմիկին։ Նա ու Գուրգենն իսկույն առաջ ընկան։

— Գուրգենին սոցմրցում եմ հայտարարում,— ասաց Հասմիկը, երեսը դարձնելով դեպի Միքայելը։

— Ախպեր, ես էլ եմ սոցմրցման մեջ մտնում,— ասաց Միքայելը նրանց հետևից։

— Ընդունում ենք,— կանչեցին երկուսով։

Մտան դաշտի մեջ։

— Ուրեմն, Հասմիկ, դու ինձ սոցմրցում և էլ ի՞նչ ես հայտարարում,— հարցրեց Գուրգենը, երբ նրանք հեռացան Միքայելից։

— Սոցմրցում և սոց-սեր... սիրում եմ մի անպիտան տղայի սոցիալիստական սիրով... իսկ նա էլ սիրում է, բայց իր զգացումի անունը չի ուզում տալ...

Գուրգենը ժպտաց։

— Ես այժմ կարող եմ շարունակել իմ տետրի հոդվածը՝ սիրո մասին... սիրում եմ մի շարաճճի աղջկա, «պայծառ արևի տակ»...

Արևը հզոր պտույտներով պատեց հորիզոնում կուտակված թեթև ամպերն ու ձգեց դաշտին իր թարմ շողերը, ամեն ինչ ոսկեզօծելով։

Միքայելն սկսեց հաշվել ցողունները, բայց սխալվեց, կանգ առավ ու նայեց երիտասարդ զույգի կողմը։ Անքուն գիշերվա հուզմունքը, նրանց տեսնելու ուրախությունը, և այդ ֆուն, ջահել աշխատանքը, նրա աչքերը խտղտեցին ու հրճվանք-արցունքի երկու կաթիլներ սահեցին նրա արևակեզ դեմքով։

1932

ՄԱԼԱԽՈՏԸ

Վաղ առավոտից կոլխոզնիկները սկսել էին քաղհանը ճակընդեղի ու ծխախոտի ցանքերում։ Ընդարձակ դաշտում, սկսած կոլխոզի մեծ այգուց, սփռվել էին մի քանի տասնյակ տղամարդիկ ու կանայք և մաքրում էին մատղաշ ծիլերը մոլախոտից։ Օրը պարզ էր ու վճիտ. պայծառ արևը չի ու լի բացել էր հորիզոնը. երկնքի ջինջ կապույտը՝ ասես թարմացած բնության հետ, գրավում էր աչքը, տանում հեռուներն ու իջեցնում կանաչազարդ սարերի վրա, մեղմ եզերելով նրանց երկարաձիգ գագաթները։

Պետրոսի մասն ընկել էր այգու մեջ, մի մեծ բացատում, որի երկու կողմից պտղատու ծառեր էին։ Գլխին մի աղլուխ փաթաթած, կռացած մարգի վրա, նա խնամքով քաղում էր մոլախոտերը ու ձգում առվափոսը, որտեղ նրանք թառամում էին, ուշաթափվելով արևի հուրքից։

Առավոտյան հովը հետզհետե տեղի էր տալիս կեսօրվա տապին. տաքացած հողն ալիքում էր ներքևից իր տոթը, ծանրացնում շունչը, ու քրտինք տալիս ճակատին. արևը խայթում էր կորացած մեջքը, երբեմն միայն զիջելով սարից եկած հովին, որը թեթև անցնում էր իր ախորժելի շնչով ու դանդաղում դիմացի ծառերի վրա։ Դարավոր ընկուզենին ծանրախոհ, խուլ աղմկում էր իր խոշոր տերևներով, կեռասենին բացվում, կարմրին էր տալիս իր նորահաս պտուղներով, իսկ սալորենիների մանրիկ տերևներն արագաշարժ դեղար էին բռնում։

Պետրոսն սկսել էր աշխատանքն արտի ծայրից ու գնում էր դեպի ներքև։ Մերթ ընդ մերթ, երբ նրա մեջքը բողոքում էր երկար ճկվելուց ու արևի տապից, նա կանգնում էր, ձգվում ու հանգիստ տալիս մկաններին։ Այդ բոպեներին այգու ծառերի խիտ ստվերները գայթակղիչ գրավչությամբ կանչում էին, բայց նրա հայացքը դառնում էր դեպի ներքև, որտեղ երևում էր Արփիկի զիլ կարմրած գեմքը՝ սպիտակ գլխաշորի մեջ։ Կանգնում էր Պետրոսը, ամեն անգամ աչքով չափում իրենց բաժանող տարածությունն ու ասում.

— Հա, քեզ մատաղ, հա՜, մոտենում ենք իրար...

Նա ասում էր ինքն իրեն, հազիվ լսելի ձայնով, բայց կասկածով ետ էր նայում. չլինի՞ թե որևէ մեկը լսեց իր ասածը։ Երբեմն նա փոքր-ինչ ձգում էր իր հանգիստը, ավելի երկար էր նայում, բայց երբ Արփիկը, զգալով իր վրա հառած հայացքը, ինքն էլ էր նայում, Պետրոսն իսկույն կռանում էր նորից ու շարունակում ոչոկոտել անթիվ մանրիկ մոլախոտերը։ Արփիկի հայացքն իր մեջ առնելով, նա էլ չէր նկատում շոգն ու տոթն ու կրկնապատկում էր եռանդը, ախորժելի թեթևություն զգալով ամեն մի վերջացրած, քաղհանած մալգից հետո։

Բայց ահա մոտենում է դադարի ժամը. բոլորն զգում են այդ բոպեները, կարծես մեկն անտես շշնջում է նրանց ականջին ու հանգստի հրավիրում։ Վերջապես ճաշ բերողը երևաց բացատի ծայրին։ Մեկ մեկու հետևից բոլորը թողին գործն ու խմբվեցին մեծ ընկուզենու տակ։ Աշխատանքի լռությունը խախտվեց։ Սրախոսելով, ծիծաղելով, խմբակը նստեց ճաշի։

Ճաշից հետո կոլխոզնիկները ցրվեցին այգում։ Ընկուզենու տակ մնաց միայն Արփիկը։ Պետրոսը թեպետ մեծ ցանկություն ուներ մնալու նրա մոտ, բայց բամբասանքի առիթ չտալու համար, նույնպես քաշվեց դանդաղ քայլերով։

Քիչ անց դիմացի այգուց դուրս եկավ Արփիկի մորաքույրը՝ Հերիքնազը, ու աջ ու ձախ աչք ածելով, մոտեցավ նրան.

— Բարով Արփիկ ջան, ո՞նց ես։

— Լավ եմ,— ասաց Արփիկը՝ փորձող հայացք ձգելով նրա վրա։

— Եկել էի մեր այգին, ասի մի գնամ տեսնեմ... Ինչի՞ չես երևում։

— Ժամանակ չկա, մորքիր. նստիր։

Հերիքնազը նստեց կանաչ խոտի վրա, Արփիկի մոտ, ու ձեռքերով կզակը բռնած փոքր-ինչ լռեց տատանման մեջ, ապա սկսեց փաղաքշող ձայնով.

— Արփիկ ջան, չարչարվում ես էլի՞. բա սա քու բանն է՞։

— Ինչի՞ չի իմ բանը. ուրիշներից ինչո՞վ եմ պակաս կամ ավելի։

— Է՜հ, ասում ես էլի... դե դու էլ գիդաս, Արփիկ, քու մոր տեղն եմ... որ տեսա էստեղ մենակ նստած ես, սիրտս փուլ եկավ...

— Ինչի՞ եմ մենակ. բա էսքան ընկերներն ի՞նչ են։

— Չէ, իմ ասածն ուրիշ է... Բա քու բանը ո՞նց պետք է լինի, Արփիկ, էլի պետք է բաժանված մնա՞ս...

— Նոր ես իմանո՞ւմ, որ վերջացած պրծած է. ասելդ ի՞նչ է։

— Դե լավ չի էլի...

— Բա քու լավը ո՞րն է. ուզում ես էլի գնամ էն տավարի ցավի մո՞տ։

— Արփիկ ջան, բա ո՞նց անենք, տղամարդ է, էսպես էլ կլինի, էնպես էլ...

— Ինչի՞ պետք է կնիկը համբերի,— վրա պրծավ զայրացած Արփիկը.— ես նրա ճորտն ե՞մ. զոռով մարդու են տվել, հիմի խելքի եմ եկել, չեմ ուզում. ինձ հետ ապրող մարդը պետք է իմ ընկերը լինի, թե չէ իսկի մարդ չեմ ուզում։

— Բա առանց տղամարդու, առանց տեր ու տիրականի ո՞նց կլինի. տղամարդու ոտի ցեխն էլ տանը զարդ ա...

— Էդ հին խրատները քեզ համար պահի. ես երեխա չեմ, գիտեմ, ո՞վ է քեզ զրկել. նա հենց ինքը տեղովը մին ոտի ցեխ է... դու լավ կանես, ձեռք քաշես. միանգամից իմացիր, որ կուժը կոտրել, փշրվել է, էլ կոծկել չի լինիլ։

— Դե լավ, լավ, սիրտդ շուռ մի բերիլ, խոսք է էլի՞, ասում եմ. ինչ անեմ, սիրտս ցավում է։

— Ա՜յ, վերջին անգամն եմ ասում, մորքիր, գործը զագսով հաստատված, պրծած է. թե որ մեկ էլ խոսք ես գցել դրա մասին, բերանիցս կծու խոսքեր կլսես։

— Լավ, որ սիրտդ նեղանում է, էլ բան չեմ ասիլ, դե որ վերջացած է, էլ ի՞նչ խոսք, օրենքի բան է...

Հերիքնազը լսում է ու նայում չորս կողմը սպասողական դրության մեջ. ապա՝ կարծես ինչ-որ հիշելով, հարցնում է.

— Աղչի, Արփիկ, ասում են սիրտդ ուրիշի վրա է, դրուստ է՞...

— Էլի բողչեդ բաց արի՞ր,— զայրացավ նորից Արփիկը,— լավ կանես դրանից չխոսես. էդ բամբասողները ինչ ուզում են թող կոկոան, ես ուշք դարձնողը չեմ, ես ոչովի հաշիվ չունեմ տալու։

— Դե, Արփիկ ջան, կարելի է մեծացել եմ, խելքից թուլացել... ի՞նչ անեմ, դիմանում չեմ, տեսնում եմ քեզ պես ջահել, սիրուն կնիկն առանցի մարդի, առանցի օջախի... իմ սիրտը հո քա՞ր չի...

Արփիկը լռեց ու դժգոհ նայում էր գետնին։ Հերիքնազը ջղայնորեն սեղմում էր կզակը, նորից զգուշությամբ աչք ածելով չորս կողմը։ Զանցած մի քանի րոպե դիմացի այգուց դուրս եկավ խունացած պիջակով մի գյուղացի, որ փոքր-ինչ մոտենալով կանգ առավ։

Նրա դեղնած, ջղուտ դեմքի ամեն մի կետից գազազած մարդ էր նայում. գազազած էին փոս ընկած կարմրած աչքերը, ծամածռած բերանը, ալեխառն, ավելանման մորուքը։

Հերիքնազը նրան նկատելուն պես վեր կացավ տեղից, իսկ Արփիկը մնաց նստած, երեսը դարձնելով մի կողմը։

— Բարի աջողում,— ասաց Սարիբեկը (այսպես էր նրա անունը), դիմելով Հերիքնազին։

Հերիքնազը պատասխանեց գլխի շարժումով։

— Բա դու մեծ կնիկ ես, Հերիքնազ, մոր տեղն ես, չե՞ս կարող խրատել էդ կնկան, որ իրեն հավաքի տուն գա...

— Ի՞նչ ես փշի նման կպել,— վրա պրծավ Արփիկը,— քեզ հազար անգամ ասել եմ, որ բաժանվել եմ օրենքով...

— Բա էս օրենք է՞, որ կնիկարմատը վեր կենա՝ տուն ու տեղ թողնի, թե բաժանվում եմ մարդո՞ւց...

— Բա ո՞րն է օրենքը,— որ զոռով մարդու տան, ուշունցի ու ծեծի փայ անե՞ն. գնա քո ուզած կնիկը ճարի. ես քո ընկերը չեմ. դու ձայնաղուրկ ես, ես աշխատավոր...

— Էդպես է, հա՞, մենք մարդահաշիվ չե՞նք, մի ասա տես-

նեմ, ո՞վ է էդ օրենքն անողը,— իմ տանը նոքար էր, հիմի մեծ մարդ է դառել, ինձ ձայնից զրկում է...

— Ես քեզ հետ պլուխ չունեմ, ինձ հանգիստ թող։

Պետրոսը հեռվից դիտում էր այս տեսարանը. նկատելով, որ ձայները բարձրանում են, նա մոտ եկավ այնքան, որ լսելի լիներ խոսակցությունն ու ականջը պահելով նրանց կողմը, այնպես ձևացրեց, իբր թե դիտում է մարգերը։ Տակտիկական նկատառումներով նա չէր ուզում խառնվել խոսակցությանը, բայց ուզում էր պաշտպանել Արփիկին, եթե Սարիբեկը վիրավորեր նրան կամ բռնություն գործ դներ։

Սարիբեկը նկատելով Պետրոսին, ավելի մոայլվեց, ու սիրտը վախ ընկած՝ ուզեց վերջ տալ խոսակցությանը։

— Բա հիմի ասելդ ի՞նչ է,— դիմեց նա նորից։

— Էն է, որ քու ճամփեդ գնաս, ինձանից ձեռք քաշես։

— Լավ, ես հո գիտեմ քեզ գլխից հանողն ո՞վ է,— ասաց նա, խեթ նայելով Պետրոսի կողմը.— էդ էլ չի մնա քեզ...

— Ինձ ոչով հրամայող չկա... ես եմ իմ գլխի տերը, ինձ սովորեցնողը սովետական իշխանությունն է, գնա նրա հետ խոսի. ինձ հանգիստ թող, թե չէ ժողղատարան կտամ, դրա համար մեծ պատիժ կա...

— Հը՛մ, սպառնալիք ես տալի՞ս... դե կտեսնես սրանից ետը...

— Ի՞նչ ուզում ես արա, քեզանից վախող չկա... դու ինձ համար ոնց որ էն մոլախոտը, քաղի ու դեն գցի...

Սարիբեկի դեմքը ծամածռվեց կատաղությունից, նա ուզում էր թունդ հայհոյանք թափել Արփիկի գլխին, բայց Պետրոսի ներկայությունը կաշկանդեց նրան։

Նա մռմռաց՝ ատամները կրճտացնելով ու երեսը դարձնելով, հեռացավ, շեղելով ճամփեն, դիպչելով ծառերի ճյուղերին, ու առվափոսերն ընկնելով։

Պետրոսը նկատելով նրա նահանջը, հանգիստ ժպտում էր հետևից։

Արփիկը վեր կացավ տեղից, թափ տվեց փեշերը, ուղղեց գլխաշորը ու նայեց Պետրոսին։ Նրանց հայացքները վայրկյանաբար իրար առան թեթև ժպիտով։

«Է՜հ, մարդ էլ կա, մարդ էլ»— անցավ Արփիկի մտքով. նրա մեջ ցանկություն եկավ մոտենալ Պետրոսին, ասել, որ նրան շատ

է սիրում, բայց այդ անկարելի էր... պետք էր համբերել, մինչև որ Պետրոսը բացի խոսքը։

Արտի ծայրից նշան տվին կարմիր դրոշակով։ Դաղարը վերջացավ ու նորից սկսվեց քաղհանը։ Հերիքնազը մնաս բարով ասելով, հեռացավ, իսկ կոլխոզի կանայք շրջապատեցին Արփիկին։

* * *

Իրիկնապահի արևը սահում, անցնում էր աշխատավորների վրայով. լեռների հովն իր առատ շնչով ուշքի էր բերում հոգնած մարմինները. բացատի մի կողմից, ծառերի երկար ստվերները թեք կտրում էին մարդերն ու ընում, դիպչում դիմացի ցանկապատին։

Պետրոսն ու Արփիկն արդեն հասել էին իրար ու միասին աշխատում էին վերջին մարգում, զուգընթաց գնալով՝ մեկն աջ, մյուսը ձախ կողմից։ Երկուսն էլ հազիվ էին զսպում իրենց ուրախությունը, որ միասին են, այսպես մոտիկ, ու կարող են խոսել մինչև մարգի վերջանալը։

«Ա՜յ, հիմա կասեմ»— անցնում էր Պետրոսի մտքով, բայց նա խոսում էր բոլորովին այլ բաներից.

— Արփիկ, էսօր արտաժամ ենք, կարող էինք մի մարգ էլ քաղհանել։

— Դե շատ ղոռելն էլ լավ չի. էգուցվա համար էլ պիտի ուժ սրահել...

Պետրոսը լռում է մի պահ, հետո ասում.

— Էդ քու մարդը ի՞նչ էր բոբոթում, բա բաժանված չե՞ս։

— Բաժանված էլ եմ, մտքիցս հանած, բայց էլի զահլես տանում է։

— Թե որ էդպես դադար չի տալիս, շարշարում է, դիմիր ժողղատարան, գրիր թե հալածում է...

— Չեմ ուզում բամբասանքի մաստակ դառնամ, թե չէ վաղուց դրա պոչը ոլորած կլինեի. բայց էսօր դամարին կպա. կատաղեց...

— Ո՞նց։

Արփիկը ժպտում է, կամար սև հոնքերը բարձրացնելով։

— Ասի դու ոնց որ մի մոլախոտ՝ պոկի ու դեն գցի...

Պետրոսը ծիծաղեց։

— Ի՜սկը մոլախոտ... Բայց դրանց լավ զտեցինք, թող գնան առաջվա աղայությունը միտը բերեն...

— Երանի մի քիչ շուտ գար էդ մաքրելը, դրանց արմատից կտրեր միանգամից։

— Ջագսին արդեն հայտնե՞լ ես։

— Ո՞նց չէ, քանի ժամանակ է...

Նորից մեջ է ընկնում լռությունը, նորից Պետրոսի մտքով անցնում է. «ա՜յ, հիմի կասեմ», բայց վճռական րոպեին կանգ է առնում։ «Չէ՛, քիչ կարգի բերեմ գործերս, սենյակը նորոգեմ, հետո...»։

Ու խոսում է ուրիշ նյութերից։

— Դրանք հո շահագործող են, էս խոտերի նման ուրիշի հյութերով ապրող. ինչ-որ նոր բան կա, դրանց գլխովին վնաս է, դրանց մոտ սոցիալիզմի անուն տաս՝ մեկ է թե խանչալը կողքը խրես... Բայց ի՞նչ կասես, որ մեր կոլխոզնիկների մեջ էլ կան մին-մին փշեր,— չեն հասկանում, որ գործը փչացնում են...

— Դե հասկանալը մի օրում չի լինիլ, սովորել է հարկավոր,— ասում է Արփիկը մտերմաբար նայելով Պետրոսին, կարծես ասելով. «ինձ էլ կսովորեցնես, չէ՞...»։

— Ափսոս, որ մեզանից քչերն են նեղել կարմիր բանակում, էնտեղ շատ բան են սովորեցնում...

Ասա փոքր-ինչ լռելուց հետո, նա շարունակում է իր մտքերը։

— Գիտե՞ս ինչ կա, Արփիկ, էս սոցիալիզմի, կոլխոզի մարդն ուրիշ բան է. նա պետք է հասկանա աշխատանքը. չպետք է ասի՝ ես իմ փայ գործը վերջացրի, ու ղրաղ կքաշվեմ, չէ, նա պետք է ասի՝ իմ փայը կանեմ, էս ավելին էլ պլանի փայը... Կարելի է որ մի հիվանդ ընկեր կա, կամ թույլ, որ չի հասցնում գործը. նրա տեղն ավելացնեմ իմ աշխատանքը... Էդպես որ լինի, էլ ո՞վ կհասնի մեր հետևից, էն ժամանակ երկիրը դրախտ կդառնա...

Մարգը վերջանում է, բայց զույգը էլի դեռ մլուլ է տալիս։ Արդեն դադար է. կոլխոզնիկները խմբվել են արտի ծայրին ու հետաքրքիր հայացքներն ուղղում են Արփիկի ու Պետրոսի կողմը։ Արփիկը՝ սթափվելով, արագ քայլերով գնում է դեպի խումբը։ Նրա հետևից ավելի հանդարտ գնում է Պետրոսը։ Իրար ընտելացած խումբը թեթև զրույցով քայլում է դեպի գյուղը, մի ընտանիքի անդամների նման։

Նրանց հանդիպում է գյուղի ծայրին կոլխոզի ցրիչ Պավլիկն ու հայտնում.

— Ընկերներ, էսօր ժողով է...

* * *

Երեկոյան արտադրական ժողովից հետո Պետրոսն ու Արփիկը կարծես իրար խոսք տված, դուրս եկան միասին, ու նեղ փողոց մտնելով, արագացրին քայլերը, որպեսզի մենակ մնան։

Երկուսն էլ հրճվանքի մեջ էին, մանավանդ Արփիկը. երկուսն էլ այդ ժողովում հայտարարվեցին հարվածային։

Զարմանում էր Արփիկը, ո՞նց թե ինքը մի թույլ կնիկ, տանջված, խեղճացած իր մարդուց, հիմի տղամարդկանց հետ ուս է դնում, մինչև անգամ հարվածային է դառել...

— Տեսա՞ր, Արփիկ, որ ասում եմ մեր մեջ փշեր կան... Սարդիսը, մեկ էլ Շուշանը վրա ընկան ինձ. շնորհքները ցույց տվին. ասում են էդ ինչ խնամություն է, գնում եք հեշտապրծուկ անում, մի երկու խոտ պոկում, թե հարվածային եք... ես էլ ասի, դե եկեք ձեր աչքով տեսեք, թե մի մոլախոտ կգտնե՞ք մարգերում... դե հաղար ասա, որ հասկանում չեն...

Նրանք քայլում են լուռ, երկուսն էլ սպասելով, թե ինչ-որ արտասովոր դուրեկան խոսք է ասվելու. Արփիկն սպասում է, որ Պետրոսը պիտի «բացվի», բայց զարմանում է, երբ հասնում է իր բնակարանին ու էլի նա լռում է...

Իրար ձեռք են սեղմում ու բաժանվում, երկուսն էլ մտածելով իրար մասին...

Պետրոսը գնում է նեղ ու մութ փողոցներով, մտածելով թե ահա, մի քիչ անցնի՝ էսպես մի ամիս, գործերը կարգի կբերի, ու իր միտքը կհայտնի Արփիկին. դե նրա սիրտն էլ, երևում է, իր վրա է... կապրեն միասին, կաշխատեն... հետո միտքն անցնում էր կոլխոզին, մտածում էր, թե ինչ պետք է անել, որ բոլորն էլ ուրիշ տեսակ, «սոցիալիզմի մարդիկ» դառնան ու հասկանան աշխատանքը... պետք է սովորեցնել, դեռ շատ պետք է սովորեցնել...

Նա մոտենում է գյուղի ծայրին, որտեղ իրենց տունն է։ Ծռվելով դեպի մի ցանկապատի անկյունը, նա հանկարծ շշմում է ատրճանակի ձայնից, ու ակամա ետ է ընկնում, զգալով մի ցնցող հարված ուսին։ Մի ակնթարթում ինչ-որ միտք ասում է՝ վայր ընկիր, ձեացիր սպանված... ու նա ընկնում է, փռվում գետնին, մեկը վազում է թմփթմփալով ու հետո տիրում է լռությունը։

«Վիրավորված եմ... մեռնում եմ...»— անցնում է Պետրոսի

մարող գիտակցության մեջ. Մահվան օտարոտի միտքն ընդդիմում է նրան...

Բայց ահա լսվում են մարդկանց ձայներ, գալիս են լապտերներով ու խմբվում իր շուրջը, ուսի վրա արյունը սառչում է, հոսում է ներքև։ Իրեն բարձրացնում են, տանում տուն։ Ինչ-որ մոռացություն է գալիս վրան, կարծես ուրիշ աշխարհում լինի...

* * *

Պետրոսը լավանում է. բժիշկը քանի անգամ նայել է ուսի վերքն ու ասել, որ վտանգ չկա։ Մայրը հազիվ է ուշքի եկել, ու էլի վախենում է, հարցնում բոլորին, որպեսզի ստուգի՝ ճի՞շտ է, որ վտանգ չկա ու շշկլված է, ինքն էլ չի իմանում, թե ինչ է անում։

Արփիկը հենց նույն գիշերն իմանալով դեպքի մասին՝ իսկույն շնչասպառ վազեց Պետրոսենց տուն, ու գիշեր-ցերեկ խնամում էր նրան, թողած հին գյուղի ամոթխածությունը։ Քանի լավանում էր Պետրոսը, մորն ավելի ու ավելի խորթ էր թվում «օտար» կնիկը, բայց համբերում էր, որովհետև կոլխոզից էր։

Երեք օր էր անցել, բայց դեռ էլի իրարանցում էր կոլխոզում, Ժողովներ են անում, գնում-գալիս Պետրոսի մոտ, սիրտ տալիս նրան։ Կոլխոզի նախագահ Միսակը, քրտնքից այրված դեմքով, մեծ բլոկնոտը դրսի կրծքագրպանից դուրս գցած, հարցնում է խրոխտ ձայնով.

— Պետրո՞ս, էդ ո՞ր ճակատամարտում ես վերք ստացել... մի՛ վախի,— թշնամին ձեռներիս է արդեն,— Սարիբեկը բռնված է, տեսնող է եղել փախչելիս, ատրճանակն էլ գտել են գոմում...

Պետրոսն ուզում է ինչ-որ ասի, բայց նախագահը միջոց չի տալիս.

— Պինդ կաց, Պետրոս, էն թշնամիները «կուգան ու կերթան», մենք էլի մեր հարվածային գործը կշարունակենք...

— Աչի Արփիկ, երևում է, լավ ես մտիկ անում, շուտ է լավանում, միայն թե տես, մենակ աչքով միք կշտանալ, քիչ էլ փորի մասին մտածեք... Դե ես գնացի, գործ ունեմ, մնաք բարով...

Նախագահի ակնարկը ժպիտներ է թողնում Արփիկի ու Պետրոսի դեմքին։ Արփիկը նայում է դեռնին ու անհարմար զգալով, խոսքը գցում է ուրիշ բանի վրա։

— Պետրոս, իմացա՞ր, Սարիբեկը բռնվել է... ուզում էր քու գլուխն ուտի, իրանը կերավ...

— Հա, Արփիկ, քո «մոլախոտը» գնաց... Հիմի կապրես նոր կյանքով... Մի բան ունեմ ասելու, Արփիկ... արի մենք մշտական մոտ ընկերներ լինենք, ապրենք միասին... թե որ դու դեմ չես...

Արփիկը լռում է։

— Դե որ մոտ ընկեր ես, Արփիկ, ձեռք տուր ինձ, ապրենք միասին ,աշխատենք մեր կոլխոզում...

Ու առողջ ձեռքը հանում է անկողնուց։

Արփիկը ձեռք է տալիս և ուզում է շուտով ետ տանել, բայց Պետրոսը սեղմում է, չի թողնում։

Ներս է մտնում մայրն ու կանգնում ապշած։

— Մայրիկ, խնդրում եմ դու էլ ձեռք տուր Արփիկին, հիմի սա իմ մոտ ընկերն է. պետք է միասին ապրենք...

Մայրը նայում է Արփիկին իր հին, խամրած աչքերով, երևում է նա դժգոհ է, բայց որդու խաթրը չի կոտրում, մոտենում ու իր շոր, սառը մատներով բռնում է Արփիկի ձեռքը։ Ապա նորից դուրս է գնում բակը ինքն իրեն փնթփնթալով.

«Էսպես էլ աշխարհ կլի՞... Կոլխոզ-կոլխոզ ասելով երեխիս իրան կապեց... բա ազապ տղեն մարդաթող կնիկ կառնի՞...»։

1933

ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Այսօր Լևիկը տասնհինգ տարեկան է...

Ես նայում եմ նրան մայրական գորովով, հրճվում նրա հասակով, նրա պիոներական կրծքով. որքան լրջացել է, մտածում եմ ես ու չեմ հավատում աչքերիս. մի՞թե այդպես շուտ անցավ ժամանակը...

Այսօր Լևիկը տասնհինգ տարեկան է... Որքա՞ն հուշեր կան թաքնված այս խոսքերի մեջ... այսօր վերջապես տալիս եմ նրան կարդալու այն նվիրական նամակը... չէ՞ որ այդպես էր պատվիրել նրա հայրը՝ իմ ամուսինը...

Լևիկը զարմացած վերցնում է ձեռիցս այն թոշնած թուղթը, որի վրա ջղուտ ձեռքով ցաք ու ցրիվ գրած է մատիտով։ Նա զարմանում է, ու հետո, կարծես գլխի ընկնելով, սկսում է կարդալ ագահությամբ, իսկ ես-մտովի հետևում եմ նրան, կրկնելով վաղուց ծանոթ բառերը... Նրանք այնքան ջերմություն են բերում տարիների հետևից...

Ա՜խ, Լևիկ, արդյոք հեքիաթ չէ՞, որ դու այդպես նոր ես,

այդպես թարմ, որ քո կյանքը սկսվում է այն մեծ լուսաբացից... Դու երջանիկ ես քո պայծառ, անամպ հուշերով, և չգիտես թե ի՞նչ էր կատարվում քո ծնվելու ժամերին...

Այն ի՞նչ օրեր էին... ես ինձ տեսնում եմ ձյունեղեն ճամփաներում, տեսնում եմ ամայի, գերեզմանային գյուղեր, սովի ու համաճարակի դիակներ... ու ականջիս կարծես հնչում է ոռնոցը գայլերի...

Հանուր ավերածության մեջ, երբ թվում էր, թե վերջն է եկել մարդկային կյանքի, մեր ընկերների երկաթե շարքերն էին կենդանարար ուղիներ բացում ապագա մարդկության համար...

... Ձյուն էր, քամի... մռայլ, գորշ ամպերով ծածկված երկինք... ես անցնում էի ծանրացած քայլերով, հոգնած ու քաղցած, բայց մի անընկճելի ուժ քաշում էր ինձ առաջ, մոռացության տալով ամեն ինչ։ Ես շտապում էի, որ մինչև մութ հասնեմ այն գյուղը, լուր տամ ընկերներին։

Արդեն մութը վրա էր հասել, արդեն լսվում էր գայլերի չարագուշակ ոռնոցը, երբ ես մոտեցա գյուղի խավար խրճիթներին։ Գնում եմ երևացող միակ լույսի հանդեպ ու դուռը բախում։ Ներս եմ մտնում խրճիթը ցրտից կապտած, զգում եմ տաքության կենսարար շունչը ու տալիս եմ լուրը ընկերոջ։

— Այստեղ վիրավորներ են,— ասում է նա,— բայց ոչինչ, ես տեղ կհասցնեմ լուրը։

— Ինչպե՞ս է Խորենը,— հարցնում եմ անհամբեր։

Ընկերը լուռ ցույց է տալիս դեպի անկյուն։ Մոտենում եմ սրտատրոփ ու տեսնում ամուսնուս՝ պառկած մեջքի վրա, աչքերը փակ, տենդի մեջ։ Ձայն եմ տալիս, բայց նրա առնական թուխ դեմքը մնում է անշարժ...

Թուլացած ընկնում եմ ծնկներիս վրա. նվազումը տիրում է մարմնիս, ես կորցնում եմ ուշքս ու երկար մնում այդպես։ Հանկարծ գիշերվա մեջ զարթնում եմ ուժգին ցնցումից, կծկվում սոսկալի ցավերից... սկսվում է երկունքը... Լուսաբացին ծնվում է Լևիկը...

Ցերեկվա ուշ ժամին բացում եմ աչքերս ու հանկարծ տեսնում Խորենին. նա ժպտում է, խոսում մոտիկից, բայց ես ուժ չունեմ մեջս նրան պատասխանելու համար ու շատ չանցած նորից ընկնում եմ խոր քնի մեջ։

Բայց հետևյալ օրը, երբ զարթնում եմ նորից, էլ չեմ տեսնում

ամուսնուս... ինձ ասում են, թե վիրավորներին տեղափոխել են մի ուրիշ խրճիթ...

Հենց առաջին օրվանից լսում էի դրսից հաղթության խանդավառ ձայներ, լսում էի երաժշտություն, ու փոքրիկ Լևիկն էլ ձայնակցում էր իր ճչանման լացով։

Ես անհամբեր էի, ուզում էի շուտով տեսնել Խորենին ու ժամանակից առաջ վեր կացա, բայց ինձ վիճակված չէր նրան տեսնելը... Ինձ տարան երիտասարդ հրամանատարի մոտ։

— Նստեցեք, ընկեր Հասմիկ... առո՞ղջ եք... արդեն ճանապարհներն ապահով են, կարող եք ուղևորվել։

— Խորենի հե՞տ։

— Ո՛չ...

Նա լռեց մի պահ ու հետո ասաց լուրջ, խոհուն ձայնով.

— Ես կարծում եմ, ընկեր, որ դուք նույն արիությամբ կլսեք իմ խոսքերը, ինչպես ձեր ամուսինը կռվում էր թշնամու դեմ... Խորենն այլևս չկա... նա մեռավ վերքերից...

Ես ցիգ եմ անում, զսպում արցունքներս ու նայում հատակին։

— Այս նամակն էլ նա խնդրեց հանձնել ձեր երեխային, երբ նա տասնհինգ տարեկան կդառնա...

... Անցյալը պատում է ինձ մշուշով ու նորից չքանում. իմ առաջ դարձյալ Լևիկն է՝ իր պրոլետարական առողջ կրծքով. որքա՜ն է աճել նա տարիների շարքում... Նա կարդում է նամակը նորից ու նորից՝ երկրորդ, երրորդ անգամ...

«Սիրելի Լևիկ,— գրում է հայրը,— այն ժամին, երբ դու աշխարհ եկար, քո հայրիկը ծանր վերքերի մեջ մեռնելու վրա էր։ Այս րոպեիս դու դեռ ոչինչ չես տեսնում, չես լսում, բայց երբ կմեծանաս, կհասկանաս, թե ինչի՞ համար մեռավ հայրիկդ կռվի դաշտում, ինչի՞ համար էին պայքարում մեր ընկերները, նրանց հետ և քո հայրիկը։ Արդեն լսում եմ հաղթության ձայներ... շուտով կբացվի սովետական օրը... երբ դու կապրես լուսավոր տարիներում, հիշի՛ր, որ քո հայրը մեռավ հենց այդ օրերի համար։ Կարդա այս նամակը, բայց չտխրես—չէ՞ որ այդպես էր պատվիրել պատմությունը մեր սերնդին— մենք պիտի զոհվեինք լուսավոր ապագայի՝ կոմունիզմի համար...

Մնա՛ս բարով. ապրիր և աշխատիր նոր կյանքի համար»։

... Լևիկը նամակը կարդում է, վեր թռչում տեղից ու թաց աչքերով փարվում է մոր կրծքին։

— Մայրի՛կ,— ասում է նա դողդոջուն ձայնով,— ինչո՞ւ մինչև հիմա չես տվել ինձ այս նամակը։

— Այդպես էր պատվիրել հայրիկդ...

Լևիկը սթափվում է հանկարծ, հիշելով նամակի խոսքերը, թողնում է ինձ ու բացականչում.

— Չէ՛, ես չեմ տխրի երբեք, ես կշարունակեմ հայրիկի գործը, կկատարեմ նրա ասածը, չէ՛, ես չեմ տխրի...

Ասում է ու դուրս թռչում փողոց, գնում իր ընկերների մոտ։

Դուրսը ցնծագին տոնական աղմուկ է, լսվում է երաժշտություն... պատրաստվում է հանդիսավոր երթը։

Այսօր դրսի երթն էլ տասնհինգ տարեկան է, ինչպես Լևիկը...

1935

ԱՇԽԵՆԸ

Նոր ձյունը նստել էր գյուղի վրա և ծածկել նրա սովորական դեմքը։ Միապաղաղ, սպիտակ տարածության մեջ գորշ-դեղնավուն պատերն էին փոքրիկ խղճիների նման եզերում տները։ Գյուղի ծայրի շենքերի մեջ հպարտ ձգվել էր «նոր կյանք» կոլխոզի ընդարձակ գոմը։ Գոլորշիներից քրտնած լուսամուտների ապակիները փոքր-ինչ մթնեցնում էին ներսը, բայց չէին թաքցնում անասունների շարքերը, որոնք ուրախ զգացումներ էին ներշնչում այցելուներին։ Այդ զգացումը գալիս էր անասունների առողջ տեսքից ու նրանց շատությունից. թվում էր, թե այդ շարքերը ձգվում են անվերջ։

Գոմի բաժանմունքներից մեկում հաղթանդամ մարմնով կանգնած էր ցեղային կովը՝ Վարդիկը։ Աշխենը վերջացնելով իր մյուս գործերը, նորից եկել էր նրա մոտ ու մտահոգված դիտում էր ու մեղմ շոյում նրա վիզը, իսկ կովն էլ ստեպ-ստեպ մնչում էր ընդհատ, կարծես ցանալով մի բան ասել։

Աշխենն անհանգիստ սրտով նայում էր Վարդիկի ահագին փորին, մի քանի օրից հետո նա պիտի ծներ, բայց մինչև ծնելը որքա՞ն հոգսեր կպատճառեն... ահա այժմ նա ածել էր մսուրի մեջ ամենաբնտիր կերը, բայց Վարդիկը չէր ուտում. «Ի՞նչ է պատահել,— կասկածում էր Աշխենը,— չլինի՞ թե հիվանդ է... պետք է կանչել բժշկին...»

Սակայն քիչ անց կովն սկսում է ուտել և Աշխենը թեթևանում է իր կասկածներից. նրա սեն, խոհուն աչքերից վերանում է թախիծը. նա շարունակում է շոյել կովի վիզը, ականջ է դնում նրա որոճալուն և ընկնում է մտածմունքների մեջ։

Իսկապես նա մտածելու շատ բան ուներ... Վերջին ամիսներում նրա կյանքն այնպես էր հեղաշրջվել, որ ինքն իր աչքում անճանաչելի էր դարձել։ Որքա՞ն փոփոխություններ բերեց պատերազմը... դեպքերը գալիս էին անսպասելի, հուզող ցնցումներով։ Նախ նրա ամուսնուն՝ Հմայակին տարան բանակ, ու երբ նրան ճանապարհ գնելուց հետո Աշխենը վերադառնում էր տուն, զգաց, որ այսուհետև իր հոգսերը կրկնապատկվելու են։ Հրաժեշտի ժամանակ Հմայակն ավելի մտահոգված էր Աշխենի վիճակով։

— Բա ո՞նց պետք է անես... ընտանիքը...

— Դու անհոգ եղիր,— ասաց Աշխենը,— գնա պաշտպանիր հայրենիքը, ես աշխատանքից վախեցողը չեմ. սա էլ մեր՝ կանանց «ճակատն» է, մենք պիտի պաշտպանենք։

Բայց դրանից հետո առաջ եկավ մի նոր խնդիր. կոլխոզի անդամներից մի քանիսին տարել էին բանակ և կանայք պիտի փոխարինեին տղամարդկանց։ Մի օր էլ ժողովում Աշխենը լսեց իր անունը. նրան առաջարկում էին ֆերմայի վարիչի պաշտոնը։ Աշխենը շփոթվեց, ուզում էր մերժել, բացատրություն տալ, բայց չկարողացավ, նա միայն ասաց.

— Այդ պաշտոնն իմ ուժերից վեր է։

— Մենք գիտենք, որ դու կարող ես, դրա համար էլ քեզ ենք առաջարկում,— ասաց կոլխոզի նախագահը բարյացակամ ժպտով։

— Կարող է,— համոզված տոնով ասացին շրջս կողմից, և ձայների ճնշման տակ Աշխենն էլ չկարողացավ մերժել։

Ժողովից հետո Աշխենը գնում էր տուն մի խումբ կանանց հետ, բայց չէր մասնակցում նրանց խոսակցությանը. նրա մտքերը պտտվում էին իր նոր պաշտոնի, նոր պարտականությունների շուրջը։ Ինչպե՞ս նա գլուխ հանի գործի դժվարություններից... Ճիշտ է, նա աշխատում էր ֆերմայում, բայց որտե՞ղ ինքը, որտեղ նախկին վարիչը՝ Ռուբենը։

Նա հիշում էր, երբ Ռուբենը գնում էր բանակ, հետևից բոլորը միաբերան ասում էին,— չէ, ախպեր, Ռուբենի նման անասնապահ չկա մեր մեջ.... «Զարմանալի մարդիկ են,— մտածում էր Աշխենը,— այդպես ասում էին, բայց հետո գալիս, թե գու պիտի փոխարինես Ռուբենին...»

Այդպիսի խոհերով սկսեց Աշխենն իր աշխատանքը։ Սկզբի օրերին նա շատ էր անհանգստանում։ Ամեն ինչ թվում էր դժվար, ամեն թեթև վրիպում գործի մեջ խռովում էր նրա սիրտը։ Աշխենը լարեց իր եռանդը, ուշադիր աչքով անցավ բոլոր աշխատանքների միջով, օգտվեց շրջանային գյուղատնտեսի ցուցումներից, բայց և այնպես գոհ չէր իրենից. միշտ մտածում էր, թե դեռ շատ բաներ կան, որ ինքը չգիտե և դրանից կարող է վնաս հասնել, քանի որ միայն լավ հասկացողը կարող է նախատեսել վտանգը։ Նրան թվում էր, թե իր գործի մեջ կան գաղտնիքներ, որոնք հայտնի են լինում միայն փորձված աշխատողներին։

Ռուբենն, իհարկե, ուներ իր գաղտնիքները... Աշխենը լավ էր հիշում այն խոսքերը, որ նա ասաց վերջին հրաժեշտի ժամին. նա ձեռք մեկնեց ֆերմայի աշխատակիցներին, հետո մոտեցավ հորթերին, շոյեց, գուրգուրեց նրանց ու ասաց.

— Մնա՞ք բարով, սիրելի մատղաշներ, ես գնում եմ բանակ... ես շատ երազներ եմ տեսել ձեզ վրա, սրանից հետո ո՞վ է տեսնելու էդ երազները...

Ի՞նչ էր ուզում ասել Ռուբենը։ Այն ժամանակ Աշխենը չհասկացավ, բայց այժմ կարծում էր, որ այդ խոսքերի մեջ ինչ-որ կարևոր բան կար և ցավում էր, որ չհարցրեց այդ մասին։

Առանձնապես Աշխենին հոգս էր պատճառում ցեղային կովը՝ Վարդիկը, քանի որ նա շուտով պիտի ծներ։ Անցյալ օրը, կոլխոզի հովիվը, որն այժմ գոմում էր աշխատում, մոտենալով, նայեց կովին ու ասաց.

— Էս է հա՞, ժամանակը մոտեցել է, էսօր-էգուց կծնի...

Նա մի պահ լռեց, ապա ավելացրեց.

— Անցած տարի մեր կովերից մեկը ծնել էր ու հորթին ոտի տակ գցել...

Աշխենն ուրիշից էլ էր այդ բանը լսել, բայց այս անգամ ավելի հուզվեց, կարծես դեպքը վերաբերում էր Վարդիկին։

Ու նորից լարվեց նրա մտահոգությունն այդ կովի շուրջը։ Նորից նա վերհիշեց այն բոլորը, ինչ արել էր նրա համար, և հարց տվեց ինքն իրեն—արդյոք բավակա՞ն էր այդ... ուրիշ ի՞նչ կար անելու...

... Ահա այժմ էլ Աշխենը կանգնած էր Վարդիկի մոտ նույն խոհերով։ Արդեն իր աշխատանքի ժամերը վերջացել էին, տուն գնալու ժամանակն էր, բայց նա չէր շտապում և շարունակում էր

մտածել իր անելիքի մասին։ Աշխենը պատրաստ էր հանձն առնելու ամեն նեղություն, միայն թե արդարացներ ընկերների վստահությունը, պատերազմի այս մեծ, պատասխանատու օրերին...

Նա կարգի բերեց իր արտաքինը, փոխեց շորերը ու դանդաղ քայլերով գնաց տուն։

*

* *

Երեկոյան թեյից հետո Աշխենը պատրաստեց երեխաների անկողինները։ Տղան՝ վեց տարեկան Գարիկը, անասնապահական պատկերազարդ գիրքը թերթելուց հետո քնեց, իսկ աղջիկը՝ չորս տարեկան Սոնիկը, նստել էր մոր գոգում և ըստ երևույթին մտադիր չէր քնելու. նա շարունակ քմահաճորեն պահանջում էր. մայրիկից, որ զբաղեցնի իրեն, հեքիաթներ պատմի։ Նույնիսկ, երբ նրա աչքերը փակվում էին, նա համառությամբ հաղթահարում էր քունը և աշխատում արթուն մնալ։ Բայց վերջապես նա էլ քնեց մանկական խորը քնով։

Երեխաներին քնացնելուց հետո, Աշխենը սովորաբար զբաղվում էր ընտանեկան մանր-մունր գործերով։ Այս անգամ նա սկսեց կարից, ապա լվաց երեխաների շորերը, և վերջացնելուց հետո միայն ինքն էլ պառկեց քնելու։

Տանը նա ստեպ-ստեպ հիշում էր Վարդիկին, բայց այժմ անկողնում, ասես ազատվելով մյուս բոլոր մտածումներից, նա հոգնած ուղեղով սկսեց վերանայել իր այդ օրվա կարգադրությունները։ Ճիշտ է, Պետրոսը հանձն առավ հերթապահությունը, բայց այսօր նրան շատ աշխատեցրին, տանիքի ձյունը մաքրելու համար, կարո՞ղ է արդյոք նա անքուն հսկել կովին... Եվ հետո նա մի քիչ հին մարդ է, թեպետ հոժարվում է, կատարում է իր կարգադրությունները, բայց կարծես չի համոզվում... Մտքում երևի ասում է. առանց դրան էլ կարելի է։... Չէ, պետք է առավոտը վաղ գնալ, գործին հետևել...։ Այսպիսի մտածումներով նա աննկատելի քնի մեջ ընկավ։

Գիշերվա մեջ երազները պաշարեցին Աշխենին, բայց վերջինը խիստ տարօրինակ էր։ Նա տեսնում էր երազում, իբր կանաչ դաշտում է... շուրջը երիտասարդ ծաղիկներ են ու վճիտ առուներ, որոնց մեջ արտացոլվում է վարդագույն արշալույսը... Տավար ու ոչխար արածում են հյութալի, բուրավետ կանաչների մեջ... Ահա նրա մոտով անցնում են մի խումբ կովեր և գնում դեպի գյուղը...

Ինչո՞ւ են այսպես վազ գնում, կարմանում է Աշխենն ու ակամա ուշադրություն է դարձնում մի կովի վրա, որը շարունակ ետ է նայում և բառաչում։ Աշխենը հետևում է կովին։ Նրանք հասնում են գյուղ և ցրվում են փողոցներում, իսկ այն մեկը դեռ երևում է նրա աչքին ու դարձյալ ետ է նայում ու բառաչում։ Նա գնում է գյուղի ծայրը և կանգ է առնում կոլխոզի գոմի առաջ...

— Մի՞թե Վարդիկն է,— անցնում է Աշխենի մտքով. նա արագացնում է քայլերը, բայց մինչև նրա հասնելը կովն արդեն ներս է մտնում գոմը։ Աշխենը հետևում է նրան, անցնում է իրեն այնքան ծանոթ բաժանմունքը, տեսնում է Վարդիկին ու մնում շվարած... նրա ոտների մոտ կանգնած է մի նորածին հորթ...

— Այս ե՞րբ եղավ... ինչպե՞ս եղավ...— տագնապով հարց է տալիս ինքն իրեն Աշխենը և նայում է շորս կողմը, փնտրելով իր աշխատակիցներից որևէ մեկին, բայց ոչ ոքի չի հանդիպում։ Կովն անհանգիստ է, շարունակ ոտներով խփում է գետնին։ Աշխենի սիրտը տակնուվրա է լինում,— չէ՞ որ նա կարող է ոտների տակ ճխլել հորթին.. Նա ուզում է մոտենալ, օգնություն հասնել, բայց ինչ-որ ուժ արգելում է նրան։ Ահա կովը բարձրացնում է հետևի ոտքը և իջեցնում հենց հորթի վրա... Աշխենը սարսափած մի ճիչ է արձակում և... զարթնում է...

... Զարթնում է սրտի ուժգին բաբախումով։ Նրան տարօրինակ է թվում, որ գտնվում է տանը, իր երեխաների մոտ. չէ՞ որ նա գոմում էր, Վարդիկի մոտ և այն էլ ի՞նչ հանգամանքներում... Առանց երկար մտածելու, մի ակնթարթում նա վրան է ձգում շրջազգեստը, հագնում է վերարկուն և դուրս նետվում տանից։ Սառնամանիքը կծում է նրան, մութը դժվարացնում է ճանապարհը, ոտները մերթ ընկնում են կարծրացած ձյունի մեջ, մերթ դիպչում քարերին, բայց Աշխենը չի դադարեցնում իր թափը։ Հևհև նա հասնում է գոմին ու պինդ թրխկացնում դուռը բռունցքով, բայց պատասխան չի ստանում։ Վայրկյանները թվում են երկար ժամեր, նա լսում է իր արագ շնչառությունը, սրտի բաբախումները... Նորից բախում է դուռը, հետն էլ ձայն է տալիս անհամբեր տոնով։ Վերջապես Պետրոսը մոտենում է դռանը, քնկոտ ձայնով հարցնում է՝ ո՞վ է, և պատասխան ստանալով, բացում է դուռը, զարմանալով Աշխենի անժամանակ այցելությունից։

— Դու ե՞ս... էդ ո՞նց է, եկել ես,— նորից դիմում է Պետրոսը, բայց Աշխենն անցնում է առանց պատասխանելու և արագ քայլերով գնում է դեպի Վարդիկի բաժանմունքը։ Պետրոսը հետևում է նրան։

Աղոտ լույսի մեջ Աշխենը տեսնում է Վարդիկին ու կարծես չի հավատում աչքերին... Կովի հետևի ոտների մոտ նա տեսնում է մի մատղաշ հորթ... Վարդիկը ծնել է...

Կովը ջղայնորեն խփեց ոտքը գետնին և Աշխենը, կարծես ուշքի գալով իր զարմանքից, հանկարծ զգաց վտանգը, վրա թռավ, գրկեց հորթին և դուրս բերեց ցնծագին ուրախությամբ։ Նա տարավ դեպի հորթերի առանձին բաժանմունքը և մայրական գորովով սկսեց իր խնամքը։

Պետրոսը գնաց Աշխենի հետևից ճնշված սրտով։ Առաջին րոպեից, երբ նա տեսավ, որ կովը ծնել է, սաստիկ ամաչեց...

«Չէ՞ որ ես պիտի առաջինն իմանայի... սա կին տեղովը դիշերվա մեջ վեր է կացել, եկել, իսկ ե՞ս...»,— մտածում էր նա և ինքն իրեն կշտամբում։

Մինչև լույս Աշխենը եռանդով զբաղված էր հորթի և կովի շուրջը, մի կես ժամից հետո երևան եկավ տաք ջուրը, որի համար նախատեսված էր ամեն ինչ։ Վերջապես հորթին լվանալուց, մաքրելուց հետո Աշխենը համբուրեց նրա ճակատը, տպա վեր կացավ տեղից ու ասաց.

— Դե՛, ընկեր Պետրոս, ես գնում եմ, իսկ դու էլի կհետևես, կարելի է մի բան հարկավոր լինի...

Պետրոսը գլուխը կախեց։

— Ընկեր Աշխեն, ի՞նչ ասեմ... ես մեղավոր եմ... քնով եմ ընկել...

— Ես կարծում եմ, որ այս բոլորը տեսնելուց հետո դու ուրիշ կերպ կաշխատես,— ասաց Աշխենը, գոհ լինելով, որ նա ինքը խոստովանեց իր մեղքը,— քո սխալն այն է, որ ամեն ինչ հեշտացնում ես, համոզված չես կատարում գործը... մարդ որ համոզված աշխատի, նրան ո՞վ կհասնի...

— Բա ես էլ թույլ կտա՞մ էսպիսի բան... Բայց ընկեր Աշխեն, էդ ո՞նց իմացար, որ կովը ծնել է, եկար, վրա հասար. է.

— Եթե լավ աշխատես, էդ էլ կիմանաս,— ասաց Աշխենն ու դուրս եկավ գոմից, հիշելով Ռուբենի խոսքերը՝ «երաչներիս» մասին...

Նա զվարթ հայացքով դիմավորեց արշալույսի շքեղ հորիզոնը։ Պայծառ օրն ասես բացվում էր հազար դռներով ու բերում էր մի մեծ հաղթություն... Աշխենը քայլում էր ոգևորված. այժմ նա կա-

րող էր պարզերիս դուրս գալ իր ընկերների մոտ։ Թող այս աշխատանքն էլ մի նվեր լինի հայրենիքին,— ասում է նա ինքն իրեն,— թող սա էլ օգնի մեր հաղթությանը...

Ու թեթևացած սրտով գնում էր դեպի տուն։

1942

ՊՐՈՖԵՍՈՐԸ

Պրոֆեսորը նստած էր գրասեղանի մոտ, գլուխը թեքած ձեռագիր նյութերի վրա։ Նրա դեմքը բացառիկ էր իր շրջապատի մեջ. ալեխառն մորուքը, խիտ հոնքերն ու գոգավոր ակնոցի տակից նայող մտազբաղ աչքերը, պատկառելի և միաժամանակ խորհրդավոր տպավորություն էին անում այցելուի վրա։ Երբ Սամվելը ներս մտավ, պրոֆեսոր Մելյանն ամբողջովին ընկղմված էր իր մտքերի մեջ և չնկատեց նրա գալը։ Սամվելը մոտեցավ գրասեղանին ու ժպտաց պրոֆեսորի ցրվածության վրա. նա չէր նկատում իրեն, թեև մոտն էր կանգնած։

— Ողջույն ձեզ, հարգելի պրոֆեսոր,— ասաց նա մեղմ ձայնով, որպեսզի հանկարծակիի չբերի իր ուսուցչին։

— Ա՜, դո՞ւ ես, Սամվել,— ասաց պրոֆեսորը գլուխը բարձրացնելով և ցրված ձգելով նրա վրա,— նստի՛ր, տեսնենք ի՞նչ կա։

— Ահա բերել եմ ձեր հանձնած նյութերի վերլուծումը. բավականին հետաքրքիր բաներ են ստացվում...

— Շնորհակալ եմ, Սամվել, քո աշխատանքը կարճում է իմ որոնումները,— ասաց պրոֆեսորը, աչքի անցնելով վերլուծման թերթերը։

— Բայց պիտի խոստովանեմ, հարգելի պրոֆեսոր, որ ձեր հանձնարարած գործերը կատարելով, ես միշտ մնում եմ ծարավի, քանի որ ձեր հետազոտությունների վերջնական նպատակն ինձ համար դեռևս մշուշի մեջ է։

— Ա՜հ, սիրելիս,— ասաց պրոֆեսորը ժպտալով,— թե՛ դու, թե՛ մեր էմման շատ անհամբեր եք, ուզում եք հենց իսկույն իմանալ վերջնական նպատակը, բայց մոռանում եք, որ գիտական աշխատողը մեծ եռանդի հետ պիտի ունենա և մեծ համբերություն։ Եվ հետո, որքան հիշում եմ ես մոտավոր բացատրություն եմ տվել իմ գյուտի մասին։

— Կներեք, որ իմ հետաքրքրությունը դարձնում է ինձ անհամբեր, ձեր գրույցներից ես կռահում եմ միայն, որ այդ գյուտը լինելու է մի արտակարգ պարարտանյութ։

— Դա շատ հասարակ բացատրություն կլիներ իմ գյուտի մասին։ Իհարկե նա կփոխարինի շատ տեսակի պարարտանյութերի, բայց հարցի մեջ կան մի շարք նորություններ։ Բանն այն է, որ այդ նյութի մեջ ներգործում են նաև ճառագայթներ։ Իմ ստանալիք բաղադրությունը ես անվանել եմ «ակտիվին»։ Թեպետ նա դեռևս վերջնականապես չի լրացած իր մասերով, բայց իր հրաշալի հատկություններով համապատասխանում է իր անվան։ «Ակտիվինի» առկայությունը հողի մեջ՝ կբարձրացնի բերքը չտեսնված չափերով, նա կազնվացնի մեր բոլոր տեսակի հողերը, կամրացնի մարդկության բարօրության հիմքը, կբացի նրա առաջ փառավոր հեռանկարներ...

— Ես չափազանց ուրախ եմ, որ աշխատում եմ այսպիսի մեծ գործի համար,— ասաց Սամվելը,— թեև գյուտի ամբողջական պատկերը դեռ չի բացվել իմ առաջ...

— Այո՛, ընկեր Սամվել, չկա ավելի բարձր բան, քան մարդկության ծառայելը, բայց չպետք է շատ տարվել երևակայությամբ, — հարցի մեջ կան դժվարություններ. խնդիրներից մեկն այն է, թե ի՞նչ նյութերի ընկերակցությամբ պիտի միացնել հողի այսպիսի զորեղ գործոնները... Դրա մասին մի օր մանրամասն գիտական բացատրություն կտամ քեզ։

Դուռը բացվեց և հարևան սենյակից ներս մտավ պրոֆեսորի աղջիկը՝ Էմման։ Նա ընդհանուր բարև տվավ ու իր կապտավուն աչքերով չարաճճի հայացք ձգեց Սամվելի վրա.

— Ես չե՞մ խանգարում...

— Ո՛չ, սիրելի Էմմա,— ասաց պրոֆեսորը,— լավ է եկար, մի՛ բան պիտի ասեի քեզ, բայց մոռացա... հետո կհիշեմ... ի՞նչ կասես...

— Դրսից եմ գալիս, հիանալի եղանակ է, բայց դու, հայրիկ, տանից իսկի դուրս չես գալիս. չէ՞ որ բժիշկն ասել է... երեկ էլ նախաճաշիկը թողել էիր, իսկի չէիր մոտեցել...

— Հա, երեկ հետազոտման այնպիսի մոմենտներ էին, որ ամեն ինչ կարելի էր մոռանալ։

— Հայրիկ, Հայաստանից նամակ է եկել՝ Ադամյանից... հիշո՞ւմ ես այն ուսանողին, որ քեզ մոտ մի ամիս աշխատեց։

— Կարծես թե հիշում եմ... ի՞նչ է գրում։

— Գոում է, որ լավ են, եռանդով աշխատում են։ Խնդրում է ձեզանից խորհուրդներ իր աշխատանքի համար։

— Է՜հ, ժամանակ լիներ, գնայի Հայաստան, փոքր-ինչ շրջեի... Հայրենի բնությունն ուրիշ բան է... Այժմ ասա, էմմա, ի՞նչ արիր քո վերլուծումները։

— Արդեն պատրաստ է, շուտով կբերեմ։

— Շնորհակալ եմ երկուսիցդ էլ,— ասաց պրոֆեսորը,— ձեր երիտասարդ, թարմ աշակցությունն առանձնապես ոգևորում է ինձ։

— Հարգելի պրոֆեսոր, կարող եք վստահ լինել, որ իմ ջանքերը չեմ խնայի ձեր գյուտի համար, իսկ ընկեր էմմայի մասին, ինչ՜ որկե, խոսելն ավելորդ է...

Էմման նայեց Սամվելին մտերիմ ժպտով։ Նրանք երկուսով գնացին լաբորատորիա, վերցնելով պրոֆեսորի տված վերլուծման նոր նյութերը։ Պրոֆեսորը գորովալից դեմքով նայում էր զույգի հետևից. մտածելով, որ նրանց մեջ ինչ-որ մտերմական կապ կա...

* * *

Անմոռանալի, պատմական օր էր...

Առավոտյան պրոֆեսորի կաբինետի դուռը շրխկալեն բացվեց, և ներս ընկավ գիտական աշխատող, լաբորանտ Սավելևը։ Շտապելուց նրա պենսնեն վայր ընկավ։ Նա մոտեցավ պրոֆեսորին և ասաց հևիհև.

— Լսե՞լ եք, ֆաշիստական Գերմանիան հարձակվել է մեզ վրա...

— Ինչպե՞ս,— շշմած բացականչեց պրոֆեսորը ետ ընկնելով բաղկաթոռի վրա ու տարակուսանքով նայելով Սավելևին, կարծես դժվարանալով հավատալ նրա ասածին։ Մի քանի վայրկյան լռությունից հետո շարունակեց,— պատերազ՞մ... դա ապշեցուցիչ է այն բոլոր ջանքերից հետո, որ մեր երկիրը գործ է դրել խաղաղության համար... դա չտեսնված բարբարոսություն է...

Քիչ անց իրար հետևից եկան ինստիտուտի պրոֆեսորներից մի քանիսը։ Գալիս էին, հուզված խոսում բարձր ձայնով ու ցրվում։ Եկան Սամվելը և էմման։

Երբ պրոֆեսոր Մելյանը մնաց իր աղջկա հետ, նա այլևս չկարողացավ շարունակել իր աշխատանքն ու սկսեց քայլել սենյակում, հոգեկան ալեկոծման մեջ, ստեպ-ստեպ կանգ առնելով ու խոսելով.

— Պատերա՜զմ...— կրկնում էր նա, կարծես չանալով ընդգրկել նրա ամբողջ բովանդակությունը,— որքա՜ն երիտասարդ կյանքեր պիտի զոհվեն, որքան կուլտուրական աշխատանք պիտի կործանվի... ֆաշիզմի մահաբեր թույնը սպառնում է ոչնչացնել կուլտուրան, արմատախիլ անել ամենանվիրական ձգտումները... մեր երկրի հիացմունք պատճառող առաջընթաց շարժումը պիտի կանգ առնի՝ դիմադրելու համար այդ բիրտ, վայրենի հրոսակներին...

Պրոֆեսորը կանգ առավ էմմայի դիմաց ու նայում էր նրան՝ ասես նոր միայն նկատելով նրա ներկայությունը։

— Պատերա՜զմ... ահռելի ու երկարատև... էմմա, արդյոք սա չի՞ նշանակում, որ վարագույր է իջնելու մեր գիտական աշխատանքի վրա, որ մենք պիտի ամեն ինչ թողնենք և մեր ամբողջ ուժերը լարենք վայրագ ֆաշիզմի դեմ... արդյոք կհաջողվի՞ շարունակել իմ «ակտիվինի» հետազոտությունը... Ա՜խ «ակտիվին»... որքա՜ն դժվար կլինի քեզանից բաժանվելը...

Էմման վեր թռավ տեղից։

— Հայրիկ, ես կարծում եմ, որ դու խրախուսանքի չես, քո տարակուսանքը նրանից է, որ շատ ես սիրում գիտությունը, բայց չէ՞ որ այդ մեծ պայքարում ամեն մեկին վիճակված է իր դերը. գիտությունը կշարունակի իր մեծ գործը, և դու էլ կմնաս քո պատվավոր դերում։

Պրոֆեսորը կարծելով, որ իր դատողությունների հոսանքը դիմադրության է հանդիպում՝ զարմացած նայում է էմմային.

— Է՜հ, կապրենք, կտեսնենք, էմմա, թե ի՞նչ է բերում և ի՞նչ է պահանջում մեզանից այս ահեղ փոթորիկը...

*

* *

Մի քանի օր անցավ այսպիսի տատանումների ու թերի աշխատանքի մեջ, այնուհետև պրոֆեսորը մտավ իր սովորական հունը և շարունակում էր «ակտիվինի» հետազոտումները։ Բայց որքան էլ նա լարում էր իր ուժերը, մի ներքին ձայն կարծես միշտ հիշեցնում էր նրան, որ պատերազմ է, որ պիտի զբաղվի ռազմական գործին վերաբերող պրոբլեմներով։ Ու չնայած այն ջերմ սիրուն, որով նվիրված էր իր «ակտիվինի» գյուտին, նա հաճախ տարակուսանքի մեջ էր ընկնում։ Այդ ապրումների մասին նա չէր խոսում Սամվելի ու էմմայի հետ, բայց շատ չանցած առիթը

հարկադրեց նրան բացելու վարագույրը։ Մի օր, երբ Սամվելը եկավ հանձնելու իր հերթական վերլուծումը, նա ասաց.

— Հարգելի պրոֆեսոր, ձեզ պետք է հաղորդեմ մի անակնկալ լուր, ինձ կանչում են բանակ...

— Մի՞թե,— զարմացավ պրոֆեսորը,— ինձ թվում է, քեզ կտանեն ռազմա-քիմիական գործարան...

— Այո՛, ես էլ ենթադրում եմ, երեք օրից պիտի մեկնեմ։

Բոպեաչափ լռությունից հետո պրոֆեսորն ասաց խորհրդածելով.

— Հայրենիքի պաշտպանությունը, Սամվել, ամենաբարձր գործն է, որ կարող է վիճակվել մարդուն, բայց քեզ փոխարինելու հարցը մտահոգություն կպատճառի ինձ...

— Ոչի՛նչ, կարծում եմ ինձ փոխարինող կգտնվի, Էմման էլ կշարունակի իր աշխատանքը։

— Բայց հարցի մի ուրիշ կողմ էլ կա, որի մասին ես չեմ խոսել քեզ հետ... քո գնալը նորից հրահրում է ինձ դեպի այն ձգտումը, որ շարժվում է միշտ, պատերազմի առաջին օրից... Բանն այն է, Սամվել, պիտի խոստովանեմ, որ այս պատմական օրերում դժվար է նստել հանգիստ և զբաղվել գիտական հետազոտություններով. կարծես մագնիսային թրթիռներ եմ զգում, կամ թե մեջս խոսում է մի երկրորդ մարդ և միշտ հիշեցնում է, թե պետք է արձագանքել պատերազմին, զբաղվել նրա հարուցած պրոբլեմներով... ցավում եմ, որ իմ կռվելու տարիներն անցել են, թե չէ կուզեի՞ քեզ հետ գնալ ռազմաճակատ...

— Բայց չէ՞ որ դուք էլ պատվավոր գործ ունեք կատարելու այստեղ՝ թիկունքում, դուք մոռանում եք, որ ձեր գյուտը բոլոր ժամանակների համար է և գիտության հաղթանակներից մեկն է լինելու։

— Այո՛, ճիշտ է, գիտությունը բոլոր ժամանակների համար է։ Նա ուղեկցում է հումանիզմին, ընկերական կյանքի ամենաբարձր իդեալներին։ Բայց այդ լուսավոր շարժման դեմ է գալիս ֆաշիստական սև ռեակցիան իր ստրկական շղթաներով... Ահա այսպիսի ահեղ ժամին ո՞րն է գիտության անելիքը, արդյոք այն չէ՞, որ պիտի պայքարի այդ մահաբեր շունչը վերացնելու համար, պետք է օգնի ոչնչացնելու ֆաշիզմի հորդաներին, որպես մարդկության ամենաժանտ վնասատուներին... ֆաշիզմը ժանտախտ է, կատաղած շների ոհմակ...

— Ընդունում եմ այդ բոլորը,— ասաց Սամվելը,— բայց և այնպես կարծում եմ, որ ձեր գյուտը՝ նպաստելով մարդկության երջանկության, հենց դրանով էլ պայքարում է «վնասատուների» դեմ, այնպես որ ինչ էլ լինի՝ այդ աշխատանքը չպետք է թողնվի...

— Եթե թողնեմ «ակտիվինը», դա, իհարկե, կլինի միայն ժամանակավորապես...

— Շատ ուրախ եմ, որ այդպես է ձեր որոշումը։ Ես պետք է խոստովանեմ, այնպես եմ ընտելացել ձեր աշխատանքին, որ դժվարությամբ կարող եմ պատկերացնել ձեզ առանց «ակտիվինի»։ Այդ հույսով էլ ավելի մեծ եռանդով համակված կգնամ բանակ։ Այժմ թույլ տվեք ձեզ հրաժեշտ տալ և մաղթել մեծ նվաճումներ գիտության մեջ...

— Գնա՛ս բարով,— ասաց պրոֆեսորը վեր կենալով տեղից և համբուրվելով Սամվելի հետ,— գնա՛, որտեղ էլ լինես՝ պայքարիր մեր հաղթանակի համար...

* * *

Սամվելի գնալուց հետո տխրություն ստեպ-ստեպ համակում էր պրոֆեսորին։ Մի կողմից նա մտածում էր, որ Սամվելը ապագա խոստացող գիտական աշխատող է, բայց նրան տարան ճակատ... ո՞վ գիտե, ի՞նչ կլինի... մյուս կողմից էլ նա նկատել էր, որ Էմման սիրահարված է նրան, և քանի որ ենթադրում էր, թե սերը փոխադարձ է, ուրեմն հավանական է, որ խոսք են տվել ամուսնանալու, իսկ ա՞յժմ... չքանում է այդ երիտասարդ սրտերի նրջանկությունը... Ի՞նչ է ուրեմն Էմմայի դրությունը, երևի դժվար ապրումների մեջ է, պետք է խոսել հետը, սիրտ տալ...

Ամեն անգամ, երբ Էմման գալիս էր մոտը, պրոֆեսորը միշտ նայում էր նրա դեմքին, ուզենալով գուշակել նրա տրամադրությունը, բայց հետաձգում էր բացատրությունը։ Այդ օրը, երբ Էմման եկավ, պրոֆեսորը բռնեց նրա ձեռքից և ժպտաց հայրական զգվանքով։

— Էմմա, մեր թիվը պակասեց, Սամվելը գնաց, բայց մենք երկուսով մի կերպ կշարունակենք գործը... Նստի՛ր մոտս, ես կարիք ունեմ քեզ հետ զրուցելու...

Էմման նստեց հոր կողքին։ Պրոֆեսորը բոպեաչափ լուռ էր. դժվարանալով շոշափել «փափուկ հարցը»։

— Էմմա,— ասաց նա,— ես նկատում եմ, որ դու տխրում ես, գուցե դրա պատճառը Սամվելի գնա՞լն է...

Էմման թեքեց իր գեղեցիկ գլուխը և կարմրեց, շփոթվեց անսպասելի հարցից։

— Ասա, աղջի՛կս,— շարունակեց պրոֆեսորը,— իհարկե դժվար է, զգացումների հարց է, բայց դու չպետք է քաշվես հորից ըդ... արդյոք ձեր մեջ փոխադարձ համակրանք կա՞...

Էմման բարձրացրեց գլուխը, բայց ամաչելուց չնայեց հոր դեմքին։

— Հայրիկ, քեզանից չեմ թաքցնի,— ասաց նա ցածր ձայնով, — մենք միմյանց սիրում ենք, բայց ես տխրում եմ ոչ այն պատճառով, որ բաժանվել եմ Սամվելից... կա մի ուրիշ հանգամանք... պետք է ասեմ, որ որոշել եմ գնալ ռազմաճակատ...

Պրոֆեսորը նայեց զարմացած, կարծես սխալ էր լսել Էմմայի խոսքերը։

— Այո՛, ես այդպես եմ որոշել,— շարունակեց Էմման,— բայց երբ մտածում եմ, որ քեզ պիտի թողնեմ մենակ, մտածում եմ, թե ո՞վ կարող է տալ քեզ այն խնամքը, որ ես ստանձնել եմ մայրիկի մահվանից հետո, ես տխրում եմ, մանավանդ այժմ՝ քո այդ նշանակալից հետազոտումների ժամանակ...

— Էմմա, ճիշտն ասած, մեղանչել եմ քո վերաբերմամբ, ենթադրելով, որ քո տխրությունն անձնական զգացմունքներից է... ուրախ եմ, որ սխալվել եմ և գովում եմ քո որոշումը։ Իսկ իմ մասին մի մտահոգվիր։

— Ես չեմ կարող հանգիստ սրտով որոշել իմ գնալու ժամկետը, քանի որ միշտ իմ աչքի առաջ է քո դրությունը։

— Ոչինչ, Էմմա, դա էլ դժվար չի կարգավորել, անշուշտ ես կգտնեմ գիտական աշխատողներ, իսկ ինչ վերաբերում է իմ տնտեսությանը, մի բան կանենք... և հետո ես էլ կսովորեմ ավելի ուշադիր լինել և կարծում եմ, հաջողություն կունենամ...

— Մի հարց էլ կա, հայրիկ... վերջերս նկատում եմ, որ դու զբաղվում ես ուրիշ հարցերով և կարծես աչքաթող ես արել «ակտիվինի» գյուտը։

— Աղջիկս, դու ինձ զինաթափ ես անում. ճիշտ է, վերջերս ես աշխատում եմ մի ուրիշ պրոբլեմի վրա, իսկ «ակտիվինին» հատկացնում եմ միայն ժամանակիս մնացորդը...

— Դա ինձ այնպես տխրեցնում է, հայրիկ, թվում է, թե գործանվում է մի գեղեցիկ, հոյակապ շենք...

— Էմմա, ես գիտեի քո վերաբերմունքը և այդ պատճառով էլ չեի հայտնում քեզ, բայց այդ եզրակացությունը շտապողական է։

— Ես կուզեի, որ դու հանգիստ սրտով շարունակես քո աշխատանքը։

— Լավ ես ասում, բայց մի՞թե կարելի է մեր օրերին հանգիստ լինել, երբ ամեն կողմից անհանգիստ ձայներ են գալիս, կանչում են դեպի այսօրվա ռազմական պրոբլեմները...

— Գիտեմ, հայրիկ, դա առաջանում է քո բնավորությունից. քեզ միշտ այնպես է թվում, թե բավականաչափ ակտիվ չես, բայց դա իհարկե միայն թվում է, դու մոռանում ես քո գյուտը, որ եթե ավարտվի, կլինի գիտության փառավոր նվաճումներից մեկը։ Այդպիսի աշխատանքի հետաձգելը ներելի չէ։

— Բայց և այնպես...— ասաց պրոֆեսորը, սակայն Էմման նրա խոսքը կտրեց.

— Չէ, հայրիկ, ես չեմ թողնի, որ առարկես, գնանք նախաճաշելու...

Էմման թեը տվեց իր հորը։ Պրոֆեսորը գնում էր ու մտածում Էմմայի խոսքերի վրա. «Կործանում է մի հոյակապ շենք... Պատերազմն սպառնում է գիտությանը... Սամվելը գնաց, գնում է և Էմման, շատ չանցած ես կմնամ միայնակ... պատերազմը կարող է ոչնչացնել այդ մատաղ սրտերը խրենց սիրո հետ... Բայց այդ բոլորի տեղ աճում է հայրենիքի սերը և պաշտպանությունը. դրա համար պիտի զոհվի ամեն ինչ...

*

* *

Պրոֆեսոր Մելյանի մեջ նկատվում էր փոփոխություն։ Նա դարձյալ քրտնաջան աշխատանքի մեջ էր, բայց առաջվա նման չէր մնում փակված իր կաբինետում, այլ հաճախ լինում էր ժողովներում, դասախոսություններ էր կարդում բանվորական ռայոններում։ Այնպես էր թվում նրան, կարծես մեկը շարունակ հորդորում էր, ոգևորում, շտապեցնում։

Նրա հիմնական աշխատանքն այժմ կենտրոնացած էր մի ուրիշ քիմիական գյուտի վրա, որը ռազմական նշանակություն ուներ և վերաբերում էր ականների լիցքի նոր բաղադրության, որի շնորհիվ դրանց պայթուցիկ ուժը խիստ բարձրանում էր։ Նա երբեմն

խորհրդակցում էր մի ինժեների հետ իր նոր գյուտին վերաբերող խնդիրների շուրջը։ Սակայն այս բոլորի մասին նա խուսափում էր պատմել էմմային, ուզենալով «սյուրպրիզ» անել այն օրը, երբ վերջնականապես կընդունվի ու կիրագործվի իր գյուտը։

Պրոֆեսորի նոր, ռազմական գյուտը երկար չմնաց անորոշության մեջ։ Մի քանի փորձերից հետո նա հավանության արժանացավ Պաշտպանության ժողկոմատի կողմից և ուղարկվեց գործարան։ Նա արդեն ուզում էր հայտնել էմմային, բայց անակնկալ կերպով վերջինս կանխեց պրոֆեսորին։ Մի օր նա ուրախությամբ բռնկված ներս մտավ հոր կաբինետը։

— Հայրիկ, Սամվելից նամակ է ստացվել,— ասաց նա կարմրելով և աչքերի առանձին փայլով։

— Ի՞նչ է գրում, մի կարդա տեսնենք,— ասաց պրոֆեսորը, վարակվելով ուրախությամբ։

— Ա՜յ, ինչ է գրում... նախ՝ գործարանում է աշխատում, բայց թե ո՞րտեղ՝ հայտնի չէ... հետո ասում է լավ եմ, առողջ եմ...

— Լա՜վ է,— արձագանքեց պրոֆեսորը։

— Իսկ հետո... չեմ ասի...

— Դա գաղտնի՞ք է։

— Այո՛, բայց քո գաղտնիքն է, հայրիկ։

— Ինչպե՞ս։

— Սամվելը գրում է. «Ես ծանոթացա հարգելի պրոֆեսորի նոր գյուտին և հիացա ուրիշների հետ միասին»...

— Ա՜յ, քեզ անսպասելի բան...

— Ուրեմն, հայրիկ, քո նոր գյուտը մեծ ուշադրության է արժանացել... այժմ ուրախացիր լիովին և այլևս չթաքցնես քո էմմայից...

Պրոֆեսորը ծիծաղեց։

— Լավ բռնեցիր ինձ, էմմա, ես ուզում էի քեզ սյուրպրիզ անել. բայց ինչպես ասում են՝ շաբաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը։

Էմման մոտեցավ, գրկեց հորը և համբուրեց, ապա ասաց խանդավառ.

— Շնորհավորում եմ, հայրիկ, և միաժամանակ հայտնում եմ մի ուրիշ նոր լուր, ես շուտով մեկնելու եմ ռազմաճակատ... քո մասին հոգացողներ եմ գտել...

— Ես էլ պիտի մեկնեմ ճակատ՝ անձամբ դիտելու իմ գյուտի

գործադրությունը։ Ուրախացի՛ր, էմմա, պիտի այցելեմ և ռազմական գործարանը, հավանական է, որ տեսնեմ Սամվելին...

— Ուրեմն միասի՞ն ենք գնում...

— Այո՛, սիրելիս, գնում ենք...

— Բայց, հայրիկ, մի՞թե դու թողնելու ես քո «ակտիվինի» հետազոտությունները։

— Ո՛չ, վերադառնալուց հետո ամբողջովին կզբաղվեմ նրանով։

— Գնո՜ւմ ենք, գնում ենք,— ասում էր էմման ոգևորված,— այժմ պետք է ճամփի պատրաստություն տեսնել։— Ու արագ դուրս գնաց։

... Երեք օրից պրոֆեսոր Մելյանը և իր աղջիկը մեկնեցին ռազմաճակատ։

1942

ՄԱՅՐԸ

«Շավարշից նամակ էր եկել»,— լուրն ընկավ տունը և ցնծությամբ համակեց բոլորին... Դեռ հեռվից նկատելով նամակատար Գալուստին, Շավարշի փոքր եղբայր Կարենը վազելով գնաց, ձեռքից առավ նամակն ու նույն թափով ետ դարձավ։ Նա հևալով կարդաց մոր մոտ, բայց վերջինս չբավարարվեց դրանով, հուզումից դողդողացող ձեռքով տվավ կարդալու իր փոքր աղջկան՝ Հռիփսիկին։ Հետո դրսից եկավ հայրը, վերցրեց նամակն ու երեք անգամ կարդաց, ասես թաքնված մի բան էր փնտրում մեջը։ Այնուհետև ազգականներից, հարևաններից ով գալիս էր, նրանց մոտ էլ նորից կարդում էին, այնպես, որ շատ չանցած տնեցիք անգիր կարող էին ասել նամակը։

Շավարշը, տան մեծ տղան, ռազմաճակատում էր։ Նրանից վաղուց տեղեկություն չունեին։ Նամակը բավականին ուշացած էր և կարճ, բայց նրա ամեն մի բառը զանազան ենթադրություններ առիթ էր տալիս, այնպես որ մի երեսանոց նամակը հետզհետե լայնանում էր, տնեցիների մտքում ասես վերածվում էր մի ամբողջ գրքի։

— Սիրելի ծնողներ, սիրելի հարազատներ,— գրում էր Շավարշը,— վաղուց է ձեզանից լուր չունեմ, դուք էլ ինձանից. Դրա պատճառն այն էր, որ ես մի քանի անգամ տեղափոխվել եմ զանազան շրջաններ։ Մենք շարունակ կռվի մեջ էինք, ժամանակ չկար նամակ գրելու։ Ուրախացեք, սիրելիներս, մենք հաղթում

ենք, ջախջախում, փախցնում մեր երկրից զարշելի հիտլերականներին։ Դուք էլ ուրախացեք ինձ հետ, ես շքանշանի եմ արժանացել։ Բարևներ և համբույրներ բոլորիդ։

Առաջին օրը իրար հետևից եկան հարևաններն ու ազգականները, շնորհավորեցին, ավելի ուրախացնելով մորը։ Իսկ դուրսը, կոլխոզի գրասենյակում, շնորհավորանքը հասնում էր Շավարշի Հորը։

Երեկոյան դեմ մայրն սկսեց ընթրիքի պատրաստություն տեսնել։ Բայց այս անգամ նա մի արտակարգ եռանդով ու խնամքով էր պատրաստում ամեն ինչ, չէ՞ որ Շավարշի օրն էր, նրա «տոնն» էր... Տարօրինակ երազանքի մեջ էր ընկել. շարունակ թվում էր նրան, թե իր սիրելի որդին՝ Շավարշը, եկել է ճակատից և նրա համար է պատրաստում այս ընթրիքը, հենց այդ պատճառով էլ ընտրել է նրա սիրած կերակուրները։

Երեկոյան ընթրիքի նստեցին հայրը, երկու քույրերը, որոնցից մեծն արդեն ամուսնացել էր, Շավարշի եղբայրն ու հորաքրոջ տղան՝ Հրանտը, որ զբաղված լինելու պատճառով ուշ էր եկել։

Մայրը մի առանձին խնամք էր տարել նաև սեղանի վրա. հանել էր ամենալավ, գունավոր սփռոցը, աչքի զարնող փայլով մաքրել ամանները, բաժակները, դանակներն ու պատառաքաղները։ Բայց կար այդ բոլորից դուրս մի տարօրինակ բան, որը զարմացնելով սեղանակիցներին՝ խորը ժպիտ էր բերում նրանց դեմքերին։ Երբ Շավարշի փոքր եղբայրը, տասնհինգ տարեկան Կարենը ուզեց նստել աթոռին, հոր դիմաց, մայրն իսկույն մոտեցավ նրան ու ասաց.

— Այս աթոռը Շավարշի համար է, դու ուրիշ տեղ նստիր։

Բոլորը նայեցին մորն ուրախ հուզումով, ասես ամեն մեկը մտածում էր ինքն իրեն. «Ի՞նչ լավ է, Շավարշի համար առանձին աթոռ է դրել...»։

Այդ աթոռի դիմաց սեղանի վրա մայրը դրել էր ափսեն, բաժակը, դանակն ու պատառաքաղը։ Այժմ նա ցած բերեց պատից Շավարշի նկարը և կանգնեցրեց ափսեի դիմաց, հենելով շշի վրա։

Մատուցելուց հետո մայրն ինքն էլ նստեց։ Հայրը լցրեց բաժակը կարմիր գինով և բարձրացնելով, դիմեց հարազատներին.

— Սիրելի Մարգարիտ, սիրելի զավակներ, այսօր մեր թանկագին Շավարշի օրն է, խմենք նրա ազիզ կենացը. հեռվից շնորհավորենք նրան իր ստացած շքանշանի համար։ Ցանկանք

նրան արիություն և հաղթություն, ցանկանք, որ պատերազմից հետո ուրախությամբ հանդիպենք նրան...

Բոլորը բարձրացրին բաժակները, չխկացրին հոր հետ, բայց նկատելով, որ մայրն արդեն լցրել է նաև Շավարշի բաժակը, դրան էլ չխկացրին ժպտալով։ Մայրն ինքն էլ չխկացրեց ու մոտեցնելով շրթունքներին, մի քանի կաթիլ բերանն առավ։

Գինին աշխուժացրեց սեղանը. խոսում էին Շավարշի մասին, նրա կյանքի դեպքերից, սովորություններից։

— Ի՞նչ զարմանալի աշխատող էր մեր Շավարշը,— ասաց հայրը,— մեր կոլխոզում նրա հատը հազիվ երեք մարդ գտնես։

— Բա նրան սովորե՞լը,— վրա բերեց մայրը,— ես նրա ճակատին մատաղ, ուսուցիչը նրա անունով էր երդվում։

Կենացներն անցան տնեցիներից ազգականներին, գյուղի առաջավորներին։ Մեջընդմեջ խոսում էին պատերազմից։ Մինչ նրանք զբաղված էին իրենց զրույցով՝ մայրն ամբողջովին կլանվել էր Շավարշով։ Նա մի երկու անգամ վերցրեց նրա պատկերը, նայում էր ու ժպտում։

— Տեսնես ո՞նց է փոխվել,— ասաց նա ձայնով,— ապա շարունակում էր խոսել մտքում։ Բոպեներով նա ընկնում էր պատրանքի մեջ, երևակայում, թե Շավարշն իր մոտ է, հենց այստեղ նստած է սեղանին և մասնակցում ընթրիքին...

Նա սթափվեց, երբ խոսակցությունը դարձյալ անցավ Շավարշին։ Հրանտը նորից առաջարկեց նրա կենացը և ոգևորված խոսեց կարմիր բանակի հերոսների մասին։ Բաժակները չխկացրին Շավարշի բաժակին ու մոր սիրտը թնդաց ուրախությունից։ Նա վեր կացավ տեղից, մեջ բերավ քաղցրեղենը, մրգերը։ Երբ դա էլ վերջացավ, հայրը նորից ձեռքն առավ բաժակը։

— Է՛յ, ապրեք բոլորդ. շեն կենա մեր սովետական օջախը, ամուր մնան մեր քաջ զավակները, միշտ հաղթունակ լինեն նրանց բազուկները։

...Մայրը հավաքում էր սեղանը՝ տարված մտքերով։ Շավարշի նամակն իր ծոցում ասես տաքացնում էր նրան, սիրտը լցնում ուրախ հույսերով։ Նա հավաքեց սեղանը, բայց թողեց Շավարշի տեղը նրա պատկերը, ափսեն և գինով լիքը բաժակը...

Երբ ընթրիքը վերջացավ, Հրանտը գնաց իրենց տուն։ Հայրն ու փոքրերը շուտ քնեցին, իսկ մայրն ու մեծ աղջիկը՝ Նվարդը,

իրար մոտ պառկած, միաժամանակ փսփսալով խոսում էին, ծրագրելով, թե ինչ պիտի ուղարկեն Շավարշին։

Վերջապես Նվարդն էլ քնեց, իսկ մոր աչքը չէր կպչում։ Կիսարթուն մտքով նա շարունակ մտածում էր իր Շավարշի մասին։ Նա չէր հիշում, թե ինչպե՞ս ուշ գիշերին քունը տարավ և հանկարծ երազում տեսավ Շավարշին... Նա տուն էր մտնում ձեռքերը պարզած, գալիս էր իրեն գրկելու...

— Վա՜յ որդի ջան, դու ե՞ս,— ճչում է մայրը ու ընկնում նրա գիրկը։

Մոր ձայնից բոլորը զարթնեցին։

— Ի՞նչ եղավ, մայրիկ,— վախեցած հարցրեց Նվարդը, վեր թռչելով տեղից։

Մայրը նստած էր անկողնի վրա և հևիհև շնչում էր։

— Էս ի՞նչ էր... երազով ընկա,— ասաց նա,— տեսա Շավարշին... եկել էր առաջս կանգնել...

— Ի՞նչ է պատահել,— լսվեց հոր ձայնը։

— Ոչինչ, ոչինչ,— հանգստացրեց Նվարդը, ապա վեր կացավ, ջուր բերեց, խմացրեց մորը։

— Ի՞նչ քաղցր երազ էր,— ասաց մայրը,— Շավարշ ջան, մի ուրախ սրտով քո տեսնելուն արժանանամ...

Նորից տիրեց լռությունը։ Բոլորը քնեցին, բայց մայրը մնաց արթուն, տարված իր չքնաղ երազով։ Նա երևակայում էր. ահա վերջանում է պատերազմը, Շավարշը վերադառնում է տուն՝ շքանշանները կրծքին... Նա մեծ քաջություններ է արել... Ամբողջ գյուղը հպարտանում է նրանով... Շավարշը պատմում է կռիվներից... Մայրը լսում է, հիանում է ու ինքն էլ հպարտանում... Ա՜խ, նա կուզեր անվերջ լսել իր անձնվեր հերոս, հայրենասեր որդուն...

1943

ՀՈՒՇԵՐԻ ԿԱՂԻԿՆԵՐԸ

Հասնելով հայրենի փոքրիկ քաղաքը, նա իջավ ավտոյից իրենց տան առաջ և մտավ գավիթը։ Այստեղ ամեն ինչ առաջվան խաղաղ վիճակում էր. հավերը քչուքում էին թթենու տակ, իսկ պատշգամբի վրա, որը մի քանի աստիճան գետնից բարձր էր, կատուն խաղում էր իր ձագերի հետ։

Պատշգամբից նա աչք ածեց ծայրի փոքրիկ խոհանոցին, այն-

տեղ էլ մարդ չկար, ապա մտավ միջանցքն ու սենյակի դուռը զգուշությամբ բանալով, տեսավ իր մորը. այդ րոպեին նա թախտին նստած՝ բրինձ էր ընտրում, աչքերին ծուռ դրած հին ակնոցը։

— Մայրի՛կ,— կանչեց նա մեղմ ձայնով։

Մայրը վեր թռավ, թափելով ձեռքի բրինձը ու մոտ վազեց։

— Վա՜յ, Աշոտիկ ջան, դու ե՞ս— բացականչեց նա ու վրա ընկավ, գրկեց, համբույրներ տվավ, թրջելով նրա դեմքը արցունքներով։

Նկատելով, որ մայրը ցնցող ուրախությունից նվաղում է՝ Աշոտը գրկած տարավ նրան դեպի թախտը ու նստեցրեց։ Բայց մայրը չէր պոկվում կրծքից։ Վերջապես նա ետ քաշվեց ծանր շնչով ու շվարած նայում էր, չհավատալով աչքերին, համարելով այս երևույթը այն երազներից մեկը, որ նա հաճախ տեսնում էր պատերազմի տարիներին։ Նա շոշափում էր տղայի ձեռքը, կարծես ինքն իրեն ստուգելու համար։

Նա նորից գրկեց ու համբուրեց որդուն։

— Էդ ի՞նչ մեծացել ես, Աշոտիկ ջան, ինչքա՞ն ես փոխվել... Մի ասա, ո՞նց ես։

— Լավ եմ, մայրիկ, ինքդ էլ հո տեսնում ես։

— Բա մենք լուր ստացանք, թե վիրավորվել ես...

— Հա՜, ճիշտ է... դե հիվանդանոցում պառկեցի,— բուժեցին։

— Բոլորովին անցե՞լ է,— կասկածելով հարցրեց մայրը։

— Բոլորովին,— հանգստացրեց Աշոտը, թեպետ ոտքի սպիների տակ դեռ «մնացորդներ» կային։

Մայրը ուրախացած՝ պարծանքով դիտում էր տղայի լայն կուրծքը, զինվորական առողջ կեցվածքը, զգում էր, որ նա մեծացել է, ամրացել, իսկական տղամարդ է դարձել։

— Էդ քանի՞ շքանշան ունես, անուշիկ, բա ինչի՞ չէիր գրում դրանց մասին։

— Ժամանակ չկար, մայրիկ։

— Ապրես, որդիս, դու մեր երեսը պարզ արիր, սրանից դենը բաց ճակատով կնստեմ մայրերի մեջ, հայրենիքի պաշտպան, հերոս տղա ունեմ։

Նա շոշափում էր շքանշանները, իսկ Աշոտը բացատրում, թե դրանցից ո՞րը ինչ կռվումն է ստացել։ Մեկի վրա նա կանգ առավ ավելի մանրամասն։

— Էդ կռվում, մայրիկ, մենք հազիվ հիսուն հոգով դիմադրում

էինք ֆաշիստական մի գնդի։ Երեք օր, երեք գիշեր առանց մի բոպե դադարելու կռվում էինք ու պաշտպանեցինք դիրքերը։

— Քոռանամ ես, որդի... ի՞նչ դրության մեջ ես եղել, իսկ էդ ժամանակ ո՞վ գիտե, ես ի՞նչ էի անում էստեղ։

Տեսնելով, որ մոր աչքից արցունքներ են թափվում, Աշոտը փոխեց խոսքը։

— Մայրիկ, մի չասացիր, մերոնք ո՞նց են։

— Լավ են, բալիկ, դե մեր փեսի պատերազմ գնալուց հետո Վարսենիկը մնաց երկու երեխայով։ Ես օգնում էի, բայց էլի կասեմ, եթե Գոհարիկը չլիներ, մեր բանը շատ կդժվարանար։

— Գոհարի՞կը,— անհամբեր հետաքրքրությամբ հարցրեց Աշոտը,— ինչպե՞ս է նա հիմա։

— Ծաղկում է, Աշոտիկ ջան, մեծացել է, գեղեցկացել...

Մոր խոսքերը հուզիչ ղողանջում էին Աշոտի մեջ։

— Ուրի՞շ... ի՞նչ է անում Գոհարիկը։

— Աշխատում է հիվանդանոցում. էն բժիշկը... ազգականը, մոռացել եմ... նա ընդունեց, լավ տղա է։

Մայրը չէր զգում, թե ինչ հուզում էր առաջացնում տղայի մեջ իր ասածը ու շարունակում էր.

— Ոսկի աղջիկ է Գոհարիկը, ազատ ժամերին գալիս էր Վարսենիկենց տուն, երխաներին նայում, փոխարինում մորը, մի խոսքով՝ ոնց ասում են, տան հրեշտակն էր...

Աշոտը կուզեր էլի հարցեր տալ, բայց մտածում էր, որ քաշվելուց չի կարող հարցնել այն, ինչ իրեն հետաքրքրում էր։

Ասես բոպեական լռությունից սթափված, մայրը հանկարծ վեր կացավ տեղից։

— Անուշ տղա ջան, ինձ որ թողնեն, տարով կնստեմ մոտդ, որ քեզ նայեմ ու ձենդ լսեմ։ Ուշքս վրես չի, էլ չեմ մտածում, թե էս տղեն ճամփից եկած է, քաղցած կլինի, մի բան պատրաստեմ։

— Մայրիկ, մի անհանգստանա, ես քաղցած չեմ։

— Ինձ համար նեղություն չի, բալաս, ուրախություն է։

Ու նա փութկոտ շարժումներով, ասես ջահելացած՝ հավաքեց թափված բրինձը, վերցրեց հատակին ընկած ակնոցը ու գնաց խոհանոց։

Մնալով միայնակ, Աշոտը վեր կացավ տեղից ու աչք ածեց չորս կողմը։ Սենյակում ամեն ինչ առաջվա դրության մեջ էր. նույն պահարանը, նույն գավառական հին հայելին, որից նա դժգոհում էր աշակերտական տարիներին, ենթադրելով, թե դեմքը փոքր-ինչ աղավաղված է ցույց տալիս։ Իր գրադարակի գրքերը նույն դասավորության մեջ էին, ինչպես չորս տարի առաջ...

Ու ընտանեկան մթնոլորտը անտես թելերով բերում է նրա մեջ մոտիկ անցյալի հուշերը... Նրա աչքին է ընկնում գրադարակի շարքում մի վեպ, որը Գոհարիկի հետ երկուսով կարդում էին ու ապա վիճում հերոսի մասին... Իր առաջ պատկերանում էր երազուն աչքերով մի ազջիկ, որը կարծես մոգական զորությամբ քաշում էր իր զգացումները... Ահա պատուհանից երևում են պարտեզի ծառերը, որոնք այնքա՜ն բան կարող են պատմել պատանեկան մի սիրո մասին։

Բայց այժմ անցել է չորս տարի... Շատ բան կարող էր փոխվել, սիրտն իր ազատ ճամփան ունի... Ո՞վ գիտե, գուցե մի ուրիշն է նրան գրավում...

Նա չէր ուզում մասնակից անել մորը իրեն տանջող մտքերին։ Վճռել էր անձամբ իմանալ Գոհարիկից իր «դատավճիռը», իսկ այնուհետև... կամ մի նոր գարուն կծաղկի իր սրտում, կամ մի վարագույր կիջնի իր պատանեկան անցյալի վրա... Նա կթաղի իր հուշերը, առանց հայտնելու որևէ մեկին...

Մայրը ներս եկավ, սարքեց սեղանը, շարեց ուտելեղենը՝ ձվածեղը, մեղրը, մածունը, կանաչեղենը, բայց այս բոլորը շատ չնչին էր թվում նրա աչքին։ Աշոտը գնաց լվացվեց ու վերադարձավ թարմացած։

— Արի, Աշոտ ջան, նախաճաշիր, էսքանը միայն հասցրի, պատրաստեցի։

— Սրանից էլ լավ ի՞նչ ես ուզում, մայրիկ, հիվանդին էլ կկենդանացնի քո սեղանը։

Աշոտը մի զուրախ հաճույք էր զգում այս ընտանեկան ուտելիքներից, ասես դրանց մայրական գորովն էր խառնված։

— Մի սրտանց կեր, է՜... էդ ի՞նչ է, նշան դրած աղջկա նման ես ուտում։

— Մայրիկ, ինչո՞ւ դու ինձ «Աշոտիկ», «բալիկ» ես ասում, չէ՞ որ ես բավականին մեծացել եմ, արդեն քսաներկու տարեկան եմ։

— Ինչքան էլ մեծանաս, որդիս, մորդ համար հրեխա ես մնում։

Վերջացնելով նախաճաշը, Աշոտն սկսեց ծխել։

— Էդ ի՞նչ է, ծխել ես սովորե՞լ...

— Դե ռազմաճակատում բոլորը ծխում էին, նա էլ նրանց հետ։

— Մի անգամ երազումս տեսա, Աշոտ, իբր ասում էիր՝ մայրիկ, ամեն բան ուղարկել ես, միայն ծխախոտը մոռացել ես։

— Էդ ի՞նչ իմաստուն երազ ես տեսել, մայրիկ, հեռվից-հեռու իմացել ես, որ ես ծխում եմ։

Մայրը խոր շունչ առավ։

— Է՜հ, որդիս, մին-մին էլ շատ անիրավ բաներ էին պատահում երազումս... Տեսնում էի՝ գալիս էիր, դուռը բացում ներս մտնում... Խելքս գնում էր ուրախությունից... էն է՝ մոտենում էի, որ գրկեմ, համբուրեմ, մեկ էլ չես իմանում, ի՞նչ էր լինում, հանկարծ անհետանում էիր աչքիցս... Զարթնում էի ու լաց լինում...

— Էդ լավ չես արել, մայրիկ, պատերազմի ժամանակ մարդ պետք է ամուր պահի իրեն և ուրիշներին էլ սիրտ տա։

— Դե, մոր սիրտը բարակ կլինի, միայն չկարծես թե քո մորը աշխարհքից քաշված մենակ սուգ էր մտել։ Դրսում ամեն բանի էլ հասել եմ, որ իմ հերոս տղային արժանի մայր լիննմ... Մինչև անգամ ժողովներումն էլ խոսել եմ...

— Ժողովնե՞ր... ա՜յ քեզ բան...

Նա մի ձեռքով գրկեց մորը, ուրգուրեց։

— Քաջ ես, Շուշան ջան, որ իմանայի՝ քեզ էլ հետս կտանեի ռազմաճակատ։

Մայրը հրճվանքով զգում էր Աշոտի ձեռքի ուժեղ ճնշումը, սիրտն ուրախ ծփում էր սիրելի զավակի կրծքի մոտ, նրա առնական ձայնը լսելիս, ասես մի նոր, թևավոր կյանք էր բացվում նրա առաջ։

— Գոհարիկն է՞լ էր մասնակցում այդ ժողովներին։

— Դե Գոհարիկին ո՞վ կհասնի, նա ուրիշ է... ինչպես էր խոսում...

Մոր գովասանքը ուրախացրեց Աշոտին, բայց դրա հետևից եկավ անորոշության ու կասկածի դառնությունը։ Բոպեական լռությունից հետո նա նորից դիմեց մորը.

— Մի բան էլ պիտի հարցնեմ, մայրիկ, ո՞վ էր գրում քո նամակները։

Մայրն իսկույն չպատասխանեց ու շփոթված ժպտով նայում էր որդուն։

— Աշոտ ջան, դե առաջ ես էի ուզում գրել, բայց չէր լինում, հենց որ գրիչը ձեռս էի առնում, սիրտս շուռ էր գալիս, արտասուքս խեղդում էր... Մեր Վարսենիկն էլ գնացել էր, էն է ուրիշին դիմեցի... Գոհարիկի եղբայրն էր գրում։

Աշոտը զարմացավ այդ անսպասելի հայտնությունից։

— Ինչպե՞ս թե... բա ինչո՞ւ ինքը՝ Գոհարիկը չէր գրում։

— Դե աղջիկ է, կարելի է քաշվում էր։

— Մայրիկ, դժվար թե Գոհարիկի փոքր եղբայրը կարողանար էդպես նամակներ գրել։

Մայրը ավելի խորամիտ ժպտաց. նա կարծես մի բան էր ուզում ասել, բայց տատանվում էր։

— Բալիկ ջան, խոսք եմ տվել, որ չասեմ, բայց եկել ես, ո՞նց կարամ քեզանից թաքցնել... էդ նամակները Գոհարիկն ինքը գրում էր, հետո իրեն եղբորն արտագրել էր տալիս։

Աշոտը մնաց շվարած։— Ուրեմն ճիշտ էին իմ ենթադրությունները,— անցավ նրա մտքով։

— Ասում ես քաշվում էր, հա՞։

— Հա, էդպես էր երևում։

Աշոտը կուզեր էլի հարցեր տալ, բայց չէր ուզում մոր առաջ բացել իր զգացումները։ Նա վեր կացավ տեղից ու սկսեց քայլել սենյակում, ապա կանգ առավ պատուհանի մոտ։ Մայրը կռահեց, որ նրա հարցերը և այժմյան մտածմունքները նշան են, որ Աշոտը առանձնապես հետաքրքրվում է Գոհարիկով։ Բայց քանի որ որդին բան չէր ասում դրա մասին, ինքն էլ լռում էր։

— Մայրիկ, ինչպե՞ս է մեր պարտեզը։

— Լավ է, բալաս, մի գնա տես, ուրախացիր։

«Գուցե իմ բոլոր ենթադրությունները երևակայության արդյունք են,— մտածում էր Աշոտը պարտեզ իջնելիս,— այս մշուշը պարզելու համար հարկավոր է տեսնվել Գոհարիկի հետ... բայց ինչպե՞ս անել... գնալ նրա մո՞տ, թե՞ սպասել, որ ինքը գա...»

Ու մի հեգնական միտք ընկավ նրա մեջ. ի՞նչ կռիվներումն է եղել, ի՞նչ ճակատամարտեր է տեսել, իսկ այժմ այս փոքրիկ հարցը դարձրել է «մազե կամուրջ» և տատանվում է...

Նա անցավ ծառուղիով՝ իրեն այնքան ծանոթ ծառերի միջով, որոնք չորս տարվա մեջ փոքր-ինչ աճել, մեծացել էին։ Կանաչների բուրմունքը համակեց նրան, տեղափոխեց դեպի մոտ անցյալը։ Նա ծարավի կարոտով շնչում էր այդ օդը, չիմանալով, թե որ կողմը դարձնի իր հայացքը... Մոտակա ծառերից մի փոքրիկ թռչուն անտես դայլայլում էր, ասես ողջունելով նրան։ Չորս տար-

վա արյունահեղ, աշխարհացունց պատերազմից հետո տարօրինակ էր թվում, որ այստեղ մնացել էր նույն խաղաղ բնությունը։

Նա նստեց ծիրանենու տակ՝ այնտեղ դրած նստարանի վրա։ Մեղմ զեփյուռը շոյում էր նրա դեմքը, առջևը կայտառ սահում էր առվակը, կարծես ուրախանալով իր հոսանքից։ Իր շուրջը ամեն մի ծառից մի հուշ էր գալիս անցյալից։ Չորս տարի առաջ այս ամբողջը, իր կանաչներով, ծաղիկներով այնպես ներդաշնակ կապված էր թվում Գոհարիկի հետ... Ահա այն կեռասենու տակ նրանք նստած էին երկուսով ու կարդում էին այն վեպը ու հաճախ վիճում։ Ինքը տասնութ տարեկան էր, Գոհարիկը՝ տասնհինգ։ Գարուն էր։ Ծաղկած կեռասենու բուրմունքը արբեցնում էր, մեղմ քամին երբեմն թռցնում էր ջինջ, սպիտակ ծաղիկների թերթիկները ու ձգում նրանց վրա... Նրանց հայացքները թափանցում էին իրար, աչքերը ասես իրար համբույրներ էին ուղարկում, բայց խոսքերով նրանք ոչինչ չասացին իրեն զգացումների մասին...

Մինչ Աշոտն այսպես ինքնամոռացման մեջ էր՝ տարված անցյալի հուշերով, հանկարծ նա լսեց հետևից։

— Աշոտ...

Նա վեր թռավ տեղից։ Ծառուղիում, մոտ հիսուն քայլի վրա, տեսիլի նման երևաց Գոհարիկը թևանցուկ իր մոր հետ։ Աշոտը մոտեցավ արագ քայլերով։

— Բարև, հազար բարի եք եկել, Աշոտ,— հնչեց Գոհարիկի մեղմ, ախորժալուր ձայնը։

— Բարև, բարև,— ասաց Աշոտը՝ անսպասելի հուզումից շշմած ու երկու ձեռքով սիրտ սեղմեց Գոհարիկի ձեռքը։

— Աշոտ, էդ ինչքան ես փոխվել, իսկական մարտիկ ես դարձել...

— Դու էլ, Գոհարիկ, անճանաչելի ես դարձել...

— Երևի դեմքի վատն եմ փոխվել, հա՞։

— Մ՛չ, դեմքի լավը, և այնպիսի լավը, որ չեմ կարող խոսքերով արտահայտել։

Ու իրար ձեռք բռնած՝ նրանք սիրով դիտում էին իրար, զարմանալով արտաքին փոփոխություններից և ուրախանալով, ասես իրենց ցանկությամբ էին եղել այդ փոփոխությունները։ Աշոտը հիանում էր. Գոհարիկն այնպես ներդաշնակ ձևավորվել էր որպես կին, սլացիկ իրանով, դեմքը փոքր-ինչ լցվել է, ժպտում էր փաղաքուշ՝ այտերի դուրեկան փոսիկներով։

— Ինչպե՞ս ես, Աշոտ... է՜հ, ինչքան քան է անցել գլխովդ,— ասաց Գոհարիկը՝ աղատելով իր ձեռքը։

— Լավ եմ, ոչինչ, դու ինչպե՞ս ես, Գոհարիկ։

— Ապրում ենք... Դե, մենք թիկունքի մարդիկ ենք, մերը սովորական է, դեռ դու պատմիր պատերազմից։

— Ի՞նչ պատմեմ, էն է՝ գնացինք, հաղթեցինք, եկանք։

— Հուլիոս Կեսարի նման ես ասում, Աշոտ. «եկի, տեսի, հաղթեցի»...

— Դե, հաղթողների խոսքը չպետք է երկար լինի։

— Բայց մինչև հաղթության հասնելը ինչքա՞ն դժվարություններ են եղել։

— Հաղթությունից հետո այդ դժվարությունները արդեն մեծ չեն թվում։

Նրանք գնացին ծառուղիով։ Մոր սրտում ցնծություն էր տիրում, ասես նա իր մեջն էր առել նրանց երկուսի ուրախությունը։ Երբ զույգը նստեց ծիրանենու տակ, նստարանի վրա, նա փոքր-ինչ մլավել տալուց հետո աննկատելի գնաց տուն։

— Ո՞հ, ինչ անուշ է այս բնությունը, Գոհարիկ... Չորս տարվա դժոխային պատերազմից հետո այնպես կարոտ է եկել մեջս... Այս ծառերը ինչպե՞ս հիշեցնում են մոտիկ անցյալը... հիշո՞ւմ ես մեր ընթերցանությունը՝ ծաղկած ծառերի տակ...

— Պատանեկան հուշերը միշտ էլ գեղեցիկ են, Աշոտ։

«Զուսպ է պահում իրեն, չի ուզում խոսել անցյալի մասին», — անցավ Աշոտի մտքով։ Նա փոխեց խոսքը։

— Ուրի՞շ... ի՞նչ ես անում։ Գոհարիկ։

— Աշխատում եմ հիվանդանոցում։

— Ես չափազանց շնորհակալ եմ քեզանից։ Գոհարիկ, դու քրոջս երեխաների համար այնքան բան ես արել։

— Ախ, Աշոտ, ի՞նչ կարիք կա այդ մասին խոսելու։ Մի՞թե մոռանում ես, որ ռազմաճակատում դու կանգնած էիր թշնամու ռումբերի ու գնդակների տակ, քո կյանքն էիր դնում ժողովրդի համար, իսկ իմ արածը մի փոքրիկ ընկերական պարտականություն է։

— Մ՛չ, Գոհարիկ, քո արածը փոքր գործ չէ... Շնորհակալ եմ նույնպես, որ օգնել ես մորս և այնպիսի լավ նամակներ ես գրել։

Գոհարիկը շառագունեց և շփոթված նայեց Աշոտին։

— Ինչպե՞ս... Մի՞թե ձեռագրից չէիր նկատում, որ ես չեմ...

— Ձեռագիրը քոնը չէր, բայց սիրտը քոնն էր...

— Մայրի՞կդ է ասել... Նա ինձ դավաճանել է...

— Ինչո՞ւ պետք է գաղտնի մնար... Ինչո՞ւ նամակներն ուրիշներին էիր արտագրել տալիս։

— Մի՞թե քեզ համար հասկանալի չէ, Աշոտ... Դու կարող էիր այդ իմ քայլին ուրիշ մեկնություն տալ և ենթադրություններ անել...

— Ի՞նչ ենթադրություններ... և մի՞թե դա վատ կլիներ...

— Ախ, Աշոտ, դու այսօր դատաքննիչի դեր ես ստանձնել, բացատրություն ես պահանջում այն բանի համար, ինչ քեզ համար պետք է պարզ լինի... Ես այն ժամանակ այդ ձևով միայն հնարավոր գտա օգնելու մորդ։ Պետք է ասեմ, որ նա առաջին անգամ փորձեց ինքը գրել, բայց այնքան արցունքներ էր թափել, որ թանաքի լճեր էին գոյացել թղթի վրա, և նամակը չէր կարդացվում։ Մայրդ իսկապես արցունքի ծով է... Այդ գրությունը տեսնելով, ես հանձն առա գրել...

— Քո նամակները կարդալիս ես մի առանձին ջերմություն էլ ստանում, և պետք է խոստովանեմ, երբեմն կռահում էի, որ դու ես գրում... ու այդպես մտածելով՝ ես ենթադրություններ էի անում քո զգացումների մասին...

— Տեսնո՞ւմ ես, դեռ նշաններ չկային, բայց դու արդեն եզրակացություններ էիր անում, ուրեմն ես իրավունք ունեի ինձ թաքցնելու։

— Օ՜, ես շատ կուզեի, որ դու քո անունից գրեիր... իմ ստացած նամակների մեջ շատ տողեր մնացել են հիշողությանս մեջ։ Մի անգամ գրել էիր՝ իբր մորս կողմից. «Սիրելի Աշոտ, գու կուվիր հերոսաբար... այն սերը, որ կա դեպի քեզ քո ընտանիքում և ընտանիքից դուրս՝ թող ջերմացնի քեզ ծանր բոպեներին...» Ես այդ նամակն ստացա այն օրերին, երբ վիրավոր՝ պառկած էի հիվանդանոցում։ Այդ «ընտանիքից դուրսը» քեզ էր վերաբերում, Գոհարիկ, ես այդ զգացի...

Գոհարիկը շփոթվելուց աչքերը գցած գետնին լսում էր։

— Այնուհետև հիշում եմ մի ուրիշ նամակում գրում էիր. «ծառերը ծաղկել են այնպես գեղեցիկ, կարծես պատերազմը նրանց չի վերաբերում... Ծաղկել են և քեզ հիշում, քո հաղթական վերադարձին են սպասում»...

— Ախ, Աշոտ, դու ինձ տանջում ես՝ գաղտնիքներս բացելով...

— Ես էլ եմ տանջվել, Գոհարիկ, մեկ մտածելով, թե դու ես գրողը, մեկ էլ կասկածելով... ես քեզանից բարևներ էի ստանում, բայց ուրիշների հետ միասին։ Մի անգամ էլ քույրս ուղարկել էր ձեր հիվանդանոցի աշխատակիցների խմբական լուսանկարը... Հիշում եմ՝ հինգ հոգի էին... Դու կանգնած էիր բժշկի կողքին... Ու ես մտածեցի՝ չի՞ կարող պատահել, որ Գոհարիկի սիրտը պատկանի...

— Աշոտ, լո՞ւրջ ես ասում... Դա իմ մորաքրոջ տղան է... Դու նրան չես տեսել, Բաքվում է սովորել...

— Մորաքրո՞ջդ տղան...— զարմացավ Աշոտը ու լռեց։

— Մի՞թե հնարավոր է, Աշոտ, որ դու այդպիսի ենթադրություններ անեիր, դու չգիտես... չորս տարվա մեջ չի եղել մի օր, մի ժամ, որ ես հանեմ քեզ իմ հիշողությունից... Ռազմաճակատից գրած քո նամակները ինձ անհուն ուրախություն էին պատճառում... Քո նկարագրած ճակատամարտերը ինձ վերացնում էին, վառում իմ երևակայությունը... Իսկ երբ իմացա, թե վիրավորված ես, անքուն գիշերներով արտասվում էի, մտածելով, որ դու արդեն չկաս...

Գոհարիկի աչքերին արցունքներ փայլեցին։

— Այժմ ինձ համար ամեն ինչ պարզ է, Գոհարիկ... Չորս տարի ես էլ պահել եմ մեջս իմ սերը, միշտ երազել եմ քո մասին, բայց երբեմն էլ մտածել, հարց եմ տվել ինքս ինձ՝ արդյոք Գոհարիկը հիշո՞ւմ է ինձ, սիրո՞ւմ է ինձ, թե՞ գուցե...

— Մի կրկնի քո կասկածները, Աշոտ,— ընդհատեց Գոհարիկը։

— Այժմ, Գոհարիկ, ես երջանիկ եմ, կարծես նորից եմ սկսում ապրել... Մեր զգացումներն այժմ նույնն են, ինչ որ այն ծաղկած գարնանը...

Նա բռնեց Գոհարիկի ձեռքն ու նայեց նրա դեմքին։ Նրանց աչքերը ժպտում էին որպես տարիներ առաջ։ Ապա նրանք կարծես մագնիսական ուժով մոտեցան, և շրթունքները հպվեցին իրար... Բայց հանկարծ Գոհարիկը ետ քաշվեց, ասելով.

— Մայրիկդ գալիս է...

Մայրը գալիս էր երջանիկ տրամադրության մեջ՝ նկատելով, ինչպես իր «աղունիկները» կտուց-կտցի զրուցում են այնպես մտերմաբար ու սիրալիր։ Նա մոտենում էր, հետզհետե ավելի ձուլվելով այս նոր երջանկությանը։

— Աշոտ ջան, Գոհարիկ ջան, արդեն հաշի ժամանակն է, դնանք տուն։

Ապա մի գորովալից հայացք ձգելով զույգի վրա, ավելացրեց.

— Դուք երկուսդ էլ իմ զավակներն եք, ապրեք ու աշխատեք միասին, միշտ մոտ ընկերներ եղեք, ինչպես առաջ էիք, դա է իմ սրտի ցանկությունը։

Աշոտը գրկեց մորը ու համբուրեց։

— Մայրիկ, քո սիրտը միշտ իմաստուն է... մենք մոտ ընկերներ ենք և միշտ կլինենք այդպես...

Նա թևանցեց մորը և Գոհարիկին, և երեքով քայլեցին դեպի տուն։

— Գոհարիկ, մայրիկն ասում է՝ աշխատեք միասին... Ես այժմ ռազմաճակատից վերադառնալուց հետո մեջս մի - անհուն տենչ եմ զգում, սովորելու և աշխատելու...

— Աշոտ, ես էլ ծարավի եմ աշխատանքի, ասես ամեն կողմից այդ կոչն է հնչում ականջիս։

— Գոհարիկ, եղիր իմ նվիրական ընկերը... կսովորենք և կաշխատենք միասին մեր երկիրը ծաղկեցնելու համար... Մայրիկ, լսո՞ւմ ես։

— Լսում եմ, որդիս, հենց իմ սրտիցն ես խոսում։

Նրանք քայլում էին երեքով, համակված մի նոր երջանկությամբ...

1946

ՆՈՐ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

Այդ ամառ նկարիչները ցրվել էին երկրի զանազան վայրերը իրենց ստեղծագործական աշխատանքների համար։ Նկարիչ Ազատյանն իջել էր արարատյան գյուղերից մեկում, մի բարձրադիր տան մեջ, որը շրջապատված էր ընդարձակ պարտեզով։ Նա մասնակցել էր Հայրենական պատերազմին, երեք տարի եղել էր ռազմաճակատում, վիրավորվել էր ոտքից, ապա բուժվել էր և այժմ նորից վերսկսել էր իր նկարչությունը։ Երեք տարի կտրված լինելով իր սիրած գործից և Հայրենիքից, նա այժմ մի անհագ ծարավ էր զգում դեպի բնությունը, դեպի պեյզաժը։ Եվ ահա գյուղի այդ վայրում նրա շուրջն ամեն ինչ «բնություն» էր. նա ապրում էր հենց պարտեզում, վրանի տակ։ Իր հորիզոնում մի կողմից Մասիսն էր, իր վեհանիստ խոհուն գագաթով, իսկ մյուս կողմից՝ ջինջ ու պայծառ Արագածը։ Նա նկարում էր ծառերի ստվերներում, թարմ կանաչների շրջապատում, որոնց միջով մեղմ խոխոջելով հոսում էր առվակը։

Նա զարմանում էր արևածագից առաջ, լվացվում էր վճիտ առվակում, ապա մի քանի րոպե ճեմում էր պարտեզի ծառուղիում, դիտելով բոցավառվող արշալույսը, հետո գալիս էր, ընտրում իր տեղը և սկսում նկարելը։ Այդպես նա նկարեց մի շարք էսքիզներ, ապա գնաց գյուղից դուրս, նկարեց բլուրը իր փոքրիկ պուրակով և ջրվեժով։ Սակայն քանի շատ էր նկարում, այնքան ավելի էր նրա մեջ արմատանում դժգոհությունը։ Բնությունը գրավում էր նրան, բայց իր նկարների, պեյզաժների մեջ միշտ ինչ-որ թերություն էր տեսնում։ Ջրվեժի նկարի վրա նա հույսեր էր դնում, բայց դա չբավարարեց նրան.— շարժում չկա,— ասաց ինքն իրեն և հեռացրեց աչքից նկարը։ Այնուհետև նա հաճախ նույնն էր ասում և իր մյուս նկարների մասին, բայց դժվարին խնդիր էր թվում այդ՝ «շարժման» գաղտնիքը արտահայտելը։

Նա շատ հավանեց գյուղի հուշարձան-աղբյուրը, որի երկու ծորակներից առատ թափվում էր ջուրը, զովություն ներշնչելով մոտեցողներին։ Աղբյուրին առանձին շուք էր տալիս նրա կողքի խոշոր ընկուզենին, իր լայնատարած ճյուղերով, ամառվա հովասուն ստվերով։ Ազատյանը երեք օր նկարում էր, տեղավորվելով մոտակա պարտեզում, բայց երբ վերջացրեց, նրան այնպես խորթ թվաց նկարը, ասես մի ուրիշն էր նկարել, և ոչ թե ինքը։ Այս անգամ նա զարմացավ, որ նկարը թախիծ էր ներշնչում, որի պատճառը նա սկզբում չէր գիտակցում։ Նա դարձյալ ասաց մտքում՝ «շարժում չկա» և մի կողմ դրեց, բայց մի շաբաթ անց, երբ նորից ձեռքն առավ, նոր միայն զգաց, թե ինչից է այդ թախիծը։ «Ի՞նչ է աղբյուրը առանց մարդկանց՝ լոկ տխրություն,— ասաց նա ինքն իրեն,— առանց մարդու հուշարձան-աղբյուրի գոյությունը իմաստ չունի...»

Ու նա նորից նկարեց աղբյուրը, այս անգամ տեղ տալով և մարդկանց։ Երկու հարսներ՝ կժերը վայր դրած՝ ժպտով նայում էին, կարծես հիանալով ջրի առատությունից և պարզությունից։ Նրանց մոտ մի ալևոր գյուղացի, ջրի թասը ձեռքին, հաղորդ էր տալիս իր ամառվա ծարավին։ Մի զույգ եզներ խմում էին քարե երկար նավից, որը ձգվում էր աղբյուրի ձախ կողմից։ Այդ նկարը սկզբում նրան գոհացնում էր, բայց շատ չանցած, դարձյալ նրա մտքում եկավ իր այդ օրերի անխուսափելի խոսքը՝ «շարժում չկա»... Միայն նա զգում էր, որ հագեցել էր պեյզաժից, որ բնությունը առաջվա պես արբեցում չի առաջացնում իր մեջ։

Ի՞նչ նկարել... այդ հարցը տարօրինակ էր թվում, բայց ավելի լսելի էր դառնում իր մեջ... Ամեն ինչ շարլոն էր թվում, և նույնիսկ այն մտքերը, որոնք թևավորում էին նրան իր առաջին օրերին. զգալ բնության գեղեցկությունը և նկարներով արտահայտել այն, տալ մարդկանց...

Այսօր նա վերցրեց մի անավարտ նկար, հենց այնպես, միայն զբաղվելու համար։ Դա մի պեյզաժ էր, իր հանդիպակաց տան պարտեզը։ Այդտեղ նրան գրավել էր հինավուրց ծառերի մի խումբ, որի հետևում, թվում էր, թաքնված էին ավելի գրավիչ գեղեցկություններ։ «Սա էլ ավարտել և այնուհետև վարագույր իջեցնել իմ պեյզաժների վրա»,— մտածում էր նա։

Նկարչին գրավում էր նաև այդ հին տունը, նրա ռոմանտիկ պարիսպը, և նրա կողքով բարձրացող մուտքի կածանը, նրա դարբասը։ Այդ բոլորը տալիս էր մի հին դղյակի տպավորություն, որը պետք էր արտահայտել առանց մարդու, որպեսզի ավելի խորհրդավորություն լինի նկարի մեջ։ Բայց նկարելու ժամանակ երևվաց գյուղի նամակատարը՝ պայուսակը ուսին, և բարձրանալով կածանով, կանգ առավ դարբասի առաջ ու թխկացրեց երկաթե մուրճով։ Տանից դուրս եկավ միջին տարիքի մի կին՝ սև հագուստով, առավ նամակը, բայց իսկույն չդարձավ։

Ազատյանը դադարեց նկարելուց և ուշադրությամբ դիտում էր։ Նրա մտքում այժմ ծագեց այդ նկարի մի նոր վարիանտ, որի անունը պետք է լիներ «Նամակ ռազմաճակատից», մինչդեռ առաջ նա անվանում էր «Հինավուրց տունը»։ «Նորից եկավ անխուսափելի մաքդը». նա անորոշ մի կողմ դրեց նկարը։

Դրանից հետո Ազատյանն ինչ էլ նկարում էր, նրա առջև անխուսափելիորեն պատկերանում էր մարդը։ Նրա ուշադրությունը դառնում էր դեպի մարդիկ։ Բայց և այնպես նա դժգոհ էր իրենից. իր երեք շաբաթվա աշխատանքը նա համարում էր շեղում, կամ ամենալավ դեպքում՝ պատանեկան մի ոգևորություն։ Իսկ այժմ նա կարծես նոր ուղիներ էր փնտրում. Պետք է նկարել կյանքը,— ասում էր նա ինքն իրեն, բայց դա շատ անորոշ էր թվում։ Եվ ահա նա սկսեց շրջել գյուղում, նյութեր փնտրելու իր նկարների համար, բայց այդ օրերին մի նոր, անսպասելի զգացում համակեց նրան։ Գյուղը համարյա դատարկ էր, բոլորը գնացել էին աշխատանքի, մնացել էին երեխաները և զառամյալ ծերունիները։ Այդ ամայության մեջ շրջում էր մի նկարիչ՝ նյութեր փնտրելու... Որքան էլ նա արդարացնում էր մտքով իր այդ աշխատանքը, բայց նրան թվում էր, թե այստեղ բոլորն աշխատում են, իսկ ինքը անգործ է, եկել է հենց այնպես՝ ժամանցի, զվարճության համար... և այդ պատճառով էլ խորթ է այս իրականությունը, սերտ կապված չէ նրա հետ... Որքան էլ անհեթեթ էր թվում այս տրամադրությունը, բայց իր զգացումները տանում էին այդ ուղղությամբ։

* *

Մի գիշեր Ազատյանը հանկարծ զարթնեց ձայներից։

— Վարսենիկ, շո՛ւտ արա,— կանչում էր մի տղա հարևան տանից։

— Ես քեզանից շուտ եմ վեր կացել,— լսվեց Վարսենիկի պատասխանը։

Նրանք դուրսը, փողոցում դարձյալ խոսեցին, ապա իջան ճանապարհով։

Վարսենիկը Ազատյանի տանտիրոջ աղջիկն էր։ Անշուշտ այդ ցույգն էլ գնում էր հնձի, և այնպես վաղ, երբ լույսը հազիվ էր նշմարվում։

«Երևի սիրում են իրար»,— անցավ նրա մտքով։ Այդ աղջիկը շատ դուր էր գալիս իրեն։ Երկու անգամ նա կանչել էր նրան, նստեցրել կանաչի վրա, սկսել նկարել, բայց Վարսենիկը մի երկու րոպեից հետո վեր էր կացել ու փախել։ Ազատյանն ուզեց հիշողությամբ նկարել, բայց դա էլ չէր հաջողվում. ինչ-որ բան կար այդ դեմքի վրա, որ չէր արտահայտվում նկարի մեջ։

«Երևի դա այն տղան էր, որի հետ ինքը տեսել էր Վարսենիկին Գյուղսովետի գրասենյակում... Այո, ի՞նչ կա զարմանալի, կարող է պատահել, որ նրանք համակրում են իրար, իրար հետ աշխատելով...»

Նկարիչն այլևս չկարողացավ քնել։ Ու նորից նրան պաշարեցին այն մտքերը, որոնք վերջերս գալիս էին նրա մեջ։ Նա մտածում էր, որ «ներդաշնակություն» չկա իր նկարչության և շրջապատի աշխատանքի մեջ, որ այս միջավայրում ինքը կարծես խորթ է...

Լույսի հետ ասես բացվում էին և նրա մտքերը... Ի՞նչ է հարկավոր այս խորթությունը վերացնելու համար... Պետք է նկարել այնտեղ, աշխատանքի վայրում, արտերում...

Եվ ահա հենց այդ առավոտ, տեղեկանալով Վարսենիկի տա-

տից, թե որտե՞ղ են հնձում, նկարիչն իր ալբոմն առած՝ ճանապարհ ընկավ դեպի հեռավոր արտերը։

Շուրջն ամեն ինչ թվում էր նոր և թարմ։ Զով քամին երբեմն գալիս էր ծածանում արտերը, փաղաքշում իր դեմքը։ Այն բնությունը, որը նրան շրջապատում էր իր պարտեզում, այժմ թվում էր նեղ և արհեստական։ Ի՞նչ լայնություն էր այստեղ և ի՞նչ հարստություն մարդկային աշխատանքի... Երբեմն նրա ականջովն էր ընկնում թռչնիկի մի ձայն, նա կանգ էր առնում, որ տեսնի, թե որտեղ է թռչունը, բայց չգտնելով, շարունակում էր ճանապարհը։

Արևը նոր էր զգացնում իր ամառվա տաքությունը, երբ Ազատյանը հասավ հնձելու վայրը։ Ստեպ-ստեպ շարժվող թեթև քամին մեղմացնում էր շորը, բերելով իր հետ դաշտերի բուրմունքը։ Դեռ հեռվից նկարչի աչքին երևաց Վարսենիկն իր կարմիր գլխաշորով։ Նրանք բոլորը ժպտով բարևեցին պատասխանելով նրա բարևին։

Ազատյանը նստեց հնձվորների դիմաց, բացեց իր կտավե զոնդը, բացեց նաև իր մեծ ալբոմը, բայց մի քանի րոպե հանգստյան տվավ, ճանապարհի հոգնածությունը վերացնելու համար։ Նա դիտում էր, բայց չէր նկարում։ Արտի այդ մասում երկու տղա, երկու աղջիկ էին։ Նկարչի հայացքն ավելի երկար կանգ էր առնում Վարսենիկի վրա։ Նրա արևառ դեմքի՝ կարմիր գլխաշորի մեջ, առկայծող սև աչքերով, այնքան գրավիչ էր թվում, որ Ազատյանը շփոթվում էր, կարծես մի արտակարգ, հազվագյուտ դեմքի էր հանդիպել։

Նա սկսեց նկարել։ Հնձվորները հետաքրքրվեցին. նայում էին ու ժպտում։

— Մեզ ե՞ք նկարում,— հարցրեց մյուս աղջիկը՝ Հեղուշը, լայն ժպիտը դեմքին։

— Ո՛չ, արտն եմ նկարում,— նույնպես ժպտալով պատասխանեց Ազատյանը, ուզենալով մեղմել նրանց հետաքրքրությունը։

Նկարելու ժամանակ Ազատյանը չէր կարողանում հանգիստ նայել Վարսենիկին։ Քանի գնում, նա ավելի հրապուրիչ էր երևում աչքին, ավելի էր գրավում։ Դա խանգարում էր նկարելուն, չէր թողնում կենտրոնանալ։ Ի՞նչ է սա, լոկ հետաքրքրությո՞ւն... Մի գյուղական աղջիկ էր Վարսենիկը, յոթնամյակն ավարտած և գեղջկական միջավայրում դաստիարակված, բայց թվում էր, թե նրա մեջ կար զգացումների մի հարստություն, որով նա մեկի տեղ երկու երջանկություն կարող էր նվիրել իր սիրածին։

Եվ այդ սիրածը, իհա՛րկե, կա... Ահա նրա կողքին, միշտ նրա կողքին աշխատում է Տիգրանը, հաղթանդամ մի տղա, որը վերադարձել է պատերազմից, կրծքին շարած շքանշաններով։ Իհարկե, պարզ է, նրանք սիրում են իրար. դա նկատվում է նրանց մտերմական ժպիտներից, նրանց դեպի իրար ձգտող շարժումներից... և եթե այդպես է, ինքը Ազատյանը իրավունք չունի խանգարելու նրանց երջանկությունը...

Բայց նկարիչը չէր կարողանում հաղթահարել իր մեջ նոր ծագող զգացումները։ Հաճախ Վարսենիկի դեմքը վառվում էր կարմիրով, դիմագծերը կորչում էին ու շփոթում նրան։ Նա կանգ էր առնում խոռված սրտով, դժգոհ, մտածելով, որ նկարը չի հաջողվելու։

Այդ րոպեներին նա նորից հիշում էր իր խորթ, «անհերոսական» վիճակը գյուղի միջավայրում։ Դարձյալ նրան թվում էր, թե հնձվորները, տեսնելով նրան այս «հայեցողական» վիճակում, կարծում են, թե նա եկել է այստեղ ժամանցի, զվարճության համար... Գուցե նկարչությունը համարում են զվարճություն... «Ինչեթեթ մտքեր են գալիս»,— ասում էր նա ինքն իրեն, բայց սրամտությունը հակառակն էր ասում։

Ու մի սուր նախանձով նա նայում էր հնձվորներին։ Մեջը մի բուռն ցանկություն էր գալիս՝ աշխատելու բոլորի հետ, դրանով կվերանար իր խորթությունը, դրանով կստեղծվեր «ներդաշնակությունը»։

Ճաշվա դադարից հետո Ազատյանն ավելի մռայլվեց. համոզվելով, որ նկարը չի հաջողվում։ Նա հրաժարվեց ճաշից, բայց Վարսենիկը և Տիգրանը թևանցուկ տարան նստացրին իրենց մոտ։ Այդ մտերմական շրջանում նրա մեջ ավելի վառվեց հնձելու ցանկությունը, մանավանդ որ նա սովոր էր այդ աշխատանքին իր պատանեկան տարիներից։

Ճաշից հետո նա նկատեց, որ մի ավելորդ մանգաղ կա։ Մոտեցավ, վերցրեց, սկսեց դիտել։

— Ի՞նչ է, ուզում ե՞ք հնձե՞լ,— կատակեց Տիգրանը։

— Այո՛, ուզում եմ,— լուրջ պատասխանեց Ազատյանը, զարմացնելով Տիգրանին։

— Բայց ձեզ համար դժվար կլինի...

— Ես սովոր եմ, կարող եմ աշխատել։

— Դե ապա կտեսնենք...

Երբ նա դադարից հետո մտավ արտը, բոլորը զարմացած ժպտում էին, կարծելով թե դա կատակ է։ Բայց ահա անցավ մի քանի րոպե, նրանք համոզվեցին, որ նկարիչը կարգին հնձվոր է։ Ճիշտ է, առաջին շարժումները դժվար թվացին Ազատյանին, բայց հետո նա թափն ընկավ և նույնիսկ ետ չէր մնում մյուսներից։

Այսպես նա աշխատեց մինչև երեկո և բոլորի հետ հանգիստ առավ, մնալով գիշերը դաշտում։ Այդպես էր որոշել բրիգադը՝ արտերի հեռավորության պատճառով։ Գիշերը նա քնեց աստղալից երկնքի տակ մի անդորր, մանկական քնով ու երբ զարթնեց լուսաբացին, ասես մի նոր կյանքի մեջ էր տեսնում իրեն։

Սկսեցին աշխատել։ Քանի բացվում էր արշալույսը, բնությունն ավելի հրապուրիչ էր դառնում նկարչի աչքում։ Առավոտյան զովի ու բուրմունքի մեջ, նա ստեպ-ստեպ աչք էր ձգում դեպի արևելք, տեսնում էր իր ծանոթ գույները, բայց նրան թվում էր, թե սա մի նոր արշալույս է իրեն համար, մի նոր այգաբաց...

Նա հնձում էր խանդավառությամբ, ետ չմնալով խմբից։ Սիրտը լիքն էր մի նոր ուրախությամբ, որ աշխատում է բոլորի հետ, որ «ներդաշնակորեն» կապված է նրանց հետ։ Ի՜նչ գույներ են խաղում արևելքում, ի՜նչ թարմություն, բուրմունք է շուրջը, և ի՜նչ կենսուրախ աշխատանք...

Այդպես նա աշխատեց մի շաբաթ, իր նկարչությանը դիմելով միայն հանգստյան ժամերին։ Իսկ երբ վերջացավ հունձը, նա մի ոգեշնչված թափով սկսեց նկարել։ Երբեք նա այդպես չէր տարվել իր արվեստով, ասես մոռացել էր ամեն ինչ։ Մի խոշոր կտավ էր դա, որի վրա հերոսական դեմքով կանգնած էր ցորենի դեզի առաջ մի աղջիկ՝ արևից վառված դեմքով, անվախ ժպիտը դեմքին։ Քիչ հեռու երևում էին մի խումբ մարդիկ աշխատանքի մեջ։ Աղջիկը հաղթորեն բռնած էր ձեռքին եղանը։ Դա Վարսենիկն էր...

*

* *

... Աշնան ցուցահանդեսում Ազատյանի նկարը առանձնապես ուշադրության արժանացավ։ Երբ գովում էին նրա մոտ այդ նկարը, նա ասում էր.

— Այո՛, այդ նկարի մեջ կան իմ յուրահատուկ ապրումները...

Ու վերհիշում էր ոսկեզօծ արտը, իր խանդավառ աշխատանքը, վերհիշում էր Վարսենիկին...

1948

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ պրոլետարական գրականության հիմնադիրները. Սարիբեկ Մաճուկյան . . . 3

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանաստեղծություններ

Նամուս ու գեյրաթ . . . 14
Ուխտ բարեկամության . . . 15
Փոթորկից հետո . . . 15
Էլի նորան . . . 16
Հասկանում եմ . . . 17
Սիրո կայծը . . . 17
Քրդի շունը . . . 18
Հայ աղջկան . . . 20
Գատկերներ . . . 21
Գաղթականները . . . 22
Ես երգեցի... . . . 23
Մի՛ ասիր... . . . 24
Գյուղական բալլադ . . . 24
Ջարդդ տանեմ . . . 25
Մեր ցավը մեծ է... . . . 26
Ամբոխի կոչը . . . 27
Կորած ճշմարտություն . . . 28
Երանի՜ նրան . . . 29
Կաթսավար . . . 30
Գարնանամուտին . . . 30
Իմ աշխարքը . . . 31
Մե՛կ էլ, մե՛կ էլ . . . 33
Հեղափոխություն . . . 33
Ես ձեզ ասում եմ... . . . 35
Դարբնի երգը . . . 35
Նոր տարին . . . 36
Բուրժուաներին . . . 37
Ութ ժամ . . . 38
Պրոլետարիատին . . . 39
(Նվեր օր. Ազ-ին) . . . 40
Մայիսմեկյան երգ . . . 41
Մեռա՜ն՝ չկորա՜ն... . . . 41
Իմ սերը . . . 42
Ողջո՜ւյն քեզ, արև՜... . . . 43
Նահատակները . . . 44
Գործարան . . . 45
Ես ա՜յն եմ սիրում... . . . 46

Լռեց սոխակը... 47
Որպես մի թռչնակ 48
Աշխատանքի երգը 49
Հուսաբացին 49
Սոնետ 50
Մաքառման ժամին 51
Էտապը 51
Գործարանում 52
Կարոտ 53
Ճահիճը 54
Ընկե՛ր, դու մի՛ լա... 55
Գյուղի երեկոն 56
Քաղաքը 57
Գահակը 58
Դարբինը 59
Ոչի՛նչ, ի՛մ ընկեր... 60
Փո՞ւյթ չէ... 60
Ազգայիններին 61
Վ. Ի. Լենինին 62
Ստեփան Շահումյանին 62
Քանվեց էին... 63
Իններորդ ալիքը 64
Մարգարե եմ ես... 65
Երկու բևեռում 66
Իմ կտակը 67
Կարմիր գարնան 68
Կոմունարի մահը 68
Միխա Ցխակայային 70
Կամոյին 70
Գրոչետարի երգը 72
Իմ սերը 73
Դրոշի տակ 74
Ավետյաց երկրին 75
Լենինը անմա՞հ... 76
№ 67 76
Գեորգ Աթարբեգյան 77
Զարթնիք 78
Կարմիր Հայրենիքիս մեկուդիանեիրից 79
Օ՞, ինչ լա՞վ էր այս գիշեր 83
Մետաքսագործարանում 83
Զորագնում 84
Ինոն-գէս 84
Հեղափոխական բալլադա 86
Գիտնները 86

Գոեմսա.

Նոր առավոտ 89
Կարմիր ալիքներ 104
Հավասարություն 131
Բայլեկիկ է Շիր-Կանալը 144
Աստվածները խոսեցին 148
Քաղաքը 162
Լենինգրադյան պոեմ 171
Ֆրագմենտներ 173
Թիֆլիս 184
Կարմիր Աստղիկը 190

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Գիշերը գետի ափին 198
Մանկիկին 199
Ծաղիկն ու ժայռը 199
Գեղջուկի դարդերից 200
Գյուղական իդիլիա 201
Քնքուշ սեր 202
Կուզե՞ս... 203
Ափերին 203
Անե՛ծք 204
Ինձ ասին 205
Ես շողը տեսա 206
Էնտեղ մեկ անգամ նստած աղբրի մոտ 207
Մրմունջներ 207
Ոչ լալկան երգեր 208
Ծաղիկների մեջ 208
Մրրիկը գյուղում 209
Դեկտեմբերի օրերից 210
Ինձ մի՛ թքրիր... 211
Ես ըմբոստացա... 212
Հնչուն գիշերից 213
Թող երգս լցվի քո հոգին 214
Նամակ հայրենիքիս 214
Ռքսորականը 216
Մտքեր կառղին 217
Մի հոգեհանգիստ 218
Բանտարկյալի երգը 219
Սև շղթաներ 219
Երշանիկը 220
Աղատության զողանջները 221
Բանվորի երգը 222

Այնտե՞ղ գնացե՛ք . . . 223
Գեղչկուհու մորմոքը . . . 224
Պրոլետարի երգը . . . 225
Քաղցից արնաքաշ հիվանդ հյուքերի . . . 226
Ձայն տուր ամենքին . . . 227
Հանգցրե՛ք չահերը... . . . 227
Եվ ես երգում եմ կաթիլը վշտի . . . 229
Սե օրերից . . . 230
Երազ . . . 231
Ջրհորի մոտ փոքրիկ ազան . . . 232
Կնա գիշերին . . . 233
Դու չնա հավատում— կյանքի սև գիշեր . . . 234
... Միտքս արծիվ է— . . . 235
Նվեր հայ գաղութին . . . 236
Ամենքը լուռ են... Ո՞չ խաչ, մահաբանա՛ն . . . 237
Փոթորկից առաջ . . . 237
Գիշերը Շիրակում . . . 238
Ես երգիչ եմ սև օրերի . . . 240
X-ին . . . 241
Կուզեմ մաքմնացած սեր լինել անշեջ . . . 241
Խորհրդավոր ամրոց . . . 242
Հեռո՞ւ թախիծը—հոգուս ծաղկացում . . . 245
Գիշեր . . . 245
Նոր երգ . . . 246
Կուզեի տեսնել հոգուս խորքերում . . . 254
Թշվառ ժողովուրդ . . . 254
Կեցցե՛ն շարքերը . . . 255
Հե՞տ տա՛ր քո խաչը . . . 256
Եկեք միանանք . . . 259
Ձեզ ձայն եմ տալիս... . . . 260
Սովյա՛ր . . . 261
Հազթանակի ճանանչներից . . . 261
Տա՛ր ինձ, մեծ հոսանք... . . . 262
Սովը . . . 263
Ջրեղե՛ք դրանց . . . 264
Բանվորները . . . 266
Թող մեռնենք պատվով . . . 268
Դուք տեղ չեք հանի . . . 269
Հայ բանվորներին . . . 269
Գյուղացու մորմոքը . . . 270
Գալիք օրերում . . . 271
Գարունն եկավ . . . 273
Ազա՞տ ինքնիշխան... . . . 273
Երկրի ձայնը . . . 274

Գութանի երգը . . . 276
Գարուն . . . 277
Կալանավորի երգը . . . 278
Հառա՞ջ անվեհեր . . . 279
Հակապատկերներ . . . 280
Ապագա . . . 280
«Հա՞ց, հա՞ց...» . . . 281
Գնա՛ նոցա մոտ . . . 284
Հեռվից-մոտիկ . . . 285
Մեր ցավը մեկ է . . . 286
Ավետիք Իսահակյանին . . . 287
Կա՞ց, ա՛յ հովիկ, մի փախչիր . . . 288
Սպիտակ գիշերներ . . . 289
Երազ . . . 290
Ապրել եմ ուզում . . . 291
Նա է, ասում են . . . 292
Մենք էլ միանանք . . . 293
Գարուն է . . . 293
Կույր երգիչը . . . 294
Արծվի սերը . . . 294
Տրտունջ . . . 295
Տխո՞ւր-տրտում . . . 296
Սիրելուս . . . 297
Հանգարտ երգ . . . 297
Արշալույսի զոզանջները . . . 298
Պրոլետարի երգերից . . . 299
Բանվորուհին . . . 300
Հացը . . . 301
Ընկեր, ձեռքդ տուր... . . . 302
Սերը-հեշտալի— ինքնամոռացում— . . . 302
Բանաստեղծին . . . 304
Դեմ առ դեմ կռիվ . . . 305
Մի՞թե չեք զգում . . . 306
Քնա՞ծ էին... . . . 307
Եվ կախաղանի անարգ այուներից . . . 308
Կռվկաս . . . 309
Երկնքի հուշերից . . . 310
Ո՞ւր ես դու վախչում. կյանքի նեղ ուղին . . . 312
Ժպտա սիրելիս. արև աչերիդ . . . 313
Սպիտակ գիշերներ . . . 313
Ես ու նա... . . . 314
Ինձ ի՞նչ... . . . 314
Իմ ծաղիկները . . . 316
«Աշխատավորը» . . . 316

Կարմիր թափորը . . . 317
Ուխտ . . . 319
Պարտիզպան . . . 319
Գանգը . . . 320
Փաթիլն ուզեց . . . 321
Դեհ, հերիք այդտեղ սողաք անզգա . . . 321
Բանվորուհի՛ն . . . 322
Եվ սիրտս լացեց, երբ տեսավ կյանքում բարին ոտնատակ . . . 323
Սերդ սրտիս ծաղիկ ցանեց . . . 324
Եվ շղթան ճնշեց բնական մտքին . . . 324
Վարդի թփի մոտ պատահանք իրար . . . 324
Գիշեր . . . 325
Գեթ մի թույլ նշույլ, գեթ աղոտ ճաճանչ . . . 325
Մրրկից հետո . . . 326
Խոհեր . . . 327
Աստղերն ու մարդիկ . . . 328
Շազով զոզով . . . 328
Էտապ . . . 329
Ինձ ձեզ հետ տարեք . . . 330
Զանգակները . . . 331
Մեր բանվորը . . . 334
Մի օր ես դաշտում, ծաղիկների մեջ, քուն էի մտել . . . 335
Մայիսի մեկը . . . 335
Մեներգ . . . 336
Խոհեր . . . 336
Փառք կարող հոգուն . . . 337
Ես ու դու . . . 338
Ապրելու համար . . . 339
Հաղթողի համար . . . 339
Ձեզ տամ... . . . 340
Հառաջ գնալու . . . 340
Մենք . . . 341
Ուղին քարքարոտ . . . 342
Գարնանամուտ . . . 342
Ռևնվորական քայլերգ . . . 343
Մաղթանք . . . 344
Մենք այրում ենք ամեն օր . . . 344
Նոր օրեր . . . 345
Վերադարձ . . . 347
Ողջո՛ւյն քեզ . . . 349
Խորհրդում ես օրեցօր . . . 349
Մեռելների մոտ . . . 350
Աչքան գիշերով . . . 351
Նորը կոփիր . . . 353
Կովկասում . . . 353
Գաղթական կիներ . . . 354
Քայլերգ . . . 354
Գաղթական ընտանիքը . . . 355
Կարմիրները . . . 356
Աստղակիր . . . 356

ՄՈՎՍԵՍ ԱՐԱՍԻ

Արևը . . . 360
Կիսատ տունը . . . 361
Վիրավոր թռչունը . . . 363
Վանդակներում . . . 364
Կարմիր համբույրը . . . 367
Հեքիաթը . . . 370
Խորհրդավոր այգին . . . 373
Արյունոտ ծաղիկները . . . 379
Վերջին տերևը . . . 381
Խալիշայի երգը . . . 384
Արծաթի տակ . . . 387
Հին ժամացույցը . . . 389
Կարմիր հարսնացուն . . . 391
Սովետական առավոտը . . . 409
Հեկեր Մուկուչը . . . 413
Օղակում . . . 424
Աչքը վախեցած Հանեսը . . . 432
Լուսեցը . . . 443
Փուշ Արեգը . . . 450
Բաբելոնի աշտարակը . . . 464
Լուսնի շողերով . . . 473
Մոլախոտը . . . 522
Տարիների հեքիաթը . . . 531
Աշխեն . . . 534
Գրոֆեսորը . . . 540
Մայրը . . . 549
Հուշերի ծաղիկները . . . 552
Նոր արշալույսը . . . 562

Հակոբ Հակոբյան
Շուշանիկ Կուրղինյան
Մովսես Արազի

Երկեր

АКОП АКОПЯН
ШУШАНИК КУРГИНЯН
МОВСЕС АРАЗИ

Сочинения
(На армянском языке)

Издательство «Советакан грох»
Ереван, 1982

Խմբագիր՝ Ս. Գ. Ստեփանյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սասյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Սիմոնյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ս. Մ. Բուլաքյան

ИБ № 3894

Հանձնված է շարվածքի 26. 05. 1982։ Ստորագրված է տպագրության 9. 09. 1982։
Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։
Տպագրություն՝ բարձր, 33,48 պայմ. տպ. մամ., 26,6 հրատ. մամ.։ Տպաքանակ՝
51000։ Պատվեր 361։ Գինը՝ 2 ռ. 40 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул, Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։
Типография № 1 Госкомитета по делам издательств,
полиграфии и книжной торговли Арм. ССР,
Ереван, ул. Алавердяна, 65.